












АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЯКОВ МАНАНДЯН

ТРУДЫ
IV

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981


Ն 64890

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԿԵՐ

Դ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ
ԾՐԵՎԱՆ 1981

08-8061

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական հանձնաժողով
ԲԱՐԱՑԱՆ Լ. Հ., ԵՐԵՄՅԱՆ Ս. Յ., ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ա.,
ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Խ.

Հատորը հրատարակւորյան պատրաստեց
Լ. Հ. ԲԱՐԱՑԱՆԸ

Մանւնդյան Հ. Հ.

Մ 243 Երկեր.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981.

Հ. Դ, էջ 516:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի երկերի շորրորդ հատորում
ամփոփված են Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտե-
սական կյանքի հիմնական պրոբլեմները լուսարանող աշխատություն-
ները, որոնք նվիրված են ֆեոդալիզմի ծագման, պարբերացման,
նախարարական սիստեմի, հողային սեփականության, հողատիրու-
թյան ձևերի, ֆեոդալական ունտայի և հարկերի, գյուղացիության
սոցիալ-իրավական վիճակի, ֆեոդալական շահագործման ձևերի,
գյուղացիության ճորտացման, գյուղական համայնքի և մի քանի այլ
հարցերի լուսարանմանը:

0505010000

ԳՄԴ 63.3 (2 Հ) 1

Մ ————— 24—80

9 (C 43) 1

703 (02)—81)

ԽՐԱՊԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի երկերի Դ հատորում զետեղված են Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանմանը նվիրած նրա աշխատությունները: Առաջին անգամ ուսեբեն նրատարակվածները տրվում են ուսեբեն բնագրով: Աշխատությունները տեղադրված են ժամանակագրական կարգով.

«Մի դիտողություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա», «Արարատ», 1902, № 2, էջ 167—171:

«Դիտողություններ հին Հայաստանի շինականների դուրյան մասին մտրգպանության շրջանում», «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1925, № 1, էջ 3—45:

«Հայաստանի արքունի հարկերը մարգպանության շրջանում», «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1926, № 1, 3—44: Նույնն առանձին հրատարակած, 1926, 44 էջ:

«Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» (1), «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 29—42:

«Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» (2), «Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1928, № 4, էջ 43—82:

«Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении», Тифлис, изд. научно-исследовательского института Кавказоведения АН СССР, 1932, стр. 1—19.

«Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, 337 էջ:

«Актуальные вопросы историографии древней Армении», «Историк-марксист». М., 1940, кн. 6, стр. 3—8.

«Проблема общественного строя доаршакидской Армении». Исторические записки», М.—Л., 1945, т. 15, стр. 3—28.

«Новеллы Юстиниана о порядке наследования у армян», «Известия АН Арм. ССР, Общественные науки», 1952, № 5, стр. 61—71.

Հ. Մանանդյանի վերը թվարկված կապիտալ աշխատությունները՝ նվիրված հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությանը, որոնցում հայ պատմագրության մեջ առաջին անգամ իրենց խոր գիտական լուսաբանումն են ստացել այդ բնագավառի շատ բարդ ու կնճռոտ պրոբլեմներ, նշանավորում են սովետահայ պատմագիտության զարգացման կարևոր անհրաժեշտ փուլերից մեկը: Հ. Մանանդյանի գրչին պատկանող գրեթե բոլոր աշխատությունները հարուստ են փաստական հսկայական նյութի հիման վրա կատարված տեսական հարցերի գիտական լուսաբանումներով: Իրենց այդ նշանակությամբ նրանք դուրս են գալիս ազգային պատմության շրջանակներից և մեծ արժեք են ներկայացնում հին աշխարհի, Առաջավոր Ասիայի երկրների և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Անցյալ դարի առաջին կեսում պատմության փիլիսոփայությունը պարզորոշ և հաստատ ձևով շեշտեց, որ յուրաքանչյուր ազգի քաղաքակրթություն աճում և զարգանում է ինչպես մի բույս կամ մի կենդանի՝ որոշ օրենքներով: Ազգերի բարոյական, մտավոր և տնտեսական կյանքը կամ քաղաքական և հասարակային կազմակերպությունը բնության կույր և պատահական խաղերի կամայական ծնունդ է, այլ ընդհակառակը՝ մի օրինավոր պատճառաշղթայի անհրաժեշտ արդյունքն է: Ինչպես մի ծառի պտուղների այս կամ այն հատկությունը որոշ պայմաններից է կախված, որոնք են երկրի կլիման, հողը, մշակության եղանակները և այլն՝ նույնպես և ազգերի անցյալ թե ներկա կյանքի բոլոր երևույթների առանձնահատկությունները ենթարկված են անհրաժեշտության և պատճառականության օրենքին, և պատմական զարգացման ընթացքում գլխավոր ներգործող գործություններն են պատմական նույն շրջանի արդյունաբերության և արդյունագործության զարգացման աստիճանը, իրավական և բարոյական գաղափարները, պատմական և կրոնական ավանդությունները. աշխարհագրական և բնության ուրիշ որևէ ազդեցությունը և վերջապես ազգերի ցեղական ձիրքերը և ունակությունները:

Հայոց անցյալի ուսումնասիրությունը դեռևս գտնվում է իր զարգացման սկզբնական շրջանում, և մեր անցյալի վերաբերմամբ դեռևս անհնար է ընդհանուր տեսություն անել, գործադրելով պատմության փիլիսոփայության նորագույն սկզբունքները և որոնելով պատմական անցքերի դրդիչ գործոնները (Factoren, факторы): Հին Հայոց կյանքի ուսումնասիրության գործում առայժմ խոսքը բանասիրությանն է, որովհետև նախքան պատմությունը գրելը, անհրաժեշտ է ճշտված փաստեր և վավերական արժանա-

հավատ պատմագրական աղբյուրներ ունենալ, իսկ ամեն մի պատմական գիտության համար հոմ նյութը մշակողը և զտողը բանասիրությունն է: Անհրաժեշտ է միմիայն, որ հայկական բանասիրությունը, ի նկատի առնելով Հայոց անցյալի ամփոփման և ընդհանրացման վերջնական նպատակը՝ փոքր-ինչ ընդարձակի իր սահմանները և ուշադրության առնե հին Հայոց ներքին պատմության կուլտուրական և ընկերական կողմը, որպեսզի ընդհանուր պատմական տեսության համար զտված և ճշտված նյութ լինի մեր նախնիների հասարակային, տնտեսական և ընտանեկան կենցաղի վերաբերյալ: Այլապես Հայոց պատմությունը կմնա միշտ արտաքին անցքերի պատմագրական ժողովածու:

Բայց եթե հին Հայոց ներքին պատմության վերաբերյալ նյութերի բացակայության կամ սակավության պատճառով գրեթե անհնար է ընդհանուր տեսություն անել մեր պատմական անցյալի մասին՝ այժմ արդեն կարելի է և նույնիսկ անհրաժեշտ է ծանոթանալ, քննել և հետազոտել ժամանակակից կամ մոտագույն անցյալի հայ ժողովրդի ներքին կենցաղը իր բոլոր երևույթներով: Լուրջ քննական վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի ներքին կյանքը ոչ միայն գիտական նշանակություն ունի, այլև զուտ հասարակային, որովհետև մեր ժողովրդի բարօրության և առաջադիմության նախանձախնդիր գործիչների խոսքը և գործը որոշողը կարող է և պետք է լինի հայ ժողովրդի բարոյական և նյութական պետքերի գիտական լուրջ ուսումնասիրության բարեխիղճ ընդհանրացումը (Synthèse, снѣз), ապա թէ ոչ՝ մեր եկեղեցու և ժողովրդի իրական պահանջներին անծանոթ մնալով՝ թուփակի նման կերկնքն անբովանդակ և երևակայական խոսքեր ու կարծիքներ: Գիտակցական գործունեության զորեղ և հաստատուն հիմքը կարող է միմիայն լինել իրականությունը և իրականության ոչ թե լրագրական, այլ գիտական հետազոտությունը: Թյուրիմացության տեղիք չտալու համար ավելորդ չի լինի այստեղ ավելացնել, որ այդ կարիքն անշուշտ զգացել են մեր թե՛ հին և թե՛ նոր գործիչները, սակայն մենք միայն արձանագրում ենք այն փաստը, որ մինչև այժմ պակասում են մեր ներքին կյանքին վերաբերյալ գիտական լուրջ ուսումնասիրություններ, իսկ եղածներն էլ մեծ մասամբ թերի են և անբավարար: Բացառություն են կազմում մի քանի լուրջ հոդվածներ պարբերական մամուլի էջերում, իսկ նորերումս հատկապես «Մուրճ» ամսագրում, օրինակ՝ պր. Ս. Զավարյանի «Շողային տուրքը և հարկերը Կովկասում»: Թէ որքան սովորական, բայց ծայրահեղ

կարող են լինել ուրվականների նման բերնից բերան, գրքից գիրք, հողավածից հողված շրջող դոնքիշոթական ընդհանրացումները՝ ցույց տանք մի քանի օրինակներով: Մեր նախկին պատմության վերաբերյալ համարյա ամեն մի գրքում և հողվածում կարող եք կարդալ այսպիսի մի կարծիք, իբր թե Հայոց նախարարների անմիաբանությունն է Հայաստանի կործանման պատճառը: Այդ միամիտ կարծիքը հայտնողներից ոչ մեկը չէ մտածում, որ պետական միության տեսակետից վտանգավոր նախարարական (իսկ նվրդապալում ֆեոդալական) կազմակերպությունը ոչ մի ազգության մեջ մոգական գավազանի շարժումով չէ փոխվել, այլ բարոյական, իրավական և տնտեսական որոշ զարգացման շրջանում և աշխարհագրական ու քաղաքական որոշ պայմաններում անխուսափելի անհրաժեշտություն է եղել: Հունաստանը մեզանից ավելի քաղաքակրթված երկիրը, կործանվեց մասամբ էլ այն պատճառով, որ չկարողացավ լուծել ազգային-քաղաքական միության մեծ խնդիրը: Իսկ մենք դեռ շարունակ կրկնում ենք, եթե ճայեքը անմիաբան չլինեին, եթե նախաբաններն ըմբոստ չլինեին և այսպես անվերջ:

Դեռ պատմական անցյալի մասին սխալ ընդհանրացումները փոքրի ի շատե ներելի են, սակայն, երբ անբովանդակ և երևակայական մտքեր դրվում և տպվում են նույնիսկ հայ ժողովրդի ներկա կացության մասին, այդ արդեն հասարակային գործունեության ամենամեծ թերություններից մեկն է: Գերմանական մի ամսաթերթում պատահել է մեզ մի հայտնի հայ գրողի հողված, որի մեջ հեղինակն առանց տատանվելու և հաստատուն փաստերով ապացուցում էր, որ Տաճկահայաստանում գոյություն ունի գործավոր դասակարգ և գործավոր պրոլետարիատ: Իսկ այստեղ Մայր Աթոռի գործունեությանը և մեր եկեղեցու այժմյան դրությանը մի փոքր ծանոթ չլինելով՝ խոսք լավ նկատում ենք, թե երբեմն մեր հասարակային գործիչները որքան անտեղյակ են եկեղեցիական երևույթների լավ և վատ կողմերին, և որքան կիսատ և թյուր հասկացողություններ են ունենում ազգային եկեղեցու իրական կարիքների և պահանջների նկատմամբ:

Այսպես ուրեմն՝ որոշ ուղղություն և վերացական սկզբունքներ կարելի է ձեռք բերել նաև օտար միջավայրերում, սակայն լուրջ և դրական ծրագրով գործելու հնարավորություն տվող միմիայն ուսումնասիրված իրականության գիտակցությունն է: Das sein soll des Bewusstseins bestimmen իրականությունը պետք է

լինի գիտակցության որոշողը։ Այսպես է լինում լուսավոր
երկրներում, նույն ձևով կերպարանափոխվեց վերջին մի քանի
տասնյակ տարիներում Ռուսաստանի առաջնորդող գրական դա-
սակարգի ուղղութիւնը և նույն կարիքը գիտակցելու ենք նաև
մենք։

ՀԱՅՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ

Ս. էջմիածին

փետրվար 22

«Արարատ», 1902 թ., ին տարի, Պ Բ, էջ 167—171։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՆ ՀԱՅՍՏԱՆԻ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց հնագույն պատմությունը, որի ուսումնասիրությանը նվիրված են հայ և օտարազգի գիտնականների բազմաթիվ աշխատություններ մինչև այժմ դեռ ունի ժամանակագրության բնույթ։ Այդ տեսակետից՝ նաև վերջերս լույս տեսած հայոց պատմության ձեռնարկները, ինչպես J. de Morgan-ի, Histoire du peuple arménien (Paris, 1919) և J. Sandalagian-ի Histoire documentaire de l' Arménie des âges du paganisme (Rome 1917, t. I և II), ոչնչով չեն տարբերվում նախկին աշխատություններից։ Թե՛ այս և թե՛ նախկին երկերում մատնանշված են ժամանակագրական կարգով հայոց անցյալի փոքր ի շատե ստուգված քաղաքական ու կրոնական անցքերը և միանգամայն աչքաթող է արված հին Հայաստանի ներքին կյանքը՝ պետական, ընկերական ու տնտեսական։ Գլխավոր պատճառն այս խոշոր թերության այն է, որ հայոց հնագույն պատմության հիմք ծառայող մատենագրական աղբյուրները խիստ միակողմանի են իրենց բովանդակությամբ, նկարագրում են, գլխավորապես, քաղաքական արտաքին դեպքերը, իսկ Հայաստանի ներքին կյանքի կարևորագույն հարցերը նրանք գրեթե չեն շոշափում։ Եթե երբեմն և պատահում են նրանց մեջ աղոտ ակնարկներ երկրի ու ժողովրդի ներքին կացության մասին, միջանկյալ այդ վկայություններն այնքան մոլթն են ու անորոշ, որ կարոտ են քննության ու լուսաբանության հատուկ ուսումնասիրությունների միջոցով, իսկ առանց այդ չեն կարող նյութ ծառայել պատմական ընդհանրացումների։ Հիշատակության արժանի միակ ուսումնասիրություններն են այդ ուղղությամբ Նիկ. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» (С. Петерб. 1908 г.), մասամբ

նակ՝ Ի. Զավախովի «Государственный строй древней Грузии и древней Армении» (С. Петерб. 1905):

Թե ինչո՞ւ հին Հայաստանի ներքին կյանքը մինչև այժմ այդքան քիչ է ուշադրության առնվել, այդ բացատրվում է մասամբ նրանով, որ հայոց պատմական անցյալը, ինչպես և նրա մատենագրական աղբյուրները ուսումնասիրել են մեծ մասամբ ոչ թե պատմաբան մասնագետները, այլ հայագետ բանասերները, որոնք իրենց ուսումնասիրություններին տվել են, բնականաբար, բանասիրական հատուկ բնույթ: Անուրանալի է, իհարկե, որ հայագետ բանասերները կատարել են հայոց պատմության համար ահագին օժանդակ աշխատանք: Նրանք հրատարակել են ձեռագրերի բաղդատուլյամբ հայոց հնագույն մատենագրական երկերը, թարգմանությունների միջոցով մատչելի են դարձրել այդ երկերն օտարազգի գիտնականներին, աշխատել են որոշել հայ պատմիչների ժամանակն ու նրանց պատմական արժեքը, աղբյուրների համեմատական ու քննական ուսումնասիրությամբ փորձել են ճշտել ու լուսաբանել պատմական առանձին փաստերը, կատարել են բանասիրական և ուրիշ նման կարևոր աշխատություններ: Սակայն փաստական բոլոր այդ նյութերը, որքան էլ հետազոտված ու ստուգված լինեն բանասերների ջանքերով, պատմական տեսակետից՝ նրանք կմնան փոշիացած ու անկենդան դրուժյան մեջ, իբրև սոսկ ժամանակագրություն, մինչև որ շուսումնասիրվեն հայոց պատմական կյանքի նաև ներքին իրական կողմերը և շորոշվեն նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական այն առանձնահատուկ հիմնական ուժերը, որոնցով պայմանավորված են թե՛ այդ անցյալի այս կամ այն ընթացքը և թե՛ պատմական առանձին դեպքերի բնական անհրաժեշտությունը: Որքան էլ աղբյուրների ու նյութերի աղբատուության պատճառով դժվար լինեն նոր այս աշխատանքները, կարծում եմ, որ միանգամայն հնարավոր է, եղած նյութերն իսկ հավաքելով ու օգտագործելով, դնել հայոց անցյալի պատմագիտական հետազոտությունները նոր հունի մեջ՝ և մասնակի խնդիրների բանասիրական ճշտումներից անցնել հետզհետե ընդհանուր տեսությունների: Զգալի արդյունքներ հայոց պատմության կարևորագույն այս ճյուղում կարող են ստացվել, իհարկե, միայն ապագայում, երբ հայոց ներքին կյանքի խնդիրները հմուտ ու կարող ուժերի հավաքական ջանքերով կենթարկվեն մասնակի ու մանրաքննին ուսումնասիրության: Իսկ այժմ, երբ այդպիսի աշխատություններ գրեթե չկան, իմ այս հոդվածը նախապատրաս-

տական մի աշխատանք է միայն, մի շարք դիտողություններ, որոնց նպատակն է պարզել շինական դասի դրուժյան հավանական ընդհանուր գծերը Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող մարզպանական Հայաստանում: Պետք է ասել, որ շինական դասի սոցիալ-տնտեսական վիճակը հին Հայաստանում հայոց ներքին կյանքի ամենադժվար ուսումնասիրելի խնդիրներից մեկն է: Մատենագրական աղբյուրները հատկապես այս դասի վերաբերմամբ լուռ են ու մունջ: Պատմական տեղեկություններն այս դասի մասին մի փոքր ավելի պարզ են ու որոշ հայոց պատմության հետագա դարաշրջանների համար: Թե ինչ դրուժյան մեջ է գտնվել շինականությունը հետագա այս դարաշրջաններում՝ այդ առանձին մի նյութ է, որին մենք վերադառնալու ենք մեր առաջիկա հոդվածներից մեկում:

ՀԱՎԱՍԱՐ ՀՈՂԱԹԻՐՈՒՄ «ԸՍՏ ՄԱՐԴԱՌՈՒՄ»

Շինականների ու նրանց տնտեսական կենցաղի նկատմամբ հին Հայաստանում քննության արժանի խիստ կարևոր մի հարց կա, որ մինչև այժմ, որքան ինձ հայտնի է, հիմնավոր կերպով հարուցված չէ եղել հայագիտական նորագույն աշխատություններում: Այդ՝ համայնական հողատիրության խնդիրն է, որ ինչպես ենթադրում են այժմ, համատարած ու ընդհանուր երևույթ է եղել բոլոր ժողովրդների մեջ նրանց պատմական զարգացման սկզբնական շրջաններում: Որ համայնական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ նաև հին Հայաստանում. այդ նրա անցյալ կյանքի համայնական տոհմային հնագույն շրջանի համար միանգամայն անօխտելի է: Բայց նախարարական Հայաստանում ևս դժվար թե հողատիրության նախնական կարգերն իսպառ ու անհետ կորած լինեին: Որքան էլ այդ կարգերը հեղաշրջված ու փոփոխված լինեին Հայաստանի նախարարական նոր պայմաններում, ավելի քան հավանական է, որ պատմական հետագա այս շրջանում ևս նրանցից մնացած պիտի լինեին որոշ հատքեր: Անհավանական չէ նույնիսկ, որ համայնական հողատիրությունը, հարմարեցված լինելով կալվածատիրական նոր պայմաններին, կարող էր հետագա այս ժամանակներում պահպանած լինել իր դրուժյունը, կրելով իր հիմնական բովանդակության մեջ ո՛չ այնքան խոշոր փոփոխություններ: Հայոց պատմության մատենագրական աղբյուրները, ինչպես տեսանք, չունեն հայոց ներքին կյան-

քի թե՛ այս և թե նման խնդիրների մասին պարզ ու որոշ տեղեկություններ: Նրանց մեջ կան սակայն միջանկյալ ակնարկներ, որոնք ըստ իս ուշագրավ որոշ նշաններ են, որ համայնական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ հին Հայաստանում ո՛չ միայն նախնական ժամանակներում, այլև Արշակունյաց թագավորության շրջանում և նրա անկումից հետո:

Մովսես Խորենացին, խոսելով Արշակունի Տիրան թագավորի մասին, պատմում է, որ «եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից, ասեն.— Ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առքերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թե առաւելագոյն նեղ է մեղ. ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէին հավասար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի, գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի և Առքերանոյ» (Գիրք Բ, գլ. Կբ, Թիֆլիս, 1913, էջ 191—192): Նիկ. Աղոնցը «Հայաստանը Յուստինյանի ժամանակ» վերոհիշյալ իր գրքում այս վկայության մեջ հավաստի ու արժեքավոր է համարում հողի բաժանման սովորությունն ըստ մարդաթվի, որ ընդունված է եղել Արշակունիների ընտանիքում: «Միևնույն սկզբունքները,—ասում է նա,— որ գործադրվել են արքայական տան մեջ, գոյություն են ունեցել նաև իշխանական ընտանիքներում. ուստի և պատմագրի մատնանշած բաժան հողատիրության սովորությունն ունի իր ուժը նաև իշխանական միջավայրի համար: Բայց այս երևույթը չի վերաբերում Արշակունիների ժամանակին, ինչպես ենթադրում է պատմագիրը, այլ այստեղ մենք գործ ունենք իրեն՝ Խորենացուն ժամանակակից կարգերի հետ, որ նա վերագրել է հնագույն ժամանակներին: Ժառանգական կալվածքի բաժանումն ընտանիքի անդամների մեջ արտահայտություն է սեպուհական իրավունքի: Այդ իրավունքը զարգացել էր, ըստ երևութի, վեցերորդ դարում» («Армения в эпоху Юстиниана», էջ 474):

Նիկ. Աղոնցի այս ենթադրությունից հետևում է, որ Հայաստանում նախարարական տոհմերի մեջ նախ տիրող է եղել միաժառանգության ու մայրաւոր սկզբունքը: Արշակունյաց թագավորության անկումից հետո միայն սկսել է հետզհետե փոխվել ժառանգության այս կարգը և վեցերորդ դարում զարգացել է արդեն

քաժան ու անջատ՝ «սեպուհական» հողատիրութիւնը: «Սեպուհական» կամ «սեպհական» անվանվել են այնուհետեւ այն հողաբաժինները, որ ժառանգում էին սեպուհները, այսինքն՝ նախարարական տոհմերի «սեպուհ» կոչված անդամները:

Նիկ. Ադոնցը ենթադրում է ուրեմն, որ խորենացու վերահիշյալ վկայութիւնը վերաբերում է նախարարական միջավայրում տեղի ունեցող ժառանգական հողաբաժանումներին:

Խորենացու մուք ու անորոշ վկայութեան այս կերպ մեկնումը, թեւ շատ հետաքրքիր է ու հրապուրիչ, սակայն ունի առարկելի կետեր և թվում է ինձ խիստ վիճելի:

Նախ և առաջ, դժվար է համաձայնել Նիկ. Ադոնցի հետ, որ Հայաստանում մայրաքաղաքի իրավունքի վերացումը և սեպուհական ժառանգման նոր կարգերի զարգացումը տեղի են ունեցել վեցերորդ դարում: Վեցերորդ դարից դեռ շատ առաջ սեպհական կալվածքներ հիշատակվում են Փավստոս Բյուզանդացու պատմութեան մեջ, որը գրել է իր աշխատութիւնը հինգերորդ դարի առաջին կեսում: Խոսելով Մերութան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի ապստամբութեան ու կրոնափոխութեան մասին, Փավստոսը հաղորդում է, որ «ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց, և բազում յիւրեանց սեպհականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն» (Դպր. Դ, գլ. ԺԹ, Վենետիկ, 1832, էջ 184): Նույն Փավստոսի վկայութեամբ՝ Մերութանը խոստանում է Շապուհ արքային՝ «թէ իցէ և կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշանս յիմում տանն սեպհականին» (Դպր. Դ, գլ. ԻԳ, Վենետիկ, 1832, էջ 144):

Փավստոսի այս հատվածներում, ինչպե՛ս տեսնում ենք, հիշված են արդեն «սեպհական» կալվածքներ. ուրեմն՝ պետք է ենթադրել, որ սեպուհական հողատիրութիւնը գոյութիւն ունեցած պիտի լիներ վեցերորդ դարից դեռ շատ առաջ՝ հինգերորդ դարի առաջին կեսում և թերեւ նույնիսկ Արշակունյաց թագավորութեան ժամանակ:

Անկախ ժամանակագրական կարևոր այս խնդրից, վիճելի է թվում ինձ նաև Նիկ. Ադոնցի հիմնական այն եզրակացութիւնը, որ իբր թե խորենացու վերահիշյալ հատվածի մեջ ակնարկված է ժառանգական գույքի բաժանման կարգը նախարարական ընտանիքների անդամների, այսինքն՝ սեպուհների մեջ:


Ամենաուշագրավը և կարևորը հորինացու վկայության մեջ ոչ այնքան նրա պատմական կողմն է, որ ավելի քան վիճելի է, ո՛չ այն, որ Հաշտյանք, Աղիոփիտ և Առբերանի գավառներում տեղի է ունեցել հողաբաժանում Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած սերունդների մեջ, այլ, գլխավորապես, հողաբաժանման այն հատուկ կարգը՝ «հավասար» և «ըստ մարդաթվի» որը, ըստ երեւոյթի, գոյութուն է ունեցել Հայաստանի իրական կենցաղի մեջ և, հավանաբար, հենց հորինացու իսկ ժամանակ։ Նիկ. Ադոնցի ենթադրությունը, որ այդ կարգը վերաբերում է սեպուհական անշատ հողատիրության, ավելի քան վիճելի է։ Դժվար է խիստ ընդունել, որ նախարարական ընտանիքների անդամները կարող էին տոհմային հողերը ժառանգել «հավասար» և «ըստ մարդաթվի»։ Եթե այդ այդպես լիներ, այդ դեպքում՝ ժառանգատու նախարարների բազմանգամ ընտանիք ունեցող որդիները պետք է ստանային մի քանի անգամ ավելի մեծ հողաբաժիններ, քան նրանց ամուրի որդիները։ Ժառանգության բաժանման այս կարգը խիստ արտասովոր է ու անօրինակ կալվածատեր ազնվական դասի համար։ Հողերի «հավասար» և «ըստ մարդաթվի» բաժանումը, որքան հայտնի է, ո՛չ թե սեպուհական ժառանգության, այլ համայնական հողատիրության որոշ կարգ է։ Ընդդէմ է, հորինացու վկայության մեջ պարզ ասված է, որ հողաբաժանումը Հաշտյանք, Աղիոփիտ և Առբերանի գավառներում տեղի է ունեցել Արշակունյաց տոհմում, սակայն նրա վկայության ամենից կասկածելի կետը հենց այն է, որ նա համայնական հողատիրության վերաբերվող հատուկ կարգերը վերագրել է նաև Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած ժառանգներին։ «Հավասար» ու «ըստ մարդաթվի» հողաբաժանման սկզբունքը եղել է, ըստ երևույթի, հորինացու ժամանակ իրական ու հանրաժանոթ մի փաստ, և ինձ թվում է, որ հորինացու վկայության մեջ մատնանշված կարևոր այդ փաստը կարող է ընդունվել, որպես ուշագրավ մի ակնարկ, որ հորինացու ժամանակ Հայաստանում գոյութուն են ունեցել, հավանաբար, համայնական հողատիրության որոշ կարգեր և «հավասար» հողաբաժանումն «ըստ մարդաթվի»։

Հորինացու նույն այդ վկայությունը մեկնելիս ի նկատի պետք է ունենալ նաև այն, որ նա թագավորական սերունդ է համարել ռստանիկների դասը։ Այս կարևոր հանգամանքը հիմք կարող է ծառայել ենթադրելու, որ նրա վկայությունը վերաբերում է իրոք ո՛չ թե Արշակունյաց տոհմի աճած սերունդներին, այլ ռստանիկ դասին։

Խորենացու ենթադրական կարծիքը ոստանիկ դասի ծագման մասին պարզ արտահայտված է նրա պատմության հետևյալ երկու հատվածում. 1) Գիրք Բ, գլ. է, Տփղիս, 1913, էջ 111—112. «Եւ գունդս և պահապանս դրան արքունի կարգէ (Վաղարշակ) զշորս զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս: Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վասն սպառնելո՞յ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի: Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Սէփէթուլն կոչի»։ 2) Գիրք Ա, գլ. Լ, էջ 82—83. «Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ գոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմն»։

Խորենացին, ինչպես երևում է այս հատվածներից, ոստանիկների դասը համարել է «թագավորական զարմ», որ ծագել է Հայկ նահապետի ու Տիգրան Մեծի քրոջ՝ Տիգրանուհու սերունդներից: Ավելի քան հավանական է, որ Խորենացին, հիշելով հայ Արշակունիներից ծագած ազգատոհմը, որին բնակության համար հատկացված են եղել Հաշտյանք, Աղիովիտ և Առեբրանի գավառները, նույնպես ի նկատի ունի այդ գավառներում գտնվող ոստանիկներին: Բայց այս դեպքում՝ Խորենացու «հավասար» ու «ըստ մարդավի» հողաբաժանության վկայությունը գուցե վերաբերում է հենց այդ դասին:

Արդ՝ ուղիղ է արդյոք Խորենացու ենթադրությունը, որ ոստանիկ դասն առաջ է եկել արքայական հին տոհմերից: Նիկ. Ադոնցըն այս խնդրում, ընդհանուր առմամբ, համամիտ է Խորենացու հետ: Նա ևս ընդունում է, որ ոստանիկները թագավորական սերունդ են, սակայն ծագել են ոչ թե հին թագավորներից, այլ բա-



ցառապես Արշակունիներին: Նրա կարծիքով, «ոստանիկ» իր նշանակությամբ համապատասխանում է «արքունի» բառին: Ոստանիկների կապը թագավորական ընտանիքի հետ նույնը եղած պիտի լինի, ինչ որ սեպուհների կապը նախարարական ընտանիքների նկատմամբ: Ոստանիկները, ուրեմն, նրա ենթադրությամբ՝ թագավորական տոհմի «սեպուհներն» են: Բացի այդ, հետագայում ոստանիկներ են համարվել նաև նրանք, որոնք իրենց հատուկ ծառայությունների համար ստացել էին Այրարատում, իբրև պարզև, որոշ կալվածքներ կամ Արշակունիներից կամ հետո՝ Սասանյան Պարսկաստանից: Արշակունյաց թագավորության անկումից հետո ոստանիկ դասի մեջ են ներմուծվել, Նիկ. Ադոնցի կարծիքով, նաև Արշակունյաց արքունիքում ծառայող ազատ մարդիկ:

Հիմնական կետում, ինչպես տեսնում ենք, Նիկ. Ադոնցը հորենացու լուսաբանությունը համարում է ճիշտ ու միայն իր կողմից անում է որոշ լրացումներ:

Այս լուսաբանությունը քննության առնելուց առաջ հետաքրքիր է նախ որոշել «ոստանիկ» գրաբար բառի ստուգաբանությունը: Պարզ է, որ «ոստանիկ»-ը քերականորեն ծագում է «ոստան» բառից: Նիկ. Ադոնցը կարծում է, որ «ոստան»-ը նշանակում է արքունիք (двор), բառացի՝ շեմք, համապատասխանում է սենյորական curtis dominicalis-ին Արևմուտքում և իբր թե այդպես է անվանվել տերունի կամ նախարարական յուրաքանչյուր երկրի կենտրոնատեղին («Армения в эпоху Юстиниана», էջ 463): Իր այս կարծիքը Ն. Ադոնցը չի հիմնավորել որևէ տվյալներով կամ վկայություններով, ուստի և շատ դժվար է գուշակել, թե ունեցել է նա արդյոք փաստացի հիմքեր կարևոր այս եզրակացության համար: Ըստ երևույթին, նրա ենթադրությունը հիմնված է միայն Հայկազյան լեզվի նոր բառգրքի վրա, որը «ոստան» բառի դիմաց նույնպես դրել է «սեամ», դուռն արքունի» բացատրությունը: Հավաքած ունենալով հնագույն մեր մատենագրական երկերից «ոստան» բառի վերաբերյալ գրեթե բոլոր վկայությունները, ինձ առայժմ չի հաջողվել գտնել նրանց մեջ որևէ մի հետք կամ ակնարկ, որը հաստատեր այդ բառի ստուգաբանական վերոհիշյալ մեկնությունը: Արքունիքի կամ ռուսական двор բառի իմաստով, որքան ինձ հայտնի է, գործ է ածվել մատենագրական աղբյուրներում ո՛չ թե «ոստան» բառը, այլ «դուռն» կամ «դուռն արքունի»¹:

¹ Տե՛ս Փարպ. Բ, գլ. 1, Տիգիս, 1904, էջ 57. «այլ հանդերձ հաանելովք ընդ ինքեանս դրամք եւ ընտանեօք դէմ եղեալ անցանել ի կողմանս իշխանութանն յու-

Իմ կարծիքով, շատ ավելի հիմնավոր ու համոզիչ է «ոստան» բառի նշանակության այն մեկնությունը, որ տվել է պրոֆ. Հ. Հյուբերշմանն իր «Հին հայոց տեղւոյ անունները» աշխատության մեջ (Թարգմ. Հ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա, 1907, էջ 393—394)։ Նրա բացատրությամբ՝ «ոստան» բառի ծագումն անպայման պարսկական է. չորրորդ դարում «ոստան» է անվանվել այն երկիրը կամ քաղաքը, որ գտնվել է Արշակունի թագավորի (կամ Արշակունյաց թագավորական տան որևէ իշխանի) իշխանության տակ։ «Ոստան» նշանակում էր, ուրեմն, «արքունի կալված, յերկիր, քաղաք»։ Այսպիսի արքունական կալված է եղել՝ «բնիկ սեփհական» ու ամենից կարևորը հին ժամանակներից ի վեր, Այրարատ գավառը (և ո՛չ թե նահանգը)։ «ոստան» էր, բնականաբար, նաև իսլան գավառի ամենից հոյակապ ու նշանավոր քաղաքը, ուր սովորաբար նրստում էին թագավորները՝ Արտաշատը և ապա Վաղարշապատը, որ Հայաստան աշխարհի գլխավոր քաղաքներն էին։ Հայոց թագավորության կործանումից հետո, երբ Դվինը դառավ հինգերորդ դարում պարսիկ և հայ մարզպանների կենտրոնավայրը, «ոստան» անունը մնաց, բնականաբար, կապված այս գավառին և Արտաշատին մոտ գտնվող Դվին քաղաքը ևս անվանվում էր «Ոստանն Դրենոյ»։ Բայց քանի որ Դվինը Հայաստանի մայրաքաղաքն էր, սկսեցին «ոստան»-ը գործածել մայրաքաղաքի իմաստով և «ոստան» էին կոչում նաև ուրիշ նահանգների ու գավառների ամենակարևոր քաղաքները, օրինակ՝ Նախճավանը, Հաղամակերտը և Դարոյնքը։

Պրոֆ. Հ. Հյուբերշմանի այս լուսաբանությամբ, ինչպես տեսնում ենք, «ոստան»-ի սկզբնական նշանակությունն է ո՛չ թե «շեմք, արքունիք», այլ «արքունի երկիր»։ Որ այս ենթադրությունը միանգամայն ճիշտ է, այդ երևում է Փավստոսի հետևյալ վկայություններից. 1) Դպր. Դ, գլ. Ժթ, Վենետիկ, 1832, էջ 133. «Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեաքը, Շիրակայ և Արշարունեաց, աղգատ առնէր (Արշակ). և զգաւառսն ոռնէր յոստան. 2) Դպր. Ե, գլ. Ժը, էջ 217. «Հարկանէր (Մուշեղ) և յԱնդեղ տունն զբազումս, և հանէր ընդ սուր։ Բայց աշխարհն, զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»։

նաց ճեպէին»։ Փարսլ. Բ, գլ. խր, էջ 75. «զգրան երէցն իշխանին Արծրունեաց ներշապոյճ՝ զտէր Մուշէ»։ Կան. Վաշակ. ԺԱ, «Եւ այնոքիկ, որ կոծ դենն, զտանուտէրն եւ զկուսանս կապեցցեն եւ ի դուռն արքունի տարցեն եւ պատուհաս ի վերայ դիցեն» («Կանոնադիրք հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1914, էջ 195)։

Հնդունելով «ոստան»-ի նշանակությունը որպես «արքունի յերկիր», Հ. Հյուբշմանն իր «Հայկական քերականության» մեջ «ոստանիկ» բառը թարգմանել է «die daher stammenden Adligen oder Truppen», այսինքն՝ «ազնվականներ կամ զորագունդեր, որոնք ծագում են այստեղից» (Armenische Grammatik, Leipzig, 1895, S. 215): Նիկ. Ադոնցը, որ «ոստան»-ը մեկնել էր իբրև дворянство, շեմք», «ոստանիկը» ևս լեզվական իր նշանակությամբ համապատասխան է ընդունում ռուսական дворовый, дворянин բառերին: Այս վերջին համեմատությունը, որ հիմնված է «ոստան» բառի լեզվական վիճելի ստուգաբանության վրա, բնականաբար. նույնքան կասկածելի է ու անհավանական, որքան և «ոստան»-ի дворянство նշանակությունը, որը չի հաստատվում մատենագրական ժանոթ վկայությունների լրջմիտ քննությամբ: Որովհետև Արշակունյաց թագավորության ժամանակ «ոստան» են անվանվել, ամենայն հավանությամբ, արքունի երկրները, ինձ թվում է, որ ճշմարտության ափելի մոտ պիտի լինի Հ. Հյուբշմանի վերոհիշյալ բացատրությունը, որի համաձայն «ոստանիկ» կարող էին կոչվել, ընդհանրապես, այդ երկրների ազնվականությունը կամ զորագունդերը:

Հետաքրքիր են ու ուշագրավ «ոստանիկի» իմաստը որոշելու համար Նիդիշի ու Փարպեցու հետևյալ վկայությունները. 1) Նիդիշի, Վասն պատերազմին Վարդանանց, Վենեսիկ, 1864, էջ 18. «Գունդ կազմէր (Հազկերտ Բ) ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ»։ 2) նույնը, էջ 126. «Համագունդ ամենայն զօրօք նախարարացն յիրաքանչիւր տանէ ի մի վայր գային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուծի, որ յարքունի տանէ անտի էր»։ 3) նույնը, էջ 127. «Եւ զայլս բազում զօրս յարքունի տանէն էարկ յինքն, և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ»։ 4) նույնը, էջ 160. «Բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկսն անուանեն յարքունի տանէ»։ 5) Փարպեցի, Պատմութ. Հայոց, Տիգրիս, 1904, Դր. Բ, գլ. 14, էջ 67. «և այլք յոստանկաց և սեպուհք ոմանք յիրաքանչիւր տոհմէ»։ 6) նույնը, Դր. Բ, գլ. խա, էջ 73. «Քանզի բազմութիւն փախստէիցն հայոց, նախաքարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք»։ 7) նույնը, Դր. Գ, գլ. ղգ, էջ 170. «որ այժմ աստ են առաջի ձեր նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ և յայրուծիոյ որերոյ»։ 8—10 (տե՛ս նաև դարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք»։ 7) նույնը, Դր. Գ, գլ. ղգ, ղթ, էջ 178:

Այս վկայութիւններէ մեջ ամենից կարեւորը շորորդն է, որի մեջ պարզ ասված է, որ «ոստանիկ» են անվանվել ազատ մարդիկ «յարքունի տանէ»։ Ուշագրավ է և այն, որ «ոստանիկների յարքունի տանէ» գորագունդը հակադրվում է միշտ մյուս զորքին, որն անվանված է «գունդ ի Հայոց մեծաց ազատ և ազատորդի» կամ «զօրք նախարարացն յիւրաքանչիւր տանէ»։ Շատ պարզ է, որ «արքունի տուն» չի նշանակում այստեղ արքայական ընտանիք, այլ գործ է ածված տերիտորիալ իմաստով այն երկրի համար, որը եղել է ո՛չ թե նախարարական սեպհականութիւն, այլ արքայական։ «Ոստանիկները», ինչպես տեսնում ենք, Փարպեցու և Նղիշեի մոտ հակադրվում են նաև սեպուհներին, որոնք ծագում էին նախարարական տոհմերից։ Այս վերջին փաստը, որ «ոստանիկների» դասը չի ծագել նախարարական տոհմերից, շատ լավ հայտնի է եղել նաև հորենացուն։ Խորենացին ևս, ինչպես երևում է նրա վկայութիւններից, գիտեր, որ «ոստանիկները» եղել են «ազատ մարդիկ», բնակչութիւն են ունեցել ո՛չ թե նախարարական շրջաններում, այլ արքայապատկան նախկին երկրում, որ նրանցից կազմելով է եղել այն հատուկ գորագունդը, որ կոչվել է «արքունի» կամ «յարքունի տանէ», սակայն իրական ու պատմական ծագումն այդ դասի նույնքան մութն է եղել Խորենացու ժամանակ, ինչպես և այժմ։ Նրա բացատրութիւնը, որ «ոստան ազատութիւնը» ծագում է թագավորական հին զարմերից, ըստ երևութիւն, հիմնված է ո՛չ թե պատմական հաստատ ու որոշ փաստերի վրա, այլ, մոտավորապես, նույն տվյալների վրա, որ հայտնի են և մեզ։ Անհավանական չէ, որ Խորենացին կարող էր արքայական ընտանիքի նեղ իմաստով հասկացած լինել «ոստանիկների» «արքունի» մակդիրը և նրանց ծագումը «յարքունի տանէ»։ Այսպես է մեկնել «արքունի տունը» և Հ. Ղ. Ինճիճյանն իր «Հնախօսութեան» մեջ։ Հենվելով Նղիշեի վկայութիւնների վրա, նա ևս վստահաբար հետևեցրել է, իբր թե «ոստանիկներին» «այլ պատմագիրք աներկբայ յայտնի յարքունի տանէ լեալ յիշեն, սովիմբ իմանամք զբնիկ հայկական զարմն արքայական, որպէս էր ցեղն առաջին» (Հատոր Բ, Վենետիկ, 1835, էջ 161—162)։

Եթե «արքունի տան» այս հասկացողութիւնն է եղել Խորենացու ենթադրութեան միակ հիմքը, պարզ է, որ այդ ապացույցն ավելի քան թույլ է, որովհետև «յարքունի տանէ», ինչպես տեսանք, գործ է ածված «ոստանիկների» նկատմամբ արքունի երկրի և ո՛չ արքայական ընտանիքի իմաստով։ Համոզիչ չեն կարող համարվել

և Ն. Ադոնցի եզրակացությունները, որովհետև նրա պնդումների միակ ու գլխավոր կռիվները հորինացու վկայությունն է, որը նա հիմնական կետերում համարել է միանգամայն արժանահավատ: Նրա այն ուղղումը, որ «ոստանիկ» են անվանվել ո՛չ թե հնագույն թագավորական սերունդները, այլ Արշակունյաց տոհմի սեպուհները և իբր թե «սեպուհ» անունը գործ էածվել միմիայն նախարարական ընտանիքների որոշ անդամների համար («Армения в эпоху Юстиниана», стр. 451), ճիշտ է: Փալստոսի պատմության մեջ Գնեյը, Արշակ թագավորի եղբոր որդին, անվանված է «մեծ սեպուհ» Արշակունի» (Վենետիկ, 1832, Դպր. Դ., գլ. Ժե, էջ 124): Ինձ թվում է, որ միանգամայն անվիճելի է, Փալստոսի այս վկայությամբ էլ հաստատվում է, որ «սեպուհ» են կոչվել ո՛չ միայն նախարարական, այլև Արշակունյաց թագավորական տոհմի անդամները: Որ այս վերջիններն անվանված լինեին հատկապես «ոստանիկ» այդ մասին մատենագրական աղբյուրներում չկան ո՛չ վկայություններ, ո՛չ էլ որևէ ակնարկներ:

Ինչպես տեսնում ենք, «ոստանիկներին» «թագաւորական զարմ» լինելը, հին թագավորների կամ Արշակունյաց, այնքան էլ հաստատ չէ, ինչպես մինչև այժմ կարծել են: Խորենացու վկայության մեջ ամենահետաքրքիրը, իմ կարծիքով, ո՛չ թե նրա ենթադրական բացատրությունն է «ոստան ազատություն» ծագման մասին, այլ այն, որ նա այդ դասը համարել է շատ հին և նրա ծագման սկիզբը դրել Հայկ նահապետի հաջորդների ժամանակ: Եթե ի նկատի ունենանք, թե ինչպես առաջ եկած պիտի լինեին ազնվական դասը Հայաստանի թագավորապատկան կենտրոնական վայրերում, Խորենացու այդ վկայությունը կարող է ստանալ առանձին արժեք: «Ոստանը» կամ արքունի երկիրը Հայաստանի տանուտիրական բուն այն շրջանն էր, ուր, գլխավորապես, հաստատված պիտի լինեին հնդկա-եվրոպական եկվոր ու տիրող ցեղը և հիմնածքաղաքական ամենանշանավոր իր կենտրոնները: Եթե այդ այդպես է, չե՞նք կարող արդյոք ենթադրել, որ ոստանիկ դասը, մեծ մասամբ, բաղկացած պիտի լինեին հին այս տիրող ցեղի հատվածներից: Զէ՞ որ Հայկ նահապետը, որի սերունդներից, Խորենացու կարծիքով, ծագել է «ոստան ազատությունը», ո՛չ թե իրոք թագավոր է եղել, այլ առասպելական մի հսկա, որը դառել է հայ ազգի անվանադիր հերոսը և նախահայրը: Առանձնապես վստահելի է ու հավաստի Խորենացու վկայությունը Սասանյան Պարսկաստանի այն հատուկ քաղաքականության մասին, որ վերջինս վարել է

նախնական այս ռազմիկ դասի հանդեպ: «Իսկ աստ ուրեմն,— հաղորդում է նա,— Պարսից թագաւորութեանն, որպես լսեմ, այլ ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ, ոչ գիտեմ թե վասն սպառեւո՞յ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի» (Գիրք Բ, գլ. է, էջ 112): Սասանյան Պարսկաստանի քաղաքական այս ընթացքը միանգամայն հասկանալի է: Քաղաքական իր իշխանությունը Հայաստանում ամրապնդելու համար, շատ բնական է, որ Պարսկաստանը պետք է ամեն կերպ ձգտեր ոստանի բնիկ ազատներից կազմված գունդը փոխարինելու իրեն հնազանդ արքունի նոր գունդով:

Ընդունելով, որ ոստանիկ են անվանվել Արշակունյաց բուն երկրի ազատները, որոնցից կազմված գունդն անվանվել է «արքունի» կամ «յարքունի տանէ», դժբախտաբար, աղքյուրների վկայություններից չի որոշվում, թե արդյոք այդ ոստանիկ ազատների դասին շնչն պատկանել նաև աղատ գյուղացիներ, որոնք կարող էին գոյություն ունեցած լինել հին Հայաստանում: Խորենացու ականարկած «հավասար» և «ըստ մարդաթուի» հողաբաժանումը, որ, իմ կարծիքով, կարող է վերաբերվել ոստանիկներին, նոր ու հավանական լուսաբանություն կստանար, եթե կարևոր այս խնդրի մասին գտնվեր մատենագրական աղբյուրների մեջ հաստատուն որևէ մի ցուցում կամ ականարկ:

«ՀՈՂ ԵԿԵՂԵՑԻՈՅ» ԵՎ «ՀՈՂ ԵՐԴՈՅ»

Ազաթանգեղոսն իր պատմության մեջ, նկարագրելով քրիստոնեւոթյան տուրածումը Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Մեծի ժամանակ, հաղորդում է, որ Տրդատ թագավորը եկեղեցական դասի տնտեսական ապահովության համար հատկացրել էր հատուկ հողամասեր ավաններում և ազարակ տեղերում: «Յետ այսորիկ,— վկայում է Ազաթանգեղոսը,— հասեալ նմա (Գրիգոր Լուս.) բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս և յագարակս: Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առհասարակ՝ գրեաց չորս չորս հողս երդոյ՝ յամենայն ազարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ՝ ի ծա-

ռայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր» (Տփղիս, 1909, գլ. ճԺԹ, 837, էջ 436): Փափստոսը ևս նույն այս հողերի մասին ունի հետևյալ ուշագրավ վկայութիւնը. «Եւ հատ ևս յարբունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տունալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն հայոց: Զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարբունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գիւղ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն» (Դպր. Ե, գլ. 1ա, Վենետիկ, 1832, էջ 237):

Ինչպես տեսնում ենք, Ագաթանգեղոսի ու Փափստոսի այս հատվածները հիմնական խնդրում, որ Տրդատ թագավորը գյուղական եկեղեցիներին տվել էր հատուկ հողեր, միանգամայն իրար համապատասխանում են: Ուշագրավ այս փաստը, որի մասին հաղորդում են իրարից անկախ և Ագաթանգեղոսը և Փափստոսը, թվում է ինձ, որ պետք է ընդունել, իբրև հավաստի ու ստույգ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Տրդատ Մեծը, կամ գուցե նրա հաջորդները, տնտեսապես պետք է ապահովեին գյուղական հոգեվորականներին, և շատ բնական է, որ հոգևորականության վարձատրման ամենահավանական միջոցը կարող էր լինել այդ ժամանակ այն հողաբաշխումը, որ վկայված է հիշյալ հեղինակների մոտ:

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ գյուղական հոգևորականությունը հատկացված են եղել չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողն երդոյ», իսկ Փափստոսի վկայության մեջ հիշատակված են միայն «եւթն» հողերը, որոնցից Պապ թագավորը հինգը գրավել էր «յարբունիս»: Ագաթանգեղոսի վկայությունը, որ այս կետում ավելի ընդարձակ է ու որոշ, ամենայն հավանությամբ, պետք է համարվի նաև ավելի ուղիղ: Շատ հավանական է, որ ագարակ տեղերում, ուր եկեղեցու սպասավորների ընդհանուր թիվն ավելի պակաս կլիներ, քան ավաններում, հողաբաժինները ևս պետք է լինեին ավելի քիչ:

Առանձնապես հետաքրքիր է վերոհիշյալ վկայությունները մեջ հողաբաժինների չափի ու մեծության որոշումը՝ Ագաթանգեղոսի հատվածում՝ «չորս չորս» կամ «եօթն եօթն հողս երդոյ», իսկ Փափստոսի մոտ՝ առանց «երդոյ» միայն «եւթն» հողոյն»:

Արդ՝ ի՞նչ է նշանակում «հող երդոյ»: Որքան ինձ հայտնի է, այս դարձվածքը մինչև այժմ դեռ բավարար կերպով չուսաբան-

ված չէ: Հունարեն Ագաթանգեղոսում (Paul de Lagarde, «Agathangelus und die Akien Gregors von Armenien», Goettingen, 1887, էջ 76) «հողս երգոյ» թարգմանված է arouras: Հունարեն aroura բառը նշանակում է վարելահող կամ նաև հողի տարածության որոշ շափ, ինչպես հռոմեական jugerum-ը կամ գերմանական Hufe-ն: Ուրեմն՝ Ագաթանգեղոսի թարգմանը «հող երգոյ» հասկացել է կամ վարելահողի իմաստով, կամ համարել է իբրև որոշ շափի հողաբաժին: Երկրորդ ենթադրությունն ավելի հավանական է թվում ինձ, որովհետև aroura բառը հողաբաժնի հատուկ իր նշանակությամբ կարծես թե ավելի է համապատասխանում «հող երգոյ» հայերեն բնագրին, քան վարելահողի ընդհանուր իր նշանակությամբ: Հիմնվելով Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության վրա, կարելի է, ուրեմն, ենթադրել, որ «հողք երգոյ» այն հատուկ հողաբաժիններն են, որ ավաններում և ագարակներում տրվել են «երդերին», այսինքն՝ ծովսերին կամ տներին: Եթե իմ այս բացատրությունն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ որոշվում է հողաբաժանության այն հատուկ կարգը, որ գոյություն է ունեցել հին Հայաստանում Արշակունյաց թագավորության ժամանակ և որը, հավանաբար, հարատևած պիտի լիներ նաև Արշակունիների հարստության անկումից հետո: Եթե խորհնացու ակնարկած «բստ մարդաթուի» հողաբաժինը համապատասխանում էր ռուսական подушный надел-ին, «հող երգոյ» կարող է իր հերթին համապատասխան լինել ռուսական подворный надел-ին:

«Հող երգոյ» դարձվածքի այս լուսաբանությունը, թեև սոսկ մի ենթադրություն է, բայց, իմ կարծիքով, շատ ավելի հիմնավոր է, քան մինչ այժմ եղած մեկնությունները: Լեոն իր «Հայոց պատմության» մեջ (Թիֆլիս, 1917, էջ 567) ասում է, որ «բոլոր գյուղական եկեղեցիները, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, ստացան ո՛չ միայն ազատ հողերի կտորներ, այլև գյուղացիներին պատկանող հողաբաժիններ երդերի հաշվով»: Նախ պետք է առարկել, որ Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայության մեջ, որի վրա նա հիմնել է իր եզրակացությունները, ո՛չ մի խոսք չկա գյուղական եկեղեցիներին տրված ազատ հողերի կտորների մասին, այլ հիշատակված են միայն «հողք երգոյ»: Բացի այդ, դժվար է հասկանալ, թե ինչո՞ւ «հողք երգոյ» պետք է նշանակե «գյուղացիներին պատկանող հողաբաժիններ երդերի հաշվով»: Շատ մոտ ռ. երկմիտ է այս բացատրությունը: Անհնարին չէ, իհարկե, որ գյուղական եկեղեցիներին կարող էին հատկացված լինել հողաբաժիններ,

որ պատկանել են գյուղացիներին, սակայն հարկավոր էր այդ փաստորեն ապացուցել, որովհետև Ագաթանգեղոսի վկայությունից բնավ այդ չի հետևում: Մովսիս երկմիտ է հատկապես, որ իբր ստացված են եղել հողաբաժիններ «յերդերի հաշվով»: Լեոյի բացատրության մեջ, այնուամենայնիվ, նրա հիմնական ու էական դիտողությունը, որ «հող երդոյ» գործ է ածված գյուղացիական հողաբաժնի իմաստով, մոտավորապես համապատասխանում է վերոհիշյալ մեր լուսաբանությանը:

Լեոյի ենթադրությունը միակն է, որ արժանի էր ուշադրության: Սովորական ըմբռնումն Ագաթանգեղոսի հիշյալ վկայության, որ հանդիպում է պատմական նորագույն աշխատություններում, ինչպես և նույն հատվածի թարգմանությունները, այնքան են մակերեսային և վայրիվերո, որ չարժե անգամ նրանց վրա կանգ առնել: Ֆր. Տուրնեբիզը, օրինակ, իր պատմության մեջ («Histoire politique et religieuse de l'Armenie», Paris, 1900, p. 459) «չորս չորս հողս երդոյ» հասկացել է իբրև չորս կաված (quatre fermes), իսկ «եօթն եօթն հողս երդոյ» իբրև յոթը տուն (sept maisons): Այսպիսի կոպիտ սխալներ քիչ չեն բանասիրական և պատմական նորագույն ուսումնասիրություններում, գլխավորապես, երբ նրանց մեջ հիշատակվում են հայոց ներքին կյանքի վերաբերյալ փաստեր ու երևույթներ: Քննության առնել այն բոլոր սխալները, որոնք պարզ աղճատումներ են, կարծում եմ, որ միանգամայն ավելորդ է:

Եթե ճիշտ է, որ «հող երդոյ» որոշ չափի հողաբաժին է, որը հատկացվում էր գյուղական ամեն մեկ երդին, և որ այդ վկայությանը որոշվում է հողաբաժանության հատուկ կարգն ագարակներում և ավաններում, այդ դեպքում՝ Ագաթանգեղոսի վկայությունը ևս, ինչպես և իտերենացու ակնարկած «հաւասար» և «ըստ մարդաթուի» հողաբաժանությունը, կարող է հավաստի մի նշան համարվել, որ հողատիրական համայնական կարգերը գոյություն են ունեցել նաև հին Հայաստանում:

Բացի քննության առնված այս խնդիրներից, Փավստոսի ու Ագաթանգեղոսի վերոհիշյալ հատվածների մեջ կա և մի ուրիշ կարևոր տեղեկություն, որ արժանի է հատուկ ուշադրության: Եթե Տրդատ թագավորը (կամ թերևս նրա հաջորդներից մեկը) ունեցել է իրավագործություն ավանների ու ագարակների հողերից որոշ հողաբաժիններ հատկացնելու գյուղական հոգևորականությանը, շատ պարզ է, որ նա այդ հողերի վերաբերմամբ ունեցած պիտի

լինե՞ր գերագույն սեպհականության իրավունք: Ֆեոդալիզմի շըրջանում այդպիսի իրավունք ունեցել են, ինչպես հայտնի է, սենյորները գյուղական համայնքների հողերի նկատմամբ Արևմտյան Եվրոպայում: Նորագույն ուսումնասիրությունները հավանական են համարում, որ համայնական հողատիրության ձևերը և էությունը պահպանված են եղել հաճախ և ֆեոդալիզմի զարգացման ժամանակ, միայն թե նախկին ազատ համայնքները ենթարկվել են սենյորների ու ֆեոդալների իշխանությանը և ստացել են հետզհետե ճորտային համայնքների բնույթ: Արդյոք նույնը տեղի ունեցած չէ՞ նաև հին Հայաստանում: Եթե ի նկատի առնվի, որ Արշակունյաց Հայաստանը նախարարական իր կազմակերպությամբ կառուցված է եղել տոհմական նախընթաց կյանքի և նախնական փոխհարաբերությունների վրա, կարծում եմ, որ անհավանական չպիտի թվա, որ այստեղ ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, գյուղական նախկին համայնքները տնտեսապես ենթարկված լինելով թագավորի կամ նախարարների իշխանությանը, կարող էին միաժամանակ պահպանած լինել համայնական հողատիրության որոշ կարգերը: Այս վերջին ենթադրությունը եթե անգամ վիճելի համարվի, առաջին կետը մեր դիտողության, որ հայոց թագավորին պատկանել է գերագույն սեփականության իրավունք ազարականների ու ավանների հողերի վերաբերմամբ, պարզ ու որոշ արտահայտված է Ագաթանգեղոսի ու Փավստոսի վկայություններում:

Արդ՝ ի՞նչպես հասկանալ թագավորի այդ իրավունքը: Ունե՞ր արդյոք Տրդատ Մեծը կամ նրա հաջորդներից մեկն այնքան լայն իրավունքներ, որ կարողանար գյուղական հողերականության հողաբաժիններ հատկացնել ամբողջ Հայաստանում՝ թե՛ բուն արքայական և թե՛ նախարարապատկան երկրներում: Արշակունի թագավորների իրավասության սահմանները որոշելու համար այս հարցի պատասխանն ունի մեծ կարևորություն: Փավստոսի վկայության մեջ պարզ ու հաստատ ասված է, որ Տրդատ թագավորը տվել էր եկեղեցիներին հողաբաժիններ ռենդ ամենայն երկիրն հայոց», իսկ Ագաթանգեղոսի ասելով՝ «յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ»: Ագաթանգեղոսի վկայությունը, ինչպես տեսնում ենք, այնքան էլ պարզ չէ, որովհետև «յամենայն իշխանութեան իւրում» կարող է նշանակել թե՛ ամբողջ Հայաստանը և թե՛ թագավորի անմիջական տիրության տակ գտնվող սեփական երկիրը: Եթե ընդունենք Փավստոսի հետ միասին, որ Տրդատ Մեծի հրամանը տարածվել է ամբողջ Հայաստանի վրա, այդ դեպ-

քում՝ պետք է ընդունենք, որ հայ Արշակունիների թագավորական իշխանությունը շատ ավելի ընդարձակ է եղել, քան, սովորաբար, կարծվում է: Նրանք, ըստ երևույթին, ունեցած պիտի լինեն սյուզերենական ու միապետական գրեթե նման իրավունքներ, ինչպես և Կարոլինգյան տոհմի վերջին թագավորները և, մանավանդ, Կառտինգները:

Կարող ենք սակայն վստահել Փավստոսի վերոհիշյալ վկայությանը: Պետք է ի նկատի ունենալ, որ Փավստոսը և Ագաթանգեղոսը, հավանաբար, պատկանել են իրենք հոգևորական դասին, իսկ հոգևորականությունը մեծապես շահագրգռված էր, որ հողաբաժինների օրենքին տրվեր տարածական մեկնություն և այդ արտոնությունը պարտավորիչ համարվեր Հայաստանի բոլոր շրջանների համար: Բացի այդ, եթե ընդունենք նույնիսկ, որ թագավորի այդ կարգադրությունն արված է եղել ամբողջ Հայաստանի համար, միանգամայն հնարավոր է, որ այդ որոշումը կարող էր կայացած լինել նախարարների ընդհանուր համաձայնությամբ հատուկ ժողովում:

Փավստոսի վկայությանը, ինչպես տեսնում ենք, պետք է մոտենալ մեծ վերապահությամբ: Հայ Արշակունիների միապետական իշխանության բովանդակությունն ու էությունն այնքան լուրջ ու առաջնակարգ մի հարց է, որ կարոտ է դեռ մանրաբնին հետազոտության այն բոլոր ցածուցրիվ նյութերի օղնությամբ, որոնք գտնվում են մատենագրական աղբյուրներում: Նույն այս խնդրին ես վերադառնալու եմ իմ հաջորդ աշխատություններից մեկում:

«ԿԵԱՆՔ, ԱՐԱՐ, ԿԱԼՈՒԱՄ» ԵՎ «ՎԻՃԱԿ»

Վերևում մենք ենթադրեցինք, որ «հող երգով», հավանաբար, այն գյուղացիական հողաբաժինն է, որ Արշակունյաց թագավորության ժամանակ տրվել է ավաններում ու ագարակներում ամեն մեկ երդին:

Արդ՝ եթե հողաբաժանությունը գյուղերում գոյություն է ունեցել հին Հայաստանում, ո՞րն է գրաբար լեզվի մեջ այն հատուկ բառը, որն ունեցել է գյուղացիական հողարածնի նշանակություն:

Նիկ. Ադոնցն վերոհիշյալ իր աշխատության մեջ («Армения в эпоху Юстиниана», стр. 480) կարծում է, որ գյուղացիական հողաբաժինն անվանվել է հին հայերի մոտ «կյանք, արար» կամ

«կալուած», Հատկապես «կալուած» բառը նա համապատասխան է համարում ֆեոդալական շրջանի «tenure» բառին:

Նույն այդ բառերը, որ ունեն գյուղացիական հողաբաժնի իմաստ, գործ են ածվել, նրա կարծիքով, նաև իշխանական ու եկեղեցական կալվածքների համար:

Իր այս կարծիքն ապացուցանելու համար նա մատնացույց է անում Եղիշեի պատմության հետևյալ հատվածը. Վենետիկ, 1364, էջ 231—232՝ «Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուստ, ասէ մարգպանն, եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս. երդմամբ կնքէր և սուաքէր ի կողմանս կողմանս: Որ և բազումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածս»:

Թե ինչո՞ւ այս հատվածում «կեանք, արար, կալուած» պետք է նշանակեն գյուղացիական հողաբաժին (крестьянский надел), ինձ համար այդ միանգամայն մոլթ է ու անհասկանալի: Ընդհակառակը՝ այդ լուսաբանությունը թվում է ինձ ամենից քիչ հավանական, որովհետև հատվածի բովանդակությունից պարզ երևում է, որ «կեանք» և «արար» ունեցել են ո՛չ միայն շինականները, այլև ազատները: Սխալ է ու անհիմն, իմ կարծիքով, նիկ. Ադոնցիի նաև այն պնդումը, որ իբր թե «կեանք, արար, կալուած» ունեն նույնանման նշանակություն:

«Արար» և «կեանք», ինչպես ցույց են տալիս մեր հին մատենագրության մի շարք վկայություններ, ունեն ո՛չ թե անշարժ գույքի իմաստ, այլ շարժական:

Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելքից» երկում «արար» բառը գործ է ածված հենց այդ նշանակությամբ: Եզանդուխտի վկայաբանության մեջ մոգպետը, կամենալով հրապուրել քրիստոնյա կնոջը, հրամայում է՝ «զի ղերանելին Եզանդուխտ տարեալ անցուցանիցեն առ դրաք ապարանից իւրոց, և ցուցցեն նմա զամենայն արարս նորա, և զբաղմութիւն ծառայից նորա և զաղախանաց, զի հանցեն առաջի նորա, զի տեսանելով զբաղմութիւն ստացուածոց նորա, հաւանեսցի լինել նմա կնութեան (էջմիածին, 1921, էջ 162): Շատ պարզ է, որ «արարս» այս հատվածում ո՛չ թե մոգպետի հողաբաժիններն են, այլ ապարանքում գտնվող շարժական գույքը: Նույն իմաստն ունի «արար» բառը նաև Ղազար Փարպեցու Թղթի մեջ՝ «որ նման գայլոց յարձակեցան յարարս իմ և գիշատեցին յանխնայ, տեսեալ զիս՝ եթէ մերժեցայ յաշաց

քոց» (Տփղիս, 1904, էջ 197)։ Եղիշե պատմագիրը ևս, որից վկայություն է բերել Նիկ. Աղոնցը, «արարը», ըստ երևույթին, նույնպես հասկացել է իբրև շարժական գույք իր պատմության մի ուրիշ հատվածում. «Եւ այնպես սաստիկ արկին զպարտեսս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա (Վասակի),—վկայում է Եղիշեն,—որ մինչև զհարց և զհատուց և զիւր արարս և զգարդս կանանց ևս եղ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի» (Վնեհտիկ, 1864, էջ 246)։ Իմ կարծիքով, «զհարց և զհատուց և զիւր արարս» խոսքերով ակնարկված են այստեղ ո՛չ թե Վասակի ու նրա նախնիքների հողերը կամ անշարժ գույքերը, այլ շարժականը։

Ավելի որոշ է «կեանք» բառի նշանակությունը, որը նույնպես չունի ո՛չ հողաբաժնի իմաստ, ո՛չ էլ անշարժ գույքի։ Նրա բուն նշանակությունը պարզ երևում է Ավետարանի գրաբար թարգմանությունից, ուր «կեանքը» համապատասխանում է հունարեն *bios*, լատին. *victum* և ռուս. *пропитание* բառերին։ Ուրեմն՝ «կյանք» բառը, ինչպես տեսնում ենք, ունեցել է շարժական գույքի և հատկապես՝ կենսամթերքների իմաստ։

Որ «կեանք» բառը չէր կարող ունենալ հողի կամ հողաբաժնի նշանակություն, այդ երևում է նաև Շահապիվանի ժողովի հետևյալ կանոնից. «Եթէ ոք զկինն թողցէ զորդոյ մայր առանց բանի պոռնկութեան, և կամ թէ արատ ինչ շար ի մարմնի շիցէ, այլ որ եթէ այլն շնաբարոյ իցէ և այլում ակն եղեալ իցե, դատաստանն այս լիցի, զտուն և զկեանս և զորդիս և զհող և զշուր և զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկէսն կնոջն առցեն» (Արս. Ղըլտըճյան, Թիֆլիս, 1914, էջ 64)։ Միանգամայն պարզ է, իմ կարծիքով, որ «կեանք»-ը այստեղ գործ է ածված շնացողի շարժական գույքերի համար, որովհետև առանձին հիշատակված է կանոնում նաև նրա «հող և ջուր»-ը։

Ինչպես տեսնում ենք, ո՛չ «կեանք»-ը և ո՛չ էլ «արար»-ը չունեն այն նշանակությունը, որ նրանց վերագրել է Նիկ. Աղոնցը։ Պետք է ուրեմն ենթադրել, որ նրա մատնանշած Եղիշեի վկայության մեջ ևս «կեանք» և «արար» ունեն շարժական գույքի իմաստ կամ նշանակում են ընդհանրապես, գույք կամ ինչք, բայց ո՛չ գյուղացիական հողաբաժին։

Անհավանական ու անընդունելի պետք է համարել Նիկ. Աղոնցի կարծիքը նաև «կալուած» բառի մասին։ «Կալուած», ճիշտ է, համապատասխանում է ֆրանսերեն *tenure* բառին, սակայն այդ

նմանությունը քերականական է միայն ու արտաքին, մինչդեռ նրանց բովանդակությունն ու իմաստը բոլորովին տարբեր են։ Tenure ֆեոդալական Ֆրանսիայում մատնանշում է հողերի տիրապետության եղանակները (tenures à cens, tenures a champart, tenures roturieres, tenures villaines), իսկ Հայաստանում «կալուած»-ը, ինչպես երևում է մատենագրական վկայություններից, չի ունեցել այդպիսի հատուկ իմաստ, այլ ընդհանուր մի բառ է, որ գործ է ածվել զանազան տեսակ անշարժ գույքերի համար։ Ոսկեդարյան գրաբար թարգմանություններում, սովորաբար, նա համապատասխանում է հունարեն kataschesis բառին, որ նշանակում է ունեցվածք, ստացվածք կամ տիրություն (χμυσέστω, ἰμσνις, владение)։ Հայոց մատենագրության հնագույն երկերում և ո՛չ մի դեպք ինձ հայտնի չէ, որ «կալուած» բառն ունենար գյուղացիական հողաբաժնի հատուկ նշանակություն։

Բայց մի՞թե չի պահպանվել գրաբար լեզվի մեջ ուրիշ որևէ մի բառ գյուղացիական հողաբաժնի նշանակությամբ։ Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, որ համայնական հողատիրությունը, ինչպես և հողաբաժանության որոշ կարգերը, գոյություն են ունեցել հին Հայաստանում, շատ պարզ է որ հողաբաժնի համար հատուկ որևէ մի բառ գործածված պիտի լիներ նաև հին հայերենում։ Եվ այդ հատուկ բառը, թվում է ինձ, որ կա իրոք գրաբարում, միայն թե քրիստոնեության շրջանում նա ստացել է նաև տարբեր նշանակություն։ Ես հավանական եմ համարում, որ գյուղացիական հողաբաժինը կոչվել է հին Հայաստանում ո՛չ թե «կեանք, արար, կալուած» ինչպես այդ ենթադրել է պրոֆ. Նիկ. Ադոնցը, այլ «վիճակ»։

Քրիստոնեության շրջանում, ինչպես հայտնի է, «վիճակ» և «վիճակաւոր» բառերը գործ են ածվել կղեր և կղերականի փոխարեն (հունարեն klêroz և klêrikos)։ Այդպես էին անվանվում հոգևորականությունը և հոգևորականները, որովհետև, «Գործք Առաքելոցի» վկայությամբ, Մատթևոսն առաքյալ էր ընտրվել վիճակի միջոցով («Գործք Առաքելոց» գլ. Ա, 23—26)։ Որ «վիճակ» բառն ունեցել է հողաբաժնի նշանակություն, այդ երևում է հայոց հնագույն մատենագրության մի շարք հատվածներից։ «Վիճակ» բառի տակ Հայկազյան լեզվի նոր բառգրքում առաջ է բերված Մխիթար Գոշի Երեմիայի մեկնությունից հետևյալ վկայությունը՝ «վիճակ զանդաստանս սովոր են ասել. և մեք սովորեմք զժողովուրդս վիճակ կոչել»։ Այս վկայությունը պարզ ցույց է

տալիս, որ «վիճակ»-ը, սովորաբար, գործ է ածվել անդաստան-ներին, այսինքն՝ արտերի կամ վարելահողերի համար: Հենց նույն այդ իմաստն ունի «վիճակը» Հին Կտակարանի հայերեն թարգմանության զանազան հատվածներում. օրինակ՝ «Եւ ասէ Արիստղոմ ցծառայս իւր, Գիտէք զվիճակ գետնոյ Յովաբայ, լի գարւով մօտ է առ իս, երթայք այրեցէք զնա հրով» (Թագ. Բ, գլ. ԺԴ, 30):

«Վիճակ» բառի գործածությունը գյուղացիական հողաբաժնի համար հաճախակի մի երևույթ է եղել նաև Արևմտյան Նվրոպայի ու Ռուսաստանի գյուղական համայնքներում, ուր համայնական հողերը ենթարկվել են պարբերական վերաբաժանումների: Ֆրանկների Zex Salica օրենսդրական գրվածքում համայնական հողաբաժիններն անվանվել են sors, գերմանական երկրներում՝ Zoots, հին Ռուսաստանում՝ жеребье: Ինչպես տեսնում ենք, այդ տերմինները միևնույն նշանակությունն ունեն և միանգամայն համապատասխանում են հին հայերեն «վիճակ» բառին: Պետք է ենթադրել, որ համայնական հողատիրության նախնական շրջանում հողերի պարբերական վերաբաժանումները կատարվել են վիճակարկությամբ և այդ, ըստ երևույթին, սովորական մի կարգ է եղել գյուղական նախնական համայնքներում:

Պրոֆ. Ի. Զավախովը վերը հիշված իր աշխատության մեջ («Государственный строй древней Грузии и древней Армении») ենթադրում է, որ հին Հայաստանում և Վրաստանում, ինչպես նաև Արևելքի ուրիշ ազգերի մոտ, պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ տերմինոլոգիան ծագել է, մեծ մասամբ, համայնական-տոհմական նախորդ շրջանից: Օրինակ՝ տերիտորիալ բոլոր միավորները, ամենափոքրից սկսած մինչև ամենամեծը, անվանվել են «տուն»։ «տանուտէր» բառը, որ սկզբում ունեցել է տոհմապետի իմաստ, հետագայում գործ է ածվել գյուղապետների, նախարարական տոհմերի նահապետների, վարչական պաշտոնյաների և նույնիսկ թագավորի համար:

Ինձ թվում է, որ համայնական-տոհմական հնադրույն շրջանի նման տերմիններից է նաև «վիճակ» բառը, որն ունեցել է սկզբում համայնական հողաբաժնի իմաստ, իսկ հետո ստացել է և ուրիշ նշանակություններ:

Ուշադրության արժանի է, որ նույն այս «վիճակ» բառը Հին Կտակարանի զրաբար թարգմանության մեջ համապատասխանում է հունարեն schoimismos, schoimisma բառերին, որ նշանակում

են՝ չափում լարի, չվանի միջոցով կամ լարով, չվանով չափված հողաբաժին:

Նյութից մի փոքր շեղվելով, ավելորդ չեմ համարում այստեղ հիշել, որ Թովմա Արծրունին, նկարագրելով թե ինչպես Բուղայի ժամանակ, Վասպուրականի նվաճումից հետո, այնտեղ հաստատվում էր մահմեդականների գաղթականությունը, պատմում է, որ ասկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն աղգքն Տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս» (Դպր. Գ. գլ. Ե, Ս. Պետերբուրգ 1887, էջ 151—152): Եթե ի նկատի առնվի, որ այս անցքերը տեղ են ունեցել Բուղայի արշավանքի ժամանակ 852—855 թվերին, իսկ Թովմա Արծրունու պատմությունը գրված է, հավանաբար, տասներորդ դարի երեսնական թվականներին, դժվար թե առանց վերապահության կարելի լինի ընդունել, որ մահմեդական դաղթականության մեջ հողաբաժանումն իսկապես տեղի է ունեցել ճիշտ այն եղանակով, ինչպես վկայում է Թովմա Արծրունին: Թովմա Արծրունու պատկերավոր ու նկարագրական շարադրության մեջ կարող է, հավանաբար, արտահայտված լինել ո՛չ թե պատմական ու իրական եղելությունը, այլ հողաբաժանության այն ծանոթ ու սովորական կարգը, վիճակարկությամբ ու լարաձգությամբ, որ գոյություն է ունեցել նրա ժամանակ Հայաստանում: Ես այդ չեմ պնդում, բայց և չեմ համարում անհավանական ու անհնարին:

Համենայն դեպս, վերոհիշյալ փաստը, որ հունարեն schoinismos և schoinisma թարգմանվել են «վիճակ» բառով, կարևոր ու ուշագրավ մի ականարկ է, որ «վիճակ» բառը կապ է ունեցել հողաբաժանության հետ, որովհետև դործ է ածվել, ըստ երևույթին, այնպիսի հողամասերի համար, որոնք չափված և որոշված են եղել լարաձգությամբ:

Հիմնվելով այս և մյուս մեր ասածների վրա, ինձ թվում է, կարող ենք եզրակացնել, որ հին Հայաստանում գյուղացիական հողաբաժիններն անվանվել են ո՛չ թե «կեանք, արար, կալուած», այլ «վիճակ», որը, ինչպես տեսանք, իր նշանակությամբ ու գործածությամբ համապատասխանում է sors, Loos և жеребье բառերին: Այս վերջին բառերի նման «վիճակը» ևս, հավանաբար, հատուկ մի տերմին է, որ գործ է ածվել համայնական հողատիրության միջավայրում:

Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, մեր ենթադրությունը համայնական հողատիրության գոյության մասին հին Հայաստանում հաստատվում է ո՛չ միայն վերև առաջ բերված վկայություններով, այլև լեզվական այս նոր դիտողություններով:

«ՌԱՄԻԿ» ԵՎ «ՌԱՄԻԿ ՇԻՆԱԿԱՆ»

«Ռամիկ» բառի նշանակությունը, թեև բանասերներից շատերը համարել են պարզ ու հասկանալի, սակայն սովորական այդ կարծիքը ճիշտ չէ: Նորագույն աշխատություններում այդ բառի ստուգաբանությունն ու ծագումը, ինչպես և նրա բուն իմաստը, աշխատել են լուսաբանել Ի. Զավախովը, Նիկ. Մառը և Նիկ. Ադոնցը:

Պրոֆ. Ի. Զավախովը վերև հիշատակված իր աշխատության մեջ, քննելով հին Հայաստանի բնակչության սոցիալական կազմը, ենթադրում է, որ «ռամիկները», ըստ երևույթին, համարվել են ազատներ («Государственный строй древней Грузии и древней Армении», стр. 133): Այս խորթ ու օտարոտի իր եզրակացությունը հիմնավորելու համար՝ նա մատնացույց է անում Ղազար Փարպեցու հետևյալ վկայությունը. «Հրաման տալիս Նիխոր ամենայն եկեղոցն ընդ Մամիկոնենին Վահանայ, նախարարաց և ռամկաց, մտանել յատեանն առ նոսա» (Դր. Գ, գլ. 47, Տփղիս, 1904, էջ 169): Երբ բոլորը հավաքվել էին և սկսվել էր խորհրդակցությունը, Վահանը, Փարպեցու ասելով, խոսք է առնում և ասում Նիխորին «այժմ աստ են առաջի ձեր նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկան է և յայրուծիոյ որերոյ» (էջ 170): Ի. Զավախովի կարծիքով, «այրուծիոյ» տակ Վահանը, հավանաբար, հասկացել է «ռամիկներին»: Որ «ռամիկները» ազատ են եղել, այդ երևում է, նրա ենթադրությամբ, նաև Ատովմի, նրա որդու ու ընկերների վկայաբանության վրացերեն թարգմանությունից, որի մեջ «ռամիկ» բառը թարգմանված է «չինեբուլի», որ նշանակում է «ականաւոր»:

«Ռամիկներին» մասին արտասովոր այս կարծիքը, իհարկե, ականերև մի թյուրիմացություն է:

Պրոֆ. Նիկ. Մառը քննադատական իր հոդվածում, որ գրված է հատկապես Ի. Զավախովի գրքի առիթով («Журн. Мин. Нар. Просв.», 1908, էջ 200—223), «ռամիկ» բառի վրացերեն «չինեբուլի» թարգմանությունը համարում է աղավաղում կամ թյուրի-

մացության արդյունք, որովհետեւ հայերենում «ռամիկը» նշանակում է միշտ՝ հասարակ ժողովուրդ կամ խուժան (простолюди, простой народ, чернь): Ն. Մառի կարծիքով անհնարին է, որ Վահանը «այրուծիոյ» տակ հասկացած լինէր «ռամիկներին»: «Ռամիկին,— ասում է նա,— գուցե և չէր արգելւում ձիով ման գալ, սակայն «ռամիկն» ինքնըստինքյան ներհակ ու հակամիտ է ամենից առաջ հենց այրուծիուն»: Ի. Զավախովին շփոթեցրել ու մոլորեցրել են, Ն. Մառի ենթադրությամբ, նրա առաջ բերած վկայությունների երկու կասկածելի ընթերցվածները:

Ինձ թվում է, որ ամենեւին կարիք չկա վերեւ մատնանշված բնագրերը համարել աղճատված: Բավականաչափ համոզիչ չէ նույնպես Ն. Մառի պնդումը, իբր թե «ռամիկը» և «այրուծին» երկու իրար բացասող գաղափարներ են: Ընդհակառակը՝ Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ Հայաստանում, ըստ երևութիւն, գոյութիւն է ունեցել հատուկ հեծելազորք, որ կազմված է եղել «ռամիկներից»: Այդ առթիւ կան որոշ ցուցումներ ու ակնարկներ Փարպեցու պատմության մեջ և Դվինի ժողովի կանոններում. Փարպ., Դր. Գ, գլ. հը, Տփղիս, 1904, էջ 144՝ «Եւ տեսեալ սպարապետին Հայոց Վահանայ զայսչափ բազմութիւն զօրացն Պարսից, և այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա էին, և այլ ուսմիկ այրուծիոյն Հայոց»։ Կանոնը Դունայ ժողովոյն, Վաղարշապատ 1905, (հրատար. Մխիթար վարդապետի և Սիրական Տիգրանյանի), էջ 23՝ «ոմանք յազատաց և յռամիկ հեծելոց հասանելով ի գիւղս ուրեք՝ թողեալ զգիւղն ի վանս առնեն զիջեանս և ի յարկս սրբոց»։ Դվինի ժողովի կանոնների մեջ հետաքրքիր է շատ նաև վեցերորդ կանոնը, որից երևում է, որ եկեղեցականներից ոմանք թողած են եղել իրենց պաշտոնները և մտել հեծելազորքի շարքերը. «ոմանք յուխտէ եկեղեցւոյ զկարգ և զպաշտօն թողին, և զհեծելութիւն ստացան» (նույնը, էջ 12): Արդյոք այս «հեծելութիւնը» նույն «ռամիկ այրուծին» չէ՞, որ հիշատակված է նախորդ վկայությունների մեջ: Ինչպես տեսնում ենք, պրոֆ. Ն. Մառի կտրուկ ու վճռական կարծիքն այնքան էլ համոզիչ ու հաստատուն չէ: «Ռամիկ» հեծելազորքի գոյութիւնը Սասանյան իշխանության շրջանում ո՛չ միայն չի կարելի բացարձակ կերպով ժխտել, այլ այդ իրողութիւնը կարծես թե փաստորեն իսկ հաստատվում է: Իսկ եթե այդ այդպես է, եթե հոգևորականներն անգամ, իրենց կարգն ու պաշտոնը թողնելով, հրապուրվում էին «հեծելությամբ», թվում է ինձ, անհավանական չի լինի նաև ենթադրել, որ հեծելա-

գորքի մեջ գտնվող «ռամիկներին» հատուկ այդ ծառայության համար կարող էին տրված լինել տնտեսական ու իրավական որոշ արտոնություններ: Ատոմիի ու նրա ընկերակիցների վկայաբանության հայերեն բնագրի մեջ հիշված են հենց այս «ռամիկ հեծեալ»-ները: Սրանց նկատմամբ վրացերեն «չինեբուլի» մակդիրը կարող է այնքան էլ անտեղի չհամարվել և գուցե գործ է ածված ո՛չ թե թյուրիմացաբար, այլ միանգամայն գիտակցաբար: Նմանապես, միանգամայն հնարավոր է ու նույնիսկ հավանական, որ Պարսից նիխոր իշխանի հրավիրած խորհրդակցությանը մասնակցած է հենց այս «ռամիկ այրուծին», ուստի և անկարելի չպիտի թվա, որ Վահանը կարող էր «այրուծիոյ օրերոյ» տակ հասկացած լինել «ռամիկներին»: Պրոֆ. Ի. Զավախովի սխալ եզրակացության գրեթե անվերջ պատճառը, ըստ երևույթին, ո՛չ թե նրա առաջ բերած վկայությունների կասկածելի կամ աղավաղված ընկթեցվածներն են եղել, այլ այն, որ այդ վկայություններից ո՛չ մի կերպ չէր կարելի հետևցնել, որ «ռամիկները», ընդհանրապես, պետք է համարվեն ազատներ:

Պրոֆ. Ն. Մառը ենթադրում է ինքը, որ «ռամիկներին» սոցիալական դրուժյունը եղել է խիստ ցածր և, իրապես, «ռամիկ» է անվանվել շինական ճնշված դասը: «Իսկապես, «չինականը» և «ռամիկը», — ասում է նա, — որոշ ժամանակից սկսած հոմանիշներ են և գործ են ածվել միևնույն դասի համար, սակայն տարբեր է նրանց լեզվաբանական ծագումը: «Թամիկը», ինչպես պարսիկը կամ տաճիկը, ազգագրական ծագում ունի. նրա արմատն է «ռամ», որ հնդկա-եվրոպական լեզվագետները համեմատում են սխալմամբ իրանական «ռամ» և «ռամա» բառերի հետ, որ նշանակում են երամ, ամբոխ (стадо, толпа): Իսկ իրոք «ռամ»-ը սովորական հապաված ձևն է «արամ»-ի, որից հոգնակի են» վերջավորությունամբ առաջ է եկել «արմեն-ի», «արմեններ» («армен-и», армяне) անունը: Այսպիսով ազգագրական տերմինը՝ Հայաստանի նախարարիական բնակչության անունը, արիական գաղթից հետո, դառել է դասային տերմին և գործ է ածվել իբրև անուն ստորագրված ու ստրկացված դասի: Նույն այս կարծիքը պրոֆ. Ն. Մառը հայտնել է նաև իր նորագույն աշխատություններից մեկում (տե՛ս Н. Марр, «Батум, Ардаган, Карс исторический узел межнациональных отношений Кавказа», Петроград, 1922).

Պրոֆ. Նիկ. Ադոնցը, որին ծանոթ է եղել Մառի այս տեսու-

թյունը, ինչպես երևում է, համաձայն չէ նրա կարծիքին և տալիս է «ռամիկ» բառի մի նոր լուսարանություն («Армения в эпоху Юстиниана», стр. 436): նրա կարծիքով՝ հին Հայաստանում բնակչության ոչ ազնվական տարրը՝ հասարակ ժողովուրդը՝ անվանվել է ըստ շրջանների՝ գեղջուկ, շինական, ռամիկ, գռեհիկ, թերևս նաև մշակ և այլն: «Ռամիկը» նա ևս համարում է ազգագրական անուն, բայց ո՛չ նախաարիական արմենների, այլ հարավ-արևմտյան Հայաստանի նախնական բնակչության՝ արամայեցիների (arameloi), որոնց նվաճել էր ու հպատակեցրել իրեն հնդկա-եվրոպական եկվոր ժողովուրդը:

Եթե ուղիղ լինե՞ր Պրոֆ. Ն. Մառի վերոհիշյալ ենթադրությունը, պարզված կլինե՞ր, անշուշտ, ո՛չ միայն «ռամիկ» բառի ծագումը և սոցիալական բովանդակությունը, այլև հայոց պատմության ամենահնագույն շրջանի հիմնական խնդիրներից մեկը: Ընդունելով նրա կարծիքը, մենք հարկադրված կլինե՞նք նաև եզրակացնել, որ արմեններ անվանվել են Հայաստանի նախաարիական բնակիչները, իսկ հայեր՝ արիական կամ հնդկա-եվրոպական գաղթականները: Սակայն այս եզրակացությունն արմենների մասին հակասում է պատմական մեզ ծանոթ տեղեկություններին: Վեցերորդ դարից սկսած (Քր. առաջ), ինչպես հայտնի է, հին պարսիկները, հույները, հռոմեացիները և գրեթե բոլոր մյուս օտար ազգերը, անվանելով հայերին արմեններ, ի նկատի են ունեցել ո՛չ թե Հայաստանի նախնական բնակչությունը, այլ Փոքր Ասիայից Հայաստան գաղթած արիական կամ հնդկա-եվրոպական նոր ժողովուրդը: Ն. Մառի ենթադրությունը չի կարող ճիշտ լինել, որովհետև միանգամայն հակառակ է պատմական հավաստի ու հաստատ այդ վկայություններին: Իսկ պատմական ուրիշ մի ուշագրավ փաստ, որից երևար, որ արմենները Հայաստանի նախնական ժողովուրդն են և ո՛չ եկվոր արիացիները, մինչև այժմ դեռ գտնված չէ: Բացի հիմնական այս առարկությունից Ն. Մառի ենթադրության դեմ կարող են լինել նաև լուրջ հակաճառություններ լեզվագիտական տեսակետից, մինչև որ նա չապացուցանե, որ «ա»-ի սղումը բառասկզբում լեզվական հաստատուն մի օրենք է:

Նիկ. Աղոնցի կարծիքը պատմական տեսակետից թեև ավելի է հնարավոր. ու հավատալի, սակայն այդ կարծիքը ևս առ այժմ սոսկ մի գուշակություն է, որովհետև ամենևին հիմնավորված չէ պատմական փաստացի տվյալներով, ո՛չ էլ, մասնավոր, հայոց լեզվի հնչյունափոխության հաստատուն ու օրինական կանոններով:

Պրոֆ. Հ. Հյուբշմանը «ռամիկ» բառը թարգմանույ է «gemeines Volk, gemein, weltlich, Laie» և կարծում է, որ հայերեն «ռամ» և «ռամիկ» փոխառություն են պարթևերենից և համապատասխանում են նոր պարսկերեն ram և rama բառերին (= հայեր. «երամ», «երամակ»), որ նշանակում են՝ խոմբ, գունդ, բազմություն, հոտ («Armenische Grammatik», s. 147 և 233):

Այս մեկնությունը, որ լեզվագիտական տեսակետից միանգամայն ընդունելի է, իմ կարծիքով, անհամեմատ ավելի հիմնավոր է ու հավաստի, քան Ն. Մառի ու Ն. Ադոնցի վերոհիշյալ բացատրությունները, որոնք ճիշտ է, խիստ հետաքրքիր են ու հրապուրիչ, բայց սրամիտ կռահումներ են միայն, այլ ո՛չ գիտնականորեն հիմնավորված եզրակացություններ:

«Ռամիկ» բառի ծագման վրա հարկավոր էր մանրամասն կանդաունել, որովհետև նրա այս կամ այն ստուգաբանության հետ սերտ կապված է նաև նրա հավանական նշանակությունը և սոցիալական հատուկ բովանդակությունը: Ինչպես տեսանք, Ն. Մառի ու Ն. Ադոնցի մեկնությամբ այդ բառն ունենալու է, գլխավորապես, հպատակված ու ստրկացված շինականության իմաստ, իսկ, ընդհակառակը, Հ. Հյուբշմանի բացատրությամբ՝ նրա սկզբնական բուն նշանակությունը պետք է լինի՝ հասարակ կամ խաժամուժ ժողովուրդ՝ ընդհանրապես:

Արդ՝ «ռամիկ» բառի վերջին այս նշանակությունը, թվում է ինձ, որ ավելի ճիշտ պիտի համարվի, որովհետև պատմական ու մատենագրական աղբյուրներում «ռամիկ»-ը գործ էածված հենց այդ լայն իմաստով:

Մատենագրական աղբյուրների քննությամբ, նախ և առաջ, շատ պարզ որոշվում է, որ «ռամիկ»-ները կազմել են հին Հայաստանի բնակչության ստորին խավը, և որպես այդպիսին հակադրվել են, ինչպես և շինականները, «նախարարներին, սեպուհներին, ազատներին», նաև հոգևորականներին ու ռոստանիկներին»: Նրանց ստորադաս այդ դրությունը երևում է հետևյալ հատվածներից. 1) Փարպ. Դր. Բ, գլ. խա, Տփղիս, 1904, էջ 73. «Քանզի բազմութիւն փախստէիցն հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ»։ 2) Փարպ. Դր. Գ, գլ. հա, էջ 128. «Եւ առեալ ընդ իւր զնախարարսն և զազատս և զայլ ամեանայն ռամիկն»։ 3) Կանոնք Վաչագանայ, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 192, «հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց, եպիսկո-

պոսաց, քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց և ռամկաց»
4) խորեն. Գ. գլ. կը, Տփղիս, 1913, էջ 365. «յօտարութիւն վտա-
րումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց»:

Ուշադրութեան արժանի է այս և ուրիշ շատ վկայութիւնների մեջ, որ ամեն անգամ երբ սոցիալական ավելի բարձր դասերի կող-
քին հիշատակվել են ռամիկները, միանգամայն ավելորդ է եղել
հիշել նրանց հետ միասին նաև շինականներին: Եվ այդ շատ լավ
հասկանալի է: «Ռամիկ» բառն ինքն արդեն նշանակում էր հա-
սարակ ժողովուրդ և մատնանշում էր ժողովրդի ամբողջ բազմու-
թիւնը, որ չէր պատկանում ազնվական կամ հոգևորական դասե-
րին: Նույն բառի տակ, շատ պարզ է, որ արդեն իսկ հասկացվում
էր և շինականութիւնը: Որ շինականները «ռամիկ մարդիկ» էին,
այդ պարզ երևում է մի քանի վկայութիւններից, որոնց մեջ նրանց
«ռամիկ» լինելն առանձնապես շեշտված է: Օրինակ՝ Փալստոս,
Դպ. Գ. գլ. իա, Վենետիկ, 1832, էջ 54. «Ապա առաւել ժողովեցան
մի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան
երկրին. նախարարք, մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհա-
կալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց ի
զօրավարայն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն».
Խորեն., Գ. գլ. է, Տփղիս, 1913, էջ 260. «և զորդին Բակրոյ զՀեշայ
ձերբակալ արարեալ՝ հանդերձ երկաթի կապանօք առաքէ հոսրո-
վու և զգաւառս իշխանութեան նորա սրով դատի յանխնայ, ոչ
միայն զմարտիկս, այլ և զռամիկ շինականս»:

Շինականների «ռամիկ» լինելը, ինչպես տեսնում ենք, միան-
գամայն անվիճելի է: Բայց կարելի՞ է արդյոք դրանից հետևել,
ինչպես այդ անում է պրոֆ. Ն. Մառը, որ «ռամիկ» բառը և «շի-
նականը» հոմանիշներ են և գործ են ածվել սոցիալական միևնույն
դասի համար: Այս եզրակացութիւնը, որ սովորական է ու ընդ-
հանուր բանասիրական ու պատմական նաև ուրիշ աշխատութիւն-
ներում, թվում է ինձ, որ հիմնավոր չէ: «Ռամիկ» հին Հայաստա-
նում կոչվել են ո՛չ միայն շինականները, այլև քաղաքների բնակ-
չութեան ստորին խավերը, Ղազար Փարպեցին պատմում է, որ
Վահան Մամիկոնյանը, ստանալով Դվին քաղաքում իր մարդա-
նութեան հրովարտակը, գնում է իսկույն եկեղեցի: «Առեալ զհրո-
վարտակն,— ասում է Փարպեցին,— խնդրէր վաղվադակի անդրու-
վար՝ երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն որ ի
քաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նա-
խարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց,

ժերոց և տղայոց, այլ և հարստնք անդամ յառաքաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդրին զամօթ հարսնութեան դիմեալ ընթանային յեկեղեցին» (Դր. Գ, գլ. դթ, Տփղիս, 1904, էջ 178)։ «Ռամիկները», որ հիշատակված են այս հատվածում, ո՛չ թե բացառապես շինականներն են, այլ քաղաքի բնակչության ստորին խավերը՝ արհեստավորները, թերևս նաև մանր առևտրականները և այլն, որոնք՝ շինականներից միանգամայն տարբեր՝ սոցիալական հատուկ դասակարգեր էին։ Նույն այս նշանակությունն ունի «ռամիկը» նաև Հովհաննես կաթողիկոսի պատմության հետևյալ հատվածում. «Զայսու ժամանակաւ ահագին իմն յեղակարծումն ժամուսաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դվին քաղաքի՝ բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն դրնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր։ Վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս զխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև գերիզուտ վայրս առաւարաց յական թօթափել տեսանէր» (Թիֆլիս, 1912, էջ 162)։ Այս վկայություն մեջ ևս խոսքը, անշուշտ, քաղաքաբնակ հասարակ ժողովրդի տների մասին է և ո՛չ շինականների։

Մեր այս քննությունից, ինչպես և Հյուբշմանի վերոհիշյալ ստուգաբանական մեկնությունից, կարծում եմ, կարելի է հետևցրնել, որ «ռամիկ» բառը սկզբնական իր նշանակությամբ մոտավորապես համապատասխան պիտի լիներ գերմաներեն Menge կամ Masse և ռուսերեն толпа, масса բառերին, որ հաճախ գործ են ածվել հասարակ, խաժամուժ ժողովրդի իմաստով։ Ուշադրության արժանի է այդ տեսակետից, որ ոսկեդարյան շրջանի հայերեն թարգմանություններում «ռամիկ» բառը մեծ մասամբ համապատասխանում է հունարեն δῆμος և demotēs բառերին, որոնք հետքիստոնեական մատենագրության մեջ ունեցել են նույնպես, գրլխավորապես, խառնիճադանջ բազմության, ամբոխի ու հասարակ ժողովրդի իմաստ։

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «ռամիկը» ո՛չ թե հոմանիշ է «շինական» բառի, այլ նրա նշանակությունն ավելի ընդարձակ է ու ընդհանուր։ «Ռամիկ» կարող էին անվանվել ո՛չ միայն «շինականները» այլև, ընդհանրապես, ժողովրդի ամբողջ բազմությունը, լինել նա գյուղացի թե քաղաքացի, եթե նա չէր պատկանում ազնվական կամ հոգևորական դասերին։ Որովհետև հին Հայաստանը երկրագործական ու գյուղացիական երկիր էր, շատ բնական է, որ այստեղ «ռամիկները» սովոր մեծամասնությունը կազմում

էին «շինականները»։ Անհավանական չէ, որ այդ բառերի մերձեցման ու նույնացման գլխավոր առիթներից մեկը կարող էր լինել նաև հենց այս վերջին հանգամանքը։

«ՄԱՌԱՅՈՒԹԻՒՆ» ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ «Ի ՀԱՐԿԻ ՄԱՌԱՅՈՒԹԻՒՆ»

Շինականների սոցիալական դրության մասին պատմական ու մատենագրական աղբյուրների տեղեկությունները թեև շատ քիչ են և անորոշ, բայց այդ տեղեկություններից իսկ երևում է, որ շինականները, լինելով հին Հայաստանում առանձին դաս (СОСЛОВІЕ, Stand, état), կազմել են երկրի գլխավոր հարկատու ուժը։

Աղբյուրների մեջ շեշտվում է հաճախ, որ Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հայոց եկեղեցին համարել են «ազատաց տոհմի» կարգում։ Եկեղեցու այդ «ազատութիւնը», որ հակադրվում է շինականների «ծառայութեան», հասկացվել է, պարզապես, իբրև ազատություն այն հարկերից, որ պարտավոր էին տալ շինականները։ Հոգևորականության ու շինականության սոցիալական դրության տնտեսական այդ կողմը միանգամայն պարզ երևում է մատենագրական հետևյալ վկայություններից։

Նղիշե պատմագիրը Պարսից Հազկերտ Բ թագավորի մասին պատմում է. որ նա «առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն. երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարագրաւ էարկ. երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց» (Վենետիկ, 1864, էջ 39)։ «Եւ զայս ամենայն առնէր,—շարունակում է Նղիշեն,— թերևս զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեսցեն յօրենս մոգուց» (էջ 39)։ Եկեղեցու այդ «ազատութիւնը» շեշտված է նաև հետևյալ վկայություններում. 1) Նղիշե, Վենետիկ, 1864, էջ 75. «նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ. և դու ընդ հարկաւ եղիր»։ 2) Կանոնք Դուռնայ ժողովոյն, Վաղարշապատ, 1905, էջ 11. «զի ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրև զազատութիւն է, զոր երանելոյն սրբոյն Գրիգորի և թագաւորին մերոյ Տրդատայ զատուցեալ են»։ 3) Նույնը, էջ 19. «զի երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյ մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և շուր, նաև ի Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ

խառնեալ ի շինական. իշխանութեամբ զերիցունեաց տունսն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս: Արդ եթն ոք ազահութեան ակամբ հայեացի և զազատ մանկունս եկեղեցւոյ ի բաժին և ի վիճակ ծառայութեան արկեցն, այնպիսիքն ի սուրբ Լուսաւորչի օրհնութենէն և ի մերմէ ժողովոյս հեռի եղիցին»:

Այս վերջին վկայությունից պարզ հետեւում է, որ եկեղեցու «ազատութեան» տակ պետք է, զլիսավորապես, հասկանալ նրա հողի և ջրի ազատ լինելը որոշ հարկերից, որ պարտավոր էին տալ շինականները: Ուրեմն՝ «ծառայութեան» հատուկ այն վիճակը, որ ակնարկված է նույն վկայության մեջ, վերագրվելու է, բնականաբար, շինականներին:

Ինչպես հայտնի է, «ծառայ» և «ծառայութիւն» բառերը գործ են ածվել հին Հայաստանում զանազան նշանակությամբ: Նրանք, նախ և առաջ, պետական ու նախարարական կյանքի հատուկ տերմիններ են, որ ցույց են տալիս սոցիալական ամեն մի ստորին դասի կապը և կախումը ավելի բարձր դասից: Հայ նախարարները, օրինակ. «ծառայ» էին անվանվում նախ հայ Արշակունիների և ապա Պարսից թագավորների: Այն բոլոր պարտավորությունները, որ նրանք ունեին թագավորի հանդեպ, կոչվում էին նույնպես «ծառայութիւն»: Նույն բառերը նշանակում էին նաև ստրուկ և ստրկություն, սպասավոր և սպասավորություն, ուստի և թարգմանական մատենագրության մեջ նրանք համապատասխանում են հունարեն *doulos*, *therapōn*, *douleia* բառերին: Իբրև հատուկ տերմիններ հին Հայաստանի նախարարական կազմակերպության, նրանք կարող են համեմատվել, ինչպես ցույց է տվել Նիկ. Ադոնցը, ֆեոդալական եվրոպայի *servus*, *servitium* և Ռուսաստանի «слуга, служба» բառերի հետ («Армения в эпоху Юстиниана», стр. 459):

Աղբյուրների վկայություններից դժվար չի տեսնել, որ ազնվական դասի «ծառայութիւն»-ը հին Հայաստանում իր էությունը տարբեր է եղել շինական դասի «ծառայութիւն»-ից: Մինչդեռ ազատների ու նախարարների «ծառայութիւն»-ը ունեցել է մոտավորապես վասալական հպատակության բնույթ և այդ «ծառայութեան» զլիսավոր հիմքը կազմել են նրանց զինվորական պարտավորությունները, շինականների «ծառայութեան» բուն էությունը կազմել են, ընդհակառակը, հարկատվությունը, գուցե և նրանց անձնական որոշ պարտականությունները կալվածատեր ազատների, նախարարների ու արքունի իշխանության հանդեպ, որ դեռևս մութն են և կարոտ են հատուկ քննության, իմ կարծիքով, շինականների «ծառայութեան»

տնտեսական այդ կողմը շատ լավ արտահայտված է հայոց հնագույն մատենագրության ուշագրավ մի դարձվածքի մեջ, որը մինչև այժմ դեռ բավարար կերպով մեկնված չէ:

Փավստոս Բյուզանդը, նկարագրելով Հայաստանի ապստամբ ծայրագավառների նվաճումը Մուշեղ Մամիկոնյանի ջանքերով, նրանց բնակչության մասին մի քանի անդամ կրկնում է հետևյալ դարձվածքը. «եւ զընակիշս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր» (Վենետիկ, 1832, դպր. Ե, գլ. Թ, էջ 214) «ի հարկի ծառայութեան թագաւորին հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր» (Փավստոս, դպր. Ե, գլ. ԺԹ, էջ 217), «ե ինքեանք կային ի հարկի ծառայութեան» (նույնը, դպր. Ե, գլ. Ժը, էջ 217): Նիկ. Ադոնցը ենթադրում է, որ «ի հարկի կացուցանել» կամ ավելի լրիվ՝ «ի հարկի ծառայութեան կացուցանել» նշանակում է ո՛չ թե հարկ դնել («наложить дань»), այլ հնազանդեցնել («привести в подчинение», «заставить подчиниться», տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 480): Այս ենթադրությունը ես համարում եմ միանգամայն անհաջող: Նիկ. Ադոնցը հենք ինքը շատ ճիշտ դիտել է, որ Փավստոսը երկու ուրիշ հատվածում «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» դարձվածքների փոխարեն ունի՝ «հարկ դնէր մնացորդացն», «Հարկանէր Մուշեղ սպարապետն,— պատմում է նա,— և զայս զաւառս ապստամբեալս յարքայէն հայոց, գեորդուս և զԿորդիս և զՏմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր հարկ մնացորդացն, և առնոյր պանդանդս» (Դպր. Ե, գլ. Ժ, էջ 214). «եւ զկողմանսն Մարաց, քանզի և նոքա ապստամբեցին յարքայէն հայոց, հարկանէր զնոսա մեծապէս. և գերէր դրազումս ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս, և առնոյր պանդանդս» (Դպր. Ե, գլ. Ժա, էջ 214): Այս և համապատասխան նախորդ հատվածների համեմատությունից արդեն պարզ երևում է, որ «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» դարձվածքները գործ են ածված Փավստոսի մեջ հարկ դնելու և ո՛չ հնազանդեցնելու իմաստով: Նորայր Բյուզանդացին, քննության առնելով Փավստոսի նույն դարձվածքների իմաստը, ենթադրում է, որ ոսկեդարյան թարգմանությունների խմբերից մեկում փոխանակ «ի հարկի ծառայութեան կացուցանեմ» կայ «արկանեմ ընդ հարկաւք ծառայութեան» (Գ. Թագ, Թ, 21) կամ «ածեմ ի հարկատուս» (Բ. Մնաց. Ը, 8. տե՛ս «Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» Տփղիս, 1900, էջ 367): Այս համեմատությունները ևս ցույց են տալիս, որ մեր եղրակա-

ցությունը վերոհիշյալ դարձվածքների մասին միանգամայն ճիշտ է։
Իմ կարծիքով, «ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն»-ը հատուկ ու առանձին մի տերմին է, որով որոշվում էր շինականների «ծառայութեան» հիմնական բնույթը։ «Ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն»-ը, լինելով շինականների գլխավոր պարտականությունը, տարբերվել է նախարարների ու ազատների «ծառայութիւն»-ից հատկապես նրանով, որ նրա սոցիալ-տնտեսական հիմքը կազմել է հարկատվությունը, որից ազատ են եղել ազնվական արտոնյալ դասերը։

«Ի հարկի ծառայութիւն»-ը բացի Փալստոսից հիշված է նաև Մովսես Խորենացու ու Ղազար Փարպեցու պատմութիւններում, Խորենացին, նկարագրելով Արամ նահապետի հաղթական կռիվները մեդացիների աւասորեստանցիների դեմ, վկայում է, որ սա մեդացիներից, որոնց առաջնորդն էր Նյուբար Մադեսը, «զաշխարհն նորա մինչև ի լեառն անուանեալ Զարասալ՝ ի ծառայութեան հարկի կալաւ մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի» (Գիրք Ա, գլ. Ժզ, Տփղիս, 1913, էջ 44)։ Իսկ ասորեստանցիներից, դարձյալ Խորենացու ասելով՝ «զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ քազում ժամանակս» (Գիրք Ա, գլ. Ժգ, էջ 45)։ Այս վկայութիւնների մեջ անձնավորութիւնները և պատմական անցքերը կարող են, իհարկե, վիճելի լինել ու առասպելական, սակայն «ի հարկի ծառայութիւն»-ը, որ վերագրված է նվաճված երկրներին, հին Հայաստանի սոցիալական կյանքի նույն իրողութիւնն է և սոցիալական միեւնոյն տերմինը, որ գործ էրածված նաև Փալստոսի վերոհիշյալ հատվածներում։

«Ի հարկի» ծառայութիւն մասին շատ հետաքրքիր է Ղազար Փարպեցու վկայութիւնը, որը սակայն վերաբերվում է ո՛չ թե Պարսկական Հայաստանին, այլ Պարսկական Ասորեստանի Շահիով կոչված գավառին։ Խոսելով Աբրահամ Խոստովանողի ու Խորեն երեցի մասին, Փարպեցին պատմում է, որ Պարսից Հաղկերտ Բ թագավորը (439—457 թ. հ. քր.) հրամայում է, որ նրանք հանձն առնեն պատվել կրակը, իսկ եթե ոչ՝ «պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն, և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց» (Ղր. Բ, գլ. Ժը, Տփղիս, 1904, էջ 105)։ Որովհետև սրանք համառում են և չեն կատարում թագավորի հրամանը, ուստի և, ինչպես վկայում է Փարպեցին, «կտրեալ զերկոցունց զականջսն՝ ետուն տանել յԱսո-

րեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Շափուլ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի» (Դր. Բ, գլ. ծը, էջ 106): Այստեղ Ասորեստանում խորեն երեցը մեռնում է մի քանի տարուց հետո, իսկ Աբրահամ երեցը տեղացի քրիստոնյաների օգնութեամբ ազատվում է ու վերադառնում Հայաստան: Փարպեցու վկայութեան մեջ կարևոր է առանձնապես այն, որ Աբրահամ խոստովանողի ու ընկերոջ մշակութային վիճակն անվանվում է «ի հարկի» կացութիւն «մինչև ցվախճան»: Նրան ազատելու համար տեղացի քրիստոնյաները ո՛չ թե փրկանք են տվել, ինչպես կարծում է Ա. Մ. Գարազաշյանը (Քննական պատմություն Հայոց, մասն Դ, Թիֆլիս, 1895, էջ 209), այլ, հավանաբար, երաշխավորել են վճարել նրանից հասանելիք հարկը: «Իսկ երանելի երէցն Աբրահամ,—ասում է Փարպեցին,—երաշխաւորութեամբ հաւատացելոց աշխարհին, որք զտունս իրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս ցվախճան նորա, և կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա» (Դր. Բ, գլ. ծը, էջ 106): Անհավանական չի լինի ենթադրել, որ հավատացյալների այս երաշխավորութիւնն ունեցել է համերաշխիքի բնույթ (круговая порука): Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, Աբրահամ խոստովանողը, լինելով Ասորեստանում «ի հարկի» ծառայութեան մեջ, գտնվել է հարկատու այնպիսի վիճակում, որին կապված է եղել մինչև ցմահ և որից ազատվելու համար անհրաժեշտ է եղել հավատացյալ բնակչութեան համերաշխիքն այն հարկերի համար, որ նրանից ստացվելու էր մինչև նրա վախճանը:

Փարպեցու վկայութիւնը վերաբերվում է Ասորեստանում գտնվող «արքունի մշակներին» և պարզ չէ, թե արդյոք այս «արքունի մշակները» սովորական արքունի գյուղացիներն էին, թե ստրկածնների հատուկ մի խումբ: Վերջին ենթադրութիւնն ինձ թվում է միանգամայն անհավանական: Փարպեցու վկայութեան բովանդակութիւնից երևում է, որ «արքունի մշակը» անվան տակ պետք է հասկանալ Ասորեստանի Շափուլ գավառի արքունի գյուղացիներին, որոնց գլխավոր պարտականութիւնը եղել է «ի հարկի» ծառայութիւնը:

Արդ՝ ամենակարևորը նույն վկայութեան մեջ այն է, որ հարկատու այդ դրութիւնից անկարելի է եղել կամովին դուրս գալ, այլ անհրաժեշտ է եղել նախապես երաշխավորել արքունի բոլոր հարկերի վճարումը: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ արքունի գյուղացիներին թույլատրված է եղել հարկային պարտականու-

թյունների ապագնումը (ВЫКУП) և այդ տեսակետից նրանց իրավական դրուժյունը նման է եղել արևմտյան կոլոնների դրուժյանը: Թեև Փարպեցու վկայությունը վերաբերվում է Պարսկական Ասորեստանին, բայց, ինչպես կտեսնենք, հին Հայաստանում ևս արքունի գյուղացիները, գտնվելով «ի հարկի ժառայության» վիճակում, իրավունք չեն ունեցել ինքնակամ կերպով թողնել այդ ժառայությունը և, ըստ երևույթին, ժառանգաբար կապված են եղել իրենց զբաղմունքի, հողի ու հարկատու դրուժյան հետ:

Սոցիալական ու տնտեսական ներքին կարգերի համեմատումը Հայաստանում և Պարսկաստանում ինքնին հետաքրքիր մի խնդիր է, որը, իհարկե, դեռ կարոտ է հիմնավոր ու լուրջ ուսումնասիրության:

Հին Հայաստանը, որ Արշակունյաց թագավորության ժամանակ մեծ չափերով ենթարկվել էր Պարթևական Պարսկաստանի քաղաքական և կուլտուրական ազդեցությանը և իր պետական ու նախարարական կազմակերպության մեջ ընդօրինակել էր, մեծ մասամբ, իրանական ֆեոդալիզմի որոշ կարգերը, շատ հավանական էր, որ իր սոցիալ-տնտեսական կենցաղով ևս բավական նման պիտի լիներ հարևան Պարսկաստանին: Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում այդ նմանությունը կարող էր ավելի ևս մեծ լինել, որովհետև մարզպանական Հայաստանը ենթարկված էր Պարսկաստանի անմիջական իշխանությանը: Այս տեսակետից, հին իրանական ներքին կյանքի լուսաբանությունն ունի որոշ նշանակություն նաև հին Հայաստանի համար: Դժբախտաբար, շինական դասի իրավական դրուժյան խնդիրը, թե՛ Պարթևական և թե՛ Սասանյան Պարսկաստանում, նույնքան անորոշ է ու մութ, ինչպես և հին Հայաստանում: Իրական արդյունքներ ստացվել են առայժմ, գլխավորապես, լեզվագիտության մեջ, և նորագույն այս ուսումնասիրություններից երևում է, որ հին հայերենում գյուղացիության վերաբերյալ սոցիալական ամենակարևոր տերմիններն իսկ, ինչպես՝ շեն, շինական, ռամիկ, անաղատ և այլն, փոխառություններ են պարսկերեն լեզվից:

«ԱՆԱՋԱՏՔ», «ՓԱԽՉՈՂՔ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՆԷ»

Պրոֆ. Ի. Զավախովը, քննության առնելով շինականների իրավական դրուժյան խնդիրը, հանգել է այն եզրակացության, որ շինականներն ազատ չեն եղել, այլ ստորագրված են եղել աղնը-

վականներին: Նրա եզրակացության գլխավոր ու միակ հիմքն այն է, որ մատենագրական աղբյուրներում շինականները հակադրվել են ազատներին («Государственный строй древней Грузии и древней Армении», стр. 134).

Իմ կարծիքով, Զավախովի մատնացույց արած միակ այս ապացույցն այնքան էլ ամուր ու հաստատուն չէ, ինչպես ինքը կարծում է: Միանգամայն ուղիղ է, որ «շինականները» հին Հայաստանում եղել են «ազատներին» հակադիր առանձին դաս և նրանք նույնիսկ աղբյուրներում կոչվել են հաճախ «անազատներ», սակայն այդ փաստն ինքնին դեռևս բավական չէ, որ նրանց կարելի լինի համարել ո՛չ ազատ այդ բառի այժմյան իրավական իմաստով: Հին Ռուսաստանում, օրինակ, «ամերդները» (смерды), որոնք նույնպես, իբրև առանձին դաս, հակադրվել են ազնվական ավելի բարձր դասերին և եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը, իրավական իրենց դրուժյամբ եղել են աղատ: Որպեսզի կարելի լինի ցույց տալ շինականների անազատ լինելն այդ բառի այժմյան հասկացողությամբ, անհրաժեշտ է. իմ կարծիքով, ուսումնասիրել նրանց իրավական դրուժյան վերաբերյալ նյութերը շատ ավելի մանրադրենիս կերպով, քան այդ արել է Ի. Զավախովը:

Հիմնական խնդիրը, որ հարկավոր է դեռ լուծել շինականների վերաբերմամբ այն է, թե արդյոք նրանք եղե՞լ են կապված հողի հետ, ինչպես միջնադարյան ճորտերը, և արդյոք նրանց կախումը կալվածատեր ազնվական դասից տնտեսական է եղել միայն, թե նաև անձնական: Մատենագրական աղբյուրները, զժախսաբար, հնարավորություն չեն տալիս քննության առնել ու լուսարանել այդ խնդիրը հանգամանորեն, իր բոլոր մանրամասնություններով, ինչպես այդ արված է նորագույն ուսումնասիրություններում Բյուզանդիայի, Արևմտյան Նվրոպայի և Ռուսաստանի գյուղացիության նկատմամբ: Աղբյուրների մեջ կան միայն կողմնակի մի քանի ցուցումներ, որոնցից, իմ կարծիքով, կարելի է հետևել, որ Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում հին Հայաստանի շինականությունը ևս գտնվել է, ընդհանուր առմամբ, ճորտանման վիճակում:

Այդ ցուցումներից ամենից ուշագրավն է Դավինի ժողովի հետևյալ կսոնոնը. «Յոթժամ ազատք զիրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեամբ առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ քանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել» (Կանոնք Դունայ, Վաղարշապատ, 1905, էջ 19): Երդերի ու մարդկանց այս

բաժանումը, թվում է ինձ, որ կարող է ընդունվել իբրև ուշագրավ մի ակնարկ, որ կալվածատեր ազատների գյուղացիները, համարվելով սրանց հատուկ գույքը, պետք է որ լինեն ճորտաման վիճակում: Եթե երդերն ու մարդիկ կարող էին լինել ժառանգական բաժանման առարկա, հավանական է ենթադրել, որ նույն այդ գույքը, ըստ երևույթին, կարելի է եղել նաև գնել, վաճառել, ընծայել, կտակել և այլն: Եթե ազատների գյուղացիները կապված չլինեին հողի հետ և ճորտաման կախում չունենային իրենց տերերից, անհասկանալի կմնա թե երդերի ու մարդկանց վերոհիշյալ բաժանումը և թե, մանավանդ, ազատների դիրքը եկեղեցու ժառանգավորների հանդեպ, որոնց նրանք նույնպես աշխատել են օարկանել ի ծառայութիւն և ի ստրկութիւն»:

Ուշադրութեամբ արժանի է նաև Մովսես Կաղանկատվացու վկայութիւնն Աղվանից Վաչե արքայի մասին: Այս արքան, հրաժարվելով գահից, խնդրում է Պարսից Պերոզ թագավորից տալ իրեն սեպական իր բաժինը, որ ստացել էր հորից: «Իսկ սա հաճեցաւ,— պատմում է Կաղանկատվացին,— միայն զսեպականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ» (Հատ. Ա, գլ. Ժ, հրատ. Մ. Էմինի, Մոսկվա, 1860, էջ 14): Այս վկայութեան մեջ ևս «երդերը», ուրեմն և նրանց մեջ ապրող երդավորները, համարվում են հատուկ գույք, որ Վաչեն իբրև սեփական բաժին ստացել էր իր հորից:

Իմ կարծիքով, շինականների իրավական դրութեանը կարող է վերաբերվել նաև Ղազար Փարպեցու հետևյալ վկայութիւնը, որ գտնվում է նրա Վահան Մամիկոնյանին գրած «Թուղթի» մեջ. «Արդ՝ զառաջին կելույն իմոյ զվարս տէր Ներսեհ և Հրահատ Կամսարական գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին: Եւ դու հայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրև զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկտույն, և ոչ իբրև օտար զոք ի քէն և կամ զծառայ ուրուք. քանզի պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս: Իսկ որ զատույցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Աղան՝ քո տեառն քեռի էր» (Տպիղիս, 1904, էջ 188): Կարևոր այս վկայութիւնը, թվում է ինձ, որ սխալ է մեկնված Գ. Զարբհանալյանի «Հայկական հին դպրութեան պատմութեան» մեջ: Հիմնվելով այս հատվածի վրա, Գ. Զարբհանալյանը հնարավոր է համարել եզրակացնելու, որ Ղազար Փարպեցին «ընտիր և ազնուական ցեղէ էր» (Հայկական հին

դպրութեան պատմութիւն», երրորդ տպագր., Վենետիկ, 1897, էջ 392): Իսկ Փարպեցու այն վկայութիւնը, որ նա Գուգարաց Աշուշայ բղձշխի տանը սնվել ու դաստիարակվել է Վահան Մամիկոնյանի ու նրա եղբայրների հետ («Թուղթ», էջ 188), առիթ է տվել նրան նույնիսկ ենթադրելու, որ Փարպեցին, հավանաբար, ազգական է եղել Մամիկոնյանների տոհմին: Գրիգոր Խալաթյանը ևս Փարպեցուն համարում է «ազատ կամ յազգէ ազնուաց», «որդի առն ունեորի» և հնարավոր է համարում նրա «մերձավոր և կամ հեռավոր ազգակցութիւնը» Մամիկոնյանների հետ (տե՛ս «Ղազար Փարպեցի և գործք նորին», Մոսկուա, 1883):

Այս ենթադրութիւններից և ո՛չ մեկը հավանական չէ: Վերոհիշյալ հատվածում «ոչ օտար զոք ի քէն» խոսքերով Փարպեցին ակնարկում է, որ ինքն օտար չէ Վահանին, իբրև նրա սննդակիցը մանկության հասակում: Որ այդ խոսքերը չեն կարող այլ կերպ հասկացվել և հիմք ծառայել Փարպեցու ազնվական ծագման, այդ ավելի քան պարզ երևում է նույն հատվածի վերջին պարբերութիւնից, որի մեջ Փարպեցին իր ծագման մասին վկայում է, որ իրեն, հոգևորական դարձնելով, ծառայութիւնից զատուցել և ազատության առիթ է եղել Տեր Աղանը, Վահան Մամիկոնյանի քեռին: Եթե Փարպեցին ազատների կարգն է անցել հոգևոր կոչում ընդունելուց հետո, սակայն միևնույն ժամանակ, ինչպես ինքն է վկայում, չի եղել «ծառայ ուրուք», ո՛չ էլ «աղքատ ոք ի կազմածէն և ի մանկտոյն», կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ նա եղել է, հավանաբար, շինական Փարպի գյուղից: Այս նոր ու կարևոր ենթադրությամբ ո՛չ միայն որոշվում է Փարպեցու շինական ծագումը, այլև լուսաբանվում է շինականների իրավական դրության հետաքրքիր մի առանձնահատկութիւնը: Որպեսզի Փարպեցին կարողանար հոգևորական դառնալ և ստանալ ազատութիւն, որ հատուկ էր եկեղեցականներին, ինչպես տեսնում ենք, հարկավոր է եղել նրան ծառայութիւնից «զատուցանել»: Եթե շինականները լինեին ազատ, դժվար թե հարկավոր լիներ նրանց ազատագրումը նախկին ծառայութիւնից:

Փարպեցու վկայության այս նոր մեկնութիւնը, ինչպես և վերոհիշյալ մյուս վկայութիւնները, մոտավորապես պարզում են շինականների սոցիալական ընդհանուր դրութիւնը Մարզպանական Հայաստանում: Ըստ երևույթին, նրանք, իբրև անազատներ, հարկատու հատուկ ծառայությամբ կապված են եղել իրենց հողի ու տերերի հետ: Նրանց ծառայության մանրամասնութիւնները թեև մուծ են մնում ու անհայտ, սակայն ընդհանուր գծերով կարծես թե հաս-

տատվում է, որ նրանց «ի հարկի ծառայութեան» վիճակը, հավանաբար, ունեցել է որոշ շափով ճորտության բնույթ։ Հավանական է նույնպես, որ շինականությունը, լինելով իր մեջ պարփակված առանձին դաս, որից դուրս գալը հնարավոր է եղել, ինչպես տեսանք, կալվածատիրոջ համաձայնությամբ, իր իրավունքներին ու պարտականություններին կապված էր մնում, ինչպես և մյուս դասերը, ո՛չ թե անհատորեն, այլ ժառանգաբար։ Ինչպես ազատների դասի մեջ ժառանգական է եղել զինվորական ծառայությունը, հոգևորական դասի մեջ՝ քահանայական պաշտոնը, այնպես էլ շինական դասի համար, ըստ երևույթին, ժառանգական եղած պիտի լիներ նրա հատուկ հարկատու ծառայությունը։

Մովսես Խորենացին, նկարագրելով իր «Ողբի» մեջ հայ ժողովրդի զանազան խավերի արատավոր բարքերը թագավորության անկումից հետո, ժողովրդականների մասին ասում է հետևյալը. «ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ» (Գիրք Գ, գլ. կը, Տփղիս, 1913, էջ 364)։ Մ. էմինը «փախչողք ի ժառանգութենէ» թարգմանել է «вводящийся духовного звания», իսկ Խորեն ծ. վարդ. Ստեփանեն, հետևելով նրան, թարգմանել է՝ «յեկեղեցական կոչումից փախչող»²։

Այս թարգմանությունները միանգամայն անհաջող են ու անիմաստ։ Հոգևոր կոչումը, ինչպես հայտնի է, կապված էր տնտեսական ու սոցիալական այնպիսի արտոնությունների հետ, որ անհիթեթ կլինեին կարծել, իբր թե այդ կոչումից ժողովրդականները տրամադիր կլինեին խուսափել։ Հանգուցյալ միաբան Գալուստ Տեր Մկրտչյանը, որքան հիշում եմ, «փախչողք ի ժառանգութենէ» խոսքերը վերագրում էր շինականներին և ենթադրում, որ «ժառանգութեան» տակ պետք է հասկանալ այն հողը և շինական ծառայության այն ծանր վիճակը, որից շինականներն աշխատել են խուսափել ու ազատվել փախուստի միջոցով։ Այս երևույթը, ինչպես գիտենք, ճորտական գյուղացիության համար սովորական է եղել նաև ուրիշ երկրներում։ Եթե միաբանի մեկնությունն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ շինականների մասին վերոհիշյալ մեր ենթադրությունը հաստատված կլինի նաև Խորենացու վկայությամբ։ «Փախչողք ի ժառանգութենէ» խոսքերից՝ կարելի կլինի հետևենել, որ շինական-

² Տե՛ս «История Армении Монсея Хоренского», новый перевод Н. О. Эмина, М., 1893, стр. 215 և «Մովսես Խորենացու հայկական պատմություն», թարգմ. Խ. Ժ. Վարդ Ստեփանեի, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 350 և ծանոթ. 814, էջ 290։

ները, լինելով «անազատ», գտնվել են խորենացու ժամանակ ճորտանման վիճակում: Այդ դրությունը, ինչպես տեսնում ենք, անվանված է «ժառանգութիւն», ուստի և պետք է ենթադրել, որ շինականների հատուկ ծառայությունը կրել է ո՛չ թե անհատական, այլ դասային ու ժառանգական բնույթ:

Հավանական համարելով ճորտական գյուղացիության գոյությունը Մարզպանական Հայաստանում, չպետք է իհարկե կարծել, որ Հայաստանի ողջ գյուղացիությունը նախարարական զանազան երկրաշրջաններում ունեցել է կատարելապես միակերպ ու նույնանման վիճակ: Մի կողմ թողնելով Հունական Հայաստանը, որի իրավական ու սոցիալ-տնտեսական կարգերը կարոտ են դեռ հատուկ ուսումնասիրության, Պարսկական Հայաստանի իսկ զանազան վայրերում շինականների իրավական ու տնտեսական գրության մեջ կարող էին լինել որոշ առանձնահատկություններ ու տարբերություններ: Հայաստանի նման նախարարական մի երկրում, որը բաժանված էր անջատ ու գրեթե անկախ իշխանությունների, շատ բնական է, որ կլինեին ռզմանազան սովորութիւնք գաւառաց և աշխարհաց: Կարող էին նույնիսկ լինել ճորտական գյուղացիությունից դուրս նաև ազատ գյուղացիության մնացորդներ:

Որ գյուղերի ու շինականների իրավական ու տնտեսական դրության մեջ կարող էին լինել տարբերություններ, այդ մենք կարող ենք գուշակել խորենացու ուշագրավ մի վկայությունից: Հանդիմանելով նախնի հայերի անիմաստասիրությունը, որոնք թերացել են գրի առնել տալու իրենց ժամանակվա պատմական անցքերը, խորենացին կարծում է, որ չի կարելի արդարացնել նրանց, ասելով, որ իբր թե շարունակ զբաղված են եղել կռիվներով և կամ չեն ունեցել գիր ու դպրություն: «Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն» (Գիրք Ա, գլ. զ, Տփղիս, 1913, էջ 11): խորենացու այս հատվածի մեջ մուծ ու անհասկանալի է համարվել, գլխավորապես, «առանձնականութիւն» բառը՝ Պրոֆ. Նիկ. Մառք «առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց» թարգմանել է «О частных (личных) и общих «тяжбах и примирениях»³. Պրոֆ. Նիկ. Ադոնցը, համաձայն չի-

³ Տե՛ս «Журнал Мин. Нар. Просв». 1908, էջ 2: Մկր. էմիլը և խորեն ծ. վարդ. Ստեփանեն «առանձնականութիւն» բառն իրենց թարգմանությունների մեջ

նելով Նիկ. Մառի հետ, կարծում է, որ «առանձնական» էին դառնում այն սեպուհները, որոնք բաժանվում էին ընտանիքից ու ստանում իրենց ժառանգական բաժինը՝ Ուրեմն՝ «առանձնականութիւն», նրա կարծիքով, նշանակում է և ցույց է տալիս սեպուհների «առանձնական» դրութիւնը, որի պատճառով ծագում էին վեճեր ու հակառակութիւններ, իմ կարծիքով, այս երկու ենթադրութիւնն էլ սխալ են: «Առանձնականութիւն» բառը, ինչպես կարելի է տեսնել հունարան թարգմանութիւններից, համապատասխանում է հունարեն *idioma, idiotēs* բառերին և, ամենայն հավանութիւնով, նշանակում է՝ առանձին, հատուկ վիճակ կամ առանձնահատկութիւն (*особенность, своеобразность*); խորհնացիներում է ասել, որ գյուղերի, գավառների ու առանձին տների (տոհմերի) դրութիւնը եղել է երբեմն «առանձնական» ու տարբեր և նրանց այդ առանձնահատկութիւնների, ինչպես և հակառակութիւնների ու դաշինքների համար, եղել են իր ժամանակ «անբաւ զրուցաց մատեանք», որոնք զրված են եղել հունարեն կամ պարսկերեն:

Գավառների և գյուղերի արտակարգ ու մասնակի «առանձնականութիւնները», որ գոյութիւն են ունեցել ֆեոդալական երկրներում գրեթէ ամեն տեղ, չեն կարող, իհարկե, բացասել ո՛չ նախարարական իրավակարգի ընդհանուր էութիւնը, ո՛չ էլ շինական դասի իրավական դրութիւնն զխափոր հատկանիշները՝ չի հարկի ժառանգութիւն»-ը և ճորտաման վիճակը, որոնք իրենց հիմնական գծերով, ըստ երևույթին, միևնույն բնույթը պիտի ունենային նախարարական Հայաստանի բոլոր շրջաններում:

Շինականների ու ազատների կենցաղային տարբեր կացութիւնն մասին հետաքրքիր են Նղիշի վկայութիւնները, որոնց մեջ համեմատութիւն է առնված նրանց առօրյա կյանքը՝ նկարագրելով ազատների ու նրանց կանանց կրած նեղութիւնները կրոնական հալածանքների շրջանում, Նղիշի պատմագիրն ասում է, որ «ոչ երևէր այնուհետև առաւել տէր քան զժառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ» («Վասն Վարդանաց և հայոց պատերազմին», Վենետիկ, 1852, էջ 115): Մի ուրիշ տեղ, շեշտելով հայոց աշխարհի փափկասուն տիկնանց թշուառ ու դժբախտ դրութիւնը, նա դարձյալ համեմատում է նրանց այդ վիճակը շին-

միանգամայն անուշադիր են թողել և չեն թարգմանել. տե՛ս «История Армении Моисея Хоренского», новый перевод Н. О. Эминая, М., 1893, стр. 4 և «Մովսես Խորենացու հայոց պատմութիւն», թարգմ. Խ. Ստեփաննի, էջ 8:

նականների առօրյա կյանքի հետ, որը նա համարում է վշտամբեր ու տանջալից: «Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդը՝ որ վշտամբերը լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագույնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց» (նույնը, էջ 355):

Այս վկայութիւնների մեջ ուշագրավ է և այն, որ առաջին հատվածում «վշտացեալ» է անվանված «գեղջուկ»-ը, իսկ երկրորդում՝ «վշտամբեր» է անվանված «շինական»-ը: Նորագույն մի քանի աշխատութիւններում անհաջող մի փորձ է արված շինականներին ու գեղջուկներին իրարից զանազանելու իբրև իրենց ծագումով և տնտեսական ու իրավական դրութեամբ միանգամայն տարբեր դասեր⁴: Անապացույց, վայրիվերո մի կարծիք է այդ, որ բոլորովին հիմնավորված չէ փաստական որևէ լուրջ վկայութիւններով: «Շինական» և «գեղջուկ» բառերը, ինչպես երևում է թե՛ այս և թե՛ ուրիշ բազմաթիվ վկայութիւններից, պարզապես, հոմանիշներ են, որ գործ են ածվել սոցիալական միևնույն դասի համար:

Ինչպես ֆեոդալական գրեթե բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, շինականներն իբրև «անազատներ», լատնվելով ճորտանման դրութեան մեջ, դատարանի վճռով ենթարկվել են մարմնական պատիժների, որոնցից ազատ են եղել «ազատները»: Պարզ ու որոշ վկայված է այդ Շահապիվանի ժողովի կանոններում: Պոռնկութեան համար սահմանված է եղել, օրինակ, Շահապիվանի ժողովի Գ. կանոնում հետևյալ պատիժը. «Եթէ ազատ է և գան չէ մարթ հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն. մ դրամ կարօտելոց, ք տարի ապաշխարութիւն. և զպղծութիւնն այլ մի՛ ևս գործեսցէ. ապա մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնիցի: Ապա թէ շինական է, գան յոլով արբցէ, ճ դրամ տուգան տացէ յեկեղեցի և յաղքատս բաշխեսցեն, և տարի մի ի պղծութենէն հեռացեալ՝ մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցի» (Կանոնադիրք Հայոց, հրատար. Արսեն Ղլտճյանի, Քիֆլիս, 1914, էջ 63)⁵:

Շինականների ճորտանման դրութիւնը հավանական համարելով Մարգարանական Հայաստանում, անհրաժեշտ է, իհարկե,

⁴ Տե՛ս Հ. Մուսաբեյլան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 15, նաև Բաճադբեյան, Անձնական և հողային իրավունքը հին Հայաստանում:

⁵ Համեմատե՛ս նաև կանոն Թ, էջ 67:

գոնե մոտավոր կերպով որոշել նրանց իրավական այդ գրության բովանդակությունը և առանձնահատկությունները: Պետք է ասել, որ ճորտ (крепостной, colonus, villanus, Hörig, leibeigen) և ճորտություն (крепостничество, villenagium, Hörigkeit, Leibeigenschaft) բառերը բավական ճապաղ ու խառնաշփոթ գաղափարներ են, որոնց տակ հասկացվել են երբեմն տնտեսական ու իրավական իրարից խիստ տարբեր դրություններ: Ճորտությունը հաճախ այնքան մեղմ է եղել, որ շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների դրությունից, իսկ երբեմն այնքան ծանր է եղել, որ շատ մոտ է եղել կատարյալ ստրկության: Ճորտերի առաջին տեսակին պատկանում էին օրինակ, Բյուզանդական կայսրության կոլոնները (coloni), որոնք անձնապես ազատ էին, բայց կապված էին հողին (glebae, terrae adscripti, servi terrae ipsius և չունեին տեղափոխման իրավունք, իսկ երկրորդ տեսակին պատկանում էին ռուսական крепостной-ները և գերմանական leibeigen կոչված ճորտերը, որոնց դրությունը խիստ ծանր է եղել, մանավանդ, XVIII-դարում:

Հիմնական պատճառն այս զանազանությունն, ինչպես ցույց են տվել նորագույն ուսումնասիրությունները, եղել է, գլխավորապես, տնտեսական: Գերմանացի գիտնական Գեորգ Կնապպի ենթադրությամբ, ճորտական գյուղացիության դրությունը մեծապես կախված է եղել ագրարային երկու իրարից տարբեր սիստեմներից, որ նա անվանում է Grundherrschaft և Gutsherrschaft⁵: Grundherrschaft է կոչվում սենյորալ կազմակերպությունը, երբ սենյորը ստանում է իր գյուղացիներից զանազան տուրքեր ու հարկեր, բայց ինքը չունի իր սեփական մեծ տնտեսությունը, իսկ Gutsherrschaft՝ երբ սենյորը թեև նույնպես ստանում է իր գյուղացիներից տուրքեր ու հարկեր, այլ նրա եկամտի գլխավոր աղբյուրը ո՛չ թե այդ վճարումներն են, այլ նրա ինքնուրույն խոշոր տնտեսությունը, որը նա օգտագործում ու մշակում է ճորտական իր գյուղացիների պարտադիր աշխատանքով: Ագրարային առաջին կարգի երկրներ էին Ֆրանսիան և արևմտյան Գերմանիան, իսկ երկրորդ կարգի, արևելյան Գերմանիան, լեհաստանը և Ռուսաստանը: Ենթադրվում է, որ ագրարային կազմակերպման այս զանազանությունը

⁵ См. Кулишер И. М., Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград, 1918, стр. 281, նաև Georg Knapp, Bauernbefreiung, 1887, B. I, Einleitung.

ճորտական գյուղացիութեան իրական դրութեան վրա ունեցել է իր որոշ ակներև ազդեցութիւնը: Եվրոպայի արեւմտյան երկրներում ճորտական գյուղացիութեան իրավական ու տնտեսական դրութիւնը համեմատաբար ավելի մեղմ է եղել, քան Եվրոպայի արեւելյան երկրներում, ուր միեւնոյն գյուղացիութիւնը ո՛չ միայն վճարել է զանազան տուրքեր ու հարկեր, այլև իր ամբողջ ընտանիքով ու ամենամեծ չափերով շահագործվել է նաև իբրև ձրի աշխատող ուժ:

Գիտական այս նոր տեսութիւնն ագրարային երկու տարբեր սիստեմի մասին, որոնցով մեծապես պայմանավորված է եղել ճորտութեան տնտեսական ու իրավական դրութիւնը, ունի նշանակութիւն թե՛ հին Հայաստանի և թե՛, ընդհանրապես, ամեն մի երկրի համար, ուր գոյութիւն է ունեցել ճորտական գյուղացիութիւն՝ ստորադրված կալվածատեր ազնվական դասի իշխանութեանը:

Վերոհիշյալ բաժանման տեսակետից, թվում է ինձ, որ Մարգպանական Հայաստանի կալվածատիրական սիստեմը համապատասխան պետք է ընդունել Grundherrschaft կոչված սենյորալ կադակերպութեանը: Պատմական աղբյուրներից բնավ չի երևւում, որ նախարարներն իրենք ևս եղած լինեին գյուղատնտեսներ և ունեցած լինեին սեպհական ու ինքնուրույն խոշոր տնտեսութիւններ: Նրանց եկամտի գլխավոր աղբյուրը կազմել են, հավանաբար շինականներից ստացված տուրքերը և հարկերը: Ամեն անգամ երբ մատենադրական աղբյուրների մեջ խոսք է լինում նախարարների ու շինականների փոխհարաբերութեան մասին, հիշվում է միշտ շինականների հարկատվութիւնը և նախարարների հարկապահանջութիւնը: Փափստոս պատմագիրը, խոսելով Աշտիշատի ժողովում սահմանված կանոնների մասին, առաջ է բերում, օրինակ, ներսես կաթողիկոսի հետևյալ պատմերը. «Եւ ամենայն աշխարհին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ աշակերտս, և սիրել իբրև զընտանիս, և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զշափն. յուշ առնելով, զի և նոցա տէր գոյ յերկինս: Սոյնպես և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնադանդութեան իւրեանց տերանց, լի ի տեառն է լինիցի նոցա վարձք» (Վենետիկ, 1832, էջ 77—78): Սահակ կաթողիկոսի ի՛նչ կանոնում վանքերի մասին ասված է, որ «ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս ընկալաւ և

անդս, և երիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբութեան եկեղեցւոյ» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 35): Այսպես և ուրիշ վկայությունների մեջ շեշտվում է շարունակ հարկապահանջութիւնը, որպես կալվածատիրութեան հիմնական եկամուտ:

Փալատոսի վերոհիշյալ վկայութեան մեջ հետաքրքիր է այն, որ թագավորին ու իշխաններին պատվեր է տրվում՝ «մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զխախն»: Ներսէս Պարթևի այս պատվերը, որ կարող է կանոնական մի որոշում լինել, ընդունված Աշտիշատի ժողովում՝ նրա ժամանակ, հավանական է, որ գործադրված պիտի լիներ եկեղեցական, գուցե և, ընդհանուր առմամբ, նաև արքունի ու նախարարական գյուղացիութեան նկատմամբ: Եթե մատենագրական աղբյուրների օգնութեամբ հաջողվի անվիճելի կերպով ցույց տալ, որ շինականների պարտականութիւնները կախված չեն եղել հին Հայաստանում կալվածատեր ազնվականութեան քմահաճ կամայականութիւնից, այլ հաստատուն կերպով որոշված են եղել օրենքով, եկեղեցական կանոններով կամ սովորութեամբ, շինական դասի դրութեան որոշման համար այդ փաստն ինքնին կունենա խոշոր նշանակութիւն: Եվրոպական ֆեոդալիզմի ուսումնասիրութիւններից հայտնի է, որ ամեն անգամ, երբ ճորտական գյուղացիութեան հարկերն ու պարտականութիւններն առաջուց պայմանավորված՝ հաստատուն ու որոշ են եղել, նրանց իրավական ու տնտեսական դրութիւնը եղել է համեմատաբար մեղմ ու տանելի, իսկ երբ նրանց հարկերն ու պարտականութիւնները կախված են եղել կալվածատերերի կամայականութիւնից, նրանց վիճակը եղել է խիստ ծանր՝ իրավադուրկ ու գրեթե ստրկական:

Ներքեում մենք կտեսնենք, որ հին Հայաստանի շինականներին չպետք է համարել իրավազուրկ կամ ճորտ այդ բառի լրիվ իմաստով: Իմ կարծիքով, ո՛չ միայն նրանց իրավունքները, այլև պարտականութիւնները եղել են, ընդհանուր առմամբ, որոշ ու հաստատուն: Նրանց իրավական այդ մեղմ դրութիւնը հասկանալու համար՝ անհրաժեշտ է, նախ և առաջ, ուշադրութեան առնել երկրի տնտեսական զարգացման աստիճանը: Արշակունիների, ինչպես և մարզպանութեան ժամանակ, թվում է ինձ, որ խոշոր առևտուրը և առևտրական կապիտալը Հայաստանում չէին կատարում առանձին մեծ դեր գյուղատնտեսութեան նկատմամբ: Այդ է, ըստ երեւոյթի, գլխավոր պատճառը, որ հին Հայաստանում գոյութիւն

շեն ունեցել ո՛չ ճորտական այն դաժան իրավունքը, որ XV—XVI դարից սկսած հետզհետե գոյացել ու զարգացել էր, զլիաժորապես, արևելյան Եվրոպայում, ո՛չ էլ այդ երկրների крепостной կամ leibeigen կոչված ստրկանման գյուղացիությունը. որ ամենամեծ չափերով ենթարկված է եղել կալվածատեր ազնվականության քմահաճ ու անողոր շահագործման:

Մարզպանական Հայաստանի շինականների ճորտանման, «անազատ» վիճակը չպետք է ուրեմն հասկանալ իբրև գերմանական Leibeigenschaft այդ բառի նեղ ու իսկական իմաստով, այլ իբրև ժառանգական հպատակություն (Erbunterthänigkeit) և կախումն իրենց ազնվական տերերից ո՛չ թե անձնական, այլ հարկային ու տնտեսական: Շահապիվանի ժողովի կանոններից, թվում է ինձ, կարելի է եզրակացնել, որ շինականները Մարզպանական Հայաստանում եղել են անձնապես ազատ: Այդ տեսակետից նրանց դրույթները կարելի է որոշ չափով համապատասխան ընդունել Բյուզանդական կայսրության կոլոնների և արևմտյան Գերմանիայի hōrige անվանված գյուղացիների իրավական դրույթները՝ որոնք, ինչպես հայտնի է, համարվել են նույնպես անձնապես ազատ:

Շինականների իրավական այդ դրույթյան որոշման համար կարևոր են, օրինակ, Շահապիվանի ժողովի կանոններում հետևյալ հատվածները. 1) «Եթե՞ ոք զկինն թողցէ ղորդոյ մայր առանց բանի պողնկութեան, և կամ թէ արատ ինչ շար ի մարմնի շիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ և այլում ակն եղեալ իցէ, դատաստանն այս լիցի՝ ղտուն և զկեանս և ղորդիս և զհող և զջուր և զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկէսն կնոջն առցեն. և թէ կամք են այր ի տուն ածել, ինքն համարձակ ածցէ, ղբաժինն կալցեն և ղարքունի հարկն ողջ արասցեն: Եւ այրն որ եթող, է ամ ապաշխարեսցէ և յեկեղեցի տուգան տայցէ, թէ ազատ է յ դրամ, թէ շինական է, դանալի լիցի և ճ դրամ յեկեղեցի տուգանեսցի, փոխանակ օրհնությամբ զամուսնութիւնն խոտելոյ: Ապա թէ մինչդեռ ի պայքարին և ի տուգանի իցեն, և կին ոք հանդոնեալ կնաթողին կին լիցի և ամ մի շիցէ անցեալ, յայտ եղև եթէ զառաջին կինն նա ետ թողուլ, կալցեն զկինն և յուրկանոց տարի մի աղասցէ ղողեացն. եթէ ազատ է՝ յուրկանոց չերթայ՝ ճ դրամ տացէ ի գողիսն (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, կան. դ. էջ 64) «Եթե՞ ոք կին ունիցի և պողնկեսցի, և զկարգ ամուսնութեան սրբութեամբ ոչ պահիցէ... եթէ ազատ է՝ գան չէ մարթ հարկանել, ի տուգանն և

յապաշխարութիւնն յաւելցեն. մ դրամ կարօտելոց, բ տարի ապաշ-
խարութիւն. և զպղծութիւնն այլ մի՛ ևս գործեսցէ. ապա մտցէ յե-
կեղեցի և ընդ ընկերս խառնիցի: Ապա թէ շինական է, գան յուրմ
արբցէ, ճ դրամ տուգան տացէ յեկեղեցի և յաղքատս բաշխեսցեն,
և տարի մի ի պղծութենէն հեռացեալ՝ մտցի յեկեղեցի և ընդ ըն-
կերս խառնեսցի: Ապա թէ շինական է, թէ այր և թէ կին, կանոն
այդ կացցեա՝ (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղևոնդյանի, էջ
62—64),

Թե՛ այս և թե՛ նույն ժողովի նաև ուրիշ մի քանի կանոններից
պարզ երևում է, որ շինականներն ունեցել են իրենց սեպհական
գույքը, որ նրանք իրավունք են ունեցել տալ իրենց զավակներին՝
կամ թողնել ժառանգներին: Հանցանք գործելիս, ինչպես տես-
նում ենք, նրանք ենթարկվել են քրեական ու եկեղեցական պա-
տիժների: Ուշադրության արժանի է, որ շինականների վճարելիք
դրամական տուգանքները, որ սահմանված էին պոռնկության և
կնաթողության համար, երկու կամ երեք անգամ ավելի են եղել
քան ազատների: Տուգանքների համեմատական այդ հարա-
բերությունը, իմ կարծիքով, կարող է ուշագրավ մի նշան համար-
վել, որ շինականների տնտեսական դրությունը համեմատաբար
պետք է եղած լիներ բավական բարեկեցիկ: Նույն կանոններից
դժվար չէ նաև հետևել, որ «շինական» կանայք, պատկանելով
«անազատների» դասին, իրավաբանորեն չեն գտնվել «աղախնու-
թյան», այսինքն՝ ստրկության վիճակում, այլ նրանք որոշ ժա-
մանակով աղախնության են տրվել զողենոց կամ ուրկանոց, իբրև
հանցագործներ: «Ազատ» կանայք, որոնց չէր կարելի ուղարկել
զողենոց, միևնույն հանցանքների համար զողենոցին վճարել են
որոշ տուգանքներ: Շինականներն իրավունք են ունեցել հայց
տալու և դատվելու եկեղեցական դատարաններում: Հավանական
է, որ նույն իրավունքները նրանք ունեցած կլինեին նաև աշխար-
հական դատարաններում: Լինելով անձնապես ազատ, շինական-
ները, ըստ երևույթին, կարող էին ամուսնանալ առանց կալվածա-
տիրոջ համաձայնության: Սահակ Պարթևին վերագրված իդ կանո-
նում ամուսնությունը ծնողների անգամ բռնադատությամբ հա-
մարվում է անթույլատրելի: Ճիշդ կատարելոց, — ասված է կանո-
նում, — որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ, ի հաճոյս իւրեանց, պսակ
մի իշխեսցիք դնել՝ առանց քննութեան և ցնոսին ինքեանս հար-
ցանելոյ. գուցե բռնադատութեամբ ծնողաց յակամայ հաւանեալ
իցեն. և զայնպիսի հարսանիս մի՛ իշխէք յանձն առնուլ, զի մինչև

ցայսօր յայդպիսի անկարգութենէ՝ բազում վնասք գնացին յաշխարհիս՝ հոգեւոր և մարմնաւոր» («Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 26):

Ուղադրության արժանի է, որ իրավունքների խախտման դեպքում անարգանքի համար ազատներին վճարվել է երկու անգամ ավելի տուգանք, քան շինականներին: Այդ մասին Շահապիվանի ժողովի կանոններում կան հետևյալ կարեւոր վկայությունները. 1) «Եթէ կին ոք արար և ամուլ պատահեաց, և այրն հանցէ զնա վասն ամուլեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ: Եւ եթէ քան զամուլեանն այլ արատ չգտցի, մարդն տուգան ևս տացէ կնոջն վասն անարգանացն, թէ ազատ է ում գրամ և թէ շինական ու» («Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, կան. ե, էջ 64—65). 2) «Ոյք առեանկ առնիցեն, կալցեն զկինն և անդէն տացեն ցհայր և ցմայր իւր և տուգանեացին փոխանակ անարգանացն, եթէ ազատ է ում գրամ, եթէ շինական է ու» (Նույնը, կան. է, էջ 66): Տուգանքների այս տարբերությունը, ինչպես տեսնում ենք, մեծ չէ: Հին Ռուսաստանում բարձր դասի մարդկանց խոշտանգման համար պահանջվել է 12 գրիվնա, իսկ սմերդների՝ որ համարվում են ազատ գյուղացիներ, 3 գրիվնա: Պրոֆ. Վ. Սերգեևիչի կարծիքով, տուգանքների այս հարաբերական չափն արտահայտություն է սմերդների սոցիալական ցած ու նվաստ գրության⁶: Հին Անգլիայում իրավունքների խախտման համար ազնւվական eorl-երին վճարում էին երկու անգամ ավելի, քան ազատ գյուղացիներին՝ ceorl-երին: VII դարից սկսած, երբ գյուղացիների դրությունը դառնում էր Անգլիայում հետզհետեւ ճորտական, ազնւվականների արժեքն աստիճանաբար լքարձրացել է և նրանք գնահատվել են 3, հետո 6, իսկ XI դարում արդեն մոտ 10 անգամ ավելի, քան գյուղացիները⁷: Նույն անհամաչափությունը գոյություն է ունեցել ֆեոդալական նաև ուրիշ երկրներում, ուր գյուղացիությունը գտնվել է ճորտական ծանր վիճակում: Վրաստանում, օրինակ, XIV—XV դարերում բարձր ազնվականի արյան գինը եղել

⁶ В. Сергеевич, Русския юридическия древности, т. I, издание второе, С. П., 1902, стр. 184.

⁷ М. Кулишер. Лекции по истории экономического быта западной Европы, Петроград, 1918, стр. 41.

է 20.000, միշին ազնվականի՝ 12.000, իսկ գյուղացունը միայն 400 դանգ⁸։

Այս համեմատութիւններից պարզ երևում է, որ հինգերորդ դարում շինականների պատիւը և անձը գնահատվել է Հայաստանում բավական բարձր։ Այդ տեսակետից, ինչպես տեսնում ենք, նրանց դրութիւնը հավասար է եղել անգլիական ազատ գյուղացիութեան՝ ceorl-ների դրութեանը և երկու անգամ ավելի նպաստավոր է եղել, քան ռուսական սմերդներինը։ Այս փաստը, իմ կարծիքով, նորից կարևոր ու ուշագրավ մի նշան է շինականների թե՛ տնտեսական և թե՛ իրավական համեմատաբար ավելի բարեկեցիկ ու բարձր կացութեան, քան ֆեոդալական այն երկրներում, ուր գոյութիւն են ունեցել ճորտութեան ժանր տեսակները։

Եվ իրոք, ինչպես տեսանք, նրանք անձնապես եղել են ազատ, ունեցել են ընտանեկան, ընչական, ժառանգական իրավունքներ, որոնցից հաճախ զրկված են եղել արևելյան Եվրոպայի կիսաւստրոկ ճորտերը։ Դիմիտրի Ժոդովի կանոններում կա նույնիսկ հետաքրքիր մի ակնարկ, որից իմ կարծիքով, անհավանական չի լինի եզրակացնել, որ նրանք կարող էին գնել անշարժ սեպականութիւն։ «Եւ զկէս շնորհին և զհող և զջուր բովանդակ,—ասված է Դիմիտրի ութերորդ կանոնում,—սրբոյ եկեղեցւոյն թողցէ վախճանեալ քահանայն և կին նորա. ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղիցի՝ եթէ ոչ որդիս կամ թոռունս ունիցին, դի չվայելէ զսրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւնն յարժանաւոր մերձաւորացն օտարացոցանել և տալ հնուաւոր օտարաց։ Բայց եթե անկաւորացն կամաւորութեամբ վաճառել իսկ թողացուցէ վարդապետն՝ և զայն մի շինականի ումեք, այլ յովստէ եկեղեցւոյն, թէև հնուաւոր իցէ» (հրատար. Մխիթար վարդապետի և Ս. Տիգրանյանի, էջ 16—17)։ Թեև այս կանոնի մեջ պարզ ասված է, որ քահանայի անշարժ գույքը չպետք է վաճառվի որեւէ շինականի, այլ միայն հոգևորական դասի անդամներին, բայց, այնուամենայնիվ, քանի որ շինականները հիշատակվում են իբրև հավանական գնորդներ, թվում է ինձ, որ ընդհանրապես, արգելված չէ եղել նրանց գնել անշարժ գույքեր և ունենալ հատուկ «քսակագին» հողեր։

Պատմական աղբյուրներից ստացած իմ ընդհանուր տպավորութիւնն այն է, որ շինականները Մարգալանական Հայաստա-

⁸ А. С. Френкель, Сборник законов грузинского царя Вахтанга VI, Тифлис, 1887, *տե՛ս* Законы Агбуги, стр. 96, 98 և այլն։

նում, լինելով առանձին դաս. իրենց դրուժյան ճորտանման գծերով կարող են մոտավորապես համեմատվել Բյուզանդական կայսրության կոլոնների հետ, որոնք նույնպես, ինչպես հայտնի է⁹, չեն ունեցել անձնական կախում իրենց տերերից:

Հիմնվելով վերև առաջ բերված վկայությունների ու ակնարկների վրա, ես հավանական եմ համաթում, որ շինականները Սասանյան Հայաստանում բյուզանդական կոլոնների նման կապված են եղել իրենց հողին ու հարկատու ծառայությանը: Կոլոնների նման նրանց ևս արգելված է եղել դուրս դալ ինքնակամ իրենց դասից և մտնել ուրիշ դասերի մեջ: Հայտնի է, որ կոլոնները կարող էին ընդունվել տեղական եկեղեցիների կղերականության մեջ իրենց տերերի հաճությամբ¹⁰, վերև մենք տեսանք, որ Ղազար Փարպեցին ևս, իբրև շինական, հոգևորական էր դառել Տեր Աղանի համաձայնությամբ:

Կոլոնների մասին հայտնի է նույնպես, որ նրանք իրավունք չեն ունեցել վարել որևէ պետական պաշտոն՝ նույնիսկ ստորին կարգի¹¹: Իմ կարծիքով, նույնը, եղած պիտի լիներ նաև Հայաստանում: Ես հապիվանի ժողովի ժգ-րդ կանոնում ասված է, որ «առանց գաւառի եպիսկոպոսին չիշխէ լինել եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ ոք դատաւորաց, և կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստելոյ եկեղեցւոյ, և ժողովրդապետս և օրէնսդիրս կացուցանելոյ» («Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 76): Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, հիշվում են իբրև դատավորներ հատկապես ազատները: Միանգամայն հավանական է, որ շինականներին արգելված պիտի լիներ վարել ո՛չ միայն դատավորական, այլև ուրիշ պետական պաշտոններ:

Շինական դասի իրավական դրուժյունը Մարզպանական Հայաստանում, ինչպես տեսնում ենք, այնքան էլ մութ ու անորոշ չէ, ինչպես մինչև այժմ կարծվել է: Փաստական մեր դիտողություններից պարզ երևում է, որ պատմական այս շրջանում դոյություն չէր ունեցել Հայաստանում այն ժանր ստրկանման ճորտությունը, որ համեմատաբար նոր ժամանակներում առանձնահատուկ է եղել, գլխավորապես, արևելյան Եվրոպային: Շինականների «անազատ»

⁹ S. Կулаковский Юл., История Византии, т. I, Киев, 1918, стр. 72—74.

¹⁰ Նույնը, էջ 73.

¹¹ Նույնը:

կոչվելը չպետք է հասկանալ այն իմաստով, իբր թե նրանք անձնական կախում են ունեցել իրենց տերերից և եղել են անձնապես իրավազուրկ: Նրանք «անազատ» են անվանվել, իբրև ազատներից տարբեր ու ազատներին հակադիր մի դաս:

«Անազատ», ուրեմն, նշանակում է «ազատների» դասին չպատկանող: Բացի շինականներից «անազատ» կարող էր կոչվել, հավանաբար, նաև քաղաքների բնակչության այն ուամիկ մասը, որը չէր պատկանում «ազատների» դասին: Եթե ապագայում հնարավոր լինի պարզել, որ հին Հայաստանում կիսաազատ շինականներից դուրս եղել են նաև ազատ գյուղացիներ, թվում է ինձ, որ սրանք ևս համարված պիտի լինեին «անազատներ», որովհետև գծվար է ենթադրել, որ նրանք կարող էին պատկանած լինել ազնվական «ազատների» դասին: Պատմական ու բանասիրական նորագույն աշխատություններում «անազատ» բառը հասկացվել է միշտ նրա աշխարհաբար այժմյան նշանակությամբ: «Ազատք» և «անազատք» թարգմանվել են ոուսերեն՝ свободные և несвободные: Այդ թարգմանության դեմ, ինչպես տեսնում ենք, կարող են լինել լուրջ առարկություններ: Ավելի ուղիղ կլինի այդ բառերը թարգմանել՝ «азаты» և «неазаты»: Անթույլատրելի է, ընդհանրապես, հայոց իրավական ու սոցիալական հին տերմինները, ինչպես՝ «անազատ», «ազատ», «ազատութիւն», «սեպհական», «սեպհականութիւն» և այլն՝ թարգմանել կամ լուսաբանել այդ բառերի ժամանակակից աշխարհաբար իմաստի համեմատ, այլ հարկավոր է ամեն անգամ որոշել իրավական այն հատուկ բովանդակությունը, որ նրանք ունեցած պիտի լինեն հին Հայաստանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔՈՒՆԻ ՀԱՐԿԵՐԸ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ¹

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔՈՒՆԻ ՀԱՐԿԵՐԸ ՀԱԶԿԵՐՏ Բ-ԻՑ ԱՌԱՋ

Հայոց մատենագրական աղբյուրներում Հայաստանի հնագույն հայրերը հիշատակվում են առաջին անգամ Եղիշեի պատմության մեջ և նրա վկայությունները վերաբերում են մարզպանության շրջանին: Հայաստանի պատմության նախկին շրջանների նկատմամբ հարկերի խնդիրը, ինչպես և շինական դասի դրությունը, մնում են մութ ու անորոշ, որովհետև աղբյուրներն այդ մասին չեն տալիս ոչ տեղեկություն, ոչ էլ որևէ ակնարկ:

Խոսելով Հայաստանում Հազկերտ Բ-ի ժամտնակ (439—457 թթ). տեղի ունեցած աշխարհագրի մասին, Եղիշեն հարկերի ծանրության մասին հաղորդում է հետևյալը. «Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին, նոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց զնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց: Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով. մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ, զիարդ շէն կայցէ աշխարհն» (Վենետիկ 1864, էջ 40): Մի ուրիշ հատվածում Եղիշեն դարձյալ վկայում է, որ Հազկերտ Բ-ը Հայաստանից ավելի հարկ է ստացել, քան նրա նախորդները. «Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բաղմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս, նա և ի սուրբ եկե-

¹ Տե՛ս Երևանի պատմության և Արվեստի ինստիտուտի տեղեկագիրք, Երևան, № 1, 1926:

դեցուցն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց, և դու ընդ հարկաւ եղիր» (Վենետիկ, 1864, էջ 75): Դենշապուհի աշխարհագրի թաքուն նպատակների մասին Նդիշեն հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Սւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանկեաց: Զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրութեան այրեւծիոյ: Թէպետ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք շարագոյն ցուցանէին: Առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն. երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ. երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց. չորրորդ, բանսարկութեամբ զնախարարեանն էարկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն: Սւ զայս ամենայն առնէր, թերևս զմիաբանութիւնն քակեցցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեցցէ, և զմիայնակեացսն փախուցցէ և զշինականսն վատնեցցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեցցեն յօրէնս մոգուց» (Վենետիկ, 1852, էջ 38—39):

Նդիշեի այս վկայությունները, իմ կարծիքով, հիմք կարող են ծառայել, նախ և առաջ, ընդհանուր մի դիտողության:

Հայագիտական նորագույն երկերում ենթադրվել է հաճախ, ինչպես, օրինակ, Կ. Գյուլտերբեկի «Բյուզանդիոն և Պարսկաստան» հետաքրքիր ու կարևոր աշխատության մեջ, որ Պարսկական Հայաստանը 429 թվից հետո, կորցնելով իր ինքնավարության մնացորդները, միացվել է Սասանյան Պարսկաստանին, իբրև պարսկական մի նահանգ: Պատմական այս ամփոփումը կարող է, բնականաբար, մեկնվել այն իմաստով, որ իբր թե 429 թվից հետո Պարսկական Հայաստանի պետական հարկերը նույնը եղած պիտի լինեին, ինչ որ և մյուս պարսկական նահանգներում: Այդպիսի կանխակալ մի հետևություն, իմ կարծիքով, թույլատրելի չէ:

Մատենագրական մի շարք վկայություններից դժվար չէ գուշակել, որ 429 թվից հետո մինչև Հազկերտ Բ-ի նոր քաղաքականությունը Պարսկական Հայաստանի թե ներքին վիճակը և թե հարկային հին կարգերը մնացել էին գրեթե անփոփոխ:

Արշակունյաց թագավորության անկումից հետո, ինչպես վկայում է Նդիշեն՝ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն» (Վենետիկ, 1852, էջ 11): «Զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց

երթայր,— ասում է Եղիշեն,— սակայն այրուձին հայոց բովանդակի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (նույնը, էջ 11)։ Եվ իրոք, հայտնի է արդեն, որ հայկական նախարարությունները, որոնք իրենք էին հոժարակամ ցանկացել ենթարկվել Սասանյան Պարսկաստանի անմիջական իշխանության, Արշակունյաց վերջին թագավորի գահընկեցությունից հետո պահպանել էին անաղարտ ու անփոփոխ իրենց տիրական և գործակալական իշխանության գրեթե բոլոր իրավունքները։ Մամիկոնյանները մնում էին դարձյալ, իբրև Պարսկական Հայաստանի սպարապետներ, Վահան Ամատունուն հանձնված է եղել հազարապետության գործակալությունը, իսկ դատավարության իշխանությունը, ըստ երևույթին, մնացել էր բարձր հոգևորականության ձեռին։

Այս բոլորը պարզ ցուցմունքներ են, որ Արշակունյաց անկումից հետո Պարսկական Հայաստանի ինքնավար ներքին կազմակերպության մեջ զգալի փոփոխություններ չէին եղել։

Նույնը, հավանորեն, պետք է ենթադրել նաև Պարսկական Հայաստանի արքունի հարկերի մասին։

Եղիշեի վերոհիշյալ վկայություններից պարզ երևում է, որ հայ հոգևորականության հարկային բոլոր նախկին արտոնությունները մնացել էին անփոփոխ մինչև Հազկերտ Բ-ի նոր կարողադրությունը։ Այս վերջին հանգամանքը կարող է հավանական մի նշան համարվել, որ Պարսկական Հայաստանի նաև մյուս արքունի հարկերը մարդպանության սկզբնական տարիներում փոփոխության չէին ենթարկվել։ Եղիշեի վերոհիշյալ խոսքերը՝ «Որ գանձն յարքունիս Պարսկաց երթայր», ինձ թվում է՝ պետք է հասկանալ այն մտքով, որ Սասանյան Պարսկաստանին տրվելու էին այն արքունի հարկերն ու եկամուտները, որոնք գոյություն ունեին Արշակունյաց վերջին թագավորների ժամանակ։

Վարչական ու հարկային ուրույն այս վիճակը, որ Պարսկական Հայաստանն ունեցել է, հավանորեն, Հազկերտ Բ-ից առաջ, հարկավոր է աչքի առաջ ունենալ ու առանձնապես ընդգծել, որովհետև Վարդանանց շրջանի քաղաքական անցքերը ստանում են տարբեր լուսաբանություն, երբ նկատի են առնվում այս կարևոր հանգամանքները։ Հազկերտ Բ-ի նոր քաղաքականությունը Պարսկական Հայաստանի հանդեպ ուղղված է եղել, ինչպես այդ պարզ երևում է փաստական մի շարք տվյալներից, ոչ միայն քրիստոնեական եկեղեցու դեմ, այլև նախարարությունների, նրանց արտոնյալ արտակարգ իրավունքների, նաև, ըստ երևույթին, Պարսկական Հայաստանի հարկային հին կարգերի դեմ։

Սասանյան Պարսկաստանը, բնական է, որ վաղ թե ուշ ձգտելու էր տարածելու մարզպանական այս շրջանի վրա թե իր պետական օրենսդրության ընդհանուր որոշումները և թե հարկային այն սխեման ու այն կարգերը, որ պարտադիր են եղել մյուս մարդերում: Դենշապուհի աշխարհագիրը, հազարապետության հանձնումը պարսիկ պաշտոնյայի, եկեղեցու ու հոգևորականության հարկային ազատության ունչացումը և այլ նման փաստեր, իմ կարծիքով, ուշագրավ ու հավաստի նշաններ են, որ այդ փոփոխությունը Պարսկական Հայաստանի հարկային դրության վերաբերմամբ տեղի է ունեցել Հազկերտ Բ-ի ժամանակ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սասանյան Պարսկաստանի հարկերի ու ֆինանսական տնտեսության լուսաբանության համար, ինչպես հայտնի է, գլխավոր ու հիմնական աղբյուրն է Տաբարիի արաբական ժամանակագրությունը: Ընդունելով, որ Պարսկական Հայաստանի արքունի հարկերը նման պիտի լինեին մյուս մարզերի հարկերին, այս աղբյուրի վկայությունները բնականաբար մեծ կարևորություն են ստանում նաև Պարսկական Հայաստանի համար:

Տաբարիի հաղորդած տեղեկությունների համաձայն² Խոսրով Նուշիրվանից առաջ (531—579 թ.) Պարսկաստանի թագավորները, սովորաբար, առնում էին առանձին շրջաններից, որպես հողային տուրք, բերքի $\frac{1}{3}$ -ը $\frac{1}{4}$ -ը $\frac{1}{5}$ -ը կամ $\frac{1}{6}$ -ը, նայած ոռոգման ու հողի մշակության: Բացի այդ նրանք առնում էին նաև որոշ զուգար գրելխահարկ: Պերոզի որդին Կավատը (488—531 թ.) իր թագավորության վերջում կարգադրած է եղել, որ հողաչափություն կատարվի դաշտային ու լեռնային հողերի, որսվեսզի կարելի լինի ճշտվի որոշել հողային հարկերը: Այդ հողաչափությունը, որ սկսվել էր Կավատի ժամանակ, շարունակվել է ու ավարտվել Խոսրով Նուշիրվանի ժամանակ, որը կարգադրած է եղել համրել նաև մարդկանց ու հաշվել արմավենիների ու ձիթենիների քանակը: Այնուհետև՝ այս աշխարհագրից հետո, որոշված է եղել հարկերի չափը: Ամեն մի garib հողից (=3600 քառակուսի կանգուն, 1470 քառ. մետր, մոտավորապես $\frac{1}{7}$ դեսյատին³), որի վրա ցանված էր ցորեն կամ

² 84^a Th. Noeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. Leyden 1879, էջ 241—247.

³ 1 garib հողը=1470,87 $\frac{1}{2}$ քառակուսի մետրի, տե՛ս J. A. Decourdemanche. Traite pratique des poids et mesures des peuples anciens et des

գարի՝ որոշված է եղել պահանջել 1 դրամ հողահարկ, մեկ garib խաղողի այգուց՝ 8 դրամ և այլն: Գլխահարկ վճարելու էին բոլորը՝ 20 տարեկանից մինչև 50 տարեկանը՝ բացի ազնվականներից, մեծամեծներից, ղինվորներից, որոշ հոգևորականներից ու թագավորության պաշտոնյաններից: Ամեն մի անձից տոնում էին 12, 8, 6 կամ 4 դրամ՝ համաձայն հարկատուի կարողության: Գլխահարկի սովորական, տարածված չափը եղել է, ըստ երևույթին, 4 դրամ: Հարկերը գանձվում էին մաս մաս, տարին երեք անգամ, յուրաքանչյուր քառամսյակում տարեկան հարկի $\frac{1}{3}$ մասը:

Հենվելով Տաբարիի կարևոր այս տեղեկության վրա, պրոֆ. Նիկ. Ադոնցը «Армения в эпоху Юстиниана» իր ուսումնասիրության մեջ (էջ 481—485) քննության է առել Նդիշեի վերոհիշյալ վկայությունները, համեմատելով Պարսկական Հայաստանի հարկերն այն ընդհանուր հարկերի հետ, որոնք ընդունված են եղել Սասանյան Պարսկաստանում, իսկ հետագայում նաև Արաբական խալիֆայթում: Նրա ասելով՝ Սասանյան Պարսկաստանում գոյություն են ունեցել երկու տեսակ հիմնական հարկեր՝ «խարաճ» հողային հարկ և gezith ղլխահարկ: Նույն հիմնական հարկերը եղել են նաև Հռոմեական կայսրության մեջ tributum soli և tributum capitis, որոնք Դիոկղեսիանի բարենորոգումից հետո անվանվել են՝ capitatio terrena և capitatio humana կամ plebeia: Արաբական տիրապետության ժամանակ տարբերել են երկու կարգի հողային տուրք՝ vazife և mucasame: Առաջինը. vazife-ն համապատասխան լինելով եվրոպական cens-ին, վճարվել է դրամով՝ որոշ դոմար հողային տարածության յուրաքանչյուր հատուկ միավորից: Իսկ երկրորդը՝ mucasame-ն, որ համապատասխանում է եվրոպական champart-ին, բնական հարկ է՝ որոշ մաս բերքից, որ տրվել է կալվածատիրոջ: Նիկ. Ադոնցի կարծիքով, արաբական vazifé-ն համապատասխանում է իրապես պարսկական «խարաճ»-ին, իսկ mucasame-ն անվանվում է պարսկերեն bahrak:

Բաղդադում Նդիշեի մոտ հիշատակված հարկերը հիմնական ու սովորական այս հարկերի հետ, Նիկ. Ադոնցն ավելի քան հավա-

Arabes, Paris 1909, էջ 65 և 90. A. Christensen-ը (garib հողը ենթադրում է 2400 քառ. մետր) տե՛ս L'empire des Sassanides, Kobenhavn, 1907, էջ 57, իսկ Alf. Kremer-ը 1169, 54 քառ. մետր) տե՛ս Culturgeschichte des Orients I էջ 98—99, J.A. Decourdemanche-ի հաշիվները վստահելի են ու հավաստի. որովհետև նրա երկը մասնագիտական հատուկ աշխատություն է, նվիրված հնագույն բոլոր չափերի համեմատական ուսումնասիրությանը:

նական է համարում, որ «բաժ»-ը համապատասխան կարող է լինել թխարաճա-ին և vazîfê-ին, իսկ «սակ»-ը՝ gezîth-ին: Նա հնարավոր է նաև համարում, որ Եղիշեի «մուտ»-ը և «հաս»-ը հոմանիշներ են պարսկերեն «սակ»-ի և «բաժ»-ի և գործածական են եղել հայկական միջավայրում:

Այս ենթադրական համեմատությունները, պարզապես գուշակություններ են և ոչ հիմնավորված եզրակացություններ: Շատ պարզ է, որ հայկական հին հարկերը և նրանց իրական բովանդակությունը պետք է որոշել ոչ թե համեմատական այդ եղանակով, այլ, նախ և առաջ, հայոց մատենագրական աղբյուրների հավաստի ու հաստատուն վկայությունների օգնությամբ: Ներքև մենք քննության ենք առնելու Հայաստանի թե՛ այս և թե՛ մյուս հնագույն հարկերը՝ յուրաքանչյուրն առանձին՝ հիմնվելով մատենագրական վկայությունների վրա: Ինչպես կտեսնենք, ուսումնասիրության այդ եղանակով ստացվում են հավանական նոր եզրակացություններ, որոնք մեծ մասամբ, հիմնովին տարբեր են Ն. Ադոնցի վերոհիշյալ ենթադրություններից:

Պարսկական Հայաստանի առանձին հարկերի քննությունից առաջ՝ նախ կարևոր է, իմ կարծիքով, կանգ առնել ու ծանրանալ մի շարք ընդհանուր խնդիրների վրա, որոնք տրամաբանորեն բխում են Տաբարիի ու Եղիշեի վկայությունների բաղդատությունից և որոնք մինչև այժմ հարուցված չեն եղել:

Տաբարիի վկայությամբ՝ հողային դրամական հարկերի կիրարկումը Սասանյան Պարսկաստանում որոշված է եղել խոսքով՝ Նուշիրվանի (531—579 թ.) հրամանով: Իսկ մինչև այդ գոյություն են ունեցել հողային բնական տուրքեր: Որ հողային հարկերը Սասանյան թագավորության նախնական շրջանում ունեցել են բնական տուրքերի բնույթ՝ այդ մասին ուշագրավ մի ակնարկ կա Աբրահամ խոստովանողի «Վկայք Արևելից» թարգմանության մեջ հետևյալ հատվածում, որ վերաբերվում է Պարսից թագավորին՝ «Գրգիս ի տաճարի որ շինեցաւ ի հզարաց, և բազմեալ ես յապարանս, զոր զարդարեցին պնդակազմքն: Գան բեզ պատիւք և պատարագք ի հեռաստանէ և տասանորդք ի չորից կողմանց երկրի: Ուստես զսուրբ արդիւնս կալոց և ըմպես զազնուական զինիս հնձանաց» (էջմիածին, 1921, էջ 9): «Տասանորդք» գործ է ածված այստեղ, անշուշտ, հողային բնական հարկերի իմաստով:

Արդ, եթե ճիշտ է Տաբարիի այդ վկայությունը՝ կարելի է արդյոք առանց դրական ապացույցների ենթադրել, որ Եղիշեի թված

հարկերից որևէ մեկը կարող էր ունենալ հողային դրամական հարկի՝ «խարաճ»-ի նշանակությամբ⁴։ Ինչու՞ չենթադրել, որ հոսսրով նուշիրվանից (531—579) առաջ Պարսկական Հայաստանում ևս հողային հարկը նույն բնույթն ունեցած պիտի լիներ, ինչ որ և մյուս պարսկական շրջաններում։ Այս հարցերն այնքան կարևոր են ու առաջնակարգ Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, որ արժանի են, իմ կարծիքով, ամենալուրջ ուշադրության։

Եթե ի նկատի ունենանք, որ հողային հարկը նույնիսկ Բյուզանդական կայսրության մեջ տրվել է հաճախ բերքով (in speciebus, ta eidê) և տուրքի այդ ձևը վերջնականասլիս վերացվել ու փոխարինվել է դրամական վճարումներով միայն Անաստաս կայսրի ժամանակ (491—518 թ.)⁵, ինձ թվում է՝ խիստ դժվար է Պարսկական Հայաստանի հողային հարկերն ընդունել դրամական, Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.)։ Անհավատալի կլիներ, իհարկե, կարծել, որ Պարսկական Հայաստանը տնտեսական իր զարգացման ու դրամական շրջանառության տեսակետից կարող էր այդ ժամանակ ավելի նպաստավոր պայմանների մեջ գտնվել, քան Բյուզանդական կայսրությունը։

Հինգերորդ դարում, ճիշտ է, Արտաշատը և ապա Դվինը պարսկաբյուզանդական տարանցիկ. առևտրի կենտրոններն են եղել, բայց այդ փաստը չպետք է, իհարկե, գերազնահատել և կարծել, որ Հայաստանում, մանավանդ, նրա ծայրագավառներում, բնական տնտեսությունը կարող էր ստացած լինել դրամական բնույթ։ Իմ կարծիքով, խնդրական ու վիճելի է նույնիսկ, թե արդյոք, հիմնը-վելով Տաբարիի վկայության վրա, կարելի է հաստատ կերպով պնդել, որ Պարսկական Հայաստանի հողային բնական հարկերը դրամականի էին վերածվել հոսսրով նուշիրվանի ժամանակ (531—

⁴ Միքայել փաշա Փորթուզյանը «Նդիշէի վարդապետի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» 1903 թվի իր հրատարակության բացատրական ծանոթություններում Դենշապուհի աշխարհագրին տվել է հետևյալ լուսարանությունը. «Պարսիկք,—ասում է նա,—տասանորդաց մեծամեծ անպատեհությունները տեսած էին, բայց որովհետև դժուարին է կարգէ դուրս նոցա տուած հասույթը մէկէն ի մէկ անշարժ սակի մը վերածել, առաջին փորձը Հայաստան փորձել ուզեցին՝ իբրեւ մնացեալ նահանգներն ավելի բարդավաճ և հարուստ երկիր» (Վենետիկ, 1903, ծանոթ. էջ 216)։ Ուրեմն՝ Փորթուզյանը ևս Պարսկահայաստանի հողային հարկը դրամական է ընդունում հիշյալ աշխարհագրից հետո։ Իմ կարծիքով, աշխարհագրի բովանդակության այս բռնաձիգ մեկնությունը ծայրե ի ծայր վիճելի ու կամայական է, որովհետև հիմնված չէ պատմական փաստերի վրա։

⁵ S⁶ս Ю. Л. Кулаковский, История Византии, I, 1913. էջ 524.

579 թ.): Եթե անգամ այդ հավանական համարվի, դժվար է, իմ կարծիքով, պնդել, որ հարկատվության այդ նոր ձևը պարտադիր ու ընդհանուր է եղել Պարսկական Հայաստանի բոլոր շրջաններում: Ուշագրավ է այս տեսակետից, որ արաբական տիրապետության սկզբնական շրջանում 7-րդ դարի վաթսուեակն թվերին, Աղվանքի հողային հարկերը եղել են բնական և ոչ դրամական:

Այդ մասին Մովսես Կաղանկատվացին, խոսելով Զուանշիր իշխանի ճանապարհորդության մասին Մուավիայի մոտ՝ հաղորդում է հետևյալ կարևոր տեղեկությունը. «Եւ սկսեալ այնուհետեւ (Զուանշիր) զթողութիւն ծանրաբեռն իւրոյ վիճակին խնդրել հարկաց, զոր ախորժելով յանձն էառ թագաւորն հարաւոյ, և հրամայեաց երկակիսեալ զհարկացն լուծ թեթեւացունել յառաջին երրեակ չափուց զմասն մի⁶ (Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս 1913, էջ 227—228): Թեև այս վկայությունը վերաբերվում է Աղվանքին և 7-րդ դարի վաթսուեակն թվերին, բայց կարող է մի ակնարկ համարվել, որ Աղվանքի հարեան շրջաններում ևս հողային հարկը կարող էր այդ բնույթն ունենալ նույն 7-րդ և թերևս նախորդ դարում:

Ինչպես տեսնում ենք, Պարսկական Հայաստանի հողային հարկերի վերաբերյալ այս հատուկ խնդիրն այնքան վիճելի ու այնքան լուրջ է, որ խիստ դժվար է ընդունել Նիկ. Ադոնցի և Մլրքայել Փորթուգալի վերոհիշյալ կանխազուշակ եզրակացությունները. մինչև որ այդ եզրակացությունները չհաստատվեն որևէ հիմնավոր ապացույցներով: Եթե անգամ հողային հարկերի դրամական լինելը հավանական համարվի Պարսկական Հայաստանում խոսքով նուշիրվանի հատուկ կարգադրությունից հետո, որ, իմ կարծիքով, դեռևս վիճելի է, համենայն դեպս, մենք ոչ մի հիմք չունենք այդ հարկերը դրամական ենթադրելու հիմնվորող դարում Հազկերու Բ-ի ժամանակ:

Ներքև մենք կտեսնենք, որ հողային հարկերը հին Հայաստանում անվանվել են, հավանորեն, «հաս», իսկ «բաժա»-ը, որ Նիկ. Ադոնցը հոմանիշ է համարում «հաս»-ի, մատենադրական վկայություններում գործ է ածված, պարզապես, մաքսային հարկերի նշանակությամբ: Արդ՝ եթե ճիշտ են մեր դիտողությունները, Նդիշեի վկայության մեջ հիշատակված «հաս»-ը պետք է ենթադրել իբրև հողային հարկ՝ բնական:

⁶ Այս հատվածի լուսաբանությունը տվել է Թագ. Ավդալբեգյանը Նորբոս լույս տեսած իր ուսումնասիրության մեջ, տե՛ս «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման XVII—XVIII դարերում ու XIX-ի սկզբներում», Նորք Յ 3, Երևան 1923 թ.:

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում կարծում է, որ գլխահարկն այլադղիներին, այսինքն՝ մահմեդականներին վճարվող հատուկ հարկ է, ուստի այդ հարկը քրիստոնյա իշխանները չպետք է պահանջեն հավատացյալներից: Անդատաստան է,— ասում է նա, — իշխանաց հարկել զհաւատացեալս, զոր հարկեն այլազգիք, զի յայլազգեաց հարկ արժան է և ոչ ի նոցունց, որպէս և առնեն Վիրք ընդ ձեռամբ անկեղոցն» (հրատ. Վահան Ժ. վարդ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880, մասն Բ, ա, էջ 317)⁷: Գոշի այս կարծիքը ճիշտ չէ, որովհետև գլխահարկը թե Սասանյան Պարսկաստանում և թե Հռոմեական կայսրության մեջ, ինչպես հայտնի է, սովորական ու հիմնական հարկերից մեկն էր:

Հատկապես, Հռոմեական կայսրության արևելյան հայկական շրջաններում «գլխահարկը» կրել է կամ սովորական անձնական հարկի բնույթ, կամ երբեմն համեմատաբար թեթև է եղել և ունեցել է, մոտավորապես, ծխահարկի նմանություն: Հայտնի է, օրինակ, 386 թվի Թեոդոս Ա-ի հրովարտակը, որը վերաբերվում է Արմենիային ու Կապադովկիային և որի մեջ ասված է, որ «առաջ գլխահարկի նորման որոշված է եղել տղամարդկանց ամեն մեկից և կանանց երկուսից, իսկ այժմ տրվելու է՝ երկու երկու կամ երեք երեք տղամարդ և չարսակաւս կին հաշվելով մեկ գլուխ»⁸:

Քանի որ դրամական այս հարկը գլխահարկի կամ ծխահարկի ձևով գոյություն է ունեցել Սասանյան Պարսկաստանում և Հռոմեական կայսրության մեջ, ինձ հավանական է թվում, որ նույն հարկն այս կամ այն ձևով գոյություն ունեցած պիտի լիներ նաև Արշակունյաց թագավորության ժամանակ: Ներքև, «հաս»-ի մասին խոսելիս, կտեսնենք, որ եկեղեցական ծխահարկը, որ հիշատակված է Սահակի կանոններում, կարող էր թերևս առաջ եկած լինել աշխարհական համապատասխան հարկերի նմանողությամբ: Եթե հաջողվի այդ ավելի որոշ կերպով ապացուցել, այդ դեպքում՝ վերոհիշյալ հարկն Արշակունյաց թագավորության ժամանակ պետք է ենթադրվի որպես երգահարկ և ոչ գլխահարկ: Այս հարևանցի, իհարկե, մի դիտողություն է, որ կարոտ է ավելի լուրջ հիմնավորման:

⁷ Տե՛ս նաև էջ 314՝ «զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն»:

⁸ Տե՛ս Cod. Theod. 1312,2, cum antea per singulos viros, per binas vero mulieres capitulis norma sit consa, nune binis ac ternis virris, mulieribus autem quaternis unius pendendi capitulis adtrib est.

Եթե հողային դրամական հարկերի գոյությունը վիճելի ու անհավանական էր Պարսկաստանում, ինչպես և Մարգպանական Հայաստանում, Հաղկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.), գլխահարկի գոյությունը նույն այս շրջանում կարելի է համարել միանգամայն հաստատու և անտարակուսելի:

Սասանյան Պարսկաստանում, ինչպես տեսանք Տաբարիի վկայությունից, գլխահարկը եղել է գլխավոր հարկերից մեկը ոչ միայն խոսքով նուշիրվանի ժամանակ վեցերորդ դարում, այլև հնագույն շրջանում: Որ Պարսկական Հայաստանում ևս այս հարկը գոյություն է ունեցել խոսքով նուշիրվանից (531—579 թ.) առաջ Հաղկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.)՝ այդ պարզ երևում է, իմ կարծիքով, Եղիշեի վերահիշյալ վկայությունների հետևյալ հատվածներից. 1) «միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ» (Վենետիկ, 1852, էջ 39), 2) «քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ շափ, կրկին առնուին, սոյնպես և եպիսկոպոսաց և երիցանց դնէին ոչ միայն շինաց, այլ և աւերակաց» (նույնը, էջ 40):

Այս վկայություններից կարելի է անել մի քանի կարևոր հետևություններ: Հարկը դրված է եղել, ինչպես տեսնում ենք, միայնակացների, եպիսկոպոսների և քահանաների վրա անձնապես, ուրեմն՝ պարզ է, որ այդ Տաբարիի հիշատակած գլխահարկն է: Երկրորդ՝ կարելի է ենթադրել, որ դրամական այդ հարկը համապատասխան Տաբարիի վկայության ունեցել է ոչ թե ծխահարկի, այլ գլխահարկի բնույթ: Երրորդ՝ աշխարհագիրը, որին ենթարկվել էին միայնակացները, պետք է հասկանալ, անտարակույս, մարդահամարի նշանակությամբ:

Բացի Եղիշեից, գլխահարկի մասին ուշագրավ մի վկայություն կա նաև Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ: Խոսհլով Ադվանքի ժանր դրության մասին խազարների տիրապետության շրջանում՝ 627 թվից հետո, Կաղանկատվացին հաղորդում է հետևյալ հետաքրքիր տեղեկությունը. «Նաև զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր (Շաթ), և զդիտրաքմայսն ըստ սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեանն» («Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս 1913, Բ. գլ. ԺԶ, էջ 190): Այս վկայության մեջ, որը վերաբերվում է, անշուշտ, գլխահարկին, որոշված է այդ հարկի սովորական տարածված չափը, Թ. Նյուդեհկեն Տաբարիի գերմաներեն թարգմանության մեջ հաղորդում է, որ չինացի Հիուենթ-

սանդի (Mem. sur contrées occ. II 179) վկայությամբ՝ Պարսից թագավորության մեջ յուրաքանչյուր ընտանիք վճարել է գլխահարկ մարդագլուխ 4 արծաթ (Tabari, էջ 246, ժան. 2)։ Այս վերջին վկայությունը, ինչպես տեսնում ենք, հաստատվում է նաև Կադանկատվացու վերոհիշյալ տեղեկությամբ։ «Դիտրաքմայան» (հունարեն didrachmon հոգնակի didrachma). ամիսնայն հավանությունով, գործ է ածված նրա մոտ սատերի իմաստով, որի կշիռը համասար էր 4 դրամի⁹, Ընդունելով Սասանյան արծաթ դրամի կշիռը համաձայն Անանիա Շիրակացու հաշիվներին, մոտավորապես, 4 դրամ, նրա դրամական արժեքը հավասար կլինի, մոտավորապես այժմյան 25 կոպեկին¹⁰։

Ուրեմն՝ գլխահարկի սովորական ընդհանուր չափը պետք է լինի Սասանյան Պարսկաստանում մարդագլուխ, մոտավորապես, 1 ուրբլի։ Հարկավոր է, իհարկե, որոշել դրամական այդ գումարի նաև իրական արժեքը, որ Սասանյանների ժամանակ, հավանորեն, ավելի բարձր եղած պիտի լիներ, քան այժմ։ Սակայն այս խնդրի լուսաբանությունը, դժբախտաբար, դեռևս հնարավոր չէ, որովհետև, որքան ինձ հայտնի է, այդ մասին պատմական համապատասխան տվյալներ գրեթե չկան։ Ուշադրության արժանի է այդ տեսակետից, որ Մահմեդի հաջորդ Աբու Բեքրի իշխանության շրջանում (632—634 թ.), ճիշտ այն ժամանակ, որին վերաբերվում է Կադանկատվացու վերոհիշյալ վկայությունը, Արաբիայում մեկ ուշաբար գնահատվել է 10 դրամ¹¹։

⁹ Անանիա Շիրակացու «Յադագա կշռոց և չափոց» զբվածքի երկու ձեռագրում զգալիորեն մասին կա հետևյալ վկայությունը, որից երևում է, որ զգալիորեն մասին հաճախ հավասար է համարվել սատերին զբաքենն Բ. զբաժանելու է. դիտրաքմայն Դ. դրամակշիռ է. դիտրաքմայն և սատերն մի է» (տե՛ս Անանիայի Շիրակունույ, Մնացորդ բանից, Ս. Գետ., 1877, էջ 33), չմասն նաև Յ. վարդ. Ալիքբյանի, Բացատրություն չափոց և կշռոց նախնաց. Վենետիկ, 1821, էջ 77—78

¹⁰ Տե՛ս «Յադագա կշռոց և չափոց», էջ 28—29՝ «զբամ լրստ պարսկահան լեղուն անուանեցաւ և յարծաթոջ տպաւորեցաւ, որ է 2 մասն լւտեր»։ Այս հաշիվով նրա կշիռը յոթերորդ դարում պետք է ընդունել մոտավորապես 4 դրամ, Այդ. Կրեմերը իր Culturgeschichte des Orients unter den Challen Wien 1875 թ. աշխատության մեջ Սասանյան դրամի կշիռն ընդունում է 3.9 դրամ (էջ 60)։ Տը. Շպիդելի մոտ սասանյան դրամի արժեքը որոշված է 65—70 սանտիմ (Eranische Alterthumskunde, B. III, Leipzig, 1878 էջ 633), իսկ Թ. Նյուլդեկեյի Թարգմանության մեջ՝ 70 պֆեննինգ կամ 86 սանտիմ (Tabari, էջ 245, 355)։ Թ. Նյուլդեկեյի հաշիվը տարբեր է, որովհետև նա սասանյան դրամի կշիռը համարել է մեկ մոխայ։

¹¹ Տե՛ս A. Cremer, Culturgeschichte, Wien, 1875, էջ 52.

Ալֆ. Կրեմերը դրամի արժեքը խալիֆաթի ժազման շրջանում ենթադրում է, մոտավորապես, 1 ֆրանկ (Gulsurgeschichte, էջ 15) և ոչխարի գինը ընդունում 10 ֆրանկ (էջ 52): Դրամի իրական արժողության կարևոր այս փաստը, թեև Սասանյան Պարսկաստանի համար վճռական որևէ նշանակություն չունի, սակայն, այնուամենայնիվ, ուշագրավ մի աղնարկ է, որ դրամի իրական արժեքը կարող էր հին ժամանակներում ես լինել բավական ցածր և համապատասխան, մոտավորապես, նորագույն ժամանակվա գներին որոշ տեղերում:

Վերոհիշյալ վկայությունների օգնությամբ որոշվում է, իմ կարծիքով, ոչ միայն գլխահարկի գոյությունը Մարզպանական Հայաստանում, այլ նրա հավանական ընդհանուր շափը:

Ներքև մենք կտեսնենք, որ գլխահարկը հին Հայաստանում անվանվել է, հավանորեն, «սակ», ինչպես այդ ճիշտ գուշակել է Նիկ. Ադոնցը: Հավանական է, ուրեմն որ Նդիշի վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված են Սասանյան Պարսկաստանի հիմնական հարկերը՝ հողայինը և գլխահարկը. առաջինը, ըստ երևույթին, անվանված է նրա մոտ «հաս», իսկ երկրորդը՝ «սակ»:

«ՀԱՐԿԻ ԼԵՐԱՆՑ ԵՎ ԴԱՇՏԱՑ ԵՎ ՄԱՅՐԵԱՑ»

Միջայել Փորթուգալը Դենշապուհի աշխարհագրի բնույթը Հագկերտ Բ-ի ժամանակ բացատրում է իբրև մարդահամար և միաժամանակ իբրև ընդհանուր հողաշահություն՝ ոչ միայն մշակվող հողերի, այլև լեռների, դաշտերի, անտառների և նույնիսկ ավերակ տեղերի: Դիտել հարկերը թեթևեղելու կամ ծանրացնելու նկատմամբ, — ասում է նա, — եղած աշխարհագիրը բնական է, որովհետև անձնական տուրք մը կամ գլխահարկ մը հաստատելու համար ազգահամարն անհրաժեշտ է. բայց որովհետև լեռանց, դաշտաց և անտառաց և շինից և աւերակաց վրա այլ և այլ տուրքեր դրուեցան՝ կամ եղածներն ավելցան, պետք է հետևեցնել՝ թէ այդ աշխարհագիրը cadastre մի էր և ոչ պարզ ազգահամար»¹²: Փորթուգալը, ինչպես տեսնում ենք, ենթադրում է, որ Պարսկաստանում Հագկերտ Բ-ի ժամանակ հարկ է դրված եղել բոլոր հողերի վրա՝ մշակվող թե անմշակ, մասնավորապես, նաև բոլոր լեռների վրա:

¹² Տե՛ս «Նդիշի վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Վեհաթիկ, 1903, էջ 215, ծան. 1:

Արդ՝ ճիշտ է արդյոք այդ Հավանական է արդյոք, որ Պարսկական Հայաստանում Հազկերտ Բ-ի ժամանակ հարկ է առնվել ոչ միայն մշակվող, այլև անմշակ հողերից, անգամ ավերակներից: Կարելի՞ է արդյոք Նդիշեի մոտ հիշատակված «Հարկը լերանց և դաշտաց և մայրեաց» հասկանալ վերոհիշյալ իմաստով: Վերջապես՝ որոշ է արդյոք, որ Դենշապուհի աշխարհագիրն ունեցել է, անպայման, ոչ միայն ազգահամարի, այլև ընդհանուր հողաշահության բնույթ:

Քննենք նախ առաջին հարցը: Նդիշեի համապատասխան վկայությունը հետևյալն է՝ «սոյնպէս և եսլիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց» (Վենետիկ, 1852, էջ 40): Այս վկայությունից ոչ մի կերպ չի կարելի հետևեցնել, որ հարկ է դրված եղել ավերակների վրա, ինչպես այդ թուրիմացաբար ենթադրել է Միքայել Փորթուգալը: Ուշ միայն շինաց, այլ և աւերակաց» բառերը պետք է, անտարակույս, իբրև լրացումն կապակցել նախորդ նախադասության հետ: Նդիշեն ուզում է ասել, որ հարկ է պահանջվել անգամ ավերակ տեղերի չքավոր երեցներից: Ավերակներից հարկ առնելը, իմ կարծիքով, այնքան է օտարոտի ու անհավատարի, որ նրա գոյությունը Պարսկական Հայաստանում, նույնիսկ Հազկերտ Բ-ի ժամանակ, պետք է համարել միանգամայն անհավանական:

Ավելի որոշ է Նդիշեի մոտ «լերանց, դաշտաց և մայրեաց» հարկերի հիշատակությունը: Լեռների ու դաշտերի հարկերը, ըստ երկվույթին, պետք է հասկանալ, գլխավորապես, իբրև արոտատեղերի հարկ: Բայց անվիճելի՞ է արդյոք, որ Պարսկական Հայաստանում հատուկ հարկ է դրվել բոլոր լեռների, դաշտերի ու անտառների վրա: Այս խնդիրն այնքան կարևոր է ու լուրջ, որ կարոտ է ուշադիր քննություն:

Ինչպես վերև տեսանք, Տաբարիի վկայության մեջ այս հարկերը չեն հիշված: Արաբական խալիֆայության սկզբնական շրջանում, թեև Սասանյան թագավորության արքունի հարկերը մնացել էին դրեթե նույնը, սակայն այս հարկերը, որքան ինձ հայտնի է, չեն մատնանշված իբրև ընդհանուր ու հիմնական հարկ: Հետաքրքիր են այս հարկերի մասին Միսթար Գոշի հետևյալ վկայությունները: 1) «Արօտի այլ հարկ մի լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին» (Դատաստանագիրք, մասն երկրորդ, Ա, էջ 315), 2) «Բսկ պտուղ ամենայն գտեալ ի մայրիս իւրաքանչիւր սահմանաց նոցա լիցի: Շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կթել պղտղոցն, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն և ըստ

խնդրոյ նոցին կամօք եղիցի: Այսպես և Կայսր ի շինուած, և խոտ յարօտ և ի հնձել, և հող ի վարել» (նույնը, մասն երկրորդ, Ժ, էջ 327): Գոշի այս կանոնները, թվում է ինձ, որ համապատասխան պիտի լինեն այն ընդհանուր ու իրական կարգերին, որ սովորական են եղել նրա ժամանակ: Յ. Կարստն այս կանոնների առթիվ, որ նույնությամբ առաջ են բերված նաև Սմբատի Դատաստանագրքում, հայտնել է այն կարծիքը, որ անտառների, արոտի, ջրի, որսի ու ձկնորսության վերաբերմամբ գերագույն իշխանության ու տնօրինության իրավունքները, որ ֆինանսական գիտության մեջ անվանվում են *regalia* պատկանել են Գոշի ու Սմբատ Գունդստաբլի ժամանակ ոչ թե արքունիքին, այլ ֆեոդալ հողատերերին: Ֆեոդալական այդ *regalia*-ների արտահայտությունն է, նրա կարծիքով, այն ուշագրավ փաստը, որ շինականները կարող էին օգտվել անտառներից, արոտներից և մյուս իրավունքներից իրանց տիրոջ հողերում, բայց այդ սահմաններից դուրս նույն իրավունքների համար վճարելու էին տասանորդ օտար տերերին: Նրա ասելով՝ ինչպես Արևմտյան Եվրոպայում, նույնպես և այստեղ, նախնական արքունի *regalia*-ները թողնվել են հետզհետե հօգուտ ֆեոդալ հողատիրոջ¹³:

Յ. Կարստի այս դիտողությունների մեջ ճիշտ ու անվիճելի կարելի է համարել միայն այն, որ ԺԲ-ը դարձավ անտառները և արոտատեղիները պատկանել են Հայաստանում և Ռուբինյան թագավորության մեջ հողատերերին և գտնվել են նրանց տնօրինության տակ: Իսկ թե դրանք Հայաստանում ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, եղել են արքունի *regalia*-ներ պատմական հնագույն շրջանում, այդ հարկավոր է, անշուշտ, ապացուցել դրական որևէ փաստերով:

Արդ՝ կարելի չէ՝ արդյոք Եղիշեի վերահիշյալ վկայության մեջ լսելու և դաշտաց և մայրեաց հարկերի հիշատակությունը հավանական մի ապացույց համարել, որ արոտատեղիները և անտառները եղել են Մարզպանական Հայաստանում արքունի *regalia*:

Ծթե ի նկատի ունենալով, որ նախարարությունները շատ ավելի զորեղ են եղել Հայաստանում, քան ֆեոդալական ուրիշ երկրներում, որ նրանք ունեցել են ընդարձակ ու բացառիկ տիրական իրավունքներ, ինձ թվում է, ղժվար ու անհավանական կլինի ենթադրել, որ նախարարապատկան շրջաններում Արշակունյաց կամ Սասանյանների ժամանակ անտառները և արոտատեղիները կարող էին լինել

¹³ Josef Karst, Sempadische: Kodex. Strassburg, 1905. Bd. II, էջ 27.

թագավորական հատուկ regalia: Եղիշեի վկայությունը վերաբերվում է, իմ կարծիքով, միայն այն լեռներին, դաշտերին և անտառներին, որոնք «բնիկ սեփական կալուած» էին Արշակունի թագավորների և նրանց անկումից հետո պետական սեփականություն էին դառել Սասանյան Պարսկաստանի: «Հարկը լեռանց և դաշտաց և մայրեաց» հնարավոր է, ուրեմն, հասկանալ նաև նեղ իմաստով, իբրև արքունական կալվածքների հարկեր: Եթե այս լուսաբանությունն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ արքունի այդ հարկերը կլինին ոչ թե միջնադարյան regalia՝ հատուկ մենաշնորհ թագավորական դերագույն իշխանության, այլ հողատիրական սովորական մի եկամուտ:

Հայտնի է արդեն, որ մարզպանության շրջանում թագավորական են համարվել, իբրև regalia Հայաստանի ոսկու հանքերը, որ գտնվում էին Փարանդիոնում¹⁴, Կարող էին լինել և ուրիշ regalia-ներ, որոնց մասին վկայություններ չեն պահպանվել: Բայց ենթադրել, որ թագավորական իշխանությունն ունեցել է Հայաստանում մենաշնորհի գերագույն իրավունքներ բոլոր արոտատեղերի, անտառների, ջրի, որսի ու ձկնորսության վերաբերմամբ, այդ, իմ կարծիքով, անհավատարի է ու միանգամայն անհավանական:

Միքայել Փորթուգալը, ինչպես վերև տեսանք, Դենշապուհի աշխարհագիրը համարում է ոչ միայն «ազգահամար», այլ նաև ընդհանուր հողաչափություն՝ cadastre: Նրա ասելով՝ քանի որ «հերանց, դաշտաց և անտառաց և շինից և աւերակաց վրա» տուրքեր են դրել կամ եղած տուրքերն ավելացրել, կարելի է դրանից հետևցնել, որ աշխարհագիրն ունեցել է cadastre-ի բնույթ: Վերև մենք բացատրեցինք, որ Եղիշեի մոտ հիշատակված են ոչ թե ռենաց և աւերակաց՝ հարկերը, այլ «շինաց և աւերակաց» երեցների հարկերը: Նմանապես՝ «Հարկը լեռանց, դաշտաց և անտառաց» վերաբերվում են հավանորեն, ոչ թե ամբողջ երկրին, այլ արքունի միայն կալվածքներին: Վիճելի են, ուրեմն, Փորթուգալի պատճառաբանության հենց հիմնական նախադրյալները:

Մեկախ նույնիսկ փաստական այս առարկություններից, ինչ թվում է, դժվար է, ընդհանրապես, ենթադրել, որ Դենշապուհի աշխարհագրի ժամանակ կարող էին չափված լինել Պարսկական Հայաստանի բոլոր լեռները, դաշտերը, անտառները և անգամ ամայի

¹⁴ Տե՛ս A. Christensen, L'empire des Sassanides, Kobenhavn 1907, էջ 38, նաև Procopli, Bellum Persioun, I, 15

ու ավերակ տեղերը, ինչ վերաբերում է մշակվող հողերին, սրանց հողաշահությունը ևս ինձ անհավանական է թվում, որովհետև, ինչպես վերև ենթադրեցինք, հողային հարկերը այս դարաշրջանում հղել են, հավանորեն բնական և ոչ դրամական: Ընդհանուր հողաշահությունն անհրաժեշտ պիտի լիներ, բնականաբար, Կավատի (488—531 թ.) և Խոսրով Նուշիրվանի (531—579 թ.) ժամանակ, որովհետև հողային բնական հարկերը վերածվել էին դրամականի, որը վճարվելու էր հողի տարածության յուրաքանչյուր 1 garib միավորից, սակայն վեցերորդ դարից առաջ, քանի որ նույն հարկերը բերքից էին տրվում, ընդհանուր հողաշահությունը, իմ կարծիքով միանգամայն ավելորդ էր ու անիմաստ: Դենշապուհի աշխարհագիրը, այս դիտողությունների համաձայն, հավանական է ենթադրել, գլխավորապես, իբրև ընդհանուր մարդահամար: Եթե անգամ հնարավոր համարվի, որ այս աշխարհագրի ընթացքում կարող էին որոշ չափով հաշվի առնել արքունական, նախարարական և մյուս հողերն ու կալվածքները, այդ հաշվառումը դժվար թե նման լիներ այն հատուկ cadastre-ին, որ անհրաժեշտ էր համարվել վեցերորդ դարում:

ՀԱՐԿԱՆՈՒՄՈՒՄՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԸ

Հարկահավաքման կազմակերպության մասին Տարարին տալիս է հետևյալ կարևոր տեղեկությունը: Նրա ասելով՝ աշխարհագիրը վերջանալուց հետո՝ Խոսրով Նուշիրվանը կարգադրում է հարկերի դուլքների ցուցակներից մեկական օրինակ ուղարկել հարկահան պաշտոնյաներին, նաև մեկական օրինակ՝ շրջանների դատավորներին: Այս վերջիններին նա հրամայում է արգիլել վարչական պաշտոնյաներին, որ նրանք չպահանջեն ավելի հարկ, քան որոշված է ցուցակներում¹⁵:

Այս վկայությունից պարզ երևում է, որ Խոսրով Նուշիրվանի ժամանակ հարկերը չեն տրվել կապալով, ինչպես այդ ընդունված էր երբեմն պատմական հին ժամանակներում, այլ գանձվել են վարչական կարգով և հատուկ պաշտոնյաների միջոցով:

Հայկական աղբյուրների վկայություններից ևս կարելի է, իմ կարծիքով, հետևել, որ Հայաստանի հարկերի հավաքումը հանձ-

¹⁵ Th. Noeldeke, Tabari, էջ 247.

ներված է եղել մարզպանության շրջանում, հավանորեն, նաև Արշակունյաց ժամանակ, ոչ թե կապալառուների, այլ կառավարչական հատուկ պաշտոնյաների, որ անվանվում էին «գործակալ»-ներ: Այդ դժվար չէ եղրակացնել, օրինակ, հետևյալ վկայություններից 1) Ղադար Փարպեցի, Պատմություն Հայոց, Բ, գլ. ԽԾ, էջ 83 (Տփլիս, 1904)՝ «Եւ հարկբս ամենայն աշխարհիս Հայոց առ իս են, և գործակալք ամենայն յիմում ձեռին են, և այլևս բազում կարասի, զոր ի պարսիկ գործակալացն հանի՝ որ աստ ի Հայս էին, և յիմում գանձի կայ»։ 2) Կանոնք Յովհաննու Մանդակունույ Գ. Գ, էջ 90 (հրատ. Ա. Ղևոնդյանի)՝ «Եթե ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթեսցին, կամ իշխանութեամբ իշխանաց վարեսցին՝ հարկապահանջս լինելով և յոստիկանս կարգել աշխարհական գործոց, ասէ գիրն, առ ոսոս վաւեր ողջա»։

Թե Արշակունեաց և թե մարզպանության շրջանում հարկային գործի վարչական դերագույն իշխանությունը, իբրև հատուկ «գործակալութիւն», անվանվել է Հայաստանում «հազարապետութիւն»։ «Հազարապետ»-ը վարել է ոչ միայն հարկահավաքման գործը, այլև պարտավոր է եղել աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսության զարգացմանը։ «Հազարապետութիւն» այս վերջին պարտականությունները, անշուշտ սերտ կապված էին հարկահանության գործի հետ։ Հողի մշակությունը, ոռոգման գործը և, ընդհանրապես, երկրի շեն վիճակը նշանակություն ունեին, իբրև հիմք և աղբյուր պետական բարեկեցության և պետական եկամուտների, «Հազարապետ»-ի աշխարհախնամ գործունեության կարևոր այս կողմը շեշտված է, հատկապես, Փավստոսի պատմության հետևյալ հատվածում. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն՝ աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշեն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց հազարապետն ամենայն երկրին» (Վենետիկ, 1832, էջ 67)։ Իսկ նույն պաշտոնի ֆինանսական բնույթը կարելի է ենթադրել նոր Կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ «Հազարապետ» բառը համապատասխանում է հաճախ հունարեն *voikonomos* («տնօրեն, տնտես») բառին (Ա. Պետ. Դ, 10, Ա. Կորնթ Դ, 1 և 2)։ Թովմա Արծրունու պատմության մեջ «հազարապետ» բառը գործ է ածված իբրև տեսուչ և վերակացու արքունի հարկերի։ «Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս,— ասում է Թովման,— և Մուսեի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդգնմ ձկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց Մովսիսի կռեցեալ

ամիրայ Ալայ անուն» (Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, Դպր. Բ, գլ. Զ. էջ 111): Իբրեւ պարսկական Հայաստանի «հազարապետ»-ներ հիշված են Կորյունի և Ղազար Փարպեցու մոտ՝ Վահան Ամատունին Հազկերտ Բ-ի քաղաքական վերանորոգումներից առաջ և պարսիկ Վեհվեհնամը Ատրվշնասպի մարշալանության շրջանում¹⁶:

Սասանյան պետության մեջ հարկերի վերաբերյալ բոլոր գործերը և գրագրութիւնները կենտրոնացած են եղել «դիւան»-ներում: Պարսկական Հայաստանի «դիւանը»-ը գտնվել է Դվին քաղաքում՝ մարզպանության վարչական կենտրոնում: Այդ «դիւան»-ին ենթակա են եղել բոլոր շրջանների գործերը: Հայտնի է սակայն, որ 572 թվի նախարարական ապստամբութիւնից առաջ Սյունիքը միացրել էին Ատրպատականի «շահրմար»-ին և նրա գործերի «դիւան»-ը փոխադրել էին Դվինից Փայտակարան քաղաքը: Այդ անջատման մասին Սեբեոս պատմադիրը հաղորդում է հետևյալը. «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց»՝ անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի իռսորվայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դրնայ ի Փայտակարան քաղաք, և կարդեսցէ զքաղաքն ի շահրմար¹⁷ Ատրպատականի. զի մի ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն» (պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Պետերբուրգ 1879, գլ. Ա, էջ 26): Լինելով վարչական կենտրոն Պարսկական Հայաստանի, Դվինը միևնույն ժամանակ պարսկահռոմեական դաշինքների համաձայն ճանաչված է եղել իբրեւ միջազգային առևտրի գլխավոր վայրերից մեկը: Յուստինյանի օրենսգրքից հայտնի է, որ, հավանորեն, 387 թվի դաշնադրությամբ, ուրեմն՝ Հայաստանի բաժանումից հետո՝ որոշված են եղել

16 Տե՛ս Կորիւն, Պատմութիւն վարուց և մահվան սրբոյն. Մեսրոպայ վարդապետի, Վենետիկ, 1804, էջ 44 և Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1904, Գ. գլ. 44, էջ 118:

17 «Շահրմար» բառը Բ. Պատկանյանի հրատարակության մեջ տպված է մեծատառ, սակայն այդ բառը հաւանաբար անուն է և ոչ հատուկ, նույն բառը, իբրեւ փոխառութիւն պարսկերենից, գործածական է եղել նաև հայերենում, բայց լինելով հնագույն շրջանի փոխառութիւն՝ արտասանվել է «աշխարհամարա»։ «Շահրմարա»-ի ուղիղ նշանակութիւնը՝ իբրեւ «աշխարհագիր»՝ մատնացույց են արել Յ. Մարկ-վարտը և Ն. Աղոնցը, տե՛ս Eranchahr Berlin 1901, էջ 122 և «Армения в эпоху Юстиниана», էջ 220—221: Սյունիքը և Փայտակարանը, միացված լինելով Ատրպատականի «շահրմար»-ին, վարչական տեսակետից ենթակա են եղել, հավանորեն, Ատրպատականի գլխավոր կենտրոնին:

առևտրական հարաբերության ու փոխանակության համար երեք հատուկ վայր՝ հոռմեական Կալլինիկոնը, պարսկական Մծբինը, նաև Պարսկական Հայաստանում նախ Արտաշատը, իսկ հետո Դվինը¹⁸, Իբրն միակ վայր, ուր թույլ էր տրված առևտուր անել երկու կողմի վաճառականներին, Դվինը, բնականաբար, ստացած պիտի լինեի միջազգային կենտրոնի բնույթով Պրոկոպիոսի վկայությամբ՝ առևտրականներն ապրում էին այստեղ բազմամարդ դյուղերում՝ որ դտնվում էին իրար մոտ։ «Հնդկաստանից, հարևան Վրաստանից, Պարսկաստանի գրեթե բոլոր ժողովուրդներից, նաև հոռմեական որոշ մասերից, — ասում է Պրոկոպիոսը, — բերում էին Դվին ապրանքներ և այստեղ վաճառում» (Պրոկոպիոս, de Bello Persico, II 25)։ Դվինը, որպես ապրանքների մթերանոց և առևտրական փոխանակության որոշված վայր, եղել է, անշուշտ, Սասանյան Պարսկաստանի գլխավոր մաքսային կենտրոններից մեկը։ Կ. Գյուտերբրոկը, ուշադրության առնելով, որ Մենանդրի պատմության մեջ առևտրական հաղորդակցության այս վայրերն անվանվում են dekateutêria dekateutêrion (= տասնորդական) հունարեն բառից հետևեցնում է, որ «երկու պետութեանց համար ալ որոշված էր ներմուծության մաքսը վաճառքին արժեքին տասը առ հարյուրը» (տե՛ս ՀԱ, 1910, հունվար, էջ 16)։ Վ. Հայտը և իր Geschichte des Levantehandels աշխատության մեջ, խոսելով բյուզանդական առևտրի մասին իաշակրաց արշավանքներից առաջ, կարծում է, որ արտահանության մաքսը եղել է Բյուզանդիայում, ընդհանրապես, 10 տոկոս արժեքից։ Այդ «տասնորդ»-ից են ծագում, նրա կարծիքով, մաքսավորների dekatêlogoi և մաքսային վայրերի dekateutêria անունները¹⁹։ Այս ընդհանուր ենթադրությունները, որ հիմնված են բառաքնական դիտողությունների վրա, թեև ուշադրավ են ու հետաքրքիր, սակայն, իմ կարծիքով, չեն կարող հաստատուն ու անվիճելի մի ապացույց համարվել, որ մաքսային հարկերը մնացել էին շարունակ նույնը պարսկա-բյուզանդական հարաբերությունների տարբեր շրջաններում։ Ինձ թվում է՝ Սասանյան Պարսկաստանի նկատմամբ այս խնդիրը կարոտ է դեռ լուսաբանության ավելի որոշ ու համոզիչ փաստերով։

¹⁸ Just 4,63 Պարսկա-բյուզանդական առևտրի ու հաղորդակցության կարևոր այս խնդիրը քննության է առնված Կ. Գյուտերբրոկի Բյուզանդիոն և Պարսկաստանն ուսումնասիրության մեջ. տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1910, հունվար, էջ 14—17։

¹⁹ Տե՛ս Վ. Հայտի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը՝ հատ. 1, էջ 56, ծանոթ. 1։ Histoire du commerce du Levant, Leipzig 1923։

Վերջացնելով ընդհանուր այս տեսությունը Հայաստանի արքունի հարկերի մասին մարդպանության շրջանում, կարևոր եմ համարում նաև քննության առնել և լուսաբանել մատենագրական աղբյուրների մեջ հիշատակված այն բոլոր հարկերի նշանակությունը և բովանդակությունը, որ վերաբերվում են պատմական հնագույն այս շրջանին: Այս հատուկ ուսումնասիրությունն ավելի քան անհրաժեշտ էր, որովհետև, ինչպես կտեսնենք, հարկերի նշանակությունը սխալ է մեկնվել հաճախ նորագույն իսկ գիտական աշխատություններում: Հիմնական իմ նպատակն է պարզել առայժմ, ըստ կարելիության, արքունի հարկերի անունները Մարդպանական Հայաստանում, ուստի հարկերի խնդիրը քննության է առնված այստեղ միայն այն շահով, ինչ շահով որ այդ կարևոր էր ու անհրաժեշտ այդ հատուկ նպատակի համար:

«Բ Ա Ժ»

Հայկական «բաժ» հարկը, ինչպես տեսանք, Ն. Ադոնցը համարում է հողային հարկ: Հ. Մուսայելյանն «Անդրկովկասի հողային պայմաններն» իր աշխատության մեջ (Վաղարշապատ, 1910) առաջ է բերում Ն. Ադոնցի այս կարծիքը և ենթադրում է նույնպես, որ «բաժը պետք է հողային հարկը եղած լինի, իսկ սակը՝ դիւխահարկ» (էջ 16):

Ն. Ադոնցից դեռ շատ առաջ պրոֆ. Հ. Հյուբշմանն իր Armenische Grammatik գրքում հայկական «բաժ»-ը թարգմանել է գերմ. Zoll, այսինքն՝ մաքս, և ենթադրել, որ «բաժ»-ը փոխառություն է պարթևերենից (էջ 114): Հայկազյան լեզվի նոր բառգրքի աշխատակիցները «բաժ»-ը մեկնել են, իբրև «մաքս վաճառելի իրաց»: Միքայել փաշա Փորթուգալը «Նիդիշի վարդապետի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» հայտնի իր աշխատության մեջ «բաժ»-ը հասկացել է նույնպես, իբրև «փոխադրության տուրք» (էջ 218, ժան. 1):

Նորերս լույս էր տեսել պրոֆ. Նիդազարովի աշխատությունը Исследования по истории армянского права публичного и частного, որի մեջ հեղինակը, հիմնվելով Շիրակի ու Անի քաղաքի 11—13-րդ դարերի արձանագրությունների վրա, փորձ է արել լուսաբանել «բաժ» հարկի նշանակությունը, բայց, ինչպես կտեսնենք, այդ փորձն ավելի քան անհաջող է:

ի նկատի առնելով մատենագրական աղբյուրների վկայությունները, ինչպես և արձանագրությունները, իմ կարծիքով, կարելի է հաստատապես պնդել, որ «բաժ»-ը ոչ հողային հարկ է, ոչ էլ գրեթե հաշարկ, այլ գործ է ածված, գրեթե միշտ, մաքսային հարկի նշանակությամբ:

Հայկական «բաժ»-ի իսկական իմաստը պարզելու համար կարևոր եմ համարում առաջ բերել այդ հարկի վերաբերյալ բոլոր կարևոր վկայությունները, որ կարողացել եմ առայժմ հավաքել:

1. И. А. Орбели. Вопросы и решения вардапета Анании Ширакского, Петрогр., 1918, էջ 21—22. «Այլ մի վաճառական էանց ընդ երիցս քաղաքս և բաժ արարին յառաջնումս և հանին զկէս և զերևոր իրացն. և յերկրորդ քաղաքին թուեցան զոր ինչ ունէրն և հանին զկէս և զերևորն... և մինչ ի տուն եկն, մնացեալ էին դահեկանք մետասան: Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան ունենր»²⁰:

2. Կարապետ Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ 1913, էջ 9՝ Արուճ, 987 թ. «Յանուն Աստուծոյ ի թուական ՆՆՋ ես Սմբատ Շահնշահ, որդի Աշոտոյ Շահնշահի, ազատեցի վասն իմ հարն հոգւոյն եւ իմ արեւշատութեան եւ մեղաց թողութեան զշալակաւոր բաժէ շնորհին Աստուծոյն:

3. Վիմական տարեգիր, էջ 27, Անի, 1057—1063 թ.²¹: «Եւ գիտեմք Անեցի, եթէ սայլով, եթէ գրաստով՝ ազատ է: Եւ Անեցի, որ իւրենն մորթելիք գնէ, բաժն ազատ է: Եւ շալակաւոր Անեցի յամէն ցեղ բաժին կէսն ազատ է: Եւ ի կապճին տաին դահեկանին 2 դրամ, այժմ տան Դ, Բ ազատ է: Եւ մսագործի, եթէ պախրէի լինի գլուխ, եթէ ոչխարի, կէսն տա, կէսն ազատ է»:

4. Վիմական տարեգիր, էջ 71՝ Շիրակաւան, 1228 թ. «Թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զշրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն»:

5. Վիմական տարեգիր, էջ 106՝ Անի, 1263 թ. «Բարձաք ի յԱնո իրիցանուս զբաժն, զոր ի սկզբանէ ազատ էր, մեք վերստին այլ

20 Տճ՝ս նաև Գալուստ Տէր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ 1896, էջ 23:

21 Կոստանդին Դուկասի Թագավորության ժամանակվա արձանագրություն է, ուստի փոխանակ 1057—1063 թթ. պետք է լինի՝ 1059—1064 թթ.: Կոստանդին Դուկասի Թագավորության սկիզբը ենթադրվում է այժմ 1059 թվին: Ալփասլանը, ինչպես հայտնի է, նվաճել է Անի քաղաքը 1064 թվին: Արձանագրությունը գրված է, հավանորեն 1059—1064:

հաստատեցաք. չունի ոք իշխանութիւն բաժ ուզելու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապէլոր լինի»։

6. Վիմական տարեգիր, էջ 160՝ Անի, 1320 թ. Վես Սարգիս Միլենց բաժրարս թողի զԱրշուառնո սր Գրիգորոյ դրածն մեծ և զփոքր վասն հանգստեան պատրոնին մերոյ Շահնշահի և աստուածատուր զաւակացն Զաքարիայի ևն»։

7. Վիմական տարեգիր, էջ 221՝ Անի, անթվական. «և զամենայն հարկապահանջութիւն բարձին զմ... զթաղառ, զհեծել, զղսփրչուն, զախսրթամարն եւ զգռնագիրն՝ ի բաժ, ի դաղմս և ի մուսալիպն դարձուցին»։

8. Վիմական տարեգիր, էջ 222՝ Անի, անթվական. «Ըս նուրայտին Քոթիթս իմ ընկերաւքս եկի յԱնի տամղիս վերայ, տեսայ զԱնոյ իրիցանուս զխաղիխին հրամանքն որ ի սկիզբանէ բաժ ու տամղա չէին տվել. ես այլ հաստատեցի իմ ընկերաւքս, որ ոչ բաժ տան ու ոչ տամղայ»։

Վերոհիշյալ բոլոր վկայություններէ մեջ. բացի չորրորդից, «բաժ»-ն ունի, իմ կարծիքով, մաքսային հարկի նշանակութիւն։ Առաջին վկայութիւնն այնքան պարզ է, որ կարող է մեկնութեան։ Երկրորդ վկայութեան մեջ ասված է, որ 987 թվին Սմբատ Շահնշահն ազատել է Արուճում «զշալակատր բաժէ»։ «Բաժ»-ն այս հաստատում ևս ունի, անկասկած, փոխադրութեան տուրքի իմաստ։ Երրորդ վկայութիւնը ևս պարզ է։ Այս արձանագրութիւնից երևում է, որ Կոստանդին Դուկաս կայսրի ժամանակ (1059—1064 թ.), երբ Անի քաղաքը գտնվում էր Բյուզանդական կայսրութեան իշխանութեան տակ, կարգադրված է եղել, որ անեցիներն ազատ հայտարարվեն մաքսային հարկից՝ «բաժ»-ից, եթե նրանք սայլով կամ գրաստով գինի էին բերում քաղաք կամ իրանց համար գնում էին մորթելիք։ Իսկ անեցի շալակավորները շալակաբեռների համար վճարելու էին նախկին «բաժ»-ի կեսը։ Նմանապես և մսագործները պախրեի և ոչխարի համար պետք է տային սովորական պահանջվող հարկի կեսը։ Շալակավորների վերաբերյալ կետին պրոֆ. Ս. Նդիազարովը տալիս է անմիտ ու անհասկանալի մի բացատրութիւն, իբր թե շալակավորը, որ փայտ էր բերում քաղաք, ամեն մի շալակաբեռ փայտի համար վճարելու էր 9 դենար²²։ Արձանագրութեան մեջ շալակավորի մասին այդպիսի անհեթեթ կետ չկա։ Հինգերորդ, վեցերորդ և ութերորդ վկայութիւնները պետք է հասկանալ, իմ կարծիքով, այն

²² Исследования по истории армянского права, էջ 39.

իմաստով, որ Անի քաղաքի հրեցները, ինչպես Արշոյառիճի սբ. Գրիգոր եկեղեցին, ազատ են հայտարարվել «բաժ»-ից, հավանորեն, փոխադրության հարկերից: Պրոֆ. Եղիազարովն «իրիցցանուս զբաժն» մեկնել է, իբրև налог окладной, այսինքն՝ նախորոշված հարկազումար (impôt de répartition), որ պարտավոր էին վճարել հրեցները²³, Այս ենթադրությունը ես համարում եմ միանգամայն սխալ: Окладной налог-ը ուղղակի հարկերի մի տեսակն է, որ դրվար թե գոյություն ունեցած լիներ Հայաստանում հին ժամանակներում: Պետք է ասել, որ պրոֆ. Ս. Եղիազարովն օգտվել է Մ. էմինի «Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего» աշխատությունից (Москва, 1881), որի մեջ հարկերի անունները մեծ մասամբ սխալ են թարգմանված: Վերոհիշյալ սխալ ենթադրություններին հիմք են ծառայել, մասամբ, այս սխալ թարգմանությունները: «Բաժ»-ը օրինակ, փոխանակ «пошлина» կամ «таможенная пошлина»՝ Մ. էմինը թարգմանել է «подать» կամ «налог»:

Յոթերորդ վկայությունը վերաբերվում է հարկային այն հեղաշրջմանը, որ տեղի էր ունեցել թաթարական տիրապետության ժամանակ 14-րդ դարի առաջին կեսում: Այդ մասին կա նաև մի ուրիշ վկայություն Անիում գտնված Աբուսայիդ Բահատուր խանի (1316—1335 թ.) պարսկական արձանագրության մեջ: Երկու վկայությունն էլ շատ կարևոր են Հայաստանի պատմության համար թաթարական շրջանում, բայց այժմ հետաքրքիր են միայն հատկապես «բաժ»-ի նշանակությունը որոշելու համար: Երկու վկայության մեջ էլ հիշատակված է «բաժ» հարկը, որ նշանակում է դարձյալ մաքսային փոխադրության հարկ: Ակադեմիկոս Վ. Բարտոլդը, որ հրատարակել է ու մանրազնին քննության ենթարկել Աբուսայիդի պարսկական արձանագրությունը, շատ ուղիղ լուսաբանել է արդեն «բաժ» հարկի նշանակությունն այդ շրջանում իբրև droits de douane et de transit²⁴, այսինքն՝ մաքսային և փոխադրության հարկ: Պրոֆ. Ս. Եղիազարովը, հիմնվելով դարձյալ Մ. էմինի սխալ թարգմանության վրա, որը «դոնագիրն ի բաժ» թարգմանել է անզգուշաբար подворная подать, իսկ «բաժ»-ը վերոհիշյալ յոթերորդ հատվածում լուսաբանել է՝ իբրև տների վրա դրված հարկ (окладной

²³ Նույնը:

²⁴ Бартольд. Персидская надпись на стене Мануче, С.-Петербург, 1911, էջ 33—34:

НАЛОГ НА ДОМ)²⁵, Այս ենթադրությունը ևս, ինչպես և Հայաստանի հարկերի վերաբերյալ նրա գրեթե բոլոր բացատրությունները, զուրկ են որևէ հիմքից և սխալ ու քմահաճ կռահումներ են:

«Բաժ»-ի նշանակության որոշման խնդրում կասկածների առիթ կարող է տալ միայն վերև առաջ բերված շորորոգ վկայությունը՝ «թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զըսահին բաժն»։ Արձանագրության ընդարձակ բովանդակությունից երևում է, որ 1233 թվին իվանի աթարեկը և նրա կինը խոշակը Շիրակ գյուղն ազատել են «ապուռիշի և զըսահին բաժից»։ Արդ ի՞նչ է նշանակում «ապուռիշի և զըսահին բաժ»։ Մ. էմինն «ապուռիշի և զըսահին» համարել է իր թարգմանության մեջ գյուղերի հատուկ անուններ՝ Апуруш и Джерсах²⁶, Այս սխալ թարգմանությունը հիմք ընդունելով՝ պրոֆ. Ս. Նդիազարովը ևս հանգել է սխալ եզրակացության, իբր թե «բաժ»-ը նշանակում է այստեղ կալվածքների վրա դրված հարկ՝ «окладной налог на имения»²⁷, Հ. Ղևոնդ Ալիշանը «Շիրակի» մեջ «ապուռիշի բաժի» մասին հայտնել է հետևյալ կարծիքը՝ «քանզի ընդ զըսահի յիշի՝ թուի նույնպէս ջրոյ հարկ նշանակել ըստ ասլ (շուր) արաբացի բառի»²⁸, Յ. Կարստը «Դատաստանագիրք Սմբատի» հայտնի իր աշխատության մեջ «ապուռիշի և զըսահին հարկ» թարգմանել է գերմաներեն «Kanal und Schleusenzoll»²⁹, Այս վերջին լուսաբանությունը, թեև չի կարելի համարել հաստատուն ու վերջնական, բայց, համեմատաբար ավելի հավանական է, քան մյուս ենթադրությունները։ Եթե, իրոք, «բաժ» են անվանվել բացի մաքսային հարկից նաև առուներից ու նրանց ջրից օգտվելու համար վճարվող հարկերը, այդ այնքան էլ օտարոտի չպիտի թվա։ Իբրև առուների օգտագործման համար վճարվող տուրք՝ այդ հարկը որոշ չափով համապատասխանում է փոխադրության մաքսային հարկերին, որոնք վճարվում էին, մասամբ, նույնպես իբրև ճանապարհների, կամուրջների, շինությունների օգտագործման փոխարժեք։

Վերահիշյալ բոլոր վկայություններից, ինչպես տեսնում ենք, կարելի է եզրակացնել, որ «բաժ»-ը չի կարող համարվել հողային հարկ, ինչպես այդ ենթադրել է Նիկ. Աղոնցը։

Հ. Հյուբշմանի Armenische Grammatik աշխատության մեջ

²⁵ С. А. Егиазаров, Исследования.

²⁶ Армянские надписи, М., 1881, էջ 51.

²⁷ Исследования по истории армянского права, էջ 39.

²⁸ Շիրակ, Վեներիկ, 1881, էջ 91.

²⁹ J. Karst, Sempadischer Kodex. Strassburg 1905, B. II, էջ 234.

առաջ են բերված պարսկական «բաժ»-ի կամ «բազ»-ի լուսաբանության համար մի քանի վկայություններ պարթևական ու նոր պարսկական գրավոր ազգություններից: Այդ վկայություններից երևում է, որ «բաժ»-ը Պարսկաստանում ևս ունեցել է պարթևական ու նոր շրջանում մաքսային հարկի նշանակություն: 2. Հյուբշմանը մատնացույց է անում bazigraban բառն իսիդոր հարաբանացու մոտ (Bazigraban ho esti thelônion Isidor von Charax), որ նշանակում է «մաքսի գանձում»: Ֆիրգուսիի մոտ ևս «բաջպան, բաժպան», նշանակում է «մաքսապան, մաքսավոր»³⁰: Հայկազյան լեզվի նոր բառգրքի մեջ «բաժապետ» ուղիղ մեկնված է, իրրե «վերակացու բաժից, մաքսապետ»: Նույն նշանակությունն ունեցած պիտի լինի և «բաժարար» բառը, որ հանդիպում է Անիի արձանագրություններից մեկում՝ Վիմ. տարեգիր, էջ 160՝ Անի, 1320 թ. «Եւ Սարգիս Միլինց բաժարար թողի զԼիջուառճո սբ Գրիգորո զբաժն մեծ և զփոքը»:

Ավելորդ չի լինի այստեղ հիշել, որ Ռուբինյանց թագավորության շրջանում ևս «բաժ»-ն ունեցել է դարձյալ մաքսային հարկի նշանակություն: Սմբատի Դատաստանագրքի ձժԲ կանոնում «բաժ»-ի մասին կա հետևյալ վկայությունը. «Եւ ուր վաճառ լինի նա զկապալն առնուլ պատեհ է, և զբաժն. բայց ուր ծախ չլինի նա չէ իրաւունք բաժ առնուլ» (տես Karst, Bd. I, էջ 163): Այս կանոնը համապատասխանում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձԻԳ կանոնին, ուր «բաժ»-ի փոխարեն գործ էածված «մաքս», «իսկ զմաքսն առնուլ իրաւապէս յորժամ ի քաղաքս կամ ի դաւառս եկեալ վաճառիցեն: Այլ մի լիցի յանցս ճանապարհաց մաքսել եթէ ոչ վաճառիցեն» (F. Karst, B. I, 163 Մխիթար Գոշ, էջ 435): Նույն նշանակությամբ «բաժ»-ը հանդիպում է նաև «Գանձարան հայկական հրովարտակաց» հրատարակության մեջ (էջ 154), ուր հանդիպում է նաև հաճախ «բաժտուն», «բայժտուն» բառը (էջ 156, 173, 179, 185), որ նշանակում է պարզապես մաքսատուն³¹:

Բացի մի շարք սխալ լուսաբանություններից «բաժ» հարկի նշանակության մասին, որ վերև մատնանշեցինք, պրոֆ. Ս. Նղիազարովը, ընդունելով որ Կոստանդին Դուկասի ժամանակվա արձանագրության մեջ (1059—1064) «բաժ»-ն անուղղակի հարկի բնույթ ունի, անզգուշաբար նույնացրել է այդ հարկը միջնադարյան Եվրոպայի octroi հարկի հետ: Այդ համեմատությունը ևս, իմ կարծիքով,

³⁰ Armenische Grammatik, էջ 116.

³¹ St^h Langlois, V. Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise, 1863.

սխալ է: Octroi-ն, ճիշտ է, մաքսային հարկ էր, որ վճարում էին ապրանքների փոխադրության համար, բայց այդ հարկը ստանում էր ոչ թե պետությունը, այլ քաղաքները, որոնք պետությունից ստացել էին հատուկ արտոնություն այդ հարկը գանձելու իրանց օգտին: Սակայն մատենագրական աղբյուրներում կամ արձանագրություններում և ոչ մի վկայություն ու ակնարկ անգամ չկա, որ Հայաստանի քաղաքները՝ Դվինը, Անին կամ մյուսները՝ արտոնություն ստացած լինեին «բաժ»-ը գանձելու իբրև մունիցիպալ հարկ իրենց օգտին: Ավելի ուշիդ կլինի, իմ կարծիքով, «բաժ» հարկը համապատասխան ու նման համարել Հռոմեական ու Բյուզանդական կայսրության մեջ գոյություն ունեցող հարկին, որը լինելով փոխադրության մաքսային հարկ, ստացվում էր, գլխավորապես, պետության օգտին³²:

Թեև «բաժ» հարկը հիշատակված է, գլխավորապես, 10—14-րդ դարերի արձանագրություններում, բայց, նա, անտարակույս, Հայաստանի հնագույն հարկերից մեկն է:

7-րդ դարումն իսկ, ինչպես վերև տեսանք Անանիա Շիրակացու պարզ ու որոշ վկայությունից, «բաժ»-ն այն հարկն էր, որ վճարում էր քաղաքներում վաճառականը: Այս վերջին վկայությունը կարող է, իմ կարծիքով, հավաստի մի ապացույց համարվել, որ «բաժ»-ը մարզպանության շրջանում ևս ունեցել է փոխադրության մաքսային հարկի նշանակություն: Իսկ եթե այդ այդպես

³² Portorium հարկը, ինչպես հայտնի է, ապրանքներից պահանջվող մաքսային հարկ էր, որ գանձվում էր մաքսային որոշ կենտրոնավայրերում պետության օգտին: Պարսկա-բյուզանդական դաշնագրերի համաձայն, ինչպես վերև տեսանք, «բաժ»-ի գանձման համար մաքսային այսպիսի կենտրոններ էին՝ Կալինիկոնը, Մաբինը և Դվինը: Portorium հարկից պետք է տարբերել միջնադարյան *pedalicum* (= ֆրնս. *peage*) և *passagium* հարկերը, որ մարդկանց, անասունների և ապրանքների անցուղային համար պահանջվում էին զանազան տեղերում, օրինակ, ճանապարհների, գետերի ու կամուրջների մոտ: Կիլիկյան շրջանում *passagium* հարկն անվանվել է, ըստ երևույթին, լատիներա. տե՛ս Գրանձարան հայկական հրովարտական, էջ 167՝ «Ըն յապուր որ տան ընդ Այաս ու ընդ Կուկլակ, նայ այսպես լիննայ, որ տան ի պրիսիմ և յըզտայրեան նոր դրամ քան ու հինդ: Միքայել փայա Փորթուգալը շեղիշէի վարդապետի վասն վարդաշայ և հայոց պատերազմին» իր աշխատության մեջ (էջ 218, ծան.) Մարզպանական Հայաստանի «բաժ»-ը համապատասխան է համարում ֆրնս. *peage*-ին: Այդ ենթադրությունը, ինչպես տեսնում ենք, վիճելի է մինչև որ չապացուցվի մատենագրական փաստական վկայություններով:

է, ուրեմն, և Նդիշեի վերահիշյալ վկայութիւն մեջ «բաժ»-ը պետք է ունենա ոչ թե հողային, այլ մաքսային հարկի իմաստ:

Քանի որ «բաժ»-ը, ինչպես ցույց է տվել պրոֆ. Հ. Հյուբշմանը, հայերենում փոխառութիւն է պարթևերենից և պարթևերենում ունեցել է նույնպես մաքսային հարկի նշանակութիւն, անհավանական չի լինի ենթադրել, որ այդ հարկը գոյութիւն ունեցած պիտի լիներ Հայաստանում նաև Արշակունյաց թագավորութեան ժամանակ, իբրև մաքսային հարկ:

«Մ ՈՒՏ»

Մատենագրական վկայութիւններից, որ վերաբերում են համեմատաբար հնագույն դարերին, կարելի է եզրակացնել, որ «մուտ»-ն ունեցել է հաճախ ոչ թե հատուկ որևէ հարկի նշանակութիւն, այլ գործ է ածվել այժմյան եկամուտի իմաստով:

Այդ նշանակութեամբ «մուտ»-ը գործ է ածվել, օրինակ, Ասորական Դատաստանագրքում 1. «Եթե՞ գրաւ դնէ որ զիւր հողն այլում և լինի ի մէջ նոցին պայման, որ զմուտս հողոյն առնու պարտաւէրն փոխարէն վաշխին, և փոխառուն պարտի միայն զպարտսն տալ» (հրատ. Արսեն վարդապետ Ղլտէյանցի, էջմիածին, 1917, էջ 51), 2. «Ապա թէ՛ դնէ գրաւական հօտս խաշանց և լինի պայման ի մէջ, թէ՛ մուտքն, որ լինի յոշխարացն, փոխարէն վաշխիցն է ևն» (նույնը, էջ 51), 3. «Եւ հաշիւն զմուտ տարեացն, զոր կալաւ, զվաշխիւն, թէ՛ լինի աւել՝ ինքն դարձուցանէ յորբերն և թէ պակասի լմնցընեն յորբերն» (նույնը, էջ 55): Բոլոր այս հատվածներում «մուտ»-ը, անկասկած, ունի եկամուտի նշանակութիւն:

Հայկազյան բառգրքում «մուտ»-ը հասկացված է հենց այդ իմաստով և մեկնված է՝ իբրև հուն. prosodos լատին. proventus, reditus, այսինքն՝ եկամուտ:

Ուշադրութեան արժանի է, որ Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանութեան մեջ, ինչպես երևում է Համաբարբառից³³, ոչ մի անգամ չէ գործածվել «մուտ» բառը հարկի նշանակութեամբ, թեև բուն բնագրի մեջ հիշատակված են եղել հաճախ զանազան տեսակի անուններ: Հայկական արձանագրութիւններում ևս «մուտ»-ը, որքան ինձ հայտնի է, բնավ չի հիշված որպես հարկի անուն:

Խորենացու պատմութեան մեջ «մուտ»-ը հանդիպում է հետև-

33 Ք. վարդ. Աստվածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Ծրուադէմ, 1895:

յալ հատվածներում. 1. «Եւ քանզի բազում ունէր ուստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զղէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց կարգելոց յարքունուստ» (Տփղիս, 1913, էջ 118, Բ, գլ. Ը.) 2. «Իսկ Արտաշէրի գեղեցկապէս յարգարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ռոճկօք, որպես և էինն» (Նույնը, էջ 216, Բ, գլ. 2է): Մկրտիչ էմինը «հանդերձ յաւելուածով մտից առանձինն» և «մտիւք» թարգմանել է ռուսերեն՝ «с приисовокуплением особого дохода» և «с назначением дохода» (էջ 61, 112), իսկ հորին ծ. վարդ. Ստեփանեն թարգմանել է աշխարհաբար՝ «ավելացնելով առանձին եկամուտ» և «եկամուտով» (էջ 101, 199): Ինձ ևս հավանական է թվում, որ «մուտ» բառը վերոհիշյալ հատվածներում ունի ոչ թե հատուկ որևէ հարկի իմաստ, այլ նշանակում է, ընդհանրապես, եկամուտ:

Ինչպես հայտնի է, կանոնագրքերում «մուտ»-ը և «պտուղ»-ը հիշատակված են հաճախ այն եկամուտների համար, որ ժողովրդականներից ստանում էր եկեղեցին: Տե՛ս, օրինակ, Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս 1914՝ «Կանոնք Սահակայ» էջ 22, 55, 56. «Կանոնք Ներսիսի Կաթողիկոսի և Ներշապէոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», էջ 107, 108, 109, 111 (Ա, Ե, ԺԳ կան.): Մինչդեռ «պտուղ»-ը եկեղեցուն տրվող, որոշ ու հայտնի տուրքի անուն է, «մուտ»-ը, իմ կարծիքով, այդ հատվածներում ևս ունի ոչ թե հատուկ որևէ հարկի, այլ, հավանորեն, եկամուտի ընդհանուր նշանակութիւն:

Մատենագրական աղբյուրներում, 7-րդ դարից հետո, ինձ ոչ մի վկայութիւն դեռևս չի հանդիպել, որի մեջ «մուտ»-ը պարզ ու որոշ հիշատակված լիներ հատուկ որևէ հարկի համար:

Ուշագրավ է սակայն այդ տեղեկատիւ, որ Ծղիշիի վերոհիշյալ հատվածներում «մուտ»-ն ունի, ըստ երևույթին, հատուկ հարկի նշանակութիւն և հիշված է մյուս հարկերի թվում առաջին իսկ տեղում. 1. «Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց» (Վենետիկ, 1852, Բ, էջ 40). 2. «Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարն նորա երթայր յարքունիս» (Նույնը, Բ, էջ 75):

Հիմնվելով Եղիշեի այս վկայությունների վրա՝ կարելի է իրոք ենթադրել, որ «մուտ»-ը մարդպանության շրջանում և, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորության ժամանակ, ունեցել է հատուկ ինչ որ հարկի նշանակություն: «Մուտ»-ի այդ հատուկ իմաստը, թեև ինձ չէ հաջողվել պարզ ու հաստատ որոշել, ինչպես «բաժ»-ի նշանակությունը, սակայն, հիմնվելով ներքև առաջ բերված ուշադրավ մի վկայության վրա, թվում է ինձ, որ անհավանական չի լինի ենթադրել, որ «մուտ»-ը մարդպանության շրջանում ուրեմն և Եղիշեի վերոհիշյալ վկայությունների մեջ՝ գործ է ածվել քաղաքներում վճարվող ինչ որ հարկերի համար: Հնարավոր է, որ «մուտ»-ը հոմանիշ է պարսկական «բաժ»-ի և գործածական է եղել այդ նշանակությամբ մարդպանության և, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորության շրջանում:

Այդ ենթադրության հիմք ծառայող կարևոր ու հետաքրքիր մի վկայություն գտնվում է Հովհան Մամիկոնյանի Տարոնի պատմության մեջ հետևյալ հատվածում. «Եւ Սուրէն ետ բերել հարիւր հազար դահեկան, և զուղտսն և զջորիսն և ղծիսն և ետ ցիշխանն (Սըմբատ). և նա ասէ՝ հաւանեալ եմ տրոցդ. բայց հարիւր ութսուն հազար դահեկանի փայտ են տարեր ի Քարբէոյ, և չորս հարիւր հազար դահեկանի խոտ են կերեր ի դաշտէն. և ի հազար դահեկանի եղն և եղջերու և նապաստակ որսացեր են ի յերկրէս. թողում զգինսն ջրոյն և հացին: Բայց զասորոց անունը գինին, զոր յինէն կտրեալ ինքեանք արբին՝ թող տան մեզ ղգինն: Նաև ղգաւառին հարկն զոր առեալ են, և զմուտսն քաղաքին զոր կերեալ են Դ հարիւր հազար դահեկան՝ թող տան մեզ ղգին, և դու քրիստոնեայ լեր և զիս ի պարսիկս տար, և դոքա քեզ եղիցին» («Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ», Կոստանդնուպօլիս 1719, էջ 151): Այս հատվածի մեջ հիշատակված են, ինչպես տեսնում ենք, «զգաւառին հարկն» և «զմուտսն քաղաքին» և «զմուտսն» կարծես թե գործ է ածված այստեղ, ոչ թե, ընդհանրապես, եկամուտի, այլ քաղաքներում վճարվող հատուկ հարկերի համար: Այս լուսաբանությամբ նա կարող է, հավանորեն, ունենալ մաքսային հարկի նշանակություն՝ իբրև հոմանիշ պարթևերին «բաժ»-ի: Այս բացատրությունը ես չեմ համարում վերջնական ու անվիճելի, այլ միայն հնարավոր ու հավանական: «Մուտ»-ի նույն այս լուսաբանությամբ, իմ կարծիքով, հասկանալի է դառնում, թե ինչու Հին ու Նոր կտակարանի գրաբար թարգմանության մեջ, և ոչ մի անգամ գործածված չէ «մուտ»-ը: Ոչ «բաժ»-ը և ոչ նրա հոմանիշ «մուտ»-ը չեն հանդի-

պում այդ թարգմանութեան մեջ, որովհետև սրանց համապատասխան հարկերը թարգմանված են ասորերեն՝ «մաքս, մաքսավոր, մաքսապետ» բառերով:

« Ս Ա Կ »

Պրոֆ. Ն. Ադոնցը «սակ»-ը լուսաբանել է իրրև գլխահարկ և համապատասխան է համարել վերոհիշյալ gezith-ին (Армения в эпоху Юстиниана, էջ 482—484): Պրոֆ. Հ. Հյուբշմանն իր Armenische Grammatik աշխատության մեջ մատնացույց է արել, որ հայերեն «սակ»-ը փոխառություն է պարթևերենից: Թե հայերեն և թե պարթևերեն «սակ»-ը նա թարգմանում է Tribut (էջ 234): Միքայել փաշա Փորթուգալը Եդիշեի պատմության իր հրատարակության մեջ (էջ 218, ծան. 1) ենթադրել է, որ «սակ» հոդ է մը կամ շենք է մը առնված այն տուրքն է, որոյ քանակը կանխավ որոշյալ է ու չփոփոխեր բերոց կամ եկամտից շատնալովն կամ նվազեցնելն: Հայկազյան բառգրքի աշխատակիցները «սակ»-ի դիմաց դրել են մի շարք բացատրություններ՝ «սահմանեալ տուրք, եկամուտ, հաս, հարկ, բաժ արքունի»:

Այս լուսաբանությունները, ինչպես տեսնում ենք, կամ անորոշ են, կամ նույնիսկ իրար հակասող:

Ուշագրավ է, որ «սակ»-ը հարկի հատուկ իմաստով չի հանդիպում Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանության մեջ: Մատենադարանն աղբյուրներում այդ հարկի անունը գործածական է ու սովորական, գլխավորապես, արաբական և Բագրատունյաց շրջանում: Իսկ հայկական արձանագրություններում, որ մինչ այժմ հրատարակված են, «սակ»-ը որպես հարկ չէ հիշատակված և ոչ մի անգամ:

Հայերենում «սակ»-ը ինչպես հայտնի է նշանակում է ոչ միայն հարկ, այլև «եախորոշված» չափ, թիւ, կարգ: «Սակ»-ը հենց այդ հատուկ նշանակությունն ունի, իմ կարծիքով, հետևյալ վկայություններում. 1. Թովմայի վարդապետի Արժրունույ, Պատմութիւն տանն Արժրունեաց, Պետերբուրգ 1887, դպր. Գ. գլ. Դ էջ 143՝ «և կացցէ ինքն ի իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց»։ 2. Ստեփանոսի Տարօնեցույ Ասողական, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ 1885, Բ. հանդ., գլ. Դ, էջ 128՝ «Սւ փոխանակ նորա տիրէ Հեշմ ամս ԺԲ: Սա ծանրացոյց զսակ հարկի աշխարհիս հա-

յոց»։ 3. Պատմութիւն Ղևոնդեայ, Պետերբ., 1887, գլ. Դ, էջ 14՝ «Եւ յետ նորա Եզիտ որդի Մուսեայ. և ապրի ամս Բ և ամիսս Ե, և վախճանի, Եւ նա վարեաց աշխարհս ի նոյն սակ հարկի»։ 4. Յովհաննու կաթողիկոսի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս 1912, էջ 160՝ «Իսկ արքայ Սմբատ ընդ կրօնկն դարձեալ՝ հասանէր ի մայրաքաղաքն Դվին։ Եւ վասն զի ըստ առաջնոյ կիտին եղելոյ ոչ ետես զնոսա հնազանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ, ապա դուռն ևս քաղաքին փակեցաւ ընդդեմ նորա»։

«Սակ»-ն իբրև հարկ գործ է ածված հաճախ Հովհաննես կաթողիկոսի պատմության մեջ և, մեծ մասամբ, կանխապես սահմանված որոշ հարկագումարի նշանակությամբ։ Օրինակ, էջ 193՝ «և թեթևաբեռն զսակն արքունի արարեալ»։ էջ 203՝ «և խոստացեալ ևս թողուլ նմա զամի միոյ զսակն արքունի»։ էջ 214՝ «Եւ ապա ի խաբէութիւն մտաց զինքն զինեալ (Յուսուփն)՝ առաքէ առ արքայ Սմբատ, զի թէ բոլորապէս զսակ ամին հատուցէ նմա, զխաղաղութեան պայման անշուշտ նմա պարգեհալ՝ անցեալ զնասցէ։ Իսկ նա... տայր վաղվաղակի զինդիրն իբրև կշռիս վաթսուն հազար դահեկանաց»։

Նույն նշանակությունն ունի «սակ»-ը, հավանորեն, նաև Սեբեոս եպիսկոպոսի պատմության մեջ՝ Ս. Պետերբուրգ 1879, գլ. ԼԵ, էջ 138 և գլ. ԼԴ, էջ 118։

Պրոֆ. Մ. Դյակոնովի կարծիքով՝ Ռուսաստանում ամեն ինչ՝ որ որոշված է եղել թվերով՝ անվանվել է урок:

Русская Правда օրենսգրքում урок են անվանվել, նրա ասելով, ճշտիվ որոշված վճարումները։ «Այդ մտքով, — ասում է նա, — урок կարող են անվանվել և տուրքը, ուստի և հետագա հիշատակարաններում հիշվում է «дань по уроку»։ Նույն այս որոշված տուրքի համար կարող են սկզբներում գործածվել և оброк տերմինը, ինչպես այդ հանդիպում է և ավելի ուշ հիշատակարաններում՝ «а дань и мати по оброку» (М. Дьяконов, Очерки общественного и государственного строя древней Руси, С. Петербург, 1908, էջ 188)։

Եթե ուղիղ են պրոֆ. Մ. Դյակոնովի այս դիտողությունները՝ «սակ»-ը վերահիշյալ իր նշանակությամբ կարող է համապատասխան համարվել հենց ռուսական այդ урок և оброк տերմիններին։

«Սակ»-ը վերահիշյալ վկայություններում, ինչպես տեսանք, նշանակում է նախորոշված շահի, թիվ կամ նախորոշված հարկա-

գումարի Այժմ կարևոր է պարզել, թե արդյոք «սակ»-ը չէ՞ ունեցել հատուկ նշանակություն՝ գլխահարկի կամ հողային հարկի, ինչպես այդ ենթադրել են նիկ. Ազոնցը և Միքայել փաշա Փորթուգալը: Այս խնդիրը ևս պետք է պարզել, իմ կարծիքով, ոչ թե վերացականորեն, այլ դարձյալ մատենագրական վկայությունների օգնությամբ:

«Սակ»-ը ըստ երևույթին, իրոք որ ունեցել է նաև հատուկ նշանակություն, ինչպես երևում է հետևյալ վկայություններից. 1. Հովհաննու կաթողիկոսի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1912, էջ 133. «Ապա ոստիկան ոմն ի հայս առաքեալ, որ Ալի Արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա (զԱշոտ) կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս հայոց և զամենայն բեկար արքունի» 2. Նույնը, էջ 161—162. «Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ (Սմբատ), որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ զզէն բաշութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»:

Այս վկայություններում «սակ»-ը հիշված է «բեկար»-ի կամ «բեկար»-ի ու «մաքս»-ի հետ միասին: Հավանական է, ուրեմն, ենթադրել, որ «սակ»-ն այստեղ հատուկ ինչ որ հարկի անուն է, տարբեր «բեկար»-ից ու «մաքս»-ից: Հիմնական գլխավոր հարկերն արաբական ու Բագրատունյաց շրջանում, ինչպես հայտնի է, եղել են գլխահարկը՝ նաև հողային ու մաքսային հարկերը: Մաքսային հարկը, որ Հայաստանում անվանվել է «բաժ» կամ «մաքս», վերոհիշյալ երկրորդ վկայության մեջ հիշատակված է առանձին՝ «Սակ»-ը և «բեկար»-ը կարող են, ըստ երևույթին, նույն վկայության մեջ զործածված լինել մյուս հիմնական հարկերի՝ գլխահարկի ու հողային հարկի համար: Ներքև մենք կտեսնենք, որ «բեկար»-ը կարող էր թերևս ունեցած լինել այդ ժամանակ հողային հարկի նշանակություն: Թեև իմ այս ենթադրությունը հիմնովին խախտում է այժմյան ընդհանուր կարծիքը «բեկար»-ի նշանակության մասին, բայց, ինչպես կտեսնենք, այս նոր ենթադրությունը «բեկար»-ի հնագույն նշանակության մասին հիմնված է որոշ փաստական դիտողությունների վրա: Արդ՝ եթե Հովհաննես կաթողիկոսի վերոհիշյալ վկայության մեջ երեք հիմնական հարկերից՝ մաքսայինն անվանված է «մաքս», հողայինը, ըստ երևույթին, «բեկար»՝ կարելի է, ուրեմն, ենթադրել, որ «սակ»-ը նույն այդ հատվածում կարող է նշանակել, հավանորեն, գլխահարկ:

Արաբական աղբյուրների վկայություններից երևում է, որ

ամենամեծ եկամուտը խալիֆայությունը քրիստոնեական երկրներում ստանում էր գլխահարկից: Յ. Լոռանի կարծիքով, 9-րդ դարի վերջերում, ուրեմն՝ հենց այն ժամանակաշրջանում, որին վերաբերվում են վերոհիշյալ վկայությունները, խալիֆայությունը ստացել է Հայաստանից՝ նրա մեջ հասկանալով և Կովկասյան երկրները, տարեկան 13.000.000 դրամ՝ 4.000.000 դրամ իբրև հողային հարկ և 9.000.000 դրամ իբրև գլխահարկ³⁴, Ուրեմն՝ գլխահարկը կամ «սակ»-ը եղել է բոլոր հարկերից ամենակարևորը և շահավետը, և գուցե հենց այդ է պատճառը, որ «սակ»-ը վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված է առաջին տեղում:

Բացի Հովհաննես կաթողիկոսի վկայություններից կա և ուրիշ մի վկայություն, որից նույնպես կարելի է, իմ կարծիքով, եզրակացնել, որ «սակ»-ը, բացի իր վերոհիշյալ նշանակությունից, ունեցել է նաև գլխահարկի հատուկ իմաստ:

Այդ վկայությունը՝ ավելի ճիշտ ակնարկը՝ գտնվում է Գրիգոր Նարեկացու հետևյալ տողերում. «Ղխնդիր չափոյ ծածկելոցն իբր զշղով պահանջումն սատերն սակի ի բերանոյ կետին կորինի չորքեղրամեան կշռութեամբ» (Գրիգոր Նարեկայ վանից վանականի, Ողբերգութիւն, Վենետիկ, 1844, քան խե, էջ 248):

Այդ տողերում ակնարկված է, իմ կարծիքով, «սակ»-ը որպես գլխահարկ, որի նվազագույն գումարը մարդագլուխ եղել է, սովորաբար Սոսանյան Պարսկաստանում 4 զրամ (=1 սատեր) և Հոռմեական կայսրության մեջ, ըստ երևութին, 2 դրամ:

Ինչպես տեսնում ենք, Նիկ. Ադոնցի ենթադրությունը «սակ»-ի հատուկ նշանակության մասին, որ նրա մոտ հիմնավորված չէ որոշ փաստերով, կարծես թե հաստատվում է մատենագրական վկայությունների վերոհիշյալ լուսաբանությամբ:

Միքայել փաշա Փորթուզալի ենթադրությունը «սակ»-ի մասին, որ վերև հիշեցինք, հիմնված չէ փաստական տվյալների վրա, ուստի և անընդունելի պիտի համարվի, մինչև որ չհաստատվի հավանական վկայություններով: Ի նկատի ունենալով «սակ»-ի ընդհանուր նշանակությունը՝ որպես «որոշեալ» թիւ, չափ» և «որոշեալ հարկ», հնարավոր է, որ հողային հարկը ևս, որի քանակը, «կանխաւ որոշեալ էր», կարող էր և «սակ» անվանվել, սակայն այդ կոահոմը կարող է, անշուշտ, փաստական հիմնավորման Թանի որ «սակ»-ը հիշատակված է Եղիշեի պատմության մեջ և փոխա-

³⁴ J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, 1919, էջ 161.

ռություն է հայերենում պարթևերենից, պարզ է որ նա որպես հարկ գոյություն է ունեցել Հայաստանում մարդպանության շրջանում, գուցե և Արշակունյաց թագավորության ժամանակ։ Սասանյան Պարսկաստանում gezith-ը՝ գլխահարկը, ինչպես վերև տեսանք, հիմնական հարկերից մեկն էր։ Նղիշեի վկայությունը Դենշապուհի ժամանակ հոգևորականների վրա դրած հարկերի մասին՝ ասոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց ղնէին, ոչ միայն շինաց, այլ և աւիրակաց» (Վենետիկ, 1852, Բ, էջ 40)՝ վերաբերում է ամենայն հավանությամբ, գլխահարկին։ Նույնպիսի, հավանական է, որ մարդպանության շրջանում ևս անվանվում էր «սակ», ինչպես և Արաբական ու Բագրատունյաց ժամանակ։

Յր. Շպիգելը Ֆիրդուսիի մոտ հիշատակված պարսկական ճբաթ ու սավա՝ հարկերի անունները մեկնել է՝ առաջինը՝ իբրև բնական տուրքեր, իսկ վերջինը՝ իբրև դրամական վճարումներ³⁵, Հայկական ճբաթ»-ը, ինչպես վերև մեր քննությունից երևաց, պարթևական ու հետագա շրջաններում ունեցել է մաքսային հարկի իմաստ։ Իմ կարծիքով, նույն այդ ժամանակաշրջանում պարսկական ճբաթ»-ը ևս ունեցած պիտի լիներ ոչ թե բնական տուրքի, այլ մաքսային հարկի նշանակություն։ Իսկ պարսկական «սակ»-ի վերաբերմամբ, որ համապատասխան է համարվում հայկական «սակ»-ին, Յր. Շպիգելի դիտողությունը կարող է ընդունվել միայն այն շահով, որ այդ հարկը, համաձայն իր վերոհիշյալ հավանական նշանակության, իրոք որ պետք է լիներ դրամական։

« Հ Ա Ս »

Նիկ. Ադոնցը հնարավոր է համարում, որ հայկական «հաս»-ը և «մուտ»-ը համապատասխան կարող են լինել պարսկական ճբաթ ու սավա-ին, որոնցից առաջինը նա ենթադրում է հողային հարկ, իսկ վերջինը՝ գլխահարկ (Армения в эпоху Юстиниана, էջ 483), Նիկ. Ադոնցի հարևանցի այս ակնարկն առաջ է բերված Հ. Մուսայելյանի աշխատության մեջ ավելի դրական ու որոշ ձևով, իբր թե՛ Ն. Ադոնցը «մուտը համարում է սակի բացատրություն, իսկ հասը՝ բաժի» (Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 16)։ Միջայել փաշա Փորթուզալը ենթադրում է, որ «հաս» հողի բերքն առնված մասն է կամ տասանորդ մի, որ հարյուրեն հինգն մինչև հիսուն կըզանաղաներ» (Նղիշի վարդապետի վասն

³⁵ Fr. Spiegel, Fränische Alterthumskunde, Dritter Band, 1878, էջ 631.

Վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1903, էջ 218)։ Փորթուգալը, ինչպես տեսնում ենք, ոչ միայն «հաս»-ի նշանակությունն է որոշել, այլև նրա քանակը։ Սակայն նրա այս կտրուկ ու վճռական պնդումը ոչ պատճառաբանված է, ոչ էլ հիմնված փաստական տվյալների վրա։ Հայկազյան բազմաթիվ աշխատակիցները «հաս»-ի դիմաց գրել են հետևյալ բացատրությունը՝ «որ ինչ իրաւամբ հասանելի է կամ հասանէ, այսինքն՝ անկ է ումեք, որպէս զատուցեալ տուրք եկամուտ, բաժին, բաժ, տասանորդ, նուիրելի Աստուծոյ մասն»։

«Հաս»-ի, ինչպես և մյուս հարկերի հավանական նշանակությունը, չի կարելի պարզել առանց մատենագրական ու արձանագրական վկայությունների ուշադիր քննության։

«Հաս»-ը Հայաստանի հնագույն հարկերից մեկն է, ուստի և նա հանդիպում է հաճախ ոսկեդարյան անվանված մատենագրական երկերում և, զլիսավորապես, Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանություններում։ Ուշագրավ է, որ այս թարգմանությունների մեջ «հաս»-ը գործ է ածված միշտ ուղղակի հարկերի իմաստով, դրամական թե բնական, մինչդեռ անուղղակի հարկերի համար գործ է ածված շարունակ «մաքս» բառը։

«Հաս»-ի այդ հատուկ նշանակությունը երևում է հետևյալ հատվածներից. 1. Ելք Լ, 13. «Եւ կէս երկդրամենին եղիցի հաս Տեառն. ամենայն որ անցանիցէ ի հանդիսի անդ ի քսան ամենից ի վեր տացեն հաս Տեառն»։ 2. Թիւք ԺԵ, 20. «Եւ տաշիք զհաց հասին Տեառն. զատուշիք զայն Տեառն որպէս զհասն ի կալոյ»։ 3. Թիւք ԺԸ, 24. «Հղտասնորդս որդւոցն Իսրայելի՝ զոր զատուցեն Տեառն հաս՝ ետու ղեղացւոցն ի ժառանգութիւն»։ 4. Թիւք ԺԸ, 27. «Եւ համարեսցի ձեզ հասն ձեր իբրեւ զցորեան ի կալոյ և իբրեւ զպտուղ ի հնձանէ»։ 5. Թիւք ԼԱ, 28. «Եւ առջիք զհաս Տեառն յամենայն արանց պատերազմողաց երթելոց ի պատերազմ ոգի մի ի հինգ հարիւրոց՝ ի մարդոց և յանասնոյ, և յարջառոյ, և յոշխարէ, և յայծեաց»։

«Հաս»-ն այս հատվածներում, ինչպես տեսնում ենք, կամ միանվագ անձնական տուրք է դրամական, կամ հողային եկամբտային հարկ է, կամ որոշ տուրք է պատերազմական ավարից, որ պարտավոր էին տալ պատերազմողները։ Նույն թարգմանության նաև մյուս բոլոր հատվածներում «հաս»-ը միշտ ունի ուղղակի հարկերի կամ, մասնավորապես, բերքից կամ եկամուտից տրվող որոշ տուրքի նշանակություն։

Ավետարանի թարգմանության մեջ առանձնապես կարևոր է հետևյալ հատվածը. «Զիա՞րդ թուի քեզ, Սիմովն, թագաւորք ազգաց յումմե՞ առնուն զհարկս կամ զհասն, յորդւոց իւրեանց՝ թե յոտարաց» (Մատթ. Ժէ, 24)։ Հունարեն բնագիրը «զհասն» բառի դիմաց աւելի kenson լատիններեն՝ censum, Kensos և census հոռմեական կայսրության մեջ «ցենզի» կամ աշխարհագրի համեմատ զանձվելիք ուղղակի հարկերն էին՝ հողայինը և գլխահարկը։ Եթե թարգմանիչները kenson-ը թարգմանել են «հաս», հավանական է, ուրեմն, ենթադրել, որ այդ հարկն ըստ իր էության համապատասխան պիտի լիներ հունարեն kensos-ին։

Հայոց եկեղեցական կանոններում «հաս»-ը հիշվում է՝ իբրև հոգևորականության տրվող տուրք և ունի դարձյալ ուղղակի հարկերի նշանակություն, ինչպես և Հին և Նոր կտակարանների թարգմանություններում։

Ուշադրության արժանի է, որ Սահակայ հայոց հայրապետի կանոններում «հաս» է անվանվում դրամական տուրքը, որ յուրաքանչյուր տուն վճարելու էր եկեղեցուն. տե՛ս Կանոնագիրք հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանի, էջ 55. «Եւ հասք ի ձեռք ի սեղան Տեառն եղիցի դրամ մի յամենայն տանց ձերոց և նուիրեալք ի ձեռք»։ Այս հատուկ դրամական տուրքն ամեն մի տնից, որքան ինձ հայտնի է, չէ հիշված ոչ Հին կտակարանում, ոչ էլ քրիստոնեական ընդհանուր կանոններում։ Ի նկատի առնելով Հայաստանի նախարարական կազմակերպության խոր ազդեցությունը հայ եկեղեցու կազմակերպության ու ներքին կարգերի վրա՝ անհնարին չպիտի համարվի, որ եկեղեցական այս հատուկ տուրքը կարող էր առաջ եկած լինել Հայաստանում աշխարհական նման հարկերի ազդեցությամբ։ Եթե այս դիտողությունը հնարավոր լինի հետագայում հիմնավորել ավելի որոշ ու հաստատուն կերպով՝ կստացվի շատ կարևոր մի եզրակացություն ծխահարկի կամ, ավելի ճիշտ, գլխահարկի գոյության մասին Արշակունյաց թագավորության ժամանակ, որը, ըստ երևույթին, անվանվել է «հաս», ինչպես և հողային եկամտային հարկերը։

«Հաս»-ի նշանակության որոշման համար Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում առանձնապես կարևոր է Դավինի 645 թվի իններորդ կանոնի հետևյալ վկայությունը. «զի երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր, նաև ի Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ

խառնեալ ի շինական իշխանութիւնն. զերիցունեաց տունսն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս» (տե՛ս Կանոնագիրք հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, էջ 126): Եթե ի նկատի ունենանք Տաբարիի տեղեկությունը³⁶, որ Սասանյան Պարսկաստանում հոգևորականներն ազատված են եղել *gezith*-ից՝ դըլխահարկից, բայց ոչ «խարաճ»-ից՝ հավանական կլինի, իմ կարծիքով, ենթադրել, որ Դվինի ժողովի կանոնում մատնանշված «հաս»-ը պետք է ունենա «խարաճ»-ի, այսինքն՝ հողային հարկի նշանակութուն:

Արաբական և Բագրատունյաց ժամանակ, ինչպես և թուրք-թաթարական տիրապետության ժամանակ, «հաս»-ը գործածական է եղել Հայաստանում դարձյալ կամ ուղղակի հարկերի ընդհանուր նշանակությամբ կամ, մասնավորապես, հողային հարկի իմաստով: Օրինակ, Անիի 1036 թվի Պետրոս կաթողիկոսի արձանագրության մեջ «հաս»-ը հիշատակվում է այգուց առնվող գյուղական հարկերի նշանակությամբ. տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 84. «Ի նՁն թուականիս հայոց և ի մեծափառ թագաւորութեանս հզար և տիեզերակալ Սմբատ որդւո Գագկա Հայոց և Վրաց շահնշահի կամ եղեւ ինձ Տեառն Պետրոսի հայոց կաթողիկոսի տալ զայգին Աշնկի որ ի մեր կորդո արկած էր քրիստոսասէր մարդպանին Ապղարիպա որգւո Գրիգորո Պահլաւունո վասն առաւել սիրոյն և երախտեացն զոր ծառաեալ էր զսուրբ Լուսաւորչի աթոռս. արդ տուաք որմով և ծառովք պտղաբերովք և անոյտղաւք և խոտազետնովք և Գ աւր ջուր աղատ ի խալաէ եւ ի գեղջէ յամենայն հասուց»:

Եղիշեի վկայության մեջ «հաս»-ը, ինչպես վերև ասացինք, ունենալու է, հավանորեն, հողային բնական տուրքի նշանակութիւն, որովհետև հողային դրամական հարկի գոյութիւնը գծվար է ենթադրել Հայաստանում 5-րդ դարում:

« Բ Ե Կ Ա Ր »

Նիկ. Ադոնցի կարծիքով, Հայաստանում, դեռևս հնագույն նախարարական շրջանում, գոյութիւն է ունեցել պարտագիր ձրի աշխատանքների պարտականութիւնը, ինչպես եվրոպական *corvée*-ն (= *corrogata opera*), ռուսական барщина-ն, որ Հայաստանում անվանվել է «բեկար» *bekâr*: Այս վերջին բառը ծագել է նրա ենթա-

³⁶ Th. Noeldeke, Tabari. 1879, էջ 284.

դրությամբ, պարսկական bekār amadan «աշխատանքի գնալ» դարձվածքից և մինչև այժմ барщина իմաստով գործածական է ժողովրդի մեջ (Армения в эпоху Юстиниана, էջ 484)։

«Բեկար»-ի մասին այս կարծիքը, կարելի է ասել, որ ընդհանուր է ու սովորական, և որևէ կասկածանք այս առթիվ մինչև այժմ արտահայտված չէ եղել։

Բայց ճիշտ է արդյոք այս պնդումը «բեկար»-ի նշանակության մասին նախարարական հնագույն շրջանի նկատմամբ։

Ինձ թվում է, դժվար է վճռականապես պնդել, որ այդ ճիշտ է ու միանգամայն անվիճելի։ Մատենագրական հնագույն վկայություններից չէ երևում, որ «բեկար»-ը արաբական, Բագրատունյաց ու Թուրք-թաթարական շրջանում ունեցած լինի, անպայման, «կոռ»-ի՝ барщина-յի նշանակություն՝ այդ բառի սովորական ընդունված իմաստով։

Առայժմ ինձ հայտնի են «բեկար»-ի վերաբերյալ հետևյալ հնագույն վկայությունները. 1. Դվինի 645 թվի ութերորդ կանոնում. «Իսկ եթե որդեգրեալն արժանասցի քահանայության՝ գեղջն վկայությամբ կամ որ որդեգրեացն զնա, և չէր անկ նմա քահանայութիւն, սակայն զկէս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան, ազատ ի հարկէ և ի բեկարէ» (Կանոնագիրք հայոց, հրատարակ. Արսեն Դլաճյանցի, էջ 125). 2. Սյունյաց Սուպիան իշխանի 901 թվի Կոթա վանքի արձանագրության մեջ՝ «զԱստվածածնի քայանայքն նախնեաց իմոց և այլ բազում սպասաւորս ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ. և սահմանեցի հողս և ջուրս, և ետու միոյ քահանայի յիսուն դրամ ի տարուջ»³⁷ (Վիմական տարեգիր, էջ 5). 3. Հովհաննու կաթողիկոսի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 133. «Ապա ոստիկան ոմն ի հայս առաքեալ, որ Ալի Արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա (Աշոտ) կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»։ 4. Նույնը, էջ 161—162, «Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ (Սմբատ), որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանդնէր»։ 5. Մխիթարայ Գօշի, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ

37 Տե՛ս նաև Ստեփաննոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, էջ 178։

212՝ «Իսկ եթէ ոք յորդեգրաց ի քահանայութիւն ձեռնադրի կամ գեղջն վկայությամբ, կամ յանձնէ, որում չէր անկ քահանայութիւն, զկէս շնորհին կալցի յաղագս ձեռնադրութեանն անհարկ և անպեկար» (Դվինի ժողովի ութերորդ կանոնն է տարբեր խմբագրությամբ)։ 6. Նույնը, էջ 215՝ «Ձի երիցս երանելոյն սրբոյն Գրիգորի և երանելոյն Տրդատայ թագաւորի զսուրբ եկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է և ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հողովն և ջրովն։ Եւ ի պարսից թագաւորութեան ժամանակս թէպէտև ի պեկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է եւ չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկսն տային յարքունիսն» (Դվինի ժողովի իններորդ կանոնն է տարբեր ու հետաքրքիր խմբագրությամբ)։

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր վկայությունների մեջ խոսքը գրեթե շարունակ արքունի «բեկար»-ի մասին է։

Եթե «բեկար»-ը հասկանանք իբրև «կոռ» կամ барщина այդ բառերի սովորական այժմյան նշանակությամբ՝ այդ դեպքում՝ վերոհիշյալ վկայություններից պետք է հետևեցնենք, որ Աստվածածնի քահանաները կամ սպասավորները մինչև 901 թիվը ոչ միայն հարկ են վճարել արքունիքին, այլև ենթակա են եղել «բեկար»-ի, այսինքն՝ օգտագործվել են իբրև ձրի աշխատող ուժ. պետք է նաև ենթադրենք, որ Աշոտ Բագրատունուն և նրա որդուն Սմբատ Ա-ին հանձնարարված է եղել Հայաստանում ոչ միայն խալիֆայության հարկերի վերակացությունը, այլև արքունի «բեկար»-ի, այսինքն՝ պարտադիր ձրի աշխատանքների՝ վերահսկողությունը։ Վերև առաջ բերված վեցերորդ վկայությունը կստանա անակնկալ ու նոր իմաստ, իբր թե Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ հոգևորականությունը «բեկար»-ի պարտականություններ է ունեցել արքունիքի հանդեպ, այսինքն՝ պարտավոր է եղել կատարել «կոռ»-ի կամ барщина-ի պարտադիր աշխատանքներ։

«Բեկար»-ի նման լուսաբանությունը վերոհիշյալ վկայություններում, իմ կարծիքով, խիստ վիճելի է ու գրեթե անհավանական։

Հայկազյան լեզվի նոր բառգրքում «բեկար» բառը բացատրված է իբրև՝ «հուն. telos, dasmos, լատին. vectigal որ և դիմոսական հարկ. տուրք արքունի», իսկ «անբեկար» մեկնված է՝ «ազատ ի վճարելոյ բեկար. առանց տալոյ զարքունի սակ տրոց»։ Ուրեմն՝ Հայկազյան նոր բառգրքի աշխատակիցները «բեկար»-ը հասկացել են ոչ իբրև «կոռ», այլ իբրև արքունի հարկ և տրամադիր են եղել, ըստ երևույթին, «բեկար»-ն ընդունելու որպես «դիմոսական հարկ», այսինքն, հավանորեն, capitato plebela գլխահարկ։

Իմ կարծիքով, եթե «բեկար»-ը, իրոք, կարելի լինի ենթադրել իբրև արքունի հատուկ որևէ հարկ՝ նա կարող է ունեցած լինել ավելի ջուտ հողային հարկի նշանակությու, քան գլխահարկի։ Մենք արդեն վերև առի՞թ ունեցանք մատնանշելու, որ Հովհաննես կաթողիկոսի վկայության մեջ «արքունի սակք, բեկարք և մաքսք» կարող են թերևս լինել Արաբական խալիֆայթի երեք հիմնական հարկերը՝ գլխահարկը, հողային հարկը և մաքսը։ «Սակ»-ը, ինչպես վերև տեսանք, բացի սովորական իր նշանակություններից ունեցել է, հավանորեն, նաև գլխահարկի իմաստ. մաքսի նշանակությունը պարզ է առանց բացատրության, ուրեմն՝ «բեկար»-ը կարող է, ըստ երևույթին, լինել հողային հարկը, որ արաբերեն լեզվով անվանվում էր «խարաճ»³⁸։

Որ «բեկար»-ը համապատասխան կարող է լինել «խարաճ»-ին, այդ՝ վերապահությամբ, իհարկե, կարելի է թերևս կոհեղ այն առանձնահատուկ ու ուշագրավ խմբագրությունից, որ Դվինի ժողովի իննբորդը կանոնին տրված է Մխիթար Գոի Դատաստանագրքում։ Համեմատության համար այդ կարևոր հատվածները ղեկավարում դեմ առ դեմ։

Կառնեֆ զուևայ ժող. ք.

Մխիթար Գոշ, Դատաստ. մասն

«Ջի երանելուն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր. նաև ի պարսից իսկ տէրութեանն յայտ արաբեալ և չէ խառնեալ ի շինական իշխանութիւնն, զերիցունեաց տունսն ի գիւսինն եղեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, էջ 126)։

Ա, ՃԶ, էջ 215—216. «Ջի երիցս երանելուն սրբոյն Գրիգորի և երանելոյ Տրդատայ թագաւորի զսուրբ եկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է և ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հողոյն և ջրովն։ Եւ ի պարսից թագաւորութեան ժամանակս թէպետ և ի պեկար արկին սակայն տունն ի գիւսին յայտնի է եւ չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկն տային յարքունիսն»։

38 Ուշադրության արժանի է, որ մինչդեռ Հովհաննես կաթողիկոսը, խոսելով Արաբական շրջանի արքունի հարկերի մասին, զորք է ածում «սակ, բեկարս (տե՛ս էջ 133 և 161, Թիֆլիս 1912)՝ Թովմա Արծրունին արքունի հարկերն անվանում է «հարկ, հասս»։ Հետաքրքիր են այս տեսակետից Թովմա Արծրունու հետևյալ վկայությունները, 1. «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբ., 1887, էջ 108՝ «Եւ նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն»։ 2. Նույնը, էջ 111՝ «Ջնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրոք քաղաք, մինչև զքովանդակ զհարկս և զհասս արքունի»։

Դեմ առ դեմ դրված այս հատվածների իմաստը պարզ չէ։ Վիճելի են ոչ միայն հատվածների բովանդակության մի քանի կետերը, այլ անորոշ է նրանց մեջ նաև «պեկար»-ի ու «հասս»-ի նշանակությունը։

Կանգ առնենք նախ Դվինի ժողովի իններորդ կանոնի վրա։

Դվինի իններորդ կանոնի վերոհիշյալ վկայության ընդհանուր իմաստը, իմ կարծիքով, այն է, որ «երիցունեաց» ընտանիքներն ունեցել են պարսից տիրապետության ժամանակ հարկային ինչ որ արտոնություն։ Նրանք չեն եղել «խառնեալ ի շինական իշխանութիւնն», նրանց հատուկ դրությունը, ըստ երևույթին, արձանագրված է եղել դիվանում և նրանք պարտավոր են եղել «միայն զհասն տալ յարքունիս»։

Որ, իրոք, հայ հոգևորականությունն ունեցել է ինչ որ արտոնություն արքունի հարկերի նկատմամբ՝ այդ կարելի է թերևս եզրակացնել «Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» հինգերորդ կանոնից՝ «նոյնպէս և տգէտք մի իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զհայրենի հող և ջուր կալցեն, և յարքունիս հարկ, և զորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (տե՛ս Կանոնագիրք հայոց, էջ 109)։ Եթե տգետ հոգևորականները, կորցնելով իրենց արտոնությունները, զրկվում էին հայրենի հողից ու ջրից և վճարելու էին «յարքունիս հարկ», ինձ թվում է՝ կարելի է ենթադրել, որ պաշտոնավարող հոգևորականներն արքունի այդ հարկից ազատ են եղել։ Ուրեմն՝ հոգևորականության արտոնյալ հարկային դրությունը կարծես թե՛ հաստատվում է և այս վկայությամբ։ Տաբարիի վերոհիշյալ տեղեկության համաձայն հոգևորականությունն ազատված է եղել Պարսկաստանում *gezith*-ից գրեթե անհարկից։ Ի նկատի առնելով կարևոր այս վկայությունը և «հասս»-ի հավանական նշանակությունը՝ իբրև հողային հարկ, որ վերև ենթադրեցինք, ինձ թվում է՝ կարող ենք հավանական համարել, որ հայ հոգևորականությունը՝ Հազկերտ Բ-ի քաղաքական

յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիրանչիւր սահմանաց»։ 3. Նույնը, էջ 143՝ «և կացցէ ինքն և իւրքն ամենքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս շափոյ սակի արքունական աւանդութեանց»։ Հովհաննէս կաթողիկոսի և Թովմա Արծրունու վերոհիշյալ վկայությունների համեմատությունից ես ստացել եմ այն տպավորությունը, որ Հովհաննէս կաթողիկոսի «սակ և բեկար»-ը համապատասխանում է Թովմա Արծրունու «հարկ» և «հասս»-ին։ Այս համեմատությունից ես թերևս կարելի լինի ենթադրել, որ բեկար»-ը համապատասխան կարող է լինել «հասս»-ին՝ հողային նշանակությամբ։

խստություններից հետո՝ պարտավոր է եղել «տալ յարքունիս» հո-
ղային հարկ՝ «հաս», բայց ազատ է եղել զխահարկից:

Եթե այս իմ դիտողությունն ուղիղ ենթադրվի և «հաս»-ն ըն-
դունվի իբրև հոմանիշ խարաճ»-ի, իմ կարծիքով, անհիմն չպիտի
համարվի Գոշի Դատաստանագրքի «ի պեկար արկին» խոսքերը
հասկանալ Դվինի կանոնի համապատասխան նշանակությամբ և
«բեկար»-ը ենթադրել հոմանիշ հայերեն «հաս»-ի և արաբերեն
«խարաճ»-ի: Այդ դեպքում, բնականաբար, Գոշի հատվածի վեր-
ջում «զհարկսն» բառը պետք է համարել աղճատումն Դվինի կա-
նոնի «հասն» բառի:

Հետաքրքիր է շատ, որ Մխիթար Գոշի վերոհիշյալ հատվածը
և, ըստ երևույթին, նաև «ի պեկար արկին» խոսքերը՝ Սմբատ
Գունդստաբլը հասկացել է բոլորովին այլ կերպ: «Ապա երբ ուժ-
վորեցին պարսիկք ի վերայ հայոց,— ասում է նա իր Դատաստա-
նագրքի հիմ կանոնում,— նա տանէին զիրիցնին ի հեծել» (I. Karst,
Sempadscher Kodex, B. I, հիմ, էջ 65): Սմբատ Գունդստաբլի հիմ
կանոնի այս հատվածը խմբագրված է, ամենայն հավանականու-
թյամբ, Գոշի ԶՁ կանոնի վերև առաջ բերված վկայության հետե-
վությամբ: «Բեկար»-ը Գոշի կանոնում Սմբատ Գունդստաբլը, ըստ
երևույթին, հասկացել է ոչ իբրև հարկ, այլ որպես «բեէց»-ների
զինվորական պարտավորություն՝ ծառայելու արքունի հեծելազոր-
քում:

Քննենք «բեկար»-ի նշանակության մասին կարևոր այս նոր
ակնարկը: Եթե «բեկար»-ն ընդունենք իբրև «բեէց»-ների զինվո-
րական պարտավորություն, այդ դեպքում՝ վերև առաջ բերված
վկայությունները կստանան բոլորովին նոր ու անակնկալ իմաստ:
901 թվի Կոթայ վանքի արձանագրությունը մեկնելու ենք այն իմաս-
տով, որ Սուփան իշխանն Աստվածածնի քահանաներին ու սուլա-
սավորներին ազատել է արքունի հարկից ու հեծելազորքի մեջ ծա-
ռայելու պարտականությունից: Պետք է ենթադրենք, որ Աշոտ Բաղ-
րատունուն և նրա որդուն՝ Սմբատ Ա-ին, հանձնարարված է եղել
Հայաստանում թե արքունի հարկերի և թե զինվորազրության վե-
րահսկողությունը: Մխիթար Գոշի «ի պարսից թագաւորության
ժամանակս ի պեկար արկին» վկայությունը պետք է բացատրենք,
իբրև հոգևորականության պարտադիր ծառայություն Պարսկական
Հայաստանի հեծելազորքի շարքերում: Բոլորովին նոր լուսաբա-
նություն կստանա Դվինի ժողովի ութերորդ կանոնի հատվածը,
որի մեջ հիշատակված է «բեկար»-ը: Այդ կանոնում ասված է, որ

«որդեգրեալ»-ը «զկէս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան, ազատ ի հարկէ և ի բեկարէ»: Եթե «բեկար»-ը մեկնենք իբրև պարտադիր զինվորական ծառայություն նաև է-րդ դարում, անհրաժեշտորեն, պետք է ենթադրենք, որ 645 թվի քաղաքական խառն շրջանում հոգևորականությունը կարողացել է ազատվել զինվորագրումից, որին ենթարկված է եղել Սասանյան տիրապետության ժամանակ:

«Բեկար»-ի հնագույն նշանակությունը, ինչպես տեսնում ենք, մութ ու անորոշ է: Վերոհիշյալ վկայություններից, ինչպես տեսանք, կարելի է մոտավորապես գուշակել, որ «բեկար»-ը կամ հողային հարկ է արքունի, կամ զինվորական ծառայության պարտավորություն՝ Սասանյան թագավորության և Արաբական խալիֆայության հանդեպ:

Այս ենթադրություններից ինձ ավելի հավանական է թվում առայժմ առաջինը: Երկրորդ ենթադրությունը դժվար է հաշտեցնել մատենագրական մի շարք վկայությունների հետ, որոնց մեջ շեշտված է շարունակ, որ եկեղեցու պաշտոնեության մեջ չպետք է ընդունվեն «հեծեալ»-ները և զինվորականները: Ուշադրության արժանի են այդ տեսակետից հետևյալ վկայությունները. 1. Դավին ժողովի վեցերորդ կանոնը, հրատ. Արս. Ղլտճյանի, էջ 123՝ «Ոմանք յովստէ եկեղեցւոյ զկարգ և զպաշտօն թողին և զհեծելութիւն ստացան: Արդ՝ եթէ դառնան ի շար ճանապարհէն՝ օրհնեալ են ի տեառնէ և ընկալեալք ի մէնք. ապա թե ոչ, իշխանութիւն լիցի վարդապետին զշնորհս եկեղեցւոյ հանել յայնպիսեացն և արժանաւոր քահանայից և պաշտօնէից մերձաւորաց տալ, որք սրբոյ եկեղեցւոյ զկարգն զդուշութեամբ կատարեն»։ 2. Կանոնք Սահակայ, հրատ. Արս. Ղլտճյանի, 2, էջ 18՝ «այլ զտղէտս և զզինուորս ամենեւին իսկ պարտ է որոշել ի շնորհէն վայելից»։ 3. Կանոնք Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի (8-րդ դար), հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 203, «մի ամենեին զինուոր մարդկան հեծելոց և մաքսապետաց, մի ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն»։ Հմմտեա նաև Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, հրատ. Ղլտճյանի, Ե, էջ 108. Կանոնք Սիմէոնի կաթողիկոսի, Դ, էջ 204 ևն:

«Բեկար»-ի պարսկական ծագումը, որ մատնացույց է արել Նիկ. Ադոնցը, ինձ ևս հավանական է թվում: Ինչպես վերև տեսանք, bekâr âmadan դարձվածքը Նիկ. Ադոնցը թարգմանել է «Գործի գնալ», ուրեմն՝ նոր պարսկերեն bekâr-ը նա հասկացել է իբրև

«գործ, աշխատանք»։ Իր այդ նշանակությամբ պարսկերեն bekâr-ը կարող էր, իսկապես, corvée-յի (corroгata opera) իմաստ ստանալ, բայց ոչ հողային հարկի։

Բայց ճիշտ է արդյոք որ պարսկերեն bekâr-ն ունեցել է վերոհիշյալ միայն նշանակությունը։

Միջազգային Գաֆֆարովի պարսկերեն-ռուսերեն լիակատար բառարանում bekâr-ը թարգմանված է՝ пригодный, годный, полезный, այսինքն՝ «պիտանի, օգտակար», bekâr âmadan՝ пригодиться, быть полезным, приносить пользу, այսինքն՝ «պիտանի, օգտակար լինել, օգուտ բերել»³⁹։ Նմանապես նաև Կ. Զալեմանի ու Վ. Ժուկովսկու «Պարսկերեն քերականության» մեջ bekâr âmadan թարգմանված է՝ Zweckdienlich sein, être utile⁴⁰։ Bekâr-ի իմաստն այստեղ կապ ունի օգուտ և շահ գաղափարների հետ։ Հողային եկամտային հարկն էլ հենց աշխատանքից, օգուտից, արդյունքից տրվող հարկ էր։ Թուուցիկ այս դիտողությունը ես չեմ համարում, իհարկե, բավարար ու համոզիչ։ «Բեկար» բառի գործածությունը հարկի իմաստով այնքան կարևոր մի խնդիր է, որ կարոտ է, անշուշտ, հատուկ քննության լեզվագետների ու պարսկագետների կողմից։

Ամփոփելով վերոհիշյալ իմ դիտողությունները «բեկար»-ի մասին, ստանում ենք հետևյալ կարևոր եզրակացությունները. 1. Որ «բեկար»-ը Դվինի ժողովի խննդորդ կանոնում, Կոթայ վանքի 901 թվի արձանագրության, Հովհաննես կաթողիկոսի պատմության մեջ, նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում չունի corvée-յի կամ Ծարщина-ի նշանակություն՝ այդ բառերի այժմյան հասկացողությամբ. 2. որ «բեկար»-ը կարող է լինել կամ արքունի հարկ, հավանորեն, հողային, կամ զինվորական ծառայության պարտավորություն, եթե այս վերջին ենթադրությունը կարելի լինի հաստատել փաստական որևէ նոր տվյալներով և վերացնել այն դժվարությունները, որ վերև մատնացույց եմ արել. 3. որ «բեկար»-ը, հիշատակված լինելով Դվինի 645 թվի ժողովրդի կանոններում, գոյություն ունեցած պիտի լիներ մարզպանական Հայաստանում։

Այս կետերից երկրորդը, ինչպես տեսնում ենք, սոսկ մի ենթա-

³⁹ Мирза Абдулла Гаффаров. Полный персидско-русский словарь, т. I, М., 1914 г.

⁴⁰ C. Salemann und V. Schukovskt, Persische Grammatik, Berlin, 1889, էջ 116.

դրություն է, որ անհրաժեշտ է հետազայում հիմնավորել և ապացուցել ավելի որոշ ու հաստատուն վկայութիւնների օգնութեամբ:

«ԿՈՌ» ԵՎ «ՊԱՀԱԿՈՒԹԻՒՆ»

Պրոֆ. Նիկ. Ադոնցը բացի «բեկար»-ից «կոռ»-ը ևս հիշատակել է իր աշխատութեան մեջ, նույնացրել է այդ բառը պարսկերէն kâr-ի հետ⁴¹, որ նշանակում է «աշխատանք» և վերագրել է նրան նույն իմաստը, ինչ որ «բեկար»-ին, այսինքն՝ համապատասխան է համարել ֆրանսերէն согвée-յին և ռուս. барщина-յին⁴²: Պրոֆ. Ս. Եղիազարովը իր «Исследования по истории армянского права» ուսումնասիրութեան մեջ «կոռ»-ը համարել է հատուկ հարկ, որ առնվում էր աշխատավորից և մեկ ղուլդ եզից կամ գոմեշից, որ լծված էին արորին, սայլին կամ կամին: Նրա կարծիքով «կոռ» անվանվել է թե անասունների այդ մեկ լուծը և թե այն հարկը, որ առնում էին յուրաքանչյուր այդ լուծից⁴³: Ուրեմն՝ «կոռ»-ը նա համապատասխան է համարել ռուսական соха-յին, որ ինչպես հայտնի է, 13-րդ դարից սկսած դառել էր հարկային որոշ միավոր: Այս բացատրութիւնը, եթե ուղիղ լինէր, հին Հայաստանի հարկային կարգերի համար կլինէր, անշուշտ, կարևոր ու հետաքրքիր մի նորութիւն: Սակայն հարգելի պրոֆեսորի այս կարծիքը ևս սխալ է և արդունք է, պարզապես, անախորժ մի թյուրիմացութեան: Վերոհիշյալ իր հետեւութիւնները «կոռ»-ի մասին նա արել է, հիմնը-վելով դարձյալ Մ. Էմինի «Аямянския надписи» աշխատութեան վրա, որի մեջ «կոռ»-ը թարգմանված է податъ և «կոռ»-ի վերաբերյալ հատվածները թարգմանված են միանգամայն սխալ (տե՛ս էջ 14 և 73):

«Կոռ»-ի խնդիրը՝ նրա բովանդակութիւնը և ծավալը՝ Հայաստանի տնտեսական կյանքի կարևորագույն խնդիրներից մեկն է, ուստի հարկավոր եմ համարում առաջ բերել «կոռ»-ի վերաբերյալ պատմական հնագույն տեղեկութիւնները, որ առայժմ ինձ հայտնի են: «Կոռ»-ը, գլխավորապէս, հիշատակված է արձանագրութիւններում: 1. Վիմական տարեգիր, էջ 10, Մրեն 992 թ. «Յանուն Աս-

⁴¹ Հայկական «կոռ»-ը նույնացնելու համար պարսկերէն kâr-ի հետ հարկավոր է ցույց տալ լեզվական այն օրէնքը, որի հիման վրա պարսկերէն ձ-ն դառնում է հայերէնում ու:

⁴² «Армения в эпоху Юстиниана», էջ 484:

⁴³ «Исследования по истории армянского права», էջ 41:

տուժոյ այս իմ հրամանք են Գազկա Շահիազնշահի. ազատեալ իմ զՄրենոյ կոռն, որ ի Նախճաւանի էր, զմարդոյ և զեզին, ի ձեռն խնդրոյ աստուածապատիւ տեառն Սահակայ Արշարունեաց եպիսկոպոսի»։ 2. Վիմակ. տարեգ. էջ 27՝ Անի, 1057—1063 թ. (պետք է լինի 1059—1064, տե՛ս վերև էջ 83, ծան)։ «և ազատեցին («ողորմութեամբ սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեա Դուկի») զվեցկէ կոռ, և զսայլի, եւ զկամին, եւ զանգարիոն և կատապան ով և լինի, տա սերմ ո. մող եւ ծախք զընծելոցն. զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ»։ 3. Վիմակ, տարեգ. էջ 43, Հառիճայ, 1201 թ. «եւ զառաջին սահմանքն, որ բուն լեալ էր, հաստատեցի ի Սահմանախաչէ ի Հառիճա գետն կոռ մարգով, Գբերովն, Յամաք ձորով, Ծինարին Հարով, Գոմցեց ձորովն, Արենաղբերով, հին Հառիճաով»։ 4. Վիմակ. տարեգ. էջ 80՝ Դսեզ, 1237 թ. «Յառաջնորդութեան Տիրացու վարդապետին եւ Աշոտ, որդի Գաւրգէի, միաբանեցայ վանիս եւ ետու Աստուածածնիս երկու մեծ կողավար եւ հաստատեցի արձանագրով»։ 5. Վիմ. տարեգ. էջ 83՝ Դսեզ, 1241 թ. «Եւ Գրիգոր, որդի Մարծպանաց, յետ մահուան հաւր իմոյ շինեցի զԳրիգորաշէն, եւ ետու յիմ վանքս եւ Սիրեկայ գոմոց տափըն եւ մեծ կողավարն Ագարակի Փայտաշէնու կէսն են»։ 6. Վիմ. տարեգ. էջ 123՝ Սբ. Սիոն, 1283 թ. «Նուէր ի սբ. ուխտս զՔարաթաղին այգին վերին հատովն... կոռ արտովն... են»։ 7. Վիմ. տարեգ. էջ 161՝ Զագաւանք, 1325 թ. «Ի պարոնութեան Զաքարիա, թոռն Աւագին, մեք Դաւիթ եւ Վահագ Եփաթա և որդիք մեր Սատրիկ եւ Բահադին եւ Աւդուլա վասն յուսոյն, որ առ Աստուած եւ մեր արեւուս համար թողաք զվանաց կոռս զմարդո, եզին, իշո, զամենայն ցեղ կոռ»։ «Կոռավար»-ը հիշվում է նաև 381 թվի «Սաղոմոն» Սյունյաց եպիսկոպոսի հիշատակագրում, որ առաջ է բերված Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (Թիֆլիս, 1911, գլ. 10, էջ 215)։

«Կոռ»-ը, իմ կարծիքով, հիշատակված է եղել նաև Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում։ Այդ վկայությունը, որ ամենահինն է ու կարևորը, անհայտ է մնացել մինչև այժմ, որովհետև «կոռ»-ի վերաբերյալ հատվածը կանոնում աղճատվել ու փոփոխման է ենթարկվել տգետ գրիչների կողմից։ Աղճատումն ակնհեր է դառնում, երբ դեմ առ դեմ ենք դնում Դվինի ժողովի ԺԱ կանոնը և Մխիթար Գոշի Դատաստանագրքի Բ մասի ՃԳ կանոնը, որը Դվինի ժողովի նույն կանոնն է Գոշի խմբագրությամբ։

«Ոմանք յազատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և ըմպելիս զվրձանց զգործակալս մատուցանեն, կոռով և պատուհասիւ նեղեն, զողորմելի եղբարսն շարշարեն անխղճարար» (Կան. Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանի, էջ 127—128)։

էջ 412. «Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն և հարկս և կերակուրս և ըմպելիս պահանջեն բռնութեամբ, և զվրձանց գործակալս ի վերայ գումամբն և կոռով և պահակութեամբ նեղեն և զողորմելի եղբարսն շարշարեն անխղճարար»։

Այս համեմատությունից պարզ երևում է, որ Դվինի կանոնում բնագիրը աղճատված է և «կոռով և պատուհասիւ» խոսքերը, որ անտեղի են ու անհարմար, ծագել են «կոռով և պահակութեամբ» ուղիղ ընթերցվածի աղավաղումից։ Մխիթար Գոշը, անկասկած, ունեցել է ձեռքի տակ Դվինի կանոնի բնագիրն առանց այդ աղճատման։ Կարծում եմ, որ այս սրբագրության դեմ և ոչ մի առարկություն չի կարող լինել, որովհետև աղճատումն ակնհեր է ու անվիճելի։

Այս ուղղումը հին հայոց ներքին կյանքի լուսարանության տեսակետից ունի խիստ մեծ նշանակություն, որովհետև Դվինի կանոնի վկայությամբ հաստատապես որոշվում է, որ «կոռ»-ը գոյություն է ունեցել Հայաստանում ոչ միայն Բագրատունյաց ու հետագա ջրջաններում, այլև 645 թվին։ Եթե այդ այդպես է, ուրեմն, կարելի է նաև ենթադրել, որ «կոռ»-ը, ամենայն հավանականությամբ, գոյություն ունեցած պիտի լիներ Հայաստանում նաև մարզպանության շրջանում⁴⁴։

Առանց Դվինի ժողովի հետաքրքիր այդ տեղեկության կարևոր այս խնդիրը կմնար մոլթ ու անլուծելի։

⁴⁴ Կարևոր է այստեղ հիշել, որ «կոռ»-ը մարզպանության ժամանակ գոյություն է ունեցել նաև Սասանյան Պարսկաստանում։ Այդ մասին Տաբարիի պատմության մեջ կա ուշագրավ մի վկայություն, հոսելով երկարատև սովի ու ժողովրդի ծանր դրության մասին Սասանյան Պերոզ թագավորի ժամանակ (457—484 թ.) Տաբարին հաղորդում է, որ Պերոզ թագավորը «նամակաների միջոցով հայտարարում է իր ամբողջ ժողովրդին, որ ազատում է նրան հողային հարկից և զլսահարկից, հանրօգուտ նպատակների համար ծանրություններից և կռից, որ նրանց շնորհում է լիակատար ազատություն և հրամայում է, որ նրանք հոգան ու մտածեն իրենց սնունդի և պահպանության մասին»։ Տե՛ս Th. Noeldeke, Tabarl. էջ 112, «Da erklärte er durch Briefe seinem ganzen Volke, dass er sie von Grund und Kopisteuer, von Auflagen für gemeinnützige Zwecke und vom Frohndienst entbinde, dass er ihnen volle Fretheit gebe und ihnen gebiete, sich um ihre Ernährung und Erhaltung zu bemühen»։

«Կոռ»-ի նշանակությունը վերոհիշյալ բոլոր հատվածներում այնքան պարզ է ու որոշ, որ կարոտ չէ առանձին լուսաբանության: «Կոռ»-ը, անտարակույս, այն պարտադիր աշխատանքներն էին, որոնք, ինչպես միջնադարյան corvée-ն գերմ. Frohndienst-ը և ռուս. барщина-ն կատարվելու էին ձրի կալվածատիրոջ մոտ:

Իմ կարծիքով, միանգամայն սխալ է ու անհիմն Յ. Կարստի ենթադրությունը, որ իբր թե «կոռ»-ը Հայաստանում, ինչպես և արևելյան սլավոնների ու ռուսների մոտ, առաջ է եկել Բյուզանդական ազդեցությամբ և իբր թե այդ է պատճառը, որ հայկական «կոռ»-ը, և, ընդհանրապես, հարկային սիստեմը նմանություն ու ազգակցություն ունեն արևելյան-սլավոնականի ու, մասնավորապես, ռուսականի հետ, որոնք նույնպես ենթարկվել են Բյուզանդիայի ազդեցության (J. Karst Sempadscher Kodex, B. II, 1905, էջ 12): Այդ ենթադրությունը ճիշտ չէ, որովհետև թե ինքը ֆեոդալիզմը և թե նրան առանձնահատուկ տնտեսական ներքին կարգերը՝ ազատ գյուղացիության ճորտացումը և օգտագործումը, որպես աշխատող ձրի ուժ, ոչ թե իրավական փոխառություններ են, ինչպես լեզվի որոշ բառապաշարը, այլ ամեն մի երկրի տնտեսական ու ներքին զարգացման արդյունք: Հայկական «կոռ»-ը չի կարող Բյուզանդիայի ազդեցությամբ առաջ եկած լինել նաև այն պատճառով, որ «կոռ»-ի գոյությունը Բյուզանդական կայսրության մեջ նրա ֆեոդալացումից առաջ, որ տեղի է ունեցել շատ ավելի ուշ քան Հայաստանում, գրեթե անհայտ մի խնդիր է և հաստատուն կերպով դեռ ապացուցված չէ:

Միջին դարերում, ինչպես հայտնի է, տարբերել են ճորտ գյուղացիության երկու տեսակ գլխավոր պարտադիր աշխատանքներ՝ manoperae (գերմ. Handfrohen) և carroperae (գերմ. Fahr- կամ Spannfrohen): Առաջինն այն աշխատանքներն էին, որ գյուղացին կատարում էր ինքը, երկրորդը՝ այն որ նա կատարում էր իր անասուններով ու լծասարքով: Այդ երկու տեսակ աշխատանքներն էլ, ինչպես երևում է վերև առաջ բերված վկայություններից, գոյություն են ունեցել Հայաստանում Բագրատունյաց ու հետագա շրջաններում, հավանորեն, նաև արաբական ու մարզպանության ժամանակ: 992 թվի Մրենի արձանագրության մեջ հիշատակված է՝ «զՄրենոյ կոռն, որ ի նախնաւանի էր, զմարդոյ եւ զեզիւն», 1059—1064 թվի Անիի արձանագրության մեջ՝ «զվեցկէ կոռ եւ զսայլի, եւ զկամին, եւ զանգարիոն», իսկ 1325 թվի Ձագավանքի արձանագրության մեջ՝ «զվանաց կոռս զմարդո, եզին, իշո, զամենայն ցեղ կոռ»: Այս վկայու-

թյուններում հիշված «մարդոյ կոռ»-ը համապատասխանում է, անշուշտ, միջնադարյան *manoperae* կամ գերմ. *Handfrohn* անվանված ձրի աշխատանքներին, իսկ «վեցկէ, սայլի, կամին, եղին, իշոռ» կոռի տեսակները համապատասխանում են միջնադարյան *caroperae* կամ գերմ. *Fahrfrohn* աշխատանքներին:

Ինձ թվում է, որ «վեցկէ կոռ»-ը, ինչպես երևում է «վեցկի» ժողովրդական բառի այժմյան նշանակություներից, այն վարուցանի պարտադիր աշխատանքներն էին, որ գյուղացին կատարելու էր իր արորով ու իր լծկաններով: Նմանապես ե «կամին կոռ»-ը կամ անելու աշխատանքներն էին, որ գյուղացին պարտավոր էր կատարել դարձյալ իր կամով ու լծկաններով: Կարող էին լինել, իհարկե, դեպքեր, երբ գյուղացին վարուցանի ու կալի պարտադիր աշխատանքները պետք է աներ կալվածատիրոջ գործիքներով ու լծկաններով, բայց այդ, իմ կարծիքով, չէր լինի այլևս «վեցկէ կոռ» կամ «կամին կոռ», այլ կլինեի «մարդոյ կոռ»: «Սայլի, եղին, իշո կոռ»-ը հասկանալի են: Այդ այն պարտադիր ձրի աշխատանքներն էին, որ գյուղացին անելու էր կալվածատիրոջ մոտ իր բեռնակիր անասուններով կամ սայլով: Այս «կոռ»-ը հիշվում է նաև Մխիթար Գոշի Դատաստանադրքի Ա կանոնում (Բ մասն, էջ 316)՝ «Ձիոյ և ջորւոյ և իշոյ մի լիցի հարկ, զի նորօք բաղում անգամ¹⁵ ծառայէ զտէրունիսն»:

Գոշի Դատաստանադրքում առանձնապես կարևոր է հետևյալ վկայությունը «կոռ»-ի քանակական չափի մասին. «Այսպես եւ յաւուրս շարաթույ եօթնէ մին գործիցի իշխանին եւ տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է» (մասն Բ, Ա, էջ 315):

Այս տեղեկությունը, ինձ թվում է, որ մոտավորապես համապատասխան պիտի լինի «կոռ»-ի օրերի միջին քանակին, որ, ըստ երևութիւն, սովորական է եղել ԺԲ-րդ դարի երկրորդ կիսում: Նույն կանոնի վերջին խոսքերից կարելի է սակայն հետևեցնել, որ իրական կյանքում գոյություն են ունեցել «կոռ»-ի ավելի ծանր պայմաններ:

¹⁵ Այս կանոնի առթիվ Վ. Բասդամյանցը ծանոթության մեջ հաղորդում է, որ «Իր օրինակի մեջ լուսանցքի վերա դրած է՝ պատահմամբ (փխ. «բազում անգամ»), իսկ № 488, 749 և Սին. Կարապ. օր. մեջ գրած է տողի ընթացքում՝ միայն պատահմամբ ծառայել նորօք զտէրունիսն»: Հիմնվելով այս ծանոթության վրա, կառելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ Դատաստանադրքի խմբագրությունից հետո այս «կոռ»-ը եղել է որոշ տեղերում պատահական ու բացառիկ: Բայց հնարավոր է նույնպես, որ սրբագրողները, շեշտելով այս «կոռ»-ի պատահական լինելը, նպատակ ունեն արգարացնել ձիուց, ջորուց և իշուց առնվող հարկերը:

Ուշագրության արժանի է նույն կանոնում նաև հետևյալ հատվածը՝ «յեօթնէ մին գործիցի իշխանին ու տէրունի»։ Այս խոսքերից կարելի է, իմ կարծիքով, հետևցնել, որ շինականները «կոռ»-ի պարտականութիւն են ունեցել բացի իրենց անմիջական տիրոջից նաև երկրի իշխանի հանդեպ, որին ենթարկված էր գաղառը կամ շըրջանը։

«Կոռ»-ի 52 օր տևողութիւնը պետք է համարել շինականների համար բավական ծանր թեև, պետք է ասել, որ Արևմտյան Եվրոպայում նույն այդ ժամանակները գոյութիւն են ունեցել «կոռ»-ի շատ ավելի ծանր պայմաններ։ Յ. Կուլիշերի ասելով, Բ—Ժ Արեւորում «կոռ»-ի աշխատանքներն Արևմտյան Եվրոպայում, սովորաբար, կազմել են ճորտական գյուղացիութեան աշխատանքի օրերի կեսը՝ երեք օր շաբաթվա ընթացքում⁴⁶։ Այս վկայութիւնը մոտավորապես ճիշտ կարող է լինել, իմ կարծիքով, գյուղացիութեան ճնշված ու ստորին խավերի համար։ Ինչպես հայտնի է, նույն այդ ժամանակաշրջանում, նայած տեղին ու ժամանակին, գյուղացիութեան մի ստվար մասը գտնվել է Արևմտյան Եվրոպայում ավելի ազատ ու տանելի վիճակում և պարտավոր է եղել աշխատել կալվածատիրոջ մոտ, մեծ մասամբ, 12 օր տարվա ընթացքում, իսկ երբեմն՝ դրանից էլ պակաս։

Ի նկատի առնելով հայ շինականների համեմատաբար բարեկեցիկ դրութիւնը, Ե—ը դարում, ինչպես կարելի է, իմ կարծիքով, եզրակացնել Շահապիվանի ժողովի կանոններից⁴⁷, ինձ թվում է, որ «կոռ»-ը եթե նա գոյութիւն ունեցած լիներ հնագույն այդ շրջանում, կարող էր ավելի մեղմ եղած լինել, քան Բագրատունյաց ու հետագա ժամանակներում։

Վերև առաջ բերված «կոռ»-ի վերաբերյալ վկայութիւններից հետաքրքիր է, մասնավորապես, 1059—1064 թվի Անիի արձանագրութիւնը, որի բովանդակութիւնից երևում է, որ «կոռ»-ի պարտականութիւններ ունեցել է Անիի մայրաքաղաքը։ Անուամբ Տեառն ամենակալի ու ողորմութեամբ սուրբ եւ ինքնակալ Թագաւորին Կոստանդնուպոլիս, — հաղորդում է արձանագրութիւնը, — կամ եղև իմ Բագրատ մաղիստոսիս եւ արեւելից կատապանիս Վիկացոյս առնել ողորմութիւն մայրաքաղաքին Անիտ, յորժամ առին զտանու-

⁴⁶ SK^u I. М. Кулишер, Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград, 1918, էջ 48.

⁴⁷ SK^u 2. Մաճանդան, Դիտողութիւններ հին Հայաստանի շինականների գրութեան մասին մարզպանութեան շրջանում, Երևան, 1925, էջ 41.

տրութիւնս Մխիթար իպատոսն, Կրտին որդին, եւ Գրիգոր, Լապաստակի որդին, սպաթար կանկիտատն, եւ Սարգիս, Արտաւազայ որդին, սպաթար կանկիտատն, և ազատեցին զվեցկէ կոռ, եւ զսայլի եւ զկամին, եւ զանգարիոն եւ կատապան ով եւ լինի, տա սերմ ու մող եւ ծախք զընծելոցըն. զայլն տանուէրքն առնեն իւրեանց տամբ, որ չհասնի ի յԱնի ոչ ինչ ոյժ» (Վիմ տարեգ., էջ 27):

Արդ, ինչպե՞ս պիտի հասկանալ արձանագրութեան այս վկայութիւնը, որ «կոռ»-ի պարտագիր աշխատանքներից ազատել են Անի մայրաքաղաքը, Դժվար է, իհարկե, ենթադրել, որ «կոռ»-ի պարտականութիւններ կարող էր ունենալ Անիում բնակվող «ազատ»-ների դասը: Ըստ երևութիւն, այս վկայութիւնը վերաբերում է «ռամիկ» ժողովուրդին, հավանորեն, Անիի տանուտերերի իշխանութեան տակ գտնվող այն «ռամիկ շինականներին», որոնք գտնվել են ճորտական վիճակում:

Վերոհիշյալ վկայութիւններում հիշատակված են նաև «կոռավար» հողեր, որոնք նվեր էին տրված եկեղեցիներին կամ վանքերին: «Կոռավար» բառը գործ է ածված, անշուշտ, այն հողերի վերաբերմամբ, որոնք մշակված էին «կոռ»-ի միջոցով:

Արդ, եթե այդ հողերը նվեր էին տրվում, իբր «կոռավար», ինչպես ասված է արձանագրութիւններում, հարց է առաջ գալիս, թե արդյոք այդ հողե՞րն էին միայն անցնում եկեղեցուն, թե՞ նաև «կոռ»-ը, այսինքն՝ նաև նրանց մշակման պարտադիր ձրի աշխատանքները: Քանի որ արձանագրութիւնների մեջ շեշտված է, որ նվեր են տրվում «կոռավար» որոշ հողեր, ինձ հավանական է թվում, որ «կոռ»-ի աշխատանքներն այնուհետև կատարվելու էին նույն հողերի վրա նոր տիրող օգտին: «Կոռավար» հողերի օտարացման ու փոխանցման վերաբերյալ կարևոր այս խնդիրը կարող է, իհարկե, դեռ առանձին քննութեան նոր ավելի որոշ փաստերի օգնութեամբ:

«Կոռ»-ի նշանակութեան վերաբերմամբ կա մի քնդհանուր հարց ևս, որ հարկավոր է պարզել: Ֆրանսիական *corvée*-ն և գերմանական *Frohndienst*-ը, ինչպես հայտնի է, ունեցել են ընդարձակ իմաստ և գործ են ածվել նաև պետական ու հասարակական բնույթ ունեցող աշխատանքային պարտականութիւնների համար: Այդպիսի աշխատանքներ էին, օրինակ, ճանապարհների շինութիւնն ու նորոգումը (*corvée des routes*), փոխադրական միջոցների հայթայթումը ևն:

Ռուսաստանում, ընդհակառակը, *барщина* կոչվել են միայն այն պարտադիր ձրի աշխատանքները, որ կատարվել են կալվածա-

տիրոջ օգտին: Հայկական «կոռ»-ը ունեցել է, իմ կարծիքով, նույն-պիսի ընդարձակ իմաստ, ինչպես corvée-ն և Frohndienst-ը: «Կոռ»-ի այդ ընդարձակ իմաստը ժէ-րդ դարում պարզ երևում է Զաքարիա սարկավազի հետևյալ հետաքրքիր վկայություններից. 1. Պատմագրություն, Վաղարշապատ 1870, Հատ. Ա. էջ 45՝ «Սա (Ամիրգունայ խանը) ի տիրելն իւրում նրեանայ, իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան: Նախ սկսաւ շինել զբերդն, և ապա ապարանս, և զայգիս, և զբուրաստանս, և զպարտէզս, և հանել զառուս, և առաւելուլ զշուրսն: Այլ և ի տեղիս տեղիս թեթևացոյց զհարկն, և եբարձ զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց: Բայց զի բազմացոյց զսուխրայն՝ այսինքն կոռն. քանզի որպէս ասացաք՝ թէ շինուածս առնէր. վասն այնորիկ բազմացոյց զկոռն»: 2. Նույնը, Հատ. Բ, էջ 11՝ «և հրամայեաց Քօռ-իսպնատարն սուխրայ հանել՝ այսինքն կոռ՝ առ ի պեղել զծիւնն, և բանալ ճանապարհ զօրացն. և զոր ինչ ի ցերեկի պեղէին, գիշերն (իգիշերին) լնոյր հոսանն. բաղումս շարշարեցան, և ոչ եղև օգուտ ինչ»:

Ինձ թվում է, որ նույն այս ընդարձակ նշանակությունը «կոռ»-ը, հավանորեն, ունեցած կլինեիր նաև հնագույն ժամանակներում: Մխիթար Գոշի վերոհիշյալ վկայությունը, որ «յաւուրս շաքաթույնօթն է մին գործիցի իշխանին եւ տէրունի» (էջ 315)՝ կարող է թերևս մի ակնարկ համարվել «կոռ»-ի այդ լայն նշանակության ժժ-րդ դարում: Այս հատվածում «տէրունի» անվանված աշխատանքները, անշուշտ, այն «կոռ»-ն է, որ պահանջվում էր կալվածատիրոջ օգտին, իսկ «իշխանին» անվանվածը՝ կարող է վերաբերվել այն պետական ու հասարակական բնույթ ունեցող պարտագիր աշխատանքներին, որ կատարվելու էին երկրի իշխանի հրամանով: Ինչպես ժէ-րդ դարում, նույնպես և այս շրջանում, «կոռ» են անվանվել, հավանորեն, թե առաջին և թե վերջին կարգի աշխատանքները:

Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում, ինչպես վերև տեսանք, հիշատակված է եղել բացի «կոռ»-ից նաև «պահակութիւն»-ը: «Ոմանք յազատաց, — ասված է եղել կանոնում, — ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և յրմպելիս զիրեանց գործակալս մատուցանեն, կոռով և պահակութեամբ նեղեն ղողորմելի եղբարսն շարշարեն անխղճաբար»: «Պահակութիւն»-ն այս հատվածում, ինչպես երևում է այդ բառի այժմյան իսկ նշանակությունից, ջստ երեւելովին, պարտադիր ձրի աշխատանքներն էին՝ պահպանության ու

հսկողության, որ գոյություն են ունեցել նաև Արևմտյան Եվրոպայում։ Որ «պահակութիւն»-ը «կոռ»-ի հատուկ մի տեսակն է եղել ոչ միայն յոթերորդ, այլև հինգերորդ դարում, այդ կարելի է գուշակել նոր Կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ հունարեն *angareuo* (լատիներեն *angario*) բառի դիմաց, որ գործածական էր պարտադիր ձրի աշխատանքների համար, հայերենն ունի «պահակ ունել» (Մատթ. ԻԵ, 32, Մարկ. ԺԵ, 25) կամ «տարապարհակ վարել» (Մատթ. Ե, 41) համապատասխան թարգմանությունը։

ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ՝

1. ԾԻՐԱԿԱՑՈՒ ԿՇԻՌՆԵՐԸ ԵՎ «ՊԱՑՈՒԱՍԻԿ»-Ը

Անանիա Շիրակացին «Յաղագս կշոռց և շափուց» գրվածքի մեջ ունի «պայուասիկ» բառը հետևյալ հատվածում.

«Դրամ ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթ ոչ (յարծաթոջ) տպաւորեցաւ, որ Զ մասն լտեր. և սատեր Դ դրամաց կշիռ. և պայուասիկն Ծ լիտր է, որ է Ռ սատեր, որ լինի Տ գրամի կշիռ և թիւ» (տե՛ս Անանիայի Շերակունւոյ, Մնացորդք բանից, ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբ. 1877, էջ 28—29: Ծանոթութեան մեջ Ք. Պատկանյանը ենթադրում է ամբողջ այս հատվածն աղճատված և հարկ է համարում ուղղել: «Հատուածս այս,— ասում է նա,— լի է վրիպակօք և ըստ կարծեաց Հ. Աւգերեանի միջանկեալ թուի լինել և ոչ Շիրակացւոյն. տես կշոռց ևն յեր. 26: Մեք զայս ձև օրինակի տամք բնագրին.— Դրամն է 12Դ մասն լտեր (այն է ԺԲ զարեհատ), և սատեր է Գ դրամաց կշիռ, և պայուասիկն Ժ լիտր է, այն է (960, կամ մերձաւորապէս) Ռ սատեր, որ լինի (3840, կամ մերձաւորապէս) Տ դրամակշիռ: Յաղագս պայուասիկի տես ի Պատմ. Սեբեդուսի, գլ. 1է. զի անդէն ի նոցանէ միոյ միոյ ամի առնուին ՅԿԾ պայուասիկ (ի ձեռագիր օրինակին մեր՝ պայուասիկ) դրամ»:

Ք. Պատկանյանի այս ուղղումը միանգամայն սխալ է: Անանիա Շիրակացու բնագիրը ոչ միայն ուղիղ է, այլև իրիստ ուշագրաւ ու հետաքրքիր մի վկայութիւն է, որ հնարավորութիւն է տալիս որոշելու թե «պայուասիկ»-ը և թե Շիրակացու մյուս կշիռներն այժմյան կիլոգրամներով:

Տե՛ս «Գիտութեան և Արվեստի Ինստիտուտի տեղեկագիր», № 2, Երևան, 1927 թ.:

Շիրակացու ժամանակ բազմազան ու տարբեր սխտեմի կշիռներ կային, ուստի և խիստ դժվար էր որոշել, թե որ լիտրը և տաղանգը հիմք է ընդունվել Շիրակացու գրվածքում: Վերոհիշյալ հատվածը, որ համարվել է աղճատված՝ ոչ միայն աղճատված չէ, այլ խիստ կարևոր մի վկայություն է, որով լուսաբանվում են Շիրակացու բոլոր կշիռները:

Շիրակացու վկայության մեջ՝ «դրամ ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթո՞ւ² տպաւորեցաւ, որ է 2 մասն լտեր»՝ ի նկատի է առնված, անտարակույս, Սասանյան արծաթ դրամը³, որի կշիռը, ինչպես հայտնի է, մոտավորապես, չորս դրամ էր³:

Եթե Սասանյան արծաթ դրամը կազմում էր լիտրի 1/80-ը դրամը՝ միանգամայն պարզ է, որ Շիրակացու լիտրը հռոմեական սխտեմի լիտրն է, որը, ինչպես հայտնի է, բաբելոնական տաղանգի 1/100 մասն էր և հավասար էր այժմյան կշռով 326,4 գրամի⁴:

Այդ լիտրը հենց սովորական էր Բյուզանդական կայսրության մեջ և նրա ճիշտ կշիռը պետք է ուրեմն ընդունել ոչ թե մոտ 324 գրամ, ինչպես ունեն Ch. Diehl-ը⁴ և Հ. Օրբելին⁵, այլ 326,4 գրամ:

Սասանյան արծաթ դրամը, լինելով 1/80 լիտր, հավասար է եղել, ուրեմն, ասորական drachmê-ին և ատտիկյան թույլ drachmê-ին⁶ և նրա իսկական ու ճիշտ կշիռը եղել է 4.08 գրամ:

Շիրակացու լիտրի և դրամի ճշտմամբ որոշվում են աֆուհետե և այժմյան գրամներով՝ ինչպես նրա հիմնական բոլոր կշիռները, նույնպես և պարսկական «պայուասիկ»-ը: Ստացվում է կշիռների ոչ թե մոտավոր, այլ միանգամայն ճիշտ հաշիվը, որ հետևյալն է.

1 լիտր = 12 ունկի = 72 դահեկան = 80 պարս. դրամ՝ 326,4 գրամ.

² Բնագրի «յարծաթ ոչ» պետք է ուղղել «յարծաթոջ»:

³ Տե՛ս E. A. Пахомов, Монетные клады Азербайджана. Труды Общ. обсл. и изучения Азербайджана, вып 3, 1926: Նաև իմ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», Տեղեկագիր ՀՍՖՍՀ Գիտ. և Արվ. Ինստիտուտի, Երևան, 1926, № 1, էջ 11, ծանոթ.:

⁴ Տե՛ս I. A. Decourdemanche. Traite pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes, 1909. էջ 22.

Ch. Diehl. Justinien et la civilisation byzantine au VI siecle. Paris 1901, էջ 537.

⁵ Տե՛ս И. А. Орбели, Вопросы и решения вардапета Анании Ширакца, Петрогр., 1918, էջ 24.

⁶ Decourdemanche, էջ 24.

1 ունկի= $1/12$ լիտր= 6 դահեկան= $6 \frac{2}{3}$ պ. դրամ՝ 27,2 գրամ.

1 սիկղ= $1/48$ լիտր= $1/4$ ունկի= $1 \frac{1}{2}$ դահ.= $1 \frac{5}{9}$ պ. դրամ՝ 6,8 գրամ.

1 դահեկան= $1/72$ լիտր= $1/6$ ունկի= $1 \frac{1}{9}$ պ. դրամ՝ 4,53 $1/3$ գրամ.

1 պ. դրամը= $1/80$ լիտր= $3/20$ ունկի= $9/10$ դահեկան՝ 4,08 գրամ.

1 սատեր= 4 դրամ՝ 16,32 գրամ.

1 կենդինար= 100 լիտր՝ 32 կիլ. 640 գրամ.

1 տաղանդ= 125 լիտր= 9000 դահեկան= 40 կիլ. 800 գրամ.

1 «պայուասիկ»= 50 լիտր= 1000 սատեր= 4000 պարս. դրամ («կշիռ և թիւ»)՝ 16 կիլ. 320 գրամ.

Պարսկական «պայուասիկը»-ը, ինչպես տեսնում ենք, հավասար է եղել $1/2$ կենդինարի:

Սերեոսը, խոսելով մարաց ապստամբության մասին արաբական ծանր հարկապահանջության պատճառով, հիշում է նույն այս «պայուասիկ»-ը հետևյալ հատվածում. «Քանզի ոչ կարացին համբերել դառն և դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն՝ որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանն միոյ միոյ ամի առնուին Յկն պայուասիկ դրամ. և որ ոչն կարէր տալ, առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, և ի բաց բարձին զհեծելութիւն և զիշխանութիւն աշխարհին» (Պետերբ. 1879, գլ. 1է, էջ 147):

«Պայուասիկ»-ը վերև տրված հաշվով հավասար էր 4000 Սասանյան արծաթ գրամի= 16 կիլ. 320 գրամ, ուրեմն՝ Մարաստանի հարկը, լինելով Յկն «պայուասիկ», անում է 365. 4000= $1.460.000$ Սասանյան արծաթ դրամ, իսկ նրա կշիռը= $365.16.320=5956$ կիլոգր. 800 գրամ:

«Պայուասիկ»-ի կշիռը, նաև նրա դրամական քանակը, ինչպես տեսնում ենք, շատ պարզ որոշվում է:

«Պայուասիկ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռների ճշտումը կարևոր ու ուշագրավ է այն տեսակետից, որ հնարավորութիւն է տալիս լուսաբանելու արաբական աղբյուրների այն վկա-

7 Ի նկատի է առնված ասորական statér-ը, որի կշիռը եղել է իրոք 16,32 գրամ: Անանիա Շիրակացու մոտ (էջ 27) հիշատակված է նաև մի ուրիշ սատեր շատ փոքրից, որը կազմում է ունկիի $1/8$ մասը, ուրեմն՝ 3,4 գրամ: Սատերների այս տարբերությունն է, որ շփոթեցրել է Ք. Պատկանյանին և հիմք ծառայել նրա վերոհիշյալ սխալ ենթադրության:

յությունները, որ վերաբերվում են Սասանյան Պարսկաստանի եկամուտներին ու հարկերին:

Օրինակ՝ Տաբարիի մոտ հանդիպում են մի քանի անգամ դրամական խոշոր գումարների հաշիվներ, որոնց մեջ հիշատակված է, իմ կարծիքով, հենց նույն այս «պայուասիկ»-ը որ Noeldeke-ն թարգմանել է Beutel⁹: Տաբարիի այդ վկայություններից երևում է, որ «պայուասիկ»-ն իբրև դրամական մեծ կշիռ նույնքան տարածված ու սովորական է եղել Սասանյան Պարսկաստանում, ինչպես «կենդինար»-ը Բյուզանդական կայսրության մեջ:

Տաբարիի պատմելով, խոսքով Պարվեզն իր թագավորության 18-րդ տարում (607/8 թվին) կարգադրել էր հաշվել պետական ամբողջ մուտքը, որ ստացվել էր իր երկրների հարկերից և եկամուտների ուրիշ բոլոր ազբյուրներից: «Նրան զեկուցանում են,— վկայում է Տաբարին,— որ այդ տարում նրա եկամուտները հոդային հարկից ու մյուս աղբյուրներից կշռում են կտրված փողով 420 միլիոն «mithqāl» և այդ գումարը, հաշվելով 10 «dirham»-ը 7 «mithqāl», անում է 600 միլիոն «dirham»: Նա հրամայում է այդ փողը տանել գանձատուն, որ ինքը կառուցել էր Տիզբոնում և անվանել Բահար... խոսքով: Նույն տեղը բերում են հին դրամներով, որ կարել էին Հազկերտի որդի Պերոզը և Պերոզի որդի Կավատը 12.000 Beutel՝ յուրաքանչյուր Beutel-ը կտրված փողով 4000⁹ «mithqāl», ուրեմն՝ ընդամենը 48 միլիոն «mithqāl», որ 7 առ 10 հարաբերությամբ անում է $68,571,428 + \frac{1}{2} + \frac{8}{5}$ «dirham»¹⁰:

Th. Noeldeke-ն ենթադրում է, որ mithqāl-ն այստեղ, հավանորեն, պետք է հասկանալ իբրև Սասանյան արծաթ դրամի կշիռ: Այս ենթադրությունը հաստատվում է, իմ կարծիքով, «պայուասիկ» կշռի վերահիշյալ որոշմամբ: Տաբարիի վկայությունների մեջ Beutel-ի կշիռը «կտրված դրամով» 4000 «mithqāl» է¹¹, իսկ Շիրակա-

⁹ Տե՛ս Th. Noeldeke. Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, 1879, էջ 355—376 և 377:

⁹ Տաբարիի զերմաներեն թարգմանության մեջ տպված է 40.000, որ պարզապես վրեպակ է:

¹⁰ Տե՛ս Th. Noeldeke, Tabari, էջ 355—356

¹¹ Տե՛ս Th. Noeldeke, Tabari, էջ 356՝ «ebendahin wurden auch an älteren Münzen von Pêrôz, Sohn des Jazdegerd, und von Kawâdh. Sohe des Pêrôz, gerâgt 12000 Beutel gebracht, jeder Beutel zu 4000 Mithqal in gemünztem Gelde, also im ganzen 48 Millionen Mithqal էջ 376 «an gemünztem Geld 20000 Beutel, enthaltend 800 Millionen Mithqâl» էջ 377 «an gemünztem Geld 400 000 Beutel enthaltend 1600 Millionen Mithqal».

ցու մոտ, ինչպես տեսանք, «պայուասիկ»-ը «լինի 4000 դրամի կշիռ և թիւ»։ Այս համեմատութիւնից կարելի է հետեցնել, որ Beutel-ը համապատասխան լինելով «պայուասիկ»-ին, «mithqâl»-ը ևս գործ էածված նույն վկայութիւններում Սասանյան արծաթ դրամի կշռի իմաստով։

«Պայուասիկ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռները, ինչպես տեսանք, այժմյան գրամներով հավասար էին, առաջինը՝ 16 կիլոգր. 320 գր., իսկ երկրորդը՝ 4,08 գր.։ Ուրեմն՝ այս կշիռների համաձայն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 606/7 թվին պետք է ընդունել $420.000.000 \times 4,08 = 1.713.600$ կիլոգրամ Սասանյան արծաթ դրամ կամ 105.000 «պայուասիկ»։

Հիմնվելով դրամագետ Pertsch-ի հաղորդած տվյալների վրա և ընդունելով Սասանյան դրամի արծաթի արժեքը մոտ 70 պֆեննինգ կամ 86 սանտիմ, իսկ արաբականինը (հնագույն շրջանի)՝ մոտ 40 պֆեննինգ կամ 50 սանտիմ՝ Th. Noeldeke-ն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 607/8 թվին հաշվում է՝ Սասանյան «դրամ»-ով՝ մոտ 294 միլիոն մարկ կամ 360 միլիոն ֆրանկ, իսկ արաբական «դրամ»-ով՝ միայն 240 միլիոն մարկ կամ 300 միլիոն ֆրանկ¹²։ Այս երկու հակասական թվերից Noeldeke-ն հավանական է համարում առաջինը։

Arthur Christensen-ը իր «L'empire des Sassanides» (Kobenhavn 1907, էջ 58) աշխատութիւն մեջ հիմնվել է նյութեկերի նույն այս հաշիվների վրա, սակայն առանց որևէ բացատրութիւն գերադասութիւն է տվել երկրորդ թվին, ընդունելով արաբական դրամի արծաթի արժեքը 50 սանտիմ¹³։

Աղուֆ Կրեմերը, որ օգտվել է Իբն խորդադեբի և Կոդամայի աղճատված վկայութիւններից, Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 606/7 թվին ենթադրում է 420—600 միլիոն «dirham», անուշադիր թողնելով «mithqâl»-ի և «dirham»-ի 7-ը առ 10-ը հարաբերութիւնը՝ 420 միլիոն «mithqâl» = 600 միլիոն «dirham» (Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien. 1875, էջ 275)։

¹² Տե՛ս Th. Noeldeke, Tabari, էջ 355, ծան. 1.

¹³ Հաշվելով զանձատան ամբողջ գումարը 468 միլիոն մսխալ Arth. Christensen-ն այդ ամբողջ գումարի արժեքը հավասար է համարում մոտավորապես 336 միլիոն ֆրանկի։ Ուրեմն՝ 606/7, թվի պետական ընդհանուր եկամուտը նա ընդունում է մոտ 800 միլիոն ֆրանկ, իսկ Պերոզի ու Կավաթի ժամանակներից մնացած հին զբաղման արժեքը մոտ 36 միլիոն ֆրանկ։

վերոհիշյալ ենթադրությունները, իմ կարծիքով, վիճելի են, որովհետև չեն համապատասխանում վերև ճշտված կշիռների հաշվներին:

Տարաբրի վկայությունների մեջ «mithqāl»-ը ինչպես տեսանք, գործ էածված որպես կշիռ Սասանյան արծաթ «dirham»-ի Պարսկական այդ «mithqāl»-ը, ըստ երևութի, անսովոր էր արաբական ժամանակներում, ուստի անհրաժեշտ է համարվել վերոհիշյալ գումարները հաշվել նաև արաբական «dirham»-ով, որի կշիռը եղել է $7/10$ «mithqāl»: Հիմնվելով Բելազորիի վկայության վրա Թ. Նյուդեկեն մատնացույց է անում, որ կային տարբեր «dirham»-ներ, որոնց կշիռը հավասար է եղել 1 կամ $4/5$, կամ $1/2$ «mithqāl»-ի¹⁴, եվ իրոք, արաբական օրինական «mithqāl»-ը, ինչպես հայտնի է, հավասար էր այժմյան $5 \frac{2}{3}$ գրամի, օրինական «dirham»-ը՝ $3,96 \frac{2}{3}$ գրամի ($= \frac{4}{5}$ «mithqāl») և Արզլ-Մելիքի «dirham»-ը՝ $2,83 \frac{1}{3}$ գրամի ($= 1/2$ «mithqāl»)¹⁵:

Տարաբրի վկայություններում, իմ կարծիքով, ի նկատի է առնված հենց այս վերջին հնագույն-ժամանակի Արզլ-Մելիքի «dirham»-ը, որի հարաբերությունը Սասանյան «mithqāl»-ի կամ արծաթ դրամի հանդեպ գրեթե 7 -ը առ 10 -ն է՝ $2,83 \frac{1}{3}(3):4,08$:

Նոր այս ենթադրությամբ ոչ միայն վերանում է մարկերով ու ֆրանկներով հաշված գումարների անհասկանալի տարբերությունը, այլև ստացվում է Սասանյան Պարսկաստանի 606/7 թվի ընդհանուր մոտքի համար տարբեր գումար: Ընդունելով «mithqāl»-ը որպես Սասանյան դրամ մաքուր արծաթից և նրա կշիռը՝ $4,08$ դրամ, այդ դրամն արծաթի իր պարունակությամբ համապատասխան պետք է համարենք այժմյան արծաթ ռուբլու $22 \frac{2}{3}$ կոպեկին: Սասանյան Պարսկաստանի եկամուտը 606/7 թվին կլինի այս հաշվով $420.000.000 \cdot 22 \frac{2}{3} = 95.200.000$ արծաթ ռուբլի:

Իրապես, եկամուտը կարող էր այդ գումարից մի փոքր պակաս լինել, եթե Սասանյան արծաթ դրամն ունեցած լիներ մաքուր արծաթի հետ որոշ տոկոս խառնուրդ¹⁶:

¹⁴ Tabari, էջ 335, ծանոթ. 1.

¹⁵ Sâ'û J. A. Decourdemanche. Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes. Paris, 1909, էջ 25, 26, 27, 28 և 47.

¹⁶ Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում նախորդ իմ աշխատության մեջ սասանյան արծաթ դրամի դրամական արժեքը ես հավասար էի համարել մոտավորապես այժմյան 25 կոպեկին (էջ 11): Ինչպես տեսնում ենք նրա արժեքն արծաթ 25 կոպեկից պակաս է և առ առավելն հավասար է $22 \frac{2}{3}$ կոպեկի, եթե սասանյան այդ դրամը ենթադրենք մաքուր արծաթից:

2. «ԱՊՈՒՌԻՇԻ»

«Ապուռիշի» բառը հանդիպում է Շիրակավանի 1228 թվի արձանագրության հետևյալ հատվածում. «Ես աթաբակ իվանէ և հոշակս վրաց և հայոց թագուհի վասն երկար կենդանութեան հարազատաց մերոց մանդատորթա խուցէս Շահնշահի և ամիր սպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զըրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն» (տե՛ս Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 71):

Այս բառը, ինչպես հայտնի է, դեռևս բավարար կերպով մեկնելված չէ¹⁷:

Մ. Էմինն «ապուռիշի» համարել է իր թարգմանության մեջ գյուղի անուն՝ Апуруш¹⁸, Հ. Ղևոնդ Ալիշանը «Շիրակի» մեջ նույն բառի մասին ունի հետևյալ ենթադրությունը՝ «քանզի ընդ ջրսահի յիշի՝ թուի նույնպէս ջրոյ հարկ նշանակել ըստ ապ (ջուր) արաբացի բառին»¹⁹: Յ. Կարստը «Դատաստանագիրք Սմբատի» իր աշխատության մեջ «ապուռիշի և ջրսահին բաժն» թարգմանել է «Kanal und Schleusenzoll»²⁰,

Պրոֆ. Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանում» (Երևան, 1926 թ.) «ապուռիշի» բառին տրված է հետևյալ բացատրությունը՝ «ջրի առև» նորագյուտ բառ... բառս գտաւ առաջին անգամ Մառ, Сборн. мат. Кавк. 17, 194, որ և կցում է պըս. ābriz «դռլլ, ջրաման, արտաքնոց» բառին, սակայն ոչ ձևով է նման և ոչ նշանակությամբ»:

«Հայաստանի արքունի հարկերը մարզականության շրջանում» վերոհիշյալ իմ ուսումնասիրության մեջ (էջ 21) ես լավագույնն էի համարել եղած լուսաբանություններից Յ. Կարստի ենթադրությունը, վերապահությամբ, իհարկե, որ նրա բացատրությունը ևս չի կարելի ընդունել իբրև հաստատուն և վերջնական:

Ինձ թվում է այժմ, որ «ապուռիշի» բառը որևէ կապ չունի «առուի» ոչ էլ «ջրի ու դռլլի» հետ: Առաջարկում եմ այդ բառի հետևյալ նոր մեկնությունը:

¹⁷ Տե՛ս իմ աշխատությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզականության շրջանում», ՀՍԽՀ ՀԳԽաւության և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագիրք, №1, Երևան, 1926 թ., էջ 21—22:

¹⁸ Армянския надписи, 1881, էջ 51:

¹⁹ Շիրակ, Վե՛նետիկ, 1881, էջ 91:

²⁰ J. Karst, Sempadischer Kodex, 1905, B. II, էջ 234:

«Ապուռիշի» պետք է կարդալ, իմ կարծիքով «ապուռ իշի», իսկ «ապուռ» միջնադարյան «յապուր» հարկն է, որ պահանջվել է անասունների ու ապրանքների անցուղարձի համար հատուկ տեղերում: «Յապուր» բառն այդ իմաստով գործ էածված Լեոն Գ-ի 1288 թվի հրովարտակում: «Եւ յապուր որ տան ընդ յԱյաս ու ընդ Կուկլակ, նայ յայսպէս լիննայ, որ տան ի պրիսիմն ի յըղտայբեոն նոր դրամ քսան ու հինգ, և ի պրիսմէ կտան ի յըղտայբեոն նոր դրամ քսանուհինգ, ի լեղակն ու յախայխիրն զարդ ի պըղպըղէն ու զընջպլէն ու ի պաղղամէն, ի յայլն ի յամենն տան ի յըղտայբեոն նոր դրամ քսան ու հինգ, տան ի շորէբեոն նոր դրամ տասն և ինն, և ի յեշբեոն նոր դրամ տասն ու վեց» (S^h'u Langlois V., Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupénians, Venise, 1863, էջ 157): Պրոֆ. Հր. Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարանում» «ապուր» բառը մեկնել է, իբրեւ փոխառութիւն արաբերենից՝ «արաբ. abûr «անցնիլ» բառից, ճիշտ ինչպես որ նույն հարկի լտ. ձևը passagium բառն նշանակում է «անցք» (էջ 461)²¹:

«Թողաք զգեղիս Շիրակա դապուռ իշի»—այսինքն՝ զապուր իշո պետք է, հավանորեն հասկանալ այն իմաստով, որ 1228 թվին իվանն աթաբեկը և նրա կինը խոշակը Շիրակ գյուղն ազատել են իշաբեոնների «յապուր» հարկից: Որ միջնադարյան pedaticum և passagium²² հարկը գոյութիւն է ունեցել ոչ միայն Կիլիկիայում, այլև և՛ բուն Հայաստանում 1228 թվին, այդ հաստատովում է, ուրեմըն, հետաքրքիր այս վկայութեամբ, եթէ մեր նոր լուսաբանութիւնը համարվի ընդունելի:

3. «ՉԸՓԱՔԱՐ», «ՉԸՓԱՅՔԱՐ»

Այս անծանոթ բառը գործ էածված Սեբեոսի և Ստեփանոս Ասողիկի համապատասխան հատվածներում, որ վերաբերում են այսպես կոչված «Պարսից ժողովին»:

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», հրատ. Բ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ 1879, էջ 122, «Իսկ որք զՓաղկեղոնին և զՎրաց և զԱղուանից կաթողիկոսն, և այլ բազում եպիս-

²¹ «Հայերեն արմատական բառարան», Հատ. Ա, Երևան, 1926:

²² Արձանագրութեան ընթերցվածն աղճատված չէ՞՞ արդյոք արտադրութեան ժամանակ, լավագոյն է, անշուշտ, «իշո», որ կարող է թերևս լինել ճիշտ ընթերցվածը:

կոպոսունք ի Յունաց կողմանէ և իշխանք՝ որք եկեալ էին ի ծառայութիւն պարսից թագավորին, որով և չքփայքարն իսկ հրամայեաց տալն:

2. «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական». հրատ. Ստ. Մալխասյանցի, Ս. Պետերբուրգ 1885, էջ 96, «Իսկ որք զՔաղկեդոնի իվերիոյ և Աղուանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից, որոց զչփաքարն իսկ հրամայեաց տալն»:

Ստեփան Մալխասյանի հրատարակած Ասողիկի ծանոթություններում (էջ 96 և 351—352) առաջ են բերված այդ անծանոթ բառի ձեռագրական տարբեր ընթերցվածները.

1. Ասողիկի առաջին տպագրութեան մեջ (Փարիզ 1859, էջ 97) «զչփաքարն», 2) Կ. Նզյանցի ձեռագրում՝ «զչփաքարն», 3) Բրոսսեի ձեռագրում՝ «զչքփաքածառ»:

Կարապետ վրդպ. Շահնազարյանցը, Ասողիկի առաջին տպագրութեան հրատարակիչը, ենթադրել է առանց որևէ հիմքի, որ «փաքար» բառը նշանակում է գուցե՝ «ռոճիկ, թոշակ» (Փարիզ 1859, էջ 211 ծան. 59):

Ասողիկի ֆրանսերեն թարգմանութեան մեջ Ե. Դյուլոշյեն, հետևելով, ըստ երևութիւն, Կ. Շահնազարյանցին, նույն բառը թարգմանել է provisions («il leur fit fournir des provisions», Ed. Dulaurier, Histoire universelle per Etienne Asoghig de Daron, première partie, Paris 1883, էջ 126 և ծան. էջ 103):

Սեբեոսի պատմութեան առաջին և երկրորդ տպագրութիւնները, ինչպես և Պետերբուրգի Դիտտոյան Անդանիայի գրչագիր օրինակը, ունեն «չքփայքարն» ընթերցվածը (Կոստանդնուպոլիս 5811 և Ս. Պետերբուրգ 1879, էջ 122), որի հավանական նշանակութիւնը լուսաբանված է Ք. Պատկանյանի հետևյալ ծանոթութեան մեջ՝ «թուի լինել պարսիկ բառ՝ pākār կամ pākār, որ նշանակէ զհարկապահանջն և զտուրս հարկաց ի պէտս կալուածատեարց» (Սեբեոս 1879, էջ 122 ծան.):

Ք. Պատկանյանի ստուգաբանական այս բաղդատութիւնը կարևոր է և, անտարակույս, ավելի հիմնավոր է, քան մյուս քմահաճ ենթադրութիւնները:

Ընդունելով «փայքար» բառի ծագումը պարսկերեն pākār-ից, անհավանական չի լինի, իմ կարծիքով, այդ բառը համապատաս-

խան համարել «պեկար, բեկար»-ին, որ քննության է առնված «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» իմ նախորդ աշխատության մեջ (էջ 32—37)։

Լեզվական տեսակետից պարս. pāikâr բառի տարբեր տառադարձությունը հայերենում՝ «փայքար» և «պեկար»՝ այնքան էլ դժվար բացատրելի չէ։ Հայտնի է արդեն, որ պարսկական ր և կ-ն հայերենում տառադարձվել են պ և կ կամ փ և ք. օրինակ՝ կուստ և քուստ, պարտակ և փարտայ, կեշտ և քէշ, կերտել և քերթող, վնասակար, բայց պայքար, պաշտպան, բայց փուշտիպան։

«Փայքար»-ի նույնացումը «պեկար» հարկի հետ համար է նաև այն տեսակետից, որ Սեբեոսի և Ասողիկի վերոհիշյալ հատվածները ստանում են նոր այս լուսաբանությամբ հավանական ու հասկանալի իմաստ։

Սեբեոսի և Ասողիկի պատմելով, «Պարսից ժողովում», որ տեղի էր ունեցել Պարսից խոսրով Բ. Պարվիդի ժամանակ (590—628 թ.), ուղիղ էր ճանաչվել հայոց հավատը ժողովից հետո, ասում են նույն պատմիչները, խոսրով Բ-ը հրաման է տվել քանդել նեստորական եկեղեցիները և սպանել նեստորական եպիսկոպոսներին։ Իսկ քաղկեդոնականներին՝ վրաց և Աղվանից կաթողիկոսներին և Յունաց կողմից²³ և կաթ եպիսկոպոսներին ու իշխաններին՝ նա հրամայել է տալ մինչև անգամ «չըփայքարն»։

Այս տեղեկության պատմական ճշտությունը կարող է գունավորված ու վիճելի համարվել։ Մեզ հետաքրքրում է այստեղ ոչ թե խնդրի պատմական կողմը, այլ միայն «չըփայքար» բառի նշանակությունը։

Եղ. Դյուլորյան Ասողիկի ֆրանսերեն թարգմանության մեջ կարծում է, որ Ասողիկը քաղկեդոնականներին վերաբերյալ այդ հատվածում ուղեցել է ցույց տալ խոսրով Բ-ի անաչառությունը դեպի բոլոր Պարսկաստանին հպատակ բրիտանյա համայնքները։ Իբր թե խոսրով Պարվիզը, ճանաչելով հայոց միաբնակ դավանության գերազանցությունը իր երկրներում, ըստ երևույթին, բարեմիտ վերաբերմունք է ունեցել նաև քաղկեդոնական հոգևորականության հանդեպ և հրամայել է հայթայթել նրանց պաշարը (էջ 192, ծան.)։

Ինձ թվում է, որ կարիք չկա կանգ առնել Եղ. Դյուլորյանի այս բռնադրոսիկ բացատրության վրա։

Սեբեոսի և Ասողիկի համապատասխան հատվածներում, ինչպես տեսանք տրված են նախ որոշ տեղեկություններ հալածանք-

²³ Յոթերորդ դարի առաջին տասնամյակում պարսիկները նվաճել էին Բյուզանդական Հայաստանը և կայսրության արևելյան շրջանները։

ների մասին նեստորականների դեմ և ապա ակնարկված է, հավանորեն, ոչ թե խոսքով Բ-ի բարյացակամությունը քաղկեդոնականների հանդեպ, այլ սրանց նվաստ ու ստորադաս վիճակը հայ միաբնակ եկեղեցու համեմատությամբ: «Որով և շրփալքարն իսկ հրամայեաց տալ» Սեբեոսի խոսքերը, մեր կարծիքով, պետք է հասկանալ հենց այդ իմաստով՝ իբրև նվաստացուցիչ մի փաստ քաղկեդոնական եկեղեցու նկատմամբ: Արդ՝ վերագրելով՝ «փայքար» անծանոթ բառին «պեկար»-ի նշանակություն, մենք իրոք որ ստանում ենք Սեբեոսի վկայության իմաստալից ու բավարար մի նոր լուսարանություն:

Մարզպանական Հայաստանի արքունի հարկերն ուսումնասիրելիս՝ ես ենթադրել էի, որ հայ հոգևորականությունը ձեռք է բերած եղել Հազկերտ Բ-ի հալածանքներից հետո հարկային ինչ որ արտոնություն: Նա ազատ է եղել, ըստ երևույթին, գլխահարկից, բայց պարտավոր է եղել «տալ յարքունիս» «հաս» կամ «պեկար» հարկը, որ ես ենթադրել էի հողային հարկ²⁴:

Արդ՝ Սեբեոսի վկայության մեջ՝ «որով և շրփալքար»²⁵ իսկ հրամայեաց տալ»՝ անհավանական չի լինի, իմ կարծիքով, մեկնել այն իմաստով, որ քաղկեդոնական եկեղեցուց պահանջվել է նույն իսկ «շրփալքար»-ը, այսինքն՝ բացի «փայքար-պեկար» հողային հարկից նաև այն հարկերը, որ «պեկար» չէին:

Եթե ընդունելի համարվի նոր այս ենթադրությունը, այդ դեպքում՝ «փայքար»-ը կամ «պեկար, բեկար»-ը, որ մատենագրական հին վկայություններում ունեցել է, հավանորեն, հողային հարկի նշանակություն, համապատասխան պիտի լինի ոչ թե պարսկերեն bekār-ին, այլ pāikār-ին, որն ըստ Բ. Պատկանյանի նշանակել է թե «հարկապահանջ» և թե «գտուրս հարկաց ի պէտս կալուածատեարց», այսինքն՝ հողային հարկ:

Անհնարին չէ, իմ կարծիքով, որ «փայքար, բեկար»-ը հողային հարկի նշանակությամբ (= pāikār) և «բեկար»-ը պարտադիր ձրի աշխատանքների իմաստով (bekār) տարրեր փոխառություններ լինեն պարսկերենից՝ շփոթված իրար հետ հետագայում հնչյունական նմանության պատճառով:

²⁴ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», էջ 31, 34 և 35.

²⁵ Սեբեոսի առաջին և երկրորդ տպագրություններն ունեն, ինչպես տեսանք, «շրփալքարն» ընթերցվածը, իսկ Ասողիկի երկրորդ տպագրությունը և՛ «զլփալքարն»: Ի նկատի առնելով նույն բառի վերև առաջ բերված ձևագրական տարբերակները՝ ես լավագույն եմ համարում «զլրփալքարն» ընթերցվածը:

4. «ԴԱՀԵԿԱՆ»-Ը ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԵՋ

Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման և լուծման» գրվածքում շորս անգամ հանդիպում է «դահեկան»-ը, իբրև այն ժամանակվա գրամ (հարցումն Գ, ԺԱ, ԺԵ, ԺԹ)²⁶,

2. Օրբելին իր հրատարակության մեջ այդ «դահեկան»-ը համարել է արծաթ դրամ՝ «серебряная монета денарий» (էջ 64):

2. Օրբելու այս ենթադրությունը, իմ կարծիքով, հավանական չէ:

Շիրակացու թվաբանական խնդիրներում «դահեկան»-ը ոչ թե արծաթ դրամ է, այլ գործ է ածված բյուզանդական ոսկի դրամի համար, որի կշիռը Շիրակացու ժամանակ պետք է լիներ, իրոք, մեկ «գահեկան», այսինքն՝ 4 դրամ $53 \frac{1}{3}$ սանտիգրամ: Այդ ոսկի դրամը, ինչպես հայտնի է, անվանվում էր solidus, nomisma, aureus և զանազան դարաշրջաններում ունեցել է նաև այլևայլ տարբեր անուններ ու երբեմն նաև տարբեր կշիռ:

Անանիա Շիրակացին հենց ինքը Յաղագս կշռոց և չափուց»-ի գրվածքում ասում է, «նոմիսմայ ըստ Հռովմայեցւոց դահեկանն անուանի» (Ս. Պետ. 1877, էջ 28): Վենետիկի ձեռագիրներից Բ օրինակը դահեկանի մասին ունի հետևյալ հավելվածը.

«Դահեկանն մի ոսկի է, որոյ կշիռն յամենայն ազինս մի և նույն է, և թե ուրեք գտանիցի պակաս, արտաքոյ քանակին ոսկւոյն է. զոր դադտ անուղղայք արարեալ են» (տե՛ս Հար. վարդ. Ավգերյան, «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց», Վենետիկ, 1821, էջ 27, ծանոթ. 2):

Սվ իրոք, մեր հին մատենագրության մեջ «դահեկան»-ը մեծ մասամբ գործ է ածված ոսկի դրամի իմաստով:

Հին Կտակարանի հայերեն թարգմանության մեջ «դահեկան» են թարգմանված բնագրի chrysus-ը և nomisma-ն, որ ոսկի դրամ են²⁷: «Դահեկան»-ը արծաթ denarion-ի իմաստով հանդիպում է,

²⁶ Տե՛ս И. А. Орбели, Вопросы и решения варданета Ананния Ширакуа, 1918, стр. 18, 22, 23, 25:

²⁷ Դահեկան = chrysus, տե՛ս ՄԵՆ, ԼԵ 28, ԽԵ 22, ԹԻԷ է. 14, 20, 26, 86 Գ. Բաղ. Ժ. 16, Դ. Թաղ. Ե. 5, Ա. Մնաց. ԻԹ. 7, Բ. Մնաց. Թ. 15, 16, Նեեմի է. 71, — դահեկան = nomisma, տե՛ս Ա. մակ. ԺԵ, 6:

Հին Կտակարանի մեջ «դահեկան» է թարգմանված նաև հունարեն drachme—ն հետևյալ հատվածում. «և եղև իբրև դադարեցին ամենայն ուղտքն յըմպելու, և էառ այրն զինդս ոսկիս մի մի ըստ դահեկանի ձուլոյ» (ՄԵՆ.

գլխավորապես, Ավետարանի թարգմանության մեջ²⁸։ Հստ երևույթին, Ավետարանի այդ «դահեկան»-ին (denarion) է վերաբերվում Շիրակացուն վերագրված վենետիկի Գ և Ե օրինակների վկայությունը՝ ըստ ժամանակին դահեկանն Կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթի»²⁹։ Սակայն «դահեկան»-ի այս վերջին նշանակությունը՝ իբրև արծաթ denarion, որ հանդիպում է առավելապես թարգմանական գրականության մեջ, բացառիկ է ու արտասովոր։

«Դահեկան»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է նաև Անանիա Շիրակացու թվաբանական հարցումներում։ Հետաքրքիր է, առանձնապես, նրա ԺԵ-րդ հարցումը.

«Զի մի կայր ինձ ազնիւ, վաճառեցի և գնոցն չորրորդ մասինն կովեան գնեցի, եաթներորդ մասինն այծեան, և մետասաներորդ մասինն եզնի, և երեք հարեւր և ութեւտասն դահեկանի ոչխարս առի։ Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան լինի» (տե՛ս Вопросы и решения էջ 23)։ Հարցման լուծումից իմանում ենք, որ ազնիվ ձին վաճառվել է 616 «դահեկան»-ի։ Այդ գնի չորրորդ մասով (=154 դահեկան) գնված են եղել կովեր, 1/7-ով (=88 դահեկ.)՝ այծեր, 1/11-ով (=56 դահեկ.)՝ եզներ և 318 «դահեկան»-ի՝ ոչխարներ։

Եթե ընդունենք «դահեկան»-ն իբրև արծաթ դրամ և նրա կշիռը մեկ «դահեկան», այն է՝ 4.53 1/3 գրամ³⁰, եզների գնման համար կստացվի ընդամենը՝ 56 «դահեկան», որ այժմյան դրամով պետք է լինի մոտ 14 արծաթ ռուբլի³¹։

Արդ՝ ենթադրելով եզների այս գինը, մոտավորապես, իրականին համապատասխան՝ հարկադրված ենք լինելու եղրակացնել, որ եզի գինը Շիրակացու ժամանակ եղել է մի քանի ռուբլի։

Բոլորովին այլ հետևություն կստացվի, եթե «դահեկան»-ն ընդունենք այստեղ իբրև ոսկի դրամ։

ԴԻ, 22)։ Այստեղ «դահեկան»-ը կշռի իմաստով է, բայց թարգմանությունը հիշա չէ, որովհետև dracme-ն իր կշռով տարբեր էր «դահեկան»-ից։

²⁸ Դահեկան = denarion, տե՛ս ատթ. ԺԸ, 28, Ի. 2, 9, 10, 13, ԻԲ, 19, Մարկ. 2. 37, ԺԲ. 15, ԺԴ. 5, Դուկ. է, 41, Ժ 35, Ի. 24, Յովհ. 2. 7։

²⁹ Տե՛ս Հատ. Ավգեստան, Բացատրություն լատիներեն. էջ 38. Նաև Անանիայի Շիրակունայ, Մնացորդք բանից, Ս. Պետերբ., 1877, էջ 33։

³⁰ Տե՛ս վերև, էջ 118։

³¹ 4.08 գրամ սասանյան արծաթ դրամը հավասար էր, ինչպես տեսանք, 22 2/3 արծաթ կոպեկի, ուրեմն՝ 4.53 1/3 գրամ արծաթ «դահեկան»-ը հավասար կլինի մոտ 25 կոպեկի, իսկ 56 «դահեկան»-ը՝ մոտ 14 արծաթ ռուբլու։

Այս վերջին ենթադրությունը թվում է ինձ ավելի քան հավանական, որովհետև Շիրակացու Ֆաղագոս կշռոց և չափուց» գրվածքի վերոհիշյալ վկայություններից կարելի էր եզրակացնել, որ «դահեկան»-ը, ինչպես հնագույն հայ պատմագիրների, օրինակ, Նղիշի, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի մոտ, նույնպես և Շիրակացու երկերում, ոչ թե արծաթ, այլ ոսկի դրամ է, ամենայն հավանականությամբ, բյուզանդական solidus-ը, որի իսկական կշիռը պետք է լիներ մեկ «դահեկան», այն է՝ 4,53 1/3 գրամ:

Ի նկատի առնելով, «դահեկան»-ի և այժմյան ոսկի ռուբլու կշիռները, կարելի է որոշել նրանց կշիռների հարաբերությունը, բնորոշելով, իհարկե, որ «դահեկան»-ը ևս լիակշիռ էր և պարունակում էր, իրոք, իր մեջ 4.53 1/3 գրամ մաքուր ոսկի:

Լիակշիռ և լիագին «դահեկան»-ն համապատասխան կլինի այս հաշվով 5 ռուբ. 85 ոսկի կոպեկի, որովհետև ռուսական 15 ռուբլիանոցը պարունակում է իր մեջ 11,612 գրամ մաքուր ոսկի: Բյուզանդական լիտրը, ինչպես հայտնի է, 72 «դահեկան» էր և նրա կշիռը՝ 326,4 գրամ³², ուրեմն կշռի տեսակետից նրա համարժեքը այժմյան ոսկի դրամով կլինի 421 ռուբլի 64 կոպ.:

Այսպես էլ հենց հաշվել են բյուզանդական solidus-ի և բյուզանդական ոսկու լիտրի դրամական արժեքը եվրոպական նորագույն երկերում: Օրինակ, Շարլ Դիլը, մատնանիշ անելով, որ Ցուստինիան կայսեր գահակալության ժամանակ պետական գանձարանում եղել է 320.000 ֆունտ ոսկի՝ այդ գումարը համապատասխան է համարում մոտ 360.000.000 ոսկի ֆրանկի³³, Ուրեմն՝ նա ևս բյուզանդական 1 լիտր կամ ֆունտ ոսկին հավասար է համարում մոտ 1125 ֆրանկի, այսինքն՝ 421 ռուբլու կոպեկներով: Շարլ Դիլի այս աշխատության ռուսերեն հրատարակության մեջ 350 միլիոն ֆրանկը վերածված է ռուսական դրամի. вступив на престол Юстиниан нашел в государственном казначействе огромную

³² Տե՛ս վերև, էջ 88.

³³ Charles Diehl *Iustinien et la civilisation byzantine* 24^e siècle, 1901. էջ 310, նման հաշիվ անում է նաև P. M. Sikes-ը, 533 թվի դաշնագրության մասին բյուզանդիան վճարելու էր Սասանյան Պարսկաստանին հովհասյան անցքերը և ամբողջությունները պահպանելու համար 11.000 բյուզանդական ֆունտ ոսկի: Sikes-ը այդ գումարը հավասար է համարում մոտ 1/3 միլիոն ֆունտ ստերլինգի, որ մոտավորապես համապատասխան է վերոհիշյալ հաշիվներին:

пасную сумму в 320.000 фунтов золота, т. е. около 120 миллионов рублей на наши деньги»³⁴.

Հասկանալի չէ, թե ինչու թարգմանիչը հարկ է համարել փոխել բնագիրը: Հայտնի է, որ ֆրանսիական 40 ֆրանկը պարունակում է իր մեջ նույնքան մաքուր ոսկի, որքան և ռուսական 15 ռուբլին ($=11,612$ գրամ): Ֆրանսիական ոսկի ֆրանկը հավասար լինելով $3/8$ -րդ ոսկի ռուբլու, 360 միլիոն ֆրանկը համապատասխան կլինի ոչ թե «մոտ 120 միլիոն ռուբլու» այլ $360.000.000 \times 3/8 = 135$ միլիոն ոսկի ռուբլու, որ իբրև կտոր թիվ միանգամայն համապատասխանում է վերև ճշտված «դահեկան»-ի և բյուզանդական լիտրի դրամական արժեքներին³⁵:

Ընդունելով լիակշիռ «դահեկան»-ը, որ պարունակում էր իր մեջ $4.53 \frac{1}{3}$ գրամ մաքուր ոսկի, հավասար 5.85 ոսկի ռուբլու կամ 15.60 ոսկի ֆրանկի, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ նրա մեջ մաքուր ոսկին կարող էր երբեմն որոշ տոկոս պակաս լինել $4.53 \frac{1}{3}$ գրամից խառնուրդի (лигатура) պատճառով:

Այդ դեպքերում, բնականաբար, համապատասխան տոկոսով պակաս կլինի նաև «դահեկան»-ի ու աշտմյան ոսկի դրամների կըշռական մատնանշված հարաբերությունը: Մեր եզրակացությունը, որ «դահեկան»-ը հավասար է 5 ռուբլի 85 կոպեկի, վերաբերվում է, ուրեմն, լիակշիռ այն «դահեկան»-ին, որի մեջ մաքուր ոսկու քանակը $4.53 \frac{1}{3}$ գրամ էր:

³⁴ Ցե'ս Մ. Диле, Юстиниан и византийская цивилизация в VI веке. 1938. էջ 318: Նույն այս հաշիվն ունի նաև ռուս բյուզանդագետ Յ. Կուլակովսկին. տե'ս Кулаковский, История Византии, т. I, Киев, 1913, стр. 521, «[Анастасий доказал блестящее состояние финансов империи тем, что оставил в наследие своему преемнику огромный фонд в количестве 320 тысяч фунтов золота, т. е. около 120 миллионов рублей на наши деньги

³⁵ Ց. Ուպենսկին, խոսելով Ցուստինյան կայսեր CLII նովեմբրի մասին, որով կարգադրված է եղել ուղարկել տեղերը հարկերի մանրամասն ցուցակները՝ առաջ է բերում տուգանքների դրամները, որ վճարելու էին զանցառու պաշտոնյաները. «если в установленный нами срок означенныя подробныя росписи пода-тей по местам не будут разосланы, то стоящие по главе префектур чины подвергаются пене в 30 золотых литр, начальники провинций в 20 литр. кн. [տե'ս Ист. Визант. Империи, т. I, էջ 593]

Ծանոթության մեջ 30 ոսկի լիտրը նա համապատասխան է համարում մոտ $10\,000$ ռուբլու: Այս հաշվով բյուզանդական լիտրը հավասար կլինի $333 \frac{1}{3}$ ռուբլու, իսկ nomisma-ն կամ solidus-ը՝ 4 ռուբ. 63 կոպ.։ Խեշ փաստերի ու դիտողու-թյունների վրա է հիմնված այս հաշիվը՝ ծանոթության մեջ բնավ բացատրված չէ: Նույն աշխատության մի ուրիշ հատվածում X դարի nomisma-ն կամ պպերոպ-բը՝ հավասար է համարված մոտ $4-5$ ռուբլու. տե'ս Ист. Виз. Имп. էջ 809:

5. «ԱՍՏԱՐԻՈՆ» ԵՎ «ԱՍՊԱՐԻՈՆ»

Կշիռների վերաբերյալ Վենետիկի ձեռագրերի Գ և Ծ օրինակները, որոնց թվահամարները նշանակված չեն 2. Ավգերյանի աշխատության մեջ, ունեն հետևյալ ուշագրավ հատվածները.

1. «Տաղանդն կշռոյ անուն է որ է Նիժ լիտր. և Նիժ լիտրն ինն Ռ ասարիոն ըստ համարոյ»³⁶,

2. «Մոնաթն³⁷ ինն Ռ ասարիոն է. ըստ հելլենական ղեփտոն կոչի, որ է անօսր, որ է դանգ. զոր Քրիստոս հինգ ձագի վաճառ ասաց. և ըստ Եբրայեցոց ասարիոն՝ նուազութիւն կոչի: Ըստ ժամանակին դահեկանն Կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթի»³⁸,

Այս հատվածներում հիշված «ասարիոն»-ի առթիվ 2. Ավգերյանն ունի հետևյալ ծանոթությունը. «Դ (օրինակ) ասպարիոն, որ է վրիպակ գրչի. զի պարտ է լինել ասսարիոն կամ ասարիոն» (էջ 38): 2. Ավգերյանի այս ուղղումը, իմ կարծիքով, վիճելի է: 2. Ավգերյանն ուշադրության չի առել այն, որ «տաղանդ»-ը 9000 ասարիոն չէր, այլ 430,000: Բնագրի վերոհիշյալ ուղղումով ստացվել է մի հաշիվ, որ խիստ դժվար է բացատրել:

Ժիշտ է՝ «ասարիոն»-ը մատենագրական մեր աղբյուրներում հանդիպում է տարբեր իմաստով՝ կամ իբրև երկու զարհհատի կշիռ կամ իբրև դրամ. բայց այս վերջին իմաստով, որքան ինձ հայտնի է, նա շատ փոքր դրամ է, մինչդեռ վերոհիշյալ հատվածներում տաղանդի 1/9000 մասն է, ուրեմն՝ հավասար է մեկ «դահեկան»-ի ($=4.53 \frac{1}{3}$ գրամ):

Հայերեն Ավետարանի մեջ, օրինակ, հունարեն assarion-ը փոքր գրամ է և թարգմանված է «դանգ» (տե՛ս Մատթ. Ժ. 28 և Ղուկ. ԺԲ, 6):

Եթե «տաղանդ»-ը ինն Ռ «ասարիոն» կամ «ասպարիոն» էր «ըստ համարոյ», հավանական կլինի ենթադրել, որ այս վերջինը դրամի անուն է: «Ըստ թուոյ» և «ըստ համարոյ» խոսքերով կշիռ-

³⁶ Տե՛ս Հառ. Ավգերյան, Բացատրություն, էջ 37, 38 նաև «Անանիայի Երթականություն. Մնացորդ բանից», էջ 33:

³⁷ Մոնաթ կամ մոնադ, ինչպես հայտնի է, գործ է ածվել տաղանդի իմաստով, տե՛ս Անանիայի Երթակ., Մնացորդ բանից, 29. նաև 2. Ավգերյան, «Բացատրություն լավուց և կշռոց նախնաց», էջ 26՝ «Տաղանդն Նիժ լիտր է, զսա թուղը մոնադ կոչեն»:

³⁸ Հմմտե՛ք Երթակացու հետևյալ հատվածը «Եւ պայուստիկն Մ լիտր է, որ է Ռ սատեր, որ. լինի Տ գրամի կշիռ և թիւ» (տե՛ս Աճառ. Երթակ. էջ 29 Բացատրություն, էջ 26):

ների վերաբերյալ գրվածքներում ակնարկված են, իմ կարծիքով, դրամները:

Արդ՝ հնարավոր չէ՞ արդյոք իբրև լավագույն ընդունել Գ օրինակի «ասպարիոն» ընթերցումածը: Այս վերջին ենթադրությամբ հասկանալի է դառնում «տաղանդ»-ի և «ասպարիոն»-ի կշռական հարաբերությունը, որ այլապես մութ է ու դժվար բացատրելի: Դրամական այդ նոր միավորի գոյությունը անընդունելի չպիտի թվա, որովհետև «ասպարիոն»-ն անհայտ մի բառ չէ բյուզանդական հունարենում:

Հայտնի է, որ Թուրքիայում գոյություն է ունեցել «ասպր» դրամը: Այս «ասպր» բառի ծագումը ենթադրում են նոր հունարեն «ασπρος»-ից, որը նշանակել է «սպիտակ»: Իբրև ապացույց այս լուսաբանության՝ մատնացույց են անում, որ նույն «ասպր» դրամը Թուրքերենում անվանվել է նաև âqıcha, որի արմատն է aq, այսինքն՝ «սպիտակ»³⁹:

Արդ՝ եթե Թուրքերեն «ասպր»-ը փոխառություն է հունարենից և գործ էածվել արծաթ դրամի իմաստով, հավանական կլինի, իմ կարծիքով, ենթադրել, որ նույն այդ բառը Բյուզանդիայում ևս տարածված է եղել իբրև արծաթ դրամ:

«Ասպարիոն» ընթերցվածը վերոհիշյալ ձեռագրերում կարող է հենց ուշագրավ մի վկայություն համարվել, որ այդ բառն իբրև արծաթ դրամի անուն գոյություն է ունեցել նաև Հայաստանում. հավանորեն, այն դարաշրջանում, երբ գրված են եղել «Գ և Ծ օրինակ» Վենետիկի ձեռագրերը:

Այս ձեռագրերի մասին Հար. վարդ. Ավգերյանը «Յառաջաբանութեան» մեջ հաղորդում է հետևյալ տեղեկությունը.

«Գ և Ծ օրինակք ընտիր են գրչութեամբ, և միաբան ունին զկշիռս և զշափս. միայն երրակի տարբերին յառաջնոյ անտի. նախ՝ զի համառօտագոյն են քան զնա. երկրորդ՝ լուսին ի ճակատու զանուն Անանիայի, և ոչ վերնագիր ի վերայ իւրաքանչիւր կշիռց և շափուց. և երրորդ՝ յաւելուն ի սկզբան անդ զասպարիսական շափս: Վասն որոյ և մեք զսոցա ևս զուղղագիր օրինակ արծան համարեցաք առանձին դնել ի նախադրունս գործոյս զկնի Ասպարիսական շափուց Խորենացոյն» («Բացատրութիւն շափուց և կշիռց», Յառաջաբանութիւն, էջ 5):

³⁹ Տե՛ս «Grande Encyclopédie» հանրագիտական բառարանում «aspre» բառը:

Ինչպես երևում է այս տեղեկությունից՝ Գ և Ծ օրինակներն «ընտիր են զըլութեամբ», ուստի և այս ձեռագրերը կարող են բավական հին լինել: Արդ՝ ի նկատի ունենալով նոր հունարեն aspros-ի նշանակությունն իբրև «սպիտակ», նաև «ասպարիոն»-ի վերոհիշյալ կշիռը՝ հավասար «դահեկան»-ի ($=1/9000$ տաղանդի)՝ կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ «ասպարիոն»-ն իբրև բյուզանդական հատուկ դրամ եղել է, հավանորեն, արծաթ դրամ, որի հնագույն կշիռը համաձայն վերոհիշյալ վկայությունների պետք է ընդունել՝ $4.53 \frac{1}{3}$ գրամ:

ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ¹ (II)

1. «ԽՈՍՏԱԿ»=FEOD, LEHN եՎ «ԽՈՍՏԱԿԻԱՐ»= FEUDATAIRE, LEHNSTRÄGER

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առանձնապես ինձ հետաքրքրում էր հողատիրության խնդիրը և, մասնավորապես, պայմանական հողատիրության՝ feodum-ի կամ Lehn-ի՝ գոյությունը հին Հայաստանում: Ինչպես հայտնի է, feodum-ը կամ Lehn-ը կազմում էր Արևմտյան Եվրոպայում միջնադարյան ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներից մեկը: Հարկավոր էր ինձ պարզել, թե արդյոք գոյություն չեն ունեցել նախարարական Հայաստանում ևս արևմրտյան feodum-ը կամ նման հողատիրական կարգեր:

Այդ կարևոր խնդրի ուսումնասիրության ընթացքում իմ ուշադրությունը գրավեց Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ «խոստակդար» բառը, որի նշանակությունը, իմ կարծիքով, վերջնական կերպով դեռ լուսաբանված չէ: Այն նշանակությունը, որ ես վերագրելու եմ «խոստակդար» բառին, այնքան կարևոր է հայկական ֆեոդալիզմի պարզաբանման համար, որ ես անհրաժեշտ եմ համարում մանրամասն առաջ բերել մատենագրական, ինձ հայտնի, բոլոր հատվածները, որոնց մեջ հիշատակված են «խոստակդար» և «խոստակ» բառերը:

Այդ երկու բառը հանդիպում են Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի մոտ հետևյալ վկայություններում.

1. Աղվանից Վաչագան արքայի 6-րդ կանոնում.

¹ Տե՛ս «Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 4, 1928 թ.:

«Վանաց երէց կամ վանական ոք՝ եթէ ի վանացն գայ-
թանք առնէ և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղոյն
ի բաց արասցեն, ի զխոստակն յեկեղեցին կալցեն» («Մովսեսի
կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի» հրատ.
Մ. էմինի, Մոսկվա, 1860, Ա. գլ. ԻԶ, էջ 66—67):

2. «Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի, Պատմութիւն
նահանգին Սիսական», Թիֆլիս 1911, Գլ. ԼԹ, էջ 206.

«Ծտու ևս տէր Փիլիպպէ զԲերդկաներէլոյ զկէսդ Սառնաքարի
փոխան, և զկէսդ սուրբ եկեղեցւոյդ. և իշխէ ոք հեռացնել՝ ո՛չ եղ-
բայր և ո՛չ որդի և ո՛չ յիմ խոստակդարաց»:

3. Նույնը, Գլ. ԼԹ., էջ 207.

«Երկերիւր և իննսուն երեք թուականութեանս Հայոց, որպէս
կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որգւոյ Վասակայ, Սիւնեաց տեառն, ետու
զՏաթև վասն իմ հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկո-
պոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր. անխուէղբարէ (*) ամե-
նայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյզեօք, մարգա-
գետնովք և ջաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են. և մի ոք
իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոս-
տակդարք հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ և ի սուրբ
հաշէդ»:

4. Նույնը, գլ. Խ. էջ 219.

«Եւ շէն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի, որ նախ տեառն
Ատրնեբսէհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր, ինձ էր տուեալ, և յետ
այնորիկ Հրատահայ, իմ տեառնն, գնեալ էր յիմ եղբօրէն, և ինձ
վաճառեալ և հոգեցատուր արարեալ՝ ետու ևս Քուպղիդուխտ զայդ
շէնդ լերամբք և դաշտով, մարգով և արտով, գետով, ջրով և ցա-
մաքով, ծառովք և տնկովք ի սուրբ հալդ ի Տեփ Սաղօմօն՝ Սիւնեաց
եպիսկոպոս... Եւ մի ևս և մի իմ եղբօրորդիք եւ այլ խոստակդարք
պայքարել և համիմաղ կալ մի իշխեսցեն»:

5. Նույնը, գլ. ԽԳ., էջ 233.

«Եւ յայսմհետէ մինչև հաւիտեան այս լիցի սահման Տաթևոյ
սուրբ ուխտիս. և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել՝ մի Բաղացիք
և մի Որոտնեցիք և մի Վաղանդսցիք, մի Շնհէրացիք և մի Նորե-
ցիք, ի՞նչ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւա-
գաց կամ ի ձեռնաւորաց եւ ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց,
ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի և յերից ժողովոցն նզովեալ
եղիցի»:

Հայկազյան բառագրքի աշխատակիցները «խոստակ»-ը հաս-

կացել են այս հատվածներում իբրև «խոշտակ, զաւակ, մանուկ, ժառանգ», իսկ «խոստակդար»՝ իբրև «խոշտակ յետագայ, այսինքն»՝ զաւակ զաւակի, յետնորդք, թոռունք»։ Նույն բառգրքում «խոշտար» բառին տրվում է հետևյալ լուսաբանությունը. «խոշտար կամ խոստար, որ և խոստակ՝ մանուկ, տղայ, զաւակ, սան, համբակ, ժառանգ որբացեալ»։ «խոստակ» և «խոստակդար» բառերի այս նշանակությունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է այդ բառերի ստուգաբանական ծագման վրա՝ «խոստակ-խոշտակ-խոստար-խոշտար»։ Այդ ստուգաբանությունը սակայն ճիշտ չէ, ուրեմն՝ անընդունելի պիտի համարել նաև վերոհիշյալ ամբողջ բացատրությունը։

Նույնը բառերի ստուգաբանական ուղիղ մեկնությունը տվել է արդեն պրոֆ. Հ. Հյուբշմանն իր *Armenische Grammatik աշխատության մեջ* (էջ 161)։ Ըստ Հյուբշմանի «խոստակ» նշանակում է «Güter, Besitz», այսինքն՝ «կալված, ստացվածք» (=nr. xvăsta, Güter, Besitz), իսկ «խոսդակդար» նշանակում է «der Erbe» այսինքն, «ժառանգ» (=phl. xvastakdar «der Erbe» Pand-nâma 80, eigentlich «Besitzhalter»)։

Հյուբշմանի այս մեկնությունից հետո միանգամայն հասկանալի է դառնում վերև առաջ բերված Աղվանից Վաչագան արքայի վեցերորդ կանոնը։ «խոստակն յեկեղեցին կալցեն» պետք է հասկանալ այն իմաստով, որ հանցավոր «վանաց երէց»-ից կամ «վանական»-ից եկեղեցին առնում էր ոչ թե նրանց որդիներին, ինչպես մինչև այժմ ենթադրել են², այլ նրանց կալվածները կամ հողարածինները։

Այս կանոնն իր բովանդակությամբ համապատասխանում է Շահապիվանի ժողովի երկրորդ և «Ներսեսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» հինգերորդ կանոններին, որոնք նույնպես վերաբերվում են իրանց կոչմանն անհամապատասխան՝ սոգեստ կամ հանցավոր եկեղեցականներին։

«Եթէ կրօնաւոր երէց,—ասված է Շահապիվանի Բ. կանոնում,— գտցի ի պղծութեան և ի պոռնկութեան կամ յայլ գործս չարեաց և

² Տե՛ս Իստորիա Ագван Моисея Каганкатвацци, пер. К. Патканяна, 1861, էջ 67. «խոստակն ի յեկեղեցին կալցեն» Գ. Պատկանյանը թարգմանել է «сынъ взятъ в церковь», սակայն ծանոթության մեջ նա հայտնում է, որ այդ թարգմանությունը կասկածելի է։ Միևնույն ժամանակ նա թարգմանությունը արված է նաև Վաչագանի կանոնների իմ գերմաներեն թարգմանության մեջ և «խոստակն ի յեկեղեցին կալցեն» թարգմանված է «das Kind aber soll man in die Kirche nehmen» տե՛ս Belträge zur albanischen Geschichte, 1897, էջ 46.

ստուգեալ վկայիւք. քահանայութիւնն լուծցի և յեկեղեցոյ քաժնէն հեռացեալ լիցի. 3 դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն. եթէ երէց, եթէ սարկաւագ՝ կանոնս այդ կացցէ, և նոքա ի կարգ զինուորութեան կացցեն և ի հարկս արքունի, և ընդ պաշտօնեայս մի խառնեսցին» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հրատ. Արսեն Ղլտըճ-յանցի, Թիֆլիս 1914, էջ 61):

Իսկ «ներսիսի կաթուղիկոսի և ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» հինգերորդ կանոնը սահմանում է, որ «տագետք մի իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զճայրեմի հող և ջուր կալցեն, և արքունիս հարկ, և դորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանցի, էջ 109):

Վերահիշյալ կանոններում՝ «խոստակն յեկեղեցին կալցեն», «յեկեղեցւոյ քաժնէն հեռացեալ լիցի» և «ղհայրենի հող և ջուր կալցեն»՝ միևնույն իմաստն ունեն։ Հանցավոր կամ տգետ կրօնավորներից և քահանաներից եկեղեցին, ինչպես տեսնում ենք, եւեթ առնում նրանց անջարժ գույքը, հողն ու ջուրը, որովհետեւ այդ գույքը եկեղեցու «քաժին»-ն էր։

Նախորդ աշխատութիւններիցս մեկում ես արդեն մատնանիշ էի արել, որ դեռևս Արշակունյաց թագավորութեան ժամանակ, քրիստոնեութեան տարածման սկզբնական իսկ շրջանում², հոգևորականութեանը տրված են եղել հատուկ հողաքաժիններ։ Այդ հողաքաժինների վերաբերմամբ, ինչպես պարզ երևում է վերևի առաջ բերված կանոններից, նաև Դվինի ժողովի ութերորդ կանոնից, հոգևորականներն ունեցել են միայն տիրութեան և օգտագործման իրավունք, իսկ գերագույն սեփականութեան իրավունքը պատկանել է եկեղեցուն։ Օգտատիրութեան (dominium utile) այդ իրավունքը եղել է ժառանգական, այսինքն՝ այդ հողաքաժինները հոգևորականներն իրավունք են ունեցել թողնել իբրև ժառանգութիւն իրենց որդիներին կամ մերձավորներին³։ Հասկանալի է, ուրեմն, թե ինչու ներսեսի ու ներշապհոյ հինգերորդ կանոնում այդ հողն ու ջուրը՝ անվանվում է «հայրենիք»։

Հողատիրութեան այս ձևը, անշուշտ, պայմանական էր։ Հոգևոր-

2ա Տե՛ս «Դիտողութիւններ հին Հայաստանի շինականների դրութեան մասին մարզպանութեան շրջանում»։ ՀՄԽՀ Պետ. Համալսարանի Դիտ. Տեղեկագիր, № 1, Երևան, 1925, էջ 13—17։

3 Տե՛ս «Կանոնք Դուռայ ժողովոյն», Ը, Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանցի, էջ 124—126։

րականները վերոհիշյալ գույքը, հողն ու ջուրը, ստացել էին իրենց հոգևոր «ծառայութեան» համար: Եթե այդ «ծառայութիւն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ունէր այդ գույքը ետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

Վաչագան արքայի վեցերորդ կանոնը խիստ կարևոր է ու ուշագրավ այն տեսակետից, որ այդ կանոնում «եկեղեցւոյ րաժին» նույն այդ անշարժ գույքն անվանվում է «խոստակ»՝ «խոստակ»-ը, ուրեմն, ինչպես կարելի է ենթադրել, հիմնվելով վերոհիշյալ բացատրությունների վրա, այն հողաբաժիններն են կամ անշարժ գույքը, որ հատկացվել են հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայութեան» համար իբրև *dominium utile*, այսինքն՝ ոչ իբրև լիակատար սեփականություն, այլ ժառանգական օգտատիրության իրավունքով: Դժվար չէ կոահել, որ հողատիրության այդ ձևը քրիստոնեական եկեղեցին ընդօրինակած պիտի լինի նախարարական Հայաստանի աշխարհիկ կենցաղից: Պրոֆ. Նիկ. Ադոնցը շատ ուղիղ դիտել էր, որ հայ եկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցության տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ չափերով ենթարկվել էր ֆեոդալականացման, կամ ավելի ճիշտը՝ նախարարականացման⁴։

Ի նկատի ունենալով այդ ազդեցությունը, ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ նախարարական Հայաստանում «խոստակ» են անվանվել բացի վերոհիշյալ հողաբաժիններից նաև այն հողերը կամ անշարժ գույքը, որոնք կալվածատեր սյուզերենների կողմից տրվել են «ազատ»-ներին իբրև *dominium utile*, այն պայմանով, որ «ազատ»-ները հողատու այս «տէր»-երի հանդեպ կատարելու էին զինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականություններ: Այս վերջին իմաստով «խոստակ»-ը կատարելապես համապատասխան կլինի *feodum*-ին (= ֆրանս. *fief* գերմ. *Lehn*)։

Որ այս ենթադրությունն անհիմն չէ, այդ ցույց են տալիս «խոստակդար» բառի վերաբերյալ վերև առաջ բերված վկայությունները: Իմ կարծիքով, «խոստակդար»-ն այդ վկայություններում նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ *feudatarius*, *feu dataire* կամ *Lehnshalter*։

Պրոֆ. Հ. Հյուբշմանը, ինչպես տեսանք, «խոստակդար»-ը փարգմանում է «*Erbe*» «ծառանգ», բայց, ի նկատի ունենալով

⁴ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, 1908, էջ 322, 361 և այլն։

«խոստակ» բառի իր ստուգաբանությունը, ավելացնում է՝ «eigentlich Besitzer»՝ «իսկապես կալվածատու»:

Ակադեմիկոս Մ. Բրոսսեն իր «Histoire de la Géorgie» աշխատության մեջ⁵ մերժում է Հայկազյան բառգրքի վերոհիշյալ մեկնությունը, որը, ինչպես տեսանք, արդյունք էր սխալ ստուգաբանության, և հենվելով Մ. Դորնի ցուցմունքների վրա՝ ենթադրում է, որ «խոստակ»-ը նշանակում է *richesse*՝ «հարստություն», իսկ «խոստակդար»՝ «un intendant, un surveillant des blens» այսինքն՝ «վերակացու կամ հարստությունների վրա հսկող»։ Հիմնվելով այս մեկնության վրա՝ «խոստակդար»-ը նա համարում է հոմանիշ «ձեռնաւորի» և թարգմանում է «employé» «պաշտոնյա»:

Մինչև այժմ ոչ ոք ուշադրության չէ առել, որ «խոստակ»-ն իրավական իր բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան ֆեոդի և, հետևաբար, «խոստակդար»-ը պարսկական *dâr* վերջավորությամբ, նշանակել է, հավանաբար, «խոստակ» առու (= գերմ. *Lehns-halter*):

Այս եզրակացությունը ստացվում է, իմ կարծիքով, ոչ միայն «խոստակդար» բառի ստուգաբանական վերլուծումով, այլև Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայությունների ուշադիր քննությամբ:

Ինչպես հայտնի է, Ստեփանոս Օրբելյանն իր պատմության մեջ քաղվածորեն զետեղել է այն վավերագրերի պատճենները, որոնք վերաբերվում են «Սիսական Նահանգ»-ի եկեղեցական կալվածներին: Վերև առաջ բերված բոլոր վկայությունները գտնվում են հենց այդ կարևոր քաղվածքներում:

Այդ վկայություններից երկրորդը (Ստեփ. Օրբ. էջ 206) վերաբերվում է «Բերդկաներէջ» գյուղին, որ 839 թվին Սյունյաց «Փիլիպպէ» իշխանը տվել էր Սյունյաց Տեր Դավիթ եպիսկոպոսին՝ կեսը «Սառնաքարին փոխան» և կեսը եկեղեցուն: Երրորդ վկայության մեջ ասված է, որ նույն «Փիլիպպէ» իշխանը 844 թվին նվիրել է Տաթևի նույն Ս. Խաչ եկեղեցուն Տաթև գյուղը (Ստեփ. Օրբել. էջ 206—208): Զորրորդ վկայությունից իմանում ենք, որ 867 թվին Քուպղիդուխտը՝ «Փիլիպպէ»-ի քույրը և Սյունյաց Հրահատ իշխանի կինը, «անորդի գոլով» «Մաճ շէնը»՝ «զիր հոգեմասն բաժինն ընծայէ ի սուրբ Խաչն և ի Տէր Սաղոմօն» (Ստ. Օրբ. էջ 218—220): Վերջապես՝ հինգերորդ վկայությունը վերաբերվում է «Տա-

⁵ Introduction et tables des matieres. St. Petersburg, 1858, էջ LXXXVI

Թեոյ սուրբ ուխտ»-ի սահմաններին, որ հատուկ վճռով և առան-
ձին գրությամբ որոշված են եղել 906 թվին (Ստ. Օրբ. էջ 230—
234):

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «խոստակդար» բառը հիշա-
տակված է 839, 844, 867 և 906 թվականների Տաթևի վանքի փաս-
տաթղթերում: Որ «խոստակդար»-ի նշանակությունն այս վկայու-
թյուններում ոչ թե «ժառանգ» է կամ «պաշտոնյա», ինչպես են-
թադրել են Հյուբշմանը և Բրոսսեն, այլ «ամատառու», այդ հաս-
տատվում է, ինչպես ասացի, հենց նույն վկայությունների ուշա-
դիր քննությամբ: Վերոգրյալ վկայություններից երկրորդում աս-
ված է՝ «և չիշխէ ոք հեռացնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոս-
տակդարաց», իսկ երրորդում՝ «մի ոք իշխեսցէ ետ իմ անցման, իմ
որդիք կամ եղբայրք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ
գիւղք»:

Եթե «խոստակդար»-ը հասկանանք առաջին հատվածում իբրև
«ժառանգ»՝ կատարելի, իմ կարծիքով, ավելորդ կրկնություն, որով-
հետև «Փիլիպպէ»-ի անմիջական ժառանգները, նրա որդիները,
հիշատակված են արդեն նույն հատվածի սկզբում: Նոր Հայկադյան
քառգրքի մեկնությունը՝ «թոռունք կամ յետնորդք»՝ թեև հարմար-
վում է թե առաջին և թե երկրորդ հատվածներին, սակայն այդ մեկ-
նությունը, ինչպես վերև տեսանք, կարելի է անտես առնել, որով-
հետև «խոստակդար»-ի այդ նշանակությունը հիմնված է ստուգա-
քանական բռնազբոսիկ և սխալ բացատրության վրա:

«խոստակդար»-ի իմաստը որոշելու համար ավելի կարևոր են
չորրորդ և հինգերորդ վկայությունները:

Չորրորդ վկայության մեջ, որ գտնվում է Քուպղիդուխտի 867
թվի պայմանավճռում, ասված է՝ «Եւ մի ես և մի իմ եղբորդիի
և այլ խոստակդարք պայքարել և համիմաղ կալ մի իշխեսցեն»:
Քուպղիդուխտը, ինչպես տեսանք, զավակ չունեի, ուստի «խոս-
տակդար»-ն այստեղ ոչ «թոռունք» կարող է նշանակել, ոչ էլ ան-
միջական ժառանգ: «խոստակդար»-ի իսկական իմաստը որոշվում
է այս հատվածում փաստական ու կարևոր մի նոր ցուցման օգնու-
թյամբ, որ ուշադրության չէ առնվել: Վավերագրերի տակ, որ քաղ-
վածորեն առաջ են բերված Ստեփանոս Օրբելյանի մոտ, սովորա-
բար, ստորագրել են կամ հիշվում են իբրև վկաներ հենց վերոհիշ-
յալ այն անձինք, որոնցից պահանջվում էր շառարկել կամ չընդդի-
մանալ նվիրատուի կամքին: Քուպղիդուխտի փաստաթղթի վերջում
ասված է.

«Եւ գրեցի՝ յ 316 թուականութեանս Հայոց վկայութեամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց» (Ստ. Օրբ., էջ 220):

Վերև հիշված «եղբորորդիք և այլ խոստակդարք», ինչպես տեսնում ենք, այստեղ մատնացույց են արված իբրև վկաներ, սակայն «խոստակդարք»-ի փոխարեն ասված է՝ «վկայութեամբ իմ եղբորորդեացս և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց»: Այս զուգահեռիպումը, իմ կարծիքով պատահական չէ, այլ պարզ մի ապացույց է, որ շորորդ վկայութեան մեջ «այլ խոստակդարք» են անվանված Քուպղիդուխտի «եղբորորդի»-ների ազատները, որոնք «խոստակ»-առու էին, այսինքն՝ ավատառու:

Որ մատնանշված զուգահեռիպումը եզակի ու բացառիկ չէ, այդ երևում է և մյուս փաստաթղթերից, որոնք Օրբելյանի մոտ առաջ են բերված առանց կրճատման: Օրինակ, «Փիլիպպէ»-ի 844 թվի վճռագրի սկզբում ասված էր՝ «և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ օրդիփ կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ գիւղդ», իսկ նույն վճռագրի վերջում կարդում ենք.

«Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց տէր, տէր Ատրնեքսէ՝ Վասակայ որդի, Սիւնեաց տեառն, տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք. տէր Հրահատ և տէր Գագիկ՝ Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի. նույնպէս և յիմ ազատաց՝ Հուռ, Քուրդոյ, Խոսրով՝ Շապուհոյ որդիք, Զեանշէր՝ Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Վահանայ որդի, Զագիկ՝ Վահանայ որդի, Վարդան՝ Զանատայ որդի, Սահակ՝ Վասակայ որդի, Միհրան՝ Թուրքայ որդի, Յովհան՝ Ներսէհի որդի, Մուշեղ՝ տէր Տիրոցի որդի, Հասան՝ Շապուհոյ որդի, Վահան՝ Մխիթարայ որդի, տէր Մուշեղ՝ Սմբատայ որդի, տէր Վահան՝ Բաբգենի որդի, տէր Բարդէն և տէր Վասակ և տէր Աշոտ իմ Փիլիպպէի որդիք. և ի կրօնավորաց Ահարոն... Եւ վասն առանել հաստատութեան զիմ սովորական մատանիս ի վերայ եղի և դիմ որդեաց և զայլ ազատաց» (Ստ. Օրբ., էջ 207—208):

Ինչպես Քուպղիդուխտի փաստաթղթում, նույնպես և այս վճռագրում, վերև հիշված «խոստակդարք»-ներին ներքևում համապատասխանում են դարձյալ ազատները, որոնք «Փիլիպպէ»-ի ավատառուներն էին:

«Խոստակդարք»-ի նշանակությունը իբրև feodataire կամ ավատառու այնքան որոշ է ու ակնբախ այս երկու վճռագրում, որ

ես ավելորդ եմ համարում կանգ առնել ուրիշ նման վկայություններին վրա, որ կան նաև մյուս փաստաթղթերում:

Որ «խոստակդար»-ը շունի «ձեռնաւոր»-ի իմաստ, ինչպես ենթադրել է ակադեմիկոս Մ. Բրոսսեն, այդ ևս պարզ երևում է վերև մատնանշված հինգերորդ վկայությունից 906 թվի վճռագրում, որով որոշված են եղել Տաթևի շրջակա սահմանները: Այդ վճռագրի մեջ «խոստակդար»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է հետևյալ հատվածում.

«Թէ՛ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նշովեալ եղիցի» (Ստեփ. Օրբ. էջ 233):

Այստեղ, ինչպես տեսնում ենք, «ձեռնաւոր»-ները հիշվում են առանձին «խոստակդար»-ներից առաջ: Ուրեմն՝ միանգամայն անվիճելի է, որ «ձեռնաւոր» և «խոստակդար» բառերն ունեցել են տարբեր իմաստ: Նույն այս հատվածը հետաքրքիր է ու ուշագրավ նաև այն տեսակետից, որ նրա մեջ ըստ ավագության կարգի նախ հիշատակված են «ավագ»-ները և նրանց «ձեռնաւոր»-ները, հետո՝ «խոստակդար»-ները՝ «աւագ»-ների և «տէր»-երի ավատաւորները և վերջում՝ «տանուտէր»-ները: «Տանուտէր»-ները վերջումն են դրված, որովհետև այս դարաշրջաններում այդ բառը, մեծ մասամբ, գործ էածվել գյուղապետի իմաստով: Այս մասին ավելի մանրամասն խոսելու եմ ուրիշ աշխատության մեջ:

«Խոստակդար»-ի նշանակության այս նոր լուսաբանությամբ որոշվում է Հայաստանի նախարարական կաղմակերպության հիմնական առանձնահատկություններից մեկը և վերջնականապես պարզվում է, որ «Ֆեոդ»-ը և պայմանական հողատիրությունը նախարարական Հայաստանում գոյություն են ունեցել արդեն իննեւորորդ դարում:

Նրա ծագումը սակայն, անշուշտ ավելի հին է:

«Խոստակ»-ը, ինչպես տեսանք, հանդիպում է նաև Աղվանից վաչագան արքայի կանոններում: Մինչև այժմ ենթադրել են, որ այդ կանոններն ընդունված են եղել «Աղուէն»-ի ժողովում 483 թվին⁶: Իմ կարծիքով, այդ ժողովը, հավանորեն, տեղի էր ունեցել

⁶ Տե՛ս Մ. Զամյան, *Պատմություն հայոց*, Բ, էջ 219. Brosset, Histoire de la Georgie, 1851, էջ 473. Pr. Tournet, Histoire politique et religieuse de l'Arménie 1900, էջ 357, նաև իմ *աշխատության մեջ*՝ Beiträge zur albanisch-chen Geschichte, Leipzig 1897, էջ 28.

յոթերորդ դարի սկզբներում Վաչագան Բարեպաշտի ժամանակ, որի իշխանության տարիները ևս, հետևաբար, ետ պետք է տարվեն վեցերորդ դարի վերջերը և յոթերորդի սկզբները⁷։ Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակված է, որ այդ ժողովին նախագահել է Միհրանական տոհմից Վարդան քաջ Գարդմանատերը, որը ստորագրել է, իրոք, կանոնների տակ (տե՛ս Ա գլ. ԻՁ. էջ 103 և Գ, գլ. Ժ, էջ 348)։ Իսկ այս Վարդանի ժամանակը դրվելու է, անշուշտ, Միհրանական տոհմի հաստատման սկզբնական շրջանում՝ յոթերորդ դարի սկզբներում։

«Խոստակ»-ի և «խոստակդար»-ների գոյությունը կարելի է ըստ իս ենթադրել նաև VII—VI դարերից առաջ՝ թե մարզպանության և թե Արշակունյաց թագավորության ժամանակ։

Վերև մենք արդեն տեսանք, որ եկեղեցականների պայմանական հողատիրությունը, որ առաջ եկած պիտի լիներ նախարարական աշխարհիկ կարգերի ազդեցությամբ, կտրող է սկիզբ առած լինել շորորոգ դարում։ Այդ արդեն ուշագրավ մի ակնարկ է, որ պայմանական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ՝ իբրև մանր ազնվականության ավատական հողատիրություն՝ նաև այդ հնագույն դարաշրջանում։ Նույն այս ենթադրության հիմք կարող է ծառայել «խոստակ»-ի և «խոստակդար»-ի ստուգաբանական ծագումը պարթևերեն *xvāstak* և *xvāstakdār* բառերից։ Այս տերմինները լինելով Արշակունյաց շրջանի փոխառություն, նրանց հնությունը կարող է դարձյալ հավանական մի ցուցանիշ համարվել, որ նախարարական Հայաստանում *feod* «խոստակ»-ը և *feodataire* «խոստակդար»-ը գոյություն են ունեցել ոչ միայն 9-րդ և 7-րդ դարերում, այլ հավանորեն, նաև մարզպանական և Արշակունյաց ժամանակներում։

Հենվելով վերոհիշյալ մեր դիտողությունների վրա և ամփո-

⁷ Վաչագան Բարեպաշտի ժամանակը որոշելու համար կարևոր են Կաղանկատվացու պատմության հետևյալ ցուցումները. 1. Նրա Ա գրքի ԻԱ գլխում («Թուղթ արքային Վաչագանայ են», էջ 76) կարդում ենք, «զտանէր և զամենասուրբ Նշխարս Գրիգորի... զոր էր բերեալ երիցուն՝ Մատթէ անուն, ի Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ, զոր ունէր նորին մատանեան կնքեալ, և առաքեալ անդ երիցունս առնոյր առ իւրս։ Արդ՝ այս «Մատթէոս քահանայ»-ին, ինչպես հայտնի է «Գրիգ թղթ»-ից (Թիֆլիս, 1901, էջ 79 և 83), ուղարկել էր Աղվանք Հայոց Հովհաննես Գաբեղինացին (556/7—571, +573)։ 2. Կաղանկատվացու Ա գրքի ԻԵ գլխում առաջ է բերված «Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս»-ի թուղթը «առ Վաչագան Աղուանից արքա» (էջ 96)։ Այս թուղթը, հավանորեն, պետք է վերագրել «Մա-միկոնէից Աբրահամ եպիսկոպոս»-ին, որ հետո 606/7 թվին դառավ կաթողիկոս։

փելով մեր ասածները, կարող ենք անել հետևյալ հետևությունները.

1. «Խոստակ»-ը, լինելով կարևորագույն տերմին նախարարական կազմակերպության, իր իմաստով և իրավական բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան feod-ին կամ Lehn-ին, իսկ «խոստակդար» նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ feodaltare կամ Lehnshalter:

2. Նախարարական Հայաստանի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է եղել, որ հայ եկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցության տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ չափերով ենթարկվել էր ֆեոդալականացման: Հետաքրքիր է այդ տեսակետից եկեղեցական «խոստակ»-ների գոյությունը, որոնք հատկացվել էին հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայության» համար օգտատիրության իրավունքով (*dominium utile*), մինչդեռ նույն հողաբաժինների նկատմամբ գերագույն սեփականության իրավունքը (*dominium directum*) պատկանել է եկեղեցուն:

3. Օգտատիրության այդ իրավունքը եղել է ժառանգական, ուստի և հասկանալի է, թե ինչու ներսեսի և Ներշապուհի հինգերորդ կանոնում այդ հողաբաժիններն անվանվում են «հայրենի»:

4. Հողատիրության այս ձևը, ինչպես երևում է համապատասխան կանոնների քննությունից, եղել է պայմանական, ուստի, եթե հոգևորականների «ծառայություն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ուներ «խոստակ»-ները ետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

5. Ինչպես երևում է Ագաթանգեղոսի և Փավստոսի վկայություններից (տե՛ս «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին», Պետհամալսարանի Տեղեկագիր № 1, էջ 13—17), 4-րդ դարում հոգևորականներին հատկացված են եղել որոշ հողաբաժիններ: Ավելի քան հավանական համարելով, որ այդ հողաբաժինները «խոստակ» էին և ոչ սեփականություն, կարելի է ըստ իս եզրակացնել, որ եկեղեցական «խոստակ»-ների ծագման սկիզբը պետք է դնել 4-րդ դարի առաջին կիսում:

6. 9—10-րդ դարերի վավերագրերում, որ մեջ են բերված Ստեփանոս Օրբելյանի մոտ, «խոստակդար», այսինքն՝ «խոստակ»-առու՝ անվանված են իմ կարծիքով, այն «ազատ»-ները, որոնք կալվածատեր «աւագ»-ներից ստացել էին «խոստակ»-ներ

և ստանձնել էին իրենց «տէր»-երի հանդեպ զինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականութիւնները.

7. Ի նկատի ունենալով եկեղեցական կազմակերպւթյան նախարարականացումը և ընդունելով, որ եկեղեցական «խոստակ»-ները համապատասխան պիտի լինեին, հավանորեն, աշխարհիկ «խոստակ»-ներին, կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ «ազատ»-ների «խոստակ»-ները ևս համարվել են ժառանգական և «հայրենի».

8. Թեև «խոստակդար» տերմինն առաջին անգամ հիշատակւում է Ստեփանոս Օրբելյանի մոտ 9—10-րդ դարերի վճռագրերում, սակայն, ի նկատի առնելով «խոստակ» և «խոստակդար» բառերի պարթևական ծագումը, նաև եկեղեցական «խոստակ»-ների գոյութիւնը 4-րդ դարում, հավանական կլինի ենթադրել, որ ավատառութիւնը, իբրև հողային ֆեոդալական հարաբերութիւնների հատուկ կարգ, եղել է նախարարական կազմակերպւթյան հիմնական տարրերից մեկը ոչ միայն 9—10-րդ դարերում, այլ նաև ավելի հին շրջաններում մարզպանության և Արշակունյաց թագավորության ժամանակ.

9. «խոստակ» և «խոստակդար» տերմինների վերոհիշյալ լուսաբանութիւնը կարող է թերևս կովան ծառայել ճշտելու համար պարթ. xvâstakdâr բառի իմաստը. Հ. Հյուբշմանը մատնանիշ է արել, որ xvâstakdâr-ը Pand-nama i Adarbad Maraspand երկում նշանակում է «Ժառանգ» (der Erbe, Arm. Gram., էջ 161): Ճիշտ է արդյոք որոշված այդ բառի իմաստը, ինձ թվում է, որ պարթևական այդ բառն իր նշանակութամբ կարող է համապատասխան լինել հայերեն «խոստակդար»-ին (Lehnsträger):

2. «ՊՏՈՒՂ», «ՇԱՐԻԱՏ» ԵՎ «ՊԱԽՏ ՏԱՆՑ»

«Պտուղ»-ը, պրոֆ. Նիկ. Ադոնցի կարծիքով, նույն հարկն է, ինչ որ եվրոպական champart-ը, արաբական mukasame-ը և պարսկական babrak-ը, այսինքն՝ բերքի որոշ մասն է, որ տրվում էր իբրև հարկ կալվածատիրոջ [Армения в эпоху Юстиниана, էջ 482—483]:

Թագ. Ավդալբեգյանը, համաձայն լինելով այս խնդրում Ադոնցի հետ, իր կողմից ավելացնում է, որ «պտուղ» կամ «պտղի»

հարկային տերմինը հոգևորական դասին անցել է աշխարհիկ տըն-տեսությունից⁸,

«Պատուղ»-ի նշանակությունը՝ իբրև բնական տուրք՝ պարզ երե-վում է Աղվանից վաչագան արքայի շորրորդ կանոնից.

«Պատուղք ի ժողովրդեն է երիցուն՝ կարգն այս լիցի. թուանիկն շորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և վեշտասան փասս քաղցու. և որ տառապեալն է՝ զհացիդ կէսն տացէ, և գինի՝ որչափ և կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի առցեն: Իսկ այնք՝ որ աւելի քան գայս տացեն սակս հոգևոյ, բարի առնեն, որպէս Պօղոս ասէ, «Որ առատութեամբ սերմանէ՝ առատութեամբ հնձեսցէ»: Եւ ոյր ոչխար է ի տան՝ ոչխար մի և երեք գղաթ բուրդ և մեկ պանիր»։ և ոյր ձիք ի տան իցեն՝ մին յովանակ, և ոյր պախրէք իցեն՝ որթ միս տե՛ս Մովսեսս Կաղանկատուացւոյ, «Պատմութիւն Աղուանից աշ-խարհի» (Թիֆլիս 1913, Ա, գլ. ԻԶ, էջ 99)։

«Պատուղ»-ի նշանակությունը թե այս և թե ուրիշ վկայություն-ներում միանգամայն որոշ է ու անվիճելի։ Սակայն ուշադրության արժանի է, որ «պտուղ»-ը մատենագրական բոլոր վկայություն-ներում գործ է ածվել միշտ եկեղեցական տուրքի իմաստով։ Իբրև աշխարհական հարկ այս տերմինը, որքան ինձ հայտնի է, չէ հի-շատակված, ոչ մատենագրական աղբյուրներում, ոչ էլ արձանա-գրություններում։ Հնարավոր է, իհարկե, որ կալվածատիրոջ տըր-վող ընական հարկերը ևս կարող էին «պտուղ» անվանվել. բայց այդ հարկավոր է, իմ կարծիքով, հաստատել որոշ ու դրական որևէ վկայությամբ։ Վերահիշյալ պնդումը կարոտ է, ուրեմն, փաստական հիմնավորման։

Թե բնական և թե մյուս հարկերի խնդիրը քննելիս՝ պետք է ի նկատի ունենալ, որ միևնույն հարկերը զանազան դարաշրջաննե-րում ունեցել են հաճախ տարբեր անուններ։ Հարկային տերմին-ների ուսումնասիրությունը, այդ տեսակետից, բավական բարդ աշխատանք է։ Բացի տերմինների նշանակության լուսաբանումից անհրաժեշտ է, ուրեմն, որոշել նաև նրանց կիրառման ժամանա-կաշրջանները։

Այս դիտողությունը վերաբերվում է, բնականաբար, և բնա-հարկերին, որոնք Բագրատունյաց, ինչպես և սելջուկյան ու թաթա-

⁸ Տե՛ս Թ. Ալալբեկյան, «Հաս, սակ, բաժ», Տեղեկագիր ՀնՍՀ Գիտու-թյան և Արվեստի Ինստիտուտի, Երևան, 1926, էջ 89.

րական տիրապետության շրջաններում, անվանվել են, ինչպես կտեսնենք, ոչ թե «պտուղ» կամ «հաս»⁹, այլ «շարիատ»:

«Շարիատ»-ի մասին կարևոր տեղեկություններ գտնվում են վիմական արձանագրություններում և, բարեբախտաբար, այնքան շատ, որ հնարավորություն են տալիս բավարար կերպով որոշելու նրա նշանակությունը, իբրև բնահարկ:

Ի նկատի ունենալով խնդրի կարևորությունը, հարկ եմ համարում մեջ բերել արձանագրություններից «շարիատ»-ի վերաբերյալ բոլոր վկայությունները. որ առայժմ ինձ հայտնի են.

1. Վիմական տարեգիր, կազմ. Կ. Կոստանյանցի, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 8, Տեկոբ, 971 թ.

«Ես խաւրեւանիւշ Հայոց Թագուհի հաստատեալ եմ զՏեկոբոյ շարյեաւոն յեղն կայք մի»:

2. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոբ, 1008 թ.

«Ի նՄէ թ. Հայոց... կամ եղեւ ինձ Կատրանիդէ, Հայոց Թագուհի դուստր Վասակայ եւ ամուսին Գագկայ. թողեալ եմ զՏեկոբոյ շարյաւոն վասն Գագկայի Շահնշահի արեւշատության եւ իմ որդեացն»:

3. Վիմական տարեգիր, էջ 14՝ Մաստաբայ, 1015 թ.

«Ի նԿԴ Թուականութեանս թորգոմյան ես Վահրամ իշխանաց իշխան, որդի Համգէի, թողի զՄաստաբայի շարիաւոն վասն Գագկայ Շահնշահի կենդ»...

4. Վիմական տարեգիր, էջ 26՝ Ալամն, 1001 թ.

«Այս իմ գիր է Սոփէ... Շահանշահի հայոց եւ վրաց Թագուհոյ, թողել եմ զԱլաման շարյաւոն վասն իմ հոգոս եւ արեւոս» եւն.

5. Վիմական տարեգիր, էջ 107՝ Փարպի, 1264 թ.

«Ես Աղբուղայ, որդի Իւանէի, որդւոյն մեծին Շահանշահի, ես Աղբուղայ թողի զՓարպոյ այգեաց շարիաւոն... չժդ»:

6. Վիմական տարեգիր, էջ 126՝ Մրեն, 1284 թ.

«Թուակ, չլգ. այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սահմատինս Աւետեց որդւոյս եւ կենակից իմ Ուրտուրիտայ որ յառաջ գնեցի զՄրեն յիմ հալալ արդեանց և հաստատեցաք արձանագրով և թողաք զՄրենոյ տասնեակն ճացին, որ ի շարիաւոն... Կիկլիշանայ ամիրութեամբս դրեցաւ»:

⁹ Տե՛ս իմ աշխատությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 9, 29, 32 և 34—35:

7. Վիմական տարեգիր, էջ 126 և 162՝ Արուճ, 1285 թ. (նաև 1325 թ.)¹⁰,

«Ի թուիս հ. շրդ. ի փաթշահութեան Արղուն խանին, ի թագաւորութեան Դեմետրէի, պարոնութեան սպասաւար Մխարկրծե (ա) լին, եղբաւրն Իւանէի, որդւոյն մեծին Շահնշահի, ես Մակլի հոսսան աղայիս որդիս եկի յԱրուճ իմ հաւրս գանձագին գեղս, և թողի ճացին շարիատն հաստից»...

8. Վիմական տարեգիր, էջ 127 Ավան 1285 թ.

«Ես Դաւիթ, որդի Դեմէտրէ թագաւորին, թողի գԱւանայ զայգեաց շարէտն, վասն միամտութեան օոցա... Արդ որք ի մերոց կամ յաւտարաց տէր լինի Աւանայ եւ զհաստատեալ գիրս մեր խափանել ջանայ և զշարէա առնու կամ»...

9. Վիմական տարեգիր, էջ 130՝ Օշական. 1288 թ.

«Ի թուիս շլէ... յամի թագաւորութեան... Արղուն ղանին ես պարոն Սահմատինս, որդի պարոն Աւետեացն, թողի գՅաւշակաւոն զճացի եւ զղարմանի զշարիատն զվերի եւ զեւեբի զամէն ճանդի»...

10. Վիմական տարեգիր, էջ 130՝ Մրեն, 1288 թ.

«Թւ. հ. շլէ... ես պարոն Սէնոպ Սահմաղինս եւ ամուսին իմ Ստուրտա... Մրենայ ճացին շարիատն թողել էաք և հայմալ թողար զէգեց գինոյ և խաղողի խալէն»...

11. Վիմական տարեգիր, էջ 138 Հոփսիմէի վանք, 1296 թ.

«Ի թվից լիսե, ի պատրոնութեան իշխանաց իշխանին մեծին Շահնշահի եւ Աղբուղին եւ Շիրին խաթունս ու Պայալուն խաթունս ու Թաւղթէս ու Թալէս ու հոռէս ու Ղայիրս թողաք զՀոփսիմուցս զբարակին շարիատն եւ զշահնաին բաբակի հակն»...

12. Վիմական տարեգիր, էջ 142՝ Յովհաննավանք, 1201 թ.

«Ես Ամասըան, որդի Գրիգորին, եւ ամուսին իմ Բեուճ. հէնց էլաւ պարոնաց ձեռնէ զերկիրս առին ես չբաժնեցայ ի ծառայութենէ. աստուած պարոնաց աշողումն երեսո. երկիրս երեկ. Օհանավանք ինձ տվին հէրէնիք. հասարակաց տունս խլած էր էզոց ճողի

¹⁰ Միենույն ալս արձանագրութիւնը տպված է երկու անգամ 1285 և 1325 թվականների տակ (էջ 126 և 162)։ Սխալը բացատրվում է նրանով, որ հայոց թվականը Շահխաթունյանի մոտ («Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», էջմիածին 1842, Բ, էջ 61) կարդացված է շրդ (=1285), իսկ Ալիշանի մոտ («Այրարատ», Վենետիկ 1890, էջ 144)՝ շհգ (=1325)։ Ուղիղ է, անշուշտ, Շահխաթունյանի թվականը, որովհետև Արղունն «էլղան» էր 1284—1291 թվերին։ Մեր բնագրում Շահխաթունյանի սխալ ընթերցվածներն ուղղված են Ալիշանի բնագրի համաձայն։

շաբաթ էր գրած. մեք էլ հասարակ ի սուրբ Կարապետս ապսպարեցաք, վանաց էգոյ շաբաթս վեր կալաք»...

13. Վիմական տարեգիր, էջ 247՝ Շիրակաւան, անթվական.

«Որ ով եկեղեցոյս դրանս կա և սպասաւորէ սմա թէ արեղա եթէ միակեց, թէ շատ տաւար ունենան եթէ քիչ, թէ շատ վաստակ ցանեն եւ թէ քիչ, ոչ շարիատ, ոչ համարելէ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար, ոչ մեծ շար, ոչ փոքր հետ եկեղեցոյս սպասաւորացս ոչ ում խաւսք չլինի»¹¹...

Այս վկայութիւններում, ինչպես տեսնում ենք, հիշատակված են.

ա. «զՏեկորոյ շարյեատն յեղն կայթ¹² մի» (վկ. 1).

բ. «զՓարպոյ այգեաց շարիատն» (վկ. 5).

գ. «զՄրենոյ տասնակն հացին, որ ի շարիատն» (վկ. 6).

դ. «Արուճի հացին շարիատն» (վկ. 7).

ե. «զԱւանայ դայգեաց շարէտն» (վկ. 8).

զ. «զՅաւշականո զհացի եւ զդարմանի զշարիատն զվերի եւ զներքի զամէն հանդի» (վկ. 9).

է. «Մրենոյ հացին շարիատն» (վկ. 10).

ը. «զՀոփիսիմուցս զբա(մ)բակին շարիատն» (վկ. 11) և

թ. «Ոհանավանքի էգոց հողի շարիատ» (վկ. 12):

«Շարիատ» առնում էին, ուրեմն՝ յուղից, այգիներից, հացից, դարմանից, բամբակից, վեցերորդ վկայութիւն մեջ «շարիատ» է անվանված հացի «տասնակ»-ը, առաջին վկայութիւն մեջ՝ Տեկորից ստացվող մի կայթ յուղը, իսկ մյուս դեպքերում՝ թեև չի նշանակված «շարիատ»-ի քանակը, սակայն կարելի է վստահորեն ենթադրել որ «շարիատ»-ը դարձյալ բերքի որոշ մասն է, որ վճարվում էր որպես հարկ, Այդ բնահարկը, ինչպես պարզ երևում է վկայութիւնների բովանդակութիւնից, վճարվել է կալվածատերերին:

¹¹ Բացի վերոհիշյալ արձանագրութիւններից տե՛ս նաև 1323 թվի Սիթի խաթունի արձանագրութիւնը (Վիմ. տար., էջ 161), որ շախաղանց աղճատված է:

¹² «Կայթ»-ը՝ իբրև հացահատիկների չափ՝ հավասար է եղել Շիրակացու ժամանակ, ինչպես ցույց է տվել Գալուստ Տեր-Մկրտչյանը, 60 լիտրի, ուրեմն՝ նրա կշիռը կլինէր $326,4 \times 60 = 19,584$ կիլոգրամ, Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացու, Վաղարշապատ, 1896, էջ 19, հմմտ. նաև Յ. Ա. Օրբելի, Вопросы и решения вардапета Анани Ширакци, Петроград, 1918, էջ 64, Վիտրի կշիռը տե՛ս իմ աշխատութիւն մեջ՝ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութիւն» (1), Տեղեկագիր Գիտութիւն և Արվեստի Ինստիտուտի, Երևան, 1927, № 2:

«Շարիատ» բառի ստուգաբանությունը և նրա նշանակությունը փորձել են լուսաբանել պրոֆ. Նիկ. Մառը և պրոֆ. Ս. Եղիազարյանը:

Նիկ. Մառի ասելով՝ մինչև թաթարական տիրապետությունը¹³ Հայաստանում հարկատվության նկատմամբ տեղական սովորույթներին հետ միասին իշխել է մահմեդական իրավունքը, ուստի և «շարիատ» է անվանվել այն հարկը, որ պահանջվել է համաձայն այդ իրավունքի:

Ս. Եղիազարյանը, որը նույնպես «շարիատ»-ը մեկնել է իբրև «налог по шариагу»¹⁴ փորձել է նաև որոշել հարկի բովանդակությունը: Հենվելով 1284 թվի Մրենի արձանագրության վրա (տե՛ս վերև վկայութ. 6), նա ենթադրել է, որ «շարիատ»-ը մահմեդական օրենքով սահմանված «տասանորդ»-ն է¹⁵: «Շարիատ»-ին, որ մահմեդական հիմնական հարկ էր, ենթակա էին, — ասում է Եղիազարյանը, — տնտեսության բոլոր ճյուղերն իրանց արդյունքներով, ամեն տեսակ գույք, արհեստներ և առևտուր. վավերագրերի մեջ առաջ են բերված, իրոք, դեպքեր, երբ «շարիատ»-ի տակ են դրվել՝ մարդը, հացը, կաթը, եղը, անասունները և այլն¹⁶:

Հարգելի ուսուցչապետի այս վերջին եզրակացությունը, անտարակույս, սխալ է: Արձանագրական վկայություններում, ինչպես տեսանք, ոչ մի խոսք, անգամ ակնարկ չկա այն մասին, որ իբր «շարիատ»-ի տակ էին՝ «ամեն տեսակ գույք, արհեստներ, առևտուր մարդ կամ անասուններ»:

Ուշադրության արժանի են սակայն «շարիատ»-ի մասին վերոհիշյալ ստուգաբանական մեկնությունը¹⁷, նաև նրա քանակական որոշումը իբրև «տասանորդ»:

Ստուգաբանական մեկնությունը, թեև առաջին հայացքից թվում է հնարավոր, սակայն միանգամայն անընդունելի պիտի հա-

¹³ Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, С. Пет., 1893, էջ 80. Зап. Вост. отд. т. VIII.

¹⁴ Проф. С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, Киев, 1919, էջ 4:

¹⁵ Նույնը, էջ 40:

¹⁶ Նույնը, էջ 40:

¹⁷ Հ. Ղևոնդ Ալիշանը «շարիատ»-ը համարել է՝ «հասարակ հոշոմն տրից», և նրա ստուգաբանական ծագման մասին մատնացույց է արել, որ, «շիրառ ըստ պարսից նշանակէ խորշ պարկի», տե՛ս «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 92: Այս թույլ համեմատությունը, իհարկե, ճիշտ չէ՝ թե այդ բառերի տարբեր նշանակության և թե ձայնական օրենքների անհամաձայնության պատճառով:

մարվի՝ ոչ միայն «շարիատ»-ի և իմաստների տարբերության, այլ, գլխավորապես, նաև այն պարզ պատճառով, որ «շարիատ»-ը գործ էածված Հին կտակարանի գրաբար թարգմանության մեջ, երբ դեռևս գոյություն չունեին ոչ Մահմեդը, ոչ էլ մահմեդական օրենքները:

Նոր Հայկազյան բառգիրքը, որ նկատի է ունեցել հենց այս վկայությունները, «շարիատ»-ը մեկնել է իբրև— πλεονασμός, abundantia, բառերը, իբր «յավելված», այսինքն՝ «վաշխ յաւելեալ ի վերայ փոխոյ քան զգլուխ դրամոյն և այլոց ընչից»:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել Հին կտակարանի կարևոր այդ վկայությունները.

1. Ղևտ. ԻԵ. 37.

«Ջարժաթ քո մի տացես նմա ընդ տոկոսսօք, և զկերակուր քո մի տացես նմա ընդ շարիատիւս.

2. Բ. օրենք. ԻԳ, 19.

«Մի տացես եղբօր քում արժաթ վաշխիւ, և մի զկերակուր շարիատիւս...»

«Շարիատ»-ի հանդեպ հունարեն թարգմանությունն ունի առաջին հատվածում՝ πλεονασμός, իսկ երկրորդում՝ τοχος, այսինքն «յաւելուած» և «տոկոս»։ «Շարիատ», ինչպես տեսնում ենք, անվանվել է հինգերորդ դարում այն տոկոսը, որ վճարվում էր իբրև ավելում փոխ առած ուտելիքների կամ կենսամթերքների համար։ Իբրև բնահարկ նա նույնպես նշանակում էր, ինչպես տեսանք, որոշ տոկոս, որ ստացվում էր բերրից։ Շատ պարզ է, ուրեմն, որ «շարիատ»—բնահարկը նույն բառն է, ինչ որ հինգերորդ դարի «շարիատ»—տոկոսը, և, հետևաբար, նա չի կարող լինել մահմեդական շրջանի փոխառություն։

Մնում է պարզել մի խնդիր ևս, թե արդյոք ճիշտ է, որ «շարիատ»-ը որպես բնահարկ ունեցել է բացառապես «տասանորդ»-ի իմաստ։

Պրոֆ. Ս. Եղիազարյանը, ընդունելով որ այդ հարկը մահմեդական «տասանորդ»-ն է կամ «աշար»-ը, ինչպես, տեսանք, մատնացույց է արել վերոհիշյալ վեցերորդ վկայությունը՝ «ՎՄրենոյ տասնակն հացին, որ ի շարիատն»։ Իմ կարծիքով, այս ենթադրությունը ևս հավանական չէ։

Եթե Մրենում «շարիատ»-ը տասանորդ էր, այդ չի կարող բնականաբար, ապացույց լինել, որ նույն նշանակությունն ունեցել է նաև մյուս վկայություններում։ «Շարիատ»-ը որի բուն իմաստ-

տը տոկոս էր, բերքի որոշ մասն էր, որի քանակը տարբեր վկայություններում, որ վերաբերվում են զանազան դարաշրջանների, կարող էր նույնը չլինել: Նրա քանակական որոշումն առանձին դեպքերում խիստ կարևոր մի խնդիր է, սակայն այդ խնդրի լուսաբանության համար հարկավոր են, անշուշտ, փաստական նոր տրվյալներ:

Բացի 1284 թվի Մրենի արձանագրությունից (վկայութ. 6), «շարիատ»-ի չափը տրված է նաև Տեկորի 971 թվի արձանագրության մեջ (տե՛ս վերև վկայութ. 1): «Ես հաւարեւանիւշ Հայոց թագուհի,— ասված է այդ վկայության մեջ,— հաստատեալ եմ ղՏեկորոյ շարիատն յեղն կայթ մի»: Նույն այս հարկը հիշատակված է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրում՝ «կովու լիտր եղն միայն լիցի» (Վաղարշապատ, 1880, Բ. ա, էջ 315):

Հնագույն հարկերի քանակը որոշող թե՛ այս և թե՛ նման վկայություններն այնքան կարևոր են տնտեսագիտական հետազոտումնասիրությունների համար, որ ես ավելորդ չեմ համարում մի փոքր կանգ առնել չափերի վրա, որ մատնանշված են այս հատվածներում: «Շարիատ»-ի չափը, ինչպես տեսնում ենք, ցույց է տրված Տեկոր գյուղից ընդամենը՝ «կայթ մի», իսկ Գոշի վկայության մեջ՝ յուրաքանչյուր կովից մեկ լիտր:

Եթե՛ Վիմական տարեգրի «կայթ մի» ընթերցվածը ճիշտ համարենք¹⁸ և տասներորդ դարի այս «կայթ»-ը հավասար ընդունենք Շիրակացու ժամանակվա «կայթ»-ին, որ 60 բյուզանդական լիտր էր: Տեկորի յուղի քանհարկը այժմյան կշռով, ինչպես ասացի, կլինի 19,594 կիլոգրամ:

Այս հաշիվն անում ենք սակայն վերապահությանը, որովհետև կշիռները և չափերը կարող էին նույնը չլինել զանազան դարաշրջաններում և տարբեր տեղերում:

Մխիթար Գոշի մոտ վերոհիշյալ լիտրը, օրինակ, այլևս Շիրակացու հիշած բյուզանդական «լիտր»-ը չէ (= 326,4 գրամ), այլ, ըստ երևույթին, արաբական ժամանակվա Իրաքի լիտրն է, որի կշիռը հավասար էր 408 գրամի կամ 1 ռուսական ֆունտի: Այս հետևությունը ստացվում է Դատաստանագրքի Վենետիկի օրինակի լուսանցքի նկատողությունից և ձեռագրական այն ընթերցվածներից, որ մանրամասն առաջ են բերված Բաստամյանցի ծանոթու-

¹⁸ Արձանագրությունների տպագիր հրատարակություններն այնքան անփութ են ու սխալաշատ, որ «կայթ մի» ընթերցվածը կարող է լինել աղճատված: Արձանագրության մեջ ուղիղ ընթերցվածը թերևս լինի «կայթսի»:

թյան մեջ: «Մեր օրինակի մեջ,—ասում է Բաստամյանցը,—լուսանցքի վերա գրած է օտարի ձեռքով իբրև բացատրություն լիտր բառի՝ «Ծ (100) դրամ կշիռ եղ», որով կամենում է իբր ասել թէ մի լիտրը հաւասար է հարյուր դրամ կշռին:—Վենետիկի օրինակի մէջ գրած է «լըտրեղն» (անշուշտ՝ «լըտր եղն»): Իսկ այդ բառի տակ կցած է լուսանցքի վրա այսպիսի ծանոթություն՝ Այսպես ի հնագույն. ի մի օրին. «Լիտր իւղն»։ Երիս խանգարեալ օրինակսն՝ «կովու հարիւր դրամ կշիռ իւղ տացեն: Սոյնպէս գրած է և № 488, 749 Սին. Կարապ. օրինկ. մեջ՝ «եւ կովու Ծ (100) դրամ կշիռ եղ տացեն»¹⁹:

Այս կարևոր ընթերցվածները գտնվում են Դատաստանագրքի ձեռագիր հին օրինակներում, ուստի հավանական պիտի համարել, որ Մխիթար Գոշի մոտ հիշատակված «լիտր»-ի կշիռը եղել է, իրոք. «Ծ դրամ»: Բյուզանդական «լիտր»-ի կշիռը (= 326,4 դրամ), ինչպես գիտենք, հավասար էր 80 «դրամ»-ի («դրամ»-ը = 4,08 դրամ), սակայն իրաքի «լիտր»-ը, որ գործ էածվել արաբական աշխարհակալության ժամանակ գրեթե ամեն տեղ՝ անգամ Սպանիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում՝ այժմյան կշռով 408 դրամ էր, և հենց այս «լիտր»-ը, իմ կարծիքով, համապատասխանում է Դատաստանագրքում մատնանշված «լիտր»-ին, որի կշիռը, ինչպես տեսանք, հավանորեն, 100 «դրամ» էր²⁰:

Եթե ընդունելի համարվի իմ այս ենթադրությունը, յուզից վճարվող բնահարկը կամ «շարիատ»-ը, որ Գոշի Դատաստանագրքում սահմանված էր յուրաքանչյուր կովից մեկ լիտր, այժմյան կշռով պետք է հաշվել 408 դրամ կամ ռուսական 1 ֆունտ:

Բացի «շարիատ»-ից, որի բնահարկ լինելը հաստատում են վերոհիշյալ վկայությունները, բնական հարկի նշանակություն

¹⁹ Տե՛ս Մխիթարյա Գոշի Դատաստանագիրք Հայոց Բ, ա, էջ 315, ծանոթ. 678:

²⁰ Կշիռների և չափերի ուսումնասիրությունը, պետք է ասել, որ խիստ բարդ ու դժվար խնդիր է, որին պետք է մոտենալ առանձին զգուշությամբ: Ոչ միայն հին, այլ նաև գիտական նորագույն աշխատություններում կշիռների, չափերի և գրամների վերաբերմամբ հանդիպում են հաճախ միանգամայն սխալ ցուցումներ, որ կարող են հիմք ծառայել սխալ ու խառնաշփոթ հաշիվների: Օրինակ, Ն. Ռոմ-կովի «История России» աշխատության մեջ (1919, 1, էջ 156) բյուզանդական «լիտր»-ը կամ ֆունտը հավասար է ընդունվում ռուսական այժմյան 3/4 ֆունտի: Բյուզանդական «լիտր»-ի կշիռը, ինչպես ցույց է տրված իմ մի այլ աշխատության մեջ («Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», 1, Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի № 2) 326,4 դրամ էր, իսկ ռուսական ֆունտի՝ 408 դրամ, ուստի նա հավասար է ոչ թե 3/4 ուսա. ֆունտի, այլ 4/5:

ունեցել է, ըստ երևույթին, նաև «պախտ» հարկը, որը հանդիպում է մի անգամ միայն Վիմական տարեգրում՝ Անիի 1046—1050 թվի հետևյալ արձանագրության մեջ.

Վիմական տարեգիր, էջ 27՝ Անի, 1045—1054 թ²¹.

«Ըստ Առանս մագիստրոս, մեծարեալ ի մեծափառ թագաւորութեանց ի գեղ զարդու եւ ի տես մանգութեան իմո, եկի յարեւելս, ի գեղեցկաշէն բերդս, յԱնի, բարձրացուցի բաւանդակ զպարիսպսորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրությամբ, եւ ի յիմոց մեծածախ գանձուց ածի շանիւ շուր յորդարութս ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց: Բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թաղուհոյն վասն պախտից տանց քաղաքիս և քաստակին, զոր տային ամյամէ չափ ութից լտերց, այլ և ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիտ երկուց լտերց, զոր տայր մութսիրն այս ամէն»:

Թեև այս վկայության մեջ չէ հիշված, թե ի՞նչն էր տրվում «չափ ութից լտերց» և «երկուց լտերց», սակայն միանգամայն պարզ և որոշ է, որ «պախտ տանց»-ը բնական հարկ էր, ինչպես և «թաստակ»-ը, որի մասին խոսելու ենք առանձին:

«Պախտ»-ը, իմ կարծիքով, հոմանիշ է այստեղ «շարիատ»-ի և, հավանորեն, նույն հարկի պարսկական անունն է²²: Ինչպես հայտնի է, հայերեն «բախտ» բառը, որը փոխառություն է պարթևերենից, հնդկա-իրանական լեզուներում նշանակում էր ոչ միայն «բախտ, վիճակ, ճակատագիր», այլև «մաս», բաժին²³, ճիշտ այնպես, ինչպես և ռուսական ДОЛЯ բառը, որի սկզբնական իմաստը «մաս, բաժին» է, փոխաբերաբար նշանակում է նաև «բախտ, ճակատագիր»:

21 Բյուզանդական իշխանությունը հաստատվել էր Անիում 1046 թվին, Զոյե կայսրուհին, որ հիշվում է սույն արձանագրության մեջ, վախճանվել է 1050 թվին: Արձանագրությունը գրված է, հավանորեն, ոչ թե 1045—1054 թվականների ժամանակամիջոցում, այլ 1046—1050 թթ.:

22 Պրոֆ. Ս. Եղիազարյանն այս հարկը նույնն է համարում, ինչ որ «դոնագիր»-ը, և «պախտ տանց»-ը թարգմանում է ПОДОМНЫЙ НАЛОГ: Այս հարկը, — ասում է նա, — գույություն է ունեցել Անդրկովկասի մահմեդական շրջաններում՝ ovphull [подомные деньги] կամ thuspiphull [подомные деньги] անունով (տե՛ս Исследование, էջ 39): Իմ կարծիքով, «դոնագիր» և «պախտ տանց»-ը տարբեր հարկեր են: Բացի այդ՝ արձանագրության բովանդակությունից պարզ երևում է, որ «պախտ»-ը տարբեր է նաև հիշյալ մահմեդական հարկերից, որովհետև այս հարկը տրվել է ոչ թե դրամով, այլ լիտրերով:

23 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, Երևան, 1926, էջ 906:

Ինձ թվում է, որ այս «պախտ»-բնահարկը պարթևներին կամ պարսիկներին վերոհիշյալ նույն baxt-ն է, որը կարող էր բացի իր սովորական նշանակություններից ունեցած լինել նաև բերքից վճարվող մասի կամ բնահարկի նշանակություն:

3. «ԹԱՍՏԱԿ» = ԹԱՍՈՒ-ՏԱԿ.

1046—1050 թվի Անիի արձանագրությունը, որի մեջ հիշատակված է «պախտ տանց» հարկը, ուշագրավ մի նեցուկ է ու կռվան, որը, իմ կարծիքով, հիմք կարող է ծառայել «թաստակ» հարկի լուսաբանության համար:

Այս վերջին հարկը հիշված է հինգ անգամ IX դարի հետևյալ արձանագրություններում.

1. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոր 1014 թ.

«Եւ ես Աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ ղհարկն (այսինքն՝ «զշարիատն») բնովիմք յաւիտեանից եւ զթաստակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց եւ զաւակաց, որ ար թ. կ. Հաոց նկգ էր»...

2. Վիմական տարեգիր—էջ 14՝ Հոռոմոս, 1013 թ.

«Ես Անանիա, առաշնորդ գրլով. ս. ուխտիս... զատեցի մեծաւ ջանիւ զհարկ եւ զթաստակ, առի և զՔեղարագոմն իւր ամենայն գոյի ի. ս. ուխտս վասն ապաւինի տեղի լինելոյ ի փախըստեան ժամանակի եւ այլ բազում ինչ աւգտի փայտի եւ խոտի... տուող այլմ պարգևի Գագիկ էր... եւ որգեակք իւր՝ Սմպատ եւ Աբաս եւ Աշոտ:

3. Վիմական տարեգիր, էջ 21՝ Երերուք, 1038 թ.

«Յանուն Աստուծոյ ի թուականին ՆՁԷ. (բ)արեպաշտ թագուիս ղուստր Աբասա, Սմբատ Շահնշահի կինս, եւ Աշոտո մա(յ)րս, որ ազատեցի զԵրէրվաց թաստակաս յորդէջ յորդիս Սմբատ Շահնշահանի հզուրի եւ արքաի արեւշատութեան»...

4. Վիմական տարեգիր, էջ 27՝ Անի, 1046—1050 թ.

«Ես Առանս... բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին, զոր տային ամ յամէ չափ ութից լտերց. այլ և ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, զոր տայլ մութսիբն այս ամէն»²⁴.

²⁴ Կա մի վկայություն եւ թաստակի մասին Ալամնի 1041 թվի արձանագրության մեջ. տե՛ս Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, էջ 76.

Պրոֆ. Ս. Եղիազարյանը, կարծում է, որ «Թաստակն» իրական ծագում ունի և համեմատում է այս բառը dāstak-ի հետ²⁵, «Քուրդերի մոտ,—ասում է նա,—մի սովորություն կա, որի համաձայն նախընտրված իրավունք ունի տնտեսական տարվա վերջին, երբ լրանում է տարեկան իր վարձույթի ժամանակը, վերցնելու իբրև պարգև մեկ ոչխար կամ մեկ գառ իր ընտրությամբ: Այդ ոչխարը կամ գառը, որ նրա աշխատավարձի մեջ չէ մտնում, այլ տրվում է նրան իբրև պարգև, անվանում է dāstak: «Թաստակ»-ը, որ հիշվում է վավերագրերում, կարող է թերևս հատուկ տուրք լինել հարկահավաքի օգտին»²⁶:

«Թաստակ»-ի այս ստուգաբանությունը թե հնչյունական տեսակետից և թե իմաստի տարբերության պատճառով միանգամայն անընդունելի է, սակայն պրոֆ. Եղիազարյանի ենթադրությունը, ավելի ճիշտ գուշակությունը, որ «Թաստակ»-ը կարող է լինել լրացուցիչ տուրք հօգուտ հարկահան պաշտոնյաների, իմ կարծիքով, անհավանական չէ:

Նույն եզրակացության հանգել եմ և ես, բայց ոչ վերահիշյալ բացատրության հիման վրա, որ համարում եմ սխալ, այլ փաստական ուրիշ ցուցումների օգնությամբ, որ բխում են արձանագրական վկայություններից: Վկայություններում, նախ և առաջ, աչքի է ընկնում, որ «Թաստակ»-ը հիշվում է «շարիատ» կամ «պախտ տանց» բնահարկի հետ միասին:

1008 թվին Կատրանիդե թագուհին, ինչպես տեսանք, աղատել էր Տեկորը «շարիատ» հարկից, իսկ 1014 թվին Աշոտ թագավորը հաստատում է այդ և իր կողմից ազատում նույն Տեկորը նաև «Թաստակ»-ից (վկայութ. 1): Հոռոմոսի առաջնորդ Անանիան 1013 թվին աղատել է «մեծաւ ջանիւ զհարկ և զթաստակ» (վկայութ. 2): 1046—1050 թվականների ժամանակամիջոցում «Առաւն» մագիստրոսը բերել է «գիր ազատութեան... վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին» (վկայութ. 4):

²⁵ Ս. Եղիազարյանից առաջ հայերեն «Թաստակ»-ի ծագումը պարսկերեն dāstāk-ից որոշ վերապահությամբ, մատնանշել է Նիկ. Մառը: «Если название повинности, *թաստակ*,—ասում է նա,—обязано своим происхождением той статье закона или специальной грамоте, в силу которой требовалась ея уплата, то его можно сблизить с персидским словом *litterae sigillo munitae fuisse praefecit scriptae* [Vuilers. Lex. Pers. Lat]. տե՛ս Новые материалы по арм. эпиграфике. С. Пет., 1893, էջ 80.

²⁶ «Исследования по ист. армянск. права» էջ 4 և 42.

Այս վկայություններից ստացվում է այն տպավորությունը որ «շարիատ»-ը, որը Հոռոմոսի արձանագրության մեջ անվանված է «հարկ», իսկ Անիի արձանագրության մեջ՝ «պախտ տանց», ինչ որ կապ է ունեցել «թաստակի» հետ: Ինքնըստինքյան այս դիտողությունը կարող է անհիմն կամ քմահաճ թվալ, սակայն նույն ենթադրության կռվան է հանդիսանում մի նոր հանգամանք, որ արժանի է առանձին ուշադրության:

Անիի 1046—1050 թվի արձանագրության մեջ ոչ միայն միասին են հիշված «պախտ տանց» բնահարկը և «թաստակ»-ը, այլ մատնանշված է նաև հարկերի քանակը: Առաջին քանակը՝ «շափ ութից լտերց» վերաբերվում է, անշուշտ, քաղաքի ամեն մի տնից տրվող հիմնական հարկին, իսկ երկրորդը՝ «գիւտ երկուց լտերց», ամենայն հավանականությամբ, լրացուցիչ «թաստակ» հարկն է, որը, ինչպես տեսնում ենք, կաղմում է առաջին հարկի $\frac{1}{4}$ մասը:

Անուշադիր լպետք է թողնել, որ այս վերջին քանակը՝ հիմնական հարկի $\frac{1}{4}$ -ը՝ արձանագրության մեջ անվանված է «գիւտ երկուց լտերց», այսինքն՝ «շահ» կամ «վաստակ»: Վերջապես՝ ուշագրավ է ու հետաքրքիր, որ «Առաւն» մագիստրոսը «խափանել» է այդ «գիւտ»-ը կամ «վաստակ»-ը «ի խնդրո իշխանաւորաց»: Ըստ երևութիւն, «ծիրանեծին թագուհոյ» ազատութեան գր»-ից դուրս այդ «գիւտ»-ը խափանելու համար հարկավոր է եղել նաև քաղաքի իշխանավորների համաձայնությունը:

Արդ՝ այս բոլոր դիտողություններից, կարծում եմ, կարելի է հետևեցնել, որ «թաստակ»-ը լրացուցիչ տուրք էր՝ $\frac{1}{4}$ -ը հիմնական բնահարկի, որ ստանում էին, հավանորեն, «մութսիք»-ը կամ թերևս նաև ավելի բարձր կանգնած իշխանավորները:

Այս «մութսիք»-ը, որ Անիի անթվական մի արձանագրության մեջ անվանված է «մուսայիպ»²⁷, իսկ Սմբատի Դատաստանագրութում՝ «մուլթասիպ»²⁸ արաբական muhtasib-ն՝ է, որը, ինչպես հայտնի է, արաբական տիրապետության ժամանակ քաղաքներում վարում էր ոստիկանապետի պաշտոն և հսկում էր շուկայի, կշիռների ու շափերի վրա: Ինչպես տեսնում ենք Անիում նրան հանձնելված է եղել նաև բնական հարկերի հավաքումը:

Գյուղական շրջաններում վարչական ու հարկահավաքման գործը վարել են, ինչպես երևում է արձանագրական վկայություն-

²⁷ Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 231:

²⁸ Տե՛ս J. Karst, Sempadscher kodex, Strassburg 1905. Bd I ՃԺԲ—էջ 162 և BD II, էջ 233:

ներից, «ձեռնաւոր»-ները²⁹, Եթե վերոհիշյալ կոահումը ճիշտ լինի, որ «Թաստակ»-ը 1046—1050 թվի Անիի արձանագրության մեջ լրացուցիչ տուրք է, որ ստանում էր «մովսթասիպ»-ը այդ դեպքում՝ Տեկորի 1014 թվի, Հոռոմոսի 1013 թվի և Երերուքի 1038 թվի արձանագրություններում նույն «Թաստակ»-ը պետք է ընդունենք դարձյալ լրացուցիչ տուրք, որ տրվել է գյուղական շրջաններում «ձեռնաւոր»-ներին:

Որ «ձեռնաւոր»-ների հատուկ հարկ, իրոք, գոյութիւն ունեցել է՝ այդ, իմ կարծիքով, կարելի է եզրակացնել XIII դարի հետեւյալ վկայութիւններից.

1. Վիմական տարեգիր, էջ 51՝ Հաղբատ, 1210 թ.

«Եւ է այս գեղ աղատ յամենայն հարկէ ի պատրոնաց, ի ձեռնաւորաց, ի գյուղականաց»:

2. Վիմական տարեգիր, էջ 150՝ Նորավանք, 1275 թ.

Придерживаясь означенного толкования, необходимо, конечно, предположить, что к началу первого века нашей эры древняя Грузия находилась не под единоличным и исключительным управлением грузинских царей, а целой группы политических властителей, названных у Страбона базилевсами. Можно одновременно предположить, что описанная у Страбона социальная структура древней Грузии близко сходна с социальной организацией, древней Армении. Вышеуказанные базилевсы соответствуют, по-видимому, главам нахарарских родов, «наһапет»-ам или «танутер»-ам феодальной Армении, воины, занимавшиеся в мирное время земледелием,—древнеармянским «азат»-ам, а «простолюдины, обслуживавшие всем необходимым для жизни»,—древнеармянским «шинакан»-ам. Вполне вероятно, что при новой этой концепции под βασιλικοὶ δοῦλοι следует подразумевать зависимых крестьян не только царского рода, но также и остальных властителей-базилевсов.

В предлагаемом измененном понимании сообщения Страбона социальный строй древней Грузии, казавшийся примитивным и первобытным, на самом деле, оказывается довольно сложной феодальной формацией, родственной по существу с нахарарским строем феодальной Армении. Любопытно при этом, что социальный состав войска древней Грузии оказывается аналогичным составу войск древней Парфии и Аршакидской Армении и состоящим из социально привилегированных воинов. Были ли эти воины держателями «хостак»-ов,—это, конечно, трудно решить за отсутствием конкретных сведений.

После того как выяснилось, что термин *servitium* имеет у Юстина значение вассала, нетрудно, мне кажется, установить в том же свидетельстве Юстина также и вероятный смысл термина *liberī*.

Согласно цитированному выше свидетельству Юстина, выступившая против Антония конница парфян состояла из 50.000 всадников и «только 400 из них были свободные». Исходя из этого сообщения, ученые приходят обычно к выводу, что социальная группа свободных в сравнении с несметным количеством рабов составляла в Аршакидской Парфии лишь незначительную часть населения. Такая малочисленность свободных или *liberī*, конечно подозрительна и крайне невероятна. Возникает поэтому вопрос: что собственно следует разуметь под термином *liberī* у Юстина?

При выяснении значения *liberī* необходимо принять во внимание, что почти весь состав парфянской конницы состоял, как сказано выше, из социально привилегированных *âzât*-ов всадников, которые, представляя собой широкий слой мелкой знати и находясь в вассальной или феодальной зависимости от крупных сеньоров, считались «свободными», как и рыцари феодальной Европы. Это видно, между прочим из древнеармянского перевода Библии и Евангелия, в котором для передачи понятий свободный и свобода, т. е. греч. ἐλεύθερος и ἐλευθερία употребляются арм. *ազատ* и *ազատիկ* *âzât* и *âzâtik*.

Аналогичное значение имело, как известно, и иранское слово *âzât*. Не может быть поэтому сомнения, что парфян-

ские всадники âzât-ы, хотя они у Юстина и обозначены термином *servitium* но, на самом деле, они были *liberi*.

Из этих новых данных и соображений о парфянской коннице с полной очевидностью вытекает, что в цитированном свидетельстве Юстина термин *liberi* не соответствует вовсе конкретным отношениям древнепарфянской жизни и относится, несомненно, не к широкой массе вышеозначенных «свободных» или *liberi*, а к какому-то иному социальному слою парфян. Если же иметь в виду, что в пятидесяти тысячной армии парфян имелось по Юстину всего четыреста, то нетрудно догадаться, что под этим термином *liberi* обозначены у Юстина члены высшего слоя парфянской знати, тех правящих и господствующих в Парфии родов, которые соответствовали по существу княжеским или нахарарским родам древней Армении.

Обозначив при помощи произвольного термина *servitium* основную массу всадников âzât-ов, являвшихся слугами-вассалами политических властителей Парфии, вполне естественно, что автор вышеозначенного свидетельства «свободный» или *liberi* должен был предположить членов высшего слоя правящих родов.

Итак, на основании наших заметок о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, мы приходим к твердому убеждению, что тексты античных писателей, которые служили основным источником для познания социально-экономической жизни Ближнего Востока, отличаются запутанностью терминологии и внутренней противоречивостью сообщаемых сведений. Использование данных армянских источников представляется, как видим, необходимым подспорьем при толковании текстов античных авторов.

Вышеизложенные наши выводы убеждают нас также и в том, что изучение нахарарского строя древней Армении дает нам возможность говорить о феодальном строе Парфии и других ближневосточных стран с несколько большей степенью достоверности, чем это могло бы быть сделано раньше.

ՖԵՈՒԱԼԻԶՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Արեալուներէի ու մարգալանութեան երջան)

1. Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պատմական գիտութիւնը, ինչպես հայտնի է, երկար ժամանակ համարում էր ֆեոդալիզմն առանձնակի ու ուրույն մի կազմակերպութիւն՝ հատուկ բացառապես միջնադարյան Արեւմտեան Եւրոպային: Սակայն դեռևս XVIII դարում անգլիական գիտնական Դիքսոնն իր «Պատմութիւն հռոմեական պետութեան անկման և քայքայման» հոշակաւոր աշխատութեան մեջ¹ կարծիք էր հայտնել, որ Արշակունիներէի տիրապետութեան ժամանակ հասարակային հարաբերութիւններն իրանում ունեցել են ֆեոդալական բնույթ:

Նույն այս կարծիքն ավելի ևս հիմնավորել էր ֆրանսիական արևելագետ Սեն-Մարտենը 1821 թ. Փարիզի ակադեմիայում իր կարդացած զեկուցման մեջ:

«Եթե համեմատենք,— ասում է Սեն-Մարտենը,— 12-րդ դարի Եւրոպայի այն միապետութեան հետ, որ Քրիստոսից երեք դար առաջ հիմնել էին Ասիայում Արշակունիները, մենք կրտսնները այստեղ ևս նման սովորույթներ և նման կարգեր. մենք կըզտնենք աստիճանավորներ միեւնոյն կոչումներով՝ մարքիւններ, բարոններ, ասպետներ և հասարակ զինվորականներ: Այստեղ ևս որոշ թվով մարդիկ ունին ազատութեան բոլոր իրավունքները, մինչդեռ մարդկանց մեծագույն մասը բոլորովին զուրկ էր այդ իրավունքներից»². Սեն-Մարտենի կարծիքով, ֆեոդալիզմի ստեղծողը ոչ

¹ E. Gibbon, The history of the decline and fall of the Roman empire ed. by Bury, London, 1900, I, p. 203-204:

² Histoire des Arsacides, II, էջ 293. տե՛ս Адоиц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр 436—437.

Եվրոպան էր, ոչ էլ Պարթևները, այլ նրա առաջացման պատճառը մեծ երկրների զինվորական գրավումն էր և այդ երկրների բաժանումը և հանձնումը զորքին: «Աստիճանները,— ասում է նա,— բաշխվել են այստեղ այնպես, ինչպես պաշտոնները զորքերում. այդ կազմակերպությունը, ուրեմն, անխուսափելի հետևանքն էր զինվորական կառավարության կամ նվաճման: Արշակունիները չէին, անշուշտ, այս ձևի կառավարության ստեղծողը, որովհետև նրանք չէին հարկավ Ասիայի առաջին նվաճողները» (տե՛ս նույնը, էջ 296):

Սեն-Մարտենի այս վերջին պնդումը, որ վերաբերում է ֆեոդալիզմի ծագման, այժմ, իհարկե, անընդունելի է, սակայն նրա մյուս ենթադրությունը, որ պետական կազմակերպության ֆեոդալական ձևն առանձնահատուկ է եղել նաև Պարթև Արշակունիների թագավորության, միանգամայն ճիշտ կոհսումն էր, որը հաստատվեց հետագայում այդ խնդրի մանրախույզ քննությամբ:

XIX դարի երկրորդ կեսում պատմական գիտության մեջ, ինչպես հայտնի է, ֆեոդալիզմի խնդրում առաջ էր եկել հետզհետե որոշ բեկում: Համեմատական-պատմական ուսումնասիրությունների շնորհիվ կարելի է այժմ վերջնականապես պարզված համարել, որ ֆեոդալիզմը գոյություն է ունեցել ո՛չ միայն միջնադարյան Եվրոպայում, այլև ուրիշ երկրներում: Այժմ արդեն ընդունում են, որ ֆեոդալիզմը սոցիալական զարգացման կարևոր ու հատուկ մի փուլն է և որ նրա գոյությունն ակներև է բազմաթիվ ժողովուրդների կյանքում, զանազան տեղերում և տարբեր դարաշրջաններում: Եվրոպական ֆեոդալիզմը հիշեցնող որոշ կարգեր մատնացույց են արվում այժմ Հին Հունաստանում և Հռոմում, Հին Արևելքում, սլավոնական երկրներում և Ռուսաստանում, Ճապոնիայում, Չինաստանում և ուրիշ տեղերում:

Ֆեոդալականության այդ երևույթները տարբեր երկրներում, տարբեր դարաշրջաններում և պատմական այլ և այլ պայմաններում ունեցել են, անշուշտ, բացի ընդհանուր նման գծերից, նույնպես և տեղական առանձնահատկություններ: Ֆեոդալիզմի պատմական-համեմատական ուսումնասիրության համար կարևոր է հենց լուսաբանել մանրամասն կերպով զանազան երկրների ֆեոդալական զարգացման երևույթներն իրենց ամբողջ անհատականությամբ, մատնանշելով թե նրանց հատկանշալի նման գծերը և թե նրանց շեղումները և առանձնահատկությունները:

Այդ ուսումնասիրությունները խիստ կարևոր են ո՛չ միայն

պատմագիտութեան, այլև սոցիոլոգիայի համար: Միանգամայն պարզ է, որ ֆեոդալիզմի գաղափարը՝ իբրև ընկերաբանական ընդհանուր հասկացողություն՝ հնարավոր կլինի վերջնականապես ճշտել միայն այն ժամանակ, երբ ֆեոդալական պետությունը և ֆեոդալիզմի երևույթներն իրենց իրական ու բազմազան առանձնահատկություններով ուսումնասիրված կլինեն բացի Արևմտյան Եվրոպայից նաև մյուս երկրների պատմական կյանքում: Առանց այդ ուսումնասիրությունների, բնականաբար, թերի ու անկատար կմնան նույնպես և պատմական-համեմատական հետազոտությունների նորագույն փորձերը, որոնց նպատակն է պարզել ու որոշել ֆեոդալականության խմբակից ձևերը և տալ նրանց մասին գիտական ընդհանրացումներ, հիմնված այն ամփոփումների վրա, որ վերաբերում են առանձին երկրների ֆեոդալական անցյալին:

Ընդհանուր տեսութեան այդպիսի մի փորձ արված է, օրինակ, Н. Рожков-ի նորագույն ընդարձակ աշխատության մեջ՝ «Русская история в сравнительно-историческом освещении (основы социальной динамики)», том. II, М., 1922: Բացի Եվրոպական երկրների ֆեոդալիզմից Ռաժկովը քննության է առել իր գրքում նույնպես և արևելյան երկրների ֆեոդալական զարգացումը զանազան դարաշրջաններում, ի միջի այլոց, նաև Հայաստանի և Վրաստանի: Սակայն համեմատական նրա այդ տեսությունը թի արևելյան և թե, հատկապես, Հայաստանի և Վրաստանի ֆեոդալիզմի մասին՝ միանգամայն վայրկեբր է և ավելի քան անբավարար: Հայաստանի, ինչպես և Վրաստանի, ֆեոդալիզմի համար նրա աղբյուրներն են, գլխավորապես, Զիվեիզովի և Զավախովի հոդվածները Հայաստանի և Վրաստանի պատմության ու գրականության մասին Գրանատի Հանրագիտական բառարանում: Պարզ է, որ հարևանցի ու վիճելի նման ամփոփումները, որոնք բնավ իսկ չեն լուսաբանում ֆեոդալիզմի էությունը վերոհիշյալ երկրներում, չեն կարող հիմք ծառայել ֆեոդալիզմի պատմական-համեմատական ուսումնասիրության:

Ռաժկովի սոցիալական-համեմատական նույն ուսումնասիրության մեջ անբավարար են ու խիստ վիճելի նաև այն գլուխները, որոնք համառոտ ու ամփոփ տեղեկություններ են պարունակում ֆեոդալիզմի մասին Բյուզանդիայում, Արաբական իսլամի ֆեոդալիզմի մասին, Հին Հնդկաստանում, Ասորեստանում, Բաբելոնում, Հին Եգիպտոսում, Զինաստանում, Ճապոնիայում և արևելյան այլ երկրներում: Անհաստատ ու անհաշող այս ամփոփումներն ակներախ կեր-

պով ցույց են տալիս, որ Արեւելքի նկատմամբ ֆեոդալիզմի խընդիրը դեռևս չի ենթարկվել մասնագիտական բազմակողմանի ու լուրջ քննության և կարոտ է, ուրեմն, ավելի խոր վերլուծման ու հետախուզման, քան մինչ այժմ կատարված են:

Հայաստանի նախարարական կազմակերպության մասնագիտական մանրախույզ հետազոտումը, ինչպես տեսնում ենք, նշանակութուն ունի ո՛չ միայն Հին Հայաստանի քաղաքական ու ներքին կյանքի կարևորագույն հարցերի լուսաբանության, այլև ընկերաբանական ու պատմական-համեմատական այն ուսումնասիրությունների համար, որ վերև մատնանշված են:

Հայկական ֆեոդալիզմի և նրա առանձնահատկությունների պարզաբանումն ունի և ուրիշ ուշագրավ ու ընդհանուր նշանակություն:

Դեռևս Արեւմեայան Պարսկաստանի տիրապետության ժամանակ՝ Հին Հայաստանը, գտնվելով նրա պետական կազմի մեջ, ենթարկվել էր, բնականաբար, իրանական կենցաղի ու կուլտուրայի ազդեցությանը:

Արմենիայում ևս, ինչպես և իրանում, բնակչության սոցիալական շերտավորումը և ազնվականության զորեղացումը տեղի էին ունեցել տոհմային կենցաղի քայքայման համապատասխան պայմաններում: Այնուհետև, Արտաշեսյան թագավորության անկումից հետո, երբ Հայաստանում հաստատվել էին Պարթև Արշակունիները՝ հայկական ֆեոդալիզմը, ինչպես հայտնի է, ձևավորվել ու զարգացել էր պարթևական կարգերի և ֆեոդալականության նման հիմքերի վրա: Իրանական պետականության ազդեցությունը շարունակվել էր Հայաստանում, անտարակույս, նաև Սասանյանների ժամանակ, գլխավորապես, մարզպանության շրջանում: Քաղաքական ու կուլտուրական նման պայմաններում են գտնվել նաև Վրաստանը և Աղվանքը:

Շատ պարզ է, ուրեմն, որ հայկական ֆեոդալիզմի լուսաբանումը կարող է որոշ լույս սփռել Մերձավոր Արեւելքի և, մասնավորապես, Հայաստանի հարևան երկրների սոցիալական և ֆեոդալական կազմակերպության վրա: Իսկ այդ չափազանց կարևոր է, որովհետև այդ երկրների սոցիալական հնագույն անցյալի մասին պարսկական ու վրացական աղբյուրները չունեն բավարար ու հաստատուն տեղեկություններ:

Հայկական ֆեոդալիզմի առաջին և, կարելի է ասել, միակ ուսումնասիրողը պատմական լուրջ քննության գիտական-համե-

մատական եղանակով եղել է նիկ. Ադոնցը, իր «Армения в эпоху Юстиниана» (СПб., 1908) կարևոր աշխատության մեջ նա, հիմնելով Գահնամակի և մատենագրական աղբյուրների վրա, ճշտել է հայկական նախարարությունների մոտավոր քանակը, որոշել է մեծ և փոքր նախարարությունների տոհմային կալվածների տեղագրությունը և դասավորությունը Հայաստանի զանազան շրջաններում, մանրախուլզ կերպով քննել է իրանական պետականության ու հայկական նախարարությունների ծագումը և նրանց տոհմային ու ֆեոդալական հիմքերը, և իր ուսումնասիրության վերջում համեմատել է նախարարական կազմակերպությունը ֆրանսիական ֆեոդալիզմի հետ և ցույց տվել նրանց նման ու համապատասխան ընդհանուր առանձնահատկությունները:

Ադոնցի ուսումնասիրության բուն նպատակն է եղել պարզել հայկական ֆեոդալիզմի ծագումը, իսկ նրա էությունը և առանձնահատկությունները քննված են նրա մոտ ամփոփ ու համառոտ կերպով և միայն այն շահով, ինչ շահով որ այս խնդրի լուսաբանումը պարզում է նախարարական Հայաստանի ֆեոդալական բնույթը, իմ այս ուսումնասիրության մեջ, ընդհակառակը, մանրամասն կերպով քննության է առնված նախարարական և, գլխավորապես, Արշակունյաց շրջանի նախարարական կազմակերպությունն իր ուրույն բովանդակությամբ և իր բոլոր էական առանձնահատկություններով, իսկ այդ կազմակերպության ծագման խնդիրը շոշափված է սեղմ ու ընդհանուր կերպով: Համաձայն այդ հատուկ նպատակի՝ իմ աշխատության մեջ ընդարձակ տեղ է տրված նախարարական կազմակերպությանը վերաբերվող այն բոլոր տեղեկությունների և կարևոր վկայությունների քննությանն ու ճշտմանը, որոնք հանդիպում են նախարարական շրջանի մատենագրական հայ աղբյուրներում: Առանց այդ քննության և մատենագրական վկայությունների ճշգրիտ մեկնության անկարելի է ըստ իս հասկանալ հայկական ֆեոդալիզմի էությունը և տալ նրա մասին հիմնավորված ընդհանուր տեսություն:

Որ Հին Հայաստանի նախարարական կազմակերպությունը համապատասխանում է իր էությամբ Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմին, այդ ապացուցել է Ադոնցը վերոհիշյալ իր աշխատության մեջ: Իմ ուսումնասիրության մեջ ցույց է տրված նաև, որ ֆեոդալական այդ կազմակերպությունների նմանությունները շատ ավելի մոտ են եղել և սերտ, քան մինչև այժմ ենթադրել են:

Ինչպես հայտնի է, Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի հատ-

կանիշներին մեկը համարվում է feod-ը, որից հենց ծագել է այդ կազմակերպության ֆեոդալիզմ անունը։ Feod-ը կամ Lehn-ը, որպես հողային-ֆեոդալական հարաբերությունների հատուկ կարգ, պատմագետների կարծիքով, գոյություն է ունեցել բացառապես միջնադարյան Եվրոպայում։ Նրանց կարծիքով՝ feod-ը կամ պամանական ժառանգական յուրահատուկ հողատիրությունը միանգամայն անծանոթ են եղել արևելյան երկրներում։ Արդ՝ ուշագրավ է և ֆեոդալիզմի պատմական-համեմատական ուսումնասիրության համար խիստ կարևոր, որ Հին Հայաստանում, ինչպես պարզ երևում է հայկական աղբյուրների ուշադիր քննությունից, «խոստակ»-ը, լինելով կարևորագույն տեղմին նախարարական կազմակերպության, իր էությունը և իրավական բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան feod-ին կամ Lehn-ին, իսկ «խոստակդար» նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ feodataire կամ Lehnshalter։ Պարզվում է, ուրեմն, որ Հին Հայաստանի նախարարական կազմակերպությունն ունեցել է, բացի Ադոնցի մատնանշած ֆեոդալական առանձնահատկություններից, նաև այն հիմնական ու էական հատկանիշը, որը բնորոշ է եղել ու հատուկ միջնադարյան ֆեոդալիզմին Արևմտյան Եվրոպայում։

Նոր այս հետևությունն առանձնապես կարևոր է այն պատմագետների համար, որոնք ուսումնասիրում են ֆեոդալիզմի էությունը Մերձավոր Արևելքում և, հատկապես, Հայաստանի հարևան երկրներում։ Feod-ի մասին ուսերեն իմ աշխատության մեջ («Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении», изд. Захлялиала Академии Наук, Тифлис, 1932) ես մատնացույց էի արել, որ feod-խոստակը գոյություն ունեցած պիտի լինի նաև արևելյան այդ երկրներում։ Ուրեմն՝ այս ենթադրությունն անսպասելի նոր հնարավորություններ է ընձեռում մասնագետներին հետազոտություններ կատարելու նաև այս ուղղությամբ։

Հայկական ֆեոդալիզմի տևողության ու ծագման ժամանակաշրջանի մասին իմ եզրակացությունները տարբեր են Ադոնցի ենթադրություններից։ Հայաստանի ֆեոդալականացման սկզբնական շրջանը ես ենթադրում եմ ո՛չ թե Արտաշեսյան թագավորության ժամանակ, ինչպես կարծում է Ադոնցը, այլ այդ թագավորության հատատումից առաջ։ Այնուհետև՝ նախարարական կազմակերպությունը գոյություն է ունեցել Հայաստանում մինչև ուշ միջնադար։ Նրա քայքայման ու անկման սկիզբը դրվելու է ըստ իս

XIV դ. երկրորդ կեսից հետո: Սակայն ի նկատի պետք է ունենալ, որ հետագա դարերում ևս հայկական ֆեոդալիզմի որոշ մնացորդներ պահպանվել էին Հայաստանի մի քանի շրջաններում:

Նիկ. Ադոնցի կարծիքով՝ նախարարական կազմակերպությունը Հայաստանում գոյություն է ունեցել մինչև մոնղոլական արշավանքները (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 236). Այս ենթադրությունը, իհարկե, ճիշտ չէ, որովհետև խոշոր կալվածատիրության և ֆեոդալական իշխանությունների գոյությունը Հայաստանում ակնհայտ մի փաստ է նաև մոնղոլական տիրապետության ժամանակ:

Ֆեոդալիզմի երկար տևողությունն ուշագրավ մի երևույթ է ո՛չ միայն Հայաստանում, այլ նաև հարևան Վրաստանում, մասամբ և Ադվանքում: Ինքնըստինքյան հասկանալի է, որ տարբեր դարաշրջաններում և Հայաստանի զանազան մասերում նախարարական կազմակերպությունը կրած պիտի լիներ զգալի փոփոխություններ: Պարզաբանել ըստ հնարավորության հայկական ֆեոդալիզմի բոլոր շրջանները սկսած հնագույն ժամանակներից մինչև նրա քայքայումը՝ այդ, անշուշտ, ապագայի գործ է: Իմ այս աշխատության մեջ քննության է առնված ֆեոդալիզմը Հին Հայաստանում միայն Արշակունյաց թագավորության և մարզպանության շրջաններում: Թեև Հայաստանի ֆեոդալականացման սկիզբը մենք ենթադրում ենք Արտաշեսյան թագավորության հաստատումից առաջ, սակայն ֆեոդալիզմի ծագման ամենահին այդ շրջանի մասին մենք չունենք որոշ ու հաստատուն վկայություններ: Աղբյուրների տեղեկությունները վերաբերում են, գլխավորապես, զարգացած ու հարդարված նախարարական կարգերին, որ վերջնականապես ձևակերպվել էին Արշակունյաց թագավորության հաստատման ժամանակ: Հասկանալի է, թե ինչո՞ւ առաջին հերթին անհրաժեշտ էր ուսումնասիրել հայկական ֆեոդալիզմը հենց այս շրջանում:

Ինձ թվում է, որ նախարարական կազմակերպության հնագույն այս անցյալը պարզելուց հետո դժվար չպիտի լինի ուսումնասիրել այնուհետև նաև նրա զարգացումը հետագա դարաշրջաններում:

2. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նախարարական կազմակերպությունը Հին Հայաստանում հայոց պատմության այն ելակետային կարևորագույն խնդիրն է, որի ուսումնասիրությունը հիմք է ծառայելու Հայաստանի սոցիալական

կյանքի և անգամ քաղաքական պատմության լուսաբանման: Հայաստանի ներքին կյանքի մյուս հիմնական խնդիրն է քաղաքների և առևտրի զարգացման պրոբլեմը, որ ես մանրամասն քննել էի ռուսերեն իմ նախորդ աշխատության մեջ: «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен» (Эривань, 1930):

Եթե այս խնդիրները միայն վերջերս են ենթարկվում գիտական մանրախույզ հետազոտման՝ դրա գլխավոր պատճառն այն է, որ մատենագրական հայ աղբյուրները նկարագրում են գերազանցապես Հայաստանի արտաքին քաղաքական անցքերը, իսկ սոցիալական-տնտեսական երևույթների և նախարարական կազմակերպության մասին նրանք տալիս են, մեծ մասամբ, անուղղակի և միջանկյալ տեղեկություններ, որոնք չեն կարող նյութ դառնալ ընդհանրացումների առանց մասնագիտական հատուկ վերլուծման:

Այդ մութ տեղեկությունները, ինչպես և նախարարական կենցաղի հատուկ տեղմիները, թեև քննված ու մեկնված են մասամբ նախապատրաստական իմ աշխատություններում, սակայն նույն վկայությունները և նախկին իմ դիտողությունները մեջ են բերված նաև սույն ընդարձակ ուսումնասիրության մեջ, որի նպատակն է արդեն տալ հայկական հնագույն ֆեոդալիզմի մանրամասն նկարագրությունը:

Բուն նյութին անցնելուց առաջ հարկավոր է սակայն մատնացույց անել այն աղբյուրները, որոնք հիմք են ծառայել մեր ուսումնասիրության:

Նախարարական կազմակերպության հնագույն շրջանի հիմնական աղբյուրներն են, նախ և առաջ, հին հայ մատենագիրները՝ Փավստոսը, Ագաթանգեղոսը, Կորյունը, Ղազար Փարպեցին և Եղիշեն: Սրանց երկերը, որ գրված են մարզպանության շրջանում հինգերորդ և վեցերորդ դարերում, իրենց մեջ, բնականաբար, արտացոլում են նախարարական Հին Հայաստանի կենցաղը, աշխարհայեցողությունը և հատուկ կարգերը: Վերոհիշյալ հեղինակներից առաջին երկուսը՝ Փավստոսը և Ագաթանգեղոսը՝ տալիս են մեզ ուշագրավ տեղեկություններ նախարարական Հայաստանի մասին Արշակունյաց թագավորության հետին շրջանում, իսկ մյուսները՝ Կորյունը, Ղազար Փարպեցին և Եղիշեն՝ հայկական ֆեոդալիզմի կարևորագույն աղբյուրներն են մարզպանական շրջանի:

Ամենամեծ չափերով օգտվել ենք, իհարկե, Փավստոսի պատմությունից, որն անփոխարինելի ու անգնահատելի աղբյուր է

Ֆեոդալական հին կենցաղի և պարունակում է իր մեջ միջանկյալ հարուստ ու բազմատեսակ նյութեր ավատական հարաբերությունների, բարքերի ու Արշակունյաց նախարարական պետության կարևոր առանձնահատկությունների մասին: Եթե Փալստոսի մոտ պատմական փաստերը և ժամանակագրությունը կարող են միշտ ճշտման ուրիշ աղբյուրների օգնությամբ՝ նրա կենդանի ու պատկերավոր լեզվով նկարագրած միջավայրն իր հատուկ բարոյական ու իրավական հայացքներով իրական կյանքի ճշգրիտ պատկերացումն է, որ միանգամայն վստահելի է իբրև առաջնակարգ նյութ հայկական ֆեոդալիզմի ուսումնասիրության:

Նախարարական կազմակերպության հնազույն շրջանի ուսումնասիրության համար ո՛չ պակաս էական նշանակություն ունեն հայկական ծագում ունեցող այն կանոնադրությունները, որոնց ժամանակը հավանական է ենթադրել արաբական տիրապետությունից առաջ մարզպանության շրջանում: Հայկական այս կանոնադրությունները հետևյալներն են՝

1. Շահապիվանի ժողովի կանոնները, որ ընդունված էին հինգերորդ դարի քառասնական թվականներին.

2. Սահակ կաթողիկոսին (+439 թ.) վերագրված կանոնադրությունը.

3. Ներսես կաթողիկոսի (548—557) և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի անունով կանոնադրությունը.

4. Հովհան Մանդակունուն վերագրված կանոնադրությունը և

5. Դավիթի 645 թվի ժողովի կանոնադրությունը:

Այս կանոնադրություններում կանոնների մեծագույն մասը վերաբերում են կամ եկեղեցական դասին և կամ դավանանքի ու պաշտամունքի ծիսական խնդիրներին: Սակայն նրանց մեջ հանդիպում են, բարեբախտաբար, նաև այնպիսի կանոններ ու ակնարկներ, որոնք լուսաբանում են նախարարական Հայաստանի կամ սոցիալական-իրավական հարաբերությունները և կամ ուրիշ կարևոր պրոբլեմներ:

Մեջբերված կանոնադրությունների հաջորդականության մասին ուշագրավ է Սիրական Տիգրանյանի հետևյալ դիտողությունը: «Զպետք է կարծել,— ասում է Տիգրանյանը,— թե այս կանոնադրությունների գրավոր հորինման ժամանակաբանական հերթավորությունը նույնը պետք է եղած լինի, ինչ որ դրանց անվանյալ հեղինակների կենսագրական հաջորդականությունն է եղել: Ամեն հավանականությամբ... Հովհան Մանդակունուն կառուցողությամբ

ալբիի ուշ է, քան, օրինակ, Ներսեսի և Ներշապուհինը» (տե՛ս «Հայոց իրավունքի պատմության ներածություն», Երևան, 1924, էջ 116—117):

Բացի վերոհիշյալ հայկական կանոնադրություններից ուշադրության արժանի է իբրև օժանդակ աղբյուր նաև Աղվանից Վաչագան արքայի կանոնադրությունը, որն ընդունված է եղել «Աղուէն»-ի ժողովում ո՛չ թե 488 թվին, ինչպես սովորաբար ենթադրում են, այլ, հավանորեն, յոթերորդ դարի սկզբներում (տե՛ս իմ աշխատությունը՝ «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II», Երևան, 1928, էջ 8):

Նախարարությունների թիվը, գահերեցությունը և զինվորական ուժը որոշելու համար կարևոր աղբյուրներ են թե՛ վերոհիշյալ հին մատենագիրների համապատասխան տեղեկությունները և թե՛ Գահնամակն ու այսպես կոչված Զորանամակը, որոնք մանրամասն քննության են առնված Ադոնցի աշխատության մեջ («Армения в эпоху Юстиниана», стр. 236—297. հմտ. նաև Սիր. Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմության ներածություն, էջ 187—202): Այս երկու գրությունը, թեև ուշ ժամանակի խմբագրություններ են, սակայն ինչ չափով որ այդ վավերագրերի տեղեկությունները քաղված են հին աղբյուրներից՝ նրանք որոշ նշանակություն ունեն նաև հայկական ֆեոդալիզմի հնագույն շրջանի ուսումնասիրության համար: Ի նկատի ունենալով, որ Ադոնցի աշխատության մեջ ընդարձակ կերպով քննված են թե՛ Գահնամակն ու Զորանամակը և թե՛ նախարարությունների թիվն ու նրանց երկրների տեղադրությունը՝ այդ խնդիրների վրա իմ ուսումնասիրության մեջ ես կանգ եմ առել համառոտ ու հարեանցի կերպով:

Հայկական հնագույն ֆեոդալիզմի մասին մի քանի կարևոր վկայություններ տալիս են նաև օտար աղբյուրները և, մասնավորապես, այն հունարեն արձանագրությունները, որոնք գտնվում են Հայաստանում: Այս կարգի աղբյուրները, դժբախտաբար, շատ քիչ են: Հայտնի են առ այժմ և հրատարակված են հետևյալ երկու արձանագրությունները.

1. Ապարանում գտնված Տրդատ Թագավորի հունարեն արձանագրությունը, որ կարդացել ու մեկնել է հայտնի ռուս գիտնական Ռոստովցըր (տե՛ս М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, Анийская серия, № 6, СПб., 1911). Այս հուշարձանի բովանդակությունից գիտենք, որ Տրդատ Թագավորը, հավանորեն, Տրդատ Մեծը՝ Գեթունիների տոհմի անդամնե-

րից մեկին նվեր է տվել ինչ-որ կալվածներ նիգ գավառում:

2. Երկրորդ հունարեն արձանագրությունը գտել է Լեման-Հաուպտը այժմյան Ֆարկին քաղաքի (=հին Տիգրանակերտ) պարսպի վրա: Այդ արձանագրությունը, որ կարդացել ու մեկնել է ինքը Լեման-Հաուպտը, հրատարակված է նրա «Armenien einst und jetzt» աշխատության մեջ (Bd, I, Berlin, 1910, S. 410—429), կարևոր այս հուշարձանը, որ ընդարձակ մի հայտարարություն է ու հրաման՝ ուղղված Տիգրանակերտ քաղաքի բնակչության՝ չի կարող վերագրվել Հայոց Պապ Թագավորին, ինչպես այդ ենթադրել է Լեման-Հաուպտը, որովհետև Պապը քրիստոնյա էր, մինչդեռ արձանագրության մեջ պարզ ասված է, որ Թագավորն իր իշխանությունը ստանձնել է «աստվածների հաճությամբ և օգնությամբ» և միաժամանակ նույն այդ Թագավորն անվանված է «աստված Թագավոր Թագավորաց»։ Մարկվարտի կարծիքը, որ արձանագրությունը վերագրվելու է ո՛չ թե չորրորդ, այլ երրորդ դարի Արշակունի հայ Թագավորներից մեկին (տե՛ս Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 158—159), ըստ իս միանգամայն հիմնավոր է ու հավանական:

Բացի վերոհիշյալ հիմնական աղբյուրներից՝ նախարարական կազմակերպության հնագույն շրջանի ուսումնասիրության համար կարևոր օժանդակ աղբյուրներ են մատենագրական այն ինքնուրույն երկերը, որոնք գրված են մարզպանության շրջանում և պարունակում են իրենց մեջ նախարարական միջավայրի հատուկ տեղմիններ և երբեմն նաև միջանկյալ տեղեկություններ իրենց ժամանակակից ֆեոդալական կարգերի մասին: Այս խմբի աղբյուրներից, որոնցից օգտվել ենք սույն ուսումնասիրության մեջ, կարևոր են, օրինակ, Գիրք Թղթոցի հնագույն մասերը և Հովհան Մանդակունուն վերագրված ճառերը, որ համարվում են այժմ, գլխավորապես, Հովհան Մայրագոմեցու ճառեր (տե՛ս Կարապետ եպիսկոպոս, «Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի», էջմիածին, 1913, արտատպություն «Շողակաթ»-ից):

Օժանդակ աղբյուրներ են նմանապես արաբական և Բագրատունյաց ժամանակի և անգամ ավելի ուշ շրջանի հայկական մատենագրության երկերը: Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, ինչպես վերև ասացինք, գոյություն էր ունեցել մինչև ուշ միջնադարը: Հասարակային հին կազմակերպության ձևերը չէին, բնականաբար, չքացել նաև հետին դարերում, այլ նրանք որոշ փոփոխություններ կրելով կամ երբեմն նույնությամբ պահպանվել էին նաև այդ դարաշրջան-

ներում: Հասկանալի է, ուրեմն, որ նաև այս կարգի աղբյուրները, եթե նրանք օգտագործվեն զգուշությամբ և քննադատորեն, կարող են կոման ժառանգել որոշ խնդիրների լուսաբանման, որ վերաբերվում են նախարարական կազմակերպության հնագույն շրջանին:

Հայկական հնագույն ֆեոդալիզմին վերաբերվող սոցիալական, հարկային և մյուս կարևոր տերմինների իմաստը կարելի է հաճախ ճշտել ու լուսաբանել թարգմանական հին գրականության օգնությամբ: Ուշագրավ է, օրինակ, որ Հին և Նոր կտակարանների գրաբար բնագիրներում հունարեն schoinismos կամ schoinisma բառերը, որ նշանակում են՝ չափում լարի, չվանի միջոցով կամ լարով, չվանով չափված հողաբաժին՝ թարգմանված են «վիճակ» (Գ. Թագ. Դ. 13 Օրին. 1Բ, 9 ևն), eleutheros, eleutheria՝ «ազատ» և «ազատութիւն» (Եւք ԻԱ, 2. 26. 27. Գաղ. Բ. 4 ևն) oikonomos՝ «հաշարապետ» (Ա. Պետ. Դ. 10. Ա. Կորնթ. Դ. 1 և 2 ևն), paidiskè, therapainè, doule՝ «աղախին» (Ծնն. ԺԲ, 16. Եւք ԺԱ, 5. ԻԱ, 7 ևն) ևն: Ազաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ հայերեն բնագրի «հող երդում» կարևոր տերմինը թարգմանված է a-roura (տե՛ս Agathangelus und die Akten Gregors von Armenien, hrsgg. von Paul de Lagarde, Coettingen, 1887, s. 76), որ նշանակում է վարելահող կամ նաև հողի տարածության որոշ չափ: Թարգմանական գրականության թե՛ այս և թե՛ նման վկայությունները կարող են, իրոք, ինչպես վերոհիշյալ համեմատություններից տեսնում ենք, ժառանգել իբրև օժանդակ մի միջոց մոլթ ու անորոշ տերմինների քննության ու լուսաբանման:

Հայկական ֆեոդալիզմը, որ Արշակունյաց թագավորության և Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ ենթարկվել էր պարթևական ու սասանյան պետականության ազդեցությանը, իր էությունամբ նման էր, ինչպես վերև ասացինք, իրանական ֆեոդալիզմին: Այդ ազդեցությունը պարզ երևում է Հին Հայաստանի նախարարական կազմակերպությանը վերաբերվող սոցիալական հենց այն տերմիններից, որ իրենց ծագումով, մեծ մասամբ, պարթևական են կամ իրանական. օրինակ՝ նախարար, նահապետ, ազատ, ռամիկ, ռստանիկ, սեպուհ, խոստակդար, ասպետ, հազարապետ, սպարապետ, պայազատ ևն: Ֆեոդալական հարաբերությունները վերոհիշյալ երկրներում այնքան նման են եղել իրար, որ իրանական այդ ֆեոդալիզմին վերաբերվող օտար աղբյուրները կարող են, բնականաբար, օժանդակ աղբյուրներ համարվել նաև հայկական ֆեոդալիզմի ուսումնասիրության համար: Օտար այդ աղբյուրները և նրանց

հաղորդած վկայությունները, դժբախտաբար, շատ չեն, հիշատակված են Christensen-ի „L'empire des Sassanides, -le peuple, l'état, la cour“ աշխատության ծանոթություններում: Այդ աղբյուրներից առանձնապես կարևոր է «Տանսարի նամակը Տաբարիստանի: Թագավորին», որ հրատարակված է ֆրանսերեն թարգմանության հետ միասին „Journal Asiatique“-ում („Lettre de Tansar au roi de Tabaristân“, publ. et traduite par Darmesteter, Journ. Asiat. 1894, էջ 210 և և 513 և): Christensen-ի կարծիքով՝ այդ նամակը շարադրված է, հավանորեն, 557—570 թվականներին (տե՛ս „L'empire des Sassanides“, էջ 112): Նույն կարծիքը, նրանից անկախ ու այլ պատճառաբանությամբ, հայտնել է Մարկվարտն իր Eranschahr աշխատության մեջ (էջ 30 և ծան. 2):

Մենում է մեզ հիշել նաև մի այլ աղբյուր, որից դժբախտաբար, մենք չենք կարողացել օգտվել, թեև այդ աղբյուրը ևս, հավանորեն, հիմք է ծառայելու ապագայում Սասանյան Պարսկաստանի և Մերձավոր Արևելքի տնտեսական ու ներքին կյանքի լուսաբանման, Այդ՝ ասորական հնագույն մատենագրությունն է, որի մեջ կարող են գտնվել ինչպես և հայկական աղբյուրներում, որոշ վկայություններ և ակնարկներ Սասանյան Պարսկաստանի թե՛ ֆեոդալական կազմակերպության և թե՛ սոցիալական-տնտեսական հարաբերությունների մասին: Այդ նոր նյութերը կարոտ են դեռ հավաքման ու մշակման հետագա ուսումնասիրություններում: Մերձավոր Արևելքի ներքին կյանքի հետադոտման համար պատմագիտական այդ աշխատանքների ձեռնարկումը հերթական ու կարևորագույն անշուշտ, մի նոր խնդիր է, որի վրա հրավիրում ենք ասորագետ պատմաբանների ուշադրությունը:

Ա. ՑԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

«Աբրահամ խոստովանող, Վկայք Արևելից», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի, էջմիածին, 1921.

«Աղաթանգեղայ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Տիֆլիս, 1909.

Agatangelus und die Akten Gregors von Armenien, hrsgg. von Paul de Lagarde, Coettingen, 1867,

«Անանիայի վարդապետի Շիրակացույ, Յաղագս հարցման և լուծման», հրատ. Հ. Օրբելու, Պետրոգրադ, 1918.

«Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի լաստիվերացույ, Թիֆլիս, 1912.

Баладзори, Книга завоевания стран, текст и перевод проф. П. К. Жузе, Баку, 1927.

«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901.

«Նդիշէի վարդապետի, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Վենետիկ, 1864.

«Նզնկայ Կողբացոյ, Նղծ աղանդոց», Վենետիկ, ՌՄՀՆ.

«Թովմայի վարդապետի Արծրունոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», ի լոյս էած Ժ. Պ., Ս.—Պետերբ., 1887.

Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի.—հետևյալ կանոնները՝

1. «Կանոնք Աշտիշատայ ժողովոյն».

2. «Կանոնք Սահակայ Հայոց հայրապետի».

3. «Կանոնք Շահապէվանի ժողովոյն».

4. «Կանոնք Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի».

5. «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից Եպիսկոպոսի».

6. «Կանոնք Դունայ ժողովոյն».

7. «Սահմանադրութիւն կանոնի Վաչականայ Աղուանից արքայի, եղեալ ի ժողովն որ յԱղուէնս».

8. «Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի».

«Կանոնք Դունայ ժողովոյն», հրատ. Մխիթար վարդապետի եւ Սիրական Տիգրանյանի, Վաղարշապատ, 1905.

«Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան Մեսրոպայ վարդապետի», Վենետիկ, 1894.

Corpus juris civilis, edd. Th. Mommsen, P. Krüger et R. Schöll, Berlin, 1872-1895.

Herodoti historiarum libri IX, Bibl. Teubn.

«Ղազարայ Փարպեցոյ, Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ստ. Մալխասյանի, Տիֆլիս, 1904.

«Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», երկ. տպ., Ս.—Պետերբուրգ, 1887.

«Մխիթարայ Գօշի, Դատաստանագիրք Հայոց», հրատ. Վահան Ժ. վարդ. Բաստամյանց, Վաղարշապատ, 1880.

«Մովսիսի Խորենացոյ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Արեղյանի եւ Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913.

«Մովսեսի Կազանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», հրատ. Մկրտիչ էմինի, Մոսկվա, 1860.

«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912.

«Յովհաննու Մանդակունոյ Հայոց հայրապետի, ճառք», երկ. տպագր., Վենետիկ, 1860.

Justini, M. Juniani, Eritoma historiarum Philippicarum Pompei Trogi, Bibl. Teubn.

«Ողբք վասն չարեացն աշխարհիս և վկայաբանութիւն Վահանայ Գողթնացոյ», Վենետիկ, 1854.

G. Plinii Secundi, Naturalis historiae, տե՛ս Histoire naturelle de Pline, avec la traduction en français, par M. E. Littré, T. I-II, Paris, 1883.

Plutarchi vitae, graece et latine, փարիզի հրատր. Th. Döbner-ի և F. Dübner-ի, vol. I-V, 1846-1855.

«Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլէն», ի լոյս ած. Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1879.

Procopii, De bello Persico և De aedificiis, ed Bonni.

Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert, hrsgg., übersetzt und erläutert von I. Karst, Bd. I und II, Strassburg, 1905.

«Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911.

Strabonis geographica, Bibl. Teubn.

«Վիմական տարեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմ. Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913.

Տանսարի նամակը Տաբարիստանի թագավորին, տե՛ս «Lettre de Tansar au roi de Tabaristân», publ. et traduite par Darmesteter, Journal Asiatique, 1894.

«Փաստոսի Բուզանդացոյ, Պատմութիւն Հայոց», երկ. տպագր., Վենետիկ, 1889.

Xenophontis Anabasis և Kvroupaidela, Bibl. Teubn.

Բ. ՅԱՆԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Աբեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899—1901.

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.

Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890.

Ակինյան Ն., «Մատենադարական հետազոտութիւններ», հատոր Գ. Վիեննա, 1930.

Նույնի, «Դունայ 572-ի ապստամբութիւնը և յաջորդ տասնամեայ շրջանը», Հանդ. Ամս., 1913, հունվար, էջ 62—79.

Ավդալբեգյան Թ., Հաս, սակ ու բաժ, «Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի», № 1, Երևան, 1926.

Նույնի, Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը հինգերորդ դարում, «Տեղեկ. Գիտ. և Արվ. Ինստիտուտի», № 3, Երևան, 1928. Նույնի, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան, երկ. հրատ., Երևան, 1926.

Բահաթրյան, Անձնական և հոգային իրավունքը Հին Հայաստանում.

Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. I, М., 1928.

Brosset M., Histoire de la Géorgie, Additions et éclaircissements, St.-Pétersbourg, 1851, նաև Introduction et tables de matieres. St.-Pétersbourg, 1858.

Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918.

Գարագաշյան Ա. Մ., Քննական պատմութիւն Հայոց, Մասն Բ., Թիֆլիս, 1895.

Գեղցիք Հ., Համառոտ պատմութիւն Հայոց, Թարգմ. Հ. Գր. վ. Գալեմքարյանի, Վիեննա, 1897.

Gibbon E., The history of the decline und fall ot the Roman empire, ed. by Bury, London, 1900.

Гурко-Кряжин В., Прошлое и настоящее Советской Армении, «Новый Восток», 1927, кн. 16—17.

Դիտերբորդ Կ., Հոովմէական Հայաստան և սատրապութիւնները Դ-Ձ դարերուն, Թարգմ. Հ. Մկրտ. վ. Նորշումանի, Վիեննա, 1914.

Նույնի, Բիւզանդիոն և Պարսկաստան և անոնց դիւանագիտական և ազգային-իրաւական հարաբերութիւնները Յուստինիանու ժամանակ, Թարգմ. Հ. Հմ. Համբարյանի, Վիեննա, 1911.

Decourdemanche J. A., Traité pratique des poids et mesures des peuples ancients et des Arabes, Paris, 1909.

Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905.

Զարրհանալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, երրորդ տպագր., Վենետիկ, 1897.

Эмин Н., История Армении Моисея Хоренского, новый перевод, М., 1893.

Ինճիճյան Հ. Ղուկ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», հատ. Ա, Բ և Գ, Վենետիկ, 1835.

Латышев В. В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, СПб., 1890.

Laurent J., L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919.

Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. I, Berlin, 1910.

Լեո, Հայոց պատմութիւն, հատ. առաջին, Թիֆլիս, 1917.

Խալաթյանց Գր., Ղաղար Փարպեցի և գործք նորին, Մոսկվա, 1883.

Халатьянц Г., Очерк истории Армении, М., 1910.

Christensen Arthur, L'empire des Sassanides, le peuple, l'état, la cour. København, 1907.

Կոստանյանց Կ., Հիւսուածք, գիրք երրորդ, Վիեննա, 1877.

Кулаковский Ю., История Византии, т. I, Киев, 1918.

Кулишер И. М., Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград, 1918.

Kremer Alf., Culturgeschichte des Orients unter den Chalfen, Bd. I-II, Wien, 1875.

Համբարյան Հ. Հ., Հայաստանի քաղաքական վիճակը Վահանի մահէն մինչև Վարդան ե-ի ապստամբութիւնը, Հանդ. Ամս., 1912, սեպտ., էջ 531—535.

Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, Թարգմ. Հ. Բ. Պի-լեգրիճյանի, Վիեննա, 1907.

Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1895.
Manandian Agop, Beiträge zur albanischen Geschichte, Leipzig, 1897.

Манандян Я. А., О торговле в городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930.

Его же, Заметки о феоде и феодальной войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932.

Նույնի, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922.

Նույնի, Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրոթյան մասին մարզպանության շրջանում, Երևան, 1925. տե՛ս նույնը «Տեղեկ. Պետ. Համալսարանի», № 1, Երևան, 1925.

Նույնի, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926. տե՛ս նաև «Տեղեկ. Գիտ. և Արվ. Ինստիտուտի», № 1, Երևան, 1926.

Նույնի, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, I, տե՛ս «Տեղեկ. Գիտ. և Արվ. Ինստիտուտի», 2, Երևան, 1927.

Նույնի, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II, Երևան, 1928. տե՛ս նույնը «Տեղեկ. Պետ. Համալսարանի», № 4, Երևան, 1928.

Markwart J., Eranschaft nach der Geographie des Ps. Moses Xoren., Berlin, 1901.

Նույնի, Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց Մաշտոցի, Թարգմ. Հ. Ա. Վարդանյանի, Վիեննա, 1913.

Նույնի, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

Март Ник., Этимология двух терминов армянского феодального строя, ЗВО, т. XI, 1897—1898.

Նույնի, Крещение армян, грузин, абхазов и аланов, араб. версия, СПб., 1905. Նույնի, Ընդարձակ քննություն Ջավախովի «Государственный строй древней Грузии и древней Армении» աշխատության, տե՛ս «Жур. Мин. Нар. Прав.», 1908. Նույնի, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915.

Meillet A., De quelques mots Parthes en arménien, Revue des études armén., T. II, Fas. 1, Paris, 1922.

Մուսայելյան Հ., Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910.

Noeldeke Th., Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Leyden, 1879.

Նորայր Բյուզանդացի, Կորիւն վարդապետ և նորին Թարգմաթիւնք, Տիփլիս, 1910.

Շահաթրունյան Հովհ. Եպիս., Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. I և II, էջմիածին, 1842.

Stein Ernst, Studien zur Geschichte des byzantinischen Reiches, Stuttgart, 1919.

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, հատ. I—III, Վենետիկ, 1784—1786.

Павлово-Сильванский Н. П., Феодализм в древней Руси, М., 1923.

Патканьян К., История армян Моисея Каганкатваци, СПб., 1861.

Рожков Н., Русская история в сравнительно-историческом освещении, т. II, М., 1922.

Ростовцев М., Апаранская греческая надпись царя Тиридата, Анийская серия, № 6, СПб., 1911.

Սամվելյան Խ., Մխիթար Գօշի Դատաստանագիրքը ու Հին Հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911. Նույնի Արեան վրէժ և փրկանք, տե՛ս «Ազգագր. Հանդէս», գիրք Ժ, Թիֆլիզ, 1903.

Saint-Martin M. J., Histoire des Arsacides de Perse, II, Փարիզ, 1840.

Сергеевич В., Русские юридические древности, т. I, изд. второе, СПб., 1902.

Ստեփանն Խորեն Ժ. վ., Մովսէս Խորենացու հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմ., Ս.—Պետերբուրգ, 1889.

Вебер Макс, Аграрная история древнего мира, перев.: под ред. Д. М. Петрушевского, М.

Տեր-Մկրտչյան Կարապետ եպիսկ., Յովհան Մանդակունի և Յովհան Մայրապոմեցի, արտատպ. «Շողակաթ»-ից, էջմիածին, 1913.

Տիգրանյան Սիր., Հայոց իրավունքի պատմության ներածություն, Երևան, 1924.

Tournebize Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

Френкель А. С., Сборник законов грузинского царя Вахтанга VI, Тифлис, 1887.

Markwart J., Die Cenealogie der Bagratiden, Caucasica, F. 6, 2. Tell, Leipzig, 1930.

Rostowzew M., Studien zur Geschichte des römischen Kolonates, Leipzig, 1920.

3. ՅՆՈՒԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի նախարարական կազմակերպության քննության ու լուսարանության համար անհրաժեշտ է ուրվագծել համառոտ կերպով ֆեոդալական հասարակակարգի ընդհանուր ու կարևոր հատկանիշները:

Ֆեոդալիզմը, ինչպես հայտնի է, ո՛չ միայն տնտեսական-հասարակական հատուկ կազմակերպություն է, այլ միաժամանակ առանձին սիստեմ է սոցիալական-քաղաքական ուրույն հարաբերությունների: Ֆեոդալիզմն ունի, ուրեմն, և՛ տնտեսական և՛ քաղաքական հատկանիշներ:

Տնտեսագիտական նորագույն երկերում մատնանշվում է սովորաբար, որ ֆեոդալիզմի տնտեսական հիմքը կազմում է արտադրության ֆեոդալական եղանակը՝ բնական կամ նատուրալ տնտեսությունը, որը պետք է հակադրել ո՛չ թե փողային, այլ ապրանքային տնտեսության: Ֆեոդալիզմի ժամանակ թեև գոյություն են ունեցել փոխանակություն, փող, քաղաքներ և առևտուր, սակայն նրանց նշանակությունը եղել է երկրորդական: Արտադրող հիմնական դասակարգը եղել է գյուղացիությունը, որը, մեծ մասամբ, գտնվել է ճորտական վիճակում, և որոշ չափով նաև մանր արհեստավորությունը: Քաղաքները և արհեստները մեծ զարգացում են ստացել ֆեոդալիզմի քայքայման վերջին շրջանում:

Բացի տնտեսական այս հիմքերից, որոնք մասամբ բնորոշ են նաև նախակապիտալիստական մյուս տնտեսական հասարակարգերի համար, իբրև ֆեոդալիզմի էական հատկանիշ մատնացույց է արվում խոշոր կալվածատիրության և ազնվականության գերակշռող դերը՝ ոչ միայն տնտեսական, այլև պետական-իքավական: Ֆեոդալական պետությունները բաժանված են եղել բազմաթիվ մեծ և փոքր շրջանների, որոնց մեջ պետական իշխանությունը պատկանել է մեծ կամ փոքր չափով կալվածատեր իշխաններին, որոնք անվանվել են սենյորներ: Հողատիրությունը պարունակել է, ուրեմն, իր մեջ թե՛ մասնավոր և թե՛ հանրային իրավունքի տարրեր, և խոշոր կալվածատերերը եղել են ո՛չ միայն հողատեր, այլև դատավոր, կառավարիչ, իսկ հաճախ լիակատար պետ և իշխան իրենց երկրների սահմաններում: Առանձին ու ինքնիշխան այս շրջաններն անվանվել են Ֆրանսիայում *seigneurie*, Անգլիայում՝ *manor*, Գերմանիայում՝ *Grundherrschaft* և Ռուսաստանում՝ *дворянина*: Հասկանալի է, իհարկե, որ խոշոր կալվածատեր սենյորը, օժտված լինելով պետական կարգի իրավունքներով, եղել է անմիջական տեր ու տնօրեն այն բնակչության, որը գտնվել է իր երկրամասում: Գյուղացիության կախումը նրանից ունեցել է, ինչպես իրավացի կերպով շեշտում են տնտեսագետները, արտատնտեսական բնույթ՝ պայմանավորված անմիջական իշխանությամբ ու հպատակությամբ:

Հողատիրության այս առանձնահատկությունները, նրա սենյո-

րական կազմակերպությունը՝ կարելի է համարել, անտարակույս, ֆեոդալիզմի զլխավոր ու անհրաժեշտ հատկանիշը: Ֆեոդալական հասարակարգի համար բնորոշ է ո՛չ միայն բարձրագույն իշխանության ցրվածությունը և երկրի բաժանումը տերունական ինքնուրույն շրջանների, այլև սրանց միացումը դաշինքային վասսալական կապերով: Այդ միությունն անհրաժեշտ է եղել փոխադարձ պաշտպանության ու օգնության համար: Վասսալական կապը նրանում էր, որ ստորադաս սենյորները հատուկ պայմանագրեր էին կնքում իրենց հովանավորող ու պաշտպանող ավելի հզոր սենյորների հետ, հատուկ երդում էին տալիս նրանց հավատարմության ու հպատակության և խոստանում կատարելու սյուզերենների հանդեպ զինվորական ու այլ պատվավոր ծառայության պարտականություններ: Ֆեոդալական պետություններում ստեղծվել էր այսպիսով վասսալական հարաբերությունների մի երկար շղթա, որն անվանում են «ֆեոդալական սանդուխք»: Միջնադարյան Ֆրանսիայում, օրինակ, այդ սանդուխքն ունեցել է հետևյալ ստորակարգումները: Վասսալական իշխանությունների ամենավերին շերտը կազմում էին այստեղ խոշորագույն իշխանությունները, որոնք թագավորի անմիջական վասսալներն էին և, մեծ մասամբ, գրեթե անկախ էին նրանից: XI դարում սրանք անվանվում էին դքսություններ (*duchés*) և կոմսություններ (*comtés*): Սրանցից ներքև գտնվում էին երկրորդ կարգի իշխանությունները, որոնք վասսալներ էին դուքսերի և կոմսերի և անվանվում էին բարոնություններ (*baronnies*): Ավելի ցածրումն էին դերակոմսությունները (*vicomtés*) և ղղեկատերերը (*châtellenies*), որոնք վասսալներ էին վերոհիշյալ իշխանությունների: Իսկ բոլորովին ներքևումն էին բազմաթիվ մանր սենյորությունները, որոնք վասսալներ էին դարձյալ մյուս ավելի բարձր կարգի ֆեոդալների:

Ֆեոդալական այս սանդուխքը կամ աստիճանավորումը համարում են նույնպես կարևոր հատկանիշ ֆեոդալական հասարակարգի:

Հատկապես Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմին առանձնահատուկ է եղել, բացի այդ, ֆեոդը (*feodum, fief, Lehn*), որից այս հասարակարգը ստացել է ֆեոդալիզմ անունը: Լայն իմաստով ֆեոդ, ինչպես հայտնի է, անվանվել են այն հողատերերը (*fief-terre*) և այն պաշտոնները (*fief-office*) կամ իրավունքները, որ ստանում էին ազնվականները սենյորից հավատարմության ու ծառայության հատուկ պայմանով: Իսկ նեղ ու իսկական իմաս-

տով ֆեոդ են համարվել, գլխավորապես, ազնվականության օրդոված հոդերը: Յուրաքանչյուր մեծ սենյոր ունեցել է բազմաթիվ վասսալներ, որոնք, ստացած լինելով նրանից մանր հողաբաժիններ, պարտավոր էին իրենց սենյոր-սյուզերենի հանդեպ կատարել որոշ ծառայություններ, գլխավորապես, զինվորական: Հենց այս մանր կալվածատեր վասսալներից, որ անվանվում էին ձիավորներ (chevalier, Ritter), կազմված է եղել սենյորների հեծելազորը: Ուրեմն՝ ֆեոդ-հոդերի հիմնական առանձնահատկությունն է եղել հողատիրությունը զինվորական ծառայության պայմանով: Սրանք տարբերվել են պարզական կալվածներից (beneficium) նրանով, որ պարզական հողատիրությունը եղել է ժամանակավոր ու անձնական, իսկ ֆեոդականը՝ ժառանգական ու տոհմային: Սակայն ժառանգական լինելով հանդերձ ֆեոդական հողատիրությունը ևս եղել է պայմանական: Հողատեր վասսալներից, որոնք ստացել էին ֆեոդեր իրենց հատուկ ծառայության համար, սենյորներն իրավունք ունեին ետ գրավել այդ կալվածները, եթե նրանք խախտում էին պայմանը և չէին կատարում իրենց ստանձնած պարտականությունները:

Վերև մենք տեսանք, որ իրենք սենյորները ևս վասսալներ էին կամ թագավորի և կամ ավելի հզոր ու խոշոր սենյորների: Թեև սրանց allod-ական անգամ կալվածները նույնպես անվանվել են ֆեոդ, սակայն, իրապես, այս կալվածները եղել են, օրինակ, Ֆրանսիայում, մեծ մասամբ, լիազատար ու անպայման սեփականություն: Նրանց ֆեոդ անունը, լինելով պարզապես խաբուսիկ ու անիրական, չունի, բնականաբար, պայմանական հողատիրության սովորական իր իմաստը:

Ինչպես հայտնի է, ֆրանսիական գիտնականները, օրինակ՝ Գիզոն և Ֆյուստել դե-Կուլանժը, համարել են ֆեոդը գլխավոր ու հիմնական հատկանիշ ֆեոդալական հասարակակարգի: Այս կարծիքն այժմ չի ընդունվում, որովհետև պայմանական հողատիրությունը՝ ֆեոդը համատարած ու ընդհանուր երևույթ չի եղել անգամ Ֆրանսիայում: Անտարակուսելի է սակայն, որ ֆեոդը կարևոր առանձնահատկություններից մեկն է հատկապես Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի:

Ֆեոդալական հասարակակարգը. ինչպես պարզ հետևում է վերոհիշյալ դիտողություններից, իր էությունով խոշոր կալվածատիրության ու զինվորական ազնվականության տիրապետություն է: Ֆեոդալիզմի զարգացման, գլխավորապես, առաջին շրջանում իշ-

խանութիւնը պատկանել է հողատեր զինվորական ազնվականութեան, որին ստորագրված են եղել քաղաքականապես ու տնտեսապես ֆեոդալական գյուղացիութիւնը, արհեստավորութիւնը և մյուս խավերը:

Ֆեոդալական հասարակակարգի ուսումնասիրութեան համար կարևոր է, անշուշտ, նաև գյուղացիութեան սոցիալական-տնտեսական դրութեան պարզաբանումը:

Որովհետև հողն էր այս հասարակակարգում արտադրութեան հիմնական պայմանը, ուստի և հասկանալի է, որ գյուղացիութիւնն է ֆեոդալական սանդուխք»-ի այն անհրաժեշտ պատկանդանը, որի վրա հաստատված էր իշխող ազնվականութեան նյութական ապահովութիւնը և տնտեսական բարեկեցութիւնը: Ֆեոդալական երկրներում գրեթե ամեն տեղ գյուղացիները բաղկացած են եղել զանազան խմբերից, որոնք տարբերվել են իրարից իրենց տնտեսական ու իրավական դրութեամբ: Թեև նրանց մեծագույն մասը գտնվել է խորտական-երբեմն խիստ ծանր ու երբեմն համեմատաբար մեղմ վիճակում, սակայն գոյութիւն են ունեցել միաժամանակ նաև ազատ գյուղացիութեան մնացորդներ: Գյուղացիների ճորտական դրութիւնը եղել է երբեմն այնքան մեղմ, որ շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների դրութիւնից: Իսկ երբեմն այնքան ծանր՝ որ շատ մոտ է եղել կատարյալ ստրկութեան: Հողատեր ազնվականների հանդեպ տարբեր են եղել ըստ այսմ նաև նրանց պարտականութիւնների չափը և բնութիւնը: Հավելյալ աշխատանքը կամ արտադրանքը, որ ստացել է հողատերն արտադրութեան ֆեոդալական եղանակի պայմաններում, անվանվում է ֆեոդալական ռենտա, և այս ռենտան եղել է, ինչպես հայտնի է, կամ արտադրանքային, կամ փողային և կամ աշխատանքային: Միևնույն գյուղացիները վճարել են հաճախ բացի բնատուրքից նաև որոշ փողային տուրք և պարտավոր են եղել միաժամանակ կատարել կալվածատիրոջ մոտ պարտադիր ձրի աշխատանքներ: Ֆեոդալական այս կամ այն ձևի ռենտայի գերիշխումը կախված էր, իհարկե, տնտեսութեան զարգացման պայմաններից: Փողային ռենտայի նշանակութիւնը կարող էր մեծ լինել ֆեոդալական տնտեսութեան զարգացման միայն այն շրջանում, երբ գերակշռող դեր էր կատարում փոխանակութիւնը և փողային շրջանառութիւնը: Իսկ աշխատանքային ռենտան կամ կոռը կարող էր ստացած լինել մեծ չափեր, երբ սենյորները կամ կալվածատերերն իրենք ևս ունեին շուկայի հետ կապված սեփական ու ինքնուրույն իրենց տնտեսու-

թյունները, որոնք նրանք մշակում էին ճորտական գյուղացիների պարտադիր ու ձրի աշխատանքով:

Գյուղացիության տնտեսական ու իրավական վերոհիշյալ դրու-
թյունը, գլխավորապես, նրա ճորտական վիճակը՝ ընդհանուր գրե-
թե ու սովորական երևույթ է հատկապես ֆեոդալական հասարակա-
կարգում:

Ֆեոդալական հասարակակարգի մեջ գոյություն են ունեցել նաև քաղաքներ, որոնց դերը և նշանակությունը տարբեր է եղել ֆեոդալիզմի զարգացման զանազան շրջաններում և ֆեոդալական առանձին երկրների տեղական ուրույն պայմաններում: Մերձավոր Արևելքում, ինչպես և Միջերկրական, Հյուսիսային ու Բալթյան ծովերի ափերում, քաղաքները եղել են համեմատաբար խոշոր ու բազմամարդ և ֆեոդալիզմի զարգացման հնագույն իսկ շրջաններում կարևոր դեր են կատարել իբրև արտաքին ու միջազգային առևտրի կենտրոններ: Նույն այս քաղաքները եղել են, մեծ մասամբ, նշանավոր կենտրոններ նաև արհեստների ու ներքին փոխանա-
կության զարգացման: Արտաքին առևտուրը՝ թեև առանձնապես չէր քայքայում ֆեոդալական հասարակակարգի բնական-տնտե-
սական հիմքերը, սակայն նա որոշ ազդակ էր, անշուշտ, փոխա-
նակության ու դրամական շրջանառության աճման: Անժխտելի է նույնպես, որ ֆեոդալիզմի սկզբնական միևնույն շրջաններում գո-
յություն են ունեցել նաև ուրիշ հին քաղաքներ, որոնք կենտրոնա-
վայր են եղել արհեստագործ բնակչության ու ներքին առևտրի: Այս տիպի քաղաքները վարչական կենտրոններ էին, մեծ մասամբ, սենյորական շրջանների, առաջ էին եկել, գլխավորապես, ֆեոդա-
լական բերդերի ու ամրությունների մոտ և պատերազմի ժամա-
նակ ծառայում էին իբրև պատսպարան շրջակա բնակչության հա-
մար: Ֆեոդալական հասարակակարգում՝ թեպետ և գյուղացին էր գլխավոր արտադրողը և բնական տնտեսությունն էր արտադրու-
թյան գերիշխող ձևը, սակայն, ինչպես տեսնում ենք, նույն հա-
սարակակարգում որոշ չափով զարգացած են եղել քաղաքային տնտեսությունը, արհեստագործական արդյունաբերությունը, նաև առևտուրը և դրամական շրջանառությունը: Ֆեոդալիզմի ուսում-
նասիրության համար քաղաքների ու քաղաքային տնտեսության խնդիրն արժանի է, անշուշտ, առանձին ուշադրության: Լինելով ֆեոդալական հասարակակարգի կարևոր ու էական տարրը՝ ֆեոդա-
լական քաղաքը պարունակում էր իր մեջ նոր հասարակակարգի այն ներհակ ու ընդդիմադիր սաղմերը, որ նախապայմանն էին ֆեոդա-

լիզմի քայքայման: Ֆեոդալիզմի այս քայքայումը, որ պայմանա-
վորված էր արդյունագործական արտադրության ու տեխնիկայի և
ապրանքային տնտեսության բուռն ու արագ աճմամբ, տեղի ունե-
ցավ, ինչպես հայտնի է, Արևմտյան Եվրոպայում քաղաքների ար-
տակարգ զարգացման պատճառով:

Ֆեոդալական քաղաքների տնտեսական ու սոցիալական վերո-
հիշյալ բնույթն ու դերը առավել կամ նվազ չափով առանձնահա-
տուկ են եղել ֆեոդալական կազմակերպությանը գրեթե բոլոր եր-
կրներում:

Պահպանելով ամեն տեղ ընդհանուր ու անհրաժեշտ իր հատ-
կանիշները՝ ֆեոդալական հասարակակարգն ունեցել է զանազան
երկրներում նաև որոշ յուրակերպ գծեր, որոնք արդյունք են եղել
տեղական առանձնակի պայմանների: Անգամ Արևմտյան Եվրոպա-
յում ֆեոդալիզմը միակերպ ու նույնանման չի եղել, օրինակ,
Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Իտա-
լիայում և նույնիսկ միևնույն այս երկրների զանազան շրջաննե-
րում: Այս տեսակետից կարևոր է ու անհրաժեշտ մատնանշել միշտ
ֆեոդալական կազմակերպությունների ո՛չ միայն նման ու համա-
պատասխան գծերը, այլև տեղական առանձնահատկություններն
ու նրանց առաջացման հատուկ պայմանները:

Սույն ուսումնասիրության մեջ մանրամասն կերպով քննու-
թյան են առնված թե՛ նախարարական կազմակերպության վերև
մատնանշված ֆեոդալական հատկանիշները և թե՛ տեղական
բնույթ ունեցող նրա մասնավոր առանձնահատկությունները:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԴԱՍԸ

Ա. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆեոդալիզմի շրջանում, ինչպես վերև ասացինք, գերակշռող
դեր էր կատարում խոշոր կալվածատիրությունը: Հայտնի է նույն-
պես, որ խոշոր կալվածատերերի ազնվական բարձր դասը, լինելով
ընդարձակ երկրների տեր, ուներ այդ երկրներում քաղաքական իշ-
խանության իրավունքներ: Ֆեոդալական ամեն մի պետություն
բաժանված էր ըստ այդմ բազմաթիվ մանր իշխանությունների:
Կալվածատիրական առանձին այդ շրջանները, որոնք օժտված էին
պետական կարգի իրավունքներով, անվանվում էին Ֆրանսիայում՝
սենյորիա, Անգլիայում՝ manor և Գերմանիայում՝ Grundherrschaft:

Արդ՝ ուշագրավ է, որ պետական իշխանության հենց նույն ապա-

կենտրոնացումը և ցրվածությունը մենք գտնում ենք նաև Արշակունյաց Հայաստանում: Այստեղ ևս իշխող դասը բաղկացած էր խոշոր կալվածատերերից, որոնք իրենց երկրներում ունեին քաղաքական իշխանություն և «տերական» իրավունքներ: Ազնվականների այս բարձր դասը, որ համապատասխանում է միջնադարյան ֆեոդալի սենյորներին, անվանվում է հնագույն հայ աղբյուրներում՝ «նախարարք», «նախարարազունք» և «ազգք», «տոհմք» կամ «տունք նախարարացն», իսկ նրանց պետական կարգի իշխանությունը, նաև այդ իշխանության տակ գտնվող երկրներն՝ անվանվում են «նախարարությունք»:

«Նախարար» բառի ստուգաբանությունը և ծագումը երկար ժամանակ մնում էր մոլթ և անհասկանալի: Գիտական հնագույն երկերում այդ բառը սովորաբար մեկնել են իբրև նախարար և համապատասխան են համարել լատինական *prae-fectus* տերմինին: Ինժիճյանն իր Հնախոսության մեջ (Բ, էջ 77) կարծում է, որ «անունն ճախարար ինքնին յայտ առնէ ածանցեալ յանուանցս ճախ և արար. իբր նախկին ի յարարս, կամ նախակարգեալ իշխան, որպիսի էր և առ լատինս անունս *praefectus* ցուցանելով զյառաջագահութիւն և զնախադասութիւն քան զայլս»: Էմիլը հորենացու ուսերեն իր Թարգմանության հավելվածում¹ ընդունել էր նույն այս մեկնությունը:

Նախարար բառի այդ հին ստուգաբանությունն առաջին անգամ մերժել է Ն. Մառը և մատնանշել, որ այդ բառի սկզբնական ձևը եղած պիտի լիներ *նահարար, համապատասխան նահապետ և նահանգ բառերին: Նախարար, այսինքն՝ *նահարար, նրա կարծիքով, նշանակում է երկրի, շրջանի (*nah[shah]=wahr*) տեր, գլխավոր (*rag=պրս. radh, զնդ. ratu*)²: Նիկ. Ադոնցը, ընդունելով Մառի այս մեկնությունը, կարծում է, որ *նահարար բառի երկրորդ մասը ծագում է ո՛չ թե *ratu*, այլ պրսկ. *dar* արմատից³:

Մառի և Ադոնցի ենթադրությունները նախարար բառի ծագման մասին *nahadar*-ից վերջերս վերջնականապես հաստատվեցին: Ուղիղ մեկնությունը տվել է պրոֆ. Meillet⁴ սոգդիերեն լեզվի օգնությամբ, որի մեջ պահպանվել է *nâfdâr* բառը «ժողովրդի

¹ Н. Эмин, История Армении Моисея Хоренского, М., 1893, стр. 298.

² S^hu, «Зап. Вост. Отд. Имп. Рус. Арх. Общ.», том XI, 1898, стр. 170—173.

³ «Армения в эпоху Юстиниана», стр. 451.

⁴ Revue des études arméniennes, II, fasc. 1, Paris, 1922, p. 1-3.

կամ ցեղի պետ» նշանակությամբ: Նույն բառի պարթևական ձևը նա ենթադրում է *nâfadâra nâfa «պորտ, ցեղ» և dâra «պետ, գլխավոր»: Պարթևական *nâfadâra հայերենում դառել է, նրա կարծիքով, *նահարար, սակայն ժողովրդական ստուգաբանությամբ *նահ-ը վերածվել է նախ-ի և ստացվել նախաբար ձևը:

Նախարարությունները Հին Հայաստանում իրենց մեծությամբ և նշանակությամբ տարբեր էին իրարից, ինչպես և սենյորիաները միջնադարյան Եվրոպայում:

Ֆեոդալական պետության վերին շերտը կազմում էին Արևմտյան Եվրոպայում խոշոր և առաջնակարգ իշխանությունները, որոնք փաստորեն գրեթե անկախ էին թագավորից կամ կայսրից: XI դարում սրանք անվանվում էին Ֆրանսիայում դքսություններ (duchés) կամ կոմսություններ (comtés): Սրանցից ներքև գտնվում էին երկրորդ կարգի խոշոր սենյորիաները, որոնք անվանվում էին բարոնություններ (baronnies): Սրանք, մեծ մասամբ, խոշոր իշխանությունների ֆեոդալներն էին: Ավելի ցածրման էին դերակոմսությունները (vicomtés և ղզեկատերերը (châtellenies), իսկ բոլորովին ներքևում՝ բազմաթիվ մանր սենյորիաներ, որոնք վասսալներն էին վերոհիշյալ ավելի ղորեղ ֆեոդալների:

Այս դասակարգությունը կամ աստիճանավորումը, որ կարևոր մի հատկանիշն էր Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի, գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում:

Առաջին կարգի մեծ իշխանություններին համապատասխանում են այստեղ, նախ և առաջ, բզեշխությունները: Քաղաքականպես սրանք գրեթե անկախ իշխանություններ էին, բայց գտնվում էին հայ Արշակունիների գերիշխանության տակ: Բզեշխների իշխանություններն ընդարձակ երկրներ էին Հայաստանի սահմանային շրջաններում: Հենց այդ պատճառով բզեշխներն անվանվում էին «սահմանապահ», «սահմանակալ», նաև «կողմնապահ» կամ «կողմնակալ»:

Ազաթանգեղոսի և Փավստոսի վկայություններից հայտնի է, որ Արշակունիների ժամանակ Հայաստանում կար չորս բզեշխություն: Հայաստանի հարավ-արևելյան սահմանում իշխում էր «Նոշիրական բզեշխ»-ը, հարավային սահմանում՝ «ՅԱրուաստան կողմանէն», այսինքն՝ հյուսիսային Միջագետքի և Մծբինի հյուսիսակողմում՝ «Աղձնեաց բզեշխ»-ը, հարավ-արևմտյան սահմանում՝ «ՅԱսորեստանեաց կողմանէն», այսինքն՝ Ասորիքի դիմաց գտնվող շրջանում՝ հավանորեն, Մոփաց բզեշխը (ըստ Մարկվար-

տի)⁵ և հյուսիսում «ի Մասքթաց կողմանէն», այսինքն՝ Իբերիայի Մեսսիսի շրջանի դիմաց՝ «Գուգարաց բղջիլ»-ը:

Ագաթանգեղոսը և Փաւստոսը վկայում են, որ բղջիլները «գահերէց» իշխաններ էին «արքունի տաճարին»: Պարզ է, որ սրանք իբրև «գահերէց» իշխաններ՝ իրենց դիրքով բարձր են եղել մյուս նախարարութիւններից: Նիկ. Ադոնցը նույն իսկ ենթադրում է, որ նրանք չէին մուծված նախարարութիւնների համար սահմանված գահակարգի շարքը, որովհետև համարվել են գրեթե հավասար թագավորին⁶:

Պրոֆ. Մարկվարտի կարծիքով, Պլուտարքոսի հայտնի տեղեկութիւնը շորս թագավորների մասին, որոնք սպասարկում էին Տիգրան Մեծին, վերաբերվում է հենց այս շորս բղջիլներին⁷: Բղջիլութիւնների ծագումը և կազմակերպումը Մարկվարտը ենթադրում է, ուրեմն, Տիգրան Մեծի ժամանակ, Նիկ. Ադոնցը, հավանական ու ընդունելի համարելով այս ենթադրութիւնը, կարծում է նույնպես, որ բղջիլները նախկին փոքր ու ինքնուրույն թագավորութիւնների միապետներ են, որոնք Տիգրան Մեծից սկսած ճանաչել էին հայ թագավորների քաղաքական գերիշխանութիւնը:

Որ բղջիլները, իբրև թագավորներին գրեթե իրավահավասար իշխաններ, նախարարական կազմի շրջանակից դուրս են համարվել, այդ երևում է, ի միջի այլոց, նրանից, որ նրանք Արշակունյաց թագավորութիւն մեջ չեն վարել գործակալական պաշտոնների: Բղջիլների ու բղջիլութիւն վերաբերյալ աղբյուրների վկայութիւնները.

1. «Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց», աշխատութ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Տփղիս, 1909, ՃԻՁ, 873, էջ 459—460՝

«Եւ ի գինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բղեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի նոր Շիրական կողմանէն; և զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդըն՝ ի Մասքթաց կողմանէն».

2. «Փաւստոսի Բուղանդացւոյ, Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, Դպր. Գ, գլ. Թ, էջ 21՝

«Հայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի

⁵ „Eranschahr“, s. 172.

⁶ „Армения в эпоху Юстиниана“, стр. 283.

⁷ Marquart J., Eranshahr, Berlin, 1901, s. 171—173.

ժառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բղեաշխն, որ էր մի ի շորից, գահէրէց բարձրէց տաճարին արքունի».

3. Փաւստ., Դպր. Դ, գլ. Ծ, էջ 163՝

«Եւ սկսան սորսորել զնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիրեանց արքայն Արշակ: Բայց նախ այսմ զնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: Նախ բղեաշխն Աղձնեաց, և Նորշիրական բղեաշխն, և Մահկեր տանն, և Նիհորականն, և Դասսընտրէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց. և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ...»:

4. «Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, II, Ը, էջ 114՝

«Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ (Վաղարշակ) զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց».

5. Խորենացի, II, Ը, էջ 116՝

«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ (Վաղարշակ) բղեաշխ մեծ և կուսակալ յարեմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգեւելով զԱրձըն և որ շուրջ զնովաւ, և զլեառնն Տաւրոս, որ և Սիմ, և զԿղեսուրն ամենայն».

6. Խորենացի I, ԻԳ, էջ 70՝

«Յորոց զմինն յարեմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍանասարն. և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն և զըլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբղեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնով».

7. Փաւստոս, Դպր. Ե, գլ. ԺԶ, էջ 216՝

«Յաղագս թագաւորին Աղձնեաց: Դառնայր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն ի մեծ ի հարուածըս. զի և նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց: Զերբակալ արարեալ զբղեաշխն Աղձնեաց, առ նմին կոտորեցին ղկանայս եւն»:

Բղեշխները, ինչպես և առաջին կարգի մեծամեծ նախարարներն անվանվում են աղբյուրներում «աշխարհատեարք», «աշխարհակալք» կամ «գաւառակալք», «գաւառատեարք»:

«Աշխարհակալք» կամ «աշխարհատեարք», որոնք ամենաբարձր կարգի իշխաններն էին, համապատասխանում են, անշուշտ, Սասանյան Պարսկաստանի šathradhâr-ներին (=աշխարհակալ), որոնք նույնպես իշխանական ամենաբարձր խավն էին Պարսկաստանում⁸։ Այս šathradhâr-ները, լինելով վասսալներ Պարսից թագավորի, գրեթե անկախ իշխաններ էին և անվանվում էին նույնիսկ թագավորներ, որովհետև իրենց սյուզերենի պաշտոնական տիտղոսն էր «թագաւոր թագաւորաց»։ Ինչպես և Հին Հայաստանի բղշխները՝ նրանք իշխում էին պետութւյան հեռավոր ծայրամասերում։ Նրանք պարտավոր էին տրամադրել իրենց զորքերը բարձրագույն սյուզերենին և վճարում էին նրան, հավանորեն, նաև որոշ հարկ։

Բղշխները, որ անվանվում էին Հին Հայաստանում «սահմանակալ»-ներ կամ «աշխարհակալ»-ներ, ինչպես տեսնում ենք, կատարելապես նույնն են, ինչ որ Սասանյան Պարսկաստանի šathradhâr-ները։

Մեր այս լուսաբանությունը հիմնապես տարբեր է նիկ. Ադոնցի տված բացատրությունից։

Ադոնցի կարծիքով⁹, Սասանյան Պարսկաստանում սովորական սատրապները և շրջանների կառավարիչները šathradhâr չեն անվանվել, այլ šathradhâr ավելի շուտ սոցիալական կամ դասային խմբի անուն է՝ անվանի մեծամեծների, որոնք խոշոր կալվածատիրության ներկայացուցիչներն էին։ Իբրև սոցիալական գաղափար՝ šathradhâr-ը համարվեց էլ ըստ Ադոնցի նախարար գաղափարին։ Այս ենթադրությունը, որ հակասում է šathradhâr-ների վերաբերյալ պատմական աղբյուրների վկայություններին, ինչպես տեսնում ենք, միանգամայն սխալ է։

«Աշխարհակալ» և «աշխարհատէր» կամ «գաւառակալ» և «գաւառատէր» բացի բղշխներից անվանվել են Հին Հայաստանում նաև առաջին կարգի մեծամեծ նախարարները։ Այդպես են անվանված, օրինակ, Փափստոսի մոտ Մանաճիհր Ռշտունին, «նահապետն Որդունոց տոհմին» և «իշխանն Մանաւազեան տոհմին»։ Պարզ է որ վերոհիշյալ հոմանիշները գործ ենածվել առաջնակարգ նախարարական տոհմերի նաև մյուս մեծամեծների համար։

⁸ Մուշե Նathradhâr-ների մասին մանրամասն տեղեկություններ և կարևոր բացատրություններ մեջ են բերված A. Christensen-ի աշխատության մեջ՝ *L'empire des Sassanides* (Kobenhavn, 1907, p. 21—23).

⁹ «Армения в эпоху Юстиниана», стр. 442 и 450—451.

ի նկատի ունենալով «աշխարհակալ» կամ «աշխարհատէր» իշխանների զինվորական ուժը՝ աղբյուրները նրանց անվանում են երբեմն «բիրաւորք» և «հազարաւորք»։ «Բիրաւորք» են նրանք, որոնց զինվորական ուժը 10.000-ի շարի էր, իսկ «հազարաւորք» նրանք, որոնց զինվորական ուժը 1000-ից պակաս չէր։

Այս տերմինների իմաստն ուղիղ է մեկնված հայագիտական թե հին և թե նոր երկերում։ Հայկազյան լեզվի նոր բառգրքում «բիրաւորք»-ը հասկացված է հենց այդ իմաստով և մեկնված է՝ «պետ տասն հազար արանց. որ ունի ընդ ձեռամբ բիր մի զօրաց»։ Նույն լուսաբանությունը տրված է այս տերմիններին նաև Ալիշանի Այրարատում (էջ 424)՝ «ըստ թուոյ և յոլովութեան ընդ իշխանութեամբ իրեանց եղելոյ զօրականին—ասում է Ալիշանը-կոչեցեալք ըստ Ագաթանգեղեայ՝ հազարաւորք և բիրաւորք»։ Հմմտ. նաև Նորայր Բյուզանդացի, «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս, 1900, էջ 270։

Ավելորդ չեմ համարում մեջ բերել մի քանի կարևորագույն վկայություններ վերոհիշյալ տերմինների մասին.

1. Փաւստոս, III, Դ, էջ 9՝

«Եւ զայն ժամանակաւ յարեաւ խոռվութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անգանէին ընդ միմեանս, մեծաւ ռիսկեամբ յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց։ Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւագեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունուց տոհմին».

2. Փաւստոս, III, Ը, էջ 20՝

«Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ խոսրովու արքային. և նա դնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիրաւորքն և հազարաւորքն կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեացին, և մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի».

3. Փաւստոս, IV, ԺԲ, էջ 108՝

«Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց կողմանց կողմանց տեղեաց տեղեաց, մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծազգեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իրեանց հօտապետ զխաւորին. զի հեռացաւ ի նոցանէ».

4. Ագաթանգեղոս, ՃԺԲ, 796, էջ 415՝

«Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացոց, ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն».

5. Խորենացի, II, Ը, էջ 112—113՝

«Եւ յարեւելից կողմանէ, զեղերք հայկական խօսիցս (կարգէ Վաղարշակ) կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի Կադմեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք».

6. Խորենացի, II, Ը, էջ 113՝

«Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ։ Ի սորա գաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացոց և Գարդմանացոց և Մաւղէացոց և Գարգարացոց իշխանութիւնսն».

7. Կանոնագիրք Հայոց, հրտր. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1914, էջ 59՝

«Եւ ժողովէին... իշխանք և ամենայն գաւառապետք, գաւառակալք, պետք և բռնաւորք, զօրագլուխք, հազարաւորք, կուսակալք ազատօք՝ կողմանց կողմանց, աւագ նախարարք աշխարհին Հայոց»:

Սենյորական դասի ստորին կարգերը կազմում էին Հին Հայաստանում «կրտսեր» նախարարները:

Աղբյուրների մեջ հիշվում են, ինչպես հայտնի է, «աւագ և կրտսեր նախարարք» և «մեծամեծ աւագանի»-ն։ Բանասիրական և պատմական երկերում նախարարների «աւագ» և «կրտսեր» մականորները մեկնված են տարբեր իմաստով:

1. Ինճիճյանն իր Հնախոսության մեջ (II, էջ 90) ենթադրում

է, որ «աւագ թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ էր կամ գործ կառա-
վարութեան և կամ երկիր, իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր էր պաշ-
տօն և կամ երկիր»:

2. Կ. Կոստանյանցն իր «Հիւսուածք»-ի մեջ (գիրք Գ, Վիեննա, 1877, էջ 29 և 36) տալիս է հետևյալ տարբեր լուսաբանություն-
ները, էջ 28—29՝ «երկու կարգի նախարարներ կային՝ աւագ և
կրտսեր. առաջին կարգից էին այն նախարարները, որոնք Հայոց
ամենահին ազնուական կամ նահապետական ցեղերից էին յա-
ռաջացել. իսկ երկրորդ կարգից էին նոքա, որոնց նախահայրերը
հասարակ մարդիկ են եղել առանց ազնուական ծագումի և նախա-
րարութիւն ստացել են թագաւորներից իրենց մի նշանաւոր ծառա-
յութեան կամ հաւատարմութեան համար» (նույն այս լուսաբա-
նությունը տե՛ս նաև էմիլիի Խորենացու ռուսերեն թարգմանության
հաւելւածում, էջ 298). մյուս մեկնությունը գտնվում է դարձյալ
«Հիւսուածք»-ում, էջ 36՝ «Իւրաքանչիւր նախարարութեան մէջ կար
աւագ նախարար՝ տանուտէրը, եւ կրտսէր նախարար՝ սեպուհները:

3. Նիկ. Ադոնցի կարծիքով՝ նախարարները համարվել են
«աւագ» կամ «կրտսեր» իրենց հզորության և կարեւորության հա-
մեմատ («Армения в эпоху Юстиниана», стр. 453).

Վերոհիշյալ ենթադրություններից անհիմն է և անհավանա-
կան Կոստանյանցի և էմիլիի կռահումը, որ իբր «կրտսեր» նախա-
րարների կարգին պատկանել են «հասարակ մարդիկ առանց ազ-
նուական ծագումի», որոնք նախարարություն էին ստացել թագա-
վորներից իրենց ծառայության կամ հավատարմության համար:
Այդ մասին աղբյուրների մեջ ո՛չ վկայություններ կան, ո՛չ էլ որեւէ
ակնարկ:

Նախարարությունների բաժանումն «աւագ» և «կրտսեր» խմ-
բերի, ինչպես մատնանիշ է արել Ջավախովը¹⁰, բավարար կերպով
լուսաբանված է Ղազար Փարպեցու մի վկայության մեջ: Փարպեցու
պատմելով, Վարդան Մամիկոնյանը Պարսից արքունիքում արտա-
սանած իր ատենախոսության ժամանակ ի միջի այլոց ասում է՝
«Բազումք են յայս երից աշխարհաց յազատորերոյ, որք են աւագ
քան զիս և զահու և աւուրբք» (Տփղիս, 1914, գլ. ԻԶ, էջ 49): Այս
վկայությունից դժվար չէ հետևցնել, որ «աւագ» են համարվել նա-
խարարները կամ «գահու» և կամ «աւուրբք»:

¹⁰ И. Джавахов. Государственный строй древней Грузии и древней
Армении, С. Петербург, 1905, стр. 110.

Եւ իրոք՝ ներքեւ մեջ բերված վկայութիւնների մեջ նախարարների «աւագ» մակդիրը գործ էածված հենց այդ երկու իմաստով:

Հայտնի է արդեն, որ Արշակունյաց թագավորության, ինչպես և Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ, հաջորդական կարգով որոշված էին նախարարական տոհմերի գահերն այդ տոհմերի հզորության կամ կարևորության համեմատ: Գոյութիւն է ունեցել գահերի կարգը որոշող հատուկ ցուցակ, որ անվանվում էր Գահնամակ: Ըստ այսմ՝ «աւագ»-ների խմբին են պատկանել այն հզոր ու առաջնակարգ տոհմերի նախարարները, որոնք «գահերէց» էին, իսկ «կրտսեր»՝ նրանք, որոնց գահերը եղել են երկրորդական կարգի:

Բացի այդ՝ վկայութիւնների մեջ երբեմն «աւագ» նախարար է անվանվում նախարարական տոհմի մեջ տարիքով մեծը, այսինքն՝ նահապետը կամ տանուտերը:

Ուշագրավ է, որ ուշ միջնադարում «աւագ» են անվանվել նահապետները կամ տանուտերները, իսկ նահապետութիւնն անվանվել է «աւագութիւն»: «Աւագ» բառն իր այս վերջին նշանակությամբ կատարելապես համապատասխանում է միջնադարյան Եվրոպայի senior-ին:

«Աւագ» նախարարները վկայութիւնների մեջ անվանվում են հաճախ «աւագանի» և երբեմն նաև «մեծամեծ աւագանի».

Վկայութիւններ՝

1. «Եղիշէի վարդապետի վասն վարդանաց և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1864, Ը, էջ 343՝

«Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ի կրսերագունից, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարագունք».

2. «Զի հինգ հարիւրով շափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ որ միայն աւագագունքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի» (Եղիշէ, էջ 354).

3. Խորենացի, II, ԿԴ, էջ 197՝

«Եւ այլ որ ինչ կրտսերագոյն ազգք, եթէ աստ և եթէ զկողմամբք Կորճէից, հաստատէ այս Տիգրան. որք միանգամ անագգիք էին ի վաշտս և անձամբ երեւելիք...»

4. Խորենացի, III, ԾԱ, էջ 323՝

«Որոց մնացելոցն պարգևեալ զկեալն՝ հրամայեաց (Արտաշէր) զսոունս երկաթանչիւրոցն զկալեալսն յարքունիս՝ դարձուցանել ի նոսա. բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի

խոնարհ քան զբազումս. մատուցեալ նախարարս, ի կարգ կըրտս-
սերագունից պատրաստել».

5. «Կանոնք Շահապիվանի» (Հրատ. Ղլտճյանի), Ի, էջ 81՝

«Եւ իշխան որ էր աշխարհին, և գեղջ ուրուք աւագ նախարար՝
տէր գաւառին կամի պղծութեանն թիկունք լինել...»

6. Փաւստոս, III, ԺԴ, էջ 42՝

«Բայց մեծամեծք նախարարացն աւագանին շատ եղին ի մտի
արքային, զի մի՛ կատարեսցէ զշարութիւն կամացն իւրոց առ դառ-
նութեան սրտին ցասման...»

7. Փաւստոս, III, ԻԱ, էջ 54՝

«Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մար-
դիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք,
աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դա-
տաւորք, պետք, իշխանք եւն».

8. Ագաթանգեղոս, գլ. ԻԱ, 225, էջ 118՝

«Եւ ի վաղիւ անդր թագաւորն և նախարարքն և մեծամեծ աւա-
գանին խառնաղանճ ամբոխիւ բազմութեամբ եկեալ եւն».

Ազնվականութեան ամենաստորին շերտը կազմում էին Հին
Հայաստանում «ազատ»-ները, որոնք վասալներ էին «աւագ» և
«կրտսեր» նախարարութիւններին:

Ֆեոդալական Հայաստանը բաժանված էր, ինչպես տեսնում
ենք, բազմաթիվ իշխանութիւնների, որոնք ենթարկվում էին կամ
Արշակունյաց տոհմի թագավորներին և կամ իրենցից զօրեղ,
բարձրագույն կարգի իշխաններին: Աղբյուրների մեջ հիշատակ-
վում են, օրինակ, նախարարութիւններ, որոնք ենթարկվում էին
բզեշխներին, ինչպես այդ պարզ ու բացահայտ երևում է հետևյալ
վկայութիւններից.

1. Փաւստոս, IV, Մ, էջ 163՝

«Բայց նախ այսմ զնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագա-
նին: Նախ բզեաշխն Աղճնեաց... և ամենայն նախարարութիւն
Աղճնեաց. և զօրն և տունն տոհմին Աղճնեաց կողմանն ապստամ-
բեցին յարքայէն Հայոց Արշակայ».

2. Փաւստոս, V, ԺԵ, էջ 216՝

«Եւ զբզեաշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին
Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր. և զազն որձակոտոր
առնէր, և զկանայն և զդստերսն ի գերութիւն վարէին: Սոյն օրի-
նակ և որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, և ի թա-
գաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեւեան գլխատէր...»:

Կալվածատեր ազնվականության ստորադաս խավերի վասսալական կապը և կախումն ավելի բարձր և զորեղ սյուզերեններից անվանվել է Հին Հայաստանում «ծառայութիւն»:

«Մառայ» և «ծառայութիւն» բառերը, որ նշանակում էին նաև ստրուկ և ստրկություն, սպասավոր և սպասավորություն, իբրև նախարարական կազմակերպության հատուկ տերմիններ՝ ոչ միայն կարող են համեմատվել ֆեոդալական Եվրոպայի vassus, servus, servitium և Ռուսաստանի слуга, служба բառերի հետ, այլև իրենց նշանակությամբ կատարելապես համապատասխանում են այդ բառերին:

Ուշագրավ է նաև այն, որ միջնադարյան Եվրոպայի dominus-ը կամ sendor-ն անվանվում է Հին Հայաստանում «տէր», իսկ dominium-ը՝ «տէրութիւն»:

Հիմնվելով աղբյուրների սխալ հասկացված վկայությունների վրա, բանասիրական ու պատմական աշխատություններում նախարարությունների թիվը Հին Հայաստանում ենթադրում էին, սովորաբար, 900 կամ 400: Սակայն Ն. Աղոնցը վերոհիշյալ իր աշխատության մեջ¹¹ մանրախուզ կերպով ուսումնասիրել է այս խնդիրը և, օգտվելով աղբյուրների արժանահավատ տեղեկություններից, պարզել է արդեն, որ Հին Հայաստանում նախարարական տոհմերի թիվը, որոնք այս կամ այն չափով հայտնի են եղել, պետք է հաշվել մոտավորապես մինչև հիսուն:

Նույն աշխատության մեջ քննության է առնված նաև նախարարությունների տեղադրության խնդիրը (глава XI. Территориальный анализ нахарапств, стр. 298—321): Իր ուսումնասիրության այս մասում՝ խոսելով Արծրունյաց, Մարդպետական և Ռշտունյաց նախարարությունների մասին՝ Աղոնցը ենթադրում է, որ այս մեծ իշխանությունների շուրջը խմբված են եղել վասսալականի մյուս մանր իշխանությունները: Նույն համակենտրոնացումը հատուկ է եղել, անշուշտ, նաև Սյունիքին և Աղվանքին:

Բոլոր այս դիտողությունները նախարարական իշխանությունների մասին հիմք են տալիս եզրակացնելու, որ Եվրոպական ֆեոդալիզմի վասսալական աստիճանավորումը (hiérarchie) գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում:

¹¹ «Армения в эпоху Юстиниана», гл. X, Количественный анализ нахарарства, стр. 236—297.

Ինչպես վերև տեսանք, Հին Հայաստանի ֆեոդալական կազմակերպության գլխավոր և էական հատկանիշն այն էր, որ նախարարական խոշոր կալվածքները ո՛չ թե սոսկ հողային գույք էին (Grundvermögen, земельное имущество), այլ պետական կարգի հողային «տէրութիւն»-ներ (Grundherrschaft, земельное господство):

Պրոֆ. Ի. Զավախովը վերև հիշված իր աշխատության մեջ (Государственный строй древней Грузии и древней Армении) ենթադրում է, որ Հին Հայաստանում և Վրաստանում, ինչպես նաև Արևելքի ուրիշ ազգերի մոտ, պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ տերմինները ծագել են, մեծ մասամբ, տոհմական նախորդ շրջանից:

Եվ իրապես՝ յուրաքանչյուր նախարարական երկիր, որ անվանվում էր «աշխարհ» կամ «գաւառ», պահպանել էր Հայաստանում նաև տոհմական նախորդ շրջանի «տուն» անունը: Իշխանությունն ամեն մի նախարարության մեջ պատկանում էր նախարարական տոհմի ներկայացուցչին, որ կոչվում էր «տանուտէր», «տէր» կամ «նահապետ»:

Հոմանիշ այս անուններից «տանուտէր»-ը և «տէր»-ը տոհմական հնագույն շրջանի և արմենական զաղթականության անվանումներ են, իսկ «նահապետ»-ը փոխառություն է պարթևերենից և համապատասխանում է պրթ. nâfapati բառին, որ նշանակում է տոհմի, ցեղի պետ (տե՛ս A. Meillet, Revue des études arméniennes, II, fasc. 1, p. 1-3).

Մատնանշված տերմինների իմաստը ֆեոդալական Հայաստանում լուսաբանված է բանասիրական ու պատմական թե՛ հին և թե՛ նորագույն աշխատություններում:

1. Հստ Ինճիճյանի «տէր», «տանուտէր» կամ «նահապետ» «կոչէր նա՝ որ գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութեան, կոչելով տէր Սիւնեաց, տէր Մամիկոնէից. յորոյ ի ձեռին էր տէրութիւն երկրի նոյն տոհմին, ևս և տէրութիւն ի վերայ զօրաց այնր տոհմի» (Հնախօս. II, էջ 78):

2. Կ. Կոստանյանցն իր «Հիւսուածք»-ի մեջ (III, էջ 36) տալիս է նույն տերմինների հետևյալ մեկնությունը: «Ամենայն նախարարութիւն,— ասում է նա,— ունէր իւր մեծը, որ կոչում էր նաճապետ կամ տաճուտէր կամ տէր. տանուտէր լինում էր սովոր-

րաբար նա, որը նոյն նախարարական ցեղի մէջ ամէնից մեծն էր տարով. այնպէս որ մնացած նախարարազունները, այսինքն՝ տա- նուտիրոջ որդիքը կամ եղբարքը՝ գտնուում էին նորա լիակատար իշխանութեան տակ»:

Կոստանյանցի լուսարանությունը, ինչպես տեսնում ենք, տարբեր է Ինճիճյանի մեկնությունից: Ինճիճյանի կարծիքով՝ «ի ձեռն [տանուտէրի] էր տէրութիւն երկրի նոյն տոհմին», իսկ Կոս- տանյանցի բացատրությամբ՝ տանուտերների լիակատար իշխա- նության տակ գտնվել են նախարարական տոհմերի անդամները: Այս վերջին բացատրությունը ճիշտ չէ, որովհետեւ տանուտերների իշխանության տակ գտնվել են իրոք ո՛չ միայն նախարարական տոհմերի անդամները, այլ նաեւ, ինչպես ուղիղ ենթադրել է Ին- ճիճյանը, նախարարական շրջանի ամբողջ բնակչությունը:

Նույն այս խնդիրը քննության է առել վերջերս Զավախովը «Государственный строй» վերոհիշյալ իր աշխատության մեջ (էջ 100—109) և նա ևս նահապետական իշխանությունը հասկացել է այն ուղիղ և լայն իմաստով, ինչպես և Ինճիճյանը:

«Տանուտէր»-ների կամ «նահապետ»-ների տիրական իշխա- նությունը, նաեւ նրանց իշխանության տակ գտնվող երկրամասը, անվանվել են «տանուտէրութիւն», «տէրութիւն» կամ «նահապե- տութիւն»:

Որ «նահապետ»-ները կամ «տանուտէր»-ները իշխանական իրավունքներ են ունեցել իրենց երկրներում՝ այդ երեւում է, ի միջի այլոց, նրանից, որ աղբյուրների մեջ նրանք անվանվում են ո՛չ միայն «տանուտէր», «տէր» կամ «նահապետ», այլ և «իշխան», իսկ նրանց երկրները՝ նաեւ «իշխանութիւն»:

Աղբյուրների մեջ հիշատակվում են երբեմն «աւագ տանու- տէր»-ները: Վերեւ մենք տեսանք, որ նախարարներն «աւագ» են համարվել կամ «կրտսեր», «գահու և աւուրբք»: Համապատասխան նախարարների այդ բաժանման՝ «աւագ տանուտէր» ևս անվանվել են, ինչպես այդ ուղիղ դիտել է Զավախովը («Государственный строй», стр. 110), այն «տանուտէր»-ները, որոնք իրենց գահով, դիրքով կամ տարիքով ավելի բարձր էին կամ մեծ:

Վկայություններ վերոհիշյալ անունների վերաբերյալ.

1. Փաւստոս, IV, ԺԵ, էջ 119՝

«Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրու- մըն, մի ի նախարարացն նաճապետին Սիւնեաց, որում անուն Փա- ւանձեմ կոչէր»:

2. Փաւստոս, V, Լէ, էջ 245՝

«Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց թագաւորն՝ Վաչէ անուն ի նմին տոհմէ».

3. Փաւստոս, V, ԽԲ, էջ 257՝

«Նոյնպէս յամենայն գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս յեվ տեսաւ գաւառաց գաւառաց».

4. Փաւստոս, IV, ԾԹ, էջ 183՝

«Եւ էր նա կին Գարեգնի տեառնն Թշտունեաց զաւառին».

5. Խորենացի, II, Ը, էջ 112՝

«Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարացւոցն տէր».

6. Խորենացի, II, Գ, էջ 104՝

«Եւ նախարարութիւնս և նոցին նախարարութեանցն նաճապետութիւնս հաստատեաց (Վաղարշակ) զարս պիտանիս».

7. Եղիշէ, է, էջ 242 (Վենետիկ, 1864)՝

«Զի ոչ ըստ կարգի ունէր նա (Վասակ) զտէրութիւն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել զՏօրեղբայր իւր զՎաղինակ».

8. Փարպեցի, II, Լ, էջ 58՝

«Ասա աւագս ի տանուտեւացն Հայոց, զիշխանն Արշարունեաց Արշալիր, զիշխանն Դիմաքսենից զՀմայեակ և զիշխանն Աբեղենից զԳազրիկ».

9. Փաւստոս, III, Դ, 9՝

«Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւագեան տոհմին, և միւս ևս նահապետն Որգունւոց տոհմին».

10. Փարպեցի, II, ԽԶ, էջ 85՝

«Եւ ի նմին ատուր զթշնամին նորա, զսեպուհն Սիւնի, զուրացողն զՎարազվաղան՝ տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցանէին, որոյ որջան ժամանակս կալեալ զիշխանութիւնն Սիւնեաց՝ բազում արարեալ անիրաւութիւնս..»:

Յուրաքանչյուր նախարարութեան մեջ տոհմի ավագագույն անդամը, որին հանձնվում էր երկրի իշխանությունը, կոչվում էր, ինչպես տեսանք, «տանուտէր», «տէր» կամ «նահապետ»։ Նախարարական տոհմի մնացած անդամները, ինչպես դժվար չէ հետևանք աղբյուրների վկայություններից, անվանվել են «սեպուհ»։

«Սեպուհ» տերմինը ևս ուղիղ է մեկնված նախորդ աշխատություններից։

1. Ըստ Ինճիճյանի (Հնախօս. Բ, էջ 80)՝ «յայսմ անուն կոչին

իւրաքանչիւր անձինք ամենայն նախարարութեանց սակա գոյոյ յազնուական տոհմէ. բայց սոքա չէին տեարք կամ տանուտեարք տոհմին և ոչ երկրին. այսինքն չէին գլխաւորք. յայտ է այս ի մտադիր քննողաց ի բանից անտի վիպագրաց մերոց»:

2. Նույն լուսաբանությունը գտնում ենք նաև Կոստանյանցի («Հիսուածք» Գ, էջ 36 և 38), Զավախովի («Государственный строй», էջ 126) և Ադոնցի («Армения в эпоху Юстиниана», стр. 472) աշխատություններում:

Ուշագրավ է առանձնապես «սեպուհ» բառի ստուգաբանությունը, որ առաջարկել է Ն. Մառը (տե՛ս ЗВО Имп. Рус. Арх. Общ., т. XI, стр. 165-169): Մառի կարծիքով՝ «սեպուհ»-ը (=սեպուրհ, հմմտե վրց. sazepuro) հայերենում իրանական փոխառություն է և համապատասխանում է վենդ. vIsaputhra բառին, որը նշանակում է տոհմի, ցեղի որդի: Ուրեմն՝ նախարարական տոհմի առաջնորդն ու գլխավորն անվանվել է «նահապետ» = nāfapati, որ նշանակում է տոհմի, ցեղի պետ, իսկ մյուս անդամները «սեպուհ» = vIsaputhra, այսինքն՝ տոհմի, ցեղի որդի:

Մեր նախորդ աշխատություններից մեկում («Դիտողություններ Հին Հայաստանի շինականների գրության մասին մարզպանության շրջանում», Երևան, 1925, էջ 12), մենք մատնանշել էինք, որ «սեպուհ» են կոչվել ո՛չ միայն նախարարական տոհմերի, այլ և Արշակունյաց թագավորական տոհմի անդամները: Փավստոսի պատմության մեջ Գնելը, Արշակ թագավորի եղբոր որդին, անվանված է «մեծ սեպուհն Արշակունի» (IV, ԺԾ, էջ 124):

Ղազար Փարպեցու պատմության մեջ հիշվում է հաճախ բացի «սեպուհ»-ից նաև «աւագ սեպուհ» տերմինը: Այս վերջին անունը քննության է առնված Զավախովի և Ադոնցի վերոհիշյալ աշխատություններում («Государственный строй», стр. 127) և «Армения в эпоху Юстиниана», стр. 472): Զավախովի ենթադրությամբ՝ «աւագ սեպուհ» անվանվել են կամ նախարարական տոհմի կարեւորության համաձայն և կամ ըստ տարիքի, իսկ Ադոնցի կարծիքով՝ «աւագ սեպուհ»-ը տարիքով ավագագույնն էր նախարարական տոհմում, որը «տանուտէր»-ի կամ «նահապետ»-ի մահից հետո ժառանգելու էր նրա իշխանությունը:

Ինձ թվում է, որ այս երկու ենթադրությունն էլ հավանական են: Փարպեցու վկայություններից կարելի է կուսել, որ «աւագ սեպուհ» կոչվել է կամ որևէ ավագ նախարարության «սեպուհ»-ը և կամ նախարարական տոհմի մեջ «սեպուհ»-ներից տարիքով

ավագր: Ուշագրավ է նաև այն, որ «աւագ սեպուհ»-ները մասնակցություն են ունեցել պետական գործերում: Փարպեցու վկայություններից երևում է, որ նրանք «տանուտէր»-ների հետ միասին հրավիրվում էին Պարսից արքունիք, մասնակցում էին «աշխարհաժողով»-ներում և կնքում էին «մատանեալ» կարևոր գրություններ: Նրանց գործակցությունը և այլ կառավարական խնդիրներում միանգամայն հավանական է, որովհետև «աւագ սեպուհ»-ները՝ որպես տանուտիրություն գահաժառանգներ՝ ստանձնելու էին նախարարական երկրի իշխանությունը:

Վկայություններ «սեպուհ» և «աւագ սեպուհ» անունների վերաբերյալ.

1. Փարպեցի, III, ԿԸ, էջ 121՝

«Եւ սեպում մի ուրծացի, որում անուն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ».

2. Փարպեցի, I, ԺԸ, 37՝

«Եւ լուեալ զայս ամենայն խօսս բազմութեան աւագացն Հայոց, տանուտերացն և սեպհացն և միահամուռ ժողովրդոցն բազմութեան...».

3. Նղիշէ, III, էջ 127 (Վենետիկ, 1864)՝

«Եւ զայս բազում զօրս յարքունի տանէն էարկ յինքն, և զսեպումս ոմանս յայլմէ տոհմէ».

4. Փարպեցի, I, ԺԵ, էջ 26՝

«Եւ տաղտկացեալ մեծամեծ տանուտեարքն Հայոց և աւագ սեպումեմ և ամենայն ժողովրդոցն բազմութիւնք...»

5. Փարպեցի, II, ԻԵ, էջ 47՝

«Եւ հրամայէր (Յազկերտ) գրել յերեսին հրովարտական, զի ամենայն տանուտեարքն և աւագ սեպուհքն երեցունց աշխարհացն փութով և անխափան ի դուռն եկեսցեն».

6. Փարպեցի, II, Լ, էջ 58՝

«Խորհուրդ ի մէջ առեալ իշխանին Սիւնեաց Վասակայ հանդերձ ամենայն տանուտեարամբ Հայոց և աւագ սեպհօք, և զմիտս ամենեցուն յիւր կամսն հաւանեցուցանէր».

7. Փարպեցի, II, ԼԲ, էջ 62՝

«Եւ գրեալ զայս ամենայն բանս հաւատոյ ուխտին, և կնքեալ նախ մատանեալ իշխանին Սիւնեաց Վասակայ և ապա մատանեօք ամենայն տանուտեարացն Հայոց և աւագ սեպհացն... ետուն ցատուական եպիսկոպոսսն և ցաւագ քահանայութիւնն որ էին անդ».

8. Փարպեցի, Բ, ԼԵ, էջ 65՝

«Եւ նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուի՝ յազգէն Դիմաքսենից»:

Նահապետական կամ տանուտերական իշխանութիւնը ժառանգում էր, ինչպես ասացինք, նախարարական տոհմի ավագ անդամը, այսինքն՝ «աւագ սեպուհ»-ը:

Ժառանգական նույն կարգը, ինչպես հայտնի է, պահպանվել էր նախարարական տոհմերում Բագրատունյաց ժամանակ, նաև ուշ միջնադարում: Ուշագրավ է այդ տեսակետից, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքում թագավորական գահի ժառանգ համարվում է առաջին հերթին թագավորի եղբայրը: «Եւ որքան եղբարք իցեն նորա,— ասում է Մխիթար Գոշը,— որդւոց նորա ոչ է իրաւացի առնուլ թագաւորութիւն (տե՛ս Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880, II, Ա, էջ 300): Բաստամյանցի ենթադրութիւնը, որ այս կանոնի նկատմամբ Դատաստանագրքի վրա ազդեցութիւն է ունեցել մահմեդական օրենքը կամ սովորութիւնը, ինչպես տեսնում ենք, միանգամայն անհավանական է:

Փափստոսը վկայում է, որ նախարարական շրջաններում հայ Արշակունիներն իրենք էին կարգում «տանուտէր»-ներ կամ «նահապետ»-ներ: Սակայն Արշակունիների այդ միջամտութիւնը, ինչպես ցույց են տվել Զավախովը և Ադոնցը («Государственный строй», стр. 101—103 և «Армения в эпоху Юстиниана», стр. 464—465), եղել է սոսկ ձևական: Արշակունիները ճանաչում էին միայն կամ հաստատում օրինական ժառանգների իրավունքները:

Ի նկատի ունենալով այս խնդրի կարևորութիւնը, հարկ եմ համարում մեջ բերել ժառանգութեան այդ հնավանդ իրավունքի վերաբերյալ մի քանի ուշագրավ վկայութիւններ՝

1. Փաւստոս V, 1է, էջ 246՝

«Եւ եղև իբրև եկն հհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարբն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրև ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետ, մինչ չև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն, զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ: Քանզի նա էր երէց, յազգին, և Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին. և Վաչէն լինէր երկրորդ»:

2. Փաւստոս, IV, Բ, էջ 67՝

«Եւ կացոյց արքայն [Արշակ] զՎարդան զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց, և զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիրս պատե-

րազմացն. սոյնպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր։ Սոյնպէս և զամենայն աղոսն զօրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիրաքանչիւր շահիտա։

3. Նդիշէ, VII, էջ 242 (Վենետիկ, 1864)՝

«Զի ոչ ըստ կարգի ունէր նա (Վասակ) զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, և յինքն տարաւ զտէրութիւնն իբրև քրտիկար յարքունիս»։

Յուրաքանչյուր «տանուտէր» կամ «նահապետ»՝ իբրև լիազոր տեր և կառավարիչ նախարարական երկրի՝ ունեւ թե՛ վարչական և թե՛ դատական իշխանություն։ Հպատակ հարկատու բնակչությունից իր գործակալների միջոցով նա ստանում էր հարկեր և տուրքեր. ունեւ սեփական զորք և առանձին գրոշ, Փափստոսը, օրինակ, անվանում է նահապետներին «գնդից և դրօշուց տեարք»։ «Ապա ի մի ժողով կուտեցան,— ասում է Փափստոսը,— առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գրնգից և դրօշուց տեարք» (IV, Գ, 68)։

Գլխավոր իշխանությունների և նրանց վասալների զորքերի քանակի մասին պահպանվել է մի հին ցուցակ, որը հրատարակել էր Հ. Շահխաթունյանն իր «Ստորագրության» մեջ¹², Նույն ցուցակը վերահրատարակված է նաև Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 424), Կոստանյանցի «Հիւսուածք»-ում (III, էջ 32) և Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ (стр. 251—252)։

Համաձայն այդ ցուցակի հազար կամ հազարից ավելի զորք տալիս էին պատերազմի ժամանակ իշխանական 23 խոշոր շրջան, հինգհարյուր կամ հինգհարյուրից ավել՝ 10 շրջան և հիսունից մինչև երեքհարյուր՝ 53 շրջան։ Զինվորական ցուցակի այդ տեղեկությունները, դժբախտաբար, վավերական չեն, խիստ աղճատված են և, Ադոնցի կարծիքով (էջ 252—259), հորինված են արվեստորեն VII դարից հետո, հավանաբար, գրավոր հնագույն աղբյուրների օգնությամբ։ Այնուամենայնիվ՝ նախարարական զորքերի թվի մասին հաղորդված վկայությունները կարող են, ինչպես ենթադրում է Ադոնցը, մասամբ ճիշտ լինել, որովհետև այդ տվյալները համապատասխանում են մոտավորապես Խորենացու, Զենոբի և Փափստոսի ցուցումներին։

¹² Ստորագրութիւն Կաթողիկէ էշմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, էշմիածին, 1842, II, էջ 58—59։

Նախարարական իշխանություններն ունեին իրենց սեփական ամրոցները և բերդերը, որոնք վտանգի ժամանակ ծառայում էին իբրև ապաստարան: Այդ ամրություններն էին նրանց հենարանը և հույսը պատերազմի և ապստամբությունների ժամանակ:

Ինչպես հայտնի է Փավստոսի վկայությունից, մեծ խռովությունների ընթացքում, որ բռնկվել էին Հայաստանում Տիրան Թագավորի ժամանակ, Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները պատրաստվել էին իրենց բերդերում, որ գտնվում էին Տայքում (Փավստոս, III, ԺԸ, էջ 47 և IV, Բ, էջ 67): Ղազար Փարպեցին ևս վկայում է, որ Վարդանանց կռիվների ժամանակ Շահակուն՝ մի ուրծացի, որում անուն էր Վարազնեսի, ... նենգնալ ուխտին սրբոյ՝ երթնալ աւերէր զշահաստանն Բռնավիժի, և առնալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն որ անուանեալ կոշի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց» (Փարպեցի, III, ԿԷ, 121): Բազմաթիվ նաև ուրիշ վկայություններից երևում է, որ բերդերը և ամրությունները, լինելով նեցուկ և հենարան ավատական առանձնացման՝ նույնպիսի կարևոր դեր են կատարել Հին Հայաստանում, ինչպես և միջնադարյան նվաճումում:

Հասկանալի է այդ տեսակետից, որ նախարարական Հայաստանը նվաճելու, ինչպես և նախարարական ապստամբություններն ընկճելու համար, անհրաժեշտ էր նախ քանդել ու գրավել այդ կարևոր պատասպարանները:

Նախարարական ամեն մի իշխանություն ուներ իր հատուկ կենտրոնատեղին, որը կոչվել է, ինչպես ենթադրում են Զավախովը և Ադոնցը («Государственный строй», стр. 120 և «Армения в эпоху Юстиниана», стр. 463), «գահ» կամ «գահոյք», այսինքն՝ տեղ կամ «գահ» աթոռանիստ կենտրոնի իմաստով: Փավստոսի մոտ, օրինակ, Մանավազյան տոհմի իշխանի կենտրոնն անվանվում է «բուն գահոյից գեղն» (III, Դ, էջ 10):

Ադոնցի կարծիքով, նախարարական շրջանի կենտրոնատեղին կոչվել է ո՛չ միայն «գահ» կամ «գահոյք» այլև «տոտան»:

Այս վերջին պնդումը նախարարությունների հնագույն անցյալի նկատմամբ ճիշտ չէ: Հյուբշմանը շատ ուղիղ դիտել է, որ Արշակունյաց ժամանակ «ոտտան» է համարվել այն երկիրը միայն կամ քաղաքը, որ գտնվել է Արշակունյաց իշխանության տակ: «Ոտտան» նշանակում էր, ուրեմն, «արքունի կալված», երկիր կամ քաղաք: «Ոտտան» էին, ինչպես հայտնի է Արտաշատը, Վաղարշա-

պատը և հետագայում նաև Դվինը: Աղբյուրների վկայություններից դժվար չի հետևեցնել, որ ո՛չ թե հին շրջանում, այլ միմիայն հետագա դարերում, «ոստան»-ը գործ է ածվել նաև նախարարական ուրիշ կենտրոնների համար: Որովհետև Արշակունյաց շրջանում գտնվող գլխավոր քաղաքները «ոստան» էին անվանվում, այնուհետև՝ «ոստան» են համարվել նաև նախարարական իշխանությունների նշանավոր կենտրոնները, օրինակ՝ Նախճավանը, Հաղամակերտը և Դարոյնքը:

Մատենագրական աղբյուրների տեղեկությունները նախարարությունների ներքին կազմակերպության մասին, ինչպես տեսնում ենք, քիչ են և թերի: Սակայն այնուամենայնիվ՝ ընդհանուր ու աղոտ գծերով որոշվում են նախարարությունների թե ներքին կազմակերպության հիմնական կողմերը և թե նրանց պետական ինքնամփոփ ու ինքնուրույն վիճակը:

Դ. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՈՐՈՇՈՒ ՎԱՍԱԼՆԵՐ ԵՎ «ԱՐՔՈՒՆԻ ԳՈՐԾԱՎԱԼՆԵՐ»

Նախարարությունները Հին Հայաստանում, ինչպես տեսանք, ինքնուրույն իշխանություններ էին: Սակայն նրանք իբրև վասալներ գտնվում էին միաժամանակ հայ Արշակունիների իշխանության տակ: Իրենք՝ Արշակունիները նույնպիսի միահեծան «սէր» էին իրենց բնիկ երկրում, ինչպես «նահապետ»-ները կամ «տանուտէր»-ներն իրենց շրջաններում:

Արշակունիների բուն երկիրը, որ իր տարածությամբ շատ ավելի ընդարձակ էր քան նախարարական «սէրութիւն»-ները, կոչվում էր, հավանորեն, «ոստան»:

Նիկ. Աղոնցը կարծում է, որ «ոստան» նշանակում է արքունիք, բառացի՝ շեմք, համապատասխանում է միջնադարյան Եվրոպայի *curtis dominicalis*-ին և իբր թե այդպես են անվանվել նախարարական և արքունի երկրների կենտրոնները¹³: Նրա ենթադրությունը, ըստ երևույթի, հիմնված է Հայկազյան լեզվի նոր բառգրքի վրա, որը «ոստան» բառի դիմաց գրել է նույնպես՝ «սեամ, դուռն արքունի», բացատրությունը: Սակայն հիմնավոր և համոզիչ է, ինչպես վերև ասացինք, ո՛չ թե այս բացատրությունը, այլ այն մեկնությունը, որ տվել է «ոստան» բառին Հյուբշմանն իր «Հին հայոց տեղույ անունները» աշխատության մեջ (Թարգմ. Հ. Բ. Պիլգրիկճեանի, Վիեննա, 1907, էջ 393—394): Նրա լուսաբանու-

¹³ «Армения в эпоху Юстиниана», стр. 463.

թյամբ՝ «ոստան» բառի ծագումն անպայման պարսկական է. չորրորդ դարում «ոստան» է անվանվել այն երկիրը կամ քաղաքը, որ գտնվել է Արշակունի թագավորի (կամ Արշակունյաց թագավորական տան որևէ իշխանի) իշխանության տակ:

Վերև մատնանշել էինք, որ «ոստան» կոչվել են Այրարատ գավառի գլխավոր քաղաքները՝ Արտաշատը, Վաղարշապատը և ապա Դվինը: «Ոստան» էին սակայն ո՛չ միայն այդ քաղաքները, այլև Արշակունիների թնիկ սեփհական» Այրարատ գավառը, նաև նրանց անմիջական իշխանության տակ գտնվող արքունի ամբողջ երկիրը: Որ այս ենթադրությունը միանգամայն ճիշտ է, այդ պարզ հերևում է Փավստոսի հետևյալ վկայություններից.

1. Փաւստոս, VI, ԺԹ, էջ 133՝ «Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազատ առնէր (Արշակ). և զգաւառսն ունէր յոստան».

2. Նույնը, V, ԺԸ, էջ 217՝ «Հարկանէր (Մուշեղ) և յԱնգեղ տունն զբազումս, և հանէր ընդ սուր: Բայց աշխարհն, զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»:

Արշակունիները, լինելով անմիջական «տէր» արքունի երկրի կամ «ոստան»-ի, միաժամանակ բարձրագույն սենյուրներ էին նախարարական ամբողջ Հայաստանի: Իբրև միապետներ, որոնց ստորադրված էին բոլոր իշխանությունները, և բոլոր նախարարությունները, նրանք անվանվում էին «թագաւոր» կամ «արքայ Հայոց Մեծաց» (տես Փաւստոս, III, ԺԱ, էջ 28, IV, ԺԱ, էջ 107, Կորին (Վեհետիկ 1894), էջ 14 և 20, Ագաթանգեղոս ՃԺԶ, էջ 428, Դ, էջ 29, ԺԲ, էջ 73 ևն), իսկ նրանց իշխանությունը՝ «տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին» (տես Փաւստոս IV, Բ, էջ 67):

«Հայոց Մեծաց» թագավորը թեև համարվում էր բարձրագույն տեր և հրամայող նախարարական ամբողջ Հայաստանի, սակայն նրա այդ բացարձակ իշխանությունը գրեթե անվանակա՞ն էր և ձևական: Հայաստանի քաղաքական և աշխարհագրական պայմաններում դժվար էր զսպել և սանձահարել զորեղ ու ըմբոստ նախադրությունները և զորեղացնել թագավորական միահեծան իշխանության հեղինակությունը: Դժվար էր այդ, մանավանդ, և այն պատճառով, որ Հայաստանում չէին հասունանում կամ ամբողջում այն տնտեսական ու սոցիալական նախադրյալները, որոնք նպաստելու էին միապետական իրական իշխանության ստեղծման:

Ներքև մենք կտեսնենք, որ Արշակունիների բռնն ու անհաշտ

պայքարն ընդդեմ նախարարութիւնների շարունակվել է գրեթե անընդհատ մինչև նրանց թագավորութիւնն անկումը:

Նախարարութիւնները, որ համառութեամբ պաշտպանում էին իրենց ներքին անկախութիւնը, ճանաչում էին Արշակունիներին իրենց «տէր» և «թագաւոր Հայոց Մեծաց» բարձրագույն սենյորի իմաստով՝ ճիշտ այնպես, ինչպես և ֆեոդալական Եվրոպայում: Նրանք գործակցում էին Արշակունիներին, երբ հարկավոր էր պաշտպանել նախարարական Հայաստանն արտաքին հարձակումներից: Թագավորը համարվում էր ընդհանուր ներկայացուցիչ միջազգային հարցերում. նա հայտարարում էր պատերազմ, կռում էր դաշինք, ուղարկում ու ընդունում էր դեսպանութիւններ և պահպանում հարաբերութիւններ օտար պետութիւնների հետ: Հավանական է սակայն ենթադրել, որ այս հարցերն անգամ քննվում էին սովորաբար «աշխարհաժողով»-ներում¹⁴:

Համեմատելով նախարարութիւնների պարտականութիւններն Արշակունիների հանդեպ արևմտյան ֆեոդալների համապատասխան պարտականութիւնների հետ, դժվար չէ համոզվել, որ վասալական այդ հարաբերութիւններն ունեն ընդհանուր նման գծեր, որ ակներև են ու անժխտելի:

Ուշագրավ է ամենից առաջ, որ Հին Հայաստանում ևս ֆեոդալական դասակարգութեան ամեն մի ստորին խավի կապը և կախումն ավելի բարձր շերտից արտահայտվել է նույն տերմիններով, ինչպես և միջնադարյան Եվրոպայում: Հայ նախարարները, ինչպես հայտնի է, անվանվում էին «ծառայ» նախ հայ Արշակունիների և ապա Պարսից թագավորների: Այն պարտականութիւնները՝ որ նրանք ունեին թագավորի հանդեպ, կոչվում էին «ծառայութիւն»: Իբրև հատուկ տերմիններ Հայաստանի նախարարական կազմակերպութեան, «ծառայ» և «ծառայութիւն» համապատասխանում են, ինչպես ցույց է տվել Նիկ. Ադոնցը, ֆեոդալական Եվրոպայի servus, servitium և Ռուսաստանի слуга, служба բառերին («Армения в эпоху Юстиниана», стр. 459).

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական իշխանութիւնները պարտավոր էին, և այդ նրանց հիմնական պարտականութիւնն էր, պատերազմի ժամանակ տրամադրել սենյորին իրենց զինվորական ուժերը: Նույն պարտականութիւնն ունեին Հին Հայաստան-

¹⁴ «Աշխարհաժողով» բառը թեև իբրև հատուկ տերմին չի հանդիպում մատենագրական հին աղբյուրներում, սակայն այդ բառը ճշտորեն արտահայտում է աշխարհայտում խորհրդակցութիւնների բնույթը, որ ներքև քննվելու են:

նում նախարարություններն Արշակունյաց և Սասանյան Պարսկաստանի թագավորների հանդեպ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Հայաստանում ևս, ինչպես և ֆեոդալական Նվրոպայում, նախարարական իշխանությունները պարտավոր էին պաշտպանել իրենց սենյորի բերդերը և հարկավոր դեպքերում տրամադրելու էին նրան իրենց սեփական ամրությունները:

Միջնադարյան Նվրոպայում վասալների գլխավոր պարտականություններից մեկն էր նաև նրանց պարտադիր ծառայությունն արքունիքում կամ սենյորական պաշտոնավայրում: Նրանք ո՛չ միայն իրենց ներկայությամբ առանձին փայլ էին տալիս սենյորի տոնական մեծ հանդեսներին, այլ գործակցում էին նրան քաղաքական ու կառավարական գործերում, մասնակցում էին կարևորագույն հարցերի քննությանը հատուկ ժողովներում և վարում էին նույնիսկ արքունի որոշ պաշտոններ:

Նույնը մենք տեսնում ենք նաև նախարարական Հայաստանում, գլխավորապես, Արշակունյաց թագավորության ժամանակ:

Նախարարների և «ազատ»-ների մեծ ու փոքր պաշտոններն արքունիքում և «ոստան»-ում անվանվում էին «գործ» կամ «գործակալություն», իսկ նախարարներն ու «աղատ»-ներն իրենք կոչվում էին իբրև արքունի պաշտոնյաներ՝ «գործակալ»-ներ: Համաձայն Ադոնցի՝ «գործ» և «գործակալ» համապատասխանում են արևմտյան ֆեոդալիզմի office և officier տերմիններին¹⁶:

Ամենակարևոր «գործակալություն»-ներն Արշակունյաց Հայաստանում, որ հանձնարարված էին ավագ նախարարություններին և կաթողիկոսությանը, անվանվում են աղբյուրներում՝ «թագակալ ասպետություն», «մարդպետություն», «մաղխազություն», «սպարապետություն», «հազարապետություն» և «մեծ դատաւորություն»:

«Թագակալ ասպետության» իշխանությունը հանձնված էր Բագրատունիներին: Իբրև «թագադիր» նրանք գահակալության ժամանակ թագ էին դնում թագավորի գլխին:

Պարթևների թագավորության մեջ, ինչպես և Սասանյան Պարսկաստանում, թագադրության այդ իրավունքը տրված է եղել, ինչպես հայտնի է, ազնվական ամենաբարձր տներին, որոնք ազգական էին թագավորական ընտանիքին: Բագրատունիների մասին ևս հաղորդվում է որ նրանք խնամիական գծով ազգական էին Արշա-

¹⁶ «Армения в эпоху Юстиниана», стр. 467.

կունիններին (տե՛ս Սեբէոս, Պատմութիւն ի Հերակլին, Ս. Պետերբուրգ 1879, Ա, էջ 9, հորենացի, II, 49, էջ 194, Փաւստոս V, հԴ, էջ 263)։

1. Փաւստոս, V, հԴ, էջ 263՝

«Առնէր հարսանիս և եղբօր նորին Վազարշակայ, և տայր նմա զդուստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ թագադիրքն¹⁶ թագակալէն լեալ էին ի բնմէ ազգին թաղաւորութեանն Արշակունոյ»։

2. Ագաթանգեղոս, ՃԺԲ, էջ 414՝

«Զորորորդ՝ իշխանն թագակալ իշխանութեան ասպետութեանն»։

3. Ագաթանգեղոս, ՃԻԶ, էջ 460՝

«Առնոյր ընդ իւր (Տրդատ) ... զմեծ իշխանն Անգեղ տան, և զթագադիր ասպետն, և զսպարապետն մեծ»։

4. հորենացի, II, է, էջ 110՝

«Արդ՝ նախ և առաջին օրինադրէ թագաւորն (Վաղարշակ) զինքն և գտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ։ Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէիցն, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ տանուտիրական պատրին ազգին պարգեւելով. և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ»...

5. հորենացի, II, Ը, էջ 117՝

«Եւ աղերսեալ որ ի Հրէիցն Շամրատայ Բագարատ, որ և թագադիր և ասպետ»։

6. Նույնը II, ԺԴ, էջ 128՝

«Վասն որոյ առնու ի նոցանէ ի բաց (Տիգրան) զիշխանութիւն զօրուն. բայց միայն զթագակալ ասպետութիւնն ոչ հանէ»։

7. Նույնը II, Խէ, էջ 174՝

«Եւ ոչ ինչ ընդհատ յայլոց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ (Արտաշէս), բայց միայն երկուց գնդացն և ի կարմիր կօշկէ. և աւելի քան զհայրենական զիւր թագակալ ասպետութիւնն և զիշխանութիւնն արեւմտեայ զօրուն՝ հավատայ ի նա զամենայն զօրս Հայոց, և զբոլոր աշխարհիս զգործակալս և զհամօրէն տունն արքունի»։

¹⁶ Բնագրում «թագաւորքն», որ ուղղելու է «թագադիրքն», տե՛ս Ն. Բիւզանդացի, Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը, Տիփսիս, 1900, էջ 269։

Յ. Նույնը II, Գ, էջ 104՝

«Նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէիցն՝ Շամրատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ քաղաղիւր լինել Արշակունեաց»:

«Ասպետ» բառը, ինչպես հայտնի է, գործ էածվել իբրև հատուկ տիտղոս Բագրատունիների տոհմում: Բանասիրական ու պատմագիտական հնագույն երկերում այդ տերմինի մասին տրբված են զանազան մեկնություններ, որ հիշատակված են Նորայր Բյուզանդացու «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք» աշխատության մեջ (էջ 284): Նոր Հայկազյան բառգրքում և Աճառյանի Արմատական բառարանում «ասպետ» բառին վերագրված է այն սովորական նշանակությունը, որ ընդունված է նաև այժմյան գրական լեզվի մեջ՝ «ասպետ»—սծիաւոր ազնուական, իշխանաւոր հեծեալ»:

Նույն բառի ստուգաբանական մեկնությունը, որ ընդունելի է համարել Աճառյանը, տվել է Հյուբշմանն իր Armenische „Grammatik“ աշխատության մեջ (s. 109): «Ասպետ»-ը նրա կարծիքով, համառոտություն է հին պարսկերեն *aspapati բառի, որ նշանակում է «սծիատեր»: Այս բացատրությունը, թեև ստուգաբանորեն բավարար կերպով հիմնավորված է, սակայն խիստ վիճելի է «ասպետ» և *aspapati բառերի վերոհիշյալ նշանակությունների տարբերության պատճառով: Անհասկանալի է նույնպես, թե ինչու «ասպետ»-ը, ունենալով ֆեոդալական chevallier կամ рыцарь բառի նշանակությունը, գործածական չի եղել Հայաստանում իբրև տերմին «սծիաւոր ազնուական»-ների համար:

Նույն «ասպետ» բառի մասին մի այլ բացատրություն, որ հիշատակված չէ Աճառյանի Արմատական բառարանում, առաջարկել է Ադոնցը (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 400—402): Ըստ այդ բացատրության՝ «ասպետ» Բագրատունիների տոհմային տիտղոսն է, նշանակում է «տոհմապետ» և համապատասխանում է իրանական vīšapati բառին: Թեև Ադոնցի այս ստուգաբանությունը կարոտ է ավելի հիմնավոր լուսաբանման, սակայն այս մեկնությունն ըստ իս հավանական է, որովհետև նոր այս բացատրությամբ միանգամայն հասկանալի է դառնում «ասպետ»-ի գործածությունն իբրև տիտղոս Բագրատունիների միայն տոհմում:

«Գործակալ»-ական մեծ իշխանություն էր արքունիքում «մարդպետութիւն»-ը: Ադոնցի ենթադրությամբ՝ «մարդպետ» նշանակել է սկզբում «մարդ» ցեղի պետ, այն հայտնի ցեղի, որ ապրում էր

Մարդաստանում: Հետագայում «մարդպետ»-ը դառել է նախարարական տոհմի տիտղոս (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 319): Համաձայն տոհմային այդ տիտղոսի «մարդպետ»-ներին հանձնված արքունի «գործակալութիւնն» անվանվել է «մարդպետութիւն»՝ ճիշտ այնպես, ինչպես և Բագրատունիների տոհմային «ասպետ» տիտղոսի համաձայն վերոհիշյալ «գործակալութիւն»-ը կոչվել էր «ասպետութիւն»:

«Մարդպետութեան» մեծ իշխաններին հանձնարարված են եղել Արշակունիների կանանոցի և արքունիքի վերակացութիւնը, թագավորական ամրութիւնների և բերդերի պահպանութիւնը և արքունի գանձերի ու կալվածների վերահսկողութիւնը: Նրանց քարձր դիրքը և բացառիկ հեղինակութիւնն արքունիքում պարզ երևում է նրանից, որ Փաւստոսի մոտ նրանք անվանվում են «հայր» կամ «հայր թագավորի», իսկ նրանց պաշտոնը՝ «հայրութիւն»:

Նորայր Բյուզանդացու և Ինճիճյանի վերոհիշյալ աշխատութիւններում սխալ են մեկնված «մարդպետութեան» վերաբերյալ Փաւստոսի հետևյալ վկայութիւնները.

1. Փաւստոս, IV ԺԴ, էջ 117՝

«Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի դաւառն Տարօնոյ ընդ իւր գեղսն տեսանել... եկն էջ և Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջեալ»:

2. Փաւստոս, V, Գ, էջ 195՝

«Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին»...

Ինճիճյանը և Նորայր Բյուզանդացին ենթադրում են, որ «շրջէր ընդ մարդպետութիւն իւր» և «զիւրով իշխանութեամբ շրջէր» պետք է հասկանալ այն իմաստով, որ «մարդպետ»-ների իշխանութեան տակ գտնվող կալվածները Տարոնում «մարդպետութեան» սեփական երկիրն էին (տե՛ս «Հնախօս» Բ, էջ 138 և «Կորիւն և նորին թարգմանութիւնը», էջ 268): Այս ենթադրութիւնը անհավանական է և անընդունելի: Ինչպես ուղիղ մեկնել է Գարագաշյանը, հիշյալ կալվածներն արքունի տան շրջաններ էին, որոնք գտնվել են «ընդ տեսչութեամբ մարդպետաց» (տե՛ս «Քննական պատմութիւն Հայոց», Բ, էջ 7 և 20)¹⁷: Ուրեմն՝ «ընդ մարդպետութիւնն իւր» և

¹⁷ Նույն այս կարծիքը հայտնել է նաև Մարկվարտը, տե՛ս „Südarmenten und die Tigrisquellen“, Wien, 1930, s. 36. Անհավանական է, սակայն, Մարկվարտի մյուս ենթադրութիւնը, որ իբր թե նաև Թովմա Արժրունու մոտ հիշառուկված Վասպուրականի գավառները/ III, իթ, էջ 351-352/, որոնք «մարդ»

«գլխով իշխանութեամբ» խոսքերի տակ պետք է հասկանալ «մարդպետ»-ների ո՛չ թե «տանուտէրական», այլ «գործակալական» իշխանությունը:

«Մարդպետության» քաղաքական մեծ դերը չորրորդ դարում մատնացույց է արված Մարկվարտի „Sudarmenien und die Tigrisquellen“ աշխատության մեջ (Wien, 1830, s. 58-70); Մարկվարտի կարծիքով «մարդպետ»-ներն իբրև արքունի «գործակալ»-ներ ձգտել են ամրացնել Արշակունիների հզորությունը և ստեղծել զորեղ թագավորական իշխանություն. միաժամանակ նրանք աշխատել են սմեն կերպ ընկճել ու թուլացնել ինքնիշխան ու կենտրոնախույս նախարարությունները: Հակառակ կենտրոնացման այս քաղաքականության՝ Մամիկոնյան տոհմը և եկեղեցական բարձր իշխանությունը գործել են ձեռք ձեռքի տված ընդդեմ «մարդպետության» և պաշտպանել են նախարարական տոհմերի կալվածական ու «տանուտէրական» իրավունքները:

Հասկանալի է այդ տեսակետից, որ Փավստոսը՝ որպես այս վերջին կուսակցության պատմագիր՝ խորապես ատում է «մարդպետ»-ներին և պախարակում է խստիվ նրանց վարած քաղաքականությունը նախարարությունների հանդեպ: «Մարդպետ»-ներին, որ գործում էին նախարարությունների ու կաթողիկոսության հակառակ, Փավստոսն անվանում է՝ «չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ» (III, ԺԸ, էջ 47) և կամ «այր շար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ» (IV, ԺԴ, էջ 116):

Մեջ ենք բերում «մարդպետութեան» վերաբերյալ աղբյուրների կարևորագույն վկայությունները.

1. Փաւստոս, III, ԺԷ, էջ 45՝

«Եւ տան զնա [զՇահակ] ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Հայր կոչէր».

2. Նույնը, IV, Դ, էջ 72՝

«ԶՀայր մեծ իշխանն մարդպետութեան».

3. Նույնը, III, ԺԸ, էջ 46—47՝

«Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն զրգուէր զթագաւորն Տիրան: Այս ինքն որ ուներ զպատին մեծի մարդպետութեանն, այր ճեբֆինի՝ չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ, որում Հայր կոչեին: Զբա-

պետ»-ների շեփակն» կալվածներն: Էին, համարվելու են արքունի տան երկրներ. տե՛ս Die Ceneologie der Bagratiden, Caucasica, 1930, Fasc. 6, 2. Teil, s. 35;

զտմա ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն».

4. Նույնը, V, Գ, էջ 196՝

«Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն [կացուցին] զԳրգալ¹⁸ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հօր նորա գամու միոշ լեալ եոյն գործ մարդպետութեանն».

5. Նույնը, V, է, էջ 210—211՝

«Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս, Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Սոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն, Եւ քանդի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի ղիշխանն ղԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկրին Պարսից ի ժամանակին՝ յորժամ կայան ղԱրշակ արքայն Հայոց».

6. Նույնը, V, Զ, էջ 207՝

«Ապա Տէրէնդ զօրավարն զօրացն Յունաց և Մուշեղ զօրավար զօրացն Հայոց զԳրգալ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն Հայր թագաւորին, թողին զնա սահմանապահ ի Գանձակ».

7. Ազաթանգեղոս, ՃԺԲ, էջ 414՝

«Յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն և ղկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բղեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն...».

8. Խորենացի, II, է, էջ 112՝

«Նա և ներքինիս հրամայէ [Վաղարշակ] ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և Նախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ, Բայց թէ որպէս կամ ուր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ».

9. Խորենացի, III, ԺԵ, էջ 274՝

«Տեսեալ զայս Տիրանայ և յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդ-

¹⁸ Բնագրում «գրգալակ» փխ. «գրգալ».

պետն կոչեցեալ Հայր, և հանդերձ երդմամբ կոչէ առ ինքն զԶօրայ»:

Իբրև առանձին «գործակալութիւն» աղբյուրների մեջ հիշվում է նաև «մաղխազութիւն»-ը: «Մաղխազ», ինչպես ցույց է տվել Նիկ. Ադոնցը, նշանակում է «տեք, իշխան, թագավոր» (= ասոր. malxazu, տե՛ս «Армения в эпоху Юстиниана», էջ 400):

Մատենադարական վկայութիւններից հայտնի է, որ «մաղխազ» տոհմային տիտղոսն էր Խորխոռունիների: Պարզ է, ուրեմն, որ արքունի այս «գործակալութիւն»-ը հանձնված է եղել Խորխոռունիների նախարարական տոհմին և անվանվել է «մաղխազութիւն» ըստ նրանց տոհմային տիտղոսի՝ միանգամայն համապատասխան վերոհիշյալ «գործակալութիւն»-ներին, որոնց անունները ևս, ինչպես վերև տեսանք, ծագել էին «ասպետ» և «մարդպետ» տոհմական տիտղոսներից:

«Մաղխազութեան» պաշտոնը, ինչպես ենթադրում են, վերաբերվել է թագավորի անձի պաշտպանության: «Մաղխազ»-ը որպես արքունի «գործակալ», Խորենացու վկայության համաձայն, թիկնապահների գլխավորն էր: Նույն պաշտոնը Սասանյան Պարսկաստանում անվանվել է puštikpānsālār, այսինքն՝ փուշտիպանների կամ թիկնապահների հրամանատար¹⁹:

«Մաղխազութիւն»-ը և «մաղխազ»-ները հնագույն աղբյուրների մեջ հիշվում են հետևյալ հատվածներում.

1. Խորենացի, II, է, էջ 110՝

«Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, և զաւակացն Խոռաշ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս. և զգլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր բարի և սըրտեայ: Բայց անուն ազգին զնախնականն պահէ».

2. Խորենացի, III, Թ, էջ 267՝

«Եւ փոխանակ Միհրանայ կարգէ [Խոսրով] զԳարշոյլ Մաղխազ նահապետ Խոռխոռունեաց ի վերայ զօրուն».

3. Ագաթանգեղոս, ՃԺԲ, էջ 414՝

«Հնգետասաներորդ՝ իշխանն Մաղխազութեան տանն».

4. Նույնը, ՃԻԶ, էջ 460՝

«Առնոյր ընդ իւր [Տրդատ]... և զիշխանն Մաղխազութեան տանն».

5. Փաւստոս, III, ԺԲ, էջ 29՝

«Բայց գումարեաց ընդ նմա [Յուսկան] թագաւորն Տիրան

¹⁹ Տե՛ս A. Christensen, L' empire des Sassanides, p. 93-94.

ամեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին... և զՄանասպ զխորխորունեաց զիշխանն Մաղխագունեան տանն».

6. նույնը, V, 1Ը, էջ 252՝

«Ապա յետ այսորիկ առաքեցին Զարամանդուխտ տիկինն Հայոց և պարապետն Մանուէլ զԳարշոյլ Մաղխազ, և ընդ նմա զբաղումս ի նախարարացն Հայոց»։ Տե՛ս նաև Փաւստոս, IV, ԺԱ, էջ 106, V, ԽԳ, էջ 263:

Մեծ գործակալութիւն» էր նաև «Հազարապետութիւն»-ը, որին հանձնարարված է եղել, հավանորեն, արքունի երկրի տնտեսական բարեկարգման և գյուղացիական ու ելեմտական գործերի վարչութիւնը:

«Հազարապետ»-ի պարտականութիւնն էր, ըստ երևութին, աշակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսութեան զարգացմանը: «Հազարապետութեան» այս պարտականութիւնները կապված էին հարկահանութեան գործի հետ: Հողի մշակութիւնը, ոռոգման գործը և, ընդհանրապես, երկրի շին վիճակը նշանակութիւն ունեին՝ իբրև հիմք և աղբյուր պետական բաեկեցութեան և պետական եկամուտներին:

«Հազարապետ»-ի աշխարհախնամ գործունեութեան կարևոր այս կողմը շեշտված է, հատկապես, Փաւստոսի պատմութեան հետեւյալ հատվածում՝

«Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին» (IV, Բ, էջ 67):

Իսկ նույն պաշտոնի ֆինանսական բնույթը կարելի է ենթադրել նոր կտակարանի հայերեն թարգմանութիւնից, որի մեջ «հազարապետ» բառը համապատասխանում է հաճախ հունարեն οἰκονομος («տնօրեն, տնտես») բառին (տե՛ս Ա. Պետ. Դ, 10, Ա. Կորնթ. Դ, 1 և 2):

Ուշագրավ է նաև, որ Բագրատունյաց թագավորութեան ժամանակ ևս, օրինակ, Թովմա Արծրունու պատմութեան մեջ «հազարապետ» բառը գործ էածվել՝ իբրև տեսուչ ու վերակացու արքունի հարկերի:

«Ե դառնալն Ապուսէթի յԱսորիս,— ասում է Թովման,— և Մուսէր հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց Մովսիսի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն» (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերսուրգ, 1887, II, 2, էջ 111):

«Հազարապետութեան» արքունի պաշտոնը գոյութիւն է ունեցել ո՛չ միայն Արշակունյաց թագավորութեան, այլև մարզպանութեան ժամանակ: Իբրև Պարսկական Հայաստանի «Հազարապետ»-ներ Կորյունի և Ղազար Փարպեցու մոտ հիշված են Վահան Ամատունին Վարդանանց ապստամբութիւնից առաջ և պարսիկ Վեհապետները Ատրպէյնասպի մարզպանութեան ժամանակ (տե՛ս «Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ վարդապետի», Վենետիկ, 1894, էջ 44 և Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Տիփսիս, 1904, III, ԿԶ, էջ 118):

Ուշադրութեան արժանի է սակայն, որ Սասանյան Պարսկաստանում «Հազարապետ»-ը կամ ավելի ճիշտ՝ «մեծ հազարապետ» ունեցել է անհամեմատ ավելի բարձր դիրք և ավելի ընդարձակ իշխանութիւն: Հայկական աղբյուրներում կան, օրինակ, կարևոր տեղեկութիւններ Միհրնեբրսեհի մասին, որը «Հազարապետ» էր Հազկերտ Բ-ի ժամանակ: Եղիշեն նրան անվանում է «մեծ հազարապետ Արեաց և Անարեաց» և «վզրուկ հրամատար Ծրան և Անեբրան»: «Հազարապետութեան» նրա պաշտոնը Եղիշեն բնորոշում է հետևյալ իր վկայութեան մեջ՝

«Սա էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անունն էր Միհրնեբրսեհ. և չէր ոք ամենեկին, որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել. եւ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսայր» (Վենետիկ, 1864, III, էջ 153):

Եվ իրավի՛ «մեծ հազարապետ»-ը Սասանյան Պարսկաստանի մեծ վեզիրն էր և ամենաբարձր պաշտոնյան. նա վարում էր պետական բոլոր գործերը՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին: Հայ պատմիչները, ըստ երևույթին, գիտակցել են, որ «Հազարապետ»-ի վերոհիշյալ պաշտոնը Հայաստանում տարբեր է «Հազարապետ»-ի կամ «վզրուկ հրամատար»-ի պաշտոնից Պարսկաստանում: Գուցե դրանով հենց բացատրվում է, որ Եղիշեն Միհրնեբրսեհին անվանում է սովորաբար ո՛չ թե «Հազարապետ», այլ «մեծ հազարապետ» (II, 47, VII, 230, VIII, 251 և 345):

Ինձ թվում է, կարելի է վերապահութեամբ նույնիսկ ենթադրել, որ Փավստոսի հիշած «Անձտայ իշխան, Վաղարշը եղել է Տիրանի ժամանակ «մեծ հազարապետ...» ամենայն Հայոց Մեծաց, այդ պաշտոնի հենց վերև մատնանշված իմաստով:

«Հազարապետութեան» և «մեծ հազարապետութեան» վերոհիշյալ տարբերութիւնն արժանի է առանձին ուշադրութեան և կարոտ է հատուկ քննութեան հետագա ուսումնասիրութիւններում:

Մեջ ենք բերում կարևոր այդ «գործակալութեան» վերաբերյալ մատենագրական վկայությունները.

1. Փաւստոս, III, ԺԲ, էջ 29՝

«Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին, զմեծ հազարապետն ի հազարապետութեանն [.]»²⁰ իսկ ի տոհմէ ամենայն Հայոց Մեծաց, զՎաղարշ, որ էր իշխան Անձտայ. և ընդ նմա Զարեհ իշխան, նահապետն մեծի Սոփաց».

2. Կորին Վենետիկ, 1894, էջ 14՝

«Ի մանկութեան տիսն վարժեալ [Մաշթոց] հելլենական դըպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս՝ Հայոց Առաւանայ ուրումն».

3. Նույնը, էջ 44՝

«Ի զինուորական կողմանն, առաջնումն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց»:

4. Նղիշէ, II, էջ 39՝

«Սև եւս շարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետ աշխարհին էր՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհակաւեաց քրիստոնէից. գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն. և միւս եւս մոգպետ դատաւոր աշխարհին».

5. Փարպեցի, III, ԿԶ, էջ 118՝

«Սև եկեալք ի գաւառն Շիրակայ, ի դաշտն, ուր բանակէր մարզպանն Հայոց Ատրվշնասպ Յոզմանդեան, և առ նմին հազարապետն Հայոց Վահվեհնամ».

6. Խորենացի, II, ԾԳ, էջ 183՝

«Վասն որոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա դամենայն գործս տանն արքունի».

7. Խորենացի, II, ԶԲ, էջ 224՝

«Իսկ Տրդատ ի հազարապետութիւն Հայոց զԹոայն կացուցանէ».

8. Խորենացի, III, Կէ, էջ 357՝

²⁰ Կետադրություն ուղղել ենք համաձայն Աղոնցի ցուցման, տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 446:

«Բայց յաղթեաց քաջն Վահան Ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն աշխարհիս Հայոց»:

9. «Կանոնք Շահապիվանի ժողովոյն», հրատ. Ղլտճյանի, էջ 59՝

«Եւ լինէր այս ի ԺԶ ամի Թագաւորութեանն Յազկերտի Պարսից արքայի և Վասակայ Սիւնւոյ մարզպանութիւն Հայոց, Վահանայ Ամատունւոյ հազարապետութիւն և Վրվայ խոռխոռունոյ Մաղխազութիւն»:

Իբրև մեծ «գործակալութիւն» աղբյուրների մեջ հիշատակվում է հաճախ «սպարապետութիւն»-ը, որը կոչվում է նաև «զօրավարութիւն» և «ստրատելատութիւն»:

Զորորդ ու հինգերորդ դարերում «սպարապետութեան» պաշտոնը; ինչպես հայտնի է, վարել են ժառանգաբար Մամիկոնյանները: Փափստոսի վկայությամբ, նրանք ընդհանուր հրամանատարներ էին թի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն բազմութեանն Հայոց Մեծաց» (IV, Բ, էջ 68): Ալիշանի կարծիքը, որ «սպարապետ»-ը գերագույն առաջնորդն էր հետևակ զորքի, իսկ «ասպետ»-ը. հեծելազորքի («Այրարատ», էջ 423), միանգամայն սխալ է և անընդունելի: Աղբյուրների վկայություններից պարզ է, որ պատերազմի ժամանակ Հայաստանի ամբողջ զորքը՝ թե՛ արքունի տան և թե՛ նախարարական իշխանությունների՝ կռվել է «սպարապետ»-ի ընդհանուր հրամանատարության տակ:

«Սպարապետ»-ները, լինելով վերին հրամանատարներ թի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ունեին, բնականաբար, մեծ կշիռ և բարձր հեղինակություն: Իրենց այդ դիրքը և մեծ ուժը Մամիկոնյանները, ինչպես վերև ասացինք, աշխատել են հաճախ օգտագործել ո՛չ թե ի շահ Թագավորական իշխանության զորեղացման և երկրի կենտրոնացման, այլ ավելի ի նպաստ նախարարական իշխանությունների ու նրանց իրավունքների անձեռնմխելիության²¹: Այդ տեսակետից, Մամիկոնյանների քաղաքական դերն Արշակունյաց Թագավորության ժամանակ, ինչպես շատ ուղիղ դիտել է պրոֆ. Մարկվարտը, կարոտ է վերաբնութայն և նոր ու ավելի անաչառ գնահատման:

²¹ Sk.՝ Markwart, Südarmenten und die Tigrisquellen, s. 67 և 156:

Մամիկոնյանների իբրև «սպարապետ»-ների մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Փալստոսը, Փարպեցին և Նղիշեն, որոնք Մամիկոնյանների տոհմային պատմիչներն են և, այլալեզուվ հաճախ պատմական իրողությունը, փառաբանել են նրանց քաջագործությունները և առաքինությունները:

Այդ վկայություններից մենք մեջ ենք բերում միայն մի քանիսը.

1. Փալստոս, III, ԺԱ, էջ 28՝

«Սակայն զՎաչէի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զորդի ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ: Առաջի թագաւորին զհօրն պատին ի գլուխն զնէին, և զսպարապետութեան նորուն տեղի... Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ թագաւորան՝ Արշաւրայ և Անդովկայ սնուցանել զպատանեակն զԱրտաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ, ... և զնորուն գործ քաջութեան սպարապետութեան անուանի զօրավարութեանն յաջորդեսցէն զամենայն աւուրս կենաց իւրոց».

2. Փալստոս, III, Դ, էջ 9՝

«Ապա մեծ ցասամբք և բազում սրտմտութեամբ արձակեաց թագաւորն [Խոսրով] ի վերայ նոցա զՎաչէ որդի Արտաւազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան».

3. Նույնը, III, Ը, 20՝

«Բայց վստահ լինէր [Խոսրով] ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց Մեծաց, և ի քաջ Վահան յԱմատունի: Գումարէր զօրսն ամենայն տանցն աւազանոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա».

4. Նույնը, IV, Բ, էջ 68՝

«Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարտի կոռելոյ... ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ, ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն բազմութեանն Հայոց Մեծաց».

5. Նույնը, V, Լէ, էջ 247՝

«Իսկ յորժամ եհաս եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ, նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զօրավարութեանն զսպարապետութիւնն, զի այն

ինչ որ իւրոց նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր իւրում դայեկին Բատայ՝ զայն Մանդէլ յինքն հանեալ ունէր զիշխանութիւնն».

6. Ագաթանգեղոս, ՃԻԳ, էջ 451՝

«Եւ որք առաքեցանն յարքայէ զնոցանէն, զի ածծեն զնոսա՝ այսոքիկ են. առաջնոյն անուն Արտաւազդ, որ սպարապետն էր ամենայն զօրացն Հայոց Մեծաց».

7. Խորենացի, III, ՄԱ, էջ 323՝

«Արդ՝ Արտաշիւր ոչ ժամանեալ ի կարճութենէ աւուրցն ա՛յլ առնել աշխարհագիր՝ յայնմ որ յառաջնոցն փոխեաց, իւր անուամբն հրամայեաց գրել զայն ամենայն, և տալ գահու և պատուոյ, հանդերձ իշխանութեամբ գիւղից և դաստակերտաց Համազասպայ, և որում ցանկայրն՝ զսպարապետութիւնն Հայոց»:

Փալստոսի պատմության մեջ մի անգամ միայն հիշվում է նաև «գործակալութիւն մեծի դատաւորութեանն» հետեյալ հատվածում՝

«Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր սբանչելի՝ Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր եկեղեցեաց²² նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակալն իշխանութեանն՝ կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն՝ ունէր զիշխանութիւնն զայն առանձինն. ալ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս» (III, ԺԴ, էջ 36)։

Այս հատվածից երևում է, որ «մեծի դատաւորութեանն» «գործակալութիւն»-ը հանձնված է եղել հոգևորական բարձր իշխանութեան, Ադոնցի կարծիքով, նախաքրիստոնեական Հայաստանում դատական իշխանությունը գտնվել է հեթանոս հոգևորականության՝ քուրմերի ձեռին, իսկ քրիստոնեությունն ընդունելուց հետո այդ իշխանությունն անցել է եկեղեցուն և հանձնվել է ամեն մի շրջանում համապատասխան եպիսկոպոսին («Армения в эпоху Юстиниана», стр. 447)։

Պետք է սակայն, ի նկատի ունենալ, որ դատական մի շարք հատուկ գործեր, ինչպես դժվար չէ կռահել աղբյուրների վկայություններից, վերաբերվել են, հավանորեն, թագավորի, իշխանների և նրանց ներկայացուցիչների անմիջական իրավասության։

²² «Եկեղեցեաց» փխ. «Եկեղեցաց», տե՛ս «Կորին և Նորին թարգմանութեանք», էջ 247։

Փափստոսի վերոհիշյալ վկայության մեջ առանձնապես ուշագրավ է այն, որ «մեծի դատաւորութեան» «գործակալութիւնն» անվանված է նաև «Գրիգորի ձեռական իշխանութիւն»։ Արդ՝ եթե «ձեռական» իշխանութիւնը հոմանիշ է «գործակալական» իշխանութեան, ինձ թվում է, կարող ենք հաստատապես պնդել, որ «ձեռական իշխանութեան» վերաբերյալ Փափստոսի մի ուրիշ վկայություն սխալ է մեկնվել և հիմք է ծառայել շփոթ և անընդունելի ենթադրությունների պատմական և հայագիտական թե՛ հին և թե՛ նոր աշխատություններում։

Կարևոր այս մյուս վկայությունը գտնվում է Փափստոսի պատմության հետևյալ հատվածում (IV, ԺԴ, էջ 117)՝

«Ձայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասան գաւառ գայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի ընմէ, առանձին առոշոգի նոցա էր կարգեալ, Եւ յայն գաւառ զլիւսոր գաւառք այս էին, Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Մոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք»։

Հիմնվելով Փափստոսի վկայության վրա՝ ենթադրել են, որ վերոհիշյալ 15 գավառները պատկանել են կաթողիկոսներին իբրև տոհմային սեփականություն (համարե՛ Ինճիճյան, Հնարսոս, Գ, էջ 275—276, Գարագաշյան, Քննական պատմութ., Բ, էջ 7, Մարկվարտ, Südarmenien, s. 63* ևն, ևն.)։ Միանգամայն անփառելի է, իհարկե, որ Գրիգոր լուսավորչի տոհմն ունեցել գյուղեր և կավածներ Հայաստանի զանազան մասերում, սակայն ենթադրել, որ հիշյալ 15 գավառները, այսինքն՝ Արշակունիների գրեթե ամբողջ «ոստան»-ը, կաթողիկոսական տան կավածներ էին՝ այդ, անշուշտ, չափազանցություն է և ակներև խեղաթյուրում Փափստոսի վկայության։ Խնդիրը շատ պարզ է։ Փափստոսի թե՛ առաջին և թե՛ այս երկրորդ վկայության մեջ «ձեռական իշխանութիւն» է անվանված «մեծի դատաւորութեան» «գործակալութիւն»-ը, որը «սեպհական» էր, այսինքն՝ ժառանգական և տոհմային, իբրև կաթողիկոսական տան հանձնված առանձին կամ «առոշոգի» իշխանություն։

«Հնգետասան» գավառները, ուրեմն, արքունի երկրի կամ «ոստան»-ի այն շրջաններն էին, որ տրված էին կաթողիկոսներին իբրև «մեծի դատաւորութեան» «գործակալական» իշխանության շրջաններ։

Կաթողիկոսների դատական իշխանությունը հիշվում է նաև Խորենացու պատմության հետևյալ հատվածում՝

«Վասն որոյ հաւանեալ Վռամայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց զխնդիրս, տուեալ յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի, Շամուէլ անուն, զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ և հակառակաթոռ. և գործ նմա զատուցանէ զընկերել մարգպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց (III, ԿԾ, էջ 350):

Դատաւորութեան հանձնումը Շամուել կաթողիկոսին կարեոր մի ցուցումն է արքունի «գործակալութիւնների» պահպանման Պարսկական Հայաստանում Արշակունյաց թագաւորութեան անկումից հետո:

«Հայաստանի արքունի հարկերը մարգպանութեան շրջանում» մեր նախորդ աշխատութեան մեջ (Երևան, 1926, էջ 4) մենք արդեն մատնացուցց էինք արել, որ 429 թվից հետո մինչև Հազկերտ Բ-ի նոր քաղաքականութիւնը Պարսկական Հայաստանի ներքին վիճակը և նախարարական հին կարգերը մնացել էին գրեթե անփոփոխ: Արշակունյաց թագաւորութեան անկումից հետո, ինչպես վկայում է Նղիշեն՝ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն» (Վենետիկ, 1852, I, էջ 11): Եվ իրող, հայտնի է արդեն, որ հայկական նախարարութիւնները, ինչպես և հոգևորականութիւնը, Արշակունյաց վերջին թագաւորի գահընկեցութիւնից հետո պահպանել էին անաղարտ ու անփոփոխ իրենց իշխանական գրեթե բոլոր իրավունքները: Մամիկոնյանները մնում էին դարձյալ իբրև Պարսկական Հայաստանի սպարապետներ: Վահան Ամատունուն հանձնված է եղել հազարապետութեան գործակալութիւնը, իսկ դատաւարութեան իշխանութիւնը մնացել էր, ինչպես տեսնում ենք, բարձր հոգևորականութեան ձեռքին:

Առաջին անգամ Պարսկական Հայաստանի ինքնավար ներքին կազմակերպութեան մեջ խոշոր փոփոխութիւններ մտցրեց Հազկերտ Բ-ը: Սրա քաղաքականութիւնը, ինչպես այդ պարզ երևում է փաստական մի շարք տվյալներից, ուղղված է եղել ո՛չ միայն քրիստոնեական եկեղեցու, այլև նախարարութիւնների և, ընդհանրապես, ինքնավար հին կարգերի և արտակարգ արտոնութիւնների դեմ: Նղիշեի վկայությամբ, հենց այս Հազկերտ Բ-ի ժամանակ «հազարապետութիւն»-ը հանձնվել է պարսիկ պաշտոնյայի, իսկ դատական իշխանութիւնը՝ մոզպետի:

«Քանզի որ հազարապետ աշխարհին էր,— ասում է Նղիշեն,— իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից. գրգռեաց յարոյց [Դենշապուհ] զամբաստանութիւն

ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին, զի եկեղեցւոյն փառսն աղաւաղեցեն» (II, էջ 39—40):

Կաթողիկոսների դատական նախկին իշխանութիւն վերահաստատումը կարելի է, հավանորեն, ենթադրել Հազկերտ Բ-ի հալածանքներից հետո:

Բացի վերոհիշյալ մեծ «գործակալութիւն»-ներից Արշակունյաց Հայաստանում գոյութիւն են ունեցել, նման միջնադարյան նվրոպային, պալատական զանազան պաշտոններ, որ հանձնված են եղել «սեպուհ»-ներին, «կրտսեր նախարարութիւն»-ներին և կամ մանր ազնվականութեան:

Աղբյուրների մեջ այդ պաշտոններից հիշվում են, օրինակ, «սենեկապետ արքային», «շահախոռապետ», «որսապետ», «տակառապետ», «գինակիր», «կարապետ արքայի» ևն:

Նախարարական Հայաստանին վերաբերյալ կարեւորագոյն ընդհանուր խնդիրները քննվում էին, ինչպես վերև ասվեց, «աշխարհաժողով»-ներում, որոնց սկզբնական ծագումը հավանական է ենթադրել նախկին տոհմային կյանքի հնագոյն շրջանում: Այս ժողովների մասին առանձնապես ուշագրավ են Ագաթանգեղոսի և Փատմոսի հետևյալ վկայութիւնները.

1. Ագաթանգեղոս, ՃԸ, էջ 403՝

«Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն ի միշոյ, ի բաց կորուսանել».

2. Նույնը, ՃԸ, էջ 404՝

«Բնկ անդէն վաղվաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւ, և ամենեցուն հաւանութեամբ, գործ ի ձեռն տայր երանելուն Գրիգորի, զի զյառաջագոյն զհայրենական հնամեացն նախնեացն և զիր կարծեալ աստուածսն շաստուածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միշոյ».

3. Նույնը, ՃԺԱ, էջ 412՝

«Բնկ թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և քերք իւրով հոսրովիդխտով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց: Եւ վաղվաղակի հասանէին ի ժամադիրն յամենայն կողմանց ըստ հրամանին՝ յԱրարատ գաւառն ի վաղարշապատ քաղաք: Քանզի և թագաւորն չու արարեալ անդ հասանէր: Եւ կուտեցան առ հասա-

րակ զօրքն ամենայն, և մեծամեծք և կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք- դատաւորք և զօրագլուխք, և հասնալ կային առաջի թագաւորին».

4. Փաւստոս, III, ԺԷ, էջ 45՝

«Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութեանն ղկաթողիկոսութիւն ունել».

5. Նույնը, III, ԻԱ, էջ 54՝

«Ապա առանել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն».

6. Նույնը, IV, Գ, էջ 68՝

«Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց, տոհմաց տոհմաց, զնդից և դրօշուց տեարք. ամենայն սատրապք նախարարք և ազատք, պետք և իշխանք, զօրավարք և սահմանապահք, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեացեն տեսցեն և խորհեցին վասն իրեանց առաջնորդի, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաշանց Քրիստոսի».

7. Նույնը, IV, ՄԱ, 165՝

«Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նախարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գործակալք և դասապետք շինականաց».

8. Նույնը, V, ԼԳ, էջ 240՝

«Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր Մարդպետ, և ամենայն իշխանքն ասէին. զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցուք ղվրէժ թագաւորին մերո, թե ոչ»:

Տե՛ս նաև Փաւստոս, III, ԺԳ, էջ 35, ԺԴ, էջ 38, ԺԵ, էջ 43:

Վերահիշյալ ժողովների մեծագույն մասը գումարված է եղել կաթողիկոսի ընտրութեան համար: Կաթողիկոսական, իշխանութեանը ենթակա էին, ինչպես հայտնի է, թե արքունի ռոստանի» և թե նախարարական շրջանների եպիսկոպոսները, Հասկանալի է, ուրեմն, որ կաթողիկոսական ընտրությունն ընդհանուր մի խնդիր

էր, որ վերաբերվում էր ո՛չ միայն արքունի երկրին, այլև նախա-
րարական ամբողջ Հայաստանին:

Ավելի քան հավանական է ենթադրել, որ նման ընդհանուր
ժողովները, որոնց մասնակցում էին «նախարար»-ները, «ազատ»-
ները և «գործակալ»-ները, հատկանշային էին և սովորական նա-
խարարական Հայաստանում և, հավանորեն, այդ ժողովներում
քննվում էին Հայաստանի նաև ներքին և արտաքին կյանքի կարե-
վորագույն հարցերը:

Ազաթանգեղոսի վկայությունների մեջ (1 և 2) մատնանշված
է, օրինակ, որ հեթանոսության վերացումը Հայաստանում որոշ-
ված է եղել «ամենեցուն հաւանութեամբ»: Վերև առաջ բերված
հինգերորդ վկայության մեջ ժողովի հավաքման նպատակն էր՝
խնդրել օգնություն Բյուզանդիայից ընդդեմ Սասանյան Պարսկաս-
տանի: Համաձայն վերոհիշյալ յոթերորդ վկայության՝ նախարար-
ները որոշում են «միաբան համօրէն աշխարհօրէն, դադարեցնել
կռիվը Պարսկաստանի դեմ»²³:

Ըստ երևույթին, հենց նույն «աշխարհաժողով»-ներում մշակ-
վել և ընդունվել են պարտադիր ընդհանուր կանոններ նախարարա-
կան ամբողջ Հայաստանի համար: Սրա ապացույց կարող է ծառա-
յել Շահապիվանի 443 թվի²⁴ ժողովը: Այս ժողովի մասին ուշա-
գրավ է Շահապիվանի կանոնադրության նախաբանի հետևյալ
հատվածը՝

«Գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան աւագաց եղեալ
կէտն ի Շահապիվան, ի բանակեալ թագաւորացն Հայոց ի ժամա-
նակ նորաբեր տօնին: Եւ լինէր այս ի 2 ամի»²⁵ թագաւորութեանն
Յազեկերտի Պարսից արքայի և Վասակայ Սիւնւոյ մարզպանութիւն
Հայոց, Վահանայ Ամատունւոյ հազարապետութիւն և Վրվայ հոռ-
խոռունոյ մաղխազութիւն: Եւ ժողովէին եպիսկոպոսք, երիցունք և
սարկաւագունք բազումք և նախանձաւոր պաշտօնեայք և համօրէն
ուխտ սրբոյ եկեղեցւոյ, իշխանք և ամենայն գաւառապետք, գաւա-
ռակալք, պետք և բռնաւորք, զօրագլուխք, հազարաւորք, կուսա-

²³ Ուշագրավ է առանձնապէս, որ թե՛ այս և թե՛ հինգերորդ վկայության մեջ
մատնանշված են բացի բարձր և ստորին ազնվականությունից նաև «ոամիկ շինա-
կան»-ները և «դասապետք շինականաց», որոնք ներկա են եղել այս աշխարհամա-
զովներում:

²⁴ ՏՃ՝ Թ. Ալլալիբեյլյան, Հայ շինականի և զեղչկուհու աշխատավարձը հինգե-
րորդ դարում, «Տեղեկագիր Գիտ. և Արվ. ինստիտուտի», № 3, էջ 57—60:

²⁵ Ուղղել ենք՝ 2. փխ. ԺԶ, հմմտե., Թ. Ալլալիբեյլյան, նույնը, էջ 58:

կալք ազատօք՝ կողմանց կողմանց, աւագ նախարարք աշխարհին Հայոց, որք էին նախանձախնդիր օրինաց են» (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատար. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1914, էջ 59)։

Եթե ի նկատի առնվի, որ Շահապիվանի այս ժողովը տեղի էր ունեցել Արշակունյաց թագավորության անկումից 14 տարի հետո, կարելի է ըստ իս վստահորեն ենթադրել, որ կանոնադիր այս «աշխարհաժողով»-ը չէր կարող լինել մի նորամուծություն. նման ժողովներ սովորական են եղել, հավանորեն, նաև Արշակունյաց ժամանակ։

Նախարարների «գործակալական» պաշտոնների մասին արքունիքում, նրանց մասնակցության մասին «աշխարհաժողով»-ներում՝ աղբյուրների հաղորդած տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, շատ չեն և իրենց բովանդակությամբ էլ հաճախ անորոշ են։

Ավելի մանրամասն ու ընդարձակ են աղբյուրների վկայությունները հատուկ պարգևների և արտաքին զարդարանքների մասին, որ նախարարները և «գործակալ»-ները ստացել էին թագավորներից։ Այդ պարգևները և զարդարանքները, որ հիշատակված են Ինճիճյանի Հնախոսության մեջ (Բ, էջ 284—287), անվանվում էին «պատիւ» (=honor)։ Բացի այդ՝ ամեն մի պաշտոն ևս կոչվում էր «գործ», «գործակալություն» և կամ «պատիւ»։ «Պատիւ» են անվանվել նմանապես թագավորական և նահապետական բարձրագույն իշխանությունները։

«Պատիւ» բառի այդ տարրեր նշանակությունները պարզ երեւում են հետևյալ վկայություններից.

1. Նղիշէ, Վենետիկ, 1864, VII, էջ 240—241՝

«Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջի կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն, կապէր և զպատուավորսն, և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուտ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն և զամենայն օրէնս պատուօյն գանձամբ արկեալ՝ երթալը յարքունիս».

2. Փաւստոս, III, ԺԸ, էջ 47՝

«Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն».

3. Փարպեցի, II, ԽԲ, էջ 76՝

«Կարծեցեալ առնել մեծապէս սպաս թագաւորին Յազկերտի և

ամենայն աշխարհին Արեաց, և առնուլ զպատիւ թագաւորութեան և զպարգևս».

4. Փաւստոս, V, 1է, էջ 246՝

«Քանզի նա էր երէց յազգին, և Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տաճուաւորութեան պատուին».

5. Փարպեցի, II, ԽԲ, էջ 77՝

«Եւ յառաջեալ սակաւ մի նենգաւորին Վասակայ ի նոցանէ՝ ձայն զկնի եղեալ սրբոյն Ղևոնդի՝ կոչէր զնա պատուոյն անուամբ մեծաձայն. «Սիւնեաց տէր, Սիւնեաց տէր»:

Խոսելով «բգեշխութիւն»-ների և «նախարարութիւն»-ների պարտականութիւնների մասին արքունիքի հանդեպ, վերև մենք քննութեան չէինք առել կարևոր մի խնդիր՝ թե արդյոք նրանք հարկ տալիս էին Արշակունիներին թե ո՛չ:

Գիտական մի շարք աշխատութիւններում ենթադրվել է, որ նախարարութիւնները պարտավոր էին վճարել որոշ տուրքեր Արշակունի թագավորներին²⁶, Մեծ մասամբ, այդ ենթադրութիւնն արվում է առանց փաստական որևէ հիմնավորման: Ինճիճյանը միայն իբրև ապացույց այդ եղրակացութեան մատնանիշ է անում, որ ըստ Թովմա Արծրունու վկայութեան Հայաստանի բոլոր շրջանները, անգամ Աղվանքը և Վրաստանը, հարկ էին վճարում Սմբատ Ա. Բագրատունուն: Պարզ է, որ այս վկայութեամբ չի կարելի հիմնավորել և հաստատել նախարարութիւնների հարկատուութեան հարցը Արշակունյաց ժամանակ:

Կարևոր այդ խնդրի մասին, որքան ինձ հայտնի է, հնագույն հայ պատմիչների մոտ չկան պարզ ու բացահայտ տեղեկութիւններ: Փաւստոսի պատմութեան մեջ կան սակայն անուղղակի ակնարկներ, որոնք կարող են կռկան լինել ենթադրական կռահումների: Փաւստոսի այդ ակնարկները գտնվում են նրա պատմութեան հետևյալ հատվածներում.

1. Փաւստոս, V, Ը, 213՝

«Նախ հարկանէր [Մուշեղ] զտուն թագաւորին Հայոց, որ յԱտրպայականին էր. զամենայն երկիրն գաւառացն Ատրպատնացն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն ի նոցանէ. և

²⁶ Տե՛ս Ինճիճյան. Հնախոս, Բ, էջ 88, Գաւազաշյան, Քննական պատմութիւն, II, էջ 7, Խ. Սամվելյան, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն, Վիեննա, 1911, էջ 58, 2. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 13, Կոստանյանց, Հյուսիս, III, էջ 28:

զմնացորդան նուաճէր և ի հարկի կացուցանէր, և առնոյր զբազումս պանդանդա ի նոցանէն»:

2. Նույնը, V, Թ, էջ 214՝

«Հարկանէր Մուշեղ զապստամբս Նոշիրական աշխարհին, որ ապստամբեցին յարքայէն Հայոց. առնոյր աւերէր գերէր, և ի մնացորդացն առնոյր պանդանդս, և զբնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր»:

3. Նույնը, V, Ժ, էջ 214՝

«Հարկանէր Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր հարկ մնացորդացն, և առնոյր պանդանդս»:

4. Նույնը, V, ԺԱ, էջ 214՝

«Եւ զԿողմանսն Մարաց, քանդի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս, և գերէր զբազումս ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս, և առնոյր պանդանդս»:

5. Նույնը, V, ԺԲ, էջ 214՝

«Հարկանէր զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս ի նոցանէն. և զմնացորդացն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»:

6. Նույնը, V, ԺԳ, էջ 215՝

«Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին»:

7. Նույնը, V, ԺԴ, էջ 215՝

«Հասեալ յերկիրն Պարսից և ի Փայտակարան քաղաք], զբազումս ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զօրավարն Մուշեղ. զբազումս ի նոցանէ գերէր, և զմնացորդսն ի հարկի կացուցանէր. և առնոյր պանդանդս ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս թողոյր»:

8. Նույնը, V, ԺԵ, էջ 216՝

«Սոյն օրինակ և որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, և ի Թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեանս գլխատէր. և Թափէր զամենայն գաւառն [Վրաց], և առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»:

9. Նույնը, V, ԺԶ, էջ 216՝

«Զերբաւալ արարեալ զրդեաշխն Աղձնեաց, առ նմին կոտորեցին զկանայս, և զորդիս նոցա և ի գերութիւն վարեցին. և զմնա-

ցեալսն ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց թողուին».

10. Նույնը, V, Ժէ, էջ 217՝

«Հարկանէր ղերկիրն գաւառին Մուշեղ Մեծի Մոփաց, և զազգսն հանէր ընդ սուր. և առնոյր պանդանդս, և զազգն ի հարկի կացուցանէր».

11. Նույնը, V, ԺԸ, էջ 217՝

«Հարկանէր և յԱնգեղ տունն զբազումս, և հանէր ընդ սուր Բայց աշխարհն, զի ոստան արփունի լեալ էր վաղ վաղ, բնակիչ՝ գաւառին եւ ինքեանք կային ի հարկի ծառայութեան».

12. Նույնը, V, ԺԹ, էջ 217՝

«Հանէր ընդ սուր զտեարս գաւառին [Անձտայ]. առնոյր պանդանդս, և նուաճէր. ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեւեան առ հասարակ կացուցանէր».

Այս հատվածներում Փափստոսը նկարագրում է Հայաստանի ապստամբ ժայրագավառների նվաճումը Պապ թագավորի ժամանակ, որ պատմական տեսակետից կարող է թերևս վիճելի համարվել: Մեզ համար կարևոր է սակայն և հետաքրքիր «ի հարկի ծառայութիւն»-ը, որ վերագրվում է նվաճված երկրներին: Բոլոր գրեթե վկայություններում սահմանազուլիս իշխանությունների մասին կրկնվում է, ինչպես տեսնում ենք, հետևյալ դարձվածքը՝ «ի հարկի ծառայութեան թագաւորին Պապայ զամենեւեան առ հասարակ կացուցանէր» (վկ. 12), «ի հարկի ծառայութեան կացուցանէր» (վկ. 2), «ի հարկի կացուցանէր» (վկ. 1, 5, 6, 7, 8, 9, 10) և «դնէր հարկ մնացորդացն» (վկ. 3 և 4):

Նիկ. Ադոնցի ենթադրությամբ՝ «ի հարկի կացուցանել» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանել» նշանակում են այստեղ ո՛չ թե հարկ դնել, այլ հնազանդեցնել (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 480): Այս ենթադրությունը, ինչպես ցույց ենք տվել նախորդ մեր աշխատություններից մեկում («Երեսնամյա շրջանում», Երևան, 1925, էջ 29), ճիշտ չէ: Վերև երրորդ և չորրորդ վկայություններում՝ «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» դարձվածքների փոխարեն որոշ ասված է՝ «դնէր հարկ մնացորդացն»: Այս պարզ համեմատությունից երևում է, որ նվաճված բոլոր շրջանները հարկ էին վճարելու Պապ թագավորին:

Կարելի՞ է արդյոք Փափստոսի այս տեղեկությունից հետևեց-

նեւ, որ վերե հիշված բոլոր սահմանային մեծ իշխանություններն ապստամբվելուց առաջ ևս պարտավոր են եղել հարկ տալ Արշակունի թագավորներին:

Առաջին հայացքից կարող է հավանական թվալ, որ Մուշեղ Մամիկոնյանը, վերստին նվաճելով ապստամբած և անջատված ժայրագավառները, վերականգնում էր այնտեղ քաղաքական նախկին կացութիւնը, այսինքն՝ նրանց հպատակութիւնը թագավորական իշխանության, նաև նրանց առաջվա հարկատու վիճակն Արշակունիների հանդեպ:

Այս ենթադրութիւնը, որ թվում է հնարավոր և հավանական, իմ կարծիքով, խիստ վիճելի է և անընդունելի: Փալստոսի վկայութիւնների ուշադիր և մանրախույզ քննութիւնը ցույց է տալիս, որ վերոհիշյալ ժայրագավառները հարկ էին տալու Պապ թագավորին իբրև նվաճված երկրներ: 7-րդ և 12-րդ վկայութիւններում պարզ ասված է, օրինակ, որ Կասպից երկրում ու Անձիտում նշանակված են եղել վերակացունքներ և ոստիկաններ:

Որ այդ ժայրագավառները՝ որպես ինքնուրույն իշխանութիւններ՝ հարկ չէին վճարում Արշակունիներին՝ այդ մասին մի ակնարկ կա ըստ իս վերև մատնանշված 11-րդ վկայության մեջ: Խոսելով Անգեղտուն գավառի նվաճման մասին, Փալստոսն առանձնապես շեշտում է, որ «աշխարհն, զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»: Ուրեմն՝ այս գավառի դրութիւնը տարբերվել է մյուս ժայրագավառների դրութիւնից. նրան «ի հարկի ծառայութեան կացուցանել»-ը չէր փոփոխում նրա հարկային հին վիճակը, որովհետև նա արքունի «ոստան» էր և նրա բնակիչներն ապստամբութիւնից առաջ էլ սկային ի հարկի ծառայութեան:

Ինչպես տեսնում ենք, այս վերջին վկայութիւնից կարելի է կռահել, որ Արշակունիները հարկ էին ստանում արքունի «ոստան»-ից, բայց ո՛չ այն ժայրագավառներից, որ վերև հիշված են:

Բղեշխութիւնների և մեծ նախարարութիւնների հարկատվության այս խնդիրը լուսաբանելիս՝ հարկավոր է ի նկատի ունենալ նաև մի ուրիշ ուշագրավ ցուցում: Բյուզանդական աղբյուրներից հայտնի է, որ Հայաստանի նախկին նախարարութիւնները՝ Մեծ Մոփքը, Փոքր Մոփքը, Անձիտը, Հաշտյանքը, Անգեղտունը և Բալահովիտը՝ որոնք միացվելով կայսրության պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնութիւնը և հին իրավունքները, բյուզանդական կայսրներին հարկ չէին վճարում, այլ տալիս էին իբրև կամավոր

նվեր, ինչպես երևում է 387 թվի կայսերական դեկրետից (Cod. Theod., XII, 13,6), aurum coronarium՝ «պսակի ոսկի»²⁷:

Ինձ թվում է, հռոմեական այդ սատրապությունների հարկատվությունից ազատ լինելը կարող է մի նշան համարվել, որ բղձիկությունները և մեծ նախարարությունները նաև Արշակունյաց թագավորության ժամանակ ազատ են եղել «ի հարկի ծառայություն»-ից: Հնարավոր է սակայն, որ դրամական որոշ նվերներ (= «պատարագ», համտե հորենացի, II, Բ, էջ 103) տալու սովորությունը գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում, բայց այդ մասին մատենագրական աղբյուրների մեջ, դժբախտաբար, չկա և ո՛չ մի տեղեկություն:

5. «ԱԶԱՏ»-ՆԵՐԸ ԵՎ «ՈՍՏԱՆԻԿ»-ՆԵՐԸ

Ինչպես վերև տեսանք, նախարարական կազմակերպությունը հիմնված էր Հին Հայաստանում կալվածատիրության վրա: Նախարարական տոհմերը ո՛չ միայն խոշոր կալվածատերերն էին Հին Հայաստանի, այլև, լինելով տեր ընդարձակ երկրների, ունեին այդ երկրներում քաղաքական իշխանության իրավունքներ:

Աղբյուրների վկայություններից դժվար չէ նաև հետևել, որ բացի ազնվական այս բարձր խավից գոյություն է ունեցել Հայաստանում մի մեծ շերտ կալվածատեր մանր ազնվականության, որ անվանվում էր «ազատ» և «ոստանիկ»:

Ուշագրավ է, որ «ազատ» բառը ևս, ինչպես և «նախարար» ու «նահապետ», պարթևական տերմին է և փոխառություն է հայերենում պարթևերենից (= պհլ. āzāt, պրսկ. «āzād»):

Սոցիալական այս տերմինի իմաստի մասին հայագիտական աշխատություններում հայտնված են երեք տարբեր կարծիքներ:

1. Ինձիճյանի լուսաբանությամբ՝ «ազատ» կոչվել են նախարարները և նախարարությունները: «Եւ սակս այսոցիկ իշխանութեանց համարիմ ազատ կոչեցեալ ղնախարարս,—ասում է Ինձիճյանը,— զի թագաւորն շուներ ի վերայ նոցա զայն իշխանութիւն՝ զոր ունէր ի վերայ ժողովրդեան, ոչ խառնէր ի կառավարութիւն երկրի և բնակչաց նախարարաց» (տե՛ս Հնախօսութ. II, էջ 77 և 88): Խ. Սամվելյանը ևս «ազատ» և «նախարար» համարում է

²⁷ Տե՛ս Կ. Գյուտեբրեգ, Հռոմեական Հայաստան և հռոմեական սատրապությունները, Թարգմ. Մ. Նորշուանի, Վիեննա, 1914, էջ 53—55, նաև «Армения в эпоху Юстиниана», стр. 113—115.

նույնանիշ: «Հին Հայաստանում,— ասում է նա,— հասարակությունը բաժանված էր երկու դասակարգի՝ ազատ ու շինական: Առաջինը բաղկացած էր ղանազան նախարարական ու իշխանական տների ներկայացուցիչներից, որոնք հենված լինելով ավատական կազմի վրա կազմում էին մի զինվորական-ազնվական կաստա, օժտված տոհմային սեփականատիրական իրավունքներով» («Մխիթար Գօշի Դատաստանագիրքն», Վիեննա, 1911, էջ 60—61):

2. Նիկ. Ադոնցը հնարավոր է գտնում, որ «ազատ» անվանվել են, հավանորեն, նախարարների որդիները, ուստի «ազատ» և «սեպուհ» կարող են, նրա կարծիքով, ունեցած լինել միևնույն նշանակությունը) «Армения в эпоху Юстиниана», стр. 451 և 452).

3. Հմինի ու Կարստի ենթադրությունը՝ «ազատ» է կոչվել ստորին ազնվականությունը (տե՛ս «История Армении Монсея Хоренского», М., 1893, стр. 303 և Sempadscher Kodex, II, Strasbourg, 1905, s. 95): Զավախովը ևս «ազատ»-ներին համարում է առանձին դաս, որ դասվելու է նախարարներից ցած և ռամիկներից բարձր («Государственный строй», стр. 132 և 133):

Վերոհիշյալ բացատրությունները, ինչպես տեսնում ենք, խիստ հակասական են և իրար հետ անհաշտելի:

Միայն պետք է համարել, անշուշտ, Ինճիճյանի լուսաբանությունը, որ իբր թե նախարարներն «ազատ» են անվանվել, որովհետև թագավորը չի ունեցել իշխանություն նրանց երկրների ու բնակչության վրա: Անընդունելի է նույնպես և Ադոնցի կռահումը, թե «ազատ» և «սեպուհ» հոմանիշ տերմիններ են և իբր թե «ազատ» են կոչվել նախարարների որդիները:

Այս վերջին բացատրությունը, որ հիմնավորված չէ պատմական փաստացի տվյալներով, կարելի է անտես առնել, որովհետև «ազատ» տերմինի այդ օտարոտի լուսաբանությունը չի հաստատվում աղբյուրների վկայությունների ուշադիր քննությամբ:

Վերոհիշյալ ենթադրություններից հավաստի են, իմ կարծիքով, և ուղիղ էմինի, Կարստի և Զավախովի կարծիքները: «Ազատ»-ները Հայաստանում, իրոք, ստորին ազնվականներն էին, որոնք աղբյուրների մեջ հիշատակվում են գրեթե միշտ նախարարներից հետո և ռամիկներից առաջ: Հայտնի է արդեն, որ Սասանյան Պարսկաստանում ևս âzât անվանվել են, ինչպես մատնացույց է արել Christensen-ը իր L'empire des Sassanides աշխատության մեջ

(Kobenhavn, 1907, p. 44), մանր ազնվականները, որոնք բա-
վական մեծ թիվ էին կազմում և ցրված էին ամբողջ երկրում:

Որ «ազատ»-ները և «նախարար»-ները Հայաստանի ազնվա-
կանության տարբեր շերտերն էին, այդ երևում է մի շարք վկա-
յություններից, որոնց մեջ նրանք հիշվում են «նախարար»-ներից
հետո՝ իրրե բնակչության ինքնուրույն ու առանձին մի խմբակ-
ցություն:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել մի քանի համապատասխան
վկայություններ.

1. Փաւստոս, IV, ԺԵ, էջ 120՝

«Եւ քսիս ստութեան զԳնեւոյն նենգութեամբ առ թագաւորն
Արշակ մատուցանէր [Տիրիթ]՝ թէ Գնեւ թագաւորել կամի, և դքեզ
սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք եւ ազաւաք սիրեն
զԳնեւ, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նո-
րա ի վերայ իւրեանց առաւել քան զքո».

2. Ագաթանգեղոս, ԸԺԱ, էջ 412 (Տփղիս, 1909)՝

«Եւ կուտեցան առ հասարակ զօրքն ամենայն, և մեծամեծք
և կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրա-
վարք, պետք և իշխանք, նախարարք եւ ազաւաք, դատաւորք և զօ-
րագլուխք, և հասնալ կային առաջին թագաւորին».

3. Ղազար Փարպեցի, Ա, էջ 2 (Տփղիս, 1904)՝

«Եւ ոմանց յընկերակցաց նախարարացն եւ յայլ ազաւ մարդ-
կանէ՝ դառնալ յետս յուխտէ սրբութեանն և անշէջ յաւիտենից հրոյն
լինել լուցկիք, պատրաստելոյն սատանայի և նորին արբանե-
կացն».

4. Նույնը, I, է, էջ 10՝

«Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երազազիւքն և գահո-
ղովքն, ելեալ ի յորս գունդք նախարարացն որդտվին ազատացն».

5. Նույնը, III, ՀԱ, էջ 128՝

«Եւ առեալ ընդ իւր [Վահան] զնախարարսն եւ զազաւս եւ
զայլ ամենայն ռամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի
գործ պատերազմին, և շուեալք ի Դունայ զօրքն Հայոց՝ ըստ աւուրս
օթեանացն երթեալ հասանէին ի գաւառն յԱրտազ».

6. Նդիշէ, VIII, էջ 343 (Վենետիկ, 1852)՝

«Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն եւ են
որ ի կրօնագումիցն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նա-
խարարագումք... եւ բազում եւս այլ ազաւ մարդիկ, են որ յար-

քունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն»:

«Ազատ» անվան սովորական նշանակութիւնը՝ իբրև մանր ազնվական՝ միանգամայն պարզ է ու անվիճելի:

Սակայն ուշագրավ է, որ *Խորենացու պատմութիւն* մեջ «նախարար»-ների սոցիալական դրութիւնը բնորոշված է իբրև «ազատութիւն»²⁸, իսկ Փալստոսի և Փարպեցու մոտ «նախարար»-ներն անվանվում են «ազատորեար» կամ «ազատանի»:

Ուրեմն՝ *Ինճիճ-յանի վերոհիշյալ ենթադրութիւնը* ևս անհիմն չէ: Հստ երևութիւն, «ազատ» անունն ունեցել է բացի սովորական իր նշանակութիւնից նաև ավելի լայն իմաստ, և, մասնավորապես, «ազատորեար» ու «ազատանի» տերմինները գործ են ածվել «նախարար»-ների նկատմամբ, ինչպես այդ պարզ երևում է մատենագրական հետևյալ վկայութիւններից.

1. Մովսէս Խորենացի, III, Ի, էջ 280 (Տիգղիս, 1913)՝

«Եւ զերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհակաւն ազատութեանն առնէին. և միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն».

2. Փալստոս, III, Ի, էջ 52 (Վենետիկ, 1885)՝

«Եւ ալլ մեծամեծք նախարարացն և աւագ տանուտէրք ազատանին, սոյնպէս և զօրքն արքունի յիրաքանչիւր տունս յիրաքանչիւր կայեանս յիրաքանչիւր դադարս դադարեալ էին».

3. Փարպեցի, II, ԻԶ, էջ 49՝

«Եւ լուեալ զայս ամենայն բանս, պատուոյ և խոստմանց և մահու սպառնալեաց, ի թագաւորէն Պարսից Յազկերտէ երեցունց աշխարհաց ազատանայն՝ լոնցին առ վայր մի այլքն, բայց յառաջ կացեալ աներկիւղ և քաջասիրտ մտօք Վարդանայ Մամիկոնէից տեառն և Հայոց սպարապետի՝ պատասխանի ետ թագաւորին Յազկերտի առաջի ամենայն բազմութեանն և ասէ, եթէ «Բազումք են յայս երից աշխարհաց յազատորեար, որք են աւագ քան զիս և գահու և աւուրքք, և շատ են, որ ի խոնարհ են».

4. Նույնը, II, ՄԾ, էջ 97.

²⁸ Ուշադրութիւն արժանի է, որ *Խորենացու մոտ* այդ ազատութիւնն անվանված է «սեպհական ազատութիւն»։ Էմիլը «սեպհական ազատութիւն»-ը թարգմանել է «родовое дворянство», իսկ *Խորեն Ստեփաննէ՝* «հայրենական ազնուականութիւն»։ Ինճ թվում է ավելի ուղիղ կլիներ թարգմանել «сепухское азиатство» և «սեպուհական ազատութիւն»։

«Թէ հաւանին արեգական և կրակի երկիր պազանիլ և զմեր օրէնս յանձն առնուն պաշտել՝ նոցա զմահապարտութիւնն թողում, և զազատութեամբսն զոր կապեալ է՝ արձակեմ ի Հայս, և զհւրաբանչիւր ուրուք զտանուտէրութիւն տամ և զգահ և զպատիւ»:

«Ազատ» տերմինի իմաստը որոշելուց հետո՝ անհրաժեշտ է այժմ քննութեան առնել և լուսաբանել նաև «ոստանիկ» անվան նշանակութիւնը:

«Ոստան» և «ոստանիկ» բառերի նշանակութիւնը, ինչպես մենք ցույց ենք տվել նախորդ մեր աշխատութիւններէց մեկում («Դիտողութիւններ Հին Հայաստանի շինականների դրութեան մասին մարդկանութեան շրջանում», Պետ. Համալսարանի Տեղեկագիր, № 1, Երևան, 1925, էջ 7—13), սխալ է հասկացվել թե՛ մատենադրական հին աղբյուրներում և թե՛ բանասիրական ու պատմական նորագույն երկերում:

Ինչպես հայտնի է, «ոստանիկ» դասի ժազումն առաջին անգամ փորձել էր լուսաբանել Մովսես Խորենացին իր պատմութեան հետևյալ երկու հատվածում.

1. Մովսես Խորենացի, II, է, էջ 111—112 (Տիգլիս, 1913)՝

«Եւ դունդս և պահապանս զրան արքունի կարգէ [վաղարշակ] զշորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի ճին ի զարմից քազաւորացն՝ որք ի մերոյ նախնայն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս: Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ դիտեմ թէ վասն սպառնիլ՝ յազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի: Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ սէփէժուլն կոչի»:

2. Նույնը, I, և, էջ 82—83՝

«Պատմի և այս, թէ զկնի յայսպիսի իրաց կատարման՝ յուշարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս՝ յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր քազաւորակն զարմս»:

Խորենացին, ինչպես երևում է այս հատվածներից, «ոստանիկ»-ների դասը համարել է «թագաւորական զարմ», որ ծագել

է Հայկ նահապետի ու Տիգրանի քրոջ Տիգրանուհու սերունդներին:
 2. Ղ. Ինճիճյանը, հետեւելով հորենացուն, «ոստանիկ»-ներին համարում է նույնպես «ի հին զարմից թագաւորացն որ ի Հայկայ» և «ի զարմից Տիգրանուհուն», սակայն ենթադրում է իր կողմից, որ «ոստանիկ» կոչվել են «նաև այլ թագաւորազունք Արշակունեաց, սերեալք յարքայորդոց», որոնց հատկացված են եղել ընտանեկան համար Հաշտյանք, Աղիովիտ և Առեբրանի դավառները (տե՛ս Հնախօս. II, էջ 132—133 և 160—162):

Նիկ. Աղոնցը ևս, այս խնդրում, ընդհանուր առմամբ, համամիտ է հորենացու հետ: Նա ևս ընդունում է, որ «ոստանիկ»-ները թագավորական սերունդ են, սակայն ծագել են ո՛չ թե հին թագավորներից, այլ Արշակունիներից: Նրա կարծիքով, «ոստանիկ» իր նշանակութամբ համապատասխանում է «արքունի» բառին: «Ոստանիկ»-ների կապը թագավորական ընտանիքի հետ նույնը եղած պիտի լինի, ինչ որ «սեպուհ»-ների կապը նախարարական ընտանիքների հանդեպ: «Ոստանիկ»-ները, ուրեմն, նրա ենթադրութամբ, թագավորական տոհմի «սեպուհ»-ներն են: Բացի այդ, հետագայում «ոստանիկ»-ներ են համարվել նաև նրանք, որոնք իրենց հատուկ ծառայութունների համար ստացել էին Այրարատում, իբրև պարգև, որոշ կալվածներ կա՛մ Արշակունիներից, կա՛մ հետո՝ Սասանյան Պարսկաստանից: Արշակունյաց թագավորութւյան անկումից հետո «ոստանիկ» դասի մեջ են ներմուծվել նաև Արշակունյաց արքունիքում ծառայող ազատ մարդիկ:

Հիմնական կետում, ինչպես տեսնում ենք, Նիկ. Աղոնցը հորենացու լուսաբանութունը համարում է ճիշտ ու միայն իր կողմից անում է որոշ լրացումներ և ուղղումներ: —

Նիկ. Աղոնցը «ոստան»-ի նշանակութունը ենթադրում է «շէմք, արքունիք» (=ռուս. двор), ուստի և «ոստանիկ» բառը լեզվական իր նշանակութամբ նա համապատասխան է համարում ռուսական дворовый, дворянин բառերին²⁹ (Армения в эпоху Юстиниана, էջ 463 և 476—479):

²⁹ Ռուսական двор-ին և սեյյորական curtis dominicalis-ին համապատասխանում է հայերենում ո՛չ թե «ոստան»-ը, այլ «դուն» տերմինը: Տե՛ս Փարզ. II, 1, էջ 57՝ «այլ հանգեծ հաւանելովք ընդ ինքեանս զրամբ և ընտանեօք դէմ հոգեալ անցանել ի կողմանս իշխանութեանն յունաց ճեպէին, Փարզ, II, ԽԲ, էջ 75՝ «զղրան երէցն իշխանին Արծրունեաց ներշապհոյ՝ զտէր Մուշէս, Կան. Վաշակ. ԺԱ՝ «Եւ այնորիկ, որ կոծ դենն, զտանուտէրն եւ զկուսանս կապեցսն եւ ի զուն արքունի տարցն եւ պատուհաս ի վերայ դիցեն» («Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտեյանի, Թիֆլիս, 1914, էջ 195):

Սակայն ուղիղ է և համոզիչ, ինչպես վերև ևս ասացինք, ո՛չ թե այս բացատրությունը, այլ Հյուբշմանի ստուգարանական մեկնությունը, որը նա տվել է իր Armenische Grammatik աշխատության մեջ (Leipzig, 1895, s. 215): Հստ Հյուբշմանի «ոստան»-ը համապատասխանում է պհլ. ōstān բառին (պրս. ōstān-dār «Provinzialstatthalter») և նշանակում «արքունիքին պատկանող երկիր կամ քաղաք»: Ընդունելով «ոստան»-ի նշանակությունն իբրև «արքունի երկիր», Հյուբշմանը «ոստանիկ» բառը թարգմանել է «die daher stammenden Adligen oder Truppen», այսինքն՝ «արքունի լեկրից ժագող ազնվականներ կամ զորագունդեր»:

Հետաքրքիր են ու ուշագրավ «ոստանիկ»-ի իմաստը որոշելու համար Նդիշի ու Փարպեցու հետևյալ վկայությունները.

1. Նդիշ, Վասն պատերազմին Վարդանանց, I, էջ 18՝

«Գունդ կազմէր [Յազկերտ Բ.] ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի, և յարժունի տանէ զոստանիկ մարդիկ».

2. Նույնը, IV, էջ 160՝

«Բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկսն անուանեն յարժունի տանէ».

3. Ղազար Փարպեցի, II, ԼԶ, էջ 67՝

«Եւ որք խոտորեցան զկնի սատանայի ընդ ուխտանենգին Վասակայ՝ են այսորիկ. իշխանն Բագրատունյաց՝ Տիրոց, իշխանն Խորխոռունեաց՝ Գաղիշոյ, իշխանն Ապահունեաց՝ Մանէճ, իշխանն Վահուկեաց՝ Գիւտ, իշխանն Պալունեաց՝ Վարազշապուհն, իշխանն Աբեղենից՝ Արտէն, իշխանն Ուրծայ՝ Ներսէճ, և այլք յոստանկաց և սեպուհք ոմանք յիրաքանչիւր տոհմէ».

4. Նույնը, II, ԽԱ, էջ 73՝

«Քանզի բազմութիւն փախստէիցն Հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ոսմիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ».

5. Նույնը, III, ՂԳ, էջ 170՝

«Յաղագս իւրաքանչիւր ուրուք խնդրոյ և օգտի, որ այժմ աստ են առաջի ձեր նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ և յայրուծիոյ որերոյ՝ ճանաչող էք և կարող, և գիտէք հատուցանել զարժանն».

6. Նդիշ, III, էջ 126 (Վենետիկ, 1864)՝

«Թէպէտ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ յարտաքուստ օգնական զորք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և

սուրբ վարդապետաց մխիթարութեամբ համագունդ ամենայն զօրօք նախարարացն յիրաքանչիւր տանէ ի մի վայր զային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուծի, որ յարքունի տանէ անտի էր».

Տե՛ս նաև Փարպեցի II, ԼԲ, էջ 61. III, ՀԱ, էջ 129. III, ՂԹ, էջ 178:

Այս վկայութիւնների մեջ ամենից կարևորը երկրորդն է, որի մեջ պարզ ասված է, որ «ոստանիկ» են անվանվել «ազատ մարդիկ յարքունի տանէ»: Ուշագրավ է և այն, որ «ոստանիկ»-ների «յարքունի տանէ» զորագունդը հակադրվում է առաջին և վեցերորդ վկայութիւնների մեջ մյուս զորքին, որ անվանված է «գունդ ի Հայոց Մեծաց ազատ և ազատորդի» կամ «զօրք նախարարացն յիրաքանչիւր տանէ»:

Շատ պարզ է, որ «արքունի տուն» չի նշանակում այստեղ արքայական ընտանիք, այլ գործ է ածված արքունի երկրի համար, որը եղել է ո՛չ թե նախարարական սեփականութիւն, այլ թագավորական:

«Ոստանիկ»-ները, ինչպես տեսնում ենք, Փարպեցու և Եղիշեի մոտ հակադրվում են նաև «սեպուհ»-ներին, որոնք ծագում էին նախարարական տոհմերից:

Այս վերջին փաստը, որ «ոստանիկ»-ների դասը չի ծագել նախարարական տոհմերից, ըստ երևույթին, հայտնի է եղել նաև խորենացուն: Խորենացին ևս, ինչպես երևում է նրա վկայութիւններից, գիտեր, որ «ոստանիկ»-ները եղել են «ազատ մարդիկ», քնակութիւն են ունեցել ո՛չ թե նախարարական շրջաններում, այլ արքունի երկրում, որ նրանցից կազմված է եղել այն հատուկ զորագունդը, որ կոչվել է «արքունի» կամ «յարքունի տանէ», սակայն իրական ու պատմական ծագումն այդ դասի խորենացու ժամանակ եղել է մութ և անհասկանալի³⁰:

Նրա բացատրութիւնը, որ «ոստան ազատութիւն»-ը ծագում է թագավորական հին զարմերից, հավանորեն, հիմնված է ո՛չ թե պատմական հաստատ ու որոշ փաստերի վրա, այլ մոտավորապես, նույն տվյալների վրա, որ հայտնի են և մեզ: Անհավանական չէ, որ խորենացին կարող էր արքայական ընտանիքի նեղ իմաստով հասկացած լինել «ոստանիկ»-ների «արքունի» մակդիրը և

³⁰ Խորենացու սխալ մեկնութիւնը «ոստանն անուանեալ ազատութեան» ուշագրաւ մի ապացույց է ըստ իս, որ նրան չի կարելի համարել հինգերորդ դարի մատենագիր:

նրանց ժազումը «յարքունի տանէ»։ Այսպես է մեկնել «արքունի տուն»-ը և Հ. Ղ. Ինճիճյանն իր «Հնախօսութեան» մեջ։ Հենվելով Նղիշի վկայությունների վրա, նա ևս վստահաբար հետևեցրել է, իբր թե «ոստանիկ»-ներին «այլ պատմագիրք յայտնի յարքունի տան է լեալ յիշեն, սովիմը իմանամք զքնիկ հայկական զարմն արքայական, որպէս էր ցեղն առաջին» («Հնախօս. II, Վենետիկ, 1835, էջ 161—162»)։

Եթե «յարքունի տանէ» իմաստի այս վերջին հասկացողությունն է եղել Խորենացու ենթադրության հիմքը, սլարդ է, որ այդ ապացույցն ավելի քան թույլ է, որովհետև «յարքունի տանէ», ինչպես վերև տեսանք, գործ էածված «ոստանիկ»-ների նկատմամբ արքունի երկրի և ո՛չ արքայական ընտանիքի նշանակությամբ։

Համոզիչ չեն կարող համարվել և Նիկ. Աղոնցի եղբակացությունները, որովհետև նրա պնդումների միակ ու գլխավոր կովանը Խորենացու վկայությունն է, որը նա հիմնական կետերում համարել է ընդունելի և արժանահավատ։

Նրա այն ուղղումը, որ «ոստանիկ» են անվանվել ո՛չ թե հագույն թագավորական սերունդները, այլ Արշակունյաց տոհմի «սեպուհ»-ները և իբր թե «սեպուհ» անունը գործ էածվել միմիայն նախարարական ընտանիքների որոշ անդամների համար («Армения в эпоху Юстиниана», стр. 451), ճիշտ չէ։ Փավստոսի պատմության մեջ Գնեւը, Արշակ թագավորի եղբոր որդին, անվանված է «մեծ սեպուհն Արշակունի» (Վենետիկ, 1832, IV, ԺԾ, էջ 124)։

Ինձ թվում է, որ միանգամայն անվիճելի է, Փավստոսի վկայությամբ էլ հաստատվում է, որ «սեպուհ» են կոչվել ո՛չ միայն նախարարական, այլև Արշակունյաց թագավորական տոհմի անդամները։

Որ այս վերջիններն անվանված լինեին հատկապես «ոստանիկ», այդ մասին մատենագրական աղբյուրներում չկան ո՛չ վկայություններ, ո՛չ էլ որևէ ակնարկներ։

Ինչպես տեսնում ենք «ոստանիկ»-ների թագավորական դարմ լինելը, հին թագավորների կամ Արշակունիների, այնքան էլ հաստատ չէ, ինչպես մինչև այժմ կարծել են։ Իրապես՝ «ոստանիկ» են անվանվել Արշակունյաց բուն երկրի «ոստան»-ի «աղատ»-ները, որոնցից կազմված գունդն անվանվել է «արքունի» կամ «յարքունի տանէ»։

«Աղատ» և «ոստանիկ» տերմինների նշանակությունը որոշելուց հետո՝ անհրաժեշտ է այժմ պարզել մանրամասնորեն նրանց

սոցիալական դրուժյունը և փաստական դերը նախարարական Հին Հայաստանում:

Ինչպես կտեսնենք, կարևոր այս խնդրի քննությունը ևս ցույց է տալիս, որ Հին Հայաստանի նախարարական կազմակերպության նմանությունն ու համապատասխանությունը Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմին շատ ավելի մեծ է և ակնհայտ, քան մինչ այժմ ենթադրել են:

Արևմտյան Եվրոպայում սենյորների իշխանությանը ենթարկված էին մանր ազնվականները, որոնք՝ ստացած լինելով սենյորներից որոշ հողաբաժիններ և համարվելով նրանց վասալները՝ պարտավոր էին ստանձնել հողատու իրենց «տէր»-երի հանդեպ զինվորական և այլ պարտավոր ծառայության պարտականություններ: Այս մանր ազնվականները, որոնցից կազմված էր սենյորների ձիավոր զորքը, անվանվում էին հեծյալներ (chevaliers, Ritter):

Ճիշտ և ճիշտ նույնը մենք գտնում ենք նաև նախարարական Հայաստանում:

Այստեղ ևս «ազատ»-ներից և «ոստանիկ»-ներից, որ գտնվում էին բռնշխությունների, նախարարությունների կամ Արշակունիների իշխանության տակ, կազմված էր նախարարական և արքունի շրջանների հեծելազորքը:

Խիստ ուշագրավ է այդ տեսակետից, որ Սմբատ Գունդստարլի XIII գարի Դատաստանագրքում «ազատ» «ձիավոր» (= chevaliers) և «լիճ ճորտ» (= հին ֆրանս. homme lige) համարվում են նույնանիշ, ինչպես այդ երկում է Դատաստանագրքի հետևյալ վկայությունից՝ «Սև զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն եւ իրենց տեսովն. նույնպէս և զազաւքն՝ որ են ի մեքս ձիաւորքն եւ լիճ ճորտքն՝ նա իրմընցնովն զիրենք դատեն իշխանաց իշխանաւքն. զթագաւորին ճորտերն՝ թագաւորին հրամանաւքն» (տե՛ս J. Karst, Sempadscher Kodex. B. I, Strassburg, 1905, էջ 104—105):

Որ Սմբատ Գունդստարլի այս բացատրությունը միանգամայն ճիշտ է, այդ պարզ երևում է հնագույն աղբյուրների բազմաթիվ վկայություններից, որոնց մեջ տեղեկություններ են հաղորդված նախարարությունների և արքունի տան՝ կամ «ոստան»-ի զորքերի մասին: Այդ վկայությունների մեջ որոշակի մատնանշված է, որ նախարարական Հայաստանի զորքերը կազմված են եղել, գլխավորապես, «ազատ»-ներից և «ոստանիկ»-ներից: Ուշագրավ է

նակ, որ մատենագրական աղբյուրների մեջ այդ զորքերն անվանվում են սովորաբար «ազատագորք», «ազատագունդ զորք», «ազատագունդ բանակ» կամ «ազատախումբ բանակ»:

Մեջ ենք բերում մի քանի համապատասխան վկայություններ.
1. Փաւստոս, IV, ԾԵ, էջ 174՝

«Ապա իբրև հոռի տրկին աշխարհին Հայոց կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ զգօրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից՝ որ ի յերկրին Արշակունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից».

2. Փաւստոս, V, Բ, էջ 193՝

«Ապա Մուշեղ որդի Վասակայ, ստրատելատն Հայոց Մեծաց, ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կաղմեաց զնոսա ձիով և թռչակաւ և զինու».

3. Ծղիշէ, I, էջ 18 (Վենետիկ, 1864)՝

«Գունդ կազմէր [Յագկերտ] ի Հայոց Մեծաց զազատ եւ զազատորդի, եւ յարժունէ տանէ զոստանիկ մարդիկ».

4. Փաւստոս, III, էջ 55 (ԻԱ)՝

«Յայնմ ժամանակի ազատագօրքն նախարարացն Հայոց առեալք զիրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ի կողմանս Յունաց անգանէին».

5. Նույնը, III, ԺԱ, էջ 26՝

«Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց Վաշէ զազատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն».

6. Նույնը, IV, էջ 126 (ԺԵ)՝

«Տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն».

7. Ագաթանգեղոս, ԶԺ, էջ 412՝

«Եւ յայնմհետե փոյթ ի վերայ ունէր զառընթերակաց արքունիսն հանդերձ մեծամեծ աւագանովն և ամենայն ազատագունդ բանակաւն աստուածեղէն իմաստութեամբն վարդապետել».

Հմատե նաև «Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սըրբոյն Մեսրոպայ վարդապետի», էջ 23 (Վենետիկ, 1894), Փաւստոս, IV, ԾԵ, էջ 175, V, ԻԴ, էջ 223 ևն.:

«Ազատ»-ների և «ոստանիկ»-ների զինվորական դաս լինելը Հին Հայաստանում, ինչպես տեսնում ենք, անվիճելի է:

Chistensen-ը մատնացույց է արել, որ Սասանյան Պարսկաստանում ևս āzāt-ների դասին պատկանել են, հավանորեն, ձիավորները (chevaliers), որոնք զորքի լավագույն մասն էին: Այս ձիավորների մեծագույն մասը խաղաղ ժամանակ ապրում էր սեփական կալվածներում, մշակում իր հողերը և զբաղվում իր գյուղացիության գործերով (տե՛ս L'empire des Sassanides, p. 44):

Նույն դրուժյունը, հավանորեն, եղած պիտի լիներ նաև Հին Հայաստանում:

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առանձնապես կարևոր է պարզել «ազատ»-ների և «ոստանիկ»-ների հողատիրության խընդիրը և, մանավանդ, պայմանական հողատիրության՝ feod-ի կամ Lehn-ի՝ գոյությունը Հին Հայաստանում: Արևմտյան Եվրոպայում, ինչպես հայտնի է, feod-ը կամ Lehn-ը կազմում էր միջնադարյան ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներից մեկը: Հարկավոր է ուրեմն, որոշել, թե արդյոք գոյություն չեն ունեցել նախարարական Հայաստանում ևս արևմտյան feod-ը կամ նման հողատիրական կարգեր:

Այս խնդիրը մանրամասն քննված է «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» մեր նախորդ աշխատության մեջ (տե՛ս Տեղեկագիր Պետ. Համալսարանի, Երևան, 1928, № 4, էջ 43—52): Կարևոր եմ համարում մեջ բերել այստեղ մեր այդ ուսումնասիրությունն ամբողջությամբ և մի քանի անհրաժեշտ լրացումներով:

«Ազատ»-ների և «ոստանիկ»-ների սոցիալական ու տնտեսական դրությունը քննելիս՝ իմ ուշադրությունը գրավել էր Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ «խոստակդար» բառը, որի նշանակությունը, իմ կարծիքով, վերջնական կերպով դեռ լուսաբանված չէ: Այն նշանակությունը, որ ես վերագրելու եմ «խոստակդար» բառին, այնքան կարևոր է հայկական ֆեոդալիզմի պարզաբանման համար, որ ես անհրաժեշտ եմ համարում մանրամասն առաջ բերել մատենագրական, ինձ հայտնի, բոլոր հատվածները, որոնց մեջ հիշատակված են «խոստակդար» և «խոստակ» բառերը:

Այդ երկու բառը հանդիպում են Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի մոտ հետևյալ վկայություններում.

1. Աղվանից Վաչական արքայի 6-րդ կանոնում՝

«Վանաց երէջ կամ վանական ոք՝ եթէ ի վանացն գայթանք

առնէ և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղւոյն ի բաց արասցեն, և զխոստակն յեկեղեցին կալցեն» (տե՛ս «Մովսեսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», հրատ. Մ. Էմինի, Մոսկվա, 1860, Ա, գլ. ԻԶ, էջ 66—67)։

2. «Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի, Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, Գլ. ԼԹ, էջ 206՝

«Ետու ես տէր Փիլիպպէ դժբերկաներէշոյ զկէսդ Սառնաքարին փոխան, և զկէսդ սուրբ եկեղեցւոյդ. և լիշխէ որ հեռացնել՝ ո՛չ եղբայր և ո՛չ որդի և ո՛չ յիմ խոստակդարաց»։

3. Նույնը, Գլ. ԼԹ, էջ 206—207՝

«Յերկերիւր և իննսուն երեք թուականութեանս Հայոց որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց տեառն, ետու զՏաթև վասն իմ հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր. Անխուշշարէ (՞) ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, ալգօք և ընկոյզօք, մարգագետնովք և շաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են. և մի՛ որ իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդար՝ հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ և ի սուրբ հաշէդ»։

4. Նույնը, Գլ. Խ, էջ 219՝

«Եւ շէն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի, որ նախ տեառն Ատրնեբւէհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր, ինձ էր տուեալ, և յետ այնորիկ Հրահատայ՝ իմ տեառնն, զնեալ էր յիմ եղբօրէն, և ինձ վաճառեալ և հոգեցատուր արարեալ՝ ետու ես Քուպղիդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարգով և արտով, գետով, ջրով և ցամաքով, ժառովք և տնկովք ի սուրբ հաշէդ և ի Տէր Սաղօմօն՝ Սիւնեաց եպիսկոպոս։ Ես զիմ հոգիս ի քեզ յանձն արարի, արդ իշխան ես դու Տէր Սաղօմօն՝ և որ յետ քո այլ յաջորդի որ ի սրբութեանց յաթոռդ Սիւնեաց, եպիսկոպոսունք, ուտել և վայելիլ զայդ շէնդ բոլորովիմք իւր սահմանօքդ մինչև յափտեանս ժամանակաց։ Եւ մի՛ ես և մի՛ իմ եղբօրորդիք և այլ խոստակդար՝ պայքարել եւ համիմաղ կալ մի՛ իշխեսցեն»։

5. Նույնը, Գլ. ԽԳ, էջ 232—233՝

«Եւ յայսմհետէ մինչև յափտեան այս լիցի սահման Տաթևոյ սուրբ ուիտիս. և մի՛ որ իշխեսցէ յայսմ հակառակել՝ մի՛ Բաղացիք և մի՛ Որոտնեցիք և մի՛ Վաղանդացիք, մի՛ Շնհէրացիք և մի՛ Նորեցիք։ Եթէ որ ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց եւ ի խոստակդարաց կամ ի ամենատե-

րաց, ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նշովեալ եղիցի»:

Հայկազյան բառգրքի աշխատակիցները «խոստակ»-ը հասկացել են այս հատվածներում, իբրև «խոշտակ, զաւակ, մանուկ, ժառանգ», իսկ «խոստակդար»՝ իբրև «խոշտակ յետագայ, այսինքն՝ զավակ զաւակի, յետնորդք, թոռունք»: Նույն բառգրքում «խոշտար» բառին տրվում է հետևյալ լուսաբանությունը. «խոշտար կամ խոստար, որ և խոստակ՝ մանուկ, տղայ, զաւակ, սան, համբակ, ժառանգ որբացեալ»: «Խոստակ» և «խոստակդար» բառերի այս նշանակությունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է այդ բառերի ստուգաբանական ծագման վրա՝ «խոստակ-խոշտակ-խոստար-խոշտար»: Այդ ստուգաբանությունը սակայն ճիշտ չէ. ուրեմն՝ անընդունելի պիտի համարել նաև վերոհիշյալ ամբողջ բացատրությունը:

Նույն բառերի ստուգաբանական ուղիղ մեկնությունը տվել է Հյուբշմանն իր Armenische Grammatik աշխատության մեջ (s. 161): Ըստ Հյուբշմանի «խոստակ» նշանակում է „Güter, Besitz“, այսինքն՝ «կալված», ստացվածք (=նոր պարսկ. X'âsta "Güter, Besitz"), իսկ «խոստակդար» նշանակում է „der Erbe“, այսինքն՝ «ժառանգ» (=պահլ. X'âstakdâr „der Erbe“ Pand-nâma 80, eigentlich „Besitzhalter“):

Հյուբշմանի այս մեկնությունից հետո միանգամայն հասկանալի է դառնում վերև առաջ բերված Աղվանից Վաչական արքայի վեցերորդ կանոնը: «Խոստակն յեկեղեցին կալցեն» պետք է հասկանալ այն իմաստով, որ հանցավոր «վանաց երէց»-ից կամ «վանական»-ից եկեղեցին առնում էր ո՛չ թե նրանց որդիներին, ինչպես մինչև այժմ ենթադրել են³¹, այլ նրանց կալվածները կամ հողաբաժինները:

Այս կանոնն իր բովանդակությամբ համապատասխանում է Շահապիվանի ժողովի երկրորդ և «Ներսիսի կաթողիկոսի և ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» հինգերորդ կանոններին,

³¹ Տե՛ս «История Агван Моисея Каганкатваци», прв. К. Патканьяна, СПб. 1861, стр. 67. «Խոստակն ի յեկեղեցին կալցեն» Պատկանյանը թարգմանել է «сына взятъ в церковь», սակայն ծանոթության մեջ նա հայանում է, որ այդ թարգմանությունը կասկածելի է: Միևնույն սխալ ենթադրությունն արված է նաև Վաչականի կանոնների իմ գերմաներեն թարգմանության մեջ. տե՛ս «Beiträge zur albanischen Geschichte», 1897, s. 46:

որոնք նույնպես վերաբերվում են իրենց կողմանն անհամապատասխան՝ տգէտ կամ հանցավոր եկեղեցականներին:

1. Տե՛ս Կանոնագիրը Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանի, Թիֆլիս, 1914, էջ 61՝

«Եթէ կրօնաւոր երէց գտցի ի պղծութեան կամ ի պոռնկութեան կամ յայլ գործս շարեաց և ստուգեալ վկայիւք, քահանայութիւնն լուծցի և եկեղեցոյ բաժնէն հեռացեալ լիցի. Ժ դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն. եթէ երէց, եթէ սարկաւագ՝ կանոնս այդ կացցէ՝ և նոքա ի կարգ զինուորութեան կացցեն և ի հարկս արքունի, և ընդ պաշտոնեայս մի՛ խառնեսցին».

2. Կանոնագիրը Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 109 («Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», Ե.)՝

«Տգէտք մի՛ իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զճայրեցնի հող եւ ջուր կալցեն, և յարքունիս հարկ, և զորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին»:

Վերոհիշյալ կանոններում՝ «խոստակն յեկեղեցին կալցեն», «յեկեղեցւոյ բաժնէն հեռացեալ լիցի» և «զհայրենի հող և ջուր կալցեն»՝ միեւնույն իմաստն ունեն: Հանցավոր կամ տգետ կրօնավորներից և քահանաներից եկեղեցին, ինչպես տեսնում ենք, ետ էր առնում նրանց անշարժ գույքը, հողն ու ջուրը, որովհետև այդ գույքը եկեղեցու «բաժին»-ն էր:

Նախորդ աշխատություններիցս մեկում («Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», Պետ. Համալսարանի Տեղեկագիր, № 1, Երևան, 1925, էջ 13—17) ես արդեն մատնանիշ էի արել, որ դեռևս Արշակունյաց թագավորության ժամանակ, քրիստոնեւորության տարածման սկզբնական իսկ շրջանում, հոգևորականութանը տրված են եղել հատուկ հողաբաժիններ: Այդ հողաբաժինների վերաբերմամբ, ինչպես պարզ երևում է վերև առաջ բերված կանոններից, նաև Դվինի ժողովի ութերորդ կանոնից, հոգևորականներն ունեցել են միայն տիրության և օգտագործման իրավունք, իսկ գերագույն սեփականության իրավունքը պատկանել է եկեղեցուն: Օգտատիրության (dominium utile) այդ իրավունքը եղել է ժառանգական, այսինքն՝ այդ հողաբաժինները հոգևորականներն իրավունք են ունեցել թողնել իբրև ժառանգութիւն իրենց որդիներին կամ մերձավորներին (տե՛ս «Կանոնք Դունայ ժողովոյն», Ը, Կանոնագիրը

Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 124—126), Հասկանալի է, որեմբն, թե ինչու ներսեսի ու Ներշապուհի հինգերորդ կանոնում այդ «հողն ու ջուրը» անվանվում է «հայրենի»:

Հողատիրության այս ձևը, անշուշտ, պայմանական էր: Հոգևորականները վերոհիշյալ գույքը, հողն ու ջուրը ստացել էին իրենց հոգևոր «ծառայութեան» համար: Եթե այդ «ծառայութիւն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ուներ այդ գույքը ետ գրավել և տալ «արժանատր»-ներին:

Վաչական արքայի վեցերորդ կանոնը խիստ կարևոր է ու ուշագրավ այն տեսակետից, որ այդ կանոնում հոգևորականներին հատկացված հողաբաժիններն անվանվում է «խոստակ»: «խոստակ»-ը, որեմն, ինչպես կարելի է ենթադրել, հիմնվելով վերոհիշյալ բացատրությունների վրա, այն հողաբաժիններն են կամ անշարժ գույքը, որ հատկացվել են հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայութեան» համար իբրև *dominium utile*, այսինքն՝ ո՛չ իբրև լիակատար սեփականություն, այլ ժառանգական օգտատիրության իրավունքով: Նույն հողաբաժինների նկատմամբ զերազույն սեփականության իրավունքը (*dominium directum*), ինչպես պարզ երևում է վերոհիշյալ վկայություններից, պատկանել է եկեղեցուն:

Դժվար չէ կռահել, որ հողատիրության այդ ձևը քրիստոնեական եկեղեցին ընդօրինակած պիտի լիներ նախարարական Հայաստանի բուն կենցաղից:

Պրոֆ. Նիկ. Ագոնցն իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ (стр. 322, 361 ևլն) շատ ուղիղ գիտել է, որ նախարարական Հայաստանի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է եղել, որ հայ եկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցության տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ չափերով ենթարկվել էր ֆեոդալականացման, կամ ավելի ճիշտը՝ նախարարականացման³²:

Ի նկատի ունենալով այդ ազդեցությունը, ինձ թվում է, կա-

³² Նախարարականացման ենթարկված պիտի լիներ, ինչպես ենթադրում է Մ. Ռոստովցևը, նաև նախաքրիստոնեական հայ եկեղեցին (ռե՛ս Studien zur Geschichte des römischen Kolonates, Leipzig, 1910, s. 273): Անհավանական չէ, որեմն, որ հոգևորականներին տրվող «խոստակ»-ները կարող էին գոյություն ունեցած լինել նաև հեթանոսական Հայաստանում:

րելի է ենթադրել, որ նախարարական Հայաստանում «խոստակ» կարող էին անվանված լինել բացի վերոհիշյալ հողաբաժիններից նաև այն հողերը կամ անշարժ գույքերը, որոնք կալվածատեր սյուզերենների կողմից տրվել են «ազատ»-ներին կամ «ոստանիկ»-ներին իրեն *dominium utile*, այն պայմանով, որ այս վերջինները հողատու իրենց «տէր»-երի հանդեպ կատարելու էին վինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականութիւններ:

Այս վերջին իմաստով «խոստակ»-ը կատարելապես համապատասխան կլինի *feod*-ին (ֆրանս. *fief*, գերմ. *Lehn*):

Որ այս ենթադրությունն անհիմն չէ, այդ ցույց են տալիս «խոստակդար» բառի վերաբերյալ վերև առաջ բերված վկայությունները, իմ կարծիքով, «խոստակդար»-ն այդ վկայություններում նշանակում է «խոստակ»-առու, այսինքն *feudatarius*, *feudataire* կամ *Lehnshalter*:

Պրոֆ. Հ. Հյուբշմանը, ինչպես տեսանք, «խոստակդար»-ը թարգմանում է «*Erbe*»՝ «Ժառանգ», բայց, ի նկատի ունենալով «խոստակ» բառի իր ստուգաբանությունը, ավելացնում է՝ «*eigentlich Besitzhalter*»՝ իսկապես կալվածառու:

Ակադեմիկոս Մ. Բրոսսեն իր «*Histoire de la Géorgie*» աշխատության մեջ (*Introduction et tables des matières*, St. Pétersbourg, 1858, էջ LXXXVII) մերժում է Հայկազյան բառգրքի վերոհիշյալ մեկնությունը, որը, ինչպես տեսանք, արդյունք էր սխալ ստուգաբանության, և հենվելով Մ. Դորնի ցուցմունքների վրա՝ ենթադրում է, որ «խոստակ»-ը նշանակում է «*richesse*»՝ «հարստություն», իսկ «խոստակդար»՝ «*un intendant, un surveillant des biens*», այսինքն, «վերականգնող կամ հարստությունների վրա հսկող»։ Հիմնվելով այս մեկնության վրա՝ «խոստակդար»-ը նա համարում է հոմանիշ «ձեռնաուրի» և թարգմանում է «*employé*»՝ «պաշտոնյա»:

Մինչև այժմ ոչ ոք ուշադրության չի առել, որ «խոստակ»-ն իրավական իր բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան *feod*-ին և, հետևաբար, «խոստակդար»-ը պարսկական իր *dār* վերջավորությամբ նշանակել է, հավանաբար, «խոստակ»-առու (=գերմ. *Lehnshalter*): Մինչդեռ այս եղրակացությունը ստացվում է ո՛չ միայն «խոստակդար» բառի ստուգաբանական վերլուծումով, այլև Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայությունների ուշադիր րենություններ:

ինչպես հայտնի է, Ստեփաննոս Օրբելյանն իր պատմության մեջ քաղվածորեն զետեղել է այն վավերագրերի պատճենները, որոնք վերաբերում են Վիսապահ նահանգի՝ եկեղեցական կալվածներին: Վերևում առաջ բերված բոլոր վկայությունները գտնվում են հենց այդ կարևոր քաղվածքներում:

Այդ վկայություններից երկրորդը (Ստեփ. Օրբ., էջ 206) վերաբերում է «Բերդկաներէշ» գյուղին, որ 839 թվին Սյունյաց Փիլիպպե իշխանը տվել էր Սյունյաց Տեր Դավիթ եպիսկոպոսին՝ կեսը «Սառնաքարին փոխան» և կեսը եկեղեցուն: Երրորդ վկայության մեջ ասված է, որ նույն Փիլիպպե իշխանը 844 թվին նվիրել է Տաթևի նույն Ս. Խաչ եկեղեցուն Տաթև գյուղը (Ստեփ. Օրբել., էջ 206—208): Զորորդ վկայությունից իմանում ենք, որ 867 թվին Քուպղիդուխտը՝ Փիլիպպեի քույրը և Սյունյաց Հրահատ իշխանի կինը, «անորդի գոլով»՝ «Մաճ շէնը»՝ «գիր հոգեմասն բաժինն ընծայէ ի սուրբ Խաչն և ի Տէր Սաղօմօն» (Ստ. Օրբ., էջ 218—220): Վերջապես՝ հինգերորդ վկայությունը վերաբերվում է «Տաթեոյ սուրբ ուխտ»-ի սահմաններին, որ հատուկ մեռուկ և առանձին գրությամբ որոշված են եղել 906 թվին (Ստեփ. Օրբել., էջ 230—234):

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «խոստակդար» բառը հիշատակված է 839, 844, 867 և 906 թվականների Տաթևի վանքի փաստաթղթերում: Որ «խոստակդար»-ի նշանակությունն այս վկայություններում ո՛չ թե «ժառանգ» է կամ «պաշտոնյա», ինչպես ենթադրել են Հյուբշմանը և Բրոսսեն, այլ «ամլատառու», այդ հաստատվում է, ինչպես ասացի, հենց նույն վկայությունների ուշադիր քննությամբ: Վերոգրյալ վկայություններից երկրորդում ասված է՝ «և չիշխէ ոք հեռացնել» ո՛չ եղբայր և ո՛չ որդի և ո՛չ իմ խոստակդարաց», իսկ երրորդում՝ «մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ գիւղդ»:

Եթե «խոստակդար»-ը հասկանանք առաջին հատվածում իբրև «ժառանգ»՝ կստացվի, իմ կարծիքով, ավելորդ կրկնություն, որովհետև Փիլիպպեի անմիջական ժառանգները, նրա որդիները, հիշատակված են արդեն նույն հատվածի սկզբում: Նոր Հայկազյան բառգրքի մեկնությունը՝ «թողունք կամ յետնորդք»՝ թեև հարմարվում է թե՛ առաջին և թե՛ երկրորդ հատվածներին, սակայն այդ մեկնությունը, ինչպես վերև տեսանք, կարելի է անտես առնել, որովհետև «խոստակդար»-ի այդ նշանակությունը հիմնված է ստուգաբանական բռնազբոսիկ և սխալ բացատրության վրա:

«խոստակդար»-ի իմաստը որոշելու համար ավելի կարևոր են շորորոդ և հինգերորդ վկայությունները:

Չորրորդ վկայության մեջ, որ գտնվում է Քուպղիդուխտի 867 թվի պայմանավճռում, ասված է՝ «եւ մի՛ ես և մի՛ իմ եղբորորդիք և այլ խոստակդարք պայքարել եւ համիմադ կալ մի՛ իշխեսցեն»։ Քուպղիդուխտը, ինչպես տեսանք, զավակ չունի, ուստի «խոստակդար»-ն այստեղ ո՛չ «թոռունք» կարող է նշանակել, ո՛չ էլ անմիջական ժառանգ։ «խոստակդար»-ի իսկական իմաստը որոշվում է այս հատվածում փաստական ու կարևոր մի նոր ցուցման օգնությամբ, որ ուշադրության չի առնվել:

Վավերագրերի տակ, որ քաղվածորեն առաջ են բերված Ստեփանոս Օրբելյանի մոտ, սովորաբար, ստորագրել են կամ հիշվում են իբրև վկաներ հենց վերոհիշյալ այն անձինք, որոնցից պահանջվում էր շառարկել կամ շրնդդիմանալ նվիրատուի կամքին: Քուպղիդուխտի փաստաթղթի վերջում ասված է.

«Եւ գրեցի յ316 թուականութեանս Հայոց վկայութեամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց» (Ստ. Օրբ., էջ 229):

Վերև հիշված «եղբորորդիք և այլ խոստակդարք», ինչպես տեսնում ենք, այստեղ մատնացույց են արված իբրև վկաներ, սակայն «եղբորորդիք և այլ խոստակդարք»-ի փոխարեն ասված է՝ «վկայութեամբ իմ եղբորորդեացս և իւրեանց ազատաց»։ Այս զուգադիպումը պատահական չէ, այլ պարզ մի ապացույց է, որ շորորոդ վկայության մեջ «այլ խոստակդարք» են անվանված Քուպղիդուխտի եղբորորդիների «ազատ»-ները, որոնք «խոստակ»-առու էին, այսինքն՝ ավատառու:

Որ մատնանշված զուգադիպումը եզակի ու բացառիկ չէ, այդ երևում է և մյուս փաստաթղթերից, որոնք Ստեփանոս Օրբելյանի մոտ առաջ են բերված առանց կրճատման: Օրինակ, Փիլիպպեի 844 թվի վճռագրի սկզբում ասված էր՝ «եւ մի՛ ոք իշխեսցէ յեւս իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ գիւղդ», իսկ նույն վճռագրի վերջում կարդում ենք.

«Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց տէր, տէր Ատրնեքսէ՛՜ Վասակայ որդի, Սիւնեաց տեառն, տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք. տէր Հրահատ և տէր Գագիկ՝ Գրիգորոյ Սիւնեաց տեառն որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի. նոյնպէս և յիմ ազատաց՝ Հուռ,

Քուրդոյ, Խոսրով՝ Շապուհոյ որդիք, Զեանշէր՝ Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Վահանայ որդի, Զագիկ՝ Վահանայ որդի, Վարդան՝ Զանադայ որդի, Սահակ՝ Վասակայ որդի, Միհրան՝ Թուրքայ որդի, Յովհանն՝ Ներսէհի որդի, Մուշեղ՝ տէր Տիրոցի որդի, Հասան՝ Շապուհոյ որդի, Վահան՝ Մխիթարայ որդի, Մուշեղ՝ Սմբատայ որդի, տէր Վահան՝ Բաբգենի որդի, տէր Բաբգեն և տէր Վասակ և տէր Աշոտ՝ իմ Փիլիպպէի որդիք. և ի կրօնաւորաց Ահարոն... Եւ վասն առաւել հաստատութեան զիմ սովորական մատանիս ի վերայ եղի և զիմ որդեաց և զայլ ազառաց» (Ստ. Օրբ., էջ 207—208)։

Ինչպես Քուպղիդուխտի փաստաթղթում, նույնպես և այս վճռագրում, վերև հիշված «խոստակդար»-ներին ներքևում համապատասխանում են դարձյալ «աղատ»-ները, որոնք Փիլիպպեյի ավատառուներն էին։

«Խոստակդար»-ի նշանակութիւնը իբրև feudataire կամ ավատառու այնքան որոշ է ու ակնբախ այս երկու վճռագրում, որ ես ավելորդ եմ համարում կանգ առնել ուրիշ նման վկայութիւնների վրա, որ կան նաև մյուս փաստաթղթերում։

Որ «խոստակդար»-ը շունի «ձեռնաւոր»-ի իմաստ, ինչպես ենթադրել է ակադեմիկոս Մ. Բրոսսեն, այդ ևս պարզ երևում է վերև մատնանշված հինգերորդ վկայութիւնից 906 թվի վճռագրում, որով որոշված են եղել Տաթևի շրջակա սահմանները։ Այդ վճռագրի մեջ «խոստակդար»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է հետևյալ հատվածում.

«Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց եւ ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Երորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նշովեալ եղիցի» (Ստ. Օրբ., էջ 233)։

Այստեղ, ինչպես տեսնում ենք «ձեռնաւոր»-ները հիշվում են առանձին «խոստակդար»-ներից առաջ։ Ուրեմն՝ միանգամայն անվիճելի է, որ «ձեռնաւոր» և «խոստակդար» բառերն ունեցել են տարբեր իմաստ։ Նույն այս հատվածը հետաքրքիր է ու ուշագրավ նաև այն տեսակետից, որ նրա մեջ ըստ ավագութիւյան կարգի նախ հիշատակված են «աւագ»-ները և նրանց «ձեռնաւոր»-ները³³, հետո՝

33 Ինչպես հայտնի է, «ձեռնաւոր» են անվանվում ուշ միջնադարի հայկական արձանագրութիւններում հնազույն զորանի «գործակալ» պաշտոնյաները։ Այս տերմինը, ինչպես տեսնում ենք, կարող է կապ ունենալ «ձեռակալ» տերմինի հետ։ Իսկ այս հավանական մի նոր ապացույց է, որ կաթողիկոսութիւյան վերահիշյալ «ձեռակալ իշխանութիւն»-ը պետք է լինէր «գործակալական իշխանութիւն»։

«խոստակդար»-ները՝ «աւագ»-ների և «տէր»-երի ավատառուները և վերջում՝ «տանուտէր»-ները, «Ճանուտէր»-ները վերջում են դըրված, որովհետև այս դարաշրջանում այդ բառը, մեծ մասամբ, գործ էածվել գյուղապետի իմաստով:

«Խոստակդար»-ի նշանակութեան այս նոր լուսաբանութեամբ որոշվում է նախարարական կազմակերպութեան հիմնական առանձնահատկութիւններից մեկը և վերջնականապես պարզվում է, որ feod-ը և պայմանական հողատիրութիւնը նախարարական Հայաստանում գոյութիւն են ունեցել իններորդ դարում:

Նրա ծագումը սակայն, անշուշտ, ավելի հին է:

«Խոստակ»-ը, ինչպես տեսանք, հանդիպում է նաև Աղվանից վաչագան արքայի կանոններում: Մինչև այժմ ենթադրել են, որ այդ կանոններն ընդունված են եղել «Աղուէն»-ի ժողովում 488 թվին³⁴, իրապես՝ այդ ժողովը, ինչպես մանրամասն ցույց ենք տվել «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութեան» մեր աշխատութեան մեջ (II, Տեղեկագիր Պետ. Համալսարանի, Երևան, 1928, № 4, էջ 50), տեղի էր ունեցել, հավանորեն, յոթերորդ դարի սկզբներում:

«Խոստակ»-ի և «խոստակդար»-ների գոյութիւնը կարելի է սակայն ենթադրել նաև VII դարից առաջ՝ թե՛ մարզպանութեան և թե՛ Արշակունյաց թագավորութեան ժամանակ:

Վերև մենք արդեն տեսանք, որ եկեղեցականների պայմանական հողատիրութիւնը, որ առաջ եկած պիտի լիներ նախարարական կարգերի ազդեցութեամբ, կարող է սկիզբ առած լինել չորրորդ դարում: Այդ արդեն ուշագրավ մի ակնարկ է, որ պայմանական հողատիրութիւնը գոյութիւն ունեցած պիտի լիներ՝ իբրև մանր աղնրվականութեան ավատական հողատիրութիւն՝ նաև այդ հնագույն դարաշրջանում:

Նույն այդ ենթադրութեան հիմք կարող է ծառայել «խոստակ»-ի և «խոստակդար»-ի ստուգաբանական ծագումը պարթևերեն x^vâstak և x^vâstakdâr բառերից: Այս տերմինները, լինելով Արշակունյաց շրջանի փոխառութիւն, նրանց հնութիւնը կարող է դարձյալ հավանական մի ցուցանիշ համարվել, որ նախարարական Հայաստա-

³⁴ Տես Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Բ, էջ 210. M. Brosset, Histoire de la Géorgie, Additions, St.—Petersbourg, 1851, p. 473. Fr. Tournebise, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 357. Նաև իմ աշխատութեան մեջ՝ „Beiträge zur albanischen Geschichte“, Leipzig, 1897, s. 28:

նում feod «խոստակ»-ը և feudataire «խոստակդար»-ը գոյություն են ունեցել ո՛չ միայն 9-րդ և 7-րդ դարերում, այլ նաև մարզպանական և Արշակունյաց ժամանակներում:

Հիմնվելով ուշագրավ ու կարևոր այս դիտողությունների վրա, ինձ թվում է, ավելի քան հավանական պետք է համարել, որ «ազատ»-ների և «ոստանիկ»-ների մեծագույն մասը նախարարական Հայաստանում եղել են «խոստակդար»-ներ, այսինքն՝ ստացած են եղել նախարարական շրջաններում և արքունի երկրում որոշ հողաբաժիններ կամ անշարժ գույք օգտատիրության իրավունքով (dominium utile) և հատուկ պայմանով, որ հողատու իրենց «տէր»-երի հանդեպ ստանձնելու էին ղինվորական և այլ պատվավոր «ծառայություններ» պարտականություններ³⁵: Ի նկատի ունենալով, որ եկեղեցական «խոստակ»-ները համապատասխան պիտի լինեին աշխարհիկ «խոստակ»-ներին, կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ «ազատ»-ների և «ոստանիկ»-ների «խոստակ»-ները ևս համարվել են ժառանգական և «հայրենի»:

«Նոստակ» և «խոստակդար» տերմինների մեր նոր լուսաբանությունն անսպասելի նոր հնարավորություններ է ընձեռում մասնագետ իրանագետներին հետազոտություններ կատարելու այս ուղղությամբ:

Հ. Հյուբշմանը մատնանիշ է արել, որ x^vâstakdâr-ը «Pand-nama i Adarbad Maraspand» երկում նշանակում է «Ժառանգ» (der Erbe, Arm. Gram., s, 161): Ճիշտ է արդյոք որոշված ալդբառի իմաստը: Ինձ թվում է, որ պարթևական այդ բառն իր նշանակությամբ կարող է համապատասխան լինել հայերեն «խոստակդար»-ին: Ավելի քան հավանական է, որ feod «խոստակ»-ը, ինչպես և ավատատիրական վերոհիշյալ կարգերը, գոյություն ունեցած պիտի լինեին պարթևների մոտ, նաև, հավանորեն, Վրաստանում, Աղվանքում և Սասանյան Պարսկաստանում:

Պատմագիտական բոլոր թե՛ հին և թե՛ նոր ուսումնասիրու-

³⁵ Յոթերորդ դարից հետո, ինչպես հայտնի է, մեծ չափեր էր ստացել հայերի զաղթը Փոքր Ասիա: Այստեղ ևս ֆեոդալական Հայաստանի «ազատ»-ները, որոնք անվանվում են σπαρτιώται և ἀγριώται, ստանում էին մանր կալվածներ և Բյուզանդական կայսրության հանդեպ ստանձնում էին ղինվորական ծառայության պարտականություններ: Բյուզանդիայի թեմական ու ղինվորական կազմակերպության որոշ առանձնահատկությունները վերագրվելու են ըստ իս հայկական ֆեոդալիզմի ազդեցության: Այդ տեսակետից առանձնապես կարևոր է բյուզանդական այն հատուկ օրենքների ուսումնասիրությունը, որոնք վերաբերում են վերոհիշյալ ղինվորականների արտոնություններին:

թյուններում, հիմնվելով Պլուտարքոսի և Յուստինոսի վկայությունների վրա՝ (Justinus, Epit. histor. Philipp. Pompei Trogi, lib, XLI, II, 2, 5 և Plutarchos, Crassus XXI)՝ ենթադրել են, որ պարթևների հեծելազորքը կազմված է եղել, գլխավորապես, ստրուկներից, Հիմնվելով այս ենթադրության վրա, պատմագետներն ընդունում են այժմ, որ պարթևական պետությունն իրրե սոցիալական-տնտեսական կազմակերպություն ունեցել է, հավանորեն, ստրկատիրական բնույթի:

Այս պնդումները, ինչպես մանրամասն ցույց են տվել ռուսերին իմ աշխատության մեջ („Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении“, Тифлис. 1932), միանգամայն սխալ են:

Բանասերները և պատմագետներն ուշադրության չեն առել, որ Յուստինոսի և Պլուտարքոսի վերոհիշյալ վկայությունների մեջ servitia և δοῦλοι, որ գործ են ածված Անտոնիոսի և Կրասոսի դեմ պատերազմող պարթևական զորքերի համար, ունեն servus-ստրուկի ո՛չ թե սովորական իմաստ, այլ համապատասխանում են «ծառայ», servus, «слуга» ֆեոդալական տերմիններին և նշանակում են servus-«ծառայ» վասալի իմաստով: Պարթևական ձիավորներին Յուստինոսը և Պլուտարքոսն անվանել են servitia և δοῦλοι, որովհետև նրանք, լինելով «ազատ»-ներ «ծառայ» էին վասալ պարթևական նախարարների:

Մատենագրական հայ աղբյուրների քննությամբ այդ վկայությունները ստանում են բոլորովին նոր իմաստ և պարզ ու որոշ հաստատվում է, որ Պարթև Արշակունիների հեծելազորքը, նման ու համապատասխան լինելով Հայ Արշակունիների «ազատազորք»-ին, կազմված է եղել, գլխավորապես, այն «ազատ»-ներից, որոնք «խոստակդար» էին (=feudataire, Lehnsträger) կամ արքունիքի և կամ մյուս մեծ իշխանությունների:

Անհրաժեշտ է սակայն մատնանշել, որ Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ բացի «ազատազորք»-ից զույություն է ունեցել մարզպանական Հայաստանում նաև հատուկ հեծելազորք, որ կազմված է եղել «ռամիկ»-ներից: Այդ հեծելազորքի մասին կան կարևոր ցուցումներ Ղազար Փարպեցու պատմության մեջ և Դվինի ժողովի կանոններում:

1. Փարպեցի, III, գլ. 78, Տփղիս, 1904, էջ 144՝

«Եւ տեսեալ սպարապետին Հայոց Վահանայ զայսչափ բազ-

մութին զօրացն Պարսից, և այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա էին, և այլ ռամիկ այրուձիռն Հայոց».

«Կանոնք Դունայ ժողովոյն», Վաղարշապատ, 1905 (Հրատար. Մխիթար վարդապետի և Սիրական Տիգրանյանի), էջ 23՝

«Ռամանք յազատաց և յռամիկ հեծելոց հասանելով ի գիւղս ուրեք՝ թողնալ զգիւղն ի վանս առնեն զիշեանս և ի յարկս սրբոց»:

Ինձ թվում է, որ այս «ռամիկ այրուձիռ»-ն, որ հիշատակված չէ հնագույն աղբյուրներում, առանձնապես կարևոր նշանակություն էր ստացել, գլխավորապես, այս ժամանակաշրջանում: Սասանյան Պարսկաստանը, ինչպես հայտնի է, հայկական հեծելազորքն ուղարկում էր հաճախ պատերազմելու իր հեռավոր արեւելեյան սահմանները: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայ աղբյուրականությունն ամեն կերպ աշխատելու էր խուսափել ու ազատվել այդ նոր ու խիստ ծանր պարտականությունից: Հայ «ազատագորք»-ը հենց ինքը, հավանորեն, շահագրգռված էր, որ այդ ծանր զինապարտությանը մեծ շահերով մասնակից լինեն նաև «ռամիկ»-ները:

Հետաքրքիր է ու ուշադրության արժանի, որ ֆինոգալական Կիլիկիայում, ինչպես հայտնի է Սմբատ Գունդստարլի Դատաստանագրքից, գոյություն են ունեցել «ծիաւորք որ ի Հայս ազատ կոչին» և «ցած հեծելվորք» կամ «ցած շինականք հեծելվորք» (տե՛ս J. Karst, Sempadscher Kodex aus dem 13 Jahrhundert, I, s. 103—105 և 95—97): Սմբատի Դատաստանագրքի 70-րդ կանոնից պարզ երևում է, որ «շինական հեծելվորք»-ներին զինվորական այդ ծառայության համար տրվել են տնտեսական ու իրավական առանձին արտոնություններ: Ըստ երևույթին, որոշ արտոնություններ ունեցել են նաև մարզպանական Հայաստանի «ռամիկ հեծեալ»-ները:

Որ այս «ռամիկ» զինվորները սոցիալական ավելի բարձր գիրք են ունեցել քան հասարակ «շինական»-ները՝ այդ կարելի է կռահել Ատովմի, նրա որդու ու ընկերների վկայաբոլոնության վրացերեն թարգմանությունից, որի մեջ հիշված են այս «ռամիկ հեծեալ»-ները և «ռամիկ» բառը թարգմանված է «շինհրույի», որ նշանակում է «ականաւոր (տե՛ս Джавахов, «Государственный строй древней Грузии и древней Арменни», стр. 133):

Միջնադարյան նվիրույթում վասալները, ստանալով սենյորներից օգտատիրության իրավունքով հատուկ հողաբաժիններ կամ

անշարժ գույք, ո՛չ միայն ստանձնում էին իրենց «տէր»-երի հանդեպ զինվորական պարտականություններ, այլև պարտավոր էին օգնել նրանց խորհրդով (consilio) ժողովներում, նաև մասնակցելու էին սենյորիայի վարչական ու դատական գործերին: Ավատառուների այս պարտականությունները, որ տարբեր էին, ինչպես կտեսնենք, գյուղացիության ու ռամիկ ժողովրդի պարտականություններից, համարվում էին ազնիվ ծառայութիւն:

Արդ՝ ուշագրավ է խիստ ու հետաքրքիր, որ նախարարական Հայաստանում ևս նման պարտականություններ ունեցել են «ազատ»-ները և «ոստանիկ»-ներն իրենց «տէր»-երի հանդեպ:

Վերև մենք տեսանք, որ ընդհանուր աշխարհաժողովների նախարարների հետ միասին մասնակցում էին հաճախ նաև «ազատ»-ները: Պետք է ենթադրել, որ նախարարական երկրներում ևս դոմարվել են նույնպես տեղական ժողովներ մասնակցությամբ «ազատ»-ներին:

Մենք հիշել էինք նույնպես, որ Արշակունյաց արքունի ամենակարևոր «գործակալութիւն»-ները հանձնարարված են եղել «աւագ նախարարութիւն»-ներին և կաթողիկոսությանը, իսկ գործակալական մանր պաշտոնները՝ մանր ազնվականությանը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ նախարարական երկրները ևս ունեցել են իրենց «գործակալութիւն»-ները, որոնք, հավանորեն, հանձնրված են եղել, գլխավորապես, «սեպուհ»-ներին և «ազատ»-ներին:

Փալատոսը, նկարագրելով Արշակունյաց թագավորության վերահաստատումն Արշակ թագավորի ժամանակ, արքունի «գործակալ»-ների մասին տալիս է հետևյալ կարևոր վկայությունը.

Փալատոս, IV, Բ, էջ 67—68 (Վենետիկ, 1889):՝

«Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիրաւբանչիւր գահու և գործակալքն յիւրաքանչիւր շափու:եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ՝ որ դործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի դուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս, որք գործակալք միայն էին ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զոտնկայս գործակալութեանն սպասու»³⁶:

Հիմնվելով այս վկայության վրա՝ բանասերներից ոմանք են-

³⁶ Կետադրությունը փոխել ենք համաձայն Նիկ. Ադոնցի ուղղումների. տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 239.

թաղրել են, որ Արշակունիների ժամանակ գոյություն է ունեցել Հայաստանում մոտ 900 նախարարական ընտանիք: Ադոնցը թեև ընդունում է նույնպես, որ Փավստոսի այս տեղեկությունը վերաբերվում է բացառապես նախարարական դասին, սակայն չափազանցություն է համարում Փավստոսի 900 թիվը և միաժամանակ մատնացույց է անում, որ նախարարական միևնույն տոհմից կարող էին լինել մի քանի «գործակալ»-ներ (*«Армения в эпоху Юстиниана»*, стр. 239 և 467—468):

Արդ՝ ճիշտ է արդյոք, որ Փավստոսի վկայությունը վերաբերվում է բացառապես նախարարական տոհմերին և նրանց թվին: Հավանակա՞ն է արդյոք, որ վերոհիշյալ արքունի «գործակալ»-ները եղել են, անպայման, նախարարական դասից:

Ենթադրել, որ պալատում ներկա գտնվող բոլոր «գործակալ»-ները նախարարներ էին՝ այդ, անշուշտ, քմահաճ ու բռնազբոսիկ մի բացատրություն է, որ բնավ չի հետևում Փավստոսի վկայության բովանդակությունից: Ըստ իս՝ Արշակունյաց արքունիքում և արքունի երկրում Հայաստանի ավագ նախարարություններին հանձնված են եղել միմիայն ամենաբարձր «գործակալութիւն»-ները, իսկ երկրորդական կարգի պաշտոնները վարել են, գլխավորապես, «ազատ»-ները կամ «ոստանիկ»-ները:

Հավանական է, ուրեմն, որ Փավստոսի հիշած «գործակալ»-ների մեծագույն մասը ո՛չ թե նախարարներն էին, այլ «ոստան»-ի մանր ազնվականները: Հետաքրքիր է առանձնապես, որ Սասանյան Պարսկաստանում ևս, ինչպես մատնացույց է արել Christensen-ը, վարչական ստորին պաշտոնները վարում էին *âzât*-ները (*ան'ս L'empire des Sassanides*, p. 44):

Շահապիվանի ԺԶ կանոնում ասված է, որ «առանց գաւառի եպիսկոպոսին չիշխէ լինել եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ ո՛ր դատաւորաց» (Կանոնագիրք Հայոց, հրատարակ. Ա. Ղլտճյանի, էջ 76): Այս հատվածում հիշվում են, ինչպես տեսնում ենք, իբրև դատավորներ հատկապես «ազատ»-ները:

Զպետք է իհարկե կարծել, որ «ազատ»-ները և «ոստանիկ»-ները բոլորն էլ եղել են «խոստակդար»-ներ: Նրանք կարող էին ունեցած լինել ո՛չ միայն «խոստակ»-ներ, այլև կալվածքներ ժառանգական լիակատար սեփականության իրավունքով, որ միջնադարյան Եվրոպայում անվանվում էին *allod*:

Նիկ. Ադոնցի կարծիքով, Մերովինգյան շրջանի *allod*-ը համապատասխանում է այն ժառանգական տոհմային կալվածքներին,

որ Հին Հայաստանում կոչվում էին «հայրենիք»³⁷ («Армения в эпоху Юстиниана», стр. 457—458): հաշիկ Սամվելյանը, սակայն՝ «հայրենիք» կամ «հայրենական» համարում է այն հողերը, որոնք՝ նման միջնադարյան feodum-ին՝ տրվել են իբրև ժառանգական սեփականություն («Մխիթար Գօշի Դատաստանագիրքն», Վիեննա, 1911, էջ 294): Ուշագրավ է, իրոք, որ բացի իսկական allod-ներից, որոնք անվանվում են «հայրենիք» նաև feod-«խոստակ»-ը, որը ժառանգական օգտատիրության իրավունքով տրված է եղել եկեղեցականներին՝ «ներսիսի կաթողիկոսի և ներշապհոյ Մամիկոնեից եպիսկոպոսի» հինգերորդ կանոնում անվանված է «հայրենիք»³⁸:

«Ազատ»-ների և «ոստանիկ»-ների սոցիալական ու տնտեսական դրությունը պարզելու համար կարող են իբրև կովան ծառայել Շահապիվանի կանոնները տուգանքների մասին, որ վճարելու էին հանցապարտ «ազատ»-ները և «շինական»-ները:

Համաձայն այդ ժողովի Գ, Ծ, Է, Թ և ԺԱ կանոնների սահմանված էին դրամատուգանքներ հետևյալ հարաբերությամբ:

1. Ամուսնությունը պոռնկությամբ պղծող «ազատ»-ից 200 դրամ, իսկ «շինական»-ից՝ 100 դրամ, որ տրվելու էին կարոտյալներին (Կանոն Գ):

2. Ամուլ կնոջից բաժանվող «ազատ»-ից 1200 դրամ, իսկ «շինական»-ից 600 դրամ, որը տրվում էին կնոջը (Կանոն Ծ):

3. Աղքիկ առևանգող «ազատ»-ից 1200 դրամ («սիոխանակ անարգանացն»), իսկ շինականից՝ 600 դրամ (Կանոն Է):

4. Հարցուկներին դիմող «ազատ»-ից 200 դրամ, իսկ «շինական»-ից՝ 100 դրամ, որ տրվելու էին կարոտյալներին (Կանոն Թ):

5. Մեռելների վրա կոծ դնող «ազատ»-ից 100 դրամ, իսկ «շինական»-ից՝ 50 դրամ, որ բաշխվելու էին աղքատներին (Կանոն ԺԱ):

Բոլոր հիշյալ դեպքերում տուգանքների հարաբերությունն է 2 առ 1: Այս հարաբերությունը կարող է, անշուշտ, ուշագրավ մի նշան համարվել, որ հինգերորդ դարի առաջին կեսում, երբ սահ-

³⁷ Եղիշի մոտ հիշատակված են երկիրք՝ «հայրենիք», «պարգևականք» և «քսակագինք» հետևյալ վկայության մեջ՝ «Այնպէս և երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգևականք և եթէ քսակագինք, և հանեալ ուրուք իցէ, հրամայեցաք զի գարծցին» (Վենետիկ, 1852, III, էջ 147):

³⁸ «Հայրենիք» ու «հայրենի» տերմինների նշանակության ճշտումը կարոտ է ըստ իս հատուկ ու ավելի մանրամասն քննության:

մանված էին այդ կանոնները, «ազատ»-ների սոցիալ-տնտեսական դրուժյունը, թեև տարբեր է եղել «շինական»-ների դրուժյունից, սակայն այդ տարբերությունը, հավանորեն, մեծ չէ եղել:

«Ազատ»-ների և «ոստանիկ»-ների մեծագույն մասը, որոնցից կազմված էր Հայաստանի հեծելազորքը և ստորին պաշտոնեությունը, ունեցել է, ըստ երևույթին, համեմատաբար փոքր կալվածներ: Հետևաբար՝ «խոստակ»-ները ևս որ տրվում էին նրանց՝ մեծ չափերի լինելին: Տնտեսական իր հզորությամբ ազնվական այս դասը կարող է մոտավորապես համեմատվել միջնադարյան Անգլիայի եօրլ-երի հետ, որոնց վճարում էին արնագին երկու անգամ ավելի, քան գյուղացիներին կամ օեօրլ-երին:

Շահապիվանի կանոնների այս քննությունից կարելի է, ինչպես տեսնում ենք, վստահորեն հետևեցնել, որ «ազատ»-ները և «ոստանիկ»-ները նախարարական Հայաստանի հողատեր մանր ազնվականներն են, միանգամայն տարբեր նախարարական խոշոր կալվածատեր դասից:

«Ազատ»-ների ու «շինական»-ների իրավական ու կենցաղային տարբեր կացության մասին մատենագրական աղբյուրների մեջ կան միայն մի քանի միջանկյալ, բայց հետաքրքրական ցուցումներ:

Հանցավոր «ազատ»-ները, ինչպես սլարզ վկայում են Շահապիվանի կանոնները, չեն ենթարկվել մարմնական պատիժների: Նմանապես՝ նրանց չէր կարելի ուղարկել աշխատանքի գողենոց կամ ուրկանոց: Հանցանք գործելիս, նրանք վճարում էին միայն դրամատուգանքներ:

«Ազատ»-ների նկատմամբ այդ հատուկ բացառությունները շեշտված են հետևյալ կանոններում՝

1. «Կանոնք Շահապիվանի ժողովոյն» (հրատ. Ա. Ղլտեյանի), Գ, էջ 63՝

«Եթէ ազատ է և զան չէ մարք հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն».

2. Կանոն Ե, էջ 65՝

«Ապա թէ ազատ է և ի գողենոցն չերթայ, ձ դրամ տուգան տացէ գողեացն».

3. Կանոն Ժ, էջ 68՝

«Ապա եթէ ազատ է և ի գողենոց չերթայ՝ Շ դրամ տացէ գողեացն».

4. Կանոն ԺԲ, էջ 70՝

«Ապա եթէ ազատ է ի գողիսն շերթայ, 3 դրամ տացցէ նոցա»։ Ուշադրության արժանի է նաև, որ Փարպեցու և Եղիշեի մոտ «ազատ»-ներն անվանվում են «որսատենշ» (Փարպ. I, է, էջ 10), «փափկացեալ» (Եղիշե, Վենետիկ, 1864, III, էջ 115), իրենց արտաքին տեսքով, ինչպես վկայում է դարձյալ Փարպեցին. «ազատ»-ները տարբերվել են «շինական»-ներից (III, Հէ, էջ 142)։

6. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԸ ՈՐՊԵՍ «ԱԶԱՏԱՑ ՏՈՂՄ»

Միջնադարյան Եվրոպայում ֆեոդալական աշխարհիկ կարգերը և ֆեոդալականացման զորեղ հոսանքը խորապես ազդել էին քրիստոնեական եկեղեցու զարգացման վրա, տալով նրա վարչական ու տնտեսական կազմակերպությանը ֆեոդալական ձևակերպում և հատուկ գունավորում։

Նույնը, բնականաբար, մենք տեսնում ենք նաև Հին Հայաստանում։

Այստեղ ևս, ինչպես մատնացույց է արել Նիկ. Ադոնցը («Арменения в эпоху Юстиниана», стр. 322—370), հայ եկեղեցին, գտնվելով նախարարական Հայաստանի միջավայրում, մեծ չափերով ենթարկվել էր նախարարական կարգերի ազդեցության¹։ «Եկեղեցու ազգայնացումը,— ասում է Ադոնցը,— համազոր էր նրա նախարարականացման կամ ֆեոդալականացման. որովհետև քաղաքական վարչակարգը Հայաստանում ուներ ֆեոդալական բնույթ և իշխանությունը բաժանված էր բազմաթիվ իշխանական տոհմերի մեջ, բնականաբար, նաև եկեղեցական իշխանությունը պետք է համակերպվեր ներգործող միջավայրին և ընդուներ նույն միջավայրի պատրաստի ձևերը» (էջ 361)։

Եվ իրոք՝ ինչպես քաղաքական իշխանությունը, նույնպես և եկեղեցականը, ապակենտրոնացած և բաժանված են եղել Հին Հայաստանում ըստ նախարարությունների, և բացի արքունի երկրից կամ «ոստան»-ից նաև մյուս մեծ ու առաջնակարգ «տէրություն»-ներում գոյություն են ունեցել առանձին եպիսկոպոսություններ։

Համաձայն Ադոնցի քննության՝ այդ եպիսկոպոսություններից արքունի «ոստան»-ի եպիսկոպոսապետը կամ կաթողիկոսը մյուս

¹ Այդ ազդեցությանը, ինչպես ճիշտ դիտել է Մ. Ռոստովցեյը, ենթարկված է եղել նաև հեթանոսական հայ եկեղեցին, որից ծագել էր քրիստոնեական եկեղեցին, ժառանգելով վերջինիս կալվածները և հարստությունները, տե՛ս Studien zur Geschichte des römischen Kolonates, Leipzig, 1910:

եպիսկոպոսների հանդեպ ունեցել է նույն դիրքը, ինչ որ թագավորը նախարարական շրջանների իշխանների հանդեպ: Եպիսկոպոսները, ինչպես և նախարարական երկրների իշխանները, անվանվել են «տէր» և համարվել այդ երկրների հոգևոր ներկայացուցիչները:

Նախարարական միջավայրի ազդեցությունը պետք է վերագրել, որ հոգևորականությունը Հին Հայաստանում, ընդհանուր առմամբ, նույնպիսի փակ, կղզիացած մի դաս է եղել, ինչպես և «նախարար»-ների, «ազատ»-ների ու «շինական»-ների դասերը:

Արշակունիների ժամանակ, ինչպես վկայում է Փավստոսը, կաթողիկոսությունը, ավելի ճիշտ՝ եպիսկոպոսապետությունը, ժառանգական է եղել Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսի ընտանիքներում: Նույնը կարելի է ենթադրել նաև նախարարական ինքնուրույն շրջանների եպիսկոպոսությունների մասին: Քահանայության ժառանգական լինելը թե՛ հնագույն և թե՛ հետագա դարերում հայտնի է ազգային եկեղեցական ժողովների կանոններից:

Հոգևոր կոչման այդ ժառանգականությունը, որ խիստ օտարոտի էր և արտասովոր քրիստոնեական ընդհանուր եկեղեցու տեսակետից, քննության է առնվել Տրուլլի 692 թվի ժողովում և անհանդուրժելի համարվել իբրև նմանողություն հրեական սովորույթի: Իրապես, հայ եկեղեցու այդ առանձնահատկությունը ո՛չ թե հետևություն էր կամ ազդեցություն հրեական ժառանգական քահանայապետության, ինչպես այդ ենթադրել են Գելցերը («Համառօտ պատմություն Հայոց», թարգմ. Գր. Գալեմբյարյանի, Վիեննա, 1897, էջ 43) և Կարստը (Sempadscher Kodex. Strassburg, 1905, Bd. II s. 43—44), այլ արդյունք էր Հին Հայաստանի սոցիալական ու ներքին պայմանների և եկեղեցական դասի ֆեոդալականացման կամ նախարարականացման²:

Որ հոգևորականներն առանձին ինքնամփոփ մի դաս էին ընդհանրապես, այդ երևում է մասամբ նաև եկեղեցականներին վերաբերյալ հատուկ տերմիններից՝ «ժառանգաւորք եկեղեցւոյ», «տոհմ քահանայից», «ժառանգութիւն քահանայական» ևն.:

Մեք ենք բերում եկեղեցական իշխանությունների ժառանգականության մասին մի քանի ուշագրավ վկայություններ.

² S^h՝ս Адопц, Армения в эпоху Юстиниана, стр. 369.

1. Փաւստոս, IV, Գ, էջ 72 (Վենետիկ, 1889)՝

«Վասն այնորիկ յիրաւի արժանի եղև սա [Ներսէս] աթոռոյն հայրապետաց և տեղոյ ճարցն իւրոց առաջնոց».

2. Խորենացի, III, ԽԹ, էջ 320՝

«Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խորոյժ զՍահակ որդի մեծին Ներսիսի, որդւոյ Աթանադենի, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ սըրբոյն Գրիգորի».

3. Նույնը, III, ԿԶ, էջ 354՝

«Յայնժամ ժողովեալ ի միասին ամենայն նախարարացն՝ շոգան առ մեծն Սահակ, և զմեղանս յանձն առեալ՝ աղաչէին զնա դարձեալ ունել զաթոռն. խոստանային ի Պարսից արքայէն հաստատել զնա, մուրհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն».

4. Նույնը, III, ԿԴ, էջ 349՝

«Բայց Սուրմակայ ոչ աւելի տեեալ քան զմի ամ՝ ի նոցին իսկ նախարարացն հալածեցաւ յաթոռոյն. որ ապա զիրոյ գաւառին Բզնունեաց զեպիսկոպոսութիւնն ի Պարսից արքայէն եգիտ ունել ազգաւ».

5. Ղազար Փարպեցի, I, ԺԴ, էջ 23՝

«Եւ այնուհետեւ միաբանեալ գնացին ի դուռնն, և երթեալք անդր յանդիման եղեն արքային Պարսից Վառմայ. Ընդ որս էր և երէց մի Սուրմակ լսնուն ի գաւառէն Բզնունեաց, ի գեղջէն որ կոչի Արծկէ, ի տոհմէ քահանայից գաւառին».

6. «Կանոնք Դունայ ժողովոյն», Ը, (հրատ. Ղլտճյանի, էջ 124—125)՝

«Եթէ որ այր կամ կին է ժառանգատուաց սրբոյ եկեղեցւոյ անորդի իցէ, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն և անցեալ ըստ ինքն ի մեքձատուացն մի՝ իշխեսցէ նեւացուցանել զհող և զշուր և զամենայն շնորհս եկեղեցւոյն».

7. Նույնը, Ե, էջ 123՝

«Արդ իւրաքանչիւր որ գնաւանց ժառանգութիւնն կալցի և սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ կացցէ և վարդապետին ի հնազանդութեան՝ ամենայն յօժարութեամբ».

8. «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», Թ (հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 110)՝

«Եւ այժմ, թէ գտցի որ արարեալ ի նմին վնասու, ի բաց որոշեալ լիցի ամենայն տամբ իւրով ի քահանայական ժառանգութենէն ամենեկին»:

Իբրև սոցիալական անջատ մի խմբակցություն՝ հոգևորականությունը դասված է հղել ազնվականների շարքում և իր ապահարկությանը հավասարված է համարվել «ազատ»-ների դասին:

Աղբյուրների մեջ շեշտվում է հաճախ, որ Տրդատ Թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հայոց եկեղեցին համարել են «ազատաց տոհմի» կարգում: Եկեղեցու այդ «ազատություն»-ը հասկացվել է, գլխավորապես, իբրև ազատություն այն հարկերից, որ պարտավոր էին տալ «շինական»-ները:

Հոգևորականության սոցիալական դրության տնտեսական այդ կողմը միանգամայն պարզ երևում է մատենագրական հետևյալ վկայություններից.

1. Նղիշէ, II, էջ 75 (Վենետիկ, 1864)՝

«Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եղիր».

2. Նույնը, II, էջ 38—39:

«Թէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր [Դենշապուհ], այլ ի ներքոյ խորհուրդք շարագոյն ցուցանէին: Առաջին՝ զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն. երկրորդ՝ միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ».

3. «Կանոնք Ս. Սահակայ Հայոց հայրապետի», III լՂ, (հրատ. Ա. Ղլտճյանի, տե՛ս «Կանոնագիրք Հայոց», էջ՝ 34—35)՝

«Իսկ ի վասն բնակեալք... անյապաղ զպաշտաման կատարել զկարգ՝ զխաղաղութիւն խնդրելով ամենայն աշխարհի, և դեղջ շինութիւն և զառողջութիւն ի տուէ և ի գիշերի բազում արթնութեամբ. վասն այսորիկ ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս բնկալաւ եւ ամէն և երիցագոյն պատիւ ծառանդեաց յուխտի սրբութեան եկեղեցւոյ».

4. «Կանոնք Դունայ ժողովոյն», Ե (հրատ. Ղլտճյանի, էջ 123)՝

«զի ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրեւ զազատութիւն է. զոր երանելոյ սրբոյն Գրիգորի և Թագաւորին մերոյ Տրդատայ զատուցեալ են».

5. Նույնը, Թ, էջ 126՝

«զի երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ մոռ եւ ջուր. նաև ի Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ խառնեալ ի շինական իշխանութիւնն. զերիցունեաց տունսն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ

յարքունիս»։ նույն այս կանոնը Մխիթար Գոշի խմբագրությամբ (տե՛ս Դատաստանագիրք, I, ՃԶ, էջ 215—216)՝

«Զի երիցս երանելոյն սրբոյն Գրիգորի և երանելոյն Տրդատայ թագաւորի զսուրբ եկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հռչակն եւ քրովն։ Եւ ի Պարսից թագաւորութեան ժամանակս թէպէտ և ի պեկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է և չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկսն տային յարքունիսն»։

Մի կողմ թողնելով այս հատվածների մութ կետերը հասի և պեկարի մասին, որ մենք մանրամասն քննել ենք մեր նախորդ աշխատություններում (տե՛ս «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» և «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», «Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի», 1926, № 1, էջ 31, 32—37 և 1927, № 2, էջ 35—37), նույն հատվածների բովանդակությունից կարող ենք հետևել, որ Արշակունյաց ժամանակ, Տրդատ Մեծից սկսած, եկեղեցականները հարկ չեն վճարել ո՛չ Արշակունի թագավորներին, ո՛չ էլ կալվածատեր իշխաններին։

Եղիշիի վերոհիշյալ վկայություններից պարզ երևում է, որ հայ եկեղեցու ապահարկությունն արքունի հարկերի նկատմամբ ոչնչացված է եղել Պարսկական Հայաստանում Հազկերտ Բ-ի ժամանակ, Դենշապուհի աշխարհագրից հետո, այսինքն՝ մոտավորապես 450 թվին։

Այնուհետև, ինչպես դժվար չէ հետևել Ռվինի ժողովի իններորդ կանոնից, եկեղեցականներին նորից հաջողվել էր ձեռք բերել հարկային որոշ արտոնություն։ Նրանք չեն եղել «խառնեալ ի շինական իշխանութիւնն», «եբիցունեաց տուն»-ը գրանցված է եղել արքունի դիվանում և նրանք պարտավոր են եղել «միայն զհասն տալ յարքունիս»։

Բ. Ավդալբեգյանը, մեկնաբանելով Ռվինի ժողովի նույն այս կանոնը, ենթադրել է, որ «զհասն» բառը հավանական է հասկանալ «հարկ» բառի ու ո՛չ թե հողահարկի իմաստով և որ եկեղեցին ու հոգևորականները պարտավոր էին հարկ տալ Պարսից պետության։ Սակայն նրանք կիսով չափ ազատված էին հարկատվությունից, որովհետև հարկ չէին տալիս տեղական իշխաններին (տե՛ս «Հաս, սակ, բաժ», Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի, 1926, № 1, էջ 54—55)։

Այս ենթադրությունը թվում է ինձ անհավանական։

Որ, իրոք, հայ հոգևորականությունն ունեցել է ինչ որ արտոնություն նաև արքունի հարկերի նկատմամբ՝ այդ կարելի է ըստ իս եզրակացնել «Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» հինգերորդ կանոնից՝

«Նոյնպէս և տգէտք մի՛ իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զհայրենի հող և ջուր կալցեն, և յարքունիս հարկ, և զորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղըւտըճյանի, էջ 109)։

Եթե տգետ հոգևորականները, կորցնելով իրենց արտոնությունները, ղրկվում էին հայրենի հողից ու ջրից և վճարելու էին «յարքունիս հարկ», ինձ թվում է՝ կարելի է ենթադրել, որ պաշտոնավարող հոգևորականներն արքունի այդ հարկից ազատ են եղել։

Այս վերջին հարկը վերոհիշյալ մեր աշխատությունների մեջ մենք համապատասխան էինք համարել Սասանյան Պարսկաստանի gezith գլխահարկին, իսկ «հաս» կամ «պեկար» հարկը, որ հայ հոգևորականությունը պարտավոր էր «տալ յարքունիս», ենթադրել էինք հողային հարկ՝ նման արաբական շրջանի «խարաճ»-ին։

Եկեղեցու «ազատութիւն»-ը և եկեղեցականների «ազատաց տոհմ»-ում կարգվելը բացի նրանց ապահարկությունից ունեցել է նաև ուրիշ ուշագրավ հիմքեր։

Հին Հայաստանի եկեղեցական կազմակերպության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է եղել, որ եկեղեցու ստորին պաշտոնեականը ևս, ինչպես և «ազատ»-ներին, տրված են եղել feod «խոստակ»-ներ։ Այս հատուկ հողաբաժինների մասին, որ ստացել էր եկեղեցին շորրորդ դարի առաջին կեսում, տալիս են կարևոր տեղեկություններ Ագաթանգեղոսը և Փավստոսը։

Ագաթանգեղոսն իր պատմության մեջ, նկարագրելով քրիստոնեության տարածումը Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Մեծի ժամանակ, հաղորդում է, որ Տրդատ թագավորը եկեղեցական դասի տնտեսական ապահովության համար հատկացրել էր հատուկ հողամասեր ավաններում և ագարակ տեղերում։

«Յետ այսորիկ.— վկայում է Ագաթանգեղոսը,— հասնալ նմա [Գրիգոր Լուս.] բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս և յագարակս։ Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց շուրս շուրս ճողս երդոյ՝ յամենայն ազա-

րակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն ճողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր» (Տփղիս, 1909, գլ. ՃԺԹ, 837, էջ 436):

Փաւստոսը ևս նույն այս հոգերի մասին ունի հետեւյալ ուշագրաւ վկայությունը՝

«Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրգատայ առ մեծան ճրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւրն ճողոյն զնինզն հատանէր յաւքունիս, եւ զերկուսն միայն թողոյր երկուս ճողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ զիւր մի երէց և սարկաւագ, և վայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն» (V, գլ. Ա, Վենետիկ, 1889, էջ 237):

Ինչպես տեսնում ենք, Ագաթանգեղոսի և Փաւստոսի այս հատվածները հիմնական խնդրում, որ Տրդատ թագավորը գյուղական եկեղեցիներին տվել էր հատուկ հողեր, միանգամայն իրար համապատասխանում են: Ուշագրաւ այս փաստը, որի մասին հաղորդում են իրարից անկախ և՛ Ագաթանգեղոսը, և՛ Փաւստոսը, պետք է ընդունել, իբրև հավաստի ու ստույգ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Տրդատ Մեծը տնտեսապես պետք է ապահովեր գյուղական հոգևորականներին, և շատ բնական է, որ հոգևորականության վարձատրման ամենահավանական միջոցը կարող էր լինել այդ ժամանակ այն հողաբաշխումը, որ վկայված է հիշյալ հեղինակների մոտ:

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ գյուղական հոգևորականությանը հատկացված են եղել «չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ», իսկ Փաւստոսի վկայության մեջ հիշատակված են միայն «եւթն» հողերը, որոնցից Պապ թագավորը հինգը գրավել էր «յարքունիս»: Ագաթանգեղոսի վկայությունը, որ այս կետում ավելի ընդարձակ է ու որոշ, ամենայն հավանականությամբ, պետք է համարվի նաև ավելի ուղիղ: Շատ հավանական է, որ ագարակ տեղերում, ուր եկեղեցու սպասավորների թիվն ավելի պակաս կլիներ, քան ավաններում, հողաբաժինները ևս պետք է լինեին ավելի քիչ:

Արդ՝ ի՞նչ է նշանակում հող երդոյ:

Հունարեն Ագաթանգեղոսում (տե՛ս Paul de Lagarde, Agatangelus und die Akten Gregors von Armenien, Goettingen, 1887, s. 76) «հողս երդոյ» թարգմանված է arouras: Հունարեն

aroura բառը նշանակում է վարելահող կամ նաև հողի տարածության որոշ չափ, ինչպես հռոմեական iugerum-ը կամ գերմանական Hufe-ն: Ուրեմն՝ Ագաթանգեղոսի թարգմանը «հող երդոյ» հասկացել է կամ վարելահողի իմաստով կամ համարել է իբրև որոշ չափի հողաբաժին: Երկրորդ ենթադրությունն ավելի հավանական է, որովհետև aroura բառը հողաբաժնի հատուկ իր նշանակությամբ ավելի է համապատասխանում «հող երդոյ» հայերեն բնագրին, քան վարելահողի ընդհանուր իր նշանակությամբ: Հիմնվելով Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության վրա, կարելի է, ուրեմն, ենթադրել, որ «հող երդոյ» որոշ չափի հողաբաժիններ են:

Խոսելով վերև feod—«խոստակ»-ի մասին, մենք մատնացույց էինք արել, որ հիշյալ հողամասերը հատկացվել էին գյուղական հոգևորականությանը որպես «խոստակ»-ներ, այսինքն՝ ժառանգական օգտատիրության իրավունքով (dominium utile): Նույն հողերի նկատմամբ գերագույն սեփականության իրավունքը (dominium directum) պատկանել է եկեղեցուն: Հողատիրության այդ ձևը, ինչպես վերև տեսանք համապատասխան կանոնների քննությունից, պայմանական էր. ուստի՝ եթե հոգևորականների «ծառայութիւնն» անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ուներ «խոստակ»-ները ետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

Պարզ է, ուրեմն, որ ավատականությունն այնքան խոր արմատներ է ունեցել նախարարական Հին Հայաստանում, որ անգամ գյուղական հոգևորականության տնտեսական ապահովումը հողամասերով հարմարեցված է եղել ավատական ընդհանուր կարգերին: Հոգևորականությունը ո՛չ միայն ապահարկ է համարվել «աղատ»-ների նման, այլև ավատառու է եղել, ինչպես և «աղատ»-ների հոծ բազմությունը:

Հայաստանի՝ նախարարական կազմակերպության ազդեցությունը հայ եկեղեցու վրա, ինչպես տեսնում ենք, եղել է ավելի մեծ և ավելի խորաթափանց, քան միջնադարյան ֆեոդալական Արևմուտքում:

Ուշագրավ է այդ տեսակետից նաև այն, որ հայ եկեղեցին հոգևորականության գույքային անհավասարությունը համարել է օրինական: Դվինի ժողովի հինգերորդ կանոնում պատճառաբանվում է այդ նրանով, որ եկեղեցու ժառանգությունն «իբրև զապա-

տութիւն» է. ակնարկվում է դրանով, որ նույն անհավասարությունն առանձնահատուկ է եղել և «ազատ»-ների դասին:

«Վասն շնորհի և ժառանգութեան,— ասված է հիշյալ կանոնում,— սահմանեցաք, թէ ի սկզբանէ որպիսի հրաման ի սրբոյն Գրիգորէ է լեալ՝ նոյնպէս և եղիցի. որոյ շատ է ժառանգութիւնն՝ զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի, և մի՛ ըստ ծխոյ բաժանեցցեն զշնորհն, զի զժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իրեւ զազատութիւն է, զոր երանելոյ սրբոյն Գրիգորի և թագաւորին մերոյ Տրդատայ զատուցեալ են: Արդ՝ իւրաքանչիւր ոք զհարանց ժառանգութիւնն կալցի և սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ կացցէ և վարդապետին ի հնազանդութեան՝ ամենայն յօժարութեամբ» (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 123):

Բացի ավաններում և ագարակներում հոգևորականութեան տված հողերից եկեղեցին ունեցել է նաև ուրիշ կալվածներ, որոնց մասին կան մի քանի կարևոր վկայություններ Ագաթանգեղոսի և Փավստոսի պատմություններում:

Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հայ եկեղեցին քրիստոնեության տարածման սկզբնական իսկ շրջանում ստացել էր հեթանոսական մեհյանների ոսկին, արծաթը, նաև գյուղերը և կալվածները:

1. «Զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ [«Անահտական դիցն», «Տրի դից»—Արտաշատում] և նոցին գեւնովքն եւ սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան (Տփղիս, 1909, ՃԸ, 781, էջ 406):

2. «Եւ զգեօղն [Թորդան] ամենայն դաստակերտօքն հանդերձ եւ սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին» (ՃԹ, 784, էջ 408):

3. «Եւ զաւանն ամրականաւն հանդերձ [«ամուր տեղին Անի»] ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին» (ՃԹ, 785, էջ 409):

4. «Եւ զգանձս երկոցուն մեհեհացն [«Անահտական»՝ «Յրէղն աւանի» և «Արամազդայ»՝ «Ի Թիլն աւանի»] աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծու թողուին տեղեօքն հանդերձ» (ՃԹ, 786, էջ 410):

5. «Եւ զգանձս մթերեալս [«Մհակաւն մեհեհին»՝ «Ի Բագայառն»] աւար հարկանէին և աղքատաց բաշխէին եւ զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ» (ՃԺ, 790, էջ 412):

Փավստոսը, խոսելով Արիստակեսի թաղման մասին, վկայում է, որ «տարան զնա ի Մոփաց գաւառէ, և եղին զնա յեկեղեաց գա-

ւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ» (Վենետիկ, 1889, III, Բ, էջ 6): Նույն պատմիչը, նկարագրելով Ներսէս կաթողիկոսի թոնավորումը և թաղումը, վկայում է դարձյալ, որ կաթողիկոսի մարմինը «բարձին յաւանէն ի խախ գեղջէ, ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն յաւանն յիւր գեւղն» (V, ԻԴ, էջ 223): Իբրև կաթողիկոսական կալվածներ հիշվում են Փաւստոսի մոտ Աշտիշատը և Ամոք գյուղը (տե՛ս IV ԺԴ, էջ 117 և VI, Զ, էջ 274): Իսկ Հովհաննէս կաթողիկոսը հաղորդում է, որ Արամոնք գյուղը Կոտայքում «սեպհական էր տան կաթողիկոսարանի նախքան զչարշարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընձեռեալ, որոյ և յետկար վճռան պահի մինչև ցայսօր ժամանակի» (Թիֆլիս, 1912, էջ 104—105):

Ինձ թվում է, որ Արշակունյաց ժամանակ ո՛չ միայն Թիլը, Աշտիշատը, Ամոքը և Արամոնքը, այլև Ագաթանգեղոսի մոտ հիշված բոլոր մեհենական կալվածները գտնվել են Գրիգոր Լուսավորչի տոհմի տնօրինութան տակ:

Թեև եկեղեցականների կալվածատիրութան մասին մատենագրական աղբյուրների տեղեկությունները խիստ աղքատիկ են և կցկտուր, սակայն պատահական այդ վկայություններից անգամ կարելի է կռահել, որ բացի կաթողիկոսական տնից խոշոր կալվածներ ունեցած պիտի լինեին նաև մյուս եպիսկոպոսությունները:

Եվ իրավի, Փաւստոսի պատմելով՝ խոսքով Կոտակի թագավորութան ժամանակ, երբ բնաջինջ էին արվել Մանավազյանների և Որդունիների նախարարական տոհմերը, նրանց կալվածները ստացել էին Աղբիանոսը և Բասենի եպիսկոպոսը:

«Եւ ետ [խոսքով] զաւանն և զբուն զահոյից գեւղն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի՝ զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և զաւառական հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ: Եւ ետուն զբուն գեւղն Որդունուց, որոյ անուն էր Որդորու. ուստի եպիսկոպոս Բասանու ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու» (III, Դ, էջ 10):

Փաւստոսի մի ուրիշ վկայությունից հայտնի է դարձյալ, որ Հոհան եպիսկոպոսը, Փառեն կաթողիկոսի որդին, խաղ ու կատակով զվարճացնում էր Հայոց թագավորներին և փոխարենը ստանում նրանցից գյուղեր և ագարակներ:

«Սոյն Յոհան եպիսկոպոս,— պատմում է Փաւստոսը,— որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղակատակ

լինէր նոցա, որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն միհանէսք (") այն էին նորաւ: Ի շորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով: Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դի՞ք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ: Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ եւ կնքեալ՝ դնէին ի վերայ ողիւնն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր զեղս եւ ագարակս եւ զանձն յուզտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն» (VI, Ժ, էջ 277—278):

Ինքնըստինքյան պարզ է, որ հոգեւորականութեան տնօրենութեան տակ գտնվող հողային եկեղեցապատկան սեփականություններ ժամանակի ընթացքում պետք է անընդհատ աճեր ու բազմապատկւեր, որովհետեւ եկեղեցին շարունակ ստանում էր իբրեւ նվեր նոր հոգեր և կալվածներ, ինչպես առանձնապես շեշտված է այդ Սահակ կաթողիկոսի ՄԱ կանոնում:

«Իշխանք գգելոս, զղաստակեւոս և զգանձս ոսկոյ և արծաթոյ,—ասված է այդ կանոնում,—այլք յանդաստանաց և ի պատճառաց հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղագս սիրելեաց և ծնողաց և վախճանելոց հատուցանեն հատուցմունս, զարդ և պայծառութիւն կազմելով հոգւոց և մարմնոց» («Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտէյանի, էջ 45):

Նման նվիրատվության մասին, որ ստացել էին եկեղեցիները և քահանայապետները Մանվել սպարապետից, հաղորդում է, օրինակ, Փավստոսն իր պատմության հետևյալ հատվածում՝

«Բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և ի վկայանոցս, և բազում գանձս ցքահանայապետսն. և ապա ինքն մեռանէր» (V, ԽԴ, էջ 266):

Եկեղեցական կալվածներից պետք է տարբերել կաթողիկոսների և մյուս հոգեւորականության այն անշարժ գույքը, որ պատկանել է նրանց իբրեւ անձնական սեփականություն: Սահակ կաթողիկոսի անձնական սեփականությանն է վերաբերվում, օրինակ, Ղազար Փարպեցու հետևյալ վկայությունը՝

«Եւ վասն զի ոչ գոյր իւր արի որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համաղասպայ տեառն Մամիկոնէից և

Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս. զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ և զերանելին Համազասպեան. որոց ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս գեօղից իւրոց եւ ագաւակաց, եւ որ ինչ միանգամ էր իւր՝ ետ նոցա ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչև ցլախտեան» (I, ԺԸ, էջ 37):

Հայ եկեղեցին, որ հարուստ էր հողերով և կալվածներով, ուներ և ուրիշ արտոնութիւններ:

Ֆինանսական տեսակետից եկեղեցուն ենթարկված էր ամբողջ երկիրը, որը տալիս էր նրան տասանորդ, պտուղ և հաս: Արշակունյաց ժամանակ կաթողիկոսներին էր հանձնված, ինչպես վերև տեսանք, «մեծի դատաւորութեան գործակալութիւն»-ը, և հետագա դարերում ևս եկեղեցին միշտ էլ ունեցել էր դատաստանական իրավասութիւնն ամենալայն իրավունքներ: Այդ ևս, անշուշտ, եկամուտի կարևոր մի աղբյուր էր:

Շատ պարզ է, որ եկեղեցու տնտեսական այս ուժը հիմք էր ծառայելու նաև նրա քաղաքական հզորութիւնը:

Եկեղեցու այս զորեղացումը, նրա հողատիրութիւնն անընդհատ աճումը, պետք է, բնականաբար, առաջ բերեին մեծ դժգոհութիւն և հարուցանեին աշխարհական իշխանութիւնների բուռն դիմադրութիւնը: Ինչպես Արևմտյան Եվրոպայում Կարոլինգյան Կարլ Մարտելի ժամանակ, նաև միջնադարյան մի շարք մյուս երկրներում, նույնպես և նախարարական Հայաստանում՝ եկեղեցական և վանքապատկան հողերի կուտակման դեմ ձեռք էին առնվել կրտուկ միջոցներ:

Փափասոսի վկայութիւնից հայտնի է (V, ԼԱ, էջ 234—237), որ Պապ թագավորը գլուղական եկեղեցիներին հատկացված յոթնական հողաբաժիններից հինգը գրավել էր «յարբունիս»: Բացի այդ՝ նա հրամայել էր վերացնել տասանորդի և պտղի եկեղեցական տուրքերը և ունչացնել ներսես կաթողիկոսի հիմնած բարեգործական զանազան հաստատութիւնները: Սակայն Պապի ձեռք առած այդ միջոցները կրում էին միայն ժամանակավոր բնույթ: Պապից հետո եկեղեցու դրութիւնը նորից սկսել էր ամրանալ թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես:

Արշակունյաց թագավորութիւնն անկումից հետո՝ պայքարը եկեղեցու տնտեսական ու քաղաքական զորեղացման դեմ շարունակվել է նաև մարզպանութիւն շրջանում:

Սասանյան Պարսկաստանը չէր կարող, բնականաբար, հան-

դործել հոգևոր դասի ազդեցության աճումը, որովհետև կուլտուրապես հայ եկեղեցին սերտորեն կապված էր Արևմուտքի հետ⁴։ Եվ իրավի, Հաղկերտ Բ-ի քաղաքականությունը, ինչպես վերև տեսանք, ուղղված էր քրիստոնեական հոգևորականության արտոնյալ իրավունքների և, մասնավորապես, նրա հարկային ազատության դեմ։

Ուշագրավ է սակայն և խիստ հետաքրքիր, որ մարզպանության նույն շրջանում ո՛չ միայն Պարսկաստանը, այլև ինքը հողատեր հայ ազնվականությունը մաքառել է հոգևորականների դեմ, ուղեցել է տեր ու տնօրեն դառնալ եկեղեցական շահավետ հաստատությունների և ձգտել է նույնիսկ հարկատու դարձնել եկեղեցական ստորին պաշտոնեությունը, ժխտելով նրա ապահարկությունը և «ազատութիւն»-ը։

Հայ ազնվականության ու հոգևորականության այս հակամարտությունն ու սուր կոիվը շեշտված են պարզ ու որոշ Դվինի ժողովի 9-րդ, 10-րդ և 11-րդ կանոններում։

Իններորդ կանոնում ասված է, որ իրենց երդերի ու մարդկանց բաժանման ժամանակ «աղատ»-ներն աշխատում են կեղեցու ժառանգավորներին «ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել», իսկ ոմանք էլ հափշտակում են առաջնորդների իշխանությունը և իրենք են բաժանում կամայականորեն «զշնորհս եկեղեցւոյ»։ Տասներորդ կանոնը հաղորդում է, որ «աղատ»-ներից ոմանք ենթարկում են իրենց իշխանությանը վանքերը և նշանակում ու արձակում վանականներին, անտես առնելով առաջնորդների իրավունքները։ Տասնումեկերորդ կանոնը վկայում է դարձյալ, որ «աղատ»-ներից ոմանք իրենց իշխանության տակ են առնում տկարանոցները, նշանակում են գործակալներ «ի կերակուրս և յըմպելիս», հարկ են պահանջում «ողորմելի եղբայր»-ներից և նեղում նրանց «կոռով և պահակութեամբ»։

Կալվածատեր ազնվականների միջամտությունը եկեղեցական գործերում, ինչպես և վանքերի ու այլ եկեղեցական հաստատու-

⁴ Ուշագրավ է սակայն, որ նույն Պարսկաստանը բուլբուլին այլ վերաբերմունք է ունեցել հայ եկեղեցու հանդեպ Դվինի 555 թվի ժողովից հետո, որի որոշմամբ հայ եկեղեցին մերժել էր Քաղկեդոնի ժողովը և անջատվել բյուզանդական եկեղեցուց։ Այս ժողովից հետո, ինչպես հայտնի է, հարկահավաքումն անգամ մարզպանական Հայաստանում հանձնարարված է եղել ներսես Բ. կաթողիկոսին և հայ հոգևորականության յո՛ւն՝ Tournebizet Histoire politique et religieuse de l'Arménie, s. 396)։

թյունների ենթարկումը նրանց իշխանության, հաճախակի մի երե-
վույթ էր միջնադարյան նաև ուրիշ երկրներում:

Այս խնդիրն այնքան հետաքրքիր է ու կարևոր ֆեոդալական
ըրջանի հարաբերությունների ու բարքերի լուսաբանության հա-
մար, որ մենք ավելորդ չենք համարում մեջ բերել վերոհիշյալ
վկայություններն ընդարձակ բովանդակությամբ:

1. «Կանոնք Դունայ ժողովոյն», Թ, հրատ. Մխիթար վարդա-
պետի և Սիրական Տիգրանյանի, Վաղարշապատ, 1905, էջ 19—21՝

«Յորժամ ազատք զիրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յուրվժ
շարակնութեամբ առնեն, զծառանգատրս եկեղեցւոյ ջանան ի ծա-
ռայութիւն եւ ի ստրկութիւն արկանել, մոլեալք և մոլորեալք ի
քրիստոնէական հաւատոյս.... Արդ եթէ ոք ազահութեան ակամբ
հայեսցի և զազատ մանկունս եկեղեցւոյ ի բաժին եւ ի վիճակ ծա-
ռայութեան արկցեն, այնպիսիքն ի սուրբ Լուսաւորչի օրհնութենէն
և ի մերմէ ժողովոյս հեռի եղիցին և մի՛ եղիցի իշխանութիւն վար-
դապետի և քահանայից զայնպիսեաց պատարագն օրհնել: Այլ և
ումանք յազատաց ըստ իւրաքանչիւր կամաց բաժանեն զընորհս
եկեղեցւոյ, եւ զառաջնորդաց զիշխանութիւն եւ զգործ յափշտա-
կեն, և վարդապետաց հրամանի և մեր կանոնիս ունկնդիր չլինին.
այնպիսի յանդգնեալքն, որք գործեն զտարահաճելիսն Աստուծոյ,
հեռի եղիցին ի սրբոց և ի մեր օրհնութենէն»:

2. Նույնը, Ժ, էջ 21—22՝

«Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւն առնեն եւ
զվանական՝ զոր կամին հանեն եւ արկանեն, զոր չէ արժան և օրէն.
և ոմանք ընտանեօք ի վանսն նստին՝ արհամարեալ զեկեղեցեան
Աստուծոյ՝ անպատկառելի անամօթութեամբ. արդ եթէ լուեալ մերս
հրամանի՝ դարձցին և թողցեն յառաջնորդս զտեսչութիւն եկեղեց-
ւոյն կարգել և յօրինել ըստ հաճոյիցն Աստուծոյ, այնպիսեացն
յառաջագոյն գործելիացն յանցանաց թողութիւն լիցի և ի մեր
միաբան ժողովոյս օրհնեալ եղիցին, ժողովրդեամբ և պտղաբերու-
թեամբ և ուխտաւորեալ ընծայիւք նուիրելովք երթիցեն ի վանսն և
աղօթեսցեն, որպէս արժան է յիրեանց հարանց վաստակս, բայց
ժլատութեամբ մի՛ իշխեսցեն, զի եղիցին օրհնեալ յԱստուծոյ և ի
մեր ժողովոյս»:

3. Նույնը, ԺԱ, էջ 22—23՝

«Ոմանք յազատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առ-
նեն եւ ռոպէս ի կենդանեաց հարկս պանաքեն եւ ի կերակուս
եւ յըմպելիս զիրեանց գործակալս մատուցանեն, կոռով եւ պա-

նակութեամբ⁵ Եեղեմ և զողորմելի եղբարսն շարշարեն անխղճաբար. որում պարտ և արժան էր հոգալ և խնամել յիրաքանչիւր վաստակոց, ի կալոյ և ի հնձանէ և յամենայն արմտեաց տալ մասն և բաժին և մխիթարել զսիրտս նոցա և բժշկել զվէրս նոցա, զի եղիցին արժանաւորք մեծաց վարձուց և պարգևաց ի փառաւոր գալստեան Որդւոյն Աստուծոյ»:

«Ազատ»-ների միջամտութիւնը եղեցական՝ գործերում բացատրվում է մասամբ նրանով, որ եկեղեցիները, վանքերը և եկեղեցական այլ հաստատութիւնները կառուցվում էին կամ պահպանվում մեծ մասամբ ազնվական տոհմերի միջոցներով, որոնք այդ հաստատութիւնների նկատմամբ ունեին հսկողութեան և հովանավորութեան պարտականութիւններ, հավանորեն, նաև հատուկ իրավունքներ, որ միջնադարյան արեմտյան երկրներում անվանվում էր patronat: Փարպեցու վկայութիւններից, օրինակ, գիտենք, որ հինգերորդ դարի վերջերում էջմիածնի Կաթողիկէ եկեղեցու նկատմամբ Վահան Մամիկոնյանն ունեցել է խնամակալութեան և տնօրէնութեան իրավունքներ⁶:

Ֆեոդալական միջավայրի ազդեցությամբ եկեղեցական կազմակերպութիւնը, ինչպես տեսնում ենք, թե՛ նախարարական Հայաստանում և թե՛ միջնադարյան Եվրոպայում ենթարկվել էր գրեթէ նման կերպարանափոխման:

Հայ հոգևորականութեան համար բնորոշ էր սակայն, որ նա հավասարեցված լինելով «ազատ»-ների դասին, իր կենցաղի ու վարքութեան վերաբերմամբ ենթարկվել էր մեծ շափով զինվորական այդ ազնվականութեան ազդեցության:

Զինվորական այդ դասի անդամներն էին հաճախ, որ հոգևորական էին դառնում և ստանձնում բարձր պաշտոններ եկեղեցու ղեկավարութեան մեջ, նաև վանքերում: Մինչև հոգևորական ձեռնադրվելը զինվորական էր, ինչպես հայտնի է, Ներսէս Ա. կաթողիկոսը: Նրա հայրը և հորեղբայրը Աթանաղինեսը և Պապը՝ չկամեցան ստանձնել իրենց հոր հոգևորական բարձր պաշտոնը և գերադասեցին մնալ զինվորական ծառայութեան մեջ: Կորյունի վկայութիւնից հայտնի է նույնպէս, որ Մեսրոպ-Մաշտոցը հոգևորա-

⁵ «Կոռով և պահակութեամբ» մեր ուղղածն է փոխանակ «կռուով և պատուհասիւ», տե՛ս այդ մասին «Հայաստանի արքունի հարկերը մարզպանութեան շրջանում», «Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի», 1926, № 1, էջ 39:

⁶ Տե՛ս «Թուղթ Վահանայ Փարպեցոյ», Տփղիս, 1904, էջ 196—198:

կան դառնալուց առաջ դիվանադարի պաշտոնով ծառայում էր արքունիքում և առաջագոյն էր նաև զինվորական արվեստում:

Թե որքան մեծ է եղել զինվորական կենցաղի ազդեցութիւնը եկեղեցականների վրա՝ երևում է Փափստոսի հետաքրքրական մի տեղեկութիւնից: Նրա պատմելով՝ շորրորդ դարում Զաւեն կաթողիկոսը կարգադրած է եղել, որ քահանաները հագնեն զինվորական զգեստ: Ուշագրավ է նաև այն, որ հոգևորական դասի անդամները, որոնք մեծ մասամբ «խոստակդար» էին և համարվում էին իրավապես ճազատաց տոհմ»-ում, թողնում էին հաճախ իրենց կարգը և ծառայում հեծելազորքի մեջ: Հայտնի է նույնպես, որ հայ եկեղեցին՝ դեմ լինելով հոգևորականութեան զինվորամով այդ բարքերին, համաձայն եկեղեցական ժողովների հատուկ կանոնների արգելում էր թե՛, ընդհանրապես, զինվորների սպասավորութիւնը եկեղեցիներում և թե՛ վերոհիշյալ սովորութիւնները:

Հին հոգևորականութեան ավատական կենցաղի առանձնահատուկ այդ կարգերը, որ հետևանք էին նախարարական միջավայրի և զինվորական ազնվականութեան ազդեցության, այնքան կարևոր մի փաստ է, որ անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ մասին մեզ ծանոթ կարևորագույն վկայութիւնները:

1. Փաւստոս, IV, Գ, էջ 69՝

«Այլ ի ժամանակին յայնմիկ էր [Ներսէս] ի վառ գիւտորութեան ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ և արտաքոյ»:

2. Նույնը, III, ԺԳ, էջ 35՝

«Այլ [Պապ և Աթանագինէս] իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, և պանծացեալք յիւրեանց յանցաւոր սնոտի ի մարմնաւոր տոհմականութիւնն ազգականութեան, զինտրակաւն զվառն ընտրեցին»:

3. Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ վարդապետի, Վենետիկ, 1894, էջ 13—14՝

«Ի մանկութեան տիսն վարժեալ [Մաշթոց]՝ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինտրակաւն արուեստին իւրոց զօրականացն»:

4. Փաւստոս, VI, Բ, էջ 271՝

«Զի ամենայն քանակայից ուռայց [Զաւեն] առնել հանդերձ՝ զինուորաց».

5. «Կանոնք Դուռայ ժողովոյն», հրատ. Մխիթար վարդապետի և Սիրական Տիգրանյանի, էջ 12 (կան. 2)՝

«Ումանք յովսէփ եկեղեցւոյ զկարգ եւ զպաշտօն քողին եւ զճեմարանին ստացան. արդ եթէ դառնան ի շար ճանապարհէն՝ օրհնեալք են ի Տեառնէ և ընկալեալք ի մէնջ. ապա թէ ոչ՝ իշխանութիւն լիցի վարդապետին զշնորհս եկեղեցւոյն հանել յայնպիսեացն և արժանաւոր քահանայից և պաշտօնէից մերձաւորաց տալ».

6. «Կանոնք Սահակայ», հրատ. Արս. Ղլտճյանի, Զ, էջ 18՝

«Այլ զտգէտս և զզինուորս ամենեւին իսկ պարտ է որոշել ի շնորհէն վայելից».

7. Նույնը, ԽԶ, էջ 40՝

«Արդ մի՛ ոք զայսպիսի տեսչութիւնս զինուորաց կամ տգիտաց ումեր հաւատասցէ».

8. Նույնը, ԽԸ, էջ 43—44՝

«Եւ դուք յընչասիրութիւն և ի կաշառս կործանիք, և զգարչելիս զպատուիրազանցս և զզինուորս և զտգէտս հաւատարիմ համարիք ի գործ սպասաւորութեան եկեղեցւոյ».

9. «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», հրատ. Ա. Ղլտճյանի, ԺԲ, էջ 110—111՝

«Եւ մի զձեւ զինուորաց հանդերձի ունել և ի կարգի պաշտօնէից կալ».

Հմմտե նաև «Կանոնք Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի», հրատ. Ա. Ղլտճյանի, Բ, Գ, Դ, էջ 203—204:

Ամփոփելով մեր ասածները՝ կարող ենք եզրակացնել, որ հայ եկեղեցւոյ ֆեոդալականացումը նախարարական Հայաստանի ուշագրավ երևույթներից մեկն է: Եկեղեցական դասի հզորութիւնը թե՛ Հայաստանում և թե՛ միջնադարյան Եվրոպայում հիմնված է եղել կալվածատիրութեան վրա: Հայ հոգևորականութիւնը, համասարեցված լինելով «ազատ»-ների դասին, Արշակունյաց ժամանակ ունեցել է ապահարկութեան նման արտոնութիւններ, ինչպես և ազնվականների իշխող դասը: Ուշագրավ են մասնավորապես եկեղեցական պաշտօնների ժառանգական լինելը որոշ տոհմերում, ինչպես և feod-«խոտտակ»-ների գոյութիւնը, որոնք ժառանգա-

կան օգտատիրության իրավունքով տրվում էին հոգևորականներին։ Այս վերջին երկու առանձնահատկությունները հայ եկեղեցու նախարարականացման ամենացայտուն ցուցանիշներն են։

7. «ՇԻՆԱԿԱՆ»-ՆԵՐԸ ԵՎ «ՌԱՄԻԿ»-ՆԵՐԸ

Վերև մենք տեսանք, որ ֆեոդալիզմի շրջանում տնտեսապես և քաղաքականապես առաջնակարգ և գերիշխող դեր էր կատարում խոշոր կալվածատիրությունը։ Նույն շրջանում՝ իբրև արտադրության հիմնական ճյուղ՝ գերակշռող նշանակություն ուներ, բնականաբար, գյուղատնտեսությունը։ Գյուղացիությունն էր, անշուշտ, կամ շինականությունը բնակչության այն արտադրող և աշխատող շերտը, որ ապրուստի միջոցներ էր հայթայթում կալվածատեր ազնվականության և հանդիսանում Հին Հայաստանի տնտեսության գլխավոր նեցուկը։

Շինական դասի սոցիալական-տնտեսական վիճակը Հին Հայաստանում հայոց ներքին կյանքի ամենադժվար ուսումնասիրելի խնդիրներից մեկն է։ Մատենագրական աղբյուրները տալիս են այս դասի մասին պատահական և խիստ աղոտ ու անորոշ վկայություններ։ Աղբյուրների այդ մոլթ ու վիճելի ականարկները քննության են առնված «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» ընդարձակ իմ աշխատության մեջ (տե՛ս Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր, № 1, Երևան, 1925, էջ 3—45)։ Նույն աշխատության մեջ մանրամասն խոսել ենք նաև «ռամիկ»-ների մասին։

Այստեղ մենք անհրաժեշտ ենք համարում մեջ բերել հիշյալ աշխատության հիմնական եզրակացությունները մի քանի կարևոր լրացումներով։

Կանգ առնենք նախ «ռամիկ» տերմինի վրա, որի ստուգաբանությունը, ծագումը և բուն իմաստը, ինչպես ցույց ենք տվել վերոհիշյալ մեր աշխատության մեջ (էջ 22—25), սխալ են մեկնված նորագույն ուսումնասիրություններում։

Ուղիղ պետք է համարել, անտարակույս, Հյուբշմանի բացատրությունը։

Պրոֆ. Հ. Հյուբշմանը «ռամիկ» բառը թարգմանում է „gemeines Volk, gemein, weltlich, Lale“ և կարծում է, որ հայերեն «ռամ» և «ռամիկ» փոխառություն են պարթևերենից (= *ramīk) և համապատասխանում են նոր պարսկերեն ram և rama բա-

ոերին, որ նշանակում են «խումբ, հոտ» (Armenische Grammatik, s. 233): Համաձայն այս բացատրության «ռամիկ»-ի սկզբնական նշանակությունը պետք է լինի՝ հասարակ կամ խաժամուժ ժողովուրդ: Եվ իրավի՛ հենց այս նշանակությամբ գործ է ածված «ռամիկ»-ը պատմական ու մատենագրական աղբյուրներում:

Նույն աղբյուրների քննությամբ շատ պարզ որոշվում է, որ «ռամիկ»-ները կազմել են Հին Հայաստանի բնակչության ստորին խավը և որպես այդպիսին հակադրվել են, ինչպես և «չինական»-ները, «նախարար»-ներին, «սեպուհ»-ներին, «ազատ»-ներին, նաև հոգևորականներին ու «ոստանիկ»-ներին:

Նրանց ստորադաս այդ դրությունը երևում է հետևյալ վկայություններից.

1. Ղազար Փարպեցի, II, ԼԴ, էջ 64 (Տփղիս, 1904)՝

«Եւ զորոց գիտէր [Վասակ] զհոլովումն ի վատթար կողմն, և ոչ ուղղակի ի խորհուրդ ուխտապահութեանն՝ ի տանուտերացն Հայոց և ի սեպհացն, որք էին երեւելագոյնք, և յայլ ռամիկ բազմութենէն՝ զայնս արգելեալ առ իւր պահէր».

2. Մովսէս Խորենացի, II, ՂԲ, էջ 246 (Տփղիս, 1913)՝

«Սա [Տրդատ] յետ հաւատոցն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ՝ ևս քան զևս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան. սաստելով և հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն և զամենայն բազմութիւն ռամիկին».

3. Ղազար Փարպեցի, II, ԽԱ, էջ 73՝

«Քանզի բազմութիւն փախստէիցն հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք, դիմեալ ի լերկիրն Տայոց՝ ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ».

4. Նույնը, III, ՀԱ, էջ 128՝

«Եւ առեալ ընդ իւր զնախարարսն և զազատս և զայլ ամենայն ռամիկն»:

Ուշադրության արժանի է այս և ուրիշ շատ վկայությունների մեջ, որ ամեն անգամ երբ սոցիալական ավելի բարձր դասերի կողքին հիշատակվել են ռամիկները, միանգամայն ավելորդ է եղել հիշել նրանց հետ միասին նաև շինականներին: Եվ այդ շատ լավ հասկանալի է: «Ռամիկ» բառն ինքն արդեն նշանակում էր հասարակ ժողովուրդ և մատնանշում էր ժողովրդի ամբողջ բազմությունը, որ չէր պատկանում ազնվական կամ հոգևորական դասերին: Նույն բառի տակ շատ պարզ է, որ արդեն իսկ հասկացվում էր և շինականությունը:

Որ շինականները «ռամիկ մարդիկ» էին, այդ պարզ երևում է մի քանի վկայություններից, որոնց մեջ նրանց «ռամիկ» լինելն առանձնապես շեշտված է.

1. Փաւստոս, III, ԻԱ, Վենետիկ, 1889, էջ 54՝

«Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն».

2. Խորենացի, III, է, էջ 263՝

«Նւ զգաւառս իշխանութեան նորա սրով դատի [Մանաճիհ] յանխնայ, ոչ միայն զմարտիկս, այլ և զռամիկ շինականս».

Շինականների «ռամիկ» լինելը, ինչպես տեսնում ենք, միանգամայն անվիճելի է:

Բայց կարելի՞ է արդյոք դրանից հետևցնել, ինչպես այդ անում են բանասերները, որ «ռամիկ» բառը և «շինական»-ը հոմանիշներ են և գործ ենածվել սոցիալական միևնույն դասի համար:

Այս եզրակացությունը, որ սովորական է ու ընդհանուր բանասիրական ու պատմական բազմաթիվ աշխատություններում, թվում է ինձ, որ հիմնավոր չէ: «Ռամիկ» շին Հայաստանում կոչվել են ո՛չ միայն շինականները, այլև քաղաքների րնակչության ստորին խավերը:

Ղազար Փարպեցին պատմում է, որ Վահան Մամիկոնյանը, ստանալով Դվին քաղաքում իր մարզպանության հրովարտակը, գնում է իսկույն եկեղեցի:

«Առեալ զհրովարտակն,—ասում է Փարպեցին,—խնդրէր վաղ-վաղակի անդրուվար՝ երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ և հարսուներ անգամ յառազաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին դամօթ հարսնութեան՝ դիմեալ ընթանային յեկեղեցին» (III, ԴԹ, էջ 178):

«Ռամիկ»-ները, որ հիշատակված են այս հատվածում, ո՛չ թե քացառապես «շինական»-ներն են, այլ քաղաքի րնակչության ստորին խավերը՝ արհեստավորները, թերևս նաև մանր առևտրականները և այլն, որոնք՝ շինականներից միանգամայն տարբեր սոցիալական հատուկ դասակարգեր էին:

Նույն այս նշանակությունն ունի «ռամիկ»-ը նաև Հովհաննես կաթողիկոսի պատմության հետևյալ հատվածում.

«Զայտու ժամանակաւ ահագին իմն յեղակարծումն ժամու սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դվին քաղաքի՝ բազում սասանումն և սարսափումն և զղրղումն և կործանումն զքնակշօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր։ Վասն զի առհասարակ ի վայր փլուղեալ զպատուար պարսպացն և զապարանս զխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանէր» (Թիֆլիս, 1912, էջ 162)։

Այս վկայութեան մեջ ևս խոսքը, անշուշտ, քաղաքարնակ հասարակ ժողովրդի տների մասին է և ո՛չ շինականներին։

Մեր այս քննութիւնից, ինչպես և Հյուբշմանի վերոհիշյալ ստուգաբանական մեկնութիւնից, կարծում եմ, կարելի է հետեցընել, որ «ռամիկ» բառը սկզբնական իր նշանակութեամբ մոտավորապես համապատասխան պիտի լիներ գերմաներէն Menge, Masse և ռուսերէն толпа, масса բառերին, որ հաճախ գործ են ածվել հասարակ, խաժամուժ ժողովրդի իմաստով։

Ուշադրութեան արժանի է այդ տեսակետից, որ ոսկեդարյան շրջանի հայերեն թարգմանութիւններում «ռամիկ» բառը մեծ մասամբ համապատասխանում է հունարեն δέμος և demotēs բառերին, որոնք հետքիստոնեական մատենագրութեան մէջ ունեցել են նույնպես, գլխավորապես, խառնիճադանջ բազմութեան, ամբոխի ու հասարակ ժողովրդի իմաստ։

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «ռամիկ»-ը ո՛չ թե հոմանիշ է «շինական» բառի, այլ նրա նշանակութիւնն ավելի ընդարձակ է ու ընդհանուր։

«Ռամիկ» կարող էին անվանվել ո՛չ միայն «շինական»-ները, այլև, ընդհանրապես, ժողովրդի ամբողջ բաղմութիւնը, լինելու նա գլուղացի թե քաղաքացի, եթե նա չէր պատկանում ազնվական կամ հոգևորական դասերին։

Որովհետև Հին Հայաստանը, գլխավորապես, երկրագործական ու գլուղացիական երկիր էր, շատ բնական է, որ այստեղ «ռամիկ»-ների ստվար մեծամասնութիւնը կազմում էին «շինական»-ները։

Անցնենք այժմ «շինական»-ների դրութեան որոշման Հին Հայաստանում։

«Շինական»-ների սոցիալական դրութեան մասին պատմական ու մատենագրական աղբյուրների տեղեկութիւնները թեև շատ քիչ են ու անորոշ, սակայն այդ տեղեկութիւններից իսկ երևում է, որ «շինական»-ները, լինելով Հին Հայաստանում առանձին դաս

(состояние: Stand, état), կազմել են երկրի գլխավոր հարկատու-
ութիւնը:

Ուշագործյան արժանի է առանձնապես, որ Դվինի իննեորդ
կանոնում եկեղեցականների «ազատութիւն»-ը հակադրվում է «շի-
նական»-ների անազատ դրության, որ անվանվում է «ծառայու-
թիւն», «ստրկութիւն» կամ «բաժին և վիճակ ծառայութեան»:

Վերև մենք ասացինք, որ «ծառայ» և «ծառայութիւն» բառերը
գործ են ածվել Հին Հայաստանում զանազան նշանակութեամբ:
Նրանք, նախ և առաջ, պետական ու նախարարական կյանքի հա-
տուկ տերմիններ են, որ ցույց են տալիս ամեն մի ստորին դասի
կապը և կախումն ավելի բարձր դասից: «Ծառայութիւն» էին ան-
վանվում այն բոլոր պարտականութիւնները, որ ունեին հայ Ար-
շակունիների գերիշխանութեան տակ գտնվող նախարարները թա-
գավորի և «ազատ»-ներն իրենց «տէր»-երի հանդեպ: Ինչպես և
միջնադարյան Եվրոպայում, նրանք «ծառայ» էին անվանվում
վասալի իմաստով: Նույն բառերը նշանակում էին նաև ստրուկ և
ստրկութիւն, սպասավոր և սպասավորութիւն, ուստի և թարգմա-
նական մատենագրութեան մեջ նրանք համապատասխանում են
հունարեն *doulos*, *therapōn*, *douleia* բառերին: Իբրև հատուկ
տերմիններ Հին Հայաստանի նախարարական կազմակերպութեան,
նրանք կարող են համեմատվել, ինչպես ցույց է տվել Նիկ. Ադոն-
ցը, ֆեոդալական Եվրոպայի *servus*, *servitium* և Ռուսաստանի
слуга, служба բառերի հետ («Армения в эпоху Юстиниана»,
стр. 459).

Աղքատների վկայութիւններից դժվար չէ տեսնել, որ ազնվա-
կան դասի «ծառայութիւն»-ը Հին Հայաստանում իր էութեամբ
տարբեր է եղել շինական դասի «ծառայութիւն»-ից:

Մինչդեռ «ազատ»-ների և «նախարար»-ների «ծառայութիւնն»
ունեցել է մոտավորապես վասալական հպատակութեան բնույթ և
այդ «ծառայութեան» գլխավոր հիմքը կազմել են նրանց զինվո-
րական պարտականութիւնները, «շինական»-ների «ծառայութեան»
բուն էութիւնը կազմել են, ընդհակառակը, հարկատվութիւնը, գուցե
և նրանց անձնական որոշ պարտականութիւնները կալվածատեր
«ազատ»-ների, «նախարար»-ների ու արքունի իշխանութեան հան-
դեպ, որ դեռևս մուլն են և կարոտ են հատուկ քննութեան:

Իմ կարծիքով, «շինական»-ների «ծառայութեան» տնտեսական
այդ կողմը շատ լավ արտահայտված է հայոց հնագույն մատենա-

դրության ուշագրավ մի դարձվածքի մեջ, որը մինչև այժմ դեռ բավարար կերպով մեկնված չէ:

Փափստոս Բյուզանդը, նկարագրելով Հայաստանի ապստամբ ծայրագավառների նվաճումը, Մուշեղ Մամիկոնյանի ջանքերով, նրանց բնակչության մասին մի քանի անգամ կրկնում է հետևյալ դարձվածքը. «Եւ զբնակիս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր» (Վենետիկ, 1889, V, Թ, էջ 214). «ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր» (Փաւստոս, V, ԺԹ, 217). «և ինքեանք կային ի հարկի ծառայութան» (նույնը, V, ԺԸ, էջ 217):

Նիկ. Ադոնցը ենթադրում է, որ «ի հարկի կացուցանել» կամ ալեւի լրիվ՝ «ի հարկի ծառայութեան կացուցանել» նշանակում է ո՛չ թե հարկ դնել («наложить дань») այլ հնազանդեցնել («привести в подчинение», «заставить подчиниться», տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 480): Այս ենթադրությունը ես համարում եմ միանգամայն անհաջող: Նիկ. Ադոնցը հենց ինքը շատ ճիշտ դիտել է, որ Փափստոսը երկու ուրիշ հատվածում «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» դարձվածքների փոխարեն ունի՝ «հարկ դնէր մնացորդացն».

1. «Հարկանէր Մուշեղ սպարապետն,— պատմում է նա,— և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր հաբկ մնացորդացն, և առնոյր պանդանդս» (V, Ժ, էջ 214):

2. «Եւ զկողմանսն Մարաց, քանդի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս. և գերէր զբազումս ի նոցանէն, և մնացորդացն դնէր հաբկս, և առնոյր պանդանդս» (V, ԺԱ, էջ 214):

Այս և համապատասխան նախորդ հատվածների համեմատությունից արդեն պարզ երևում է, որ «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» դարձվածքները գործ ենածված Փափստոսի մոտ հարկ դնելու և ո՛չ հնազանդեցնելու իմաստով:

Նորայր Բյուզանդացին, քննության առնելով Փափստոսի նույն դարձվածքների իմաստը, ենթադրում է, որ ոսկեդարյան թարգմանությունների խմբերից մեկում փոխանակ ի հարկի ծառայութեան կացուցանեմ՝ կայ «արկանեմ ընդ հարկաւք ծառայութեան» (Գ. Թագ. Թ, 21) կամ «ածեմ ի հարկատուս» (Բ. Մնաց. Ը, 8. տե՛ս «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս, 1900, էջ

367)։ Այս համեմատութիւնները ևս ցույց են տալիս, որ մեր եզրակացութիւնը վերոհիշյալ դարձվածքների մասին միանգամայն ճիշտ է։

Իմ կարծիքով, «Ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն»-ը հատուկ ու առանձին մի տեղում է, որով որոշվում էր «շինական»-ների «ծառայութեան» հիմնական բնույթը։ «Ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն»-ը, լինելով «շինական»-ների գլխավոր պարտականութիւնը, տարբերվել է անախարար»-ների ու «ազատ»-ների «ծառայութիւն»-ից հատկապես նրանով, որ նրա սոցիալական-տնտեսական հիմքը կազմել է հարկատվութիւնը, որից ազատ են եղել ազնվական արտոնյալ դասերը։

Արդ՝ եթե «շինական»-ների «ծառայութիւն» անվանվել է «Ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն», աղբյուրների վկայութիւններից դժվար չէ նաև կռահել, որ ազնվականների զինվորական կամ «գործակալ»-ական «ծառայութիւն»-ը, նմանապես և հոգևորականների «ծառայութիւն»-ը, համարվել են «ի սպասու ծառայութիւն», իսկ ստրուկներին՝ «ի ստրկաց կարգի ծառայութիւն» կամ «ծառայութիւն ստրկութեան»։

«Մառայութիւն»-ների այս տարբեր բնույթը և հատուկ բովանդակութիւնն ակնարկված են մատենագրական հետևյալ վկայութիւններում.

1. Փաւստոս, III, Ե, էջ 11՝

«Քանզի ոչ երկրատու զաւակի ցանկացեալ էր [Յուսիկ], այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու պաշտաման ծառայութեան տեառն կացցեն».

2. Նույնը, IV, Բ, էջ 68՝

«Թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին ինն հարեւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զոտնկայս գործակալութեանն սպասու».

3. Նույնը, V, ԼԱ, էջ 237՝

«Եւ զայն ի սպասու կացուցանէր [Պապ] յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն».

4. Նղիշէ, I, էջ 18—19 (Վենետիկ, 1864)՝

«Եւ անմեղութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին, խաղացին զնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ

և անտրտում խնդութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարեալք զսպաս զինուորութեան աներկբայ վաստակովք».

5. Ղազար Փարպեցի, III, ՂԶ, էջ 176՝

«Իսկ յաղագս տէրութեանն Արծրունւոյն թո՛ղ վայր մի, զի գիտասցեն մարգիկն [թէ] որ ի տոհմէն են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել».

6. Խորենացի, II, Ծ, էջ 178՝

«Զի վասն միոյ քինի ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել».

7. Փաւստոս, III, ԺԴ, էջ 41՝

«Սւ ոչ երբէք պակասեսցէ լուծ շար ստրկութեան ծառայութեանն ի պարանոցաց ձերոց»:

«Ի հարկի ծառայութեան» մասին շատ հետաքրքիր է Ղազար Փարպեցու վկայութիւնը, որը սակայն վերաբերվում է ո՛չ թե Պարսկական Հայաստանին, այլ Պարսկական Ասորեստանի Շափուկ կոչված գավառին:

Խոսելով Աբրահամ Խոստովանողի ու Խորեն երեցի մասին, Փարպեցին պատմում է, որ Պարսից Հազկերտ Բ. Թագավորը (439—457 թ.) հրամայում է, որ նրանք հանձն առնեն պատվել կրակը, իսկ եթե ո՛չ՝

«Պատուհաս կրեսցեն խնդութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն, և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց» (II, ԾԸ, էջ 105):

Որովհետեւ սրանք համառում են և չեն կատարում Թագավորի հրամանը, ուստի և, ինչպես վկայում է Փարպեցին՝

«Կտրեալ զերկոցունց զականջսն՝ ետուն տանել յԱսորեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Շափուկ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի» (II, ԾԸ, էջ 106):

Այստեղ Խորեն երեցը մի քանի տարուց հետո մեռնում է, իսկ Աբրահամ երեցը տեղացի քրիստոնյաների օգնութեամբ ազատվում է և վերադառնում Հայաստան:

Փարպեցու վկայութեան մեջ կարևոր է առանձնապէս այն, որ Աբրահամ Խոստովանողի ու ընկերոջ մշակութեան վրճակն անվանվում է «Ի հարկի» կացութիւն «մինչև ցվախճան»:

Նրան ազատելու համար տեղացի քրիստոնյաները ո՛չ թե փրկանք են տվել, ինչպես կարծում է Գարագաշյանը («Քննական

պատմութիւն Հայոց», մասն Դ, Թիֆլիս, 1895, էջ 209), այլ, հա-
վանաբար, երաշխավորել են վճարել նրանից հասանելիք հարկը:
«Իսկ երանելի երէցն Աբրահամ,— ասում է Փարպեցին,—
երաշխաւորութեամբ հաւատացելոց աշխարհին, որը զտունս իւ-
րեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս
ցվախճան նորա, և կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս
նորա» (II, ԾԸ, էջ 106):

Անհավանական չի լինի ենթադրել, որ հավատացյալների այս
երաշխավորութիւնն ունեցել է համերաշխիքի բնույթ (круговая
поручка):

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, Աբրահամ խոստովանողը, լի-
նելով Ասորեստանում «ի հարկի» ծառայութեան մեջ, գտնվել է
հարկատու այնպիսի վիճակում, որին կապված է եղել մինչև ցմա՛հ
և որից ազատվելու համար անհրաժեշտ է եղել հավատացյալ
բնակչութեան համերաշխիքն այն հարկերի համար, որ նրանից
ստացվելու էր մինչև նրա վախճանը:

Փարպեցու վկայութիւնը վերաբերվում է Ասորեստանում
գտնվող «արքունի մշակներին» և պարզ չէ, թե արդյոք այս «ար-
քունի մշակները» սովորական արքունի գյուղացիներն էին, թե
աքսորվածների հատուկ մի խումբ: Վերջին ենթադրութիւնն ինձ
թվում է անհավանական: Փարպեցու վկայութեան բովանդակու-
թյունից երևում է, որ «արքունի մշակը» անվան տակ կարելի է
հասկանալ արքունի գյուղացիներին, որոնց գլխավոր պարտակա-
նութիւնը եղել է «ի հարկի» ծառայութիւնը:

Արդ՝ ամենակարեւորը նույն վկայութեան մեջ այն է, որ հար-
կատու այդ դրութիւնից անկարելի է եղել կամովին դուրս գալ,
այլ անհրաժեշտ է եղել նախապես երաշխավորել արքունի բոլոր
հարկերի վճարումը: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ արքունի
գյուղացիներին թույլատրված է եղել հարկային պարտականու-
թիւնների ապագնումը և այդ տեսակետից նրանց իրավական
դրութիւնը նման է եղել արևմտյան կոլոնների դրութեանը:

Թեև Փարպեցու վկայութիւնը վերաբերվում է Պարսկական
Ասորեստանին, բայց, ինչպես կտեսնենք, Հին Հայաստանում ևս
«շինական»-ները, գտնվելով «ի հարկի ծառայութեան» վիճակում,
իրավունք չեն ունեցել ինքնակամ կերպով թողնել այդ ծառայու-
թիւնը և, ըստ երևութիւն, ժառանգաբար կապված են եղել իրենց
զբաղմունքին, հողին ու հարկատու դրութեանը:

Սոցիալական ու տնտեսական ներքին կարգերի համեմատու-

մը Հայաստանում և Պարսկաստանում ինքնին հետաքրքիր մի խնդիր է, որը, իհարկե, դեռ կարոտ է հիմնավոր ու լուրջ ուսումնասիրության:

Հին Հայաստանը, որ Արշակունյաց թագավորության ժամանակ մեծ չափերով ենթարկվել էր Պարթևական Պարսկաստանի քաղաքական և կուլտուրական ազդեցությանը, շատ հավանական է, որ իր սոցիալական-տնտեսական կենցաղով բավական նման պիտի լիներ հարևան Պարսկաստանին: Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում այդ նմանությունը կարող էր ավելի ևս մեծ լինել, որովհետև մարզպանական Հայաստանը ենթարկված էր Պարսկաստանի անմիջական իշխանությանը:

Այս տեսակետից, հին իրանական ներքին կյանքի լուսաբանությունն ունի նշանակություն նաև Հին Հայաստանի համար:

Դժբախտաբար, շինական դասի դրույթյան խնդիրը, թե՛ Պարթևական և թե՛ Սասանյան Պարսկաստանում, փաստական տեղեկությունների աղքատության պատճառով նույնքան անորոշ է, ինչպես և Հին Հայաստանում: Դրական ու հաստատուն արդյունքներ ստացվել են առայժմ, գլխավորապես, լեզվագիտության մեջ, և նորագույն այդ ուսումնասիրություններից երևում է, որ հին հայերենում գյուղացիության վերաբերյալ սոցիալական ամենակարևոր տերմիններն իսկ, ինչպես՝ շեն, շինական, ռամիկ, անազատ և այլն, փոխառություն են պարսկերեն կամ ավելի ճիշտ՝ պարթևավերեն լեզվից:

Տեսնենք այժմ՝ հնարավոր չէ՞ արդյոք գեթ հավանական ընդհանուր գծերով որոշել «շինական»-ների իրավական դրույթունը Հին Հայաստանում:

Պրոֆ. Ի. Զավախովը, քննության առնելով այս խնդիրը, հանգել է այն եզրակացության, որ «շինական»-ներն ազատ չեն եղել, այլ ստորադրված են եղել ազնվականներին: Նրա եզրակացության գլխավոր ու միակ հիմքն այն է, որ մատենագրական աղբյուրներում «շինական»-ները հակադրվել են «ազատ»-ներին և անվանվել «անազատ» (Государственный строй древней Грузии и древней Армении, стр. 134).

Իմ կարծիքով, Զավախովի մատնացույց արած միակ այս ապացույցն ամուր ու հաստատուն չէ:

Միանգամայն ուղիղ է, որ «շինական»-ները Հին Հայաստանում եղել են «ազատ»-ներին հակադիր առանձին դաս և նրանք նույնիսկ աղբյուրներում կոչվել են հաճախ «անազատ»-ներ, սա-

կայն այդ փաստն ինքնին գեռ բավական չէ, որ նրանց կարելի լինի համարել ո՛չ ազատ այդ բառի այժմյան իրավական իմաստով: «Ազատք» և «անազատք» թեև թարգմանվել են ռուսերեն՝ «свободные» և «несвободные», սակայն այդ թարգմանության դեմ կարող են լինել լուրջ առարկություններ: Ավելի ուղիղ կլինի այդ բառերը թարգմանել «азаты» և «неазаты»:

Անթուլյատրելի է, ընդհանրապես, հայոց իրավական ու սոցիալական հին տերմինները, ինչպես՝ «անազատ», «ազատ», «սեպհական», «սեպհականութիւն», «նախարար», «նախարարութիւն» և այլն՝ թարգմանել կամ լուսաբանել այդ բառերի ժամանակակից աշխարհաբարի իմաստի համեմատ, այլ հարկավոր է ամեն անգամ որոշել իրավական այն հատուկ բովանդակությունը, որ նրանք ունեցած պիտի լինեն Հին Հայաստանում:

«Շինական»-ների «անազատ» լինելը, այսինքն՝ «ազատ»-ների դասին չպատկանելը՝ դեռևս ապացույց չէ նրանց ճորտական վիճակի: Հին Ռուսաստանում, օրինակ՝ «սմերդները» (смерды), որոնք նույնպես իբրև առանձին դաս հակադրվել են ազնվական ավելի բարձր դասերին և եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը, իրավական իրենց դրությամբ եղել են ազատ:

Որպեսզի կարելի լինի ցույց տալ «շինական»-ների անազատ լինելն այդ բառի այժմյան հասկացությամբ, անհրաժեշտ է, ինչպես տեսնում ենք, ուսումնասիրել նրանց իրավական դրության վերաբերյալ նյութերը շատ ավելի մանրազնին կերպով, քան այդ արել է Ի. Զավախովը:

Հիմնական խնդիրը, որ հարկավոր է դեռ լուծել «շինական»-ների վերաբերմամբ այն է, թե արդյոք նրանք եղե՞լ են կապված հողի հետ, ինչպես միջնադարյան ճորտերը, և արդյոք նրանց կախումը կավածատեր ազնվական դասից տնտեսական է եղել միայն, թե նաև անձնական:

Մատենագրական աղբյուրները, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս քննության առնել ու լուսաբանել այդ խնդիրը հանգամանորեն, իր բոլոր մանրամասնություններով. ինչպես այդ արված է նորագույն ուսումնասիրություններում Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի գյուղացիության նկատմամբ: Աղբյուրների մեջ կան միայն կողմնակի մի քանի ցուցումներ, որոնցից, իմ կարծիքով, կարելի է հետևել, որ նախարարական Հայաստանում ևս «շինական»-ները գտնվել են, ընդհանուր առմամբ, ճորտանման վիճակում:

Այդ ցուցումներէց ամենից ուշագրաւն է Դվինի ժողովի հետեւյալ կանոնը.

Կանոնք Դուռայ, Վաղարշապատ 1905, հրատ. Մխիթար վարդապետի և Սիրական Տիգրանյանի, Թ, էջ 19՝

«Ճորժամ ազատք զիրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք շարակնութեամբ առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ շանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել, մոլեալք և մոլորեալք ի քրիստոնէական հաւատոյս»:

Դվինի այս կանոնից պարզ երևում է, որ երդերն ու մարդիկ եղել են ժառանգական բաժանման առարկա, ուստի և հաւանական է ենթադրել, որ նույն այդ գույքը կարելի է եղել նաև գնել, վաճառել, ընծայել, կտակել և այլն: Միանգամայն պարզ է նաև, ինչպես երևում է նույն կանոնի շարունակութիւնից, որ երդերի ու մարդկանց այս բաժանումը վերաբերվում է «ազատ»-ներին պատկանող «շինական»-ներին:

Արդ՝ ի նկատի ունենալով, որ «շինական»-ները համարվել են կալվածատեր ազնվականութեան հատուկ գույքը, ինչպես և նույն կանոնի հետաքրքիր ակնարկները «շինական»-ների «ծառայութեան» և «ստրկութեան» մասին, վերոհիշյալ իմ աշխատութեան մեջ («Դիտողութիւններ», էջ 33) ես հավանական էի համարել, որ «շինական»-ները պետք է լինեին ճորտացած և կապված հողին:

Թադ. Ավդալբեգյանն իր «Հաս, սակ ու բաժ» աշխատութեան մեջ (տե՛ս Տեղեկագիր Դիտ. և Արվ. Ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 55—56) մատնացույց է անում այս առթիվ, որ «զերդ և զմարդ» բաժանելը սովորական երևույթ է նաև այժմյան Պարսկաստանում, սակայն գյուղացիք այնտեղ հարկատու են, բայց ճորտ չեն: Այս առարկութիւնն, իմ կարծիքով, համողիչ չէ, որովհետև վերոհիշյալ կանոնում ակնարկվում է նաև «շինական»-ների «ստրկութեան» դրութիւնը:

Դվինի իններորդ կանոնը, որ Մխիթար Դոշի խմբագրութեամբ մեջ է բերված նաև «Դատաստանագրքում» (հրատ. Վահան ծ. վարդ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880, մասն Ա, ՃԶ, էջ 215—216), քննութեան են առել նաև՝ Կարստը և Խ. Սամվելյանը⁷.

⁷ Տե՛ս J. Karst, Sempadscher Kodex, zw. Band, Strassburg, 1905, էջ. 44—45 և Խ. Սամվելյան, Մխիթար Դոշի Դատաստանագրքը, Վիեննա, 1911, էջ 297—299, Այս երկու աշխատութիւնները չեն հիշատակված շինականութեան վերաբերյալ վերոհիշյալ իմ ուսումնասիրութեան մեջ, որովհետև այս աշխատութիւնները ստացվեցին արտասահմանից 1925 թվից հետո:

և նրանք էլ, հիմնվելով այդ կանոնի բովանդակության վրա, հանգել են այն եզրակացության, որ «շինական»-ները գտնվել են ճորտական դրուության մեջ: Խ. Սամվելյանի կարծիքով՝ «շինական»-ները մասամբ մոտիկ նմանություն ունեին բյուզանդական իրավունքին հայտնի *coloni adscriptitii* կամ *ἐναπόγραφοι* անվանված գյուղացիների հետ» (էջ 299): Իսկ Կարստը «շինական»-ներին համապատասխան է համարում *hörig* (зависимый) կոչված կիսաճորտ գյուղացիներին (էջ 44):

Որ գյուղական «երդ»-երը որպես հատուկ գույք պատկանել են ազնվականներին՝ այդ երևում է նաև Մովսես Կաղանկատվացու վկայությունից Աղվանից Վաչե արքայի մասին: Այս արքան, հրաժարվելով գահից, խնդրում է Պարսից Պերոզ թագավորից տալ իրեն սեփական իր բաժինը, որ ստացել էր հորից:

«Իսկ սա հաճեցաւ,—պատմում է Կաղանկատվացին,—միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ» (I, Ժ, հրատ. Մ. էմինի, Մոսկվա, 1860, էջ 14, հմմտե «Նդիշի վարդապետի, Վասն Վարդանաց և հայոց պատերազմին», Վենետիկ, 1864, VIII, էջ 353):

Այս վկայության մեջ ևս «երդ»-երը, ուրեմն և նրանց մեջ ապրող երդավորները, համարվում են հատուկ գույք, որ Վաչեն իբրև սեփական բաժին ստացել էր իր հորից:

Իմ կարծիքով «շինական»-ների իրավական դրությանը կարող է վերաբերվել նաև Ղազար Փարպեցու հետևյալ վկայությունը, որ գտնվում է նրա Վահան Մամիկոնյանին գրած «Թուղթի» մեջ.

Ղազար Փարպեցի, Տփղիս, 1904, էջ 188՝

«Արդ՝ զառաջին կելոյն իմոյ զվարս տէր Ներսէս և Հրահատ Կամսարական գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին: Եւ դու յայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրև զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկտոյն, և ոչ իբրև օտար զոք ի քէն և կամ զծառայ ուրուք. քանզի պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս: Իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Աղան՝ քո տեառն քեռի էր»:

Կարևոր այս վկայությունը, թվում է ինձ, որ սխալ է մեկնված Զարբհանալյանի «Հայկական հին դպրության պատմության» մեջ: Հիմնվելով այս հատվածի վրա, Զարբհանալյանը հնարավոր է համարել եզրակացնելու, որ Ղազար Փարպեցին «ընտիր և ազնուա-

կան ցեղէ էր» (Վենետիկ, 1897, էջ 392)։ Իսկ Փարպեցու այն վկայութիւնը, որ նա Գուգարաց Աշուշայ բղեշխի տանը սնվել ու դաստիարակվել է Վահան Մամիկոնյանի ու նրա եղբայրների հետ («Թուղթ», էջ 188), առիթ է տվել նրան նույնիսկ ենթադրելու, որ Փարպեցին, հավանաբար, ազգական է եղել Մամիկոնյանների տոհմին։

Գրիգոր Խայաթյանցը ևս Փարպեցուն համարում է «ազատ կամ յազգէ ազնուաց», «որդի առն ունեւորի» և հնարավոր է համարում նրա «մերձավոր կամ հեռավոր ազգակցութիւնը» Մամիկոնյանների հետ (տե՛ս «Ղազար Փարպեցի և գործք նորին» Մոսկվա, 1883)։

Այս ենթադրութիւններից և ո՛չ մեկը հավանական չէ։

Վերոհիշյալ հատվածում «ոչ օտար զոք ի քէն» խոսքերով Փարպեցին ակնարկում է, որ ինքն օտար չէ Վահանին, իբրև, նրա սննդակիցը մանկության հասակում։ Որ այդ խոսքերը չեն կարող այլ կերպ հասկացվել և հիմք ծառայել Փարպեցու ազնվական ծագման, այդ ավելի քան պարզ երևում է նույն հատվածի վերջին պարբերութիւնից, որի մեջ Փարպեցին իր ծագման մասին վկայում է, որ իրեն, հոգեւորական դարձնելով, ծառայութիւնից զատուցել և ազատության առիթ է եղել Տեր Ազանը, Վահան Մամիկոնյանի քեռին։

Եթե Փարպեցին «ազատ»-ների կարգն է անցել հոգեւոր կոչում ընդունելուց հետո, սակայն միևնույն ժամանակ, ինչպես ինքն է վկայում, չի եղել «ծառայ ուրուք», ո՛չ էլ «աղքատ ոք ի կազմածէն և ի մանկտուն»⁸, կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ նա եղել է, հավանաբար, շինական Փարպի գյուղից։

Փարպեցու ռամկական այս ծագման մի ակնարկ կարելի է թերևս համարել նրա «Թուղթ»-ի նաև հետևյալ վկայութիւնը (էջ 197)՝

«Դարձեալ այլ շոգմոգ բանիւք զայրացուցանել զքեզ, տէր, ընդ իս փութային, թէ «Մանուկ մի՝ հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել»։

Փարպեցու ծագման մասին այս նոր ու կարևոր ենթադրությամբ ո՛չ միայն որոշվում է նրա շինական ծագումը, այլև լու-

⁸ «Մտառ» Փարպեցու այս հատվածում նշանակում է ըստ իս ստորև, իսկ «մանկտի» համապատասխանում է, հավանորեն, ֆեոդալական Ռուսաստանի «отрок» կամ «чадъ» տերմիններին։

սաբանվում է «շինական»-ների իրավական դրուժյան հետաքրքիր մի առանձնահատկությունը:

Որպեսզի Փարպեցին կարողանար հոգևորական դառնալ և ստանալ «ազատութիւն», որ հատուկ էր եկեղեցականներին, ինչպես տեսնում ենք, հարկավոր է եղել նրան «ծառայութիւն»-ից «զատուցանել»: Եթե «շինական»-ները լինեին ազատ՝ դժվար թե հարկավոր լիներ նրանց ազատագրումը նախկին «ծառայութիւն»-ից:

Փարպեցու վկայության այս նոր մեկնությունը, ինչպես և վերոհիշյալ մյուս վկայությունները, մոտավորապես պարզում են «շինական»-ների սոցիալական ընդհանուր դրությունը Հին Հայաստանում:

Ըստ երևույթին, նրանք իբրև «անազատ»-ներ հարկատու հատուկ «ծառայութեամբ» կապված են եղել իրենց հողի և տերերի հետ: Նրանց «ծառայութեան» մանրամասնությունները թեև մութ են մնում ու անհայտ, սակայն ընդհանուր գծերով կարծես թե հաստատվում է, որ նրանց «ի հարկի ծառայութեան» վիճակն ունեցել է, հավանաբար, որոշ չափով ճորտության բնույթ:

Հավանական է նույնպես, որ շինականությունը, լինելով իր մեջ պարփակված առանձին դաս, որից դուրս գալը հնարավոր է եղել, ինչպես տեսանք, կալվածատիրոջ համաձայնությամբ, իր իրավունքներին ու պարտականություններին կապված էր մնում ժառանգաբար: Ինչպես «ազատ»-ների դասի մեջ ժառանգական է եղել զինվորական ծառայությունը, հոգևորական դասի մեջ՝ քահանայական պաշտոնը, այնպես էլ շինական դասի համար, ըստ երևույթին, ժառանգական եղած պիտի լիներ նրա հատուկ հարկատու «ծառայութիւն»-ը:

Ուշագրավ է, որ սոցիալական նման վիճակում եղել են նաև Սասանյան Պարսկաստանի գյուղացիները, որոնց մասին մի քանի կարևոր տեղեկություններ տալիս է Տանսարը Տաբարիստանի թագավորին գրած իր նամակում (տե՛ս հրատար. և թարգման, Դարմեստեռերի, *Journal Asiatique*, I, p. 210 շարուն. և 513 շարուն.): Խրիստոնոսների կարծիքով, այդ նամակը գրված պիտի լինի Խոսրով I-ի հաղթություններից հետո 557—570 թվականներին (տե՛ս *L'empire des Sassanides*, Kobenhavn, 1907, p. 112):

Տանսարն իր այդ նամակում մատնանշում է, որ Պարսկաստանում «ամեն մեկը պետք է զբաղվեր այն գործով, որի համար Աստված նրան ստեղծել էր» (տե՛ս Christensen, *L'empire des Sas-*

sanides, p. 46, նաև Lettre de Tansar au roi de Tabaristan p. 215 և 520): Ընդհանրապես, փոխադրումը մի դասից մյուսն արգելված է եղել, սակայն կարող էր այդ տեղի ունենալ բացառաբար և միայն այն դեպքում՝ երբ գյուղացին աչքի էր ընկնում առանձին իր ընդունակություններով: «Այդ դեպքում,— վկայում է Տանսարը,— զեկուցանում են այդ մասին թագավորին և երկար հարց ու փորձից հետո մոգպետների և հերպետների մասնակցությամբ՝ եթե սրանք ընդունում էին թեկնածուի արժանիքը, փոխադրում էին նրան ուրիշ դասի մեջ» (տե՛ս Christensen, p. 46, նաև Tansar, էջ 214 և 519):

Հիմնվելով Տաբարիի վկայության վրա (տե՛ս Th. Noeldeke, Tabari, Leyden, 1879, p. 122)՝ իրիստենսենը ենթադրում է նաև, որ Սասանյան Պարսկաստանում գյուղացիները, լինելով անազատ, ամրացած էին կալվածատիրոջ հողին և պարտավոր էին կատարել նրա մոտ «կոռ»-ի աշխատանքներ (Christensen, p. 46):

Գյուղացիության ճորտական այդ դրույթյունը Սասանյան Պարսկաստանում, ինչպես և նրանց դասային փակ ու կաստայական վիճակը, թվում է ինձ, կարևոր դարձյալ ցուցմունքներ են, որ անուղղակի կերպով հաստատում են «շինական» դասի կացության նման պայմանները նաև նախարարական Հին Հայաստանում:

«Շինական»-ների սոցիալական դրության պարզաբանումն այնքան կարևոր խնդիր է, որ ավելորդ չի լինի մեջ բերել նաև մատենագրական աղբյուրների մի քանի կողմնակի վկայությունները՝ իբրև նեցուկ և կռվան վերոհիշյալ եզրակացության:

Մովսես Խորենացին, նկարագրելով իր «Ողբի» մեջ հայ ժողովրդի զանազան խավերի արատավոր բարբերը, ժողովրդականների մասին ասում է հետևյալը.

«Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ» (III, ԿԸ, Տփղիս, 1913, էջ 364):

Մ. էմինը «փախչողք ի ժառանգութենէ» թարգմանել է «чуждающийся духовного звания», իսկ խորեն ծ. վարդ. Ստեփանեն, հետևելով նրան, թարգմանել է «չեկեղեցական կոշումից փախչող»⁹:

Այս թարգմանությունները, միանգամայն անհաշող են ու անիմաստ: Հոգևոր կոշումը, ինչպես հայտնի է, կապված էր տրն-

⁹ Տե՛ս «История Армении Моисея Хоренского», новый перевод Н. Эми-на, М., 1893, стр. 215, և «Մովսէս Խորենացու հայկական պատմութիւն», Թարգ. Խ. Ժ. վարդ. Ստեփանէի, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 350 և ծանոթ. 814, էջ 290:

տեսական ու սոցիալական այնպիսի արտոնությունների հետ, որ անհեթեթ կլինեն կարծել, իբր թե այդ կոշտից ժողովրդականները տրամադիր կլինեն խուսափել:

Հանգուցյալ միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը, որքան հիշում եմ, «փախչողը ի ժառանգութենէ» խոսքերը վերագրում էր «շինական»-ներին և ենթադրում, որ «ժառանգութեան» տակ պետք է հասկանալ այն հողը և «շինական ժառալութեան» այն ծանր վիճակը, որից «շինական»-ներն աշխատել են խուսափել ու ազատվել փախուստի միջոցով: Այս երևույթը, ինչպես գիտենք, ճորտական գյուղացիության համար սովորական է եղել նաև ուրիշ երկրներում: Եթե միաբանի մեկնությունն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ «շինական»-ների մասին վերոհիշյալ մեր ենթադրությունը հաստատված կլինի նաև խորենացու վկայությամբ:

«Փախչողը ի ժառանգութենէ» խոսքերից կարելի կլինի հետևել, որ «շինական»-ները, լինելով «անազատ», գտնվել են խորենացու ժամանակ ճորտական վիճակում: Այդ դրությունը, ինչպես տեսնում ենք, անվանված է «ժառանգութիւն», ուստի և պետք է ենթադրել, որ «շինական»-ների հատուկ «ժառալութիւն»-ը կրել է ժառանգական բնույթ, ինչպես և Սասանյան Պարսկաստանում:

Վերջերս Հ. Ներսես Ակինյանը, համարելով «Ողբի» հեղինակ Ղևոնդ երեցին, ենթադրել է, որ «փախչողը ի ժառանգութենէ» խոսքերը վերաբերվում են այն հայ նախարարներին, որոնք ութերորդ դարի երկրորդ կեսի արհավիրքների ժամանակ թողել էին իրենց «ժառանգութիւն»-ները և փախել Բյուզանդիա¹⁰:

Այս ենթադրությունը, իմ կարծիքով, հավանական չէ, որովհետև խորենացու «Ողբի» մեջ «փախչողը ի ժառանգութենէ» ասված է ո՛չ թե իշխանների, այլ ժողովրդականների մասին: Բացի այդ՝ «փախչողը ի ժառանգութենէ» մեջ է բերված «Ողբի» մեջ իբրև նման մի արատ, ինչպես և ժողովրդականների ստահակությունը, բարեցողությունը և մյուս բացասական մակդիրները, իսկ նախարարների «ժառանգութիւն»-ից փախչելն այնպիսի մի արատ չէր, որ կարելի լիներ հիշել մյուս հատկանիշների կողքին:

Որ նախարարների գաղթը դժվար է համարել արատավոր մի թերություն՝ այդ պարզ երևում է հենց Ակինյանի մատնանշած Ղևոնդի համապատասխան հատվածից:

¹⁰ Տե՛ս Հ. Ներսես վ. Ակինյան, Մասնագրական հետազոտություններ, հատոր Գ, Վիեննա, 1930, էջ 169:

«Ասացից և վասն ապստամբին այնմիկ,— ասում է Ղևոնդը,— զոր նախ առաքելը Աբդրա յաշխարհս Հայոց, որում Մալէհ կոչէին. որ էր այր անօրէն և արինահեղ, յորմէ բազումք զգուշացեալ անձնապահ լինէին. քանզի ոչ կարէին յայնժամ այնպիսի նեղութեան տանել: Էին ոմանք ի նախարարացն Հայոց, որք մերժեալ լըին զժառանգութիւնս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին» («Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետ., 1887, լթ, էջ 133):

Շատ պարզ է, որ «Ողբի» մեջ «փախչողք ի ժառանգութենէ» չի կարող որևէ կապ ունենալ Ղևոնդի այս վկայութեան հետ, ո՛չ էլ ունենալ այն նշանակութիւնը, որ այդ խոսքերին վերադրել է Ալիսնյանը:

«Շինական»-ների հողի հետ կապված լինելն ակնարկված է, հավանորեն, նաև Փափստոսի և Խորենացու հայտնի վկայութիւնների մեջ Արշակավան քաղաքի մասին:

Այդ քաղաքը հիմնել էր Արշակ Թազավորը Կոգովիտ գավառում և, որպէսզի քաղաքը բազմամարդ բնակչութիւն ունենա, հիշյալ պատմիչների ասելով, նա հրաման էր տվել իր երկրի բոլոր տեղերում, որ գան այդտեղ ամեն տեսակ ոճրագործներ և հանցավորներ, որոնք ազատ կմնան դատից ու պատասխանատվութիւնից:

Գարագաշյանի¹¹ և Սամվելյանի¹² կարծիքով՝ այս օտարոտի ու անհասկանալի հրամանը մի պարզ ակնարկ է, որ Հին Հայաստանում ևս գոյութիւն է ունեցել ապաստանի իրավունքը, որը համեմատական իրավագիտութեան մեջ անվանվում է Asylrecht: Իսկ Լեոն¹³ և վերջերս նաև Մարկվարտը¹⁴ ենթադրում են, որ Արշակավան էին փախել, հավանորեն, ո՛չ միայն մարդասպանները, ավազակները, գողերը և սրիկաները, այլև, գլխավորապէս, ճորտ գյուղացիները (ըստ Մարկվարտի՝ «hörige Bauern»): Ուշադրավ է այս տեսակետից Խորենացու հետևյալ վկայութիւնը.

«Նախարարացն Հայոց ժողովեալ,— ասում է Խորենացին,— դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղա-

11 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, Բ, էջ 11—12:

12 Խ. Սամվելյան, Արյան վրեժ և փրկանք, տե՛ս «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1903, X, էջ 278—280:

13 Լեո, Հայոց պատմութիւն, Թիֆլիս, 1917, էջ 623:

14 Markwart, Sündarmenten und die Tigrisquellen, Wien, 1930, s. 62*:

յոց ստնդիացաց. քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ժառաջից իրեանց և լանցաւորաց» (III, Իէ, Տփղիս, 1917, էջ 289)։

Որ «ժառաջից իրեանց» խոսքերը կարող են այս հատվածում վերաբերվել «շինական»-ներին՝ այդ միանգամայն հնարավոր է և հավանական։ Եվ եթե ընդունելի համարվի այս բացատրությունը՝ պետք է, անշուշտ, նաև ենթադրել, որ «շինական»-ները գտնվել են ճորտական վիճակում։

Հավանական համարելով ճորտական գյուղացիության գոյությունը Հին Հայաստանում, չպետք է, իհարկե, կարծել, որ Հայաստանի ողջ գյուղացիությունը նախարարական դանազան երկրաշրջաններում ունեցել է կատարելապես միակերպ ու նույնաման վիճակ։

Հայաստանի նման նախարարական մի երկրում, որը բաժանված էր անջատ ու գրեթե անկախ իշխանությունների, շատ բնական է, որ կլինեին ռզանզան սովորութիւնք գաւառաց և աշխարհաց։ Կարող էին նույնիսկ լինել ճորտական գյուղացիությունից դուրս նաև ազատ գյուղացիության մնացորդներ։

Որ գյուղերի ու «շինական»-ների իրավական ու տնտեսական դրության մեջ կարող էին լինել տարբերություններ, այդ մենք կարող ենք գուշակել խորենացու ուշագրավ մի վկայությունից։ Հանդիմանելով նախնի հայերի անիմաստասիրությունը, որոնք թերացել են գրի առնել տալու իրենց ժամանակվա պատմական անցքերը, խորենացին կարծում է, որ չի կարելի արդարացնել նրանց, ասելով՝ որ իբր թի շարունակ զբաղված են եղել կռիվներով և կամ չեն ունեցել գիր ու դպրութիւն։

«Այլ ոչ արգարե այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ դիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց¹⁵, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն» (I, Գ, Տփղիս, 1913, էջ 11)։

Խորենացու այս հատվածի մեջ մութ և անհասկանալի է համարվել գլխավորապես, «առանձնականութիւն» բառը։

¹⁵ «Գիւղից և գաւառաց, ևս իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց» խորեն Ստեփաննե թարգմանել է ռզանզան գիւղերի, գաւառների և առանձին տների վէճեր ու դաշինքներ» (տե՛ս նրա աշխարհար. թարգմանությունը, էջ 8, հմտե՛ս նաև էմիլի ռուսերեն թարգմանությունը, էջ 4)։ Այս թարգմանությունների մեջ անտես է արված «առանձնականութեանց» բառը, որի իմաստը չի հասկացվել։

Պրոֆ. Նիկ. Մառ «առանձնականութեանց և հանուրց հակա-
ռակութեանց և գաշանց» թարգմանել է «О частных (личных) и
общих тяжбах и примирениях»¹⁶, Պրոֆ. Նիկ. Ադոնցը, համա-
ձայն շիխելով Նիկ. Մառի հետ, կարծում է, որ «առանձնական»
էին դառնում այն «սեպուհ»-ները, որոնք բաժանվում էին ընտա-
նիքից ու ստանում իրենց ժառանգական բաժինը: Ուրեմն՝ «առանձ-
նականութիւն», նրա կարծիքով, նշանակում է և ցույց է տալիս
«սեպուհ»-ների «առանձնական» դրութիւնը, որի պատճառով ծա-
գում էին վեճեր և հակառակութիւններ¹⁷:

Իմ կարծիքով, այս երկու ենթադրութիւնն էլ վիճելի են:

«Առանձնականութիւն» բառը, ինչպես կարելի է տեսնել հու-
նարան թարգմանութիւններից, համապատասխանում է հունարեն
idiōma բառին և, ամենայն հավանականութեամբ, նշանակում է՝
առանձին, հատուկ վիճակ կամ առանձնահատկութիւն: Խորենա-
ցին ուզում է, ըստ երևույթին, ասել, որ գյուղերի, գավառների ու
առանձին տների (տոհմերի) դրութիւնը եղել է հաճախ «առանձ-
նական» ու տարբեր և նրանց այդ առանձնահատուկ վիճակի, ինչ-
պես և հակառակութիւնների ու դաշինքների համար, եղել են իր
ժամանակ «անբաւ գրուցաց մատեանք», որոնք գրված են եղել
հունարեն կամ պարսկերեն:

Գավառների ու գյուղերի մասնակի «առանձնականութիւն»-
ները, որ գոյութիւն են ունեցել ֆեոդալական երկրներում գրեթե
ամեն տեղ, չեն կարող, իհարկե, բացասել ո՛չ նախարարական
իրավակարգի ընդհանուր էութիւնը, ո՛չ էլ շինական դասի հոծ
բազմութեան իրավական դրութեան գլխավոր հատկանիշները՝ Քի
հարկի ժառայութիւն»-ը և ճորտական վիճակը, որոնք իրենց հիմ-
նական գծերով, ըստ երևույթին, միևնույն բնույթը պիտի ունենա-
յին նախարարական Հայաստանի բոլոր շրջաններում:

Իսկ գյուղացիութեան իրավական ու տնտեսական դրութեան
մասնակի տարբերութիւնները և առանձնահատկութիւնները, որ
հավանական է ենթադրել նաև նախարարական Հայաստանում,
դժբախտաբար, մնում են մութ փաստական տեղեկութիւնների
բացակայութեան պատճառով:

Հետաքրքիր է սակայն, որ մատենագրական աղբյուրների մեջ
«շինական»-ներն անվանվում են երբեմն «բնակք» (Աղաթանդե-

¹⁶ Տե՛ս «Журнал Минист. Нар. Просв.», 1908, стр. 2.

¹⁷ «Армения в эпоху Юстиниана», стр. 475.

ղոս, ԺԲ, 131, էջ 75), «ձեռատունկը» կամ «ձեռասունք» (նույնը. ԺԲ, 131, էջ 75 և 76), «կրտսերք» (Փարպեցի, III, ՂԵ, էջ 173), բայց թե արդյոք տարբեր էին սրանք իրենց իրավական դրու-
թյամբ՝ այդ մնում է միանգամայն անորոշ:

Ավելի ևս ուշագրավ է Փավստոսի հետևյալ վկայությունը՝

«Բայց Պապայ ի բուն ի կնոջն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղէ կարճազատացն» (III, ԺԹ, էջ 49):

Եթե «կարճազատացն» այս ընթերցվածն աղճատված չէ, այդ դեպքում՝ կարելի կլինի ենթադրել, որ բացի «անազատ շինա-
կան»-ներից գոյություն են ունեցել Հին Հայաստանում նաև «կարճազատ» գոյուղացիներ: Բայց թե ինչով էին տարբերվում «կարճազատ»-ներն «անազատ»-ներից՝ այդ դարձյալ պարզ չէ մատենագրական վկայությունների աղքատության պատճառով:

«Շինական»-ների ու «ազատ»-ների կենցաղային տարբեր կացության մասին հետաքրքիր են Եղիշեի վկայությունները, որոնց մեջ համեմատության է առնված նրանց առօրյա կյանքը: Նկա-
րադրելով «ազատ»-ների ու նրանց կանանց կրած նեղությունները կրոնական հալածանքների շրջանում, Եղիշե պատմագիրն ասում է, որ

«Ոչ երևէր այնուհետև առաւել տէր քան զծառայ և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ» (Վեներիկ, 1864, III, էջ 115):

Մի ուրիշ տեղ, շեշտելով հայոց աշխարհի փափկասուն տիկ-
նանց թշվառ ու դժբախտ դրությունը, նա դարձյալ համեմատում է նրանց այդ վիճակը «շինական»-ների առօրյա կյանքի հետ, որը նա համարում է վշտամբեր ու տանջալից:

«Ոչ ինչ յիշեցին ամենեին,— ասում է Եղիշեն,— զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք՝ որ վըշ-
տամբերը լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն տան-
ջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա
յանձն առին զհամբերութիւն վշտաց» (նույնը, VIII, էջ 355):

Այս վկայությունների մեջ ուշագրավ է և այն, որ առաջին հատվածում «վշտացեալ» է անվանված «գեղջուկ»-ը, իսկ երկ-
րորդում՝ «վշտամբեր» է անվանված «շինական»-ը:

Նորագույն մի քանի աշխատություններում անհաջող մի փորձ է արված «շինական»-ներին և «գեղջուկ»-ներին իրարից զանա-
զանելու իբրև իրենց ծագումով և տնտեսական ու իրավական

գրությամբ տարբեր դասեր¹⁸։ Միանգամայն անընդունելի ու անհիմն մի կարծիք է այդ, որ բոլորովին հիմնավորված չէ փաստական որևէ համոզիչ վկայություններով։ «Շինական» և «գեղջուկ» բառերը, ինչպես երևում է թե՛ այս և թե՛ ուրիշ բազմաթիվ վկայություններից, պարզապես, հոմանիշներ են, որ գործ են ածվել սոցիալական միևնույն դասի համար։

Փարպեցու անուղղակի մի վկայությունից կարելի է ըստ իսկուհի, որ իրենց արտաքինով ու հագուստով «շինական»-ները տարբերվել են «ազատ»-ներից (III, Հէ, էջ 142-«քանզի ձեզ ձեր և կերպարան ազատս կարծեցուցանէ զձեզ»)։

Այդ ավելի քան հավանական է, որովհետև նույն զանազանությունը «շինական»-ների ու «ազատ»-ների մեջ եղել է նաև Սասանյան Պարսկաստանում։ Տանսարը վերոհիշյալ իր նամակում պարզ վկայում է, որ այդ տարբերությունն ակներև էր նրանց հագուստի, բնակարանի, կանանց ու ընտանիքի նկատմամբ (Christensen, էջ 45 և „Lettre de Tansar au roi de Tabaristan“, p. 222 և 527)։

Այն արհամարհական վերաբերմունքը, որ ուներ գյուղացիական դասի հանդեպ ղինվորակսն ազնվականությունը միջնադարյան Եվրոպայում, նկատելի է նաև հայկական աղբյուրներում։

Այդ արհամարհանքը որոշակի արտահայտված է, օրինակ, Եղիշեի հետևյալ վկայության մեջ.

«Բայց ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սըրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն. զի ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, և տգիտագոյն ևս էր ի գրոց մխիթարութենէ» (Վենետիկ, 1864, Ը, էջ 270—271)։

Ինչպես ֆեոդալական գրեթե բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, «շինական»-ներն իբրև «անազատ»-ներ, գրտնըվելով ճորտական դրության մեջ, դատարանի վճռով ենթարկվել են մարմնական պատիժների, որոնցից ազատ են եղել ազնվականները։ Պարզ ու որոշ վկայված է այդ Շահապիվանի ժողովի կանոններում։ Պոռնկության համար սահմանված է եղել, օրինակ, Շահապիվանի ժողովի Գ. կանոնում հետևյալ պատիժը.

«Եթէ ազատ է և քան չէ՛ մարթ հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն. մի դրամ կարօտելոց, բ տարի ապաշ-

¹⁸ Տե՛ս Բախարյան, Անձնական և հողային իրավունքը Հին Հայաստանում և Հ. Մառապետյան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 15։

խառութիւն. և զպղծութիւնն այլ մի՛ ևս գործեսցէ. ապա մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնիցի: Ապա թէ շինական է, զան յալով արցցէ, ճ դրամ տուգան տացէ յեկեղեցի և յաղքատս բաշխեսցեն, և տարի մի ի պղծութենէն հեռացեալ՝ մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցի» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի-Թիֆլիս, 1914, էջ 63). հմմտն նաև կանոն Թ, էջ 67:

Հաւանական համարելով «շինական»-ների ճորտական դրությունը Հին Հայաստանում, անհրաժեշտ է, իհարկե, գտնել մոտավոր կերպով որոշել նրանց իրավական այդ դրության բովանդակությունը և առանձնահատկությունները:

Պետք է ասել, որ ճորտ (hörig, зависимый, colonus, leibeigen, крепостной) և ճորտութիւն (Hörigkeit, зависимость, Leibeigenschaft, крепостничество) բառերը խիստ ճապաղ ու առաձգական գաղափարներ են, որոնց տակ հասկացվել են տնտեսական ու իրավական բովանդակւոր տարբեր դրություններ: Ճորտութիւնը հաճախ այնքան մեղմ է եղել, որ շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների դրութիւնից, իսկ երբեմն այնքան ծանր է եղել, որ շատ մոտ է եղել կատարյալ ստրկության: Ճորտների առաջին սեռակին պատկանում էին, օրինակ, Բյուզանդական կայսրության կողոնները, որոնք անձնապես ազատ էին, բայց կապված էին հողին (glebae, terrae adscripti, servi terrae ipsius) և չունեին տեղափոխման իրավունք. իսկ երկրորդ սեռակին պատկանում էին ռուսական крепостной-ները և գերմանական leibeigen կոչված ճորտերը, որոնց դրութիւնը խիստ ծանր է եղել, մանավանդ XVIII դարում:

Տարբերելու համար այդ երկու կարգի ճորտերին՝ մենք նպատահակարար ենք համարում կոլոններին և hörig կամ зависимый կոչված ճորտերին անվանել կիսազատ ետեք, իսկ leibeigen կամ крепостной կոչվածներին՝ ստրկամամ ետեք:

Հիմնական պատճառը ճորտական վիճակի այս զանազանության, ինչպես ցույց են տվել նորագույն ուսումնասիրությունները, եղել է, գլխավորապես, տնտեսական:

Ճորտական գյուղացիության վիճակը մեծապես կախված է եղել ագրարային երկու իրարից տարբեր սիստեմներից, որ անվանում են Grundherrschaft և Gutsherrschaft: Gruntherrschaft է կոչվում սենյորական կազմակերպությունը, երբ սենյորը ստանում է իր գյուղացիներից զանազան տուրքեր ու հարկեր, բայց ինքը չունի սեփական մեծ տնտեսությունը, իսկ Gutsherrschaft՝ երբ սենյոր

յորը թեև նույնպես ստանում է իր գյուղացիներից տուրքեր ու հարկեր, այլ նրա եկամուտի գլխավոր աղբյուրը ոչ թե այդ վճարումներն են, այլ նրա ինքնուրույն խոշոր տնտեսութունը, որը նա օգտագործում է ու մշակում է ճորտական իր գյուղացիների պարտադիր աշխատանքով:

Ագրարային առաջին կարգի երկրներ էին Ֆրանսիան և արևմտյան Գերմանիան, իսկ երկրորդ կարգի՝ արևելյան Գերմանիան, Լեհաստանը և Ռուսաստանը:

Ենթադրվում է, որ ագրարային կազմակերպման այս զանազանությունը ճորտական գյուղացիության իրական դրուժյան վրա ունեցել է իր որոշ ակնհերև ազդեցությունը: Եվրոպայի արևմտյան երկրներում ճորտական գյուղացիության իրավական ու տնտեսական դրուժյունը, ընդհանուր առմամբ, ավելի մեղմ է եղել, քան Եվրոպայի արևելյան երկրներում, ուր միևնույն գյուղացիությունը ո՛չ միայն վճարել է զանազան տուրքեր ու հարկեր, այլև իր ամբողջ ընտանիքով ու ամենամեծ շափերով շահագործվել է նաև իբրև ձրի աշխատող ուժ:

Սենյորական ինքնուրույն խոշոր տնտեսությունների զարգացումը և գյուղացիության պարտադիր ձրի աշխատանքի անշափ շահագործումը տեղի էին ունենում, գլխավորապես, ապրանքային տնտեսության աճման ժամանակ, երբ ցորենը և գյուղատնտեսության մյուս արտադրությունները ծախվում էին մեծ քանակությամբ ներքին շուկայում կամ արտահանվում դուրս իբրև ապրանք:

Գիտական վերոհիշյալ տեսությունն ագրարային երկու տարբեր սիստեմի մասին, որոնցով մեծապես պայմանավորված է եղել ճորտության տնտեսական ու իրավական դրուժյունը, ունի նշանակություն թե՛ Հին Հայաստանի և թե՛, ընդհանրապես, ամեն մի երկրի համար, որ գոյություն է ունեցել ճորտական գյուղացիություն՝ ստորադրված կալվածատեր ազնվական դասի իշխանությունը:

Վերոհիշյալ բաժանման տեսակետից, թվում է ինձ, որ Հին Հայաստանի կալվածատիրական սիստեմը համապատասխան պետք է ընդունել Grundherrschaft կոչված սենյորական կազմակերպությանը:

Պատմական աղբյուրներից բնավ չի երևում, որ նախարարներն իրենք ևս եղած լինեին գյուղատնտեսներ և ունեցած լինեին սեփական ու ինքնուրույն խոշոր տնտեսություններ: Նրանց եկա-

մուտի գլխավոր աղբյուրը կազմել են, հավանաբար, Շշինական-ներից ստացված տուրքերը և հարկերը: Ամեն անգամ, երբ մատենադրական աղբյուրների մեջ խոսք է լինում «նախարար»-ների ու Շշինական-ների փոխհարաբերության մասին, հիշվում է միշտ Շշինական-ների հարկատվությունը և «նախարար»-ների հարկապահանջությունը:

Փավստոս պատմագիրը, խոսելով Աշտիշատի ժողովում սահմանված կանոնների մասին, առաջ է բերում, օրինակ, ներսես կաթողիկոսի հետևյալ պատվերը.

«Եւ ամենայն աշխարհին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրօնս և ընդ աշակերտս, և սիրել իբրեւ զընտանիս, և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զշափն. յուշ առնելով, զի և նոցա տէր գոյ յերկինս: Սոյն պէս և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տերանց, զի ի տեսնէ լինիցի նոցա վարձք» (Վենետիկ, 1889, IV, Դ, էջ 77—78):

Սահակ կաթողիկոսի ԼԸ կանոնում վանքերի մասին ասված է, որ «ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս ընկալաւ և անդս» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Դլուճյանի, էջ 35):

Այսպես և ուրիշ վկայությունների մեջ շեշտվում է շարունակ հարկապահանջությունը, որպես կալվածատիրության հիմնական եկամուտ:

Փավստոսի վերոհիշյալ վկայության մեջ հետաքրքիր է այն, որ թագավորին ու իշխաններին պատվեր է տրվում՝ «մի անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զշափն»: Ներսես Պարթևի այս պատվերը, որ կարող է կանոնական մի որոշում լինել, ընդունված Աշտիշատի ժողովում՝ հավանական է, որ գործադրված պիտի լիներ եկեղեցական, գուցե և, ընդհանուր առմամբ, նաև արքունի ու նախարարական գյուղացիության նկատմամբ:

Եթե մատենադրական աղբյուրների օգնությամբ հաջողվի անվիճելի կերպով ցույց տալ, որ Շշինական-ների պարտականությունները կախված չեն եղել Հին Հայաստանում կալվածատեր ազնվականության քմահաճ կամայականությունից, այլ հաստատուն կերպով որոշված են եղել օրենքով, եկեղեցական կանոններով կամ սովորույթով, շինական դասի դրույթյան որոշման համար

այդ փաստն ինքնին կունենա խոշոր նշանակութիւն։ Եվրոպական ֆեոդալիզմի ուսումնասիրութիւններէց հայտնի է, որ ամեն անգամ, երբ ճորտական գյուղացիության հարկերն ու պարտականութիւններն առաջուց պայմանավորված՝ հաստատուն ու որոշ են եղել, նրանց իրավական ու տնտեսական դրութիւնը եղել է համեմատաբար մեղմ ու տանելի, իսկ երբ նրանց հարկերն ու պարտականութիւնները կախված են եղել կալվածատերերի կամայականութիւնից, նրանց վիճակը եղել է խիստ ծանր՝ իրավագործի ու գրեթե ստրկական։

Ներքև մենք կտեսնենք, որ Հին Հայաստանի ռազմական-նե-րին շահագործող իրավագործի, ինչպես էին ստրկանման ճորտերը։ Իմ կարծիքով, ո՛չ միայն նրանց իրավունքները, այլև պարտականութիւնները եղել են, ընդհանուր առմամբ, որոշ ու հաստատուն։

Նրանց իրավական դրութիւնը հասկանալու համար՝ անհրաժեշտ է, նախ և առաջ, ուշադրության առնել երկրի տնտեսական զարգացման աստիճանը։ Արշակունիների, ինչպես և մարզպանության ժամանակ, թվում է ինձ, որ խոշոր առևտուրը և առևտրական կապիտալը չէին կատարում Հայաստանում առանձին մեծ դեր պլուրալ տնտեսութեան նկատմամբ։

Ուշադրության արժանի է այդ տնտեսկետից, որ Արշակունյաց տոհմի անդամներին, նաև մարզպաններին ու զորքերին, նրանց ռոճիկը, այսինքն՝ օրապահիկը և պարենը, տրվել է կենսամթերքներով, ինչպես այդ երևում է մատենագրական աղբյուրների հետևյալ վկայութիւններից.

1. Խորենացի, II, Ը, էջ 118՝

«Եւ քանզի բազում ունէր ուստերս [Վաղարշակ] պատշաճ վարկաւ վոշ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա քաղով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն եւ ռոճկաց կարգելոց յարմուռաւ».

2. Նույնը, II, Հէ, էջ 216՝

«Նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի Թագէն և յԱյրարատըն բնակելոյ, կարգէ [Արտաշիւր] ի նոյն տեղիս մտիւք եւ ռոճկօք, որպէս և էինն».

3. Նույնը, II, ԶԱ, էջ 223՝

«Եւ Տրդատ ընկալաւ զնա [զՄամդոնն], բայց ընդ իւր ի պա-

տերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նորա և ոռնիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղուոչէ ցրովանդակ ամսս».

4. Փաւստոս, V, ԼԸ, էջ 253՝

«Սոյնպէս և մարդպանին Սուրենայ կարգէին հասս եւ կօշիկս եւ զպիտոյս զոռնկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման եւ կերակուր ըստ պիտոյից».

5. Ղազար Փարպեցի, III, ԳԸ, էջ 177՝

«Մարդպանն պարսիկ որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ և որդուվք, դրամք և սիրելովք, ծառայիւք և աղախնեօք. և այնք ամենեքեան թէ զԱրեաց տեառն զոռնիկ ուտեն՝ չէ սակաւ ծախսն, և թէ զաշխարհին ուտեն՝ շատ վտանգ հասանէ աշխարհին մարդկանս, Իսկ նա [Վահան] թէ լինի՝ զիւր տանն համբար ուտէ».

6. Փաւստոս, IV, ԺԹ, էջ 133՝

«Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն: Եւ զգաւառն յուտեստ ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այնս:

Որ վերոհիշյալ հատվածներում «ոռնիկ» բառը՝ համաձայն իր ստուգաբանության (=պրս. rōzi «թորական ուտեստ», պհլ. *rōtschl̥k, տե՛ս Hübischmann, Armenische Grammatik, s. 234, համտե նաև Աճառյան, Հայերեն արմատական բառարան)՝ գործ է ածված ոչ թե դրամական, այլ պարսկալիկ հատուցումների համար, այդ կարելի է կռահել նաև Հին կտակարանի գրաբար թարգմանությունից, որի մեջ «ոռնիկ» համապատասխանում է հունարեն σίτος, οψώσια, τὰ δεοντα և χορηγία բառերին:

Հավանական է, որեմն, ենթադրել, որ գերակշռող նշանակություն է ունեցել պատմական այս շրջանում բնական տնտեսությունը:

Այդ է, ըստ երևույթին, գլխավոր պատճառը, որ գոյություն չեն ունեցել հնագույն այս շրջանում ո՛չ ճորտական դաժան այն իրավունքը, որ XV—XVI դարից սկսած հետզհետե գոյացել ու զարգացել էր, գլխավորապես, արևելյան Եվրոպայում, ո՛չ էլ այդ երկրների крепостной կամ leibeigen կոչված ստրկանման գյուղացիությունը, որ ամենամեծ չափերով ենթարկված է եղել կալվածատեր ազնվականության քմահաճ ու անողոր շահագործման:

«Շինական»-ների ճորտական «անազատ» վիճակը չպետք է, որեմն, հասկանալ իբրև գերմանական Leibeigenschaft, այլ իբրև

ժառանգական հպատակութիւն (Erbunterthänigkeit) և կախումն իրենց ազնվական տերերից, գլխավորապէս, հարկային ու տընտեսական:

Շահապիվանի ժողովի կանոններից, թվում է ինձ, կարելի է եզրակացնել, որ «շինական»-ները ունեցել են պատմական այս հնագույն շրջանում անձնական իրավունքներ: Այդ տեսակետից նրանց գոյութիւնը կարելի է մոտավորապէս համապատասխան համարել Բյուզանդական կայսրութեան կոլոնների և արևմտյան Գերմանիայի hōrige անվանված գյուղացիների դրութեանը:

«Շինական»-ների իրավական այդ դրութեան որոշման համար կարևոր են, օրինակ, Շահապիվանի ժողովի կանոններում հետևյալ հատվածները.

1. Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, Գ, էջ 62—63՝

«Եթէ ոք կին ունիցի և պոռնկեացի... Եթէ ազատ է և գան չէ մարթ հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն. մ դրամ կարօտելոց, բ տարի ապաշխարութիւն, և պղծութիւնն այլ մի՛ ևս գործեացէ. ապա մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնիցի: Ապա թէ շինական է, գան յոլով արքցէ, ճ դրամ տուգան տացէ յեկեղեցի և յազբատս բաշխեացեն և տարի մի ի պղծութենէն հետացնալ՝ մտցի յեկեղեցի և ընդ ընկերս խառնեացի»...

2. Նույնը, Դ, էջ 64՝

«Եթէ ոք զկինն թողցէ զորդույ մայր առանց բանի պոռնկութեան, և կամ թէ արատ ինչ չար ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ և այլում ակն եղեալ իցէ, դատաստանն այս լիցի, զտուն և զկեանս և զորդիս և զհող և զջուր և դամենայն ինչ բաժանեացեն հասարակաց, զկէսն կնոջն առցեն. և թէ կամք են այր ի տուն ածել, ինքն համարձակ ածցէ, զբաժինն կալցեն և զարքունի հարկն ողջ արացեն: Եւ այրն որ եթող, է ամ ապաշխարեացէ և յեկեղեցի տուգան տայցէ, թէ ազատ է յ¹⁹ դրամ, թէ շինական է, գանալի լիցի և ճ դրամ յեկեղեցի տուգանեացի, փոխանակ օրհնութեամբ զամուսնութիւնն խոտելոյ».

3. Նույնը, Ե, էջ 64՝

«Եթէ կին ոք արար և ամուլ պատահեաց, և այրն հանցէ զնա

¹⁹ Որովհետեւ բոլոր դեպքերում «ազատ»-ների ու «շինական»-ների վճարապարտութեան հարաբերութիւնը 2 առ 1 է, ուստի և Թ. Ավդալբեգյանն այս միակ ու անհավանական բացառութիւնը վերացնելու համար ենթադրում է, որ կարող է այստեղ և ու մ տառերի շփոթում լինել (տե՛ս «Տեղեկագիր Գիտ և Արվ. Ինստիտուտի», № 3, Երևան, 1928, էջ 61):

վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ: Եւ եթէ քան զամլութիւնն այլ արատ չգտցի, մարդն տուգան ևս տացէ կնոջն վասն անարգանացն, թէ ազատ է ու դրամ, և թէ շինական ոք:

4. Նույնը, է, էջ 66՝

«Ոյր առեանկ առնիցեն, կալցեն զկինն և անդեն տացեն ցհայր և ցմայր իւր և տուգանեսցին փոխանակ անարգանացն, եթէ ազատ է ու դրամ, եթէ շինական է ոք»:

5. Նույնը, Թ, էջ 67՝

«Որք ի հարցուկս երթան, կամ ի դիւթել, տուգան կալցեն և քարոտելոց տացեն, եթէ ազատ է մ դրամ, եթէ շինական է՝ գան արբցէ ժբ կրկին, ճ դրամ տուգան կալցեն և կարոտելոց տացեն»:

6. Նույնը, Ժ, էջ 68՝

«Որք լուկ դիւթեն և ոչ կախարդեն, եթէ այր, եթէ կին, որ ի դիւթութեան գտցին ժբ կրկին գան արբցեն, խանձեսցեն, մրեսցեն, յոսկր արկցեն և յուրկանոց տացեն ք ամ աղասցեն գողեացն. և զինչ և հրամայեսցեն՝ գործել: Ապա եթէ ազատ է և ի գողենոց շերթայ 2 դրամ տացէ գողեացն և ք ամ յիւրում յեկեղեցւոյ յապաշխարութեան կացցէ և հագորդեսցի, և այլ մի՛ ևս մեղանչիցէ»:

Հմմտե նաև ԺԱ կանոն, էջ 68:

Այս կանոններից պարզ երևում է, որ «շինական»-ներն ունեցել են իրենց հատուկ գույքը, որ նրանք իրավունք են ունեցել տալ իրենց զավակներին կամ թողնել ժառանգներին: Հանցանք գործելիս, ինչպես տեսնում ենք, նրանք ենթարկվել են քրեական ու եկեղեցական պատիժների: Ուշադրության արժանի է, որ «ազատ»-ների վճարելիք դրամական տուգանքները երկու անգամ ավելի են եղել, քան «շինական»-ներինը, և միայն երկրորդ վկայության մեջ «ազատ»-ների վճարելիք տուգանքը 1 դրամ է, իսկ «շինական»-ներինը՝ ճ դրամ:

Տուգանքների համեմատական այս հարաբերությունը կարող է, իմ կարծիքով, ուշագրավ մի նշան համարվել, որ «շինական»-ների տնտեսական դրությունը պետք է եղած լինեի համեմատաբար բարեկեցիկ:

Նույն կանոններից դժվար չէ նաև հետևեցնել, որ «շինական»-ները, պատկանելով «անազատ»-ների դասին, իրավաբանորեն չեն գտնվել ստրկության վիճակում, այլ նրանք միայն ժանր հանցագործության դեպքերում ուղարկվել են գողենոց կամ ուրկանոց և աշխատել այնտեղ որպես «աղախին» կամ ստրուկ: «Ազատ»-

ները, որոնց չէր կարելի ուղարկել գողենոց, միևնույն հանցանքների համար գողենոցին վճարել են որոշ տուգանքներ:

«Շինական»-ներն իրավունք են ունեցել հայց տալու և դատվելու եկեղեցական դատարաններում: Հավանական է, որ նույն իրավունքները նրանք ունեցած կլինեին նաև աշխարհական դատարաններում: Նրանք կարող էին, բացի այդ, ամուսնանալ առանց կալվածատիրոջ համաձայնության:

Սահակ Պարթևին վերագրված ԻԶ կանոնում ամուսնությունը ծնողների անգամ բռնադատությամբ համարվում է անթույլատրելի:

«Իսկ կատարելոց,— ասված է կանոնում,— որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ, ի հաճոյս իւրեանց, պսակ մի իշխեսչիք դնել՝ առանց քննութեան և ցնոսին ինքեանս հարցանելոյ. գուցէ բռնադատութեամբ ծնողաց յակամայ հաւանեալ իցեն. և զայնպիսի հարսանիս մի՛ իշխէք յանձն առնուլ, զի մինչև ցայսօր յայդպիսի անկարգութենէ բազում վնասք գնացին յաշխարհիս՝ հոգեւոր և մարմնաւոր» (Կանոնագիրք հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 26):

Տուգանքների վերաբերյալ վերոհիշյալ վկայություններից առանձնապես կարեւոր է երրորդ վկայությունը, որի համաձայն ամուլ կնոջից բաժանվելու դեպքում «ազատ»-ները վճարել են իրենց կանանց «վասն անարգանացն» երկու անգամ ավելի տուգանք, քան «շինական»-ները: Անարգանքի համար վճարվող այս տուգանքների տարբերությունը, ինչպես տեսնում ենք, մեծ չէ:

Հին Ռուսաստանում բարձր դասի մարդկանց խոշտանգման համար պահանջվել է 12 գրիվնա, իսկ սմերդների, որ համարվում են ազատ գյուղացիներ, 3 գրիվնա: Պրոֆ. Սերգեևիչի կարծիքով՝ տուգանքների այս հարաբերական չափն արտահայտություն է սմերդների սոցիալականացած ու նվաստ դրության²⁰:

Հին Անգլիայում իրավունքների խախտման համար eorl-երին վճարում էին երկու անգամ ավելի, քան ազատ գյուղացիներին՝ ceorl-երին: VII դարից սկսած, երբ գյուղացիների դրությունը դառնում էր Անգլիայում հետզհետե ճորտական, ազնվականների արժեքն աստիճանաբար բարձրացել է և նրանք գնահատվել են 3, հետո 6, իսկ XI դարում արդեն մոտ 10 անգամ ավելի, քան գյուղացիները²¹:

²⁰ В. Сергеевич, Русские юридические древности, т. 1, изд. второе. С. Петербург, 1902, стр. 184.

²¹ Кулишер, Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград, 1918, стр. 41.

Նույն անհամաչափությունը գոյություն է ունեցել ֆեոդալական նաև ուրիշ երկրներում, ուր գյուղացիությունը գտնվել է ճորտական ծանր վիճակում: Վրաստանում, օրինակ, XIV—XV դարերում բարձր ազնվականի արյան գինը եղել է 20.000, միջին ազնվականի 12.000, իսկ գյուղացունը միայն 400 դանգ²²:

Այս համեմատություններից պարզ երևում է, որ հինգերորդ դարում «շինական»-ների պատիվը և անձը դնահատվել է Հին Հաստանում բավական բարձր:

Այդ տեսակետից, ինչպես տեսնում ենք, նրանց դրությունը հավասար է եղել անգլիական ազատ գյուղացիության՝ *свобл*-երի դրությանը և երկու անգամ ավելի նպաստավոր է եղել, քան ռուսական սմերդներինը: Այս փաստը, իմ կարծիքով, նորից կարևոր ու ուշագրավ մի նշան է «շինական»-ների թե՛ տնտեսական և թե՛ իրավական համեմատաբար ավելի բարեկեցիկ ու բարձր կացություն, քան ֆեոդալական այն երկրներում, ուր գոյություն են ունեցել ճորտության ծանր տեսակները:

Եվ իրոք, ինչպես տեսանք, նրանք ունեցել են հավանորեն, ընտանեկան, ընչական, ժառանգական իրավունքներ, որոնցից հաճախ զրկված են եղել արևելյան Եվրոպայի ստրկանման ճորտերը:

Դվինի ժողովի կանոններում կա նույնիսկ հետաքրքիր մի ակնարկ, որից, իմ կարծիքով, անհավանական չի լինի եզրակացնել, որ նրանք կարող էին գնել անշարժ գույք:

«Եւ զկէս շնորհին և զհող և զշուր բովանդակ,— ասված է Դվինի ութերորդ կանոնում,— սրրոյ եկեղեցւոյ թողցէ վախճանեալ քահանայն և կին նորա. ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղիցի՝ եթէ ոչ որգիս կամ թոռունս ունիցին, զի չվայելէ զսրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւնն յարժանաւոր մերձաւորաց օտարացունել և տալ հեռաւոր օտարաց: Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ վաճառել իսկ թողացուցէ վարդապետն՝ և զայն մի՛ շինականի ռմբֆ, այլ յովստէ եկեղեցւոյն, թէև հեռաւոր իցէ» (հրատար. Մխիթար վարդապետի և Ս. Տիգրանյանի, էջ 16—17):

Թեև այս կանոնի մեջ ասված է հատկապես, որ քահանայի անշարժ գույքը չպետք է վաճառվի որևէ «շինական»-ի, այլ միայն հոգևորական դասի անդամներին, սակայն քանի որ «շինական»-ները հիշատակվում են իբրև հավանական գնորդներ, ոչպարզ է, որ արգելված չի եղել նրանց գնել անշարժ գույք և ունենալ հատուկ «քսակագին» հողեր:

²² А. С. Френкель, Сборник законов грузинского царя Вахтанга VI, Тифлис, 1887, *տե՛ս* Законы Агбуги, стр. 96, 98 *և*;

Հետաքրքիր է ու ուշագրավ, որ Սասանյան Պարսկաստանում ևս օրենքները պետք է նախապես կանխեն, որ ազնվականների անշարժ գույքը չանցնեն դյուղացիների ձեռքը (տե՛ս Christensen, L'empire des Sassanides, p. 25 և 26, նաև „Lettre de Tansar au roi de Tabaristan“, p. 222 և 527)։

Մատենագրական աղբյուրների վկայություններից երևում է նույնպես, որ «շինական»-ներն ուշադրության են առնվել երբեմն ֆեոդալական Հայաստանի քաղաքական կենցաղում։

Այդ մասին կարևոր են աղբյուրների հետևյալ վկայությունները.

1. Փաւստոս, IV, ԾԱ, էջ 165՝

«Ակա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նախարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գործակալք և ղասապետք շինականաց»։

2. Ղազար Փարպեցի, II, ԼԶ, էջ 67՝

«Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ ոչ երբեք ղադարէր գրել նամականի առ իշխանս եւ շինականս և քահանայս աշխարհիս Հայոց»։

3. Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 76՝

«Տրդատիոս Հայոց Մեծաց արքայ, առ աշխարհս և առ գաւառս, առ նախարարս և առ զօրս և առ շինականս և առ ամենեւին ողջոյն»։

Համտե նաև Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 73։

Հիմնվելով վերև առաջ բերված վկայությունների ու ականարկների վրա՝ կարելի է ըստ իս հավանական համարել, որ «շինական»-ները պատմական հնագույն այս ջրջանում չեն ունեցել այն ստրկանման կախումն իրենց տերերից, ինչպես leibeigen ու крепостной կոչված գյուղացիները։ Նրանք բյուզանդական կոլոնների և Սասանյան Պարսկաստանի գյուղացիության նման կապված են եղել, հավանորեն, իրենց հողին ու հարկատու ծառայությանը։ Ինչպես Բյուզանդիայում և Սասանյան Պարսկաստանում՝ նրանց արգելված է եղել դուրս գալ ինքնակամ իրենց դասից և մտնել ուրիշ դասերի մեջ։ Հայտնի է, որ կոլոնները կտրող էին ընդունվել տեղական եկեղեցիների կղերականության մեջ իրենց տերերի հաճությամբ²³։ Կալվածատիրոջ այդ թույլտվությունը բնական է ենթադրել նաև Հին Հայաստանում։

²³ Ss՝ս Кулаковский Ю., История Византии, т. I, Киев, 1918, стр. 73.

կոլոններին մասին հայտնի է նույնպես, որ նրանք իրավունք չեն ունեցել վարել որևէ պետական պաշտոն՝ նույնիսկ ստորին կարգի²⁴։

Իմ կարծիքով, նույնը եղած պիտի լիներ նաև Հին Հայաստանում։ Շահապիվանի ժողովի ԺԶ-րդ կանոնում ասված է, որ «առանց գաւառի եպիսկոպոսին շիշխէ լինել եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ ոք դատաւորաց» (Կանոնագիրք Հայոց, հրատւղտճյանի, էջ 76)։

Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, հիշվում են իբրև դատավորներ հատկապես «ազատ»-ները։ Վերև մենք նույնպես տեսանք, որ թե՛ Արշակունյաց «ոստան»-ում և թե՛ նախարարական շրջաններում նաև ուրիշ պետական պաշտոններ վարել են որպես «գործակալ»-ներ, գլխավորապես, «ազատ»-ները։

Պատմական աղբյուրների վերահիշյալ վկայությունները, թեև դրանք, մեծ մասամբ, պատահական ու անուղղակի ակնարկներ են և կարող են առանձին վերցրած համոզիչ չլինել, սակայն իրենց ամբողջությամբ որոշում են ընդհանուր գծերով «շինական»-ների իրավական դրությունը Արշակունյաց և մարզպանական շրջանում։

Փաստական մեր դիտողություններից երևում է, որ պատմական այս շրջանում գոյություն չէր ունեցել Հայաստանում այն ժանր ստրկանման ճորտությունը (Leibeigenschaft, крепостничество), որ համեմատաբար նոր ժամանակներում առանձնահատուկ է եղել, գլխավորապես, արևելյան Եվրոպային։

«Շինական»-ների «անազատ» կոչվելը չպետք է, ուրեմն, հասկանալ այն իմաստով, իբր թե նրանք եղել են ստրուկ կամ իրավագուրկ, նրանք «անազատ» են անվանվել, իբրև «ազատ»-ներից տարբեր ու «ազատ»-ներին հակադիր մի դաս։

Իբրև եզրակացություն մեր քննության՝ կարող ենք ըստ իս նաև հավանական համարել, որ «շինակսն»-ները հնագույն այս շրջանում կարող էին իրենց իրավական դրության հիմնական գծերով համապատասխան լինել բյուզանդական կոլոններին, Սասանյան Պարսկաստանի գյուղացիության և գերմանական hörig կոչված գյուղացիներին։ Իսկ այս կարգի գյուղացիության համեմատաբար մեղմ վիճակը, որ տարբեր էր ստրկանման ճորտությունից, մենք վերև բնորոշեցինք իբրև կիսազատ ճորտություն։

Ուրեմն՝ Հին Հայաստանի «շինական»-ները համաձայն մեր դիտողությունների եղել են պատմական հնագույն այս շրջանում կիսազատ ճորտներ (=hörig կամ завиcнмыѣ)։

²⁴ Նույնը, էջ 73։

«Շինական»-ների տնտեսական կենցաղի նկատմամբ Հին Հայաստանում քննության արժանի խիստ կարևոր մի հարց կա, որ մինչև այժմ, որքան ինձ հայտնի է, հիմնավոր կերպով հարուցված չէ եղել հայագիտական նորագույն ուսումնասիրություններում:

Այդ՝ համայնական հողատիրության խնդիրն է, որ ինչպես ենթադրում են, համատարած ու ընդհանուր երևույթ է եղել պատմական զարգացման սկզբնական շրջանում:

Որ համայնական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ նաև Հին Հայաստանում, այդ նրա անցյալ կյանքի համայնական-տոհմային հնագույն շրջանի համար անժխտելի է:

Բայց նախարարական Հայաստանում ևս դժվար թե հողատիրության, նախնական կարգերն իսպառ ու անհետ կորած լինեին: Որքան էլ այդ կարգերը հեղաշրջված ու փոփոխված լինեին Հայաստանի ֆեոդալական նոր պայմաններում, ավելի քան հավանական է, որ պատմական հետագա այս շրջանում ևս նրանցից մնացած պիտի լինեին որոշ հետքեր:

Անհավանական չէ նույնիսկ, որ նախկին համայնական-տոհմական կյանքի ֆեոդալացումից հետո համայնական հողատիրությունը՝ որպես երկրագործական արտադրության ձև՝ կարող էր հարմարեցված լինել կալվածատիրական նոր պայմաններին և որոշ տեղերում պահպանած լինել իր գոյությունը, կրելով իր հիմնական բովանդակության մեջ ո՛չ այնքան խոշոր փոփոխություններ:

Եթե Հին Գերմանիայի ու Եվրոպական մյուս երկրների նկատմամբ համայնական հողատիրության նախկին տեսություններն այժմ վերաքննության են ենթարկվում, այդ չի վերաբերվում բնավ ո՛չ Հին Հայաստանին, ո՛չ էլ Մերձավոր Արևելքի երկրներին: Արևմտյան Եվրոպայում ֆեոդալականացման պրոցեսն առաջ էր եկել Հռոմեական կուլտուրական մեծ պետության քայքայման շրջանում, իսկ Հին Հայաստանում և հարևան երկրներում նախարարական-ավատական կազմակերպությունը ծնունդ էր առել համայնական-տոհմական կենցաղի աստիճանական զարգացման ընթացքում:

Միանգամայն բնական է, որ այստեղ տոհմական նախորդ շրջանից մնացած ժառանգությունը շատ ավելի մեծ պիտի լիներ և ավելի ցայտուն կերպով արտահայտված, քան Արևմտյան Եվրոպայում:

Հայոց պատմության մատենագրական աղբյուրները, ինչպես

տեսանք, չունեն հայոց ներքին կյանքի թե՛ այս և թե՛ նման խընդիրների մասին պարզ ու որոշ տեղեկություններ: Նրանց մեջ կան սակայն միջանկյալ ակնարկներ, որոնք ըստ իս ուշագրավ որոշ նշաններ են, որ համայնական հողատիրության վերապրումներ գոյություն ունեցած պիտի լինեին Հին Հայաստանում թե՛ Արշակունյաց թագավորության ժամանակ և թե՛ նրա անկումից հետո:

Մովսես Խորենացին, խոսելով Արշակունի Տիրան թագավորի մասին, պատմում է, որ

«Եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն.— Ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ.— Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան, այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յիեֆեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթւի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բաղումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ» (II, ԿԲ, Թիֆլիս. 1913, էջ 193):

Նիկ. Ադոնցի «Հայաստանը Յուստինյանի ժամանակ» վերահիշյալ իր գրքում այս վկայության մեջ հավաստի ու արժեքավոր է համարում հողի բաժանման սովորությունն ըստ մարդաթվի, որ ընդունված է եղել Արշակունիների ընտանիքում:

«Միևնույն սկզբունքները,— ասում է նա,— որ գործադրվել են արքայական տան մեջ, գոյություն են ունեցել նաև իշխանական ընտանիքներում, ուստի և պատմագրի մատնանշած քաժան հողատիրության սովորությունն ունի իր ուժը նաև իշխանական միջավայրի համար: Բայց այս երևույթը չի վերաբերվում Արշակունիների ժամանակին, ինչպես ենթադրում է պատմագիրը, այլ այստեղ մենք գործ ունենք իրեն Խորենացուն ժամանակակից կարգերի հետ, որ նա վերագրել է հնագույն ժամանակներին: Ժառանգական կալվածքի բաժանումն ընտանիքի անդամների մեջ արտահայտություն է սեպուհական իրավունքի: Այդ իրավունքը զարգացել էր, ըստ երևույթին, վեցերորդ դարում» («Армения в эпоху Юстиниана», стр. 474).

Նիկ. Ադոնցի այս ենթադրությունից հետևում է, որ Հայաստանում նախարարական տոհմերի մեջ նախ տիրող է եղել միաժառանգության ու մայրատի սկզբունքը: Արշակունյաց թագա-

վորության անկումից հետո միայն սկսել է հետզհետե փոխվել ժառանգության այս կարգը և վեցերորդ դարում զարգացել է արդեն բաժան ու անջատ՝ «սեպուհական» հողատիրությունը: «Սեպուհական» կամ «սեպհական» անվանվել են այնուհետև այն հողաբաժինները, որ ժառանգում էին «սեպուհ»-ները, այսինքն՝ նախարարական տոհմերի «սեպուհ» կոչված անդամները:

Նիկ. Ադոնցը ենթադրում է, ուրեմն, որ խորենացու վերոհիշյալ վկայությունը վերաբերվում է նախարարական միջավայրում տեղի ունեցող ժառանգական հողաբաժանումներին:

Խորենացու մուժ ու անորոշ վկայության այս կերպ մեկնումը, թեև շատ հետաքրքիր է ու հրապուրիչ, սակայն ունի առարկելի կետեր և թվում է ինձ խիստ վիճելի:

Նախ և առաջ, դժվար է համաձայնել Նիկ. Ադոնցի հետ, որ Հայաստանում «սեպուհական» ժառանգման զարգացումը տեղի էր ունեցել վեցերորդ դարում:

Վեցերորդ դարից դեռ շատ առաջ «սեպհական» կալվածներ հիշատակվում են Փավստոսի պատմության մեջ, որը գրել է իր աշխատությունը հինգերորդ դարի առաջին կեսում: Խոսելով Մերութան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի ապստամբության ու կրոնափոխության մասին, Փավստոսը հաղորդում է, որ

«ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց, և բազում յիւրեանց սեփնականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն» (IV, ԾԹ, Վենետիկ, 1889, էջ 184):

Նույն Փավստոսի վկայությամբ՝ Մերութանը խոստանում է Շապուհ արքային՝

«թէ իցէ և կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին» (IV, ԻԳ, էջ 144):

Նիկ. Ադոնցի վերոհիշյալ լուսաբանությունն առարկելի է նաև այն տեսակետից, որ մատենագրական աղբյուրների մեջ «սեպհական» և «սեպհականություն» անվանվում են ո՛չ միայն «սեպուհ»-ների բաժան ու անջատ հողաբաժինները, այլև, ընդհանրապես, թե՛ Արշակունյաց, թե՛ կաթողիկոսության և թե՛ ազնվականության անբաժան ու տոհմային կալվածները:

Այս երկրորդ նշանակությամբ գործ են ածված «սեպհական» ու «սեպհականություն» հետևյալ վկայություններում.

1. Ղազար Փարպեցի, I, Ը, էջ 11՝

«Եւ զքնիկ սեպնական կալուածի ազգին Արշակունեաց զքաղաքն Վաղարշապատ, զքնակութիւն ոստանի Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ շինուածս անթիւ ապարանացն».

2. Խորենացի, II, ԺԲ, էջ 122՝

«Իսկ զՀերակլան զառնապատկերն, զոր արարեալ էր ի Սկիւղեայ և ի Դիպինոսէ կրետացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին [Վահունիք] ի Տարօն, յիւրեանց սեպնական գիւղն յԱշտիշատ».

3. Խորենացի, II, Կէ, էջ 203՝

«Ասէ ապա [Ագաթանգեղոս] և զգալն Անակայ նննգութեամբ, հրապուրեալ ի խոստմունս Արտաշրի, որ ասաց, եթէ զգրուն պատուական զձեր սեպնական Պանլան, զայն անդրէն ի ձեզ դարձուցից, և զքեզ թագաւ փառաւորեցիցս: Վասն որոյ յանձն առեալ Անակայ՝ սպանանէ զԽոսրով».

4. Մովսէսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, հրատ. Մ. Էմինի, Մոսկվա, 1860, I, ԻԱ, էջ 49՝

«Եւ ապա այնուհետեւ ամենայն եպիսկոպոսք զիրաքանչիւր իշխանութեան զերիցունս և զսարկաւագոսնս և զբոլոր ուխտ եկեղեցւոյ հանդերձ տէրունեան նշանաւ խաչին առեալ միաբանութեամբ և յոյժ փութով ժողովեցան ի սեպնական գիւղն արժունի՝ յանուանեալն Գիւտական».

5. Նույնը, II, ԺԴ, էջ 127՝

«Զի ստացաւ հայր իմ զաշխարհս զայսոսիկ երեսին՝ Աղուանից, Լըփնաց և Զողայ յիւր սեպնական ժառանգութիւն յաւիտեականս»:

Անկախ այս խնդրից՝ վիճելի է թվում ինձ նաև նիկ. Աղոնցի հիմնական այն եզրակացութիւնը, որ իբր թե Խորենացու վերոհիշյալ հատվածի մեջ ակնարկված է ժառանգական գույքի բաժանման կարգը նախարարական ընտանիքի անդամների, այսինքն՝ «սեպունհ»-ների մեջ:

Ամենաուղազրաւը և կարեւորը Խորենացու վկայութեան մեջ ոչ այնքան նրա պատմական կողմն է, որ ավելի քան վիճելի է, ո՛չ այն, որ Հաշտյանք, Աղիովիտ և Առքերանի գավառներում տեղի է ունեցել հոգաբաժանում Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած սերունդների մեջ, այլ, գլխավորապես, հոգաբաժանման այն հատուկ կարգը՝ «հաւասար» և «ըստ մարդաթուի», որը, ըստ երևութիւն, գոյութիւն է ունեցել Հայաստանի իրական կենցաղի մեջ և, հավանաբար, հենց Խորենացու իսկ ժամանակ:

Նիկ. Աղոնցի ենթադրությունը, որ այդ կարգը վերաբերվում է «սեպուհական» անջատ հողատիրության, ավելի քան վիճելի է: Դժվար է խիստ ընդունել, որ նախարարական ընտանիքների անդամները կարող էին տոհմային հողերը ժառանգել «հաւասար» և «ըստ մարդաթուի»: Եթե այդ այդպես լիներ, այդ դեպքում՝ ժառանգատու նախարարների բազմանդամ ընտանիք ունեցող որդիները պետք է ստանային մի քանի անգամ ավելի մեծ հողաբաժիններ, քան նրանց ամուրի որդիները: Ժառանգության բաժանման այս կարգը խիստ արտասովոր է ու անօրինակ կալվածատեր ազնվական դասի համար:

Հողերի «հաւասար» և, «ըստ մարդաթուի» բաժանումը, որ քան հայտնի է, ո՛չ թե «սեպուհական» ժառանգության, այլ համայնական հողատիրության որոշ կարգ է:

Ըիշտ է, հորենացու վկայության մեջ պարզ ասված է, որ հողաբաժանումը Հաշտյանք, Աղիովիտ և Առքերանի գավառներում տեղի է ունեցել Արշակունյաց տոհմում, սակայն նրա վկայության մեջ ամենից կասկածելի կետը հենց այն է, որ նա համայնական հողատիրության վերաբերվող հատուկ կարգերը վերագրել է նաև Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած ժառանգներին:

«Հաւասար» և «ըստ մարդաթուի» հողաբաժանման սկզբունքը եղել է, ըստ երևույթին, հորենացու ժամանակ իրական ու հանրաժանթ մի փաստ, և ինձ թվում է, որ հորենացու վկայության մեջ մատնանշված կարևոր այդ փաստը կարող է ընդունվել, որպես ուշագրավ մի ակնարկ, որ Հին Հայաստանում գոյություն են ունեցել, հավանաբար, համայնական հողատիրության որոշ կարգեր և «հաւասար» հողաբաժանումն «ըստ մարդաթուի»:

Հորենացու նույն այդ վկայությունը մեկնելիս ի նկատի պետք է ունենալ նաև այն, որ նա թաղավորակաւ սերունդ է համարել «ոստանիկ»-ների դասը:

Այս կարևոր հանգամանքը հիմք կարող է ծառայել ենթադրելու, որ նրա վկայությունը վերաբերվում է իրոք ո՛չ թե Արշակունյաց տոհմի աճած սերունդներին, այլ «ոստանիկ» դասին:

Վերև մենք տեսանք, որ «ոստանիկ» են անվանվել Արշակունյաց բուն երկրի «ազատ»-ները, որոնցից կազմված գունդն անվանվել է «արքունի» կամ «յարքունի տանէ»: Դժբախտաբար, աղբյուրների վկայություններից չի որոշվում, թե այդ «ոստանիկ» ազատների դասին շե՞ն պատկանել արդյոք նաև աղատ գյուղացիներ, որոնք կարող էին գոյություն ունեցած լինել Հին Հայաստանում:

հորհնացու ակնարկած «հաւասար» և «ըստ մարդաթուի» հո-
ղաբաժանումը նոր ու հավանական լուսարանություն կստանար,
եթե կարեւոր այս խնդրի մասին գտնվեր մատենագրական աղբյուր-
ների մեջ հաստատուն որևէ մի ցուցում կամ ակնարկ:

Որ համայնական հողատիրությունը տարածված երևույթ է
եղել և գոյութիւն է ունեցել նաև Հին Հայաստանի հարևան երկր-
ներում՝ այդ մասին կարեւոր մի վկայութիւն ունի Ստրաբոնն իր
«Աշխարհագրութիւն» մեջ (Geographia, Lib. XI, cap. III, տե՛ս
Латышев, Известия древних писателей греческих и латин-
ских о Скифии и Кавказе, СПб, 1890, стр. 140).

Խոսելով Վրաստանի սոցիալական կազմակերպության մա-
սին՝ Ստրաբոնը վկայում է, որ

«գույքերը նրանց [այսինքն՝ Իբերիայի բնակչության] ընդ-
հանուր են ըստ տոհմերի. կառավարում է և տնօրինում յուրա-
քանչյուր գույք [ամեն մի տոհմի] ավագը»:

Հիմնվելով Ստրաբոնի այս վկայության վրա՝ Զավախովը են-
թադրում է, որ առաջին դարում Քրիստոսից հետո Վրաստանում
դեռևս գոյութիւն չի ունեցել մասնավոր սեփականութիւն և
գույքերը համարվել են տոհմական ընդհանուր սեփականութիւն:
Այս գույքերի կառավարումը տոհմի ավագ անդամի տնօրինու-
թյամբ, Զավախովի կարծիքով, մի պարզ ցուցումն է, որ նույն
գույքերի օգտագործման ձևը եղել է համայնական-տոհմական
(տե՛ս Государственный строй древней Грузии и древней Арме-
нии» стр. 9) .

Դժվար չէ կռահել, որ նման կազմակերպութիւն ունեցած պի-
տի լինելը Հին Հայաստանն իր զարգացման հնագույն տոհմական
շրջանում, ուստի և միանգամայն հնարավոր է, որ նաև հետագա
դարերում համայնական հողատիրության որոշ կարգեր կարող
էին պահպանված լինել ֆեոդալական Հայաստանում:

Բացի հորհնացու ակնարկած «հաւասար» և «ըստ մարդաթուի»
հողաբաժիններից, Ագաթանգեղոսի մոտ ևս, ինչպես վերև տե-
սանք, հիշատակվում են չորս չորս հողս յամենայն ագարակ տե-
ղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երգոյ» (ԾԺԹ, էջ 436), որ
հատկացվել էին հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայութեան»
համար: Հիմնվելով Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության
վրա, որի մեջ «հողս երգոյ» թարգմանված է arouras, վերև ես են-
թադրել էի, որ «հողք երգոյ» այն հատուկ հողաբաժիններն են,
որոնք ավաններում և ագարակներում տրվել են «երդ»-երին:

Եթե իմ այս բացատրությունն ընդունելի համարվի՝ այդ դեպքում՝ որոշվում է հողաբաժանության նաև մի այլ կարգ, որ գոյություն է ունեցել Հին Հայաստանում Արշակունյաց թագավորության ժամանակ և որը, հավանաբար, հարատևած պիտի լինեի նաև Արշակունյաց հարստության անկումից հետո:

Արդ՝ եթե ուղիղ է մեր այս ենթադրությունը, որ հողաբաժանման վերոհիշյալ կարգերը պահպանված են եղել ֆեոդալական Հայաստանում՝ կարևոր է նաև որոշել, թե ո՞րն է գրաբար լեզվի մեջ այն հատուկ բառը, որ ունեցել է գյուղացիական հողաբաժնի իմաստ:

Նիկ. Ադոնցը վերոհիշյալ իր աշխատության մեջ կարծում է, որ գյուղացիական հողաբաժինն անվանվել է Հին Հայաստանում «կեանք, արար» կամ «կալուած»: Հատկապես «կալուած» բառը նա համապատասխան է համարում ֆեոդալական շրջանի *tenure* բառին (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 480):

Նույն այդ բառերը, որ ունեն գյուղացիական հողաբաժնի իմաստ, գործ են ածվել, նրա կարծիքով, նաև իշխանական ու եկեղեցական կալվածների համար:

Իր այս կարծիքն ապացուցանելու համար նա մատնացույց է անում Եղիշեի պատմության հեղեյալ հատվածը.

Եղիշե, Վենետիկ, 1864, էջ 231—232՝

«Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուստ, ասէ մարդպանն, եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցեն և կալցեն զիրաքանչիւր զարարս. երդմամբ կնքէր և առաքէր ի կողմանս կողմանս: Որ և բազումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիրաքանչիւր կալուածս»:

Թե ինչո՞ւ այս հատվածում «կեանք, արար, կալուած», պետք է նշանակեն գյուղացիական հողաբաժին (*крестьянский надел*)՝ ինձ համար այդ միանգամայն մուլթ է և անհասկանալի: Ընդհակառակը՝ այդ լուսաբանությունը թվում է ինձ ամենից քիչ հավանական, որովհետև հատվածի բովանդակությունից պարզ երևում է, որ «կեանք, արար» ունեցել են ո՞չ միայն «շինական»-ները, այլ և «ազատ»-ները:

Սխալ է ու անհիմն, իմ կարծիքով, Նիկ. Ադոնցի նաև այն պնդումը, որ իբր թե «կեանք, արար, կալուած» ունեն նույնանման նշանակություն:

«Արար» և «Կեանք», ինչպես ցույց են տալիս մեր հին մատենագրության մի շարք վկայությունները, ունեն ո՛չ թե անշարժ գույքի իմաստ, այլ շարժական:

Արարհամ խոստովանողի «Վկայք Արևելից» երկում «արար» բառը գործ է ածված հենց այդ նշանակությամբ: Եզանդուխտի վկայարանության մեջ մոգպետը, կամենալով հրապուրել քրիստոնյա կնոջը, հրամայում է՝

«Զի զերանելին Եզանդուխտ տարեալ անցուցանիցեն առ դրաւք ապարանից իւրոց, և ցուցցեն նմա զամենայն արարս նորա, և զբազմութիւն ծառայից նորա և զաղախնանց, զի հանցեն առաջի նորա, զի տեսանելով զբազմութիւն ստացուածոց նորա, հաւանեսցի լինել նմա կնութեան» (Էջմիածին, 1921, էջ 162):

Շատ պարզ է, որ «արարս» այս հատվածում ո՛չ թե մոգպետի հողաբաժիններն են, այլ ապարանքում գտնվող շարժական գույքն:

Նույն իմաստն ունի «արար» բառը նաև Ղազար Փարպեցու Թղթի մեջ՝

«որ նման գալլոց յարձակեցան յարարս իմ և գիշատեցին յանխնայ, տեսեալ զիս՝ եթէ մերժեցայ յաշաց քոց» (Տփղիս, 1904, էջ 197):

Եզիշե պատմագիրը ևս, որից վկայություն է բերել Ադոնցը, «արար»-ը, ըստ երևույթին, հասկացել է նույնպես իբրև շարժական գույք իր պատմության մի ուրիշ հատվածում:

«Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա [Վասակի],— վկայում է Եզիշեն,— որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զղարդս կանանց ևս եդ ի վերայ և ետ և տուծեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի» (Վեհետիկ, 1864, էջ 246):

Իմ կարծիքով, «զհարց և զհաւուց և զիւր արարս» խոսքերով ակնարկված են այստեղ ո՛չ թե Վասակի ու նրա նախնիքների հողերը կամ անշարժ գույքերը, այլ շարժականը:

Ավելի որոշ է «Կեանք» բառի նշանակությունը, որը նույնպես չունի ո՛չ հողաբաժնի իմաստ, ո՛չ էլ անշարժ գույքի: Նրա բուն նշանակությունը պարզ երևում է Ավետարանի գրաբար թարգմանությունից, ուր «Կեանքը» համապատասխանում է հունարեն

bios, լատին. victum և ռուս. пропитание բառերին, Ուրեմն՝ «կեանք» բառը, ինչպես տեսնում ենք, ունեցել է շարժական գույքի և հատկապես՝ կենսամթերքների իմաստ:

Որ «կեանք» բառը չէր կարող ունենալ հողի կամ հողաբաժնի նշանակութիւն, այդ երևում է նաև Շահապիվանի ժողովի հետևյալ կանոնից.

«Եթէ ոք զկինն թողցէ զորդույ մայր առանց բանի պոռնկութեան, և կամ թէ արատ ինչ շար ի մարմնի լիցէ, ալլ որ եթէ այլն շնարարոյ իցէ և ալլում ակն եղեալ իցէ, դատաստանն այս լիցի, զտուն և զկեանս և զորդիս և զհող և զջուր և զամենյան ինչ բաժանեցեն հասարակաց, զկէսն կնոջն առցեն» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 64):

Միանգամայն պարզ է, իմ կարծիքով, որ «կեանք»-ն այստեղ գործ էածված շնացողի շարժական գույքերի համար, որովհետև առանձին հիշատակված է կանոնում նաև նրա «հող» և «ջուր»-ը:

Ինչպես տեսնում ենք, ո՛չ «կեանք»-ը և ո՛չ էլ «արար»-ը չունեն այն նշանակութիւնը, որ նրանց վերադրել է Ադոնցը: Պետք է, ուրեմն, ենթադրել որ նրա մատնանշած Եղիշիի վկայութեան մեջ ևս «կեանք» և «արար» ունեն շարժական գույքի իմաստ կամ նշանակում են, ընդհանրապես, գույք կամ ինչք, բայց ո՛չ գյուղացիական հողաբաժին:

Ահա վանական ու անընդունելի պետք է համարել Ադոնցի կարծիքը նաև «կալուած» բառի մասին:

«Կալուած» ճիշտ է, համապատասխանում է ֆրանսերեն tenure բառին, սակայն այդ նմանութիւնը քերականական է միայն ու արտաքին, մինչդեռ նրանց բովանդակութիւնն ու իմաստը բոլորովին տարբեր են: Tenure ֆեոդալական Ֆրանսիայում մատնանշում է հողերի տիրապետության եղանակները (tenures à cens, tenures à champart, tenures roturières, tenures villaines), իսկ Հայաստանում «կալուած»-ը, ինչպես երևում է մատնագրական վկայութիւններից, չի ունեցել այդպիսի հատուկ իմաստ, այլ ընդհանուր մի բառ է, որ գործ էածվել զանազան տեսակ անշարժ գույքերի համար: Ոսկեդարյան գրաբար թարգմանութիւններում, սովորաբար, նա համապատասխանում է հունարեն kataschesis բառին, որ նշանակում է ունեցվածք, ստացվածք կամ տիրութիւն (имущество, владение): Հայոց մատնագրութեան հնագույն երկերում և ո՛չ մի դեպք ինձ հայտնի չէ, որ «կալուած»

բառն ունենար գյուղացիական հողաբաժնի հատուկ նշանակութիւնը:

Բայց մի՞թե չի պահպանվել գրաբար լեզվի մեջ ուրիշ որևէ մի բառ գյուղացիական հողաբաժնի նշանակութիւնով:

Եթե ճիշտ է մեր ենթադրութիւնը, որ հողաբաժանութիւն վերոհիշյալ կարգերը գոյութիւն են ունեցել Հին Հայաստանում, շատ պարզ է, որ հողաբաժնի համար հատուկ որևէ մի բառ գործածված պիտի լիներ հին հայերենում: Եվ այդ հատուկ բառը, թվում է ինձ, որ կա իրոք գրաբարում, միայն թե քրիստոնեւոյան շրջանում նա ստացել է նաև տարբեր նշանակութիւն:

Ես հավանական եմ համարում, որ գյուղացիական հողաբաժինը կոչվել է Հին Հայաստանում ո՛չ թե «կեանք, արար, կալուած», ինչպես այդ ենթադրել է Նիկ. Ադոնցը, այլ «վիճակ»:

Քրիստոնեւոյան շրջանում, ինչպես հայտնի է, «վիճակ» և «վիճակաւոր» բառերը գործ ենածվել կղեր և կղերականի փոխարեն (հունարեն klêros և klêrikos), Այդպես էին անվանվում հոգեւորականութիւնը և հոգևորականները, որովհետև «Գործք Առաքելոց»-ի վկայութիւնով, Մատթևոսն առաքյալ էր ընտրվել վիճակի միջոցով («Գործք Առաքելոց», Ա, 23—26):

Որ «վիճակ» բառն ունեցել է հողաբաժնի նշանակութիւն, այդ երևում է հայոց հնագույն մատենագրութիւն մի շարք հատվածներից:

«Վիճակ» բառի տակ Հայկազյան լեզվի նոր բառգրքում առաջ է բերված Մխիթար Գոշի Երեմիայի յեկնութիւնից հետևյալ վկայութիւնը՝ «վիճակ զանդաստանս սովոր են ասել: և մեք սովոր եմք զԺողովուրդս վիճակ կոչել»: Այս վկայութիւնը պարզ ցույց է տալիս, որ «վիճակ»-ը, սովորաբար, գործ էածվել անդաստանների, այսինքն՝ արտերի կամ վարելահողերի համար: Հենց նույն սյւր իմաստն ունի «վիճակ»-ը Հին կտակարանի հայերեն թարգմանութիւն զանազան հատվածներում. օրինակ՝

1. «Տացէ ինձ զայն կրկին, որ է ի վիճակի ագարակի իւրոյ» (Մն. ԻԳ, 9):

2. «Եւ ասէ Աբիսողոմ ցժառայս իւր, դիտէք զվիճակ զեանոյ Յովաբայ, լի գարուվ մօտ է առ իս, երթայք այրեցէք ղնա հրով» (Թագ. Բ, ԺԴ, 30):

«Վիճակ» բառի գործածութիւնը գյուղացիական հողաբաժնի համար հաճախակի մի երևույթ է եղել նաև Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի գյուղական համայնքներում: Ֆրանկների Lex

Salica օրենսդրական գրվածքում գյուղացիական հողաբաժիններն անվանվել են sors, գերմանական երկրներում՝ Loos, Հունաստանում և Հռոմեական կայսրության հելլենականացման ենթարկված մասերում՝ klēros, Հին Ռուսաստանում՝ жеребье:

Ինչպես տեսնում ենք, այս տերմինները միևնույն նշանակությունն ունեն և միանգամայն համապատասխանում են հին հայերեն «վիճակ» բառին: Պետք է ենթադրել, որ այս բառը համայնական հողատիրության հնագույն շրջանի տերմին է: Համանական է նաև, որ նախնական այդ շրջանում հողերի պարբերական վերաբաժանումները կատարվել են վիճակարկությամբ և այդ, ըստ երևույթին, սովորական մի կարգ է եղել գյուղական նախնական համայնքներում:

Պրոֆ. Զավախովը վերև հիշված իր աշխատության մեջ ենթադրում է, որ Հին Հայաստանում և Վրաստանում, ինչպես նաև Արևելքի ուրիշ ազգերի մոտ, պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ տերմինները ծագել են, մեծ մասամբ, համայնական-տոհմական նախորդ շրջանից: Օրինակ՝ երկրային բոլոր միավորները, ամենափոքրից սկսած մինչև ամենամեծը, անվանվել են «տուն»։ «տանուտէր» բառը, որ սկզբում ունեցել է տոհմապետի իմաստ, հետագայում գործ էածվել նախարարական տոհմերի նահապետների, վարչական պաշտոնյաների և նույնիսկ թագավորի համար:

Ինձ թվում է, որ համայնական-տոհմական հնագույն շրջանի նման տերմիններից է նաև «վիճակ» բառը, որն ունեցել է սկզբում համայնական հողաբաժնի իմաստ, իսկ հետո ստացել է և ուրիշ նշանակություններ:

Ուշադրության արժանի է, որ նույն այս «վիճակ» բառը Հին կտակարանի գրաբար թարգմանության մեջ համապատասխանում է հունարեն schoinismos, schoinisma բառերին, որ նշանակում են՝ շափում լարի, չվանի միջոցով կամ լարով, չվանով շափված հողաբաժին:

Նյութից մի փոքր շեղվելով, ավելորդ չեմ համարում այստեղ հիշել, որ Թովմա Արծրունին, նկարագրելով թե ինչպես Բուլալի ժամանակ, Վասպուրականի նվաճումից հետո, այնտեղ հաստատվում էր մահմեդականների գաղթականությունը, պատմում է, որ «սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տաքածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց, որ Ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռնամուկս եղեն

բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս» (III, Ե, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 151—152):

Եթե ի նկատի առնվի, որ այս անցքերը տեղի են ունեցել Բուղայի արշավանքի ժամանակ 852—853 թվականներին, իսկ Թովմա Արծրունու պատմությունը գրված է, հավանաբար, տասերորդ դարի երեսնական թվականներին, դժվար թե առանց վերապահության կարելի լինի ընդունել, որ մահմետական գաղթականության մեջ հողաբաժանումն իսկապես տեղի է ունեցել ճիշտ այն եղանակով, ինչպես վկայում է Թովմա Արծրունին: Թովմա Արծրունու պատկերավոր ու նկարագրական շարադրության մեջ կարող է, հավանաբար, արտահայտված լինել ո՛չ թե իրական ու պատմական եղելությունը, այլ հողաբաժանության այն ծանոթ ու սովորական կարգը, վիճակարկությամբ ու լարածությունամբ, որ գոյություն է ունեցել նրա ժամանակ Հայաստանում:

Ես այդ չեմ պնդում, բայց և չեմ համարում անհավանական ու անհնարին:

Համենայն դեպս, վերոհիշյալ փաստը, որ հունարեն schoinismos և schoinisma թարգմանվել են «վիճակ» բառով, կարևոր ու ուշագրավ մի ակնարկ է, որ «վիճակ» բառը կապ է ունեցել հողաբաժանության հետ, որովհետև գործ է ածվել, ըստ երևույթին, այնպիսի հողամասերի համար, որոնք չափված և որոշված են եղել լարածությամբ:

Հիմնվելով այս և մյուս մեր ասածների վրա, ինձ թվում է, կարող ենք եզրակացնել, որ Հին Հայաստանում գյուղացիական հողաբաժիններն անվանվել են ո՛չ թե «կեանք, արար, կալուած», այլ «վիճակ», որը, ինչպես տեսանք, իր նշանակությամբ համապատասխանում է sors, klêros, Loos և жеребье բառերին: Այս վերջին բառերի նման «վիճակ»-ը ևս, հավանաբար, հատուկ մի տերմին է, որ տոհմական հնագույն ժամանակները գործ է ածվել համայնական հողատիրության միջավայրում:

«Շինական»-ները, ստանալով կալվածատեր ազնվականներից հատուկ հողաբաժիններ, վճարելու էին նրանց զանազան տուրքեր, որոնց մասին, դժբախտաբար, մատենագրական աղբյուրները չեն տալիս և ո՛չ մի վկայություն:

«Շինական»-ներն էին, անշուշտ, այն արտադրող հիմնական դասը, որի աշխատանքն ապրուստի միջոցներ էր հայթայթում թե՛ կալվածատեր ազնվականության և թե՛ հոգևորականության:

ինչպես և ֆեոդալական Եվրոպայում, նույնպես և Հին Հայաստանում, ազնվականները, հոգևորականները և «շինական»ները երեք գլխավոր դասերն էին, որոնցից առաջինը՝ իբրև գերազանցորեն զինվորական ուժ՝ պատերազմում էր, երկրորդը՝ աղոթում և երրորդը՝ աշխատում:

«Շինական»-ները հարկատու են եղել ո՛չ միայն կալվածատիրոջ, այլև արքունիքին:

Արքունի այդ հարկերի մասին կան միայն մարզպանության շրջանում հիշատակություններ, գլխավորապես, Եղիշեի պատմության մեջ, որ մենք քննության էինք առել «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» մանրաքնին մեր աշխատության մեջ (տե՛ս «Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի», Երևան, 1926, № 1, էջ 3—44):

Խոսելով Հայաստանում Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.) տեղի ունեցած աշխարհագրի մասին, Եղիշեն հարկերի ծանրության մասին հաղորդում է հետևյալը.

«Քանզի ուստի արժանն էր առնուլ հարիւր դահեկանաւ շափ, կրկին առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին ո՛չ միայն շինաց, այլ և աւերակաց: Նա բնավ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով. մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանալին, թէ ուստի այս ամենայն զանձ ելանէ. զիա՞րդ շէն կայցէ աշխարհն» (Վենետիկ, 1864, էջ 40):

Արդ՝ Սասանյան Պարսկաստանի հարկերի ու ֆինանսական տնտեսության լուսաբանության համար, ինչպես հայտնի է, գլխավոր ու հիմնական աղբյուրն է Տաբարիի պատմությունը: Ընդունելով, որ Պարսկական Հայաստանի արքունի հարկերը նման պիտի լինեին մյուս մարզերի հարկերին, այս աղբյուրի վկայությունները, բնականաբար, մեծ կարևորություն են ստանում նաև Պարսկական Հայաստանի համար:

Տաբարիի հաղորդած տեղեկությունների համաձայն²⁵ Խոսրով Նուշիրվանից առաջ (531—579 թ.) Պարսկաստանի թագավորները, սովորաբար, առնում էին առանձին շրջաններից, որպես հողային տուրք՝ բերքի $\frac{1}{3}$ -ը, $\frac{1}{4}$ -ը, $\frac{1}{5}$ -ը կամ $\frac{1}{6}$ -ը, նայած ոռոգման ու հողի մշակության: Բացի այդ՝ նրանք առնում էին նաև որոշ գումար

²⁵ Յե՛ս Th. Noeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, Leyden, 1879, s. 241—247.

գլխահարկ: Պերոզի որդին Կավատը (488—531 թ.) իր թագավորության վերջում կարգադրած է եղել, որ հողաշահություն կատարվի դաշտային ու լեռնային հողերի, որպեսզի կարելի լինի ճշտվել որոշել հողային հարկերը: Այդ հողաշահությունը, որ սկսվել էր Կավատի ժամանակ, շարունակվել է ու ավարտվել Խոսրով Նուշիրվանի ժամանակ, որը կարգադրած է եղել համարել նաև մարդկանց ու հաշվել արմավենիների ու ձիթենիների քանակը:

Այնուհետև՝ այս աշխարհագրից հետո, որոշված է եղել հարկերի չափը:

Ամեն մի garib հողից²⁶, որի վրա ցանված էր ցորեն կամ գարի՝ որոշված է եղել պահանջել 1 դրամ հողահարկ, մեկ garib խաղողի այգուց՝ 8 դրամ են: Գլխահարկ վճարելու էին բոլորը՝ 20 տարեկանից մինչև 50 տարեկանը՝ բացի ազնվականներից, մեծամեծներից, վիսվորներից, որոշ հոգևորականներից և թագավորության պաշտոնյաներից: Ամեն մի անձից առնում էին 12, 8, 6 կամ 4 դրամ՝ համաձայն հարկատուի կարողության: Գլխահարկի սովորական տարածված չափը եղել է, ըստ երևույթին, 4 դրամ: Հարկերը գանձվում էին մաս մաս, տարին երեք անգամ, յուրաքանչյուր քառամսյակում տարեկան հարկի $\frac{1}{3}$ մասը:

Տաբարիի այս տեղեկություններից երևում է, որ հողային բնական տուրքերը վերածվել էին հողային դրամական հարկերի վեցերորդ դարի առաջին կեսում:

Հարկատվության այս փոփոխությունը, որ տնտեսագիտության մեջ կոչվում է commutatio, կարևոր մի ցուցումն է թե՛ դրամական շրջանառության համեմատական աճման և թե՛ Սասանյան Պարսկաստանի տնտեսական զարգացման:

Հիմնվելով Տաբարիի վերոհիշյալ տեղեկությունների վրա՝ Ադոնցը «Армения в эпоху Юстиниана» իր ուսումնասիրության մեջ (стр. 481—485) քննության է առել Նդիշեի վկայությունները, համեմատելով Պարսկական Հայաստանի հարկերն այն ընդհանուր հարկերի հետ, որոնք ընդունված են եղել Սասանյան Պարսկաստանում, իսկ հետագայում նաև Արաբական խալիֆայից:

Ինչպես հայտնի է, Սասանյան Պարսկաստանում գոյություն են ունեցել երկու տեսակ հիմնական հարկեր՝ հողային հարկ և

²⁶ 1 garib հողը = 1470, 87 $\frac{1}{2}$ քառակուսի մետրի, տե՛ս Decourdemanche, Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes, Paris, 1909, p. 65 և 90: Christensen-ը 1 garib հողը ենթադրում է 2,400 քառ. մետր, տե՛ս L'empire des Sassanides, էջ 57, իսկ Alf. Krémer-ը՝ 1169, 64 քառ. մետր. տե՛ս Culturgeschichte des Orients. B. I, s- 93—99:

գլխահարկի նույն հիմնական հարկերը եղել են նաև Հռոմեական-կայսրության մեջ՝ tributum soli & tributum capitis, որոնք Դիո-կլետիանի բարենորոգումից հետո անվանվել են՝ capitatio terrena & capitatio humana կամ plebeia:

Բաղդատելով Նիդերլանդների հիշատակված հարկերը հիմնական-ու սովորական այս հարկերի հետ, Ադոնցը ավելի քան հավանա-կան է համարում, որ «բաժ»-ը համապատասխան կարող է լինել հողային հարկին, իսկ «սակ»-ը՝ գլխահարկին: Նա հնարավոր է համարում, որ Նիդերլանդների «մուտ»-ը և «հաս»-ը հոմանիշներ են պարսկերեն «սակ»-ի և «բաժ»-ի, և գործածական են եղել հայ-կական միջավայրում:

Վերոհիշյալ իմ ուսումնասիրության մեջ ես ևս հանգել էի նույնպես այն եզրակացության, որ Նիդերլանդական վկայության մեջ հիշատակված են մի քանի այլ հարկերի հետ նաև Սասանյան Պարսկաստանի հիմնական հարկերը՝ հողայինը և գլխահարկը, սակայն առաջինն անվանված է ոչ թե «բաժ», որը ունեցել է մաքսային հարկի նշանակություն, այլ «հաս» իսկ երկրորդը, ինչպես ճիշտ ենթադրել է Ադոնցը, կոչվել է «սակ»²⁷:

«Շինական»-ների տնտեսական կացության ամենակարևոր խնդիրներից մեկն է նաև «կոռ»-ի խնդիրը պատմական հնագույն այս շրջանում:

Այս խնդիրը ևս մանրամասն քննված է վերև հիշված իմ աշխատության մեջ (էջ 37—44):

Որ «կոռ»-ը գոյություն ունեցած պիտի լիներ Հին Հայաստանում՝ այդ պարզ երևում է Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնից:

Այս վկայությունը, որ ամենահինն է ու կարևորը, անհայտ է մնացել մինչև այժմ, որովհետև «կոռ»-ի վերաբերյալ հատվածը կանոնում աղճատվել ու փոփոխման է ենթարկվել տգեղ գրիչների կողմից: Աղճատումն ակնհերե է դառնում, երբ դեմ առ դեմ ենք դնում Դվինի ժողովի ԺԱ կանոնը և Մխիթար Գոշի Դատաստանագրքի Բ. մասի ԾԳ կանոնը, որը Դվինի ժողովի նույն կանոնն է Գոշի խմբագրությամբ:

²⁷ Թագ. Ավդալբեգյանը վերոհիշյալ իմ աշխատության առթիվ գրած իր հոդվածում (տե՛ս «Հաս, սակ ու բաժ», «Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի», Երեւան, 1926, № 1, էջ 45—96) իմ այս ենթադրությունների նկատմամբ բերում է մի շարք առարկություններ: Իմ կարծիքով, այդ առարկությունները հիմնավոր ու համոզիչ չեն, ուստի և իմ ենթադրությունները հավանական են թվում ինձ նաև այժմ:

«Ումանք յազատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և յըմպելիս զիրեանց գործակալս մատուցանեն, կռուով եւ պատուեմասիւ նեղեն, զողորմելի եղբարսն շարշարեն անխղճաբար» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 127—128):

«Ումանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն և հարկս եւ կերակուրս և ըմպելիս պահանջեն բռնութեամբ, և զիրեանց գործակալս ի վերայ գումարեն եւ կռուով եւ պախալութեամբ նեղեն եւ զողորմելի եղբարսն շարշարեն անխղճաբար»:

Այս համեմատութիւնից պարզ երևում է, որ Դվինի կանոնում բնագիրն աղճատված է և «կոռով եւ պատուհասիւ» խոսքերը, որ անտեղի են ու անհարմար, ծագել են «կոռով և պահակութեամբ» ուղիղ ընթերցվածի աղավաղումից: Մխիթար Գոշը, անկասկած, ունեցել է ձեռքի տակ Դվինի կանոնի բնագիրն առանց այդ աղճատման: Կարծում եմ, որ այս սրբագրութեան դեմ և ո՛չ մի աւարկութիւն չի կարող լինել, որովհետեւ աղճատումն ակնհերե է ու անվիճելի:

Այս ուղղումը սակայն հին հայոց ներքին կյանքի լուսարանութեան տեսակետից ունի խիստ մեծ նշանակութիւն, որովհետեւ Դվինի կանոնի վկայութեամբ հաստատապէս որոշվում է, որ «կոռ»-ը գոյութիւն է ունեցել Հայաստանում ո՛չ միայն Բագրատունյաց ու հետագա շրջաններում, այլև 645 թվին:

Եթե այս այդպէս է, ուրեմն, կարելի է նաև ենթադրել, որ «կոռ»-ը գոյութիւն ունեցած պիտի լիներ Հայաստանում մարդպանութեան և, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորութեան շրջաններում:

Կարևոր է այստեղ հիշել, որ «կոռ»-ը մարդպանութեան ժամանակ գոյութիւն է ունեցել նաև Սասանյան Պարսկաստանում: Այդ մասին Տաբարիի պատմութեան մեջ կա ուշագրավ մի վկայութիւն: Խոսելով երկարատեւ սովի ու ժողովրդի ծանր դրութեան մասին Սասանյան Պերոզ թագավորի ժամանակ (457—484 թ.)՝ Տաբարին հաղորդում է, որ Պերոզ թագավորը «նամակների միջոցով հայտարարում է իր ամբողջ ժողովրդին, որ ազատում է

նրան հողային հարկից և գլխահարկից, հանրօգուտ նպատակների համար ծանրութիւններից և կոռից, որ նրանց շնորհում է լիակատար ազատութիւն և հրամայում է, որ նրանք հոգան ու մտածեն իրենց սնունդի և պահպանութեան մասին» (տե՛ս Noeldeke, Tabari, էջ 112):

Վերոհիշյալ վկայութիւններում, «կոռ»-ն, անտարակույս, այն պարտադիր աշխատանքներն էին, որոնք, ինչպես միջնադարյան corvea-ն, դերմ. Frohndienst-ը և ռուս. барщина-ն, կատարվելու էին ձրի կալվածատիրոջ մոտ:

Իմ կարծիքով, միանգամայն սխալ է ու անհիմն կարստի ենթադրութիւնը, որ իբր թե «կոռ»-ը Հայաստանում, ինչպես և արեւելեայն սլավոնների ու ռուսների մոտ, առաջ է եկել բյուզանդական ազդեցութեամբ և իբր թե այդ է պատճառը, որ հայկական «կոռ»-ը և, ընդհանրապես, հարկային սխտեմը նմանութիւն ու ազգակցութիւն ունեն արեւելեայն սլավոնականի ու, մոտավորապես, ռուսականի հետ, որոնք նույնպես ենթարկվել են Բյուզանդիայի ազդեցութեանը (Karst, Sempadscher Kodex, II, s. 12):

Այդ ենթադրութիւնը ճիշտ չէ, որովհետեւ թե՛ ինքը ֆեոդալիզմը և թե՛ նրա առանձնահատուկ տնտեսական կարգերը՝ ազատ դյուղացիութեան ճորտացումը և օգտագործումը, որպես աշխատող ձրի ուժ, ո՛չ թե իրավական փոխառութիւններ են, ինչպես լեզվի որոշ բառապաշարը, այլ ամեն մի երկրի տնտեսական ու ներքին զարգացման արդյունք:

Հայկական «կոռ»-ը չի կարող Բյուզանդիայի ազդեցութեամբ առաջ եկած լինել նաեւ այն պատճառով՝ որ «կոռ»-ի գոյութիւնը Բյուզանդական կայսրութեան մէջ նրա ֆեոդալականացումից առաջ, որ տեղի է ունեցել շատ ավելի ուշ քան Հայաստանում. գրեթե անհայտ մի խնդիր է և հաստատուն կերպով դեռ ապացուցված չէ:

«Կոռ»-ի բովանդակութիւնը և տեղութիւնը հնագույն այս շրջանում մնում են, դժբախտաբար, անորոշ:

Սակայն ի նկատի առնելով հայ «շինական»-ների համեմատաբար բարեկեցիկ դրութիւնը հինգերորդ դարում, ինչպես կարելի էր եզրակացնել Շահապիվանի ժողովի կանոններից, նաեւ աչքի առաջ ունենալով բնական տնտեսութեան գերակշռող դերն այս շրջանում, ինչպես և կալվածատիրական խռչոր տնտեսութիւնների բացակայութիւնը, ինձ թվում է, որ «կոռ»-ը պատմական

այս շրջանում կարող էր ավելի մեղմ եղած լինել, քան Բագրատունյաց ու հետագա ժամանակներում:

Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում, ինչպես վերև տեսանք, հիշատակված է բացի «կոռ»-ից նաև «պահակութին»-ը: «Պահակութին»-ն, ինչպես երևում է այդ բառի այժմյան իսկ նշանակությունից, ըստ երևույթին, պարտադիր ձրի աշխատանքներն էին՝ պահպանության ու հսկողության, որ գոյություն են ունեցել նաև Արևմտյան Եվրոպայում:

Որ «պահակութին»-ը «կոռ»-ի հատուկ մի տեսակն է եղել ո՛չ միայն յոթերորդ, այլև հինգերորդ դարում, այդ կարելի է գուշակել Նոր կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ հունարեն *aggareuō* (լատին. *angario*) բառի դիմաց, որ գործածական էր պարտադիր ձրի աշխատանքների համար, հայերենն ունի «պահակ ունել» (Մատթ. Իէ, 32, Մարկ. ԺԵ, 21) կամ «տարապարհակ վարել» (Մատթ. Ե, 41) համապատասխան թարգմանություն:

«Կոռ»-ի նշանակության վերաբերմամբ կա մի ընդհանուր հարց ևս, որ հարկավոր է պարզել:

Ֆրանսիական *corvée*-ն և գերմանական *Frohndienst*-ը, ինչպես հայտնի է, ունեցել են ընդարձակ իմաստ և գործ են ածվել նաև պետական ու հասարակական բնույթ ունեցող աշխատանքային պարտականությունների համար: Այդպիսի աշխատանքներ էին օրինակ, ճանապարհների շինությունն ու նորոգումը (*corvée des routes*), փոխադրական միջոցների հայթայթումը ևն: Ռուսաստանում, ընդհակառակը, *барщина* կոչվել են միայն այն պարտադիր ձրի աշխատանքները, որ կատարվել են կալվածատիրոջ օգտին:

Հայկական «կոռ»-ը ունեցել է, ինչպես մատնացույց ենք արել վերոհիշյալ մեր ուսումնասիրության մեջ, նույնպիսի ընդարձակ իմաստ, ինչպես *corvée*-ն և *Frohndienst*-ը:

«Շինական»-ների իրավական ու տնտեսական դրությունը, ինչպես տեսնում ենք մատենագրական աղբյուրների աղքատիկ ու պատահական նյութերի այս քննությունից, թեև շատ կողմերով մնում են մութ ու մասամբ էլ վիճելի, սակայն ընդհանուր դժբերով բավականաչափ որոշվում են իբրև սոցիալական մի երևույթ՝ նման ու համապատասխան գյուղացիության դրությանը ֆեոդալական մյուս երկրներում:

8. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՍՏՐՈՒԿՆԵՐԸ

Հին Հայաստանի քաղաքների, ինչպես և Հայաստանի միջով անցնող տարանցիկ առևտրի խնդիրը, մանրամասն ուսումնասիրված է ուսերեն իմ ընդարձակ աշխատության մեջ՝ «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен» (Эривань, 1930).

Այստեղ մենք նույն խնդիրը քննության ենք առնելու համառոտաբար, ինչ չափով որ առևտրի ու քաղաքների զարգացումն Արշակունյաց թագավորության և մարզպանության շրջաններում պարզում ու լուսաբանում է նախարարական կազմակերպության էությունն ու առանձնահատկությունները:

Թե՛ Արշակունյաց թագավորության և թե՛ մարզպանության ժամանակ Հայաստանի միջով, ինչպես ցույց ենք տվել վերոհիշյալ մեր աշխատության մեջ, անցել է տարանցիկ առևտրի հյուսիսային գիծը և այդ ճանապարհով փոխադրվել են չինական մետաքսը և ուրիշ թանկարժեք ապրանքներ, որոնք Չինաստանից և Միջին Ասիայից արտահանվում էին դեպի Սև ծովի նավահանգիստները:

Տարանցիկ առևտրի հենց այդ գծի մոտ են գտնվել Հին Հայաստանի առևտրական նշանավոր քաղաքները՝ Արտաշատը, Դվինը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը և Թեոդոսուպոլիսը:

Առանձնապես կարևոր է նաև այն, որ Արտաշատը և հետո Դվինը, ինչպես այդ հայտնի է Յուստինիանի օրենսգրքի 408/9 թվի կայսերական էդիկտից (Cod. Justin, IV, 63,4), եղել են միջազգային առևտրի կենտրոններ: Նույն վկայության բովանդակության քննությունից կարելի է հետևեցնել, որ համաձայնությունն այդ մասին Սասանյան Պարսկաստանի հետ կայացել էր, հավանորեն, 387 թվի դաշնագրությամբ՝ Հայաստանի բաժանումից հետո: Ուշագրավ այս փաստը, որ հենց Հայաստանի բաժանումից հետո Արտաշատը ճանաչված է եղել իբրև միջազգային առևտրի գլխավոր վայրերից մեկը, կարևոր մի ակնարկ է, որ նա նույն միջազգային նշանակությունն ունեցած պիտի լիներ նաև Արշակունյաց թագավորության ժամանակ:

Իբրև հատուկ մի վայր, ուր թույլ էր տրված առևտուր անել երկու կողմի վաճառականներին, Արտաշատը, իսկ հետո Դվինը, բնականաբար, ստացած պիտի լինեին միջազգային կենտրոնների բնույթ:

Պրոկոպիոսի վկայությամբ, առևտրականներն ապրում էին Դվինի շրշակա քաղմամարդ գյուղերում, որ գտնվում էին իրար մոտ:

«Հնդկաստանից, հարևան Վրաստանից, Պարսկաստանի գրեթե բոլոր ժողովրդներից, նաև հռոմեական որոշ մասերից,—ասում է Պրոկոպիոսը,— բերում էին Դվին ապրանքներ և այստեղ վաճառում» (De bello persico, II, 25):

Դվինը, որպես ապրանքների մթերանոց և առևտրական փոխանակության որոշված վայր, եղել է, անշուշտ, Սասանյան Պարսկաստանի գլխավոր մաքսային կենտրոններից մեկը:

Բյուզանդական կայսրության կողմից միջազգային այս առևտրի վրա հսկողություն ունեին հատուկ պաշտոնյաներ, որ կոչվում էին *comites commerciorum* (Cod. Justin, IV, 63,6). Մենանդրի պատմությունից հայտնի է նույնպես, որ առևտրական հաղորդակցության այս վայրերն սնվանվել են *dekateutéria*, այսինքն՝ «տասնորդարաններ»¹: Ի. Դյուաբերոկը *dekateutèrion* հույնարեն բառից հետևեցնում է, որ «երկու պետութեանց համար ալ որոշուած էր ներմուծութեան մաքար վաճառքի արժէքին տասը առ հարիւրը» (տե՛ս «Հանդես Ամսօրեայ», 1910, հունվար, էջ 16):

Չնայած միջազգային այդ առևտրի կարևոր նշանակությանը Հին Հայաստանի տնտեսական կյանքում՝ տարօրինակ է խիստ, որ հայ մատենագրական աղբյուրները կատարելապես լուռ են և մունջ և չունեն աղոտ անգամ վկայություններ այդ առևտրի, Հայաստանի քաղաքների ներքին կացության և նրանց առևտրական կամ արհեստագործ բնակչության մասին:

Ուշադրության արժանի է մանավանդ, որ առևտրականները և արհեստավորներն առանձնապես չեն մատնանշվում նաև աղբյուրների այն վկայություններում, որոնց մեջ հիշատակված են նախարարական Հայաստանի մյուս դասերը և համայն բնակչությունը:

Այդ պարզ ու որոշ երևում է, օրինակ, հետևյալ վկայություններից.

1. Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 73՝

«Տրդատ արքայ Հայոց Մեծաց, առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յաղարակս, առ ազատս եւ առ շինակաճս, միանգամայն իսկ առ ամենեսեան, ողջոյն».

2. Փաւստոս, V, Լ, էջ 233՝

«Եւ սգային [զՊապ] ամենայն ազաւմք եւ շինականք ժագէ ի ժագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք՝ ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առ հասարակ».

3. Նույնը, III, ԻԱ, էջ 54՝

«Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլ եւ ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն».

4. Գիրք Թղթոց, «Թուղթ Հայոց ի Պարսս», Թիֆլիս, 1901, էջ 42՝

«Յամենայն Հայաստան աշխարհէս, յեպիսկոպոսաց, յերիցանց, և ի վանականաց. յազատաց եւ ի շինականաց, առ ձեր ուղղափառ սրբութիւնդ, սիրովն Քրիստոսի ուրախանալ».

5. Փարպեցի, III, ՂԹ, էջ 178՝

«Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախաւորաց եւ ազատաց, ուտանկաց եւ ռամկաց, արանց և կանանց, ժերոց և տղայոց եւն».

Հմմտե նաև Ագաթ. ԺԲ, էջ 71 և 76, Փաւստոս IV, ՄԱ, էջ 165, V, ԻԳ, 231, Նղիշէ III, էջ 97 և 114, է, էջ 231, Ը, 337, Փարպեցի II, ԽԱ, էջ 73, III, 2Ա, էջ 128, Գիրք Թղթոց, էջ 130 եւն:

Christensen-ի ասելով՝ քաղաքացիները և արհեստավորներն աղբյուրների մեջ չեն հիշատակվում առանձին նաև Սասանյան Պարսկաստանում, այլ նրանք և երկրագործները միացած են միշտ այս վերջին դասի մեջ, որ անվանվում է *vāstryō īšuyōns* (տե՛ս *L'empire des Sassanides*, p. 19):

Նույնը մենք նկատում ենք հայկական ֆեոդալիզմի հնագույն այս շրջանում. այստեղ ևս, ինչպես վերև տեսանք, քաղաքաբնակ հասարակ ժողովուրդը և արհեստավորները «շինական»-ների հետ միասին կազմում էին «ռամիկ» դասը:

Վաճառականների չհիշատակվելը մատենագրական աղբյուրներում ունի Հայաստանում նաև մի այլ պատճառ:

Ռուսերեն մեր աշխատության մեջ մենք մատնանշել էինք, որ Տիգրան Մեծի, ինչպես և Արշակունյաց թագավորության ժամանակ, նաև, հավանորեն, մարզպանության շրջանում, Հին Հայաստանի առևտրական կյանքում ղեկավարող դեր էին կատարում ո՛չ թե իրենք հայերը, այլ սեմական գաղթականությունը, գլխավորապես, հրեաները և ասորիները:

Թե ո՛րքան մեծ է եղել այդ գաղթականության առևտրական դերը Հին Հայաստանում՝ այդ երևում է, ի միջի այլոց, գրաբար լեզվի բառապաշարից, որի մեջ ամենասովորական տերմինները, որոնք կապ ունեն վաճառականության հետ, ինչպես՝ «գաղութ», «շուկայ», «խանութ», «հաշիւ» են՝ փոխառություններ են ասորերենից (տե՛ս «О торговле и городах Армении», стр. 69)։

Սեմական այդ գաղթականության մասին Փալատոսը և Խորենացին ունեն նաև ուղղակի ցուցումներ հետևյալ վկայություններում՝

1. Փալատոս, IV, ԻԴ, էջ 146՝

«Եւ առին աւերեցին [Շապուհ Բ-ի զորքերը 364—367 թ.] զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան Բղշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին»։

2. Նույնը, IV, ՄԵ, էջ 176՝

«Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալ՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց. և քառասուն հազար երդ հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին»։

3. Նույնը, IV, ՄԵ, էջ 177՝

«Առնուին և զՎաղարշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասն երդս հազար»¹։

4. Նույնը, IV, ՄԵ, էջ 177՝

«Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար հայ, և երդս երեսուն հազար հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին»։

5. Նույնը, IV, ՄԵ, էջ 177՝

«Ապա առնուին և զքաղաքն Բագրեանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ հայ, և ութ հազար երդ հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին»։

¹ Մ. Արեղյանը կարծում է, որ այս հատվածի վերջում բնագիրն աղավաղված է։ Սկզբնական բնագրում հիշված են եղել, հավանորեն, թե՛ հայ և թե՛ հրեա գերիների թվերը (տե՛ս «Հայ ժողովրդական առասպելներ», Վաղարշապատ, 1901, էջ 560)։

6. Նույնը, IV, ԾԵ, էջ 177՝

«Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին ի Աղոյհովտի, շոբեփառասան հազար երդ հրեայ. և տասն հազար երդ հայս. և զնա ի հիմանց քանդեալ ապականէին».

7. Նույնը, ԾԵ, էջ 177՝

«Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոզրայ, և հրծիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար հայ, և ութ և տասն հազար երդս հրեայս».

Զայս ամենայն բազմութիւն հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանդոս զառաջին ժամանակաւ. Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիրում գարուն ի ժամանակին».

8. Նույնը, IV, ԾԵ, էջ 178՝

«Ապա առին և զնա [զՆախճաւան] քանդեցին. անտի երդս հայս երկուս հազարս, և հրեայ երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ».

9. Խոբենացի, II, ԺԶ, էջ 130՝

«Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւնն հրէից նստուցեալ յԱրմափր և յաւանին Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ».

10. Նույնը, II, ԺԹ, էջ 135՝

«Եւ կապեալ զՀիւրկանոս ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն. և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից որ ի Մարիսացոց՝ ի քաղաքն Շամիրամայ».

11. Նույնը, II, ԽԹ, էջ 177՝

«Եւ յարուցանէ [Արտաշէս] ի քաղաքէն Ծրուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ».

12. Նույնը, II, ԿԵ, էջ 199—200՝

«Յորում [յաւանին Վարդգէսի] և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զճաստրակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղև քաղաքագիւղ վաճառօք. Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և նոր քաղաք».

13. Նույնը, III, ԼԵ, էջ 300՝

«Ի նմին ժամու եհաս հրաման ի Շապհոյ արքայէ, զի քանդեալ աւերեացեն զամրութիւն ամենայն քաղաքաց, և զՀրեայս խա-

դացուցեցն ի գերութիւն, եւ զայն Հրեայսն, որ նովին նըկութեան օրինոք կային ի Վանն Տոսպայ, զորս ածեալ էր Բարզափրանայ Ռըշտունայ յաւուրս Տիգրանայ, զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան: Գերեցին եւ զայն Հրեայսն որք յԱրտաշատ եւ ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ արքայի, որք յաւուրս սըրբոյն Գրիգորի եւ Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոսս:

Այս վկայությունների մեջ, ինչպես մատնացույց էի արել ռուսներին իմ աշխատության մեջ, կան ժամանակավորիպումներ եւ պատմական բացահայտ սխալներ, սակայն սեմական բնակչության գաղթեցման փաստը Հայաստան միանգամայն հավաստի է եւ անժխտելի:

Անհնարին է, օրինակ, Հյուրկանոս քահանայապետի գերումը Տիգրան Մեծի ժամանակ, որի մահն ընկնում է 56 թվին Քրիստոսից առաջ: Հրեական պատմագիր Հովսեպոս Փղավիոսի արժանահավատ վկայություններից հայտնի է, որ Հյուրկանոս քահանայապետին գերի էին վերցրել 40 թվին Քրիստոսից առաջ եւ տարել ո՛չ թե Հայաստան, այլ Բաբելոն:

Սեմական բնակչության գաղթեցումը հավանական է ո՛չ միայն Տիգրան Մեծի արշավանքների ու նվաճումների շրջանում, այլեւ նրա որդու Արտավազդի թագավորության ժամանակ (56—33 թ. Քր. առաջ):

Կրասսոսի պարտությունից հետո (53 թվին), ինչպես հայտնի է, պարթևները դաշնակից հայերի հետ միասին պատերազմներ էին վարում Ասորիքում: 40 թվին նրանք ներս էին խուժել Հրեաստան եւ վերցրել բազմաթիվ գերիներ, որոնց հետ էր նաեւ Հյուրկանոս քահանայապետը: Գերիների մի մասը տրված է եղել, հավանորեն, դաշնակից հայերին, որոնք, պարթևների հետ միասին մասնակցել էին այդ արշավանքներին:

Ուրեմն՝ միանգամայն հնարավոր է, որ բացի «առաջնոյ գերութեանն Հրէից», որոնք տեղափոխված են եղել Հայաստան Տիգրան Մեծի ժամանակ, կարող էին լինել նաեւ գաղթականներ երկրորդ գերման, որոնք սակայն փոխադրված են եղել Հայաստան ո՛չ թե Տիգրան Մեծի նվաճումներից հետո, ինչպես մատնանշում են Փավստոսը եւ Խորենացին, այլ նրա հաջորդի՝ Արտավազդի ժամանակ (տե՛ս «О торговле и городах Армении», стр. 68—69)։

Օտարականների վերոհիշյալ գաղութները, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, գտնվել են առևտրական կենտրոնավայրերում: Նրանց «երդ»-երի թվերը կարող են, անշուշտ,

Փափատոսի մոտ շափաղանցված լինել, սակայն աներկբայելի է, որ նրանք կազմել են քաղաքների բնակչության ստվար մասը:

Այդ գաղթական բնակչության իրավական դրության մասին հայկական աղբյուրները, դժբախտաբար, չեն տալիս նույնիսկ աղոտ տեղեկություններ: Կարելի է միայն ենթադրել, որ կրոնական տեսակետից նրանք ապրել են առանձնացած և ունեցել են, ըստ երևույթին, իրենց հատուկ աղոթատները:

«Գիրք Թղթոց»-ի վկայություններից հայտնի է, օրինակ, որ վեցերորդ դարում քաղաքաբնակ գաղութների բնակչության մի մասը կազմել են նեստորականները, որոնք ունեցել են իրենց սեփական եպիսկոպոսը:

Այդ մասին ուշագրավ է առանձնապես «Տեսառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն» գրութեան հետևյալ վկայությունը (էջ 70)՝

«Վասն անիծեալ խռովաց նետառեալանաց՝ որ եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ վաճառաշահութեան, և այժմ շարահար պղծալից անիծաբեր արուեստիւ իւրեանց ցոգիս մեր ազդեցին, մինչև իւրեանց պղծութեան հաւատոյ առաջնորդ շեպիսկոպոս ածեալ, և մեզ լուսաւոր և ուղղափառ հաստատուն հաւատոյս խոչընդակն կացուցանել, յառաջագոյն վասն նորին իրաց, մեր և աշխարհիս մերոյ տանուտեարք և ազատք միաբանութեամբ ի ձեռն գրոյ հրաման արարաք վասն ձեր, փութապէս ի Դուին ի սուրբ եկեղեցիս ժողովելոյ»:

Քաղաքների խառն և այլազան բնակչության մասին ավելորդ չի լինի մեզ բերել նաև Դավինի անձնատրման ապահովագիրը յոթերորդ դարից, որ հիշատակված է Բելազորու և Յաքուտի մոտ հետևյալ բովանդակությամբ՝

«Հանուն Աստուծո ամենաողորմածի:

Այս մի գրություն է Հաբիբ իբն Մասլամայի ուղղված Դավինի բնակիչներին՝ Բրիստոնյաներին, Վոգերին եւ հրեաներին, թե՛ ներկաներին և թե՛ բացականերին:

Սա ապահովում եմ ձեր կյանքը, ունեցվածքը, ձեր եկեղեցիները, աղոթատները և քաղաքի պարիսպները, ուստի կարող եք ապահով լինել: Մենք հաստատուն կապահենք այս դաշինքը ձեզ հետ, որքան ժամանակ որ հավատարիմ կմնաք և կվճարեք գլխահարկ ու հողահարկ:

Աստված վկա է և նրա վկայութունը բավական է: Կնքված է Հաբիր իբն Մասլամայի կնիքով²:

Օտարազգի բնակիչների մեծ թիվը հայկական քաղաքներում և նրանց առևտրական գերիշխող դերն ուշադրության արժանի մի փաստ է, որով բացատրվում է ըստ իս հայ մատենագիրների անհասկանալի լռությունը Հին Հայաստանի առևտրի ու վաճառականության մասին:

Ինձ թվում է, որ այդ օտար գաղութները կողմնակի մի զանգված էին Հին Հայաստանի ֆեոդալական կյանքում և ձևականորեն չէին համարվում կարևոր ու անհրաժեշտ տարր նախարարական կազմակերպության:

Հավանական է, իհարկե, որ իրենք հայերը ևս որոշ դեր կատարում էին առևտրի ու վաճառականության մեջ, սակայն հնագույն այս շրջանում, ըստ երևւթյի, դեռևս չէր առաջացել առանձնապես շերտավորված կամ զորեղացած հայ առևտրական այն դասը, որ հիշատակվում է մատենագրական աղբյուրներում Բագրատունյաց շրջանում:

Խոսելով «շինական» դասի մասին՝ վերև մենք մի քանի անգամ շեշտել էինք, որ պատմական այս շրջանում գերակշռող էր Հին Հայաստանում բնական տնտեսության դերը:

Արդ՝ ի՞նչպես հասկանալ այդ: Կարելի՞ է արդյոք դրանից հետևեցնել, որ առևտուրը և փողային շրջանառությունը չեն ազդել և չեն անդրադարձել նույն շրջանի տնտեսական կյանքի վրա:

Նման ենթադրությունները կլինեին, իմ կարծիքով, ավելի քան անհավանական:

Ճիշտ է, միջազգային տարանցիկ առևտուրը կարող էր և չունենալ խոր և անմիջական ազդեցություն գյուղական տնտեսության վրա, սակայն ներքին առևտուրը, որ բավական զարգացած է եղել այս շրջանում, կարևոր մի ազդակ էր, որ որոշ չափով խախտում էր բնական տնտեսության հիմքերը և նպաստում դրամական շրջանառության ծավալման անգամ «շինական» տնտեսություններում:

«Շինական»-ները, ինչպես վերև տեսանք, իբրև արքունի հարկ վճարում էին մարզպանության շրջանում բացի հողահարկից նաև գլխահարկ, որի սովորական չափը որոշված էր մարդագլուխ 4

² *Տե՛ս* Баладзори, Книга завоевания стран, текст и перевод П. К. Жузе, Баку, 1927.

դրամ (տե՛ս «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», էջ 9—12)։ Շահապիվանի ժողովի կանոններից ևս դարձյալ հայտնի է, որ հանցապարտ «շինական»-ները վճարելու էին դրամական տուգանքներ. օրինակ՝ պոռնիկ «շինական»-ը՝ 100 դրամ, ամուլ կնոջ արձակող կամ աղջիկ առևանգող «շինական»-ը՝ 600 դրամ ևն։

«Շինական»-ների դրամական այս վճարումները ցույց են տալիս, անշուշտ, որ Պարսկական Հայաստանը տնտեսական իր զարգացման ու դրամական շրջանառության տեսակետից գտնվել է համեմատաբար բարձր աստիճանի վրա։

Հնդունելով բնական տնտեսության գերիշխող նշանակությունը Հին Հայաստանում, չպետք է, ուրեմն, աչքաթող անել, որ այդ տնտեսության կողքին աճում էին և զարգանում դրամական շրջանառության ու դրամական փոխանակության նոր ձևերը։

Իսկ տնտեսական այդ նոր ձևերն անուղղակի ապացույցներ են ինքնին ներքին շուկաների գոյության, որտեղ «շինական»-ները կարող էին վաճառել իրենց տնտեսության որոշ արտադրանքները։

Ինչպես և միջնադարյան Եվրոպայում՝ Հին Հայաստանում ևս առևտրական այդ փոխանակությունը տեղի էր ունենում, զլխավորապես, ֆեոդալական շրջանների կենտրոնավայրերում, որոնք դժվարամատչելի բերդեր էին ու ամրություններ և պատերազմի ժամանակ ծառայում էին իբրև պատսպարան շրջակա բնակչության համար։

Ենթադրում են նույնպես, որ հենց իրենք առևտրական հին քաղաքներն առաջ էին եկել նախկին բերդերի ու ամրացած տեղերի մոտ, որոնք բնակավայրեր էին ազդեցիկ մեծավորների։ Ուշագրավ է այդ տեսակետից, որ հին հայերենում «քաղաք» բառի սկզբնական նշանակությունն է՝ «պատնէշ, ամրութիւն»։

Նրա այդ նշանակությունը համապատասխանում է ռուսերեն городище բառին, ինչպես այդ պարզ երևում է հետևյալ վկայություններից.

1. Եղիշե, V, էջ 184 (Վենետիկ, 1864)՝

«Եւ անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա, բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք ամենայն պատրաստութեամբ»։

2. Փաւստոս, V, 19, էջ 241՝

«Տորհէր ևս [Մուշեղ] ընդ իշխանսն Յունաց և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի

մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստ հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց եւն»
Յ. Նույնը, V, լԵ, էջ 243՝

«Այժմ [Մուշեղ] գհայ երկիրս խորհի ընուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ բնակութեան զօրացն Յունացոյ:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, գիտական այն նորագույն տեսությունը, որ քաղաքների ծագումը բացատրում է վաճառականներից, որոնք գտնվել են բերդերի, ամրոցների, բուրգերի և այլ ամրությունների շուրջը, կատարելապես հաստատվում է նաև հայկական աղբյուրների տվյալներով:

Լուսաբանել պատմական այս շրջանի ներքին առևտրի վերաբերյալ մանրամասնությունները, դժբախտաբար, հնարավոր չի աղբյուրների ու նյութերի աղքատության պատճառով:

Նույնը պետք է ասել նաև արտաքին առևտրի մասին:

Կողմնակի մի քանի ցուցումներից կարելի է միայն կռահել, որ Հին Հայաստանը, որի միջով անցնում էր համաշխարհային առևտրի հյուսիսային գիծը և որի մայրաքաղաքը միջազգային առևտրի կենտրոնավայր էր, հավանորեն, ինքը ևս արտահանել է արտաքին շուկաներն իր տնտեսության նաև սեփական արտադրանքները:

Վերև մենք մեջ էին բերել Դվինի մասին Պրոկոպիոսի կարեւոր մի տեղեկությունը, որի մեջ նա վկայում է, որ Հայաստանի այդ կենտրոնավայրը ապրանքներ էին բերում Հնդկաստանից, հարևան Վրաստանից և բոլոր ժողովուրդներից, որոնք գտնվում էին Պարսկաստանի և Բյուզանդիայի իշխանության տակ:

Արդ՝ եթե Դվինում վաճառվում էին Վրաստանից և մյուս երկրներից բերված ապրանքները, շատ պարզ է, որ միջազգային այդ առևտրին մասնակից է եղել նախ և առաջ նաև ինքը Հայաստանը սեփական իր արտադրության ապրանքներով:

Պրոֆ. Գ. Խալաթյանի կարծիքով՝ արտահանության գլխավոր առարկաներն էին Հայաստանից—«ձիեր, ջորիներ, մետաղներ, ներկեր (գլխավորապես՝ այսպես կոչված «հայկական ներկը» սանդիկ, որ նման էր ծիրանի ներկի), հացահատիկներ, գինի, յուղեր, նմանապես զանազան տեղական բանվածքներ³, Դժբախտաբար, Խալաթյանի այս ամփոփումը խիստ վիճելի է, որովհետև

³ Տե՛ս «Очерк истории Армении», М., 1910; 170, նաև В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918, стр. 32.

ներա ենթադրություններն արտահանութեան մի քանի առարկաների նկատմամբ հիմնավորված չեն և չեն հաստատվում աղբյուրների վկայութիւններով:

Որքան մեզ հայտնի է որոշ տեղեկութիւններ Հայաստանի արտաքին ապրանքափոխանակման մասին տալիս են, գլխավորապես արաբական աղբյուրները, իսկ հնագույն մատենագիրները միջանկյալ կերպով միայն հիշատակում են երբեմն այն հազվագյուտ առարկաները, որոնք արտահանվել են Հայաստանից:

Պլինիոսը, օրինակ, իր «Բնական պատմութեան» մեջ հիշում է Հայաստանի հետևյալ բույսերը, ներկերը և քարերը՝ *adamantis* բույսը, *laser*⁴ որ հյութն էր *laserpitium*-ի, որը բուսնում է Պարսկաստանում, Մեդիայում և Հայաստանում և իրրե բժշկական բույս՝ արտահանվում էր Հռոմ. Հայաստանում պատրաստվող մի ներկ, որը նկարիչներն անվանում էին *orobitis*. Հայաստանից ստացվող մի քար, որ կոչվում էր *armenium* և ներկում *chrysocolla*-յի նման. *alumen* շիպ և սրոցաքարեր⁵:

Բժիշկ Դիոսկորիդը, որ ապրում էր առաջին դարում Քրիստոսից հետո, հաղորդում է, որ «ամենալավ *amomum*-ը համարվում է հայկականը»⁶, իսկ Թեսսալոնիկեի մետրոպոլիտ Նվստաթիոսը, որն օգտվել է հին աղբյուրներից, վկայում է, որ հայերի մոտ արդյունահանվում էին քարեր, որոնցով փորագրում և պատրաստում էին կնիքներ⁶:

Բժշկական բույսերի և «որդան կարմիր» ներկի մասին, որ վաճառվում էին և թերևս նաև արտահանվում, տալիս է մի քանի տեղեկութիւններ Ղազար Փարպեցին.

1. Ղազար Փարպեցի, I, է, էջ 9՝

«Անդ [յԱյրարատեան գաւառին] գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երազահաս խտտահալած սպեղանիք, և կամ արքամամր՝ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն».

2. Նույնը, I է, էջ 10՝

⁴ C. Plinii Secundi Naturalis Historiae, XIX, 15. 2. XXIV, 102, 2. XXXIII, 27, 1. XXXV, 28, 1 և 52, 2. XXXVI, 47, 1. տե՛ս հրատ. Littré, T. I-II. Paris, 1883.

⁵ *Տե՛ս Латышев*, Известия древних писателей о Скифии и Кавказе, 1, С. Петербург, 1890, стр. 507.

⁶ *Տե՛ս նույնը*, էջ 205.

«նաև զարմատս եղէգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»:

Բացի օտար աղբյուրների և Փարպեցու մոտ հիշատակված ներկերից, բժշկական բույսերից և քարերից՝ հավանական է նույնպես, որ Հայաստանից արտահանվել են ձիեր, ջորիներ և գինիներ ո՛չ միայն Արեւմտեան Պարսկաստանի տիրապետության շրջանում (տե՛ս «О торговле и городах Армении», стр. 10—12), այլև հետագա դարերում:

Կասկածելի է սակայն և անապացույց հացահատիկների և յուղերի արտահանումը Հայաստանից, որ մատնացույց է արված խալաթյանի և Բյուզնդի մոտ:

Հնարավոր է, իհարկե, և ավելի քան հավանական, որ Հայաստանից դուրս են տարվել և վաճառվել բացի վերոհիշյալ առարկաներից նաև երկրի տնտեսության ավելի էական ու կարևոր արտադրանքները, սակայն այդ մասին մատենագրական աղբյուրների մեջ, որքան ինձ հայտնի է, չկան փաստական տեղեկություններ:

Համառոտ մեր այս դիտողությունները, որ հիմնված են աղբյուրների պատահական ու կցկտուր տեղեկությունների վրա, թեև չեն տալիս պարզ ու լրիվ պատկերը Հին Հայաստանի ներքին ու արտաքին առևտրի, սակայն, այնուամենայնիվ, նրանք հաստատում են այդ առևտրի կարևոր նշանակությունը Հայաստանի տնտեսական կյանքում և բացատրում փողային շրջանառության այն լայն տարածումը պատմական այս շրջանում, որ վերև մատնանշել էինք:

Վերև մենք ասացինք, որ հայ վաճառականության զորեղացումը հավանական է ենթադրել արաբական աշխարհակալության ժամանակ: Իսկ այս շրջանում, հավանորեն, պարապել են վաճառականությամբ կողմնակի կերպով ֆեոդալական թե՛ բարձր և թե՛ ստորին դասերը:

Աղբյուրների մեջ ակնարկվում է, օրինակ, վաճառականությամբ պարապելու առանձին հակումը, որ ունեցել են քահանաները և անգամ վիճակավորները:

Ուշագրավ են այդ մասին հետևյալ վկայությունները.

1. «Կանոնք Յովհաննու Մանգակունտյ Հայոց կաթողիկոսի», Դ, տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ղլտճյանի, էջ 90՝

«Ծթէ ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթեսցին, կամ իշխանութեամբ իշխանաց վարձեսցին՝ հարկապահանջս լինելով և յոստիկանս կարգել աշխարհական գործոց, ասէ գիրն, ասո նոսա զաւեր նոցա» եւն.

2. «Կանոնք ներսիսի կաթողիկոսի և ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», տե՛ս «Կանոնագիրք Հայոց», էջ 116՝

«Այլ ոմանք ձիաբոյժք եւ վաճառականք եւ վաշխառուք, փոխանակ կրօնաւորութեան՝ շահածողովք, յայսմհետէ դադարեսցեն և ապաշխարեսցեն զմեղսն, զոր մեղան, ապա թէ ոչ, յանդիման արժանի գործոցն պատիժս կրեսցեն».

3. Խորենացի, III, ԿԸ, էջ 364՝

«Վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց»:

Միանգամայն անբավարար են մատենագրական աղոտ ու պատահական վկայութիւնները նաև Հին Հայաստանի արհեստավորության մասին:

Անհրաժեշտ է նախ մատնանշել, որ հին հայերենում արհեստ և արվեստ բառերը իրարից չէին տարբերում: Թե՛ արհեստով և թե՛ արվեստով պարապողներին անվանում էին «արուեստաւոր», սակայն երբ առանձնապէս մատնանշում էին արհեստների հատուկ բնույթը՝ այս վերջիններն անվանում էին երբեմն՝ «ձեռական արհեստք» կամ «անբան արհեստք» իսկ արհեստավորներին՝ նաև «արուեստաւոր գործաւոր» կամ «արուեստագործ»:

Բացի սովորական արհեստներից Հին Հայաստանում, ինչպես և Աղվանքում, զարգացած է եղել նաև մետաղագործությունը, որի մասին Ղազար Փարպեցին և Մովսէս Կաղանկատվացին ունեն հետևյալ վկայութիւնները.

1. Ղազար Փարպեցի, I, է, էջ 10՝

«Որք ոչ միայն երևելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զհահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն՝ զառ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ եւ զերկաթ եւ զպատուական քարիւնս. զոր ընկալեալ առուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն».

2. «Մովսեսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», հրատ. Մ. էմինի, Մոսկվա, 1860, II, ժՁ, էջ 131՝

«Առաքեաց [իշխանն հիւսիսոյ] գործակալս ի վերայ ազգի ազգի առուստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան եւ արծաթաճանութեան եւ երկաթաճանութեան եւ պղնձագործութեան ունէին».

3. Խորենացի, I, ժՁ, էջ 52՝

«Աստ իմն ականակառոյց լեալ այրասիրտն այն և կաթոսն Շամիրամ, հրաման տալ շորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յալլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն առուստաւոր գործաւորաց փայտի եւ քարի, պղնձոյ եւ երկաթոյ, որք ամենեկին կատարեալք իցեն յարուեստգիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»:

Նիկ. Մառի կարծիքով, թե՛ հին հայերը և թե՛ կովկասյան մյուս ժողովուրդները կուլտուրական իրենց կյանքի որոշ կողմերը, ի միջի այլոց, նաև մետաղագործությունը ժառանգել էին հաբեթական բնիկներից, որոնց մոտ մետաղագործության արհեստները զարգացած էին դեռ հնագույն շրջանում (տե՛ս «Кавказский культурный мир и Армения», Петроград, 1915, стр. 30). Ուսուցչապետ Մառը ենթադրում է բացի այդ, որ արհեստներով և նյութական կուլտուրայի առարկաների զանազան տեսակ արտադրություններով զբաղվել են տարբեր ցեղեր և այդ որոշ տեղերում պահպանվել են մինչև մեր օրերը (տե՛ս նույնը, էջ 16): Նա ընդունում է նույնպես արհեստագործության ժառանգական լինելը, արհեստակցական եղբայրությունների գոյությունը և ընտրական սկզբունքի կիրառումն այս կազմակերպություններում, որոնք հետագայում վերածվել են համաքրությունների (էջ 17):

Նիկ. Մառի այս ենթադրությունները հնարավոր ու հավանական կոհաճումներ են, որ կարոտ են սակայն վերահաստատման փաստական վկայությունների օգնությամբ:

Որ տնայնագործական արհեստները լայն կերպով տարածված են եղել ո՛չ միայն «շինական»-ների այլև աղնավականների ընտանիքներում՝ այդ երևում է Նդիշեի հետևյալ վկայությունից (Ը, էջ 359)՝

«Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ շարշարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաս».

տանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանդարգեւեացն, Մառամբք իւրեանց վաստակեցին եւ կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւնք:

Արհեստների վերաբերյալ հմտությունը՝ որպէս ապրուստի հայթայթման միջոց՝ մատնանշված է նաև Ագաթանգեղոսի պատմութեան մեջ և Սահակ կաթողիկոսի կանոններում.

1. Ագաթանգեղոս, ԺԳ, էջ 85—86՝

«Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց [Գալիանէ ընկերօքն հանդերձ], յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետև եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանտոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարեւելից կուսէ. և կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին. և ոչ ինչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա զոր ունէին, բայց մի ռմն ի նոցանէ ունէր արուեստ ապաւիազործութեան՝ առնել ուլուսն ապակեղէնս, եւ տալ զինս ընդ կերակրոյ ատուրն պարեմի ռոնկի».

2. «Կանոնադիրք Հայոց», հրատ. Ա. Ղլաճյանի, էջ 52՝

«Այլ սակայն [պատասխանում են քրմերի որդիները Տրդատ թագավորին] մարմնատրական կարիք որչափ եմք ի կենցաղոյս ալմիկ, ստիպէ մեզ ըստ պիտոյից տալ զդարմանս կերակրոց և զգեստուց և զայլոց կարեաց չափաւորապէս. եւ ոչ ունիմք արուեստըս գործակալութեան հնարից ինչ, առ ի պատրաստել նոֆօֆ գպարէն ռոնկաց՝ և մեզ և որդւոց մեկոց, զի զորքան ծառայ էաք դիւաց, կերակրեալ լինէաք ի զոհից և ի պտղոց նոցա»:

Վերև մենք տեսանք, որ Հին Հայաստանի քաղաքների բնակչութեան մի ստվար մասը կազմում էին օտարազգի գաղթականները: Ռուսներեն մեր աշխատութեան մեջ մենք մատնացույց էինք արել, որ հելլենիստական քաղաքների բնակչութեան գաղթեցումը Հայաստան տեղի էր ունենում Հայաստանի հելլենականացման ու կուլտուրական զարգացման նպատակով: Տեղահանված նոր բնակչութիւնը ո՛չ միայն նպաստել էր առևտրի բարգաւաճման, այլև արհեստների ու արդյունաբերութեան:

Ավելի քան հավանական է ուրեմն, որ Հին Հայաստանի քաղաքաբնակ օտարազգիների մի խոշոր մասը բաղկացած պիտի լիներ որակյալ արհեստավորներից:

Հին Հայաստանի քաղաքներն իրենց բնակչութեան կազմով նման պիտի լինեին ըստ իս Աղվանքի Պարթաւ քաղաքին, որի

«արուեստագործ բնակիչ»-ների մասին Սասանյան Պարսկաստանի տիրապետության վերջին շրջանում Մովսես Կաղանկատվացին տալիս է հետևյալ կարևոր վկայությունը.

«Իբրև լուան գայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղունից, ի նոյն ինքն ի հրամանէ Խոսրովու թողեալ զմեծ քաղաքն Պարտաւ, ելեալ գնացին ամրացան ի տեղիս տեղիս. իսկ բազումք ի քրիստոնէից եւ ի ճեքանոսաց յառուեստագործաց բնակչաց քաղաքին, որք վասն անկարութեան իւրեանց ոչ կարացին զերծանել փախել առաջի նոցա՝ մնացին անդէն ի քաղաքի անդ։ Եւ քահանայոմն, անուն Ջաքարիա՝ այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյ, հեզ և հանդարտ՝ եղ զանձն իւր ի վերայ նոցա. և երդմամբ և ազգի ազգի հնարիւք զերծոյց զբազում անձինս քրիստոնէից աղօթիւք իւրովք երաշխաւորեալ նաև վասն ճրէից եւ ճեքանոսաց (տե՛ս հրատ. Մ. էմինի, Բ. Ժ, էջ 103)։

Ընդունելով որ առևտուրը և արհեստները բավականաչափ զարգացած են եղել Հին Հայաստանի քաղաքներում, չպետք է սակայն գերազնահատել քաղաքների նշանակությունը պատմական այս շրջանում և վերագրել նրանց տնտեսական ու քաղաքական այն մեծ դերը, որ ունեին Արևմտյան Եվրոպայի քաղաքներն ու ժիջնադարում։

Օտարազգի գաղութները քաղաքներում չունեին, բնականաբար, այն սոցիալական կշիռն ու նշանակությունը, որ հետագայում Բագրատունյաց ժամանակ սկսել էր հետզհետե ձեռք բերել բնիկ հայկական բուրժուազիան։ Բացի այդ, պատմական այս շրջանի քաղաքները՝ անգամ Արտաշատը և Դվինը, որ միջազգային առևտրի խոշոր կենտրոններ էին, չէին կորցրել իրենց գյուղական և երկրագործական բնույթը և նրանց բնակչության մի ստվար մասը շարունակում էր զբաղվել երկրագործությամբ։

Քաղաքների բնակչության իրավական դրության մասին մատենագրական հնագույն աղբյուրները չեն տալիս և ո՛չ մի տեղեկություն. միայն հետագա պատմիչների վկայություններից կարելի է կռահել, որ քաղաքացիներն ունեցել են ինչ որ արտոնություններ, որ մնում են սակայն մութ և անորոշ։

Խոսելով Վաղարշակ Թագավորի սահմանած կարգերի մասին՝ Խորենացին ակնարկում է, որ քաղաքացիներն իրենց սոցիալական դրությամբ ալվելի բարձր են դասված եղել քան գեղջուկները (II, Ը, էջ 117—118)՝

«Հրաման տայ [Վաղարշակ],— ասում է Խորենացին,— և քա-

ղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց-
և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքա-
ցեաց մի՛ կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ,
վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան
և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ»:

Կարևորն այս վկայութեան մեջ ո՛չ թե նրա պատմական կողմն
է, այլ քաղաքացիների արտոնյալ դրութիւնը, որ հորենացու ժա-
մանակ եղել է, անշուշտ, իրական մի փաստ:

Հովհաննես կաթողիկոսը ևս, խոսելով Զվարթնոց եկեղեցու շի-
նութեան մասին, հաղորդում է, որ ներսես Գ. կաթողիկոսը՝

«պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն,
զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ
ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաս-
տահեղոյս կոփածոյ քարամբք: Այլ եւ կարգեալ կացուցանէր ի նմա
ամբոխութիւնս երդումաբաճ քստ պայմանի քաղաքականաց»
(տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս,
1912, էջ 88):

Ինձ թվում է, որ «երդումարդաց քստ պայմանի քաղաքակա-
նաց» հատուկ այս արտոնութիւնները գոյութիւն են ունեցել, հա-
վանորեն, ո՛չ միայն մարդպանութեան, այլև Արշակունյաց թագա-
վորութեան ժամանակ:

Առևտրի ու արհեստների խնդիրը լուսաբանելուց հետո՝ մնում
է մեզ քննութեան առնել նաև ստրկութեան հարցը, որի գոյութիւնը
Հին Հայաստանում ժխտվել է հաճախ հայագիտական նորագույն
ուսումնասիրութիւններում:

Նույն այս խնդիրը մանրամասն լուսաբանված է Խ. Սամվել-
յանի «Մխիթար Գօշի Դատաստանագիրքն» աշխատութեան մեջ
(Վիեննա, 1911, էջ 308—318), սակայն այս ուսումնասիրութեան
մեջ ստրկութեան գոյութիւնը և իրավական կացութիւնը հանգա-
մանորեն քննված են ո՛չ թե Արշակունյաց թագավորութեան և
մարդպանութեան ժամանակ, այլ ուշ միջնադարում: Իսկ մեզ հա-
մար կարևոր է ստրկութեան ու ստրուկների դրութեան լուսաբանու-
մը ո՛չ թե այդ, այլ նախարարական Հայաստանի հնագույն շրո-
ջանում:

Իհարկե, խոսք անգամ չի կարող լինել, որ իբր թե Հին Հա-
յաստանում գոյութիւն չեն ունեցել ստրուկներ և որ Հայաստանն
այդ տեսակետից բացառիկ մի երկիր է եղել Մերձավոր Արևելքում:

Ստրկութիւնը համատարած ու ընդհանուր մի երևույթ էր հին

աշխարհում, ուստի և ինքնըստինքյան հասկանալի է, որ բացառությամբ չէր կարող կազմել նաև Հին Հայաստանը:

Եվ հիշելով՝ որ հին հայկական կյանքում ևս ստրկությունն անխուսափելի էր, ինչպես և մյուս երկրներում, այդ հաստատում են հենց մատենագրական հայ աղբյուրները, որոնց մեջ ստրկությաների մասին կան, ինչպես կտեսնենք, պարզ ու որոշ վկայություններ, որ հաճախ անտես են արվել նախորդ աշխատություններում: Բայց նախ քննենք այն տեղումները, որ հին հայերենում նշանակել են ստրուկ և ստրկություն:

Վերև մենք տեսանք, որ նախարարական Հայաստանում «ծառայ» էին անվանվում թե՛ ստրուկները և թե՛ ֆեոդալական սանդուղտի ստորագրյալ դասերն իրենց սննդորենների կամ «տէր»-երի հանդեպ: Մատենագրական աղբյուրների ուշադիր քննությամբ մենք մատնացույց էինք արել երեք տարբեր տեսակի «ծառայութիւն»՝ «ի սպասու ծառայութիւն», «ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն» և «ի ստրկաց կարգի» կամ «ստրկութեան ծառայութիւն»:

«Մառայութիւն» և «ծառայ» տերմիններին այս վերջին իմաստով համապատասխանել են հին հայերենում նաև «ստրկութիւն» և «ստրուկ» բառերը:

Ուշագրավ է սակայն, որ «ծառայ» և «ստրուկ» անվանվել են այդ ստրուկները, իսկ կին ստրուկները կոչվել են «աղախին»: Ուրեմն՝ ստրուկ և ստրկություն գաղափարների համար գործ ենածվել հին հայերենում հետևյալ բառերը՝ «ծառայ», «ստրուկ», «աղախին» և «ծառայութիւն», «ստրկութիւն» ու «աղախնութիւն»:

Արդ՝ աղբյուրների վկայություններից միանգամայն պարզ է, որ «ծառայ» կամ «ստրուկ» և «աղախին» ունեցել են պատմական այս շրջանում ո՛չ միայն Արշակունիները, նախարարները և մյուս ազնվականները, այլ նաև հոգևորականները և քահանաները:

Իբրև ստրկատիրության տարածման ապացույց կարող են ծառայել մատենագրական հետևյալ վկայությունները.

1. Փաւստոս, IV, ԺԷ, էջ 127՝

«Այլ աուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել ղերեսս թագաւորին Արշակայ մինչև յօրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զՉունակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա գլուխ ջրիստոնէութեանն. եւ էր սաբուկ ի սաբկաց արքունի»:

2. Խորենացի, I, ԺԲ, էջ 41՝

«Սմա [Սիսակայ] զմեծ մասն ընչից իւրոց տուեալ և ծառայս

անծինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ժողէն ընդ արևելս եւն».

3. Նույնը, II, ԽԸ, էջ 175՝

«Եւ ապա աւար առեալ զգանձսն Երուազայ, և ծառայս անծինս հինգ հարիւր, նա և զընտիր ընտիր գանձուցն մեհենից՝ բերէ Արտաշէսի: Եւ Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայսն Երուազայ».

4. Ղազար Փարպեցի, III, ՀԲ, էջ 131՝

«Իսկ զայրն Մամիկոնեան զՎարդ ոչ միայն լոկ անձամբ, այլ և ծառայիւք, դրամբ և կազմածով, յամուր տեղեաց շահաստանին, ի բարձրաբերձ պարսպացն և յասպարափակ բազմութենէ պահապանացն, ընկալեալ իբրև զարծուի ի թևս իւր և ընդ բաղում անցուցեալ օթեանս՝ ածեալ հասուցանէր խաղաղութեամբ ի յերկիրս Հայոց».

5. «Ողբք վասն շարեացն աշխարհիս Հայոց և վկայարան. վահանայ Գողթնացույ», Վենետիկ, 1854, էջ 40՝

«Թշուառական և շարասէր, ա՛ռ զայդ ամենայն, և ծառայս եւ աղախնայս, և ձիս և ջորիս և ուղտս».

6. Եղիշե, VII, էջ 235՝

«Նա և ի մէջ իսկ բերէր զամբաստանութիւն նորա Մուշկան Նիսալաւուրտ, և յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, որ և յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն հոտ հեղու վասակ. թէ ո՛րպէս սուտ երդամբք խաբէր և իշուցանէր յամրոցաց անտի. էր՝ զոր կոտորէր և էր՝ զոր գերի տանէր զծառայս եւ զաղախնայս արքունիք».

7. Նույնը, VII, էջ 247՝

«Եւ փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա [Վասակայ]».

8. «Կանոնք Շահապիվանի ժողովոյն», տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ղլտճյանի, Ե, էջ 64՝

«Եթէ կին ոք արար և ամուլ պատահեաց, այրն հանցէ զնա վասն ամուլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ».

9. «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի», տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, ԼԲ, էջ 115՝

«Քահանայք մի՛ արբեցողք և մի՛ հանգանակողք և մի՛ արծաթագին աղախնայս ստանալ և կամ ի կապենաց պողնկաց ի տունս տանել զգարջելիսն, զոր ոչ հրամայեն օրէնք»:

Բոլոր այս վկայություններում «ժառայ», «ստրուկ» և «աղա-խին» նշանակում են, իմ կարծիքով, ստրուկ:

Առանձնապես կարևոր են ութերորդ և իններորդ վկայությունները, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ ստրկատիրությունը սովորական երևույթ է եղել պատմական այս շրջանում:

Մատենագրական աղբյուրներում պարզ ու որոշ մատնանըշ-ված են նաև ստրկության գլխավոր աղբյուրները:

Աղբյուրներից ամենահիմնականը պետք է համարել, անշուշտ, գերևարությունը, որի մասին հետաքրքիր ու խիստ կարե-վոր մի վկայություն ունի Անանիա Շիրակացին «Յաղագս հարց-ման և լուծման» գրվածքում (տե՛ս «Вопросы и решения», изд. И. Орбели, Петроград, 1918, стр. 26, իՍ հարցումն):

«Ներսեհ Կամսարական որդի Արշալի, անուանակից և նախ-նի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ Բաշլճացն առնու գերի սաստիկ յոյժ. և հասեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ թագա-տրին պարսից զհասարակ գերտյն. և թուեալ զհասարակն՝ ևս ըն-ծայէ որդւոյ արքայի ղեալնեբորդ մասն. և հրաժարեալ ի նոցա-նէ, դառնայ յաշխարհն իւր և եկեալ ի տուն Դարիկպետի՝ յոյժ մե-ծարի ի նմանէ, ո՛չ որպէս զնախարար, այլ որպէս զմի ոք ի թա-գաւորաց. և սա տայ նմա զութերորդ մասն գերտյն. և եկեալ առ ապայապետն, զոր խորաւարանայ կոչեն, և առաւել ևս ի նմանէ մեծարեալ՝ տալ նմա զչորեքտասներորդ մասն գերտյն. և ևս յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր, և ընդ առաջ լինի նմա եղ-բայր իւր կրտսեր Հրահատ, և տայ նմա զերեքտասներորդ մասն գերտյն. և ես յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատք հայոց և տայ նոցա զիններորդ մասն գերտյն. և եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն զվեշտասներորդ մասն գերտյն. և եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝ տայ նմա զքսաներորդ մասն գերտյն. և իւր մնաց հինգ հարկւր և եաւթանասուն անձն: Արդ գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՞ է լեալ»:

Հարցման լուծումից իմանում ենք, որ իր Հրահատ եղբորը տվել էր Ներսեհը 60 գերի, «ազատ»-ներին՝ 80, Վաղարշապատի եկեղեցիներին՝ 40 և իր Սահակ եղբորը՝ 30 գերի:

Շիրակացու այս վկայությունը ո՛չ միայն ցույց է տալիս ստրկության հիմնական աղբյուրը, այլև հաստատում է նույնպես, որ ստրուկներ ունեցել են բացի ազնվականներից նաև եկեղեցի-ները:

Ստրկության մի ուրիշ կարևոր աղբյուր էր վաճառքը և գնումը, որի մասին կան որոշ վկայություններ Շահապիվանի ժողովի և Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից հպիսկոպոսի» կանոններում:

1. «Կանոնք Շահապիվանի ժողովուն», Զ, հրատ. Ղլտճյանի, էջ 65՝

«Ըթէ որ կին յառնէ ելանիցէ, կալցեն և անդրէն յայր իւր տացեն, և մանաւանդ, որ վարձկանօք իցէ վարձեալ և ոչ բողաբար, թէպէտեւ վաճառեսցի եւ յաղախնութիւն կալցի»:

2. «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից հպիսկոպոսի», հրատ. Ղլտճյանի, Գ, էջ 108՝

«Ըդին ոմանք և զվաշխս դահեկանաց իւրեանց, կէսք վաճառեցին ընկերաց իւրեանց որպէս ծառայս և այլքն հոռուն վարձանս կանանց իւրեանց ամբարշտեալք ի բռնութեան, անարժանութեամբ անձանց իւրեանց մեղան»:

3. Հմմտե նաև նույնը, կանոն ԼԲ, էջ 115:

Մատենագրական աղբյուրների վկայություններից պարզվում է նույնպես, որ Հին Հայաստանում ևս, ինչպես և Ռուսաստանում ու միջնադարյան Ուկրաինայում, ստրուկ էին դառնում նաև ազատ մարդիկ, որոնք չէին կարող վճարել իրենց պարտքերը:

Ստրկության այդ երրորդ աղբյուրը պատկերավոր կերպով նկարագրված է, օրինակ, Հովհան Մանգալուեու «Վասն փոխոց և վաշխից» ճառի հետևյալ հատվածում:

«Եւ որպէս երկրագործքն յաղագս անձրեաց աղաչեն և մաղթեն յԱստուծոյ վասն սերմանցն և լիութեանց աշխարհի, իսկ վաշխաժողովն կարօտութիւն և տարակուսանս և սովս սաստիկս և հարկապահանջս աշխարհի ըղձանայ, զի ի գործ և ի շահ վաշխիցն ինչքն անկանիցին ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի. և յորժամ ժամադրութիւն վաշխիցն հասանիցէ, տեսանելով զչքաւորութիւն և զտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, և ոչ երդմանն հաւատոյ մաղթողին, ոչ խոնարհի յաղաչանս վարանեցելոյն. այլ դժոխեալ անխոնարհելի և անհաշտ, եւ իւր ծառայ զփոխառուն համարի փոխատուն» (տե՛ս «Յոմվհաննու Մանգալուեույ հայոց հայրապետի, ճառք», երկ. տպ., Վենետիկ, 1860, էջ 65—66):

Ստրկուների աշխատանքից օգտվել են, ինչպես երևում է վերոհիշյալ վկայություններից, գլխավորապես, ընտանիքներում:

Բայց խորենացու պատմության մեջ կան մի քանի ակնարկ-

ներ, որոնցից կարելի է թերևս կռահել, որ գերիներին բնակեցրել են երբեմն գյուղերում և օգտագործել նրանց երկրագործական աշխատանքների համար: Այդու ահարկներ այդ մասին գտնվում են հորենացու հետևյալ վկայություններում.

1. Խորենացի, II, ԽԸ, էջ 175՝

«Յայնժամ Սմբատայ զծառայսն Երուաղայ, զոր գերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն».

2. Նույնը, II, Ը, էջ 112՝

«Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարացուցն տէր: Եւ թողու ի վերայ նորա զամենայն շէնս, որք ի գերութենէն Մարաց».

3. Նույնը, II, ԾԳ, էջ 183՝

«Հրամանաւ Արտաշիսի բնակէ [Սմբատ] ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն»:

Խորենացու այս վկայությունները մեկնելիս՝ ի նկատի պետք է ունենալ ո՛չ թե նրանց պատմական ճշտությունը, այլ գերիների բնակեցումը գյուղերում, որ կարող է իրական փաստ լինել նախարարական Հայաստանի կենցաղում:

Եթե հնարավոր լինի ապագայում հիմնավորել մեր դիտողությունն այնպիսի հաստատուն փաստերով՝ այդ կարող է թերևս լինել մի ցուցանիշ, որ Հին Հայաստանում ևս գոյություն են ունեցել ստրուկ գյուղացիներ, որոնք սոցիալական իրենց կացությամբ տարբերվել են, հավանորեն, «շինական»-ներից:

Ընդունելով ստրկության գոյությունը նախարարական Հայաստանում՝ չպետք է, իհարկե, նրա նշանակությունը գերազնահատել և համարել ստրկական աշխատանքը հիմնական ու առաջնակարգ ազդակ Հայաստանի տնտեսական զարգացման:

Հին Հայաստանում, ինչպես և արևելյան մյուս երկրներում, ստրկությունը բնավ չի խաղացել այն դերը, որ նրան սխալմամբ վերագրել է Բորյանը վերջերս լույս տեսած իր աշխատության մեջ (տե՛ս Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, М., 1929, часть I, стр. 72—111). Միանգամայն պարզ է, որ նախարարական Հայաստանի տնտեսության հիմքը կիսադատ «շինականն» էր և ո՛չ ստրուկը, որի տնտեսական դերը պետք է համարել երկրորդական:

Ստրկությունը Հին Հայաստանում չի կարող, անշուշտ, համեմատվել իր ծավալով և իր տնտեսական նշանակությամբ Հին

Հունաստանի կամ Հռոմի ստրկության հետ, ուր ստրուկները կազմում էին բնակչության ստվար մեծամասնությունը և գլխավոր արտադրող տարրն էին ո՛չ միայն արդյունագործության մեջ, այլ նաև գյուղատնտեսության:

Ստրուկների իրավական դրության մասին պատմական այս շրջանում մեզ ոչինչ հայտնի չէ:

Կարելի է սակայն վստահորեն պնդել, որ ստրուկների դրությունը չէր կարող առանձնապես ծանր լինել նախարարական Հայաստանի տնտեսական այն պայմաններում, որ վերև մատնանշել էինք:

Ստրկական աշխատանքի շահագործման աստիճանը և ձևը, ինչպես հայտնի է, կախված են եղել յուրաքանչյուր երկրի տնտեսական միջավայրից և ապրանքափոխանակության նվազ կամ լայն զարգացումից:

Վերև մենք տեսանք, որ պատմական այս շրջանում թեև զարգանում էին Հայաստանում թե՛ առևտուրը և թե՛ դրամական շրջանառությունը, սակայն ոչ այն մեծ ծավալով, ինչպես Հունաստանում կամ Հռոմում: Ֆեոդալիզմի այս շրջանում գերակշռող նշանակություն ունեւր Հայաստանում բնական տնտեսությունը՝ իրենք հայ նախարարները, որ մեծ մասամբ զինվորականներ էին, շունչին, ինչպես ասացինք, սեփական ու ինքնուրույն խոշոր տրեստություններ: Բացի այդ՝ ցորենը և գյուղատնտեսության մյուս արտադրանքները դեռևս չէին դառել լայն շուկայի ապրանք այնպիսի չափերով, ինչպես Բագրատունյաց ժամանակ:

Հասկանալի է, որ տնտեսական այս պայմաններում չկար դեռևս ստրկական աշխատանքը շահագործելու այն խթանը, որ գոյություն ունեւր ապրանքային ու փողային տնտեսության լայն զարգացման շրջաններում:

Այդ է նաև պատճառը, որ պատմական այս շրջանում ստրուկների իրավական դրությունը մենք ենթադրում ենք համեմատաբար ավելի մեղմ քան հանրապետական Հռոմում կամ կապիտալիստական երկրներում:

9. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նախարարական կազմակերպության ծագումը և սկիզբը կարևոր մի խնդիր է, որ կարոտ է հատուկ լուսաբանության:

Ինչպես հայտնի է, ֆեոդալիզմի զարգացումն Արեւելքում և

Արևմտյան Եվրոպայում՝ տեղի է ունեցել միանգամայն տարբեր պայմաններում: Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմն առաջ էր եկել Հռոմեական կայսրության անկումից հետո իբրև հետևանք նախկին պետական կազմակերպության քայքայման, իսկ Արևելքում նա հետզհետե զարգացել էր տոհմային կյանքի կազմալուծման և կերպարանափոխման ընթացքում:

Ի նկատի ունենալով ֆեոդալիզմի ծագման այս տարբեր պայմանները՝ նորագույն ուսումնասիրություններում տոհմային կենցաղից առաջացած ֆեոդալիզմն անվանում են առաջնական ֆեոդալիզմ, իսկ միջնադարյան Եվրոպայինը՝ կրկնված ֆեոդալիզմ:

Համաձայն այս բաժանման Հին Հայաստանի նախարարական կազմակերպությունը կարող ենք բնորոշել, անշուշտ, իբրև առաջնական ֆեոդալիզմ:

Կառուցված լինելով կերպարանափոխվող տոհմային կյանքի հիմքերի վրա՝ նախարարական կազմակերպությունը, բնականաբար, պահպանած պիտի լիներ իր մեջ տոհմային նախորդ կարգերի բազմաթիվ մնացորդներ:

Ուշագրավ է այս տեսակետից, որ Հին Հայաստանի պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ տերմինները, ինչպես մանրամասն պարզաբանված է այդ պրոֆ. Զավախովի «Государственный строй древней Грузии и древней Армении» աշխատության մեջ (стр. 77—136), ծագել են, մեծ մասամբ, տոհմատիրական նախորդ շրջանից:

«Ազգ» բառը, օրինակ, որ սկզբնապես նշանակում էր տոհմային խմբակցություն, հետագայում գործ է ածվել նախարարական շրջանների և անգամ համայն Հայաստանի բնակչության համար՝ «ազգն Աղձնեաց», «ազգն Սիւնեաց տոհմին», «ազգն աշխարհին Հայոց», «ազգն տանն Հայոց երկրին» ևն:

Տոհմային կենցաղի շրջանում «տուն» էր անվանվում ամեն մի տոհմի բնակատեղին, իսկ հետագայում «տուն» են կոչվել երկրային բոլոր միավորները, ամենափոքրից սկսած մինչև ամենամեծը, թե՛ նախարարական «ստէրութիւն»-ները և թե՛ Արշակունյաց ամբողջ պետությունը՝ «տուն Աղձնեաց», «տուն Գողթան», «տուն Թագաւորութեան Հայոց», «տուն Հայոց երկրին» ևն:

Նմանապես և «տանուտէր» բառը, որ սկզբում ունեցել է տոհմապետի իմաստ, հետագայում գործ է ածվել նաև նախարարական շրջանների նահապետների և նույնիսկ թագավորի համար:

Վերև մենք տեսանք, որ սոցիալական ամենասովորական տերմինները, ինչպես «նախարար», «նահապետ», «սեպուհ», «ազատ», որ փոխառություններ են պարթևերենից, բոլորն էլ ծագում են դարձյալ տոհմային նախորդ շրջանից:

Նախարարությունների տոհմային հիմքերը, տոհմային միջավայրի շերտավորումը, դասերի առաջացումը և Հայաստանի ֆեոդալականացման ընթացքը քննության են առնված նիկ. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ (տե՛ս գլ. XIV, Родовые основы нахарарства, стр. 389—426): Այս աշխատության մեջ նիկ. Ադոնցը, հենվելով Քսենոփոնի վկայությունների վրա (տե՛ս Anabasis, IV 1—6), Արմենիայի սոցիալական դրությունը 401—400 թ. Քր. առաջ բնորոշում է իբրև տոհմատիրական:

Քսենոփոնն Արմենիան անվանում է «ընդարձակ ու բարեկեցիկ» երկիր, քաղաքականապես բաժանված երկու մասի: Հարավից Կենտրիտես գետը (Արևելյան Տիգրիսը, որ այժմ կոչվում է Քոհտան-սու), որպես բնական սահմանագիծ՝ բաժանում էր Արմենիան Կարգուփանների երկրից: Արմենիայի այս մասում իշխում էր Որոնտասը, որի գործը բաղկացած էր ո՛չ միայն արմեններից, այլև մարդերից ու խալդայներից: Կենտրիտես գետի աջ ափի մոտ, մոտավորապես այժմյան Սղերդի շրջանում, Քսենոփոնի ասելով՝ արմենների գյուղեր չկային պատերազմների պատճառով Կարգուփանների դեմ:

Գետից մոտ 5 փարսախ կամ 27 կիլոմետր հեռավորության վրա՝ հույները մտել են մի մեծ գյուղ, ուր տների մեծամասնության վրա եղել են աշտարակներ: Այդ գյուղն ունեցել է սատրապի բնակության համար հատուկ մի դղյակ:

Շարժվելով այստեղից դեպի հյուսիս՝ հույներն իջել են Մշո դաշտը, որ համարվել է Արևմտյան Արմենիայի մասը և գտնվել է Տիրիբազի իշխանության տակ:

Քսենոփոնի նկարագրությունների մեջ ուշագրավ է այն, որ նա Արմենիայում չի հիշատակում և ո՛չ մի քաղաք. հույները գետերի հովիտներում տեսել են միայն բազմաթիվ գյուղեր, որոնց տնտեսական վիճակը եղել է միանգամայն բարգավաճ ու բարեկի:

Գյուղերի մի մեծ խումբ հիշում է Քսենոփոնը Տելեբոաս կամ Մեղ գետի շուրջը և մի ուրիշ խումբ՝ Տելեբոաս գետից 15 փարսախ կամ մոտ 80 կիլոմետր դեպի արևելք: Գյուղերի այս վերջին խումբը գտնվել է ամրոցի շուրջը: Այստեղ հույները գտել են ամեն տե-

սակ պաշարեղեն՝ մսացու անասուններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ, զանազան ընդեղեններ, նաև խոզի ճարպ, քնջութ, դառն նշի և բեմեկնի յուղ և սրանցից պատրաստված անուշահոտ յուղ:

Արածանի գետի ակունքների մոտ, այժմյան Դիադին-Բագավանի շրջանում, հույներն իջևանել էին արմենների գյուղերում, որոնց նկարագիրն առանձնապես հետաքրքրական է:

Այստեղ նրանք, հասնելով մի գյուղ, աղբյուրի մոտ ամրության առաջ հանդիպել էին շուր տանող գյուղացի կանանց, իսկ ամրության մեջ՝ գյուղապետին (kōmarchēs): Այս շրջանի գյուղերում, — պատմում է Քսենոփոնը, — ռոմերը գետնափոր էին, մուտքը շրհորի բերնի նման, իսկ ներքևն ընդարձակ: Կենդանիների համար հատուկ մուտք կար փորված, իսկ մարդիկ իջնում էին ցած սանդուխտներով: Տների մեջ հույները գտնում են առասպաշարեղեն՝ ցորեն, գարի, ընդեղեններ և կարասներում գարուց պատրաստված խմիչք, նաև այծեր, ոչխարներ, եզներ, կովեր, հավեր և խոզեր: Քսենոփոնն առանձնապես հիշում է նաև արմենների ձիերը, որոնք պարսկական ձիերից թեև փոքր էին, բայց շատ ավելի կայտառ:

Քսենոփոնի այս վկայություններից պարզ երևում է, որ արմենները եղել են նստակյաց ու հողագործ ժողովուրդ և երկրագործական մշակույթի տեսակետից կանգնած են եղել զարգացման համեմատաբար բարձր աստիճանի վրա:

Հերոդոտն անվանում է արմեններին polyprobatoi «հարուստ անասուններով» (V, 49), ուստի պետք է ենթադրել, որ նրանք զբաղվել են նաև խաշնարածությամբ:

Պաշարեղենի առատությունը և քաղաքների բացակայությունը կարող են անուղղակի մի նշան համարվել, որ Քսենոփոնի ժամանակ Արմենիան գտնվել է բնական տնտեսության զարգացման շրջանում: Քաղաքների բացակայությունը և երկրի նահապետական դրությունը թույլ են տալիս նաև կարծելու, որ բնակչության դասակարգային շերտավորումը գտնվել է դեռևս սկզբնական իր շրջանում:

Հերոդոտի և Քսենոփոնի վկայություններից երևում է նույնպես, որ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ հայկական լեռնաշխարհի սահմաններում ապրում էին դեռ այլևայլ օտար ցեղեր:

Արմենիան, Հերոդոտի վկայությամբ (V, 49 և V, 52), գտնւ-

վել է կիլիկեցիների և մատիենների միջև։ Կիլիկեցիների կողմից Արմենիայի սահմանն է հղել Եփրատ գետը, իսկ արևելքում նա սահմանակից է հղել մատիենների երկրին։ Եփրատից սկսած մինչև Մատիենն Արմենիայի տարածությունը հղել է մոտ 56½ փարսակ՝ մոտավորապես 300 կիլոմետր։ Հերոդոտի վկայություններից կարող ենք հետևել, որ նրա ժամանակ արմենական գաղթականությունը տարածված էր արդեն ստորին Արածանիի և վերին Տիգրիսի շրջաններում՝ այժմյան Խարբերդի ու Դիարբեքի լիակայնությունը։

Իսկ ըստ Քսենոփոնի՝ Արմենիայի սահմաններն են հղել՝ հարավ-արևելքում՝ Կենտրիտես գետը, իսկ հյուսիս-արևելքում՝ Դիադին-Քազավանի մոտ գտնվող շրջանները։ Քսենոփոնի ժամանակ Արածանի կամ Արևելյան Եփրատ գետի վերին հոսանքը և ակունքները գտնվել են արդեն Արմենիայի սահմաններում։

Հերոդոտի ու Քսենոփոնի այս տեղեկություններն Արմենիայի մասին պարզ ցույց են տալիս, որ Աքեմենյան Պարսկաստանի աշխարհակալության ժամանակ արմենական գաղթականությունը կառողացել էր գրավել միայն մի քանի շրջաններ և այդ շրջաններում, ինչպես դժվար չէ կռահել աղբյուրների վկայություններից, արմենների հետ միասին ապրել են նույնպես խալդեր, մարդեր, արամայեցիներ և, հավանորեն, նաև ուրիշ ցեղեր։

Հայկական լեռնաշխարհի արևմտյան, հյուսիսային և արևելյան մասերում ևս ապրում էին դեռ ղանազան այլ ցեղեր, որոնք հիշատակված են մասամբ Հերոդոտի և Քսենոփոնի երկերում։

Քսենոփոնի վերոհիշյալ երկից գիտենք, որ նահանջող հույներն հայկական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան կողմում՝ Ճորոխ գետի ուղղությամբ և ավելի հյուսիս դեպի Տրապիզոն՝ անցել էին խալդուրների, տաոքների, սկյութենների, խալդերի, մակրոնների, կոլխերի, տիբարենների և մոսսինոյկների երկրներով, որոնք ազատ են հղել և պարսից թագավորությունից միանգամայն անկախ։ Նույն կողմերում ապրել են նաև հասպերիտներն ու փասիաններն, որոնք սակայն գտնվել են Տիրիբազի իշխանության տակ։

Հայկական լեռնաշխարհի սահմաններում, ինչպես վկայում է Հերոդոտը (III, 94 և VII, 79), գտնվել է պարսից պետության տասնևութորոգ սատրապությունը, որի բնակիչներն էին ալարոդները (ուրարտացիները), սասպյուրները (հավանորեն Սպերի շրջանում) և մատիենները (Ատրպատականի կողմերում)։ Բացի այս

ցեղերից աղբյուրների մեջ իբրև հայկական լեռնաշխարհի բնակիչներ հիշատակվում են նաև մոսխեր, ուտիներ, միկեր, պակտիներ, կարդուխներ և ուրիշ ցեղեր:

Այս ցեղերի մեծագույն մասը, որ իրենց ծագմամբ պատկանում էին, գլխավորապես, հաբեթական, իրանական ու սեմական լեզվախմբերին և հետագա դարերում ձուլվել էին, մեծ մասամբ, արմենների հետ, ինչպես ճիշտ դիտել է Նիկ. Ադոնցը, գտնվել են կուլտուրական և սոցիալական զարգացման տարբեր աստիճանների վրա:

Վերոհիշյալ ժողովուրդներից խալդերը կամ ուրարտացիները, որ հիմնադիր էին հզոր պետության, ունեցել են, ինչպես հայտնի է, բավական բարձր քաղաքակրթություն: Նրանց քաղաքակրթությունից մնացել են մինչև այժմ բերդերի և տաճարների ավերակներ, ժայռերի մեջ փորված շինություններ, ջրանցքներ ու ջրաբաշխական կառուցվածքներ, կավից և մետաղից պատրաստված զանազան իրեր, նաև բազմաթիվ սեպագիր արձանագրություններ:

Տարբերությունները զանազան ցեղերի կուլտուրական-կենցաղային զարգացման պարզ երևում են Քսենոփոնի նկարագրություններից:

Կարդուխների մասին, օրինակ, Քսենոփոնը հաղորդում է, որ նրանք ապրել են գեղեցիկ տներում, որ կահավորված են եղել բազմաքանակ պղնձե ամաններով: Հույներն այդ տներում գտել են առատ պաշար, նաև զինի, որ պահվում էր ծեփված հորերում: Կենտրիտես գետի մոտ գտնվող գյուղում տների մեծագույն մասը, ինչպես տեսանք, ունեցել են աշտարակներ: Իսկ Դիադին-Բագավանի շրջանում արմենական գյուղերի տները, որոնց նկարագրությունը մեջ էինք բերել վերև, եղել են գետնափոր:

Կենցաղային այս տարբերությունները մի ակնարկ են, անշուշտ, որ միակերպ չէր կարող լինել նաև սոցիալական կենցաղը ցեղային զանազան խմբավորումներում:

Ստրաբոնի վկայությամբ, Արմենիայի ընդարձակումը և վերոհիշյալ ցեղերի մեծագույն մասի նվաճումը տեղի են ունեցել «Անտիոքոս Մեծի» Արտաշես և Զարեհ զորավարների ժամանակ, որոնք Անտիոքոս Մեծի պարտվելուց հետո (Մագնեսիայի մոտ 189 թվին Քր. առ.) անցել էին հաղթող հռոմայեցիների կողմը և դառել անկախ թագավորներ, առաջինը՝ Արտաշատի կողմերում, իսկ երկրորդը՝ Մոփաց, Անձիտի, Ուոմանտիսի և մի քանի ուրիշ գավառներում (XI, 14,5):

«Սրանք,— ասում է Ստրաբոնը,— ընդարձակել էին իրենց երկրների սահմանները և գրավել հարևաններից հետևյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան. իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Քորձենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից ու մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որ սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիրխսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամորիտիսը» (Strab. XI, 14.5):

Այս բոլոր շրջանների բնակչության ձուլումն արմենների հետ տեղի է ունեցել, անշուշտ, երկար դարերի ընթացքում, ուստի և Ստրաբոնի տեղեկությունը, որ իր ժամանակ ընդարձակված այս Արմենիայի մեջ բոլոր համալեզու էին, այսինքն՝ խոսում էին հայերեն, կարելի է ընդունել միայն որոշ վերապահությամբ:

Նիկ. Ադոնցը տոհմային կենցաղի կազմավորումը ենթադրում է հենց այս մեծ նվաճումների շրջանում Արտաշեսի և Զարեհի ժամանակ:

«Տոհմային հարաբերությունների ժամանակաշրջանը,— ասում է Ադոնցը,— վերջանում է քաղաքական հուզումների ընթացքում, որ տեղի ունեցան Զարեհի ու Արտաշեսի ժամանակ: Հենց այս ժամանակներում դրվելու է տոհմային կազմակերպության քայքայումը և սոցիալական նոր հարաբերությունների հղացումը: Հեղաշրջման էությունն արտահայտվում էր սոցիալական զանգվածի շերտավորումով և դասայնության հիմքերի առաջացմամբ» (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 406):

Նիկ. Ադոնցը ճշտիվ որոշում է այս հեղաշրջման ո՛չ միայն սկզբնավորման, այլև ավարտման ժամանակաշրջանը:

«Տոհմային հարաբերությունների կազմավորումը,— ասում է նա,— որին ուղեկցում էր դասայնության առաջացումը հանձին իշխանավորների, հետագա տիրող իշխանների, ավարտվում է Տիգրան Մեծի փոթորկալից ժամանակաշրջանում: Պատերազմական ժամանակի տազնապը ստեղծում է մի մթնոլորտ, որ նպաստավոր է տոհմային հարաբերությունների փոխանցման դասայինի» (էջ 410):

Նիկ. Ադոնցը, ինչպես տեսնում ենք, տոհմային կենցաղի շրջանը ենթադրում է Հայաստանում մինչև երկրորդ դարի սկիզբը Քր. առաջ, այնուհետև՝ մինչև Տիգրան Մեծը (94—56 թ. Քր. առ.) նա դնում է տոհմային կենցաղի կազմավորումը, համարելով այդ.

փոխանցման շրջան, իսկ Տիգրան Մեծի ժամանակ ավարտվել է, նրա կարծիքով, այդ փոխանցումը և կազմակերպվել են հետզհետե Հայաստանի նախարարությունները:

Տոհմային կազմակերպության քայքայման ու Հայաստանի նախարարականացման ժամանակագրական այս շրջանաբաժանումները հակասում են այն փաստական աղբյուր տեղեկություններին, որ հայտնի են մեզ պատմական աղբյուրներից. ուստի և վիճելի են ու անհավանական:

Ադոնցն աչքաթող է արել նաև սեպագիր արձանագրությունների կարևոր տվյալները:

Արձանագրությունների ընթերցումից հայտնի է, որ խալդական գերիշխանության տակ նախարամենական իսկ շրջանում զբաղվել են տոհմացեղային բազմաթիվ խմբավորումներ, որոնց մեջ տեղական ցեղապետները և տոհմապետները եղել են հաճախ տիրական իրավունքներով օժտված իշխանավորներ, Հավանական է նաև, որ սենյորական-վասալական հարաբերություններ, որոնք կարող են դեռ հատուկ ուսումնասիրության, կարող էին գոյություն ունեցած լինել խալդական թագավորության մեջ:

Ուրեմն՝ սոցիալական որոշ շերտավորում տոհմացեղային խմբակցությունների մեջ, ինչպես և ֆեոդալականության որոշ սաղմեր, կարող էին առանձնահատուկ լինել հենց խալդական մեծ պետության:

Պարզ է, որ տոհմացեղային այս խմբավորումները, ենթարկվելով արմենների իշխանության, պահպանած պիտի լինեին իրենց նախկին սոցիալական կենցաղը:

Առարկելի է նաև Ադոնցի վերոհիշյալ լուսաբանության հենց հիմնական փաստարկումը:

Մատնանշելով «պատերազմական ժամանակի տազնալը» որպես կարևոր մի գործոն, որը նպաստել է սոցիալական շերտավորման, Ադոնցն աչքաթող է անում, որ համառ ու երկարատև կռիվներ տեղի էին ունենում ո՛չ միայն Արտաշեսի ու Տիգրան Մեծի ժամանակ, այլև դրանից առաջ՝ արմենների առաջարժույթները ու հաստատման ժամանակ նորանվաճ երկրում:

Նոր եկվորների լարված ու հարատև կռիվների մասին տեղական խաղերի ու կարգուկանգների հետ կարևոր տեղեկություններ պահպանվել են, ինչպես հայտնի է, Քսենոփոնի «Kyrupaideia» և «Anabasis» երկերում: Ուստի խիստ հավանական է, որ արդեն այս հնագույն շրջանում կարելի է ենթադրել տոհմային հարաբե-

րությունների որոշ բեկում և տոհմապետների ու առաջնորդների իշխանության ու հեղինակության ուժեղացում:

Նոր երկրների գրավումը, տեղական ցեղերի նվաճումը և նրանց ենթարկումը նվաճողների իշխանության չէին կարող լծող-նել իրենց ազդեցությունը տոհմային հարաբերությունների վրա և նպաստելու էին, անտարակույս, արմենների մոտ ևս տոհմապետ-ների ու ցեղապետների իրավունքների ու իշխանության ընդար-ձակման: Միևնույն ժամանակ, տնտեսական անհավասարություն-ը, որ ստեղծվում էր հաղթված ժողովուրդների ստորադրմամբ՝ նվաճողներին, հավանորեն, արմենների տիրապետության հնա-գույն իսկ այս շրջանում վերածվում էր քաղաքական ու իրավա-կան անհավասարության և նպաստում, ըստ երևույթին, դասերի կազմակերպման:

Սոցիալական շերտավորման այս առաջացումը բացատրելիս՝ չպետք է, իհարկե, գերազնահատել «պատերազմական ժամանակի տազնապի» և նվաճումների նշանակությունը: Անհրաժեշտ է նույն-պես ի նկատի ունենալ երկրի տնտեսական դրությունը և տնտե-սական այն հեղաշրջումը, որ տեղի ունեցավ Սելևկյանների ժա-մանակ:

Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների վերաբերյալ ռուսերեն մեր աշխատության մեջ մենք մատնացույց էինք արել, որ հելլե-նիստական շրջանի տնտեսական հեղաշրջումը զարկ էր տվել նաև Հին Հայաստանի տնտեսական զարգացմանը:

Այդ զարգացման պարզ նշաններն էին Փոքր Հայքում և Մոփ-քում կտրված սեփական դրամները, փողային շրջանառության զարգացումը և առևտրական հնագույն քաղաքների հիմնադրումը Մոփքում: Հելլենիստական տիպի այս քաղաքների հիմնումն ինք-նին կարևոր մի փաստ է, որ ցույց է տալիս սոցիալական շերտա-վորման ուժեղացումը: Առևտրի ու դրամական շրջանառության զարգացման շնորհիվ կարևոր նշանակություն էր ստանում դրա-մական կապիտալը: Այս նոր ուժը, եթե անգամ նրա դերը երկրոր-դական ու մակերևութային համարենք Հին Հայաստանի էկոնոմի-կայի բնական-տնտեսական հիմքերի նկատմամբ, անխուսափելի կերպով պետք է ազդեր սոցիալական հարաբերությունների վրա և արագացներ տոհմային հասարակության քայքայումը, որ սկսվել էր արդեն նախընթաց շրջանում:

Իսկ տոհմային կազմակերպության այս քայքայման և դասերի

աստիճանական ժազման հետ սերտ կապված է Հին Հայաստանի նախարարությունների գոյացման հարցը:

Հավանական է, անշուշտ, որ տնտեսական ու իրավական որոշ ստորադասումների զարգացումը, որ մենք անվանում ենք ֆեոդալական, տեղի էր ունենում տոհմային կարգերի կազմալուծման հետ զուգընթաց:

Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, տոհմային ձևերի բեկումը և դասերի ու ֆեոդալիզմի ծագումը Հին Հայաստանում պետք է դնել ո՛չ թե Արտաշեսի, Զարեհի և Տիգրան Մեծի ժամանակ, ինչպես այդ ենթադրել է Ադոնցը, այլ նախորդ ավելի հնագույն շրջանում:

Հիմնվելով վերոհիշյալ մեր դիտողությունների վրա՝ կարելի է եզրակացնել, որ արդեն նախարտաշեսյան շրջանում, արմենների նվաճումների ու տիրապետության սկզբնական իսկ ժամանակ, հավանական է ենթադրել ցեղապետների ու տոհմապետների իշխանության որոշ ընդարձակում և ազնվականության ու ֆեոդալականացման աստիճանական զարգացում ո՛չ միայն նախարմենական ցեղային զանգվածներում, այլև արմենական տոհմային խմբավորումներում:

Հավանական է նույնպես, որ Արտաշեսի ու Զարեհի անկախ թագավորությունները, որոնց ընդարձակման մասին հիշել էինք վերև Ստրաբոնի տեղեկությունները, ունեցել են արդեն ֆեոդալական կազմություն և նախարարականության հիմքեր:

Հետագայում այդ կազմակերպությունը կարող էր, հավանորեն, որոշ փոփոխություններ կրած լինել, ենթարկվելով հայ Արշակունիների ժամանակ պարթևական ազդեցության, սակայն նրա հետագա այդ ձևավորումը, որ ենթադրաբար և իր ժամանակվա հասկացողությամբ լուսաբանել է հորենացին իր պատմության մեջ (II, 2, է, Ը, էջ 108—118), չի վերաբերվում: անշուշտ, նախա-րարությունների գոյացման և զարգացման, որ տեղի էին ունեցել նախարշակունյան շրջանում:

Հայկական նախարարությունները, որ Հայաստանի պատմական անցյալում ունեցել են հիմնական նշանակություն, պահպանվել էին, ինչպես հայտնի է, թե՛ արաբական, թե՛ Բագրատունյաց և թե՛ հետագա շրջաններում:

Նիկ. Ադոնցի կարծիքով, «նախարարական կազմակերպությունը գոյություն է ունեցել Հայաստանում հին ժամանակներից մինչև մոնղոլական արշավանքները» (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 236).

«Ինչպես ամեն մի երևույթ,— ասում է Ադոնցը,— որ զարգանում է տեղի ու ժամանակի պայմաններում, նույնպես և նախարարութունը փոխել է հաճախ իր բնույթը և անցել զարգացման տարբեր փուլերով: Նախարարական կարգերը, որ մշակվել էին Արշակունիների ժամանակ, ընդհանուր առմամբ շարունակվել էին անփոփոխ նաև Սասանյանների և Յուստինիանի շրջանում: Մոտավորապես 628 թվից սկսած, երբ մարզպանական կամ տանուտիրական Հայաստանի մեծագույն մասն անցել էր կայսրների իշխանության տակ և երբ պարսիկները վերջնականապես հրաժարվել էին այդ երկրից, սկսվել է արշակունյան ձևի նախարարության քայքայումը: Արաբների խիստ ու սկզբներում թշնամական քաղաքականությունը նախարարության նկատմամբ նպաստում էր այդ քայքայման» (նույնը, էջ 236):

Ադոնցի այս ընդհանրացումները մի քանի կետերում սխալ են ու անընդունելի:

Մենք ո՛չ մի ապացույց չունենք, որ 628 թվից հետո կամ արաբական տիրապետության սկզբնական շրջանում սկսված լինեի նախարարական հին կարգերի քայքայումը: Ընդհակառակը՝ պատմական տեղեկություններից որոշակի հայտնի է, որ մինչև յոթերորդ դարի վերջերն արաբների քաղաքականությունը նախարարությունների հանդեպ ո՛չ միայն չի եղել խիստ ու թշնամական, այլ եղել է միանգամայն մեղմ ու նախարարությունների զորեղացման համար ավելի քան նպաստավոր: Կարելի է հաստատապես պնդել, որ արաբների նվաճած երկրներից և ո՛չ մեկը չի ունեցել այն բացառիկ ինքնավար իրավունքները, որ տրված են եղել նախարարական Հայաստանին:

652 թվին, ինչպես վկայում է Սեբեոսը, Թեոդորոս Ռշտունին և մյուս նախարարները հաշտության դաշինք էին կնքել Մուավիայի հետ, որի համաձայն Հայաստանը դառնում էր ինքնավար մի երկիր և ստանում քաղաքական հատուկ իրավունքներ:

«Եւ ի նմին ամի,— ասում է Սեբեոսը,— ապստամբեցին հայք և ի բաց կացին ի Թագաւորութենէն յունաց՝ և հնազանդեցան ի ժառալութիւն արաբսին Իսմայէլի, եղին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխսց դաշինս կռեցին Թեոդորոս Ռշտունեաց տէր՝ ամենայն իշխանաւքն Հայոց ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւն: Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայէլի և ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիչիք, և ոչ առնում ի ձէնջ սակ զերրեամ մի. ապա յայն-

ժամ տաշիք երգամբ, որչափ և դուք կամիչիք. և հեծեալ կալէք
յաշխարհիդ ժն հազար. և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն
արքունի անդարեմ. և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այ-
լուր և հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բեր-
դորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հե-
ծեալ: Թշնամի մի՛ մտցէ ի Հայս, և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝
արձակեմ ձեզ զարս յազնականութիւն որչափ և դուք կամիչիք:
Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ» (տե՛ս «Պատմութիւն
Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», հրատ. Ք. Պ., Պետերբուրգ,
1879, Լն, էջ 138):

Նախարարությունները զորեղ էին ֆեոդալական իրենց ներ-
քին կացությամբ ո՛չ միայն 652 թվից հետո, այլև Բյուզանդական
տիրապետության քսանուհինգամյա նախորդ շրջանում:

628 թվից մի քանի տարի հետո՝ Ասորիքում սկսվել էին, ինչ-
պես հայտնի է, Արաբական խալիֆատի մեծ կոնվենբը Բյուզան-
դիայի դեմ և կայսրությունը հայկական նախարարությունների
հանդեպ չէր կարող, բնականաբար, վարել ուժեղ ձեռքի քաղաքա-
կանություն, այլ աշխատելու էր օգտագործել Հայաստանի զինվո-
րական ուժը, վարելով այստեղ մեղմ ու զուսպ քաղաքականու-
թյուն:

Մատենագրական աղբյուրների վկայություններից երևում է
նույնիսկ, որ արաբական արշավանքներից առաջ՝ Բյուզանդական
պետության անզորության պատճառով՝ Հունահայաստանը գտնե-
վել է անտերունչ վիճակում: Թողնված լինելով իրենց բախտին՝
նախարարությունները չէին կարողացել համախմբվել և պաշտ-
պանվում էին արտաքին հարձակումներից ո՛չ թե ընդհանուր
միացյալ ուժերով, այլ, մեծ մասամբ, անջատ ու առանձին:

Անիշխանական այս դրությունը, որ մատնանշվում է մատե-
նագրական երկերում, սխալ կլինի, անշուշտ, հասկանալ իբրև
նախարարությունների կամ նախարարական կարգերի քայքայում:

Այդ քայքայում էր միմիայն կայսրության գերագույն իշխա-
նության, նաև զորական միացյալ ուժի, իսկ նախարարությունները
և կալվածատեր ազնվականությունը մնում էին դասային իրենց
արտոնյալ դրության մեջ, սակայն ավելի ևս ինքնիշխան ու զորեղ,
քան առաջ:

Հետաքրքիր է խիստ, որ այս խառն ու անտերունչ շրջանում
կալվածատեր ազնվականները, ինչպես հայտնի է Դվինի ժողովի
կանոններից, ձգտել են ընդլայնել իրենց տնտեսական իշխա՞նու-

թյունը: Նրանք աշխատել են տեր ու տնօրեն դառնալ վանքերի ու եկեղեցական եկամտաշատ հաստատութիւնների և փորձել են անգամ «գլխաւորագատրոս» կամ «գազատ մանկունս եկեղեցւոյ» դարձնել հարկատու և «ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել» (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլաճյանի, կան. Թ, Ժ, ԺԱ, էջ 126—128):

Թե՛ այս և թե՛ նման վկայութիւններից կարելի է ըստ իս կռահել, որ Հայաստանի նախարարական կազմակերպութիւնը, որն իր հիմնական գծերով մնում էր այս շրջանում անխախտ, փոխվում էր միայն ազնվական կալվածատիրութիւնն ու զինվորականութիւնն զորեղացման և ստորադրյալ մշուս դասերի քմահաճ շահագործութիւնն ուղղութիւնով:

Սխալ պետք է համարել, անշուշտ, և Ադոնցի վերոհիշյալ ենթադրութիւնը հայկական ֆեոդալիզմի տեւողութիւն մասին:

Ադոնցի պնդումը, որ նախարարական կազմակերպութիւնը գոյութիւն է ունեցել Հայաստանում մինչև մոնղոլական արշավանքները, այսինքն՝ մինչև տասնութերեքերորդ դարի երեսնական թվականների վերջերը, պարզապէս մի թուրիմացութիւն է, որ հակասում է մեր ունեցած պատմական անփխտելի տեղեկութիւններին:

Հայ պատմագիրների վկայութիւններից մենք գիտենք, որ Հայաստանի ֆեոդալական իշխանութիւնները հենց իրենք հոժարաբար անձնատուր էին եղել նոր նվաճողներին և ենթարկվել նրանց իշխանութիւն: Հայտնի է նույնպէս, որ մոնղոլները նպատակահարմար էին համարել պահել վրացական և հայկական ֆեոդալական կազմակերպութիւնը և թողնել ֆեոդալների ձեռին նրանց կալվածները և իշխանութիւնը:

Ֆեոդալական կազմակերպութիւնը նրանք օգտագործեցին իբրև տեղական վարչութիւն պատրաստի ապարատ, իսկ ֆեոդալների զինվորական ուժերը նրանք ծառայեցրին իրենց՝ որպէս օժանդակ զորք հետագա արշավանքներում:

Հայաստանի զինվորական ուժի մշտական այս մասնակցութիւնը մոնղոլական հեռավոր ու անընդհատ արշավանքներին, ինչպէս և մոնղոլական շրջանի չափազանց ծանր հարկերը, ուժասպառ էին արել ֆեոդալական Հայաստանը և սկիզբ էին դրել նրա անկմանը:

Իսկ մոնղոլական տիրապետութիւնից հետո, 14-րդ դարի կեսերից սկսած, երբ Հայաստանը Զեւայիրյանների, Չոպանյանների-

րի, Լանկթամուրի, Ղարա-Ղոյունլու և Ակ-Ղոյունլու թուրքմենների ժամանակ անվերջ կռիվների, աղետների ու ավերածությունների թատերաբեմ էր դառել, հայկական ֆեոդալիզմն ապրում էր արդեն իր ծանր հոգեվարքը և այնքան էր արյունաքամ եղել, որ շուներ այլևս քաղաքական որևէ կշիռ ու նշանակություն:

Ավելի քան հավանական է, որ նախ, որ հայկական ֆեոդալիզմի վերջնական քայքայումը պետք է ենթադրել ավերումների, փախուստի, մեծ գաղթների ու ամայացման հենց այս խոռվահույզ շրջանում:

Իսկ հետագայում Պարսից և Օսմանցոց տիրապետության ժամանակ՝ նախկին ֆեոդալիզմից մնացել էին, ինչպես հայտնի է, միայն մի քանի բեկորներ՝ հայ լուսավորչական եկեղեցին, որ ուներ դարձյալ խոշոր կալվածներ, և հին կալվածատեր ազնվականության հյուծված ու թուլացած մնացորդները, որ գտնվում էին, գլխավորապես, հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում:

Մեծ սխալ կլինի, անշուշտ, հայկական ֆեոդալիզմի այս քայքայումը համեմատել և համապատասխան ընդունել Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի քայքայման:

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի կազմալուծումը հետևվանք էր տնտեսական կյանքի զարգացման՝ քաղաքների աճման ու բուրժուազիայի զորեղացման, իսկ Հայաստանում հայկական ֆեոդալիզմի անկումը տեղի էր ունենում ավերածությունների, քաղաքների ամայացման և տնտեսական բարեկեցության քայքայման պայմաններում:

Հայկական ֆեոդալիզմի քայքայմամբ ֆեոդալիզմը Հայաստանում ո՛չ թե վերանում էր, այլ փոխարինվում պարսկական և օսմանյան յուրահատուկ ֆեոդալիզմով:

Դեռևս արաբական աշխարհակալության շրջանում պարսկա-արաբական մահմեդականությունը հաստատվել էր թե՛ Հայաստանի քաղաքներում և թե՛ բուն երկրի զանազան մասերում, գրեթե ամբողջապես, Վանա լճի շուրջը գտնվող հարավային շրջաններում:

Սելջուկյան արշավանքներից հետո հայկական բարձրավանդակի հարավային և արևմտյան ավերված ու ամայացած մասերը, ինչպես և Հայաստանի գրեթե ամբողջ միջնաշխարհը, անցել էին հետզհետե մահմեդական իշխանությունների ձեռքը:

Վրաստանի աշխարհակալության ժամանակ թեև Զաքարյանները կարողացել էին վերագրավել Հայաստանի մեծագույն մասը և

հաստատել այստեղ հայկական նոր իշխանություններ, սակայն նրանց ժամանակ Հայաստանում կողք կողքի ապրում էին հայերի հետ միասին նաև թուրքական և հնագույն շրջանի քրդական, արաբական և պարսկական ցեղերը:

Այնուհետև՝ եկվոր այս բնակչությունը շարունակ աճել է թե՛ մոնղոլական տիրապետության ժամանակ և թե՛ հետագա դարերում, որովհետև պարբերաբար Հայաստան են գաղթել թուրքական նաև նոր ցեղեր:

Շատ բնական է, որ հայկական խոշոր կալվածատիրությունը հարկադրված էր լինելու զիջել աստիճանաբար իր դիրքերը եկվոր գաղթականության: Հասկանալի է նույնպես, որ արաբական տիրապետության հնագույն շրջանից սկսած ի հաշիվ հայկական խոշոր կալվածատիրության զարգանալու էր Հայաստանում օտար տարրերի կալվածատիրությունը, որը մեծ նվաճումներ էր արել, զբլխավորապես, թուրք-թաթարական արշավանքներից հետո՝ 11—15-րդ դարերում:

Հայկական ֆեոդալիզմը, որի աստիճանական ծագումը մենք ենթադրում ենք նախարտաշխյան շրջանում և վերջնական քայլով՝ 14—15-րդ դարերում, եղել է, անտարակույս, Հայաստանի անցյալի հիմնական առանցքը նրա պատմական զարգացման գրեթե բոլոր շրջաններում մինչև Պարսից ու Օսմանցոց տիրապետությունը:

Ֆեոդալիզմի այդ բացառիկ երկար տևողությունը պարզ մի շափանիշ է, անշուշտ, Հայաստանի տնտեսական հետամնացության և տնտեսական առաջադիմության այն պայմանների բացակայության, որոնք վերջ էին դրել ֆեոդալիզմի գոյության Արևմուտյան Եվրոպայում:

Վերև մենք տեսանք, որ Հին Հայաստանի միջով անցել է համաշխարհային տարանցիկ առևտրի հյուսիսային գիծը և որ այդ հանգամանքը մեծապես նպաստել է Հայաստանի քաղաքների զարգացման:

Արդ՝ ինչո՞վ բացատրել, որ Հին Հայաստանի քաղաքները ֆեոդալիզմի նկատմամբ չեն կատարել նույն հեղաշրջող դերը, որը ունեցել էին ուշ միջնադարում Արևմտյան Եվրոպայի քաղաքները:

Այդ խիստ հետաքրքիր, բայց դժվար ու բարդ մի խնդիր է, որ կարոտ է դեռ հատուկ ուսումնասիրության:

Հիմնական պատճառներից մեկը, որ ինձ հավանական է թվում, քննության է առնված Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների զարգացման վերաբերյալ ուսանողներն իմ աշխատության մեջ (տե՛ս «О торговле и городах Армении», стр. 71—75).

Ռուսներն այդ գրքում մատնացույց է արված, որ տնտեսական հարատև գարգացման տեսակետից Հին Հայաստանը գտնվել է խիստ անհաշող պայմաններում շնորհիվ իր բուֆերական աննպաստ դրության: Լուվուլլոսի և Պոմպեոսի մեծ հաղթություններից հետո՝ Հայաստանը, ինչպես հայտնի է, դառել էր բուֆեր պետություն Հռոմի և Պարթևաց թագավորության միջև:

Հին Հայաստանի շարաքաստիկ այդ դրությունը Արևմուտքի և Արևելքի մրցող մեծ պետությունների միջև, որ շարունակվել է նաև բյուզանդական—սասանյան և բյուզանդական—արաբական շրջաններում, գլխավոր հենց պատճառներից մեկն է, որ անդրադարձել է նրա բարեկեցության վրա և խիստ անրարհաշող ազդեցություն ունեցել նրա քաղաքական ու ներքին զարգացման վրա:

Վ. Գուրկո-Կրյաժնի կարծիքով՝ մրցող այդ մեծ պետությունների բախումն ունեցել է իր հիմքում տնտեսական խոր պատճառներ, իսկ Հայաստանը կատաղի այդ պայքարում կատարել է հաճախ զինադաշտի միայն դեր: Կովոդ պետությունների համար այդ զինադաշտին տիրապետելը խիստ կարևոր էր և պայմանավորված էր ո՛չ միայն այն հանգամանքով, որ Հայաստանում գտնվում էր անդրասիական ճանապարհի կողմնակի ճյուղերից մեկը, այլ, գլխավորապես, այդ երկրի ռազմագիտական նշանակությամբ:

«Շնորհիվ իր ֆիզիկական—աշխարհագրական պայմանների,—ասում է Գուրկո-Կրյաժնը,— Հայաստանը միշտ եղել է իբր հրակայական բնական մի միջնաբերդ և իշխել է շրջակա երկրների վրա: Մի կողմ թողնելով նրա առանձին լեռնակույտների բարձրությունը (Արարատի, Արագածի, Բինգյուլ-դաղի, Ղարաբաղի և ուր.), նույնիսկ նրա հովիտներն ունեն մի քանի հազար ոտնաչափ բարձրություն ծովի մակերևույթից: Բացի այդ՝ այս ահագին բարձրավանդակը հարևան Իրանականի նման շրջապատված է ամեն կողմից իրր բերդային պատնեշով, որ կազմված է Հայկական և Պոնտական Տավրոսի վիթխարի լեռնազանգվածներից և Անդրկովկասյան «պայտից»: Շնորհիվ դրան՝ Հայաստանը, իրոք, ներկայացնում է իրենից բնական մի բերդ՝ շրջապատված բոլոր կողմերից

անմատչելի որմերով, Եվ հենց այս հանգամանքը տալիս էր այդ երկրին բոլոր դարերում առաջնակարգ ստրատեգիական նշանակություն, որովհետև նրան տիրացողն իշխում էր Կուր գետի հովիտների, Ադրբեջանի տափաստանների, Միջագետքի հարթությունների և, վերջապես, Անատոլիայի դաշտավայրերի և իրենց բարձրությամբ աննշան բարձրավանդակների վրա» (տե՛ս В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее советской Армении, «Новый Восток», 1927, кн. 16—17)։

Հայկական բարձրավանդակի հենց այս ռազմագիտական նշանակությամբ բացատրում է Գուրկո-Վրյաժինը Հայաստանի պատմության խաչաձևումը և միավորումը համաշխարհային պետությունների պատմության հետ, նաև այն համառ, կատաղի կոփվածքը, որ հազարավոր տարիների ընթացքում վարել են այստեղ մեծ պետությունները Հայաստանին տիրանալու նպատակով։

«Հենց նույն այս փաստը,—ինչպես ճիշտ մատնացույց է անում Գուրկո-Վրյաժինը,—կասեցրել է միշտ և աղճատել Հայաստանի պատմական զարգացման ընթացքը, ենթարկելով նրան հարևան, ավելի հզոր պետությունների քաղաքական-տնտեսական շահերին»։

Եվ հերավի, ինձ թվում է, կարելի է դրականապես պնդել, որ քաղաքական տեսակետից Հայաստանի նշանակությունը և գործունեությունը կախում է ունեցել շարունակ հարևան մեծ պետություններից, և սրանք են գաղտնի կամ հայտնի համաձայնությունների միջոցով վճռել կանխօրոք նրա պատմական ճակատագիրը։

Պոմպեոսի հաղթությունից հետո՝ Հայաստանը, ինչպես հայտնի է, ճանաչվելով ճբարեկամ ու դաշնակից հռոմեական ժողովրդի», գտնվել է գրեթե մեկ դար Հռոմի ազդեցության շրջանակում։

Այնուհետև՝ վաթսուևական թվականներին Քրիստոսից հետո, պարթևների ու հռոմայեցիների երկուստեք համաձայնությամբ, հաստատվել էր Հայաստանում հայ Արշակունիների թագավորությունը, որ գտնվում էր Հռոմի անվանական գերիշխանության տակ։

Դարձյալ հատուկ դաշնագրությամբ Հայաստանը 387 թվին բաժանել էին իրար մեջ Բյուզանդիան և Սասանյան Պարսկաստանը։

Այս բաժանումից հետո՝ աշխարհակալական կոփվն Արևելքում

ընդունել էր արտաքուստ կրոնական գունավորում: Հայկական լեռնաշխարհի ստրատեգիական կարևորության պատճառով՝ կովոդ մեծ պետությունները՝ Բյուզանդիան և Սասանյան Պարսկաստանը՝ խիստ համառ պայքար էին մղում այստեղ երկրի ներսում, նպատակ ունենալով միախառնել իրենց հետ նրա բնակչությունը կրոնական ու կուլտուրական ձուլման միջոցով:

Այս երկարատև պայքարում ֆեոդալական հայ շրջանները, որոնք բաժանումից հետո պահպանել էին նախարարական իրենց հին կազմակերպությունը, կարողացան պաշտպանել իրենց ներքին ինքնուրույնությունը: Սոցիալական-քաղաքական ու կրոնական-կուլտուրական իր ինքնուրույնությունը պահպանելու համար նախարարական Հայաստանը՝ թե՛ քաղաքական և թե՛ ինքնապաշտպանման նկատառումներով բաժանվեց բյուզանդական եկեղեցուց և քրդունեց միաբնակների եկեղեցու դավանանքը: Միանգամայն հասկանալի է, որ միաբնակ հայ եկեղեցու հանդեպ, որը թշնամի էր քաղկեդոնականության, Սասանյան Պարսկաստանն ունենալու էր հանդուրժող ու բարյացակամ վերաբերմունք:

Հունա-հռոմեական Արևմուտքի կոիվներն իրանական Արևելքի դեմ, որ սկսվել էին առաջին դարում Քրիստոսից առաջ, շարունակվել են ընդհատումներով մոտ յոթը դար: Այդ կոիվները, որ վեցերորդ դարում և յոթերորդ դարի սկզբներում հաճախակի էին դառել և ստացել կատաղի բնույթ, այնքան էին ուժասպառ արել նրանց, որ ո՛չ Բյուզանդիան, ո՛չ էլ Սասանյան Պարսկաստանը չկարողացան կասեցնել արաբական հաղթական արշավանքները և Առաջավոր Ասիայում հաստատվեց այնուհետև արաբական խալիֆայության իշխանությունը:

Այդ համառ կոիվների ժամանակ Հայաստանը, լինելով հաճախ պատերազմների մարտադաշտ, ստացել է ծանր ու անբուժելի հարվածներ: Նա պարբերաբար ավերվել ու կողոպտվել է, բնակչությունը սրի մատնվել կամ գերվել, իսկ քաղաքները ենթարկվել են հիմնահատակ կործանման: Պարբերաբար կրկնվող այդ ավերածություններից հետո անհրաժեշտ է եղել տոկոն աշխատանքով վերակառուցել քարուքանդ արված երկիրը, կործանված քաղաքները և նորից վերականգնել նախկին բարեկեցությունը:

Հին Հայաստանի տնտեսական ու ներքին կյանքի զարգացման վրա այդ ծանր ու պարբերական աղետներն ունենալու էին ըստ իս բացասական ազդեցություն:

Նրանք արգելք էին երկրի բարեկեցության անընդհատ ու հա-

րաճուն առաջադիմության, առաջ էին բերում երկարատև կանգառում, իսկ երբեմն, բացառիկ ժանր ու հարատև ցնցումներից հետո և, գլխավորապես, առևտրական հարաբերությունների ընդմիջումների ժամանակ, Հայաստանի տնտեսական զարգացումը հետ էր մղվում իր առաջավոր դիրքերից:

Այդ զարգացումը, որ գտնվել է հաճախ տնտեսական ու առևտրական հարաբերությունների և քաղաքների բարգավաճման համեմատաբար բարձր մակարդակի վրա, արտաքին արհավիրքների պատճառով հետ է շարժվել և վերսկսվել բնական տնտեսության զորեղացման հետադարձ հիմքերի վրա:

Եթե Հայաստանի տնտեսական զարգացումը երևակայենք գծագրորեն, կստացվի, իմ կարծիքով, վեր ու վայր ձգվող կեղծանաձև մի գիծ, որ արտահայտումն է Հայաստանի արտասովոր երեքուն դրության, բայց հատկանշային չէ բոլորովին եվրոպական երկրների զարգացման համար միջին դարերում:

Եթե չլինեին տնտեսական զարգացման այդ աննպաստ պայմանները, թվում է ինձ, որ քաղաքային տնտեսությունը, աստիճանաբար ուժեղանալով, կարող էր Հայաստանում ևս հետզհետե կազմալուծել նախարարական հին կարգերը, առաջ բերելով տնտեսական, սոցիալական ու քաղաքական նոր հարաբերությունների զարգացում:

Նման փոփոխման որոշ նշաններ, ինչպես մատնանշել ենք ռուսերեն մեր աշխատության մեջ («О торговле и городах Армении», стр. 148—149), նկատելի են Բագրատունյաց թագավորության ժամանակ, երբ Հայաստանի խոշոր առևտրական քաղաքները հասել էին իրենց զարգացման ամենաբարձր աստիճանին:

Արձանագրությունների տեղեկություններից երևում է, որ այս շրջանում դրամական շրջանառությունը տարածվել էր ամբողջ երկրում ամենամեծ չափերով: Մեր հին աշխատություններից մեկում մենք ցույց էինք տվել, որ 10-րդ դարի և 11-րդ դարի առաջին կեսի տուրքերից շատերը եղել են դրամական (տե՛ս «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», Երևան, 1922, էջ 93—94):

Սլունյաց Սուփան իշխանի 901 թվի Մաքենյաց վանքի արձանագրության մեջ ասված է.

«Եւ ետու զսեփական տեղն մեր ի սա, որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, ամենայն սահմանաւ՝ լերամբ և

դաշտիւ, և ետու որս ձկանց, զԲողաշէն սեղանոյն, և եւթն հարիւր դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, երկուհարիւր դրամ ի Կաթկայ, երեքհարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ռժո դրամ եւն. (տե՛ս «Վիմական տարեգիր», կազմ. Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 5, հմտեմ նաև «Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, էջ 179):

Նմանապես՝ Շապուհ Բագրատունին, Հայոց Աշոտ Թագավորի որդին, 903 թվի Վանեվանի արձանագրության մեջ ասում է.

«Եւ ետու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղարոյ վանսն, Շաւառնահողն, Դետամէջն, Կթանոցն, Դետավանաց ծովն, երկուհարիւր վաթսուն դրամ ի Կոթաքարէն, հինգհարիւր երեսուն ի Բրտենեացն, վեցհարիւր վաթսուն յԱղարոյ վանացն ծովէ, իննհարիւր իննսուն ի Կարբին գետերէն և ի նաւերէն» («Վիմական տարեգիր», էջ 6 և Ստեփ. Օրբել. լէ, էջ 182):

Գագիկ Շահնշահը 1010 թվի Մաստարայի արձանագրության մեջ հայտնում է.

«Կամ եղև ինձ Գագկայ Շահինշահի, որդւոյ Աշոտոյ, թողուլ զՄաստարայի հարկին զաւելորդն զո. և ածի եռ» («Վիմական տարեգիր» էջ 13):

Այս արձանագրությունների բովանդակությունից կարելի է նաև եզրակացնել, որ վերև հիշատակված տուրքերի մի մասը գյուղական տուրքեր են, որ ստացվում էին դրամով:

Արիստակես Լաստիվերտցու վկայություններից ևս հայտնի է, որ դրամական տնտեսության աճման ու խորացման հետ զուգընթաց ուժեղացել էր այս շրջանում վաշխառուական կապիտալի դերը և ծանրացել բնակչության ստորին խավերի դրությունը.

«Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքարայիք (°) և Պիհոռնացիք,— վկայում է Լաստիվերտցին,— և արդարութեան լորէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթսիրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայն քան զՔրիստոս»՝ յայնժամ ամենայն համեստութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ: Իշխանք սորա [Արծն քաղաքի] գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանային զիրաւունս. և դատաստան որբոց ոչ առնէին, և յիրաւունս այրեաց ո՛չ խոնարհէին: Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղ ի ծամու իւրում առ ի կերակուր մարդկան: Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն

գոլ, և որ յափշտակէր՝ ասէր, Ես հզօր եմ: Ձտունս տնակից աղ-
քատացն և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծա-
տունքն, և շկաթէր ի լսելիս նոցա աստուածապատուէր անէծքն
գրեալք ի ձեռն Մովսէսի ծառայի տեառն՝ «Անիծեալ է, ասէ, որ
յափշտակէ զարտս ընկերին» («Պատմութիւն Արիստակեայ վար-
դապետի Լաստիվերտցույ», Թիֆլիս, 1912, ժԲ, էջ 79—80):

Նկարագրելով Անի քաղաքի ավերածութիւնը և կոտորածը
1064 թվին՝ նույն հեղինակը վաշխի մասին տալիս է պատկերավոր
կերպով նաև հետևյալ տեղեկութիւնը.

«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոշորե-
ցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն
բնակութիւնն իբրև հողաբլուր և վաշխն և նենգութիւնն որ ի նմա
խափանեցաւ: Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս
արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի
վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և
ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնան-
կըս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց
աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկու-
թեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի» (նույնը, ԻԴ, էջ 166—167):

Ուշագրավ է նաև այն, որ հենց այս շրջանի համար մենք
ունենք տեղեկութիւններ ապստամբութիւնների մասին, որ տեղի
էին ունեցել տասերորդ դարի առաջին քառորդում:

Որ Բագրատունյաց թագավորութեան ժամանակ որոշ բեկումն
էր առաջացել փողային տնտեսութեան ու ապրանքային փոխանա-
կութեան զարգացման ուղղութեամբ և միաժամանակ ուժեղացել էր
բնակչութեան ստորին խավերի անողորմ շահագործումը՝ այդ երե-
վում է ըստ իս նաև Արիստակես Լաստիվերտցու կրոնա-բարոյա-
կան դատողութիւններից նախկին ժամանակների առաքինի բար-
քերի ու երանավետ կյանքի մասին, որ նա հակադրում է իր ժա-
մանակվա անիրավ ու արծաթաւեր բարքերին և փարթամ ու շվայտ
կենցաղին:

Ժամանակակից աղբյուրների բոլոր այս վկայութիւնները
հավանական ու ուշագրավ ակնարկներ են, որ այս շրջանում Հա-
յաստանի տնտեսական կյանքը վերակառուցվում էր նոր հիմքերի
վրա:

Կարելի է, հետևապէս, ենթադրել, որ Բագրատունյաց շրջանի

6 Տե՛ս «Զովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց»,
Թիֆլիս, 1912, էջ 258—259:

քաղաքների արագ բարգավաճումը, առևտրի, արհեստների ու արդյունագործության մեծ զարգացումը, ինչպես և հարուստ և ազդեցիկ հայ առևտրական ու բուրժուական դասակարգի աստիճանական զորեղացումը, Հայաստանում ևս հետզհետե նպաստելու էին տնտեսական, սոցիալական ու քաղաքական նոր հարաբերությունների առաջացման, և միանգամայն հնարավոր է, որ այստեղ ևս ֆեոդալիզմը կքայքայվեր ներքուստ, եթե Բագրատունյաց Հայաստանի զարգացման այս ընթացքը չընդհատվեր Սելջուկյան արշավանքների ժամանակ:

Թուլցիկ այս ենթադրությունները Հայաստանի տնտեսական զարգացման առանձնահատկությունների և հայկական ֆեոդալիզմի հարատևության մասին նախնական ընդհանուր դիտողություններ են, որ կարոտ են, անշուշտ, մանրամասն ու հատուկ ուսումնասիրության:

10. ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՆՈՒՅՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Արշակունյաց Հայաստանի քաղաքական պատմության էական կողմերից մեկը կազմում էր, ինչպես հայտնի է, Թագավորական իշխանության համառ ու արյունահեղ պայքարն ընդդեմ վենտրոնախույս ու ապստամբ նախարարությունների:

Այդ պայքարի մասին փաստական աղբյուր տեղեկություններ հայտնի են մեզ միայն Արշակունյաց Թագավորության քրիստոնեական շրջանի համար, գլխավորապես, Փավստոսի պատմությունից: Այդ տեղեկությունները թեև գունավորված են ու անգամ խեղաթյուրված ի նպաստ կղերական ու Մամիկոնյան կուսակցության, սակայն, բարեբախտաբար, Փավստոսի չափազանցությունները և սխալ տեղեկությունները կարելի է հաճախ ուղղադրել Ամմիանոս Մարկելլինոսի վկայությունների օգնությամբ:

Հիմնական այս երկու աղբյուրի քննական ուսումնասիրությամբ, ինչպես ցույց է տվել պրոֆ. Մարկվարտը, Արշակունիների պայքարը նախարարությունների դեմ ստանում է բոլորովին նոր լուսաբանություն:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արշակունյաց Հայաստանում ևս, ինչպես և միջնադարյան Եվրոպայի ֆեոդալական միապետություններում, Թագավորական իշխանության ու ֆեոդալական հզոր ու ինքնուրույն տերությունների քաղաքական ձգտումները երբեմն իրար ընդդեմ էին ու հակադիր:

Հայ Արշակունիները, որոնց գերիշխանության տակ գտնվում էին բոլորիսթյունները և մյուս նախարարութիւնները, պետք է, անշուշտ, ամեն կերպ ձգտեին ընդլայնելու իրենց թագավորական իշխանութիւնն ու իրավունքները և ստեղծելու ֆեոդալական կենտրոնացած ու զորեղ մի պետութիւն, իսկ ֆեոդալական վերահիշյալ իշխանութիւնները շահագրգռված էին, ընդհակառակը, ո՛չ միայն պահելու, այլև ընդարձակելու իրենց անջատ ու անկախ իրավունքները:

Փալատոսի և Ամմիանոս Մարկելլինոսի վկայութիւններից երևում է, որ նախարարական պառակտումները և արյունահեղ խռովութիւնները նույնքան զորեղ էին Արշակունյաց ժամանակ, ինչպես և հետագա շրջաններում:

Հայաստանի սահմանակից մեծ պետութիւններն օգտվում էին, ինչպես հայտնի է, հայ իշխանութիւնների ներքին այդ երկպառակութիւններից և աջակցում ու հովանավորում խռովարարներին: Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրութիւնը չէին կարող, բնականաբար, հանդուրժել Հայաստանի միացումըն ու զորեղացումը, ուստի և իրենք էին հաճախ երկպառակում երկիրը և պաշտպանում իրենց քաղաքականութիւն հլու և հաճելի, խռովարար ու ըմբոստ իշխաններին:

Գտնվելով Արևելքի և Արևմուտքի մշտական ընդհարումների շեմքին և լինելով միջազգային պայքարի ու մրցութիւնների առարկա, Հայաստանը, բուֆերական իր այդ դրութիւն պատճառով, չէր կարող, բնականաբար, իր ձեռքն առնել իր սեփական ճակատագրի տնօրինումը, այլ նրա քաղաքական վիճակը կարգավորում էին միշտ, ինչպես վերևում ասացինք, շահագրգռված մեծ պետութիւնները:

Շատ պարզ է, որ Արշակունիներին դժվար պիտի լիներ քաղաքական այս պայմաններում ստեղծել ֆեոդալական զորեղ ու կենտրոնացած մի պետութիւն:

Առաջին երեք դարում Քրիստոսից հետո Արշակունիների ու նախարարութիւնների փոխհարաբերութիւնները մեզ միանգամայն անհայտ են աղբյուրների բացակայութիւն պատճառով: Արշակունյաց թագավորութիւն քաղաքական ներքին անցքերը հայտնի են մեզ միայն իսկուրով Կոտակից (հավան. 330—339 թ.) սկսած:

Սրա թագավորութիւն ժամանակ նկարագրված է Փալատոսի մոտ «Մանաւազնից և Որդունւոց» նախարարութիւնների արյունահեղ կռիվը, որ ինքնին արդեն մի ապացույց է իսկուրով Բ-ի հե-

դինակութեան և թագավորական իշխանութեան թուլութեան:

«Եւ զայն ժամանակաւ,— պատմում է Փաւստոսը,—յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անգանէին ընդ միմեանս, մեծաւ ոխութեամբ յարուցին կռիւ և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց: Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազաբան տոհմին և միւս ևս նահապետն Որդունոց տոհմին... Ապա առաքեցին թագաւորն խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Աղբիւսնոս ի մէջ նոցա, խօսել ի հաշտութիւն խաղաղութեան: Երթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Աղբիւսնոս, զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: Անարգեցին զնա և ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն. անգոսնեցին զյղելիսն և մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն և առնուին աւերէին զտունն արքունի» (տե՛ս III, Դ, էջ 9):

Փաւստոսի պատմելով, նախարարական այդ հին տոհմերը թագավորի հրամանով սրի է անցկացրել և իսպառ բնաջինջ արել Մամիկոնյան Վաչե զորավարը:

Մեջ բերված վկայութիւնից կարելի է, իմ կարծիքով, կռահել, որ նախարարութիւնները, լինելով կենտրոնական իշխանութիւնից գրեթե անկախ, ըստ երևութիւն, մասնավոր պատերազմների վարումը համարել են իրենց օրինական իրավունքը, իսկ թագավորական իշխանութիւնը համարել է այդ «մարտ պատերազմի առանց իրաւանց»: Մասնավոր կովի հենց նույն իրավունքը, ինչպես հայտնի է, իրենց արտոնութիւնն են համարել ֆեոդալական իշխանութիւնները նաև միջնադարյան Եվրոպայում ու Անգլիայում, և այստեղ ևս թագավորական իշխանութիւնը, իրեն զորեղ զգալով, չի ճանաչել ֆեոդալների այդ իրավունքը:

Խոսքով Բ-ը, ինչպես դժվար չէ եզրակացնել Փաւստոսի վկայութիւններից, գտնվում էր հոգևորականութեան, Մամիկոնյանների և նախարարական այն խմբի ազդեցութեան տակ, որ համակրող էր ու կողմնակից Հռոմեական կայսրութեան:

Սասանյան Պարսկաստանը չէր կարող, բնականաբար, հանդուրժել Հայաստանի քաղաքականութեան այդ ուղղութիւնը: Եվ, հավանորեն, հենց նրա ձեռնադրութեամբ տեղի էին ունեցել Բզնունյաց Դատաբեն նահապետի դավաճանութիւնը և Աղձնյաց Բակուր բղբշխի ապստամբութիւնը, որ հիշատակված են Փաւստոսի պատմութեան մեջ (III, Ը, էջ 19—20 և III, Թ, էջ 21):

Փաժստոսի վկայութեամբ՝ Խոսրով Բ-ը, վախենալով որ նաև մյուս մեծ նախարարութիւնները կարող են դավաճանութիւն գործել կամ ապստամբել, հատուկ օրենք էր սահմանել, որ «բիւրաւորքն և հազարաւորքն» մնան ու շրջեն իր հետ և հետո լինեն արքունի զորքերից:

Խոսրովի այս կարգադրութիւնը մի ապացոյց է դարձալ նրա թագավորական իշխանութեան թուլութեան և նախարարութիւնների կենտրոնախույս ու խռովարար տրամադրութիւնների:

«Բայց յետ այսորիկ,— վկայում է Փաժստոսը,— ոչ դարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. և նա ղնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային և ընդ նմա շրջեսցին, և մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի: Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ ղնոյն գործ Դատաբենայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ. Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց Մեծաց և ի քաջ Վահան յԱմատունի» (տե՛ս III, Ը, էջ 20):

Արշակունիների պայքարը կենտրոնախույս և ապստամբող նախարարութիւնների դեմ շարունակվել է նաև Տիրանի, Արշակ Բ-ի և Պապի ժամանակ:

Տիրանի թագավորութեան շրջանում (հավանորեն՝ 339—350 թ.), որը եկեղեցու և Մամիկոնյանների հանդեպ բռնել էր անկախ դիրք և աշխատում էր պահպանել թագավորական իշխանութեան հեղինակութիւնը, ներքին խռովութիւններն այնքան սաստկացել էին, որ երկիրը հետզհետեւ մատնվել էր կատարյալ անիշխանութեան:

Փաժստոսի մոտ, որ կուսակցական պատմիչ է Գրիգոր Լուսավորչի տոհմի և Մամիկոնյանների, պատմական այս շրջանի անցքերը ներկայացված են, անտարակույս, այլալլված ձևով, իսկ պատմական խոշոր դեմքերը որ հակառակորդ էին հռոմեացի կուսակցության, նկարագրված են, բնականաբար, ամենամռայլ ու քստմենքի գույներով:

Տիրանի թագավորութեան ժամանակ քաղաքական խոշոր դեր է կատարել, ինչպես երևում է Փաժստոսի վկայութիւնից, «մարդպետութեան» մեծ իշխանը, որը, ինչպես վերև տեսանք, ո՛չ միայն վերակացու էր արքունիքի և թագավորի կանանոցի, այլև վերահսկող թագավորական ամրութիւնների ու բերդերի, նաև արքունի

գանձերի ու կալվածների: Փալատոսը շանթ ու թուլն է թափում այս մեծ իշխանի վրա և, գլխավորապես, նրան է վերագրում թագավորության խանգարումը Տիրանի ժամանակ:

«Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի,— պատմում է Փալատոսը,— ոչ միայն թշնամիք թշնամեաց և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին և բւեր ազգի ազգի թշնամութիւնս գործէին: Վասն զի անկաւ ի նոսա խռովութիւն ի տեառնէ, այս պղծութեան և ոգի մոլորութեան. զի նախ միմեամբք քանգեալք աւերեցան վասն անօրէնութեան իւրեանց: Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան: Այս ինքն որ ունէր զպատին մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին: Զբազումս ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն: Մանաւանդ աւելի ղերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անուղղ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմըն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և ղէգսն կոտորեցին ազգացն» (III, ԺԸ, էջ 46—47):

Քննության առնելով «մարդպետութեան» մասին Փալատոսի թե՛ այս և թե՛ մյուս վկայությունները, Մարկվարտը միանգամայն ճիշտ ենթադրում է, որ մարդպետները պետական նշանավոր անձնավորություններ էին, որոնք նպատակ էին դրել իրենց վերականգնել Արշակունյաց թագավորության հին փայլը և թուլացնել բարձր ազնվականության ու եկեղեցու ուժը: Իրենց այդ նպատակին հասնելու համար նրանք արքունիք էին գրավում նախարարական խոշոր կալվածները և իրագործում այդ ամենադաժան վճռականությունը (տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, s. 155-156 և 61*-62*):

Արծրունյաց ու Ռշտունյաց տոհմերի բնաշնչումը, որ նկարագրված է Փալատոսի վկայության մեջ, Մարկվարտը բացատրում է նրանով, որ նախարարական այդ տոհմերի երկրները գտնվելով Ատրպատականի, Ադիաբենեի և Մոկքի սահմանների մոտ, ունեին ռազմական մեծ կարևորություն, ուստի և այդ շրջաններն անհրաժեշտ է համարվել ենթարկել Արշակունիների անմիջական իշխանության (տե՛ս նույնը, էջ 59*—60*):

Նախարարութիւնների ոչնչացման և թագավորական երկրի ընդարձակման նույն քաղաքականութիւնը վարել է Հայր մարդպետը նաև Արշակ Բ-ի թագավորության ժամանակ:

«Եւ էր մարդպետն Հայր,— վկայում է Փափստոսը,— այր շար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն: Սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքային. և սոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ ևս շար քան զառաջինն գործել շար առ ամենայն մարդ» (IV, ԺԴ, էջ 116—117):

Հավանորեն, հենց նույն այս Հայր մարդպետի ներշնչումներին պետք է վերագրել նաև Կամսարականների տոհմի կոտորածը, որ հիշատակված է Փափստոսի հետևյալ վկայութեան մեջ.

«Այլ ահա ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս և ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն, այնուհետև ըստ կամաց շարութեանն իւրոյ զնացեալ լինէր նա [Արշակ]՝ և զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց և զբազմաց տունս հատանէր յարքունիս: Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ առնէր և զգաւառսն ունէր յոստան» (IV, ԺԹ, էջ 133):

Հետաքրքիր է ու ուշագրավ, որ նախարարական վերոհիշյալ տոհմերի փրկիչ հանդիսանում էին գրեթե միշտ Մամիկոնյանները:

Դեռևս ինսուրով Կոտակի ժամանակ, երբ բնաջինջ էր արվել Աղձնյաց Բակուր բղեշխի ամբողջ տոհմը, նրա պատանի որդիներից մեկը փախել և թաքնվել էր Մամիկոնյան Վաչե զորավարի տանը և հետագայում դառել ժառանգ Աղձնյաց բղեշխութեան: Արժրունյաց և Ռշտունյաց տոհմերի կոտորածի ժամանակ՝ արքունիք էին բերել նույն տոհմերի երկու ազատված երեխաներին՝ Տաճատին և Շավասպին: Փափստոսի պատմելով՝ թեև Տիրանը հրամայել էր նրանց փողոտել, սակայն Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները փրկել էին այդ երեխաներին և տարել իրենց հետ Տայր: Նմանապես և Կամսարականների բնաջնջման ժամանակ՝ Մամիկոնյան Վասակ սպարապետը թաքցրել և փրկել էր նույն տոհմից Սպանդարատ անունով մի փոքր երեխա, որը հետագայում ժառանգել էր իր տոհմի կալվածները:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել Փալատոսի համապատասխան վկայությունները, որ խիստ կարևոր են Մամիկոնյանների քաղաքական դեմքը պարզելու համար:

1. Փալատոս, III, Թ, էջ 21՝

«Բայց յորդոցն Բակուր բզեշխի պատանեակ մի փախեալ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ և անդ ապրեցաւ թագուցեալ ի տան նորա: Որ առ յապա ժառանգ տան նորա լինէր: Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր. որոյ անունն խեշա կոչէր»:

2. Նույնը, III, ԺԸ, էջ 47՝

«Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհնդակայ ըմբշտունւոյ և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ՝ տղայք ստնդիայք զոր ածին առաջի թագաւորին: Իբրև տեսնէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի նոքա ևեթ ճետք մնացեալ էին յազգացն: Եւ անգ դիպեալ Արտաւազդ և Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հաքեալք՝ ի դուրս գնացին զէնն ի վեր առեալք, կռուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել: Զի թէպէտ և սնուցանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն զլարեալք ընդ գործ ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ և գնացին ի բաց ի բանակէն արքունի: Եւ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց և թողին զայլ զտուն իւրեանց: Եւ սնուցանէին զայն մանկունսն՝ զՇաւասպն և զՏաճատ. և ետուն նոցա զզստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան, և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս»:

3. Նույնը, IV, ԺԹ, էջ 133՝

«Բայց յազգէն յայնմանէ [Կամսարականաց] մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին»:

Այս վկայություններից կարևոր է, մանավանդ, երկրորդը, որից պարզ երևում է, որ Մամիկոնյանները ոչ միայն դեմ են եղել Տիրանի վճռական քաղաքականությանը կենտրոնախույս նախարարությունների նկատմամբ, այլ նույնիսկ պատրաստ են եղել զինված դիմադրություն ցույց տալ կենտրոնական իշխանության:

Մամիկոնյան Արտավազդ և Վասակ զօրավարների մեկուսա-

ցումը Տայքի անառիկ ամրութիւններում, որ Փափստոսի մոտ պատմված է, բնականաբար, գունավորված ու մեղմացված ձևով, պետք է, անշուշտ, համարել խաղմարարութիւն և ապստամբութիւն Արշակունյաց իշխանության դեմ:

Միանգամայն ուղիղ է, ուրեմն, Մարկվարտի վերև մեջ բերված եզրակացութիւնը, որ շորրորդ դարում Մամիկոնյանները, ինչպես և Գրիգոր Լուսավորչի տոհմի կաթողիկոսները, պաշտպանել են միասին հայկական նախարարութիւնների շահերն ու արտոնութիւնները: Իսկ ընդհակառակը, «մարդպետ»-ներն անհրաժեշտ են համարել ստեղծել կենտրոնական զորեղ իշխանութիւն և Արշակունիների քաղաքական կշիռը և հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով՝ աշխատել են սանձահարել ու թուլացնել անշատ ու ինքնիշխան նախարարութիւնները:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ «մարդպետութեան» քաղաքական այդ ձգտումը, որի նպատակն էր Արշակունյաց իշխանության տակ կազմակերպել ֆեոդալական կենտրոնացած զորեղ միապետութիւն, շատ ավելի նպաստավոր էր Հայաստանի պետական զորեղացման տեսակետից, քան նախարարական բնիկ «սէր»-երի պաշտպանության քաղաքականութիւնը, որին հետամուտ էին Մամիկոնյանները և Գրիգորյան տոհմի կաթողիկոսները:

Մարդպետները պաշքար են մղել, ինչպես երևում է Փափստոսի վկայութիւններից, նաև կաթողիկոսական իշխանության և եկեղեցական կալվածատիրութիւնի դեմ:

Հայտնի է, օրինակ, որ Հայր մարդպետը սպառնացել էր Ներսեսին, որ նա ամեն կերպ աշխատելու է արքունիք գրավել Աշտիշատը, որը եկեղեցական կալված էր:

«Դնէր թշնամանս,— պատմում է Փափստոսը,— Տրդատայ արքայի, ի մեռեալս և կենդանեացն ի կեանս, ազգի և տակի և տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց: Զիա՞րդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցհանդերձ մարդկան տուեալ է և ոչ արանց: Եւ զսուրբ տեղեօքն քամահալ արհամարէր և ասէր՝ եթէ զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի: Եւ թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորան հասից, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. և որ աստ իցեն, ասէ, զնոսա հանից և զտեղիս արքունի սենեակ կազմեցից» (IV, ԺԴ, էջ 117—118):

Հայտնի է նույնպես, որ եկեղեցականության դեմ, որը քաղաքակրթական և տնտեսապես անչափ զորեղացել էր Ներսեսի

կաթողիկոսության շրջանում, վճռական ու կտրուկ միջոցներ էին ձեռք առնվել Պապի թագավորության ժամանակ, ներսեսի հիմնած բարեգործական ու վանական անթիվ հաստատությունները, որոնց պահպանության համար հարկավոր էին հսկայական միջոցներ, նաև եկեղեցական աճող կալվածատիրությունը և պողի, տասանորդի ու եկեղեցական մյուս եկամուտները, որ հիմք էին դառնել եկեղեցու ու կաթողիկոսության անշափ զորեղացման, ըստ երեւոյթին, թագավորական իշխանության համար համարվել են վտանգավոր և վնասակար:

Պապը, ինչպես հայտնի է, անհրաժեշտ էր գտել փակել վերոհիշյալ հաստատությունները, վերացնել եկեղեցական պարտադիր տուրքերը և կրճատել հոգևորականության տրված հոգերը:

«Եւ զկարգս պողոյն և դոսասանորդացն,—՝վկայում է Փափստոսը,— որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ... Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծամ Քրիզորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գիւղ մի երէց և սարկաւազ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւազացն» (V, ԱԱ, էջ 235 և 237):

Փափստոսի այս վկայությունը, ինչպես և վերև մեջ բերված փաստական նրա տեղեկությունները, թեև գունավորված են խիստ ի նպաստ եկեղեցական ու Մամիկոնյան կուսակցության, սակայն, այնուամենայնիվ, պարզ ցույց են տալիս, որ շորորող դարում հայ Արշակունիները ո՛չ միայն գիտակցել են իրենց թագավորական իշխանության զորեղացման կարևորությունը, այլև համառ պայքար են մղել այդ ուղղությամբ կենտրոնախույս նախարարությունների և նրանց դաշնակից եկեղեցականության դեմ:

Եթե Արշակունիների ջանքերն անհաջող էին անցնում, դրա գլխավոր պատճառն այն էր, որ հայկական լեռնաշխարհի, ինչպես և իրենց իսկ Արշակունիների քաղաքական կացության խընդիրը, միջազգային մի հարց էր, որի լուծումը կախված էր վերջնական հաշվով աշխարհակալ մեծ պետությունների կամքից:

Մոտավորապես 337 թվին սկսվել էին Սասանյան Պարսկաստանի մեծ կռիվները կայսրության դեմ և բնական է, որ կռիվող

այս պետութիւններն աշխատելու էին դիվանագիտական և այլ միջոցներով ուժեղացնել Հայաստանում քաղաքական իրենց ազդեցութիւնը, հենվելով իրենց կողմնակից նախարարութիւնների վրա:

Ընտաքքերի է խիստ, որ պարսկական կուսակցութեանը հարող նախարարութիւնները գտնվել են, գլխավորապէս, Հայաստանի այն շրջաններում, որոնք սահմանակից լինելով Պարսկաստանին, պարսկական հարձակումների վտանգը զգում էին ավելի սուր կերպով, քան Հայաստանի արեւմտյան շրջանները: Ուշադրութեան արժանի է նաեւ այն, որ նույն այդ արեւելյան շրջանները թե՛ տնտեսապէս և թե՛ կուլտուրապէս սերտ կերպով կապված էին հարեւան Պարսկաստանին:

Այդ տեսակետից, Արծրունիների պարսկական կուսակցութեան պատկանելիւր ինչպէս և Մամիկոնյանների հռոմեասեր քաղաքականութիւնը, բացատրվում են մասամբ նրանց երկրների աշխարհագրական տեղադրութեան ու տնտեսական շահերի առանձնահատուկ պայմաններով:

Միջազգային ու ներքին խռովահույզ այս ժամանակաշրջանում, երբ իրենք Արշակունիները ևս հարկադրված էին վարել տատանվող քաղաքականութիւն մեծ պետութիւնների հանդեպ, նախարարական Հայաստանի քաղաքական միաձուլումը հանդիպելու էր, անշուշտ, անհաղթելի դժվարութիւններին:

Այժմ էլ, ինչպէս և միշտ, նախարարական Հայաստանի քաղաքական ապագան որոշվում էր պատերազմող մեծ պետութիւնների դաշինքներով, որ կնքվել էին 363 և 387 թվականներին:

363 թվին, Հուլիանոս Ուրացողի Տիգրանի մոտ կրած պարտութիւնից հետո. Հուլիանոս կայսրը հարկադրված էր հաշտութիւն խնդրել Շապուհից, որի համաձայն անդրտիգրիսյան գավառները՝ Աղձնիքը, Մոկքը, Կորդուքը, Մավդեքը և Ռեիմենեն՝ տրվեցին Սասանյան Պարսկաստանին:

Հայաստանի ու Արշակունյաց թագավորութեան համար խիստ ծանր էր այդ դաշնադրութեան, մանավանդ, այն կետը, որով կայսրութիւնը հրաժարվում էր օգնել ու պաշտպանել Արշակ Բ-ին և Հայաստանն այսպիսով թողնվում էր իր բախտին:

Շատ պարզ է, որ այս դաշինքից հետո անխուսափելի էին թե՛ Հայաստանում տեղի ունեցած աղետալի անցքերը և թե՛ Արշակունյաց թագավորութեան քայքայումը:

387 թվին մի նոր դաշնագրով, ինչպէս հայտնի է, Պարսկաստանը և Հռոմեական կայսրութիւնը բաժանեցին Հայաստանն

իրենց մեջ և կարճ ժամանակից հետո վերացրին նույնպես Արշակունիների թագավորական իշխանությունը: Սակայն Հայաստանի նախարարական կազմակերպությունը մնաց գրեթե անխախտ նաև Հայաստանի բաժանումից հետո:

Հայ նախարարները, որոնք երկրի խոշոր կալվածատերերն էին և իրական իշխողները, չէին կարող, անշուշտ, հանդուրժել իրենց իրավունքների վերացումը նաև քաղաքական նոր պայմաններում: Եվ ամեն անգամ, երբ Պարսկաստանի կամ Բյուզանդիայի քաղաքականությունն ուղղված էր լինում նրանց դարավոր արտոնությունների ու նախարարական կարգերի դեմ՝ հին պայքարը, բնականաբար, նորից վերսկսվում էր և այդ պայքարը, ինչպես կտեսնենք, ստանում էր դարձյալ նախարարական ապստամբությունների բնույթ, որ հաճախակի էին նաև հետագա այդ դարաշրջանում:

11. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԾ

Դեռևս բաժանումից առաջ, Արշակունյաց թագավորության քայքայման ընթացքում, Հայաստանից անշատվել էին և միացել հարևան պետություններին բղեշխությունները և ժայրագավառները: Այնուհետև, համաձայն 387 թվի դաշնագրի, տեղի էր ունեցել, ինչպես ասացինք, նաև անդամատված ու փոքրացած Հայաստանի բաժանումը, որի գրեթե չորս հինգերորդ մասը ստացել էր Պարսկաստանը և միայն մեկ հինգերորդը՝ Հռոմեական կայսրությունը:

Ուշագրավ է առանձնապես, որ բաժանումից հետո Հայաստանի ֆեոդալական կազմակերպությունը և նախարարական ներքին կարգերը մնում էին անփոփոխ ինչպես Պարսկական, նույնպես և Բյուզանդական Հայաստանում: Բաժանված երկու մասում էլ ձևականորեն պահպանվել էր սկզբում անգամ Հայ Արշակունիների իշխանությունը, որոնք դառել էին հարկատու և վասալ մեծ պետությունների:

Ինչպես հայտնի է, Արշակունիները թագավորել են հռոմեական բաժնում միայն մի քանի տարի, իսկ Պարսկական Հայաստանում մինչև 429 թիվը:

Զգուշավոր ու մեղմ այս քաղաքականությունը նախարարությունների հանդեպ բացատրվում է ըստ իս նրանով, որ երկու պետությունն էլ ի նկատի են ունեցել Հայաստանի ստրատեգիա-

կան ու ռազմական մեծ նշանակութիւնը և նպատակահարմար են համարել, պահպանելով նախկին նախարարութիւնների իրավունքներն ու արտոնութիւնները, օգտագործել նրանց զինվորական ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանութեան համար:

Ընդհանուր այս դիտողութիւնները հիմնավորելու և հայկական ֆեոդալիզմի հետագա վիճակը պարզելու համար՝ անհրաժեշտ է քննել նախարարութիւնների դրութիւնն առանձին առանձին՝ նախ Պարսկական և ապա Բյուզանդական Հայաստանում:

Որ 387 թվից հետո հայկական նախարարութիւնները դժգոհելու առիթ չեն ունեցել և, ընդհանուր առմամբ, գոհ են եղել Պարսկաստանի տիրապետութիւնից, այդ ավելի քան հավանական է, որովհետև 429 թվին նրանք, ինչպես հայտնի է, իրենք էին հոժարակամ ցանկացել ենթարկվել Սասանյան Պարսկաստանի անմիջական իշխանութեան և իրենք էին դիմել Պարսից թագավորին ու խնդրել վերջին հայ Արշակունի թագավորի՝ Արտաշեսի զահրնկեցութիւնը: Կարելի է ըստ իս վստահորեն ենթադրել, որ զգալի փոփոխութիւններ չէին եղել Պարսկական Հայաստանի ներքին կազմակերպութեան մեջ նաև 429 թվից հետո:

Հայագիտական նորագույն երկերում ենթադրվել է հաճախ, ինչպես, օրինակ, Գյուտերբոքի «Բյուզանդիոն և Պարսկաստան» աշխատութեան մեջ (Թարգմ. Հ. Համբարյանի, Վիեննա, 1911, էջ 99), որ 429 թվից հետո Պարսկական Հայաստանը կորցրել էր իր ինքնավարութեան մնացորդները և միացվել Սասանյան Պարսկաստանին իբրև պարսկական մի նահանգ:

Այս պնդումը, իմ կարծիքով, ճիշտ չէ:

Արշակունի Արտաշեսի անկումից հետո, ինչպես վկայում է Ծղիշեն՝ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»:

«Զի թէպէս և զանձն յարքունիս պարսկաց երթայր,—ասում է Ծղիշեն,— սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Վենետիկ, 1852, էջ 11):

Եվ իրոք, մատենագրական նաև ուրիշ վկայութիւններից հայտնի է, որ Արշակունյաց վերջին թագավորի զահրնկեցութիւնից հետո հայ նախարարները պահպանել էին անփոփոխ իրենց «տիրական» ու անգամ «գործակալական» իշխանութեան գրեթե բոլոր իրավունքները: Մամիկոնյանները մնում էին դարձյալ իբրև Պարսկական Հայաստանի սպարապետներ, Վահան Ամատունուն հանձնված է եղել «հաղարապետութեան գործակալութիւն»-ը, իսկ դատավորութեան իշխանութիւնը, ըստ երևույթին, մնացել էր բարձր հոգևորականութեան ձեռին:

Ուշադրութեան արժանի է նույնպէս, որ Շահապիվանի 443 թվի ժողովի կանոնադրութեան մեջ հիշատակված են դարձյալ հետևյալ «գործակալութիւն»-ները՝

«Վասակայ Սիւնոյ մարզպանութիւն Հայոց, Վահանայ Ամատունոյ հազարապետութիւն և Վրվայ Խոռխոռունոյ մաղխազութիւն» (տե՛ս «Կանոնադիրը Հայոց», հրատ. Ղլտճյանի, էջ 59):

Հենց ինքնին այն փաստը, որ Շահապիվանի ժողովում նախարարների ու «ազատ»-ների մասնակցութեամբ, սահմանվել էին պարտադիր կանոններ, որոնք վերաբերվում էին բացի հոգևորականներից նաև հանցապարտ աշխարհականներին՝ մի ապացույց է Եղիշեի վերոհիշյալ վկայութեան ճշտութեան:

Այս բոլորը, ուրեմն, պարզ ցուցմունքներ են, որ 429 թվից հետո Պարսկական Հայաստանի նախարարական ինքնավար կազմակերպութեան մեջ զգալի փոփոխություններ չէին եղել:

Պարսկական Հայաստանի ներքին այդ կիսանկախ վիճակը և նախարարությունների հատուկ իրավունքները, որ մատնացույց են արված նաև Գարադաշյանի «Քննական պատմութեան» մեջ (Մասն Դ, էջ 114), հարկավոր է աչքի առաջ ունենալ և առանձնապէս ընդգծել, որովհետև Վարդանանց և Վահանյանց շրջանի քաղաքական անցքերը ստանում են տարբեր լուսաբանություն, երբ նկատի է առնվում այս կարևոր հանգամանքը:

Ըստ իս հաստատ կարելի է պնդել, որ Հազկերտ Բ-ի (438—457 թ.) և նրան հաջորդող Պերոզի (457—484) խիստ քաղաքականությունը մարզպանական Հայաստանի հանդեպ ուղղված է եղել ո՛չ միայն քրիստոնեական եկեղեցու, այլև նախարարությունների արտոնյալ ու արտակարգ իրավունքների դեմ: Այդ նոր քաղաքականությունը միանգամայն հասկանալի է դառնում, երբ նկատի ենք առնում փաստական այն դրությունը, որ ստեղծվել էր այստեղ պարսկական մեղմ ու հանդուրժող նախկին քաղաքականութեան հետևանքով:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արեւելի ու Արեւմուտքի մրցումը չէր վերացել Հայաստանի բաժանմամբ: Վերջինս ծառայելու էր դարձյալ իբրև ռադմադաշտ համառ ու երկարատև կոփմաների: Բաժանումից հետո էլ այստեղ շարունակում էին գործել ու պայքարել հունական ու պարսկական նախկին կուսակցությունները: Հայ եկեղեցին մնում էր դարձյալ կողմնակից Արեւմուտքի, որի հետ նա սերտ կապված էր կրոնով ու կուլտուրայով:

Սասանյան Պարսկաստանը, որ իրազեկ էր, անշուշտ, Պարս-

կական Հայաստանի ներքին այս գրության, աշխատել է, ըստ երեւոյթին, հենվելով պարսկական կուսակցության վրա, շեղութեանը իրեն թշնամի տարրերը և մեղմ ու աստիճանաբար ուժեղացնել այստեղ իրանական կուլտուրան և պարսկական պետականության կարգերը:

Նրա համբերատար այդ քաղաքականութիւնը ո՛չ միայն չուրեք շոշափելի արդյունքներ, այլ, ընդհակառակը, Հազկերտ Ա-ի թագավորության ժամանակ (399—420 թ.) հայ եկեղեցին ու հունասեր կուսակցութիւնը հայերեն նշանագրերի գլուտով կարողացել էին ձեռք բերել գերօրինակ հզոր մի զենք, որը, բնականաբար, նպաստելու էր քրիստոնեւթյան արմատացման ընդդէմ իրանիզմի: Նաև վրացերեն ու աղվաներեն նշանագրերի գլուտը, որ վերագրվում է նույնպես Մեսրոպին, դուրացնելու էր, անշուշտ, քրիստոնեւթյան տարածումը հյուսիսում, որով ապահովվում էր Հայաստանի թիկունքը պարսկական կրօնի և իրանական հեթանոսության վտանգից:

Հետաքրքիր է, որ նույն Հազկերտ Ա-ը, որի քաղաքականութիւնը բացառիկ կերպով նպաստավոր էր ու բարեհաճ քրիստոնեւթյան վերաբերմամբ, գրերի գլուտից հետո անհրաժեշտ էր համարել ուժեղացնել Հայաստանում պարսկական ազդեցութիւնը և ուղարկել էր այդ նպատակով իր որդուն Շապուհին՝ իբրև թագավոր ու հաջորդ խոսքով Արշակունու (ըստ Մարկվարտի՝ 420 թվին):

Հազկերտ Ա-ի թաքուն նպատակը պարզաբանված է միանգամայն ճիշտ Ղազար Փարպեցու ընդարձակ մի վկայության մեջ, որը կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջութեամբ.

Ի, ԺԲ, էջ 18—19 (Տիգրիս, 1904):

«Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւոր էր Յազկերտ եղբայր Վռամայ որդի Շապհոյ ի վերայ աշխարհին Պարսից: Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ, ըստ անուան հօր իւրոյ. խորհեալ չարաչար իմացմունս առնն ի միտս իւր. առաջին՝ զայս, եթէ աշխարհն Հայոց մեծ է և օգտակար, սահմանակից և դրակից է Յունաց իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ բազումք են հնազանդեալք յազգէն Արշակունեաց. որոց գուցե գորո-

7 Տե՛ս Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց Մաշտոցի, Թարգմ. 2. Ա. Վարդանյանի, Վիեննա, 1913, էջ 59:

վեալ առ միմեանս ազգացն, ըստ օրինի եղբարց, որք ընդ մերով՝
և ընդ Յունաց իշխանութեամբն են, և հաւանեալ երբէք սիրով ընդ
միմեանս և եկեալք ի միաբանութիւն՝ խօսեսցին ի խաղաղութիւն՝
ընդ թագաւորին Յունաց, և ընդ նորա հնազանդութեամբ յօժա-
րեալք՝ ապստամբեսցին ի մէնջ, Եւ որպէս կալեալ է զմեզ բազում՝
անգամ յաշխատութեան՝ առաւել ևս յաւելուածով նոցա՝ անհան-
գիստ առնիցեն զմեզ պատերազմաւ: Եւ երկրորդ՝ զի յօրինացս
մեր օտար են և ատեցողք, և միահաւան ունին զպաշտօն նոցա և
զօրէնս: Արդ՝ ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին
Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թա-
գաւորութիւնս մեր. և նոքա ցանկ երկիւղի և դողութեամբ ծառա-
յեն մեզ և օտարոտիս ինչ և վնասակարս ինչ ոչ խորհին: Է զի և
սովորութիւն առնուն յանկշիւ յօրէնս մեր, հանապազ խօսիւք ընդ
միմեանս և ընդեկական բարեկամութեամբ, ի զբօսմունս որսոց և
ի խաղս, որ լինին ի միջի նոցա. այլ և ամուսնութեանց տուրե-
վառիւք հաղորդեալք առ միեանս՝ զատուցեալք այնուհետև որոշին
ի սիրոյ նոցա և յօրինացնս:

Պարսկաստանի այս փորձն ևս ապարդշուն անցաւ, որովհե-
տև հենց 420 թվին սպանվեցին թե՛ Հազկերտ Ա-ը և թե՛ Շապուհը,
որը Տիգրան էր գնացել իր հոր գահը ժառանգելու:

Հազկերտ Ա-ի հաջորդը՝ Վռամ Գոռը (420—438 թ.), թեև
կողմնակից էր վճռական ու կտրուկ քաղաքականության, սակայն
420—421 թվերի անհաշող պատերազմը Բյուզանդիայի հետ հար-
կադրել էր նրան զիջումներ անել հատկապես Պարսկական Հա-
յաստանում, որը սահմանակից էր հաղթական կայսրության:

Այդ զիջումները ո՛չ անկեղծ էին այժմ, ո՛չ էլ հարատև:

Պատերազմի ընթացքում Պարսկաստանը հասկացել էր ար-
դեն, որ արևմտյան իր սահմանների պաշտպանությունը թույլ է և
անբավարար:

Ուշագրավ է, որ 420 թվին պարտություն էր կրել այստեղ հենց
այն Միհր-Ներսէսը, որը գլխավոր խորհրդատուն էր Հազկերտ Բ-ի՝
Եթե Հազկերտ Բ-ի թագավորության սկզբնական շրջանում
մարզպանական Հայաստանը մնաց իր արտոնյալ վիճակում՝ դրա

8 Ուշագրության արժանի է այս տեսակետից Միհր-Ներսէսի մասին Փարպե-
ցու հետևյալ վկայությունը, եւ ինչպե՞ս էր Վազկերտի արքայի հազարապետ մի Միհրնե-
սէի անուն, այդ շարահանր և զմեմա՞իտ որոյ արկեալ ի միտս ի շատ ամաց
դիտորհորդս անօրէնութեան, ի կործանումն և ի կորուստ թուլամիտ ոգւոցս (II, Ի,
էջ 39):

պատճառն այն համառ կոիվներն էին, որ երկար տարիներ շարունակվեցին Պարսկաստանի արեւելյան սահմաններում: Կոիվները վերջտնալուց հետո միայն Հազկերտ Բ-ը, ոգևորված իր հաջողութիւններով, Հայաստանի պարսկական բաժնում ևս սկիզբ դրեց վճռական ու նոր մի քաղաքականութեան, որը գործադրվեց այստեղ նաև Պերոզի թագավորութեան ժամանակ:

Հիմնվելով Փարպեցու և Նդիշի փաստական տեղեկութիւնների վրա, ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ պարսկական նոր քաղաքականութիւնը ունեցել է երկու հիմնական նպատակ:

Թե՛ Հազկերտ Բ-ը և թե՛ Պերոզը, Պարսկականի քաղաքական շահերի տեսակետից, նպատակահարմար ու անհրաժեշտ են համարել, որ հայ նախարարները, որոնք երկրի իշխաններն էին, ընդունեն պետական կրոնը և թույլ տան իրենց շրջաններում շինել ատրուշաններ և հաստատել մոզութեան դպրոցներ:

Տիրող ու սովորական կարծիքը, որ Հազկերտ Բ-ը ուզեցել է վերացնել Հայաստանում քրիստոնեական կրոնը և դարձնել կրակապաշտ բոլոր քրիստոնյաները, պարզապես չափազանցութիւն է, որը չի հաստատվում անգամ այն իրական փաստերով, որ գունավորված ձևով նկարագրված են Փարպեցու ու Նդիշի երկերում:

Որ Հազկերտը չի ունեցել նման դիտավորութիւն՝ այդ ընդարձակ քննութեամբ լուսաբանված է Գարագաշյանի «Քննական պատմութեան» մեջ:

Սխալ է նույնպես այն պնդումը, որ իբր թե Հազկերտի ցանկութիւնը բխում էր կրոնական մոլեռանդութիւնից:

Կրոնական խնդիրներում Պարսկաստանը, անտարակույս, շատ ավելի համբերատար ու հանդուրժող պետութիւն էր, քան Բյուզանդական կայսրութիւնը և միջնադարյան քրիստոնյա երկրները:

Պարսկաստանի բուն նպատակը, որ զուտ քաղաքական էր, պարզ երևում է Միհր-Ներսէհի խոսքերից Փարպեցու հետևյալ վկայութեան մեջ.

II, ԻԱ, էջ 42—43 (Տփղիս, 1904)՝

«Վասն զի դուք ինքնին գիտէք և ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թէ ո՞րպէս մեծ է և պիտանի, և մօտ և սահմանակից է կայսեր իշխանութեանն, և զօրէնս և պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի: Եւ եթէ և մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա, և ընդելնուն, և կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ եկեսցեն՝ այնուհետեւ զձեզ սիրեն

և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերժին և հեռանան ի բաց: Եւ լինի այնուհետեւ աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ: Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետեւ մեր իսկ են»:

Պարսկական քաղաքականութիւնն ունեւր այժմ, ինչպես ասացինք, նաեւ մի այլ նպատակ:

Նա շէր կարող այլեւ հանդուրժել հայ նախարարութիւնների արտոնյալ ու արտակարգ իրավունքները: Ուստի և նա վճռել էր այժմ տարածել մարզպանական Հայաստանի վրա իր պետականութեան կարգերը, որ պարտադիր էին մյուս մարզերում:

Ինչպես հայտնի է, Սասանյան Պարսկաստանում, որի սոցիալական ու տնտեսական հատուկ կարգերն ու կառուցվածքը նման ու համապատասխան էին ֆեոդալական Հայաստանի ներքին կազմակերպության, խիստ զորեղ էր պետութեան կենտրոնացումը: Թագավորական իշխանութիւնն այստեղ տնօրենն էր ամբողջ երկրի և իրական տերը ու հրամայողը ֆեոդալ իշխանավորների:

Իբրեւ ֆեոդալական զորեղ միապետութիւն՝ Պարսկաստանը, բնականաբար, ձգտում էր այժմ սահմանափակել նախարարական իշխանութիւնների ինքնուրույնութիւնը և ենթարկել նրանց թագավորական գահի անմիջական ազդեցությանը:

Հենց այս նպատակով՝ հին «գործակալութիւն»-ները, որոնք արքունի պաշտոններ էին և ժառանգական էին նախարարական որոշ սոհմերում, հանձնվում էին այժմ պարսիկների կամ հավատարիմ հայ նախարարների:

Իսկ ավելի կարեւոր փոփոխութիւնն այն էր, որ նախարարական կիսանկախ երկրների «նահապետ»-ները կամ «տանուտէր»-ները, որոնց իշխանութիւնը դարձյալ ժառանգական էր, նշանակվում էին կամ արձակվում Հազկերտ Բ-ի կամ Պերոզի բարեհայեցողութեամբ:

Խախտվում էր այսպիսով տոհմային ժառանգականութեան այն հին կարգը, որ հատուկ էր նախարարական Հայաստանին:

Որ այս փոփոխութիւնը, որն ուղղված էր նախարարական ամենաբարձր խավերի դարավոր իրավունքների դեմ, շահագրգռված շրջաններում առաջ էր բերելու հուզում և դժգոհութիւն՝ այդ ինքնըստինքյան հասկանալի է:

Փարպեցու և Նղիշի մոտ այս դժգոհութիւնը պարզ կերպով արտահայտված է, օրինակ, հետեւյալ վկայութիւններում.

1. Փարպեցի. III, Հծ, էջ 136 (Տփղիս, 1904)

«Արդ՝ Հայոց աշխարհս ո՛րպիսի մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցո՛յց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ թէ առանելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասնալ է ի տանուտէրութիւնս. այլ որեաւր աւազակ և անպիտան, հացկատակք և վատտոհմիկք, ուրդան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն...»

2. Նույնը, III, ՀՆ, էջ 137՝

«Բայց այդ՝ զոր ձեր ի վատ տոհմէ և յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք՝ գործ ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն».

3. Նույնը, III, ՂԲ, էջ 167՝

«Վասն որոյ բարձեալ էր յաշխարհէն Հայոց և կորուսեալ վաստակք, միտք, քաջութիւն, տոհմակութիւն և արդարութիւն».

4. Նույնը, III, ՂԲ, էջ 168՝

«զի զորեարն զայն, որ գամ մի Պերոզի յիւրում թագաւորութեանն մոգութեամբ տէր է արարեալ, և այժմ գահ ունին և պատիւ, և յիւրաքանչիւր գաւառի իշխան են, և ձիոյ տէր են և զինու և զնոյ՝ հրամսն տուք, զի ժողովեսցին միաբան ամենայն իւրեանց այրութիւնով».

5. Նզիշե, II, էջ 29 (Վենետիկ, 1864)՝

«սկսաւ այնուհետեւ [Յազկերտ] յառաջ կոշիլ զկրսերս յաւագաց և զանարդս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց»:

Վարդանանց 450—451 թ. և Վահանյանց 481—484 թ. ապրտամբությունները, ինչպես երևում է վերոհիշյալ դիտողություններից, ունեցել են ավելի խոր պատճառներ, քան մինչ այժմ ենթադրվել է. Թեև Փարսիցիւն և Նզիշեն աշխատել են տալ նրանց զուտ կրոնական բնույթ, սակայն միանգամայն պարզ է, որ նրանց էությունը եղել է, իրապես, նաև սոցիալական:

Առաջին իսկ ապստամբությունը ճնշելուց հետո՝ Պարսկաստանը կարողացել էր իրագործել քաղաքական իր դիտումները:

Թե՛ «տանուտէրութեան» և թե՛ «գործակալութեան» բարձր պաշտոնները հանձնվել էին հետզհետեւ հավատարիմ մարդկանց, որոնք հարկադրված են եղել ընդունել զրադաշտական կրոնը: Անգամ Վահան Մամիկոնյանը, որը երկրորդ ապստամբության զբլխավոր առաջնորդն էր, Փարսիցու ասելով, «երթեալ ի դուն՝ տկարանայր ի հաւատն» (III, ԿԾ, էջ 116):

Վճռական այս քաղաքականությունը, որը շարունակվեց երե-

սուն և հինգ տարի, արմատապես փոխում էր Պարսկական Հայաստանի կիսանկախ դրությունը և թուլացնում հունասեր կուսակցության և եկեղեցու ազդեցությունը:

Վահանյանց տկար ու հուսահատական ապստամբությունը չէր կարող, իհարկե, որեւէ նշանակութիւն ունենալ և փոխել ստեղծված կացութիւնը:

Այդ կացութիւնը սակայն, այնուամենայնիւ, փոխվեց և 484 թվին Վաղարշը (484/488 թ.) հիմնովին հրաժարվեց Հազկերտ Բ-ի և Պերոզի քաղաքականութիւնից:

Պարսկաստանը հենց այդ թվին, ինչպես հայտնի է, սոսկալի պարտութիւն էր կրել Հեփթաղների երկրում, ուր սպանվել էին Պերոզը, նրա զորավարները և պարսկական լավագույն զորքերը: Այս ահռելի պատահարն էր, անշուշտ, պատճառը, որ ահաբեկված ու ուժասպառ Պարսկաստանը ստիպված էր տեղի տալ և բավարարել ապստամբած հայ նախարարների պահանջները, որոնցով վերահաստատվում էին, մեծ մասամբ, նախարարական նախկին քնիկ կարգերը:

Հաշտութիւնն սորայս պայմանագրի երեք կետերը, որ խիստ նպաստավոր էին հայ նախարարութիւնների ու եկեղեցու հետագա զարգացման համար, ավելորդ չեմ համարում մեջ բերել Փարպեցու ընդարձակ վկայութիւն համաձայն:

Փարպեցի, III, 28, էջ 161 (Տփղիս, 1904)

«Եւ է մին յերիցն՝ նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի. եթէ զհայրենի և զքնիկ օրէնս մեր ի մեզ թողցուք, և զՀայ այր զոք մի՝ մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, և զեկեղեցւոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ, որ ցայժմ լինէր, յայսմ հետէ մեզ չտայք տեսանել. և քրիստոնեայ մարդկան է քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին...»:

«Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւարար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւն և պատուականս՝ զքաջն և զօգտակարն, արհամարհել և առ ոչինչ համարել զվատն և զանպիտանն. սիրել զվաստակաւորսն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ ևս հալածել...»:

«Եւ երրորդ խնդիր մեր այս է. որ տէրն է Արեւաց և աշխարհի թագաւոր՝ կամիմք, զի ինքն տեսցէ իւրովք աշօք, և ինքն լուիցէ իւրովք տականջօք, և ինքն գիտասցէ և ինքն խօսեսցի իւրով բերանով. և մի՛ այլոյ աշօք տեսցէ և այլոյ տականջօք լուիցէ և այլովք հանապազ գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և այլոյ բերանով խօսեսցի զպէտսն: Յաղագս որոյ չլինի ուղիղ հայեցուման, և ոչ արդար լսողութիւնն. այլ յովով սուտ խօսքն ճանաչին և հրամանքն ընդունայն, և բնաւ այլ ընդ այլոյ լինի իմաստն ամենայն»:

Այս պայմանները, որ ընդունել էր Պարսկաստանը, վերաբերվում են, ինչպես տեսնում ենք, բացի եկեղեցուց նաև նախարարական կարգերին:

Պայմանագրի առաջին կետի համաձայն՝ քրիստոնեությունը ճանաչվելու էր Հայաստանում իբրև միակ օրինական կրոն, ո՛չ մի հայ չպիտի ստիպելին կրոնափոխ լինել և ոչ ոքի չպիտի տալին գահ և պատիվ ուրացութեան համար: Իսկ ամենակարևոր զիջումն այն էր, որ Պարսկաստանը նույնիսկ համաձայնություն էր տվել, որ Հայաստանում իսպառ վերացվեն կրակարանները:

Երկրորդ կետի իմաստն այն է, որ Հայաստանում պետք է հարգվեր տոհմիկության իրավունքը: Պարսկաստանը համաձայնել էր ճանաչել և ընտրել տոհմիկը, լավը, քաջը և վաստակավորը ու արհամարհել անտոհմիկը. վատը և անպիտանը: «Տանուտեր»-ների ու «գործակալ»-ների ընտրությունը պետք է, ուրեմն, կատարվեր «իրավաբար» և ո՛չ «իշխանաբար»:

Հենց այս կետի համաձայն դաշինքից հետո վերանորոգվում էին հետզհետե նախարարական բնիկ կարգերը, ինչպես այդ պարզ երևում է Փարպեցու համապատասխան վկայութուններից:

III, ՂԶ, էջ 175 (Տփղիս, 1904)՝

«Եւ թագաւորին և ամենայն Արեւաց աւադանւոյն լռեցուցեալ զբանս Մամիկոնէին՝ Վահանայ՝ թագմեցուցանէին զնա ի գահու տէրութեանն Մամիկոնէից, տուեալ ցնա, բոա օրհնի ճախնեաց իւրոց, և զսպարապետութիւն Հայոց աշխարհին: Շնորհէին և այլոց ուխտապահ նախարարացն Հայոց, որք ի միաբանութեանն էին ընդ տեառն Մամիկոնէից և սպարապետին Հայոց Վահանայ, իւրաքանչիւր ումեք ի ժամուն՝ որ ինչ պէտք էին պատշաճ ըստ անձին արժանաւորութեան»:

III, ՂԶ, էջ 175՝

«Եւ դարձեալ վասն զի նախ և առաջին զայդ պարզե խնդրեցեր ի մէնջ՝ եզիցի վասն քո տունեալ զտէրութիւն Կամսարականին: Իսկ

յաղագս տէրութեանն Արծրունւոյն թո՛ղ վայր մի, զի գիտասցեն մարդիկն [թէ] որ ի տոհմէն են, սպաս ինչ արժանատրապէս ցուցանել առ մեզ և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել։ Հայեսցուք ապա և մեք յարժանն»։

Պայմանագրի երրորդ կետի համաձայն՝ Հայաստանն իրավունք էր ստանում, որ նախարարների քննողն ու դատողը լինելու ինքը Պարսից թագավորը, որը նրանց բարձրագույն ու անմիջական սյուզերենն էր։ Հայկական նախարարութիւնների իշխանավոր անդամները ենթակա էին ըստ այսմ թագավորական դատարանի իրավասութեան։ Այդ, իհարկե, կարևոր մի իրավունք էր։ Համապատասխան նրանց բարձր դիրքին, որ նրանք ունեցել էին, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորութեան ժամանակ։

Դաշնադրութեան վերոհիշյալ երեք կետերը պարզ ցույց են տալիս, որ Պարսկական Հայաստանին արված էին բացառիկ զիջողութիւններ։ Նրան տրված արտակարգ իրավունքները վերահաստատում էին, ինչպես տեսնում ենք, հայկական նախարարութիւնների և քրիստոնեական եկեղեցու արտոնյալ հին դրութիւնը։

Հայկական ֆեոդալիզմի կայունացման ու հարատևման համար 484 թվի դաշինքը կարելի է, անտարակույս, համարել մի նոր դարագլխի սկիզբ, որը տևել էր այնուհետև գրեթե անընդհատ մինչև արաբական տիրապետութիւնը։

Սովորական այն կարծիքը, որ իբր թե եկեղեցու և նախարարութիւնների դեմ նոր հալածանքներ էին հարուցվել նաև Խոսրով Անուշիրվանի թագավորութեան ժամանակ (531—578)՝ մի պարզ թյուրիմացութիւն է, անշուշտ, որը չի հաստատվում հակասական վկայութիւնների ուշագիւր քննութեամբ։

Ինչպես հայտնի է, 572 թվին նախարարական մի մեծ ապստամբութիւն ծագել էր Պարսկական Հայաստանում առաջնորդութեամբ դարձյալ Վարդան Մամիկոնյանի։

Հետաքրքիր է նախ և առաջ, որ այդ ապստամբութեան պատճառների մասին մատենագրական աղբյուրները տալիս են տարբեր տեղեկութիւններ։ Օտար աղբյուրները՝ Հովհաննես Եփեսացին, Եվագորը, Հովհաննես Բիկլարեցին և Գրիգոր Տուրոնի եպիսկոպոսը՝ շեշտում են իբրև ապստամբութեան պատճառ՝ կրոնական հալածանքը⁹։ Թեոփանես Բյուզանդացու վկայութեամբ՝ ապստամ-

⁹ Տե՛ս Հ. Ն. Ակիեյան, «Դունոյ 572-ի ապստամբութիւնը և յաջորդ տասնամեայ շրջանը» (սՀանդ. Ամս.Յ, 1913, հունվար, էջ 62—79)։

բության զխաւոր պատճառներից մեկն այն էր, որ Սուրեն մարզպանը սպանել էր Վարդանի եղբոր Մանուկին¹⁰։

Նույն ապստամբության շարժառիթները բուրդովին այլ կերպ է մեկնում Փոտ պատրիարքը Զաքարիա կաթողիկոսին գրած իր թղթում։ Փոտ պատրիարքի ասելով՝ երբ հոսորով Անուշիրվանը տեղեկութուն ստացավ, որ Դվինի 554/555 թ. ժողովում մերժվել է հույն եկեղեցու քաղկեդոնական դավանությունը՝

«գովնալ զներսէս եւ դառաշ խոստացեալ դաշինսն կատարեաց՝ ղորդին տալով նմա յորդեգիրս, եւ զՀայաստան աշխարհի զհարկսն ի նա հաւատաց, եւ յպիսկոպոսունսն հաւանեալս ընդ նմա. եւ ի Զ եւ ի Ժ թուականութեանն Հայոց սպան խեռն Վարդան Մամիկոնեան զՍուրէն մարզպան Պարսից առ ի շոուժելոյ արհամարանացն, քանդի եբարծ դպատիւ ազատացն եւ ետ յպիսկոպոսունսն. եւ ինքն փախեալ բազում աղխիւ եւ համօրէն ընտանեօք եւ եմուտ ի Յոյնսն» (Վիեննայի Մխիթ. գրադ. ձեռագիր թ. 623. թղ. 234բ-235բ, տե՛ս «Հանդ. Ամս.», 1913, հունվան, էջ 74)։

Խոսքով Ա-ի այս քացառիկ բարյացակամությունը հայ եկեղեցու հանդեպ ինքնին արդեն կարևոր մի ապացույց է, որ հատկապես նրա թագավորության ժամանակ կրոնական հալածանքները Հայաստանում միանգամայն կասկածելի են ու անհավանական։

Եվ հետաքրքիր է ու ուշագրավ, որ հայկական աղբյուրները չունեն, իրոք, այդ մասին անգամ որևէ ակնարկ։

Սեբեոսն ապստամբությունը հիշում է անորոշ կերպով և միաժամանակ շեշտում է առանձնապես Խոսքով Ա-ի «խաղաղասէր» և «աշխարհաշէն» քաղաքականությունը հետևյալ իր վկայություններով.

Սեբեոս, գլ. Ա, էջ 26 (Պետերբ., 1879)՝

«Եւ եղև ի ԽԱ ամի թագաւորութեան Խոսքովայ՝ որդւոյ կաւատայ՝ ապստամբեաց Վարդան, և ի բաց եկաց ի ժառայութենէ թագաւորութեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեալք սպանեալ զՍուրէնն մարզպան յանկարծաւրէն ի Դըւին քաղաքի, առին զաւար բազում, և զնացին ի ժառայութիւն Յունացաւ։

Նույնը, գլ. Բ, էջ 28՝

«Այս Խոսքով որ կոչեցաւ Անուշ Ըռուան՝ ի ժամանակս իւրոյ

¹⁰ Տե՛ս նաև Հ. Հ. Համբարյան, Հայաստանի քաղաքական վիճակը Վահանի մահէն մինչև Վարդան Ե-ի ապստամբութիւնը, «Հանդ. Ամս.», 1912, սեպտեմբեր, էջ 534.

թագաւորութեանն յառաջ քան զապստամբութիւն զայս, հաստատեաց զերկիր, քանզի էր խաղաղասէր և աշխարհաշէն: Եւ ի լինել ապստամբութեան այնորիկ, յայնմ հետէ ընդոստուցեալ զարթեալ ի բարկութիւն՝ զանձն անվնաս համարեալ, իբր թէ՝ «հայր էի ամենայն երկրի, և ո՛չ տէր: Եւ սնուցեալ զամենեւեան իբրև որդի և սիրելի: Եւ արդ՝ ասէ, ի նոցանէ խնդրեսցէ Աստուած զարիւնս զայս»:

Կրօնական հալածանքների մասին ոչինչ չգիտեմ նաև Ասողիկը. որն օգտվել է մի անհայտ աղբյուրից և ապստամբության պատճառ համարում է մարզպան Սուրենին:

«Եւ ապա խոսքով արքայ Պարսից,— վկայում է Ասողիկը,— զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Զիհովը—Վշնասպ՝ հանէ ի հազարապետութիւն Հայոց: Որ եկեալ կալաւ զերկիրս մեր, յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի շնայր ընդ կանայս ազատաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ» (II, գլ. Բ, էջ 84, Ս. Պետերբուրգ, 1885):

Ապստամբության դրդապատճառների մասին վերոհիշյալ տիղեկությունները, ինչպես տեսնում ենք, խիստ հակասական են:

Բոլոր այս վկայությունները քննված են այժմ Երեստ Շտեյնիի „Studien zur Geschichte des byzantinischen Reiches“ (Stuttgart, 1919) ընդարձակ ու խիստ կարեւոր աշխատության մեջ: Գերմանական այս գիտնականի կարծիքով՝ օտար մատենագիրների ավանդած տեղեկությունները, մեծ մասամբ, հերյուրանքներ են և չափազանցություններ, որ նրանք լսած են եղել Բյուզանդիա փախած հայ ապստամբներից: Այդ տեղեկություններից կարող են որոշ չափով ճիշտ լինել Սուրեն մարզպանի բռնությունների մասին վկայությունները, որոնք սակայն, հավանորեն, մասամբ աղավաղված են և մասամբ չափազանցված: Կրօնական հալածանքների նկատմամբ միակ արժանահավատ փաստն այն է, որ պարսիկներն ուզեցել են իրենց համար կառուցել Դվինում հատուկ ատրուշան: Ուրեմն՝ 484 թվի դաշինքի խախտում համարվել է, հավանորեն, ատրուշանի կառուցումը, որ կարող էր, իրոք, առիթ ծառայել որոշ դժգոհությունների:

Ապստամբության բուն պատճառը, որ մանրամասն քննության է առնված Շտեյնի ուսումնասիրության մեջ, բոլորովին այլ է և ոչ մի կապ չունի ո՛չ պարսկական դատան բռնությունների, ո՛չ էլ կրօնական հալածանքների հետ:

Դեռևս 572 թվից առաջ Յուստինոս կայսրը, որը մտադիր էր

խախտել 562 թվի հիսնամյա խաղաղությունը, դիվանագիտական իր ներկայացուցիչների ջանքերով առաջուց նախապատրաստել էր թե՛ հայկական և թե՛ վրացական ապստամբությունները:

570 թվին Պարսկական Հայաստանի հայ իշխանավորները, ինչպես այդ երևում է Հովհաննես Բիկլարեցու և Նվազրի վկայություններից, ըստ երևույթին, գաղտնի դաշինք էին կնքել Բյուզանդիայի հետ, որի մեջ նախատեսված է եղել Հայաստանի անջատումը Պարսկաստանից:

Այդ դաշինքը, ինչպես մատնացույց է արել Շտեյնը, հիշատակված է նաև Սեբեոսի հետևյալ վկայության մեջ.

Սեբեոս, գլ. Ա, էջ 26 (Պետերբ., 1879)

«Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց, և հաստատէր նոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երանելոյն Տըրդատայ և Կոստանդիանոսի. և տայր նոցա զգաւրսն կայսերական յաւնութիւնս:

Շտեյնի կարծիքով՝ Սեբեոսի այս վկայությունից կարելի է հետևել, որ գաղտնի համաձայնությամբ որոշված է եղել վերականգնել հայկական թագավորությունը և թագավորական դահլ տալ Վարդան Մամիկոնյանին:

Նոր այս ենթադրությունը, որ անհավանական չէ, արժանի է ըստ իս հատուկ ուշադրության:

Ինձ թվում է, որ Մամիկոնյանների ուժեղացման ու վերոհիշյալ խոստումների հետ կարող է կապ ունենալ Սյունիքի բաժանվելը Պարսկական Հայաստանից, որը տեղի էր ունեցել 572 թվի նախարարական ապստամբությունից առաջ:

«Յայնժամ յառաջ քան զայս,— վկայում է Սեբեոսը,— ապրստամբեալ ի բաց եկաց ի Հայոց՝ անուանեալ Վահան իշխան աշխարհին Սինեաց, և խնդրեաց ի նոսրովայ յարքայէն Պարսից. զի տարցեն զդիւան աշխարհին Սինեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի. զի մի՛ լս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն» (գլ. Ա, էջ 26):

Մեր այս համառոտ դիտողություններից, կարծում եմ, կարելի է վստահորեն հետևել, որ 572 թվի ապստամբությունը համառոտ ու համապատասխան չէր Վարդանանց և Վահանյանց ապստամբություններին և չէր ունեցել սոցիալական նման դրդապատճառներ:

Ինչպես տեսանք, չի կարելի բնավ հաստատել, որ Պարսկա-

կան Հայաստանի կրոնական ազատութիւնը կամ ներքին ինքնուրույնութիւնը վտանգված են եղել պարսկական բռնութիւնների պատճառով նաև վեցերորդ դարում:

Իսկ այս ուշագրավ մի եզրակացութիւն է ու խիստ կարևոր հայկական ֆեոդալիզմի պատմութեան համար:

Անցնենք այժմ նախարարական մեծ ապստամբութիւններին Բյուզանդական Հայաստանում:

Հայաստանի հռոմեական մասը, ինչպես ասացինք, մեծ չէր: Նրա մեջ էին Չորրորդ Հայքում գտնվող նախարարական երկրները, որ հռոմեական աղբյուրներում անվանվում են սատրապութիւններ, և Բարձր Հայքը, որը կոչվել է Մեծ կամ Ներքին Հայք (*Armenia magna* կամ *interior*): Այս վերջինը, Արշակ Թազավորի մահից հետո (390/391 թ.) կառավարում էին կայսրութեան կողմից նշանակված կոմեսները (*comites*):

Մեծ Հայքի, ինչպես և սատրապութիւնների, ներքին դրութիւնը մանրամասն արդեն ուսումնասիրված է Գյուտերբոքի և Ադոնցի վերոհիշյալ աշխատութիւններում (տե՛ս «Հռոմէական Հայաստան և հռոմէական սատրապութիւնները», Թարգմ. Մ. Նորշուանի և «*Армения в эпоху Юстиниана*»):

Այս աշխատութիւններից հայտնի է, որ Բյուզանդական Հայաստանում, ինչպես և Պարսկաստանում, պահպանված է եղել հայկական ֆեոդալիզմի իր հատուկ ինքնավար ներքին կարգերով: Գործող իրավունքը և վարչաձևը եղել են այստեղ նախարարական և ո՛չ հռոմեական:

«Մեծ Հայքը,— ասում է Գյուտերբոքը,— թեև հռոմեական իշխանութեան տակ նվաճված մի երկիր էր, բայց ո՛չ իբրև հռոմեական պետութեան և սահմանադրութեան կազմակերպված մի մաս», Նրա դրութիւնը տարբերվել է սատրապութիւնների դրութիւնից նրանով, որ Մեծ Հայքը, գտնվելով կոմեսների իշխանութեան ներքո, կառավարվել է կայսրութեան կողմից անմիջաբար, իսկ սատրապութիւնները կախում են ունեցել ուղղակի Հռոմից:

Ադոնցի կարծիքով՝ թե՛ Մեծ Հայքը և թե՛ սատրապութիւնները իրավական իրենց դրութեամբ կարող են համարվել կայսրութեան կիսանկախ դաշնակից երկրներ (*civitates foederatae*): Տեղական իրավահասկացողութեամբ՝ նախարարութիւններն այդ կապն ընդունել են, բնականաբար, իբրև վասալական կախում կախերական իշխանութիւնից:

Բյուզանդական Հայաստանի այս արտոնյալ վիճակը շարու-

նակվել է անփոփոխ մոտ հարյուր տարի մինչև Զենոն կայսրը (474—491 թ.)։ Հատկապես սատրապությունների նկատմամբ նախարարական հին կարգերի որոշ փոփոխություն, համաձայն Պրոկոպիոսի վկայության (de aedit, III, I), տեղի էր ունեցել այս կայսեր ժամանակ։

484 թվին, արևելյան իլլոս զորապետի մեծ ապստամբության ժամանակ, հայկական գրեթե բոլոր սատրապություններն անցել էին Ղևոնդիոս հակառակաթուռ կայսեր կողմը։ Ապստամբությունը ճնշելուց հետո՝ Զենոն կայսրը չէր կարող այլևս ունենալ նրանց հանդեպ նախկին վստահությունը. ուստի և նա կարգադրեց, որ սատրապները, այսինքն՝ «նահապետ»-ները կամ «տանուտէր»-ները, նշանակվեն այնուհետև կայսեր հրամանով։

Ուրեմն՝ այստեղ ևս, ինչպես և Պարսկական Հայաստանում Հազկերտ Բ-ի և Պերոզի ժամանակ, խախտված է եղել տոհմային ժառանգականության էական ու կարևորագույն իրավունքը։

Այս փոփոխությունը, իհարկե, մեծ նշանակություն ունի։

Թեև սատրապությունների ներքին կարգերը փոփոխություններ չէին կրել և սատրապներն ընտրվում էին, գլխավորապես, նախարարական տիրող տոհմերից, սակայն նրանք, կորցնելով ժառանգական իշխանության իրենց հին իրավունքը, դառնում էին այժմ կայսրներից կախում ունեցող կառավարիչներ։

Սատրապություններն այս ձևի տակ մնացին քառասուն տարուց ավել՝ մինչև Յուստինիանոսի թագավորությունը (527—565 թ.)։

Բյուզանդական Հայաստանի ներքին այս դրությունը հիմնովին փոխվեց սրա թագավորության առաջին հենց տարիներում։

Վեցերորդ դարում Հայաստանը, ինչպես հայտնի է, դառել էր նորից համառ ու պարբերաբար կրկնվող երկարաձիգ կռիվների ռազմադաշտ։ Յուստինիանոսի գահակալությունից մի քանի տարի առաջ կայսրությունն այստեղ պարտություն էր կրել և պարսիկները ներս էին խուժել և հասել մինչև Պոնտոս։ Սահմանների պաշտպանությունը կոմեսի ու սատրապությունների զինվորական թույլ ուժերով համարվեց այժմ անբավարար։

528 կամ 529 թվին, Յուստինիանոսի հատուկ կարգադրությամբ (Cod. Just. I, 29, 5), արևմտյան Հայաստանը ենթարկվեց զինվորական վերակազմության։ Մեծ Հայքը, Սատրապությունները, Պոլեմոնյան Պոնտոսը և Առաջին ու Երկրորդ Հայքը միացվեցին իբրև ռազմական հատուկ մի մեծ շրջան և այս շրջա-

նում հաստատվեց ստրատեգի կամ «զորքերի մագիստրոսի» (magister militum) նոր պաշտոն, որն այս երկրի պաշտպանության համար ուներ իր տրամադրության տակ բյուզանդական զորքերը։ Այնուհետև կառուցվեցին այստեղ բազմաթիվ նոր բերդեր ու ամրություններ, որոնք կայաններ եղան բյուզանդական զորքերի կամ նրանց հրամանատար դուքսերի։

Նախարարական երկրների զինվորական այս վերակազմության վերացվում էին, բնականաբար, թե՛ կոմեսի քաղաքացիական պաշտոնը և թե՛ սատրապների զինվորական իշխանությունը։

Նախարարությունները, ինչպես տեսնում ենք, կորցնում էին այսպիսով ռազմական իրենց նախկին նշանակությունը, ուստի և ավելորդ էր դառնում այժմ հանդուրժել նրանց արտակարգ իրավունքներն ու արտոնությունները։

528/529 թ. հրովարտակին հաջորդեցին այնուհետև 535 և 536 թ. հրովարտակները Հայաստանի վարչական, դատական և օրենսդրական վերակազմության մասին։

Համաձայն 536 թվի 31-րդ հրովարտակի («Զորս կառավարիչների հաստատման մասին Հայաստանում», Nov. 31)՝ հայկական բոլոր երկրները—Մեծ Հայքը, սատրապությունները, Պոլեմոնյան Պոնտոսը և Առաջին ու Երկրորդ Հայքը—փոխելով իրենց նախկին անունները, վերակազմվեցին իբրև չորս նահանգներ՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք՝ ու ստացան վարչական ու դատական նոր կազմակերպություն։

Համաձայն 535 և 536 թ. օրենսդրական հրովարտակների («Ժառանգության մասին հայերի մոտ», Const. 73=Ed. 3 և «Հայերի մասին՝ որպեսզի նրանք ամենօրանում հետևեն հռոմեական օրենքներին», Nov. 21)՝ կարգադրվեց ժառանգության վերաբերմամբ կիրարկել Հայաստանում հռոմեական իրավունքը և վերացնել տեղական «բարբարոսական» օրենքներն ու սովորույթները։

Յուստինիանոսի միաձուլման ու կենտրոնացման նոր քաղաքականությունն ուղղված է եղել, ինչպես պարզ երևում է այս հրովարտակներից, ո՛չ միայն նախարարական կարգերի, այլ անգամ տեղական իրավունքների ու իրավական սովորույթների դեմ։

Նրա վճռական այդ դիտավորությունը պարզ կերպով շեշտված է, օրինակ, 21-րդ հրովարտակի հետևյալ հատվածում.

Const. 47=Nov. 21՝

«Կամենալով, որ Հայկական երկիրը բոլորովին բարեկարգվի և ոչնչով չտարբերվի մեր պետության մյուս մասերից՝ մենք մտա-

ցըրինք այստեղ հռոմեական վարչություն, վերացնելով նրա առաջ-
վա անունները. սովորեցրինք նրանց օգտվել հռոմեական կարգե-
րից և հրամայեցինք, որ նրանց մոտ չլինեն ուրիշ օրենքներ բացի
այն օրենքներից, որ ունեն հռոմեացիները»:

Յուստինիանոսի վերանորոգումները, որ արմատապես հեղա-
շրջում էին Բյուզանդական Հայաստանի ֆեոդալական դարավոր
կարգերը, առաջ պիտի բերեին, բնականաբար, համառ ու կատաղի
դիմադրություն:

Եվ հայտնի է, իրապես, որ այստեղ ևս, ինչպես հինգերորդ
դարի պարսկական հալածանքների ժամանակ, ֆեոդալ ազնվակա-
նության անհուն զայրույթն արտահայտվել է ամենաբուռն կեր-
պով և վերածվել նախարարական ապստամբության:

Պրոկոպիոսի վկայություններից գիտենք, որ ապստամբու-
թյան ժամանակ սպանված են եղել Սիստան, որը Հայաստանի
առաջին ստրատեգն էր, և Ակակիոսը, որը վերակազմված Առաջին
Հայքի պրոկոնսուլն էր:

Նախարարների համար, որոնք կորցնում էին իրենց արտո-
նություններն ու տիրական իրավունքները, Հայաստանի կրոնական
ու կուլտուրական կապը Բյուզանդիայի հետ դառնում էր այժմ ան-
կարևոր ու անարժեք: Նրանք հասկացած պիտի լինեին, որ հայ-
կական ֆեոդալիզմի համար ամենավտանգավոր թշնամին ոչ այն-
քան ֆեոդալական Պարսկաստանն է, որքան վարչապես ու օրենս-
դրորեն միաձուլյալ ու միահեծան Բյուզանդիան:

Նրանց հույսն այժմ Պարսկաստանի վրա էր և Պրոկոպիոսի
վկայություններից հայտնի է (*De bello Persico*, III, 2), որ նրանք
դիմել էին խոսքով Անուշիրվանին և խնդրել նրա օգնությունը և
միջամտությունը պարսկա-բյուզանդական երկրորդ պատերազմից
առաջ (540—562 թ.): Հայտնի է նույնպես, որ նախարարական
ապստամբության առաջնորդներից մեկը՝ Արտավան Արշակունին
մասնակից է եղել դավադրության, որ հայ նախարարները կազմա-
կերպել էին Պոլսում Յուստինիանոսի դեմ:

Նախարարությունների համառ պայքարը շունեցավ և ո՛չ մի
հաջողություն:

Ինչպես ապստամբության, նույնպես և պարսկա-բյուզանդա-
կան պատերազմի ժամանակ, Հունահայաստանի վերակազմու-
թյունը շարունակվեց աննկուն վճռականությամբ:

Հայկական ֆեոդալիզմի քայքայումն ունեցավ այստեղ այն
հետևանքը, որ խիստ ուժեղացավ ազնվականների գաղթը Պոլիս և

Բյուզանդիայի այլ շրջաններ, ուր նրանք ստանում էին բարձր պաշտոններ և սպասավորում կայսրության ընդհանուր շահերին:

Ազնվականության բռնի ու կամավոր այս գաղթը գլխավոր պատճառներից մեկն է, անշուշտ, որ վեցերորդ դարից հետո հնարավոր չեղավ այլևս վերականգնել այստեղ նախարարական հին իշխանությունները:

Յուստինիանոսի քաղաքականությունը նախարարությունների հանդեպ ունեցել է սակայն նաև ուրիշ հետևանքներ, որ ուշադրության չեն առնվել պատմագիտական ուսումնասիրություններում:

Արևմուտքից սպառնացող մեծ վտանգն ակներև կերպով տեսել էին այժմ թե՛ Պարսկական Հայաստանի նախարարական իշխանությունները և թե՛ ինքը հայ եկեղեցին: Եվ ուշագրավ է, որ հենց վերոհիշյալ անցքերից հետո, պարզ նկատելի են Հայաստանում քաղաքական կողմնորոշման բեկում և թշնամություն Բյուզանդիայի դեմ:

Յուստինիանոսի վերանորոգումներն էին ըստ իս գլխավոր պատճառը, որ 554/555 թվին մերժվեց Դվինում քաղկեդոնական դավանանքը և հայ եկեղեցին վերջնականապես բաժանվեց հունականից: Այս որոշումը, թեև զուտ կրոնական էր, սակայն հետևանք էր պարզապես նախարարական Հայաստանի կողմնորոշման ընդդեմ կայսրության:

Յուստինիանոսի քաղաքականությամբ սկիզբ էր դրվել, ըստ իս քաղաքական թշնամության Բյուզանդիայի դեմ, որ հետագայում վերածվեց անհաշտելի ատելության:

Նախարարական ապստամբությունները հինգերորդ դարերում, ինչպես տեսնում ենք վերոհիշյալ դիտողություններից, ֆեոդալական ու կենտրոնական իշխանությունների մեծ պայքարի շարունակությունն էին, որը հարատև ու մշտական մի խրուլթ էր հայկական ֆեոդալիզմի պատմության:

12. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն իր զարգացման աստիճանների ֆեոդալիզմը բաժանվում է, ինչպես հայտնի է, երեք շրջանների՝ 1. նախնական ֆեոդալիզմի շրջան, 2. զարգացած ֆեոդալիզմի շրջան և 3. քայքայվող ֆեոդալիզմի շրջան: Հայաստանի նախարարական կազմակերպությունն Արշակունիների և մարզպանության ժամանա-

կաշրջաններում, ինչպես երևում է մանրազնին մեր ուսումնասիրությունից, կարելի է բնորոշել իբրև զարգացած ֆեոդալիզմ: Իսկ ֆեոդալիզմի ծագումը Հին Հայաստանում և նրա նախնական շրջանը դրվելու են Արշակունիներից առաջ:

Ֆեոդալական հասարակարգի վերոհիշյալ հաջորդականությունը և բաժանումը երեք շրջանների պայմանավորված են տնտեսապես քաղաքների ու առևտրական-փողային հարաբերությունների զարգացմամբ:

Այդ զարգացումը կատարվել է Արևմտյան Եվրոպայում համեմատաբար արագ և գրեթե միշտ բարձրացող գծով: Իսկ ֆեոդալական Հայաստանում, որը մշտական ռազմադաշտ էր աշխարհակալ մրցող պետությունների, քաղաքները և քաղաքային տնտեսությունը ենթարկվել են պարբերաբար հիմնական ավերման, ուստի և երկրի հաջորդական զարգացումը մատնվել է այստեղ հաճախ տնտեսական հետաշրջման:

Ո՛չ միայն պարբերաբար կրկնվող արտաքին արհավիրքներն ու ծանր ցնցումները, այլև առևտրական միջազգային հարաբերությունների հաճախակի ընդհատումները և, մանավանդ, առևտրական ճանապարհների և կենտրոնների տեղափոխումները, նպաստավոր չեն եղել բնավ քաղաքային տնտեսության տեական ու հարածուն զարգացման համար:

Այդ է, հավանորեն, գլխավոր պատճառներից մեկը, որ Հայաստանում չէր զարգացել արտադրության ավելի բարձր տնտեսական ձևը և երկիրը կառչած էր մնացել շարունակ արտադրության ֆեոդալական եղանակին:

Վերև մենք տեսանք, որ Բագրատունյաց թագավորության ժամանակ քաղաքային արդյունադործության ու ապրանքային փոխանակության բուռն ու արագ զարգացմամբ սկիզբ էր դրվել սոցիալական-տնտեսական նոր հարաբերությունների առաջացման: Միանգամայն հնարավոր է ըստ իս, որ հայկական ֆեոդալիզմը Հայաստանում ևս կրայքայվեր ներքուստ, եթե տնտեսական զարգացման վերոհիշյալ ընթացքը չընդհատվեր Սելջուկյան ավերածությունների ժամանակ:

Հայաստանի նախարարական կազմակերպության ինքնուրույն առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա աստիճանական զարգացումը և անկումը, Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական աննպաստ գրության հետևանքով, ունեցել են հատուկ ընթացք՝ անհամապատասխան Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի առաջադեմ զարգացման և որակական ներքին քայքայման:

Հայկական ֆեոդալիզմի անկումը տեղի էր ունեցել, ինչպես վերև տեսանք, տնտեսական հետաշրջության պայմաններում, Թուրք-թաթարական արշավանքներից հետո նա հարկադրված էր զիջել իր դիրքերը մահմեդական նոր իշխանություններին և Հայաստանում հաստատվել էր հետզհետե պարսկական ու օսմանյան խոշոր կալվածատիրությունը, որն իր էությունը թեև դարձյալ ֆեոդալական էր, սակայն ուներ իր յուրակերպ բնույթը:

Ֆեոդալական հասարակարգի ծագումը, ինչպես վերև տեսանք, Արևմուտքում և Արևելքում տեղի էր ունեցել տարբեր պայմաններում:

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի զարգացումը հետևանք էր գերմանական նվաճման և հռոմեական պետության և նրա տնտեսական-սոցիալական կարգերի քայքայման, իսկ Արևելքում նա առաջ էր եկել տոհմական հասարակարգի կազմալուծման ու հեղաշրջման ընթացքում:

Հիմք ընդունելով նրա ժազման այս տարբեր պայմանները՝ եվրոպական ֆեոդալիզմը համարում են, ինչպես վերև ասացինք, կրկնված ֆեոդալիզմ, իսկ արևելյանը՝ առաջնական:

Հին Հայաստանի նախարարական կազմակերպությունը, լինելով առաջնական ֆեոդալիզմ, պահպանել էր իր մեջ տոհմային նախկին կենցաղի բազմաթիվ մնացորդներ, մինչդեռ եվրոպականը, լինելով կրկնված ֆեոդալիզմ, ուներ իր մեջ ո՛չ միայն համայնական-տոհմային գերմանական կարգերի, այլև հռոմեական պետականության ու նրա քաղաքային կուլտուրայի և հիմնարկների մնացորդներ:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նախաֆեոդալական տոհմային տարրերը շատ ավելի ուժեղ ու շեշտված պիտի լինեին Հայաստանի նախարարական կազմակերպության մեջ, քան Արևմուտյան Եվրոպայի ֆեոդալիզմում:

Տոհմական նախորդ շրջանից էին ծագել, ինչպես վերև տեսանք, նախարարական կազմակերպության վերաբերյալ որոշ տերմիններ:

Որ տոհմային կենցաղի հին հարաբերություններն առանձնապես զորեղ են եղել նախարարական Հայաստանում՝ այդ երեվում է մատենագրական աղբյուրների վկայություններից ու ակնարկներից:

Հետագա այս շրջանում գոյություն են ունեցել, հավանորեն, համայնական-տոհմային հողատիրության հատուկ կարգեր, որոնք

նախարարական միջավայրում ենթարկված պիտի լինեին, անշուշտ, որոշ փոփոխությունների: Նախարարական Հայաստանում տարածված ու արմատացած է եղել տոհմային վրեժխնդրությունը, ինչպես այդ վկայում են Եվսեբիոսը, Եզնիկը և ուրիշ աղբյուրները (տե՛ս Eusebius Praeparatio evangelica VI, 10, § 12 և Շեղակյա Կողբացւոյ, Եղծ աղանդոց» I, գլ. ԺԵ): Նախարարական զորքերը, ինչպես հայտնի է, դասավորված են եղել միշտ ըստ առանձին ազգերի կամ տոհմերի: Ֆեոդալական Հայաստանի ժառանգական իրավունքի մեջ ակնհերև են տոհմային սեփականատիրության ուշագրավ հետքեր, որ մատնանշված են, օրինակ, Յուստինիանոսի 535 և 536 թ. վերոհիշյալ հրովարտականքում:

Հայկական ֆեոդալիզմին առանձնահատուկ են եղել, ուրեմն, տոհմական ու նախաֆեոդալական թե՛ այս և թե՛ նման տարրերը, որոնց դերն ավելի մեծ է եղել այստեղ, քան Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական հասարակակարգում:

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկությունները պայմանավորված են եղել, բացի այդ, հայկական բարձրավանդակի աշխարհագրական դիրքով ու տեղագրական կառուցվածքով:

Հայաստանը սարահարթերի ու հովիտների, իրարից բաժանված ու կտրված շրջանների մի լեռնաշխարհ է, ուստի և նրա այդ տեղադրության համեմատ հնագույն ժամանակներից սկսած կազմել էին այստեղ իրարից անջատ բալմաթիվ «աշխարհներ» և նախարարական ինքնուրույն երկրներ, որոնք տնտեսական ու կուլտուրական իրենց կենցաղով և առնչությամբ ու բնակչության կազմով նման ու համակերպ չէին հաճախ զանազան վայրերում:

Հասկանալի է հետևապես, որ Հայաստանում պիտի լինեին ռզանազան սովորութիւնք զաւառաց և աշխարհաց», ինչպես այդ վկայում են աղբյուրները: Նախարարական երկրաշրջանների մասնակի առանձնահատկությունները և նախաֆեոդալական ու ֆեոդալական կարգերի տարբեր համակցությունները կարող էին, բնականաբար, ավելի բազմազան լինել Հայաստանի երկրային հատուկ միջավայրում, քան ֆեոդալական դաշտային երկրներում:

Նախարարությունների ներքին կացության այդ զանազանությունները, որ գոյություն են ունեցել, անշուշտ, ֆեոդալական նաև ուրիշ երկրներում, առանձնապես ցայտուն և շեշտված են եղել ըստ իս նախարարական Հայաստանի աշխարհագրական պայմաններում:

Վերև մենք տեսանք, որ Արշակունիների ու մարզպանության շրջանում նախարարները չեն ունեցել սեփական ինքնուրույն տնտեսություններ, այլ եղել են սոսկ հողատերեր և ստացել շինականներից տուրքեր և հարկեր։ Մատենագրական աղբյուրներից բնավ չի երևում, որ նախարարներն իրենք ևս եղած լինեին գյուղատնտեսներ, այլ նրանց մեջ շեշտվում են միշտ նախարարների զորական կենցաղը և զինվորական բարքերը։ Հայաստանում, որ մշտական կռիվների թատերաբեմ էր, միանգամայն բնական է, իհարկե, որ ազնվականությունը գերադանցապես զինվորական դաս էր և նրանից էր կազմված «ազատագործ»-ը։

Թեև ազնվականության ռազմականությունը և զինապարտությունն ընդհանուր երևույթ է համարվում նաև ֆեոդալական Եվրոպայում, սակայն այնտեղ, օրինակ, արևելյան Գերմանիայում, Հեհաստանում և Ռուսաստանում՝ իշխանավոր սենյորներն ունեցել են հաճախ սեփական խոշոր տնտեսություններ (Gutsherrschaft) և եղել են ո՛չ միայն զինվորականներ, այլ միաժամանակ նաև կալվածատեր-գյուղատնտեսներ։

Նախարարական կազմակերպության վերև մատնանշված առանձնահատկությունները, որ բխում են Հայաստանի տեղական ինքնուրույն պայմաններից, թվում են ինձ ուշագրավ ու կարևոր։

Սակայն նույն այս կազմակերպությանը վերագրվում են հաճախ նաև այնպիսի առանձնահատկություններ, որոնք ըստ իս խիստ կասկածելի են, որովհետև չեն հաստատվում աղբյուրների փաստական տվյալներով։

Հայագիտական աշխատություններում մատնանշվում է հաճախ, որ նախարարական Հայաստանում, ինչպես և արևելյան բռնապետություններում, հողի գերագույն սեփականատերն է եղել պետությունը, այսինքն՝ սուլթանն թագավորը։

Գարագաշյանը, օրինակ, կարծում է, որ «ինչպես կենաց՝ նոյնպես ընչից և ստացուածոց բացարձակ աէր էին Արշակունի թագաւորք» («Քննական պատմութիւն», Բ, էջ 4)։ Նույն կարծիքն ավելի որոշ ու ձևակերպած հայտնել է Խ. Սամվելյանն իր «Մխիթար Գօշի Դատաստանագիրքն» աշխատության մեջ։

«Շին Արևելքի ամբողջ պատմության մեջ, — ասում է Սամվելյանը, — հողը, իբրև անշարժ ստացվածք բացառապես թագավորների և ընդհանրապես գերագույն իշխանների սեփականություն էր համարվում։ Նույնն էր նաև Հայաստանի պատմության մեջ։ Այստեղ հողը, ընդհանրապես երկիրը, տնտեսականորեն համարվում

էր թագավորների սեփականություն, իսկ իրականորեն, բացի թագավորներից հողի սեփականատեր էին ճանաչվում նաև նախարարները, բզեշխները և այլ տիրող իշխանները, բարձր հոգևորականությունը հանձին կաթողիկոսական տան, եպիսկոպոսական աթոռների, վանքերի և նույնանման հոգևոր հիմնարկությունների: Հողային սեփականության գաղափարն յուր սկզբունքով մարմնանում էր թագավորի անձի մեջ: Թագավորն արդեն յուր կողմից կարող էր հողատիրության իրավունք տալ նախարարներին և այլ մարմնավոր ու հոգևոր իշխաններին, սրանց բաշխելով հողեր կամ իբրև ժառանգական սեփականություն, նման միջնադարյան ավատական կազմի foedum-ին կամ թե ժամանակավոր սեփականություն նման beneficium-ին» (տե՛ս էջ 293—294):

Պետք է ասել, որ գերագույն սեփականության այս իրավունքը գոյություն է ունեցել հաճախ ո՛չ միայն Արևելքում, այլև Արևմուտքում: Նույն իրավունքն ունեցել են սյուլզերեն թագավորները ֆեոդալական այն միապետություններում, որոնց մեջ առանձնապես զորեղ է եղել պետական կենտրոնացումը: Միջնադարյան Անգլիայում, օրինակ, նորմանական տիրապետության ժամանակ թագավորը համարվել է ամբողջ երկրի ու հողի գերագույն ու միակ սեփականատերը, իսկ ֆեոդալներին պատկանել է միայն հողի տիրության ու օգտագործման իրավունքը:

Սակայն գերագույն նույն իրավունքը չեն ունեցել փաստորեն սյուլզերեն թագավորները, օրինակ, միջնադարյան Ֆրանսիայում: Այստեղ վաղ միջնադարում, թագավորական իշխանության անգործության պատճառով, համեմատաբար թույլ է եղել պետության կենտրոնացումը: Ամենագորեղ վասալ իշխանությունները, լինելով գրեթե անկախ թագավորից, եղել են այստեղ անպայման ու լիակատար տեր իրենց երկրների ու կալվածների:

Վերոհիշյալ ենթադրությունը, որ Հայ Արշակունիները գերագույն տեր էին Հայաստանի բոլոր հողերի, չի կարելի, իհարկե, անել հիմնվելով կասկածելի կռահումների վրա հողատիրական կարգերի մասին Հին Արևելքում:

Այդ խնդիրն անհրաժեշտ է, անշուշտ, հիմնավորել պատմական հաստատուն վկայությունների օգնությամբ:

Իսկ համապատասխան վկայություններից դժվար չէ հետևցնել, որ Հայ Արշակունիների թագավորությունը, լինելով թուլահող ու ապակենտրոնացած ֆեոդալական միապետություն, նման է եղել ավելի միջնադարյան Ֆրանսիային, քան նորմանական Անգլիային:

Միանգամայն հավանական է, ուրեմն, որ Հին Հայաստանում ևս, ինչպես և միջնադարյան Ֆրանսիայում, կիսանկախ ու ինքնուրույն նախարարություններն ունեցել են իրենց երկրների ու կալվածների նկատմամբ սեփականատիրական լիակատար իրավունքներ:

Այս հետևությունը, որ հիմնովին հսկողակ է վերոհիշյալ հեթաղրության, արել են Տուրնեբրիզը և Ադոնցը:

Տուրնեբրիզի կարծիքով՝ հայ նախարարները բացարձակ տեր են եղել իրենց երկրների և նրանց հողերը համարվել են ժառանգական ու տոհմական լիակատար սեփականություն („*franc-alleu, avec droit héréditaire*“, տե՛ս *Histoire politique et religieuse de l'Arménie*, p. 72):

Նույն այս կարծիքն ավելի հանգամանորեն արտահայտված է Ադոնցի «*Армения в эпоху Юстиниана*» աշխատության մեջ (стр. 460—461). Համաձայն Ադոնցի ենթադրության՝ հայկական իշխանական հողատիրությունն ավելի համապատասխան է եղել ֆեոդների այն տեսակին, որը ֆեոդալիզմի պատմաբաններն անվանում են *fiefs-seigneuriales*, իսկ Պավլով-Սիլվանսկին՝ *fiefs-alleux* (տե՛ս Павлов-Сильванский Н.П., *Феодализм в древней Руси*, изд. вт., М. 1923, стр. 97):

«Պատմաբանները,— ասում է Ադոնցը,— տարբերում են իսկական ֆեոդերն այն ֆեոդերից, որոնք թեև նույնպես անվանվում են ֆեոդ՝ սակայն իրավական իրենց դրությամբ որակվում են որպես սենյորիաներ: Այս երկու կարգի ֆեոդերը հենված են ֆեոդալական հողատիրության երկու հակադիր սկզբունքների վրա: Ֆեոդը համարվում է մի կողմից պայմանական հողատիրություն, որը ենթակա էր ետ գրավման՝ եթե նրա տերը խախտում էր ծառայության իր երդումը. իսկ մյուս կողմից՝ ֆեոդալը, եթե չէր կամենում ծառայել տվյալ սենյորին, իր հողի հետ անցնում էր ծառայության ուրիշ սենյորի մոտ այսպես կոչված կոմմենդացիայի (*commendatio*) կարգով: Նման փոխադրումներն ապացուցում են, որ անցնողը ճանաչվել է հողի լիակատար սեփականատեր և նա ազատ կերպով ծառայել է, ո՛ւմ որ ինքը կամեցել է: Նշանակում է, որ այս դեպքերում ավելի գերակշռող է եղել ֆեոդալի անձնական կախումը սենյորից, քան հողայինը: Այս կարգի սենյորատը նկատելի է մանավանդ ֆեոդալիզմի սկզբնական շրջանում:... Հենց այսպես կարելի է բնութագրել նաև թագավորի ու իշխանների հարաբերությունները Հայաստանում: Այդ հարաբերություններն

ունեցել են ավելի անձնական կախման բնույթ, քան տերիտորիական: Թագավորը զրկում էր տվյալ իշխանին կալվածներից որևէ հանջանքի համար, սակայն այդ պատիժը չէր տարածվում նրա հետնորդների վրա: Պատժված իշխանի ամենամոտիկ հաջորդը ստանձնում էր դարձյալ իր իրավունքները և գրավված հողը վերադարձվում էր նրան, իբրև նրա տոհմի անօտարելի սեփականություն: Սակայն Հայաստանում, ինչպես և ընդհանրապես ֆեոդալական միջավայրում, սոցիալական հարաբերությունների կարգավորիչ էին հանդիսանում ո՛չ թե իրավական սկզբունքները, այլ իրական ուժը, և այս վերջինի կապակցությամբ դասավորվում էին զանազանակերպ հարաբերությունները»:

Տուրնեբիզի ու Ադոնցի այս բացատրություններից պարզ երևում է, որ նրանք իշխանապատկան երկրների վերաբերմամբ ժխտում են Հայ Արշակունիների գերագույն սեփականության իրավունքը և իշխանական կալվածներն ու հողերը համարում են *allod-ներ*, այսինքն՝ «լիակատար» ու «անօտարելի» ժառանգական սեփականություն իշխանական տոհմերի:

Մատնանշելով հայկական իշխանությունների հողային սեփականատիրության լիակատար ու անպայման իրավունքները՝ Լորանն իր «*L'Arménie entre Byzance et l'Islam*» աշխատության մեջ (Paris, 1919, p. 68) համարում է այդ Հին Հայաստանի նախարարական կազմակերպության ինքնուրույն մի առանձնահատկություն, որով նա տարբերվել է արևմտյան ֆեոդալիզմից:

«Հայկական իշխանությունների կալվածատիրությունը,—ասում է Լորանը,— ստացել էր իրավական այնպիսի մի ձև, որը ծանոթ չէր արևմտյան ֆեոդալիզմին: Ձեռք բերված լինելով միանգամ կամ բարձրագույն իշխանությունից իբրև պարգև և կամ բռնի ուժով՝ նա որպես սեփականություն փոխանցվել է ուղղակի հաջորդ սերունդներին առանց իշխանության միջամտության և առանց նոր տուչության (*investiture*): Այդ կալվածատիրությունը դիտվել է իբրև աննախադիր մի իրավունք, որին ոչ ոք չէր կարող ձեռք տալ օրինավորապես» (էջ 68):

Լորանը, ինչպես տեսնում ենք, համամիտ չէ Տուրնեբիզին և Ադոնցին, որոնք իշխանական այդ կալվածատիրությունը համապատասխան են ենթադրել *francs-alléux* կամ *fiefs seigneuries* կոչված իշխանական սեփականատիրության: Այս կետում Տուրնեբիզի ու Ադոնցի եզրակացությունները կարելի է ըստ իս համարել ավելի հիմնավոր և ընդունելի, քան Լորանինը:

Հողային սեփականատիրության վերոհիշյալ խնդիրը քննության է առնված նաև շինականների մասին իմ աշխատության մեջ («Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարգալանության շրջանում», «Պետ. Համալսարանի Տեղեկագիր», № 1, Երևան, 1925, էջ 15—17):

Այս հողվածում մատնացույց են արված Ագաթանգեղոսի և Փավստոսի վկայությունները, որոնց մեջ ակնարկված է հայ Արշակունիների գերագույն սեփականատիրության իրավունքն ազարկների ու ավտնների հողերի վերաբերմամբ:

Ագաթանգեղոս, գլ. ՃԺԹ, էջ 436 (Տփղիս, 1909)՝

«Յետ այսորիկ հասնալ նմա [Գրիգոր Լուս.] բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեղոս և յազարակս: Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց շորս շորս հողս երդոյ՝ յամենայն ազարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»:

Փաւստոս, V, ԼԱ, էջ 237 (Վենետիկ, 1889)՝

«Եւ հատ ևս յարքունիս Պապ Թագաւոր պհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր Թագաւորին Տրդատայ առ մեծան Գրիգորիւ քահանայպետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գիւղ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն»:

Արդ՝ ի՞նչպէս հասկանալ Թագավորի այդ իրավունքը: Ունե՞ր արդյոք Տրդատ Մեծը կամ նրա հաջորդներից մեկն այնքան լայն իրավունքներ, որ կարողանար գյուղական հոգեւորականությանը հողաբաժիններ հատկացնել ամբողջ Հայաստանում՝ թե՛ բուն արքայական և թե՛ նախարարապատկան երկրներում:

Արշակունիների սեփականատիրական գերագույն իրավունքը որոշելու համար այս հարցի պատասխանն ունի անշուշտ, մեծ կարևորություն:

Փավստոսի վկայության մեջ պարզ ու հաստատ ասված է, որ Տրդատ Թագավորը տվել էր եկեղեցիներին հողաբաժիններ «ընդ ամենայն երկիրն Հայոց», իսկ Ագաթանգեղոսի ասելով՝ «յամենայն

իշխանութեան իւրում առ հասարակ»։ Ազաթանգեղոսի վկայությունը, ինչպես տեսնում ենք, այնքան էլ պարզ չէ, որովհետեւ «յամենայն իշխանութեան իւրում» կարող է նշանակել թե՛ ամբողջ Հայաստանը և թե՛ թագավորի անմիջական տիրութեան տակ գտնվող սեփական երկիրը։

Այս խնդիրը մենք թեև հարուցել էինք, բայց չէինք լուծել վերոհիշյալ աշխատության մեջ։

Ինձ թվում է՝ կարելի է այժմ հաստատապես պնդել, որ միանգամայն հավանական են Տուրնեբեդի, Ադոնցի և Լորանի եզրակացությունները, որոնք նախարարական իշխանությունների հոդերը և կալվածները, ուրեմն՝ և նրանց ավաններն ու ագարակները՝ համարում են այդ իշխանությունների ժառանգական ու տոհմական լիակատար սեփականությունը։

Կարևոր է այդ տեսակետից, որ Ազաթանգեղոսի պատմության արաբերեն թարգմանությունը, որն ավելի հին խմբագրություն է, քան այժմյան հայերենը և հունարենը՝ ունի ուղագրավ մանրամասնություններ, որոնք ակնարկում են Հայ Արշակունիների թագավորական իշխանության թույլ ու սահմանափակ իրավունքները։

Թվելով մի առ մի Հայաստանի տասն և վեց մեծ իշխանություններ՝ արաբերեն թարգմանությունը շեշտում է, օրինակ, որ հիշատակված իշխաններից տասն և հինգը «ստորագրված էին Տրդատին պատերազմի ժամանակ» (տե՛ս Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов, арабская версия, СПб., 1905, стр. 115)։ Մի ուրիշ տեղ նույն թարգմանությունը մատնանշում է դարձյալ, որ եպիսկոպոսություններ հաստատվել էին նախարարական այն երկրներում, որոնց իշխանները «տրամադրված են եղել բարեմտաբար» (էջ 137)։

Այս վկայություններից անգամ դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի մեծ նախարարությունները եղել են, իրապես, ինքնուրույն ու գրեթե անկախ իշխանություններ, և միանգամայն անհավանական է, ուրեմն, որ քրիստոնեության մուտքը ինչպես և հողաբաժինների հատկացումը գյուղական հոգեորականության, տեղի ունեցած լինե՞ր այստեղ Արշակունիների անմիջական կարգադրությամբ։

Մատենագրական աղբյուրների վկայություններից կարելի է նույնպես հետևցնել, որ թե՛ Արշակունիների արքունի երկրում և թե՛ նախարարական իշխանություններում գոյություն են ունեցել մասնավոր հատուկ կալվածներ ու հողեր, որոնք համարվել են՝ նման

միջնադարյան allod-ների՝ ժառանգական լիակատար սեփականություն:

Այս կարգի գույքերը, ինչպես ճիշտ մատնանշել է Ադոնցը, անվանվել են «հայրենիք» (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», стр. 457—458). Allod-ական սեփականություն պետք է համարել, օրինակ, Սահակ կաթողիկոսի կալվածները, որ նա տվել էր իբրև ժառանգություն Համազասպ Մամիկոնյանի որդիներին «մինչև ցյալիտեան»:

«Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի,— ասում է Փարպեցին,— բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս, զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ և զեբրանելին Համազասպեան. որոց ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս գեօղից իւրոց և ագարակաց, և որ ինչ միանգամ էր իւր՝ ետ նոցա ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչև ցյալիտեան» (տե՛ս I, ԺԸ, էջ 37, Տփղիս, 1904):

Հայ Արշակունիները, ինչպես տեսնում ենք, չեն կարող համարվել գերագույն ու բացարձակ սեփականատեր Հայաստանի ամբողջ հողի:

Հայաստանի ֆեոդալիզմի գլխավոր առանձնահատկություններից մեկը կարելի է, ընդհակառակը, այն ենթադրել, որ նախարարապետական հողերը, նման ֆրանսիական francs-alleux կոչված կալվածների կամ ռուսական вотчина-ների, եղել են փաստորեն ո՛չ թե պայմանական ֆեոդեր, այլ լիակատար ու անպայման սեփականություն:

Նախարարական իշխանների կախումը Հայ Արշակունիներից եղել է, ուրեմն, ո՛չ թե հողային, այլ սոսկ վասալական:

Հողային սեփականատիրության այս խնդրի վրա անհրաժեշտ էր մանրամասն կանգ առնել, որովհետև նորագույն իսկ երկերում մատնանշվում է հաճախ, որ Հին Հայաստանում, ինչպես և ասիական այլ մեծ երկրներում, հողի սեփականատեր է համարվել պետությունը կամ սուլթանը:

Խոսելով «բաժ» բառի իմաստաբանական զարգացման մասին, նման կարծիք է հայտնել, օրինակ Թ. Ավդալբեգյանն իր «Հաս, սակ, բաժ» վերնագրով հոդվածում (տե՛ս Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 88):

«Որովհետև խոսքը վերաբերում է Հայաստանին,— ասում է Ավդալբեգյանը,— որ եղել է ասիական մի երկիր, ապա կարծում

ենք, որ սխալված շենք լինի, եթե որոշ վերապահություններով ասենք, թե ինչպես ասիական այլ մեծ երկրների—Պարսկաստանի, Ասորեստանի, Հնդկաստանի ու Չինաստանի, այնպես և Հայաստանի պետական կազմակերպության հիմքը դրվել է այն ժամանակ, երբ մասսաներն սկսել են զբաղվել գլխավորապես երկրագործությամբ՝ աստիճանաբար նստակյաց դառնալով։ Այս շրջանում ինչպես հնադարյան ասիական այլ հասարակությունների մեջ, այնպես և Հայաստանում պետությունը կամ սովերենը, որ համարվում է հողի սեփականատեր, բաժին է վերցնում հողագործի արտադրածից, երկրագործական արդյունքներից» (էջ 88)։

Ենթադրելով Հայաստանի ամբողջ հողը պետության սեփականություն՝ Ավդալբեգյանն իր ուրիշ աշխատության մեջ մի քանի բայլ ևս առաջ է գնում և մարզպանական Հայաստանի տնտեսական-զբ համարում է ո՛չ թե ֆեոդալական, այլ «ասիական տնտեսություն»։

Նոր այս կարծիքը նա հայտնել է իր «Հայ շինականի ու գեղշկուհու աշխատավարձը հինգերորդ դարում» ուսումնասիրության սկզբում։

«Այս մենագրությունը,— ասում է Ավդալբեգյանն իր հոդվածի առաջաբանում,— որ տեղի սղության պատճառով խիստ հակիրճ է շարադրված, վերաբերում է Հայաստանի տնտեսական զարգացման պատմության գլխավոր բաժիններից մեկին—աշխատավարձի պատմությանը և շոշափում է մեր երկրի տնտեսական զարգացման պատմության այն շրջանի աշխատավարձի հարցը, որ կոչում ենք «ասիական տնտեսության» շրջան (տե՛ս Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի, № 3, Երևան, 1928, էջ 51)։

Արդ՝ ի՞նչ է հասկանում նա «ասիական տնտեսություն» ասելով։

Նրա ենթադրությամբ՝ որ վերապահությամբ կռահված սեփական իր կարծիքն է՝ ամենագլխավոր հատկանիշն այս տնտեսության այն է, «որ անմիջական արտադրողների գերակշռող տիպն ազատ գյուղացի է» (տե՛ս նրա «Կարլ Մարքսի տնտեսական դարգացման թեորիան», երկր. հրատար., Երևան, 1926, էջ 44)։

Հասկանալի է, ուրեմն, թե ինչո՞ւ նա իր աշխատություններում բացասում է շարունակ հայ շինականների ճորտանման վիճակը, որ քննության է առնված ու լուսաբանված իմ «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին» ուսումնասիրության մեջ։

«Մասնավորելով խոսքը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության մասին՝ —ասում է նա,— պետք է ասենք, որ, այսպես թե այնպես, մեր խորին համոզումով ասիական տնտեսության զարգացման այս ասպարեզում անգնահատելի ծառայություններ կատարող է մատուցանել և պիտի մատուցե մեր ուսումնասիրողներին՝ սրանց զերծ պահելով ամենուրեք պարտադրաբար ստրուկ կամ ճորտ տեսնելու «արդիական նախապաշարումից» (տե՛ս «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան», երկրորդ հրատար., էջ 45, ծանոթ. հմմտե նաև նրա «Հաս, սակ, բաժ» աշխատությունը, էջ 55—56, ծանոթ.):

Ավգալրեզյանի այս բացատրություններից պարզ երևում է, որ նա տրամադիր է ժխտել նախարարական կազմակերպության ֆեոդալական բնույթն Հայ Արշակունիների և մարզպանության շրջաններում: Սակայն նրա ենթադրությունները, որ մտացածին կռահումներ են, չեն հաստատվում բնավ աղբյուրների փաստական այն վկայություններով, որ հիմք են ծառայել իմ այս ուսումնասիրության:

Նախարարական Հայաստանում, ինչպես տեսանք, գոյություն են ունեցել թե՛ հողի allod-ական լիակատար սեփականություն և թե՛ ճորտական գուղացիություն:

Միանգամայն պարզ է, ուրեմն, որ նախարարական Հայաստանի տնտեսակարգը չի կարելի համարել «ասիական տնտեսություն»:

Իմ այս ուսումնասիրությամբ չեն սպառվում, անշուշտ, այն բոլոր խնդիրները, որ կապ ունեն հայկական հնագույն շրջանի ֆեոդալիզմի և նրա տնտեսական կամ սոցիալական առանձնահատկությունների հետ:

Կգտնվեն թերևս նոր նյութեր ու նոր տեղեկություններ, որոնք հավանորեն, հիմք կծառայեն նաև մութ մնացած խնդիրների լուսաբանման:

Եվ ես խորապես համոզված եմ, որ ինչպես այս, նույնպես և հետագա այդ աշխատությունները, ուղեցույց են լինելու այն պատմաբանների համար, որոնք ուսումնասիրում են Վրաստանի, Ադվանքի և իրանական երկրների ֆեոդալական անցյալը և նույն երկրների տնտեսական ու սոցիալական ներքին կենցաղը:

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ИСТОРИОГРАФИИ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Древняя история армянского народа теснейшим образом связана с историей мировых держав древности. Она изучалась поэтому, главным образом, западноевропейскими учеными в зависимости и в связи с внешнеполитической историей этих держав. По истории древней Армении имеются, кроме того, специальные труды историков-арменоведов; однако и эти труды являются также обзором внешней истории Армении.

Из первоначальных узких границ на более широкое поле исследования внутренней общественной жизни армянского народа историография древней Армении стала выходить лишь в начале XX века. В это именно время вышли ценные работы учеников акад. Н. Я. Марра: И. А. Джавахишвили «Государственный строй древней Грузии и древней Армении» (СПб, 1905) и Н. Г. Адонца «Армения в эпоху Юстиниана» (СПб, 1908).

В исследовании Джавахишвили, посвященном в одинаковой степени и Грузии и Армении, дан анализ социального строя этих стран и установлены в их государственном строе переживания родового быта, а в исследовании Адонца, преимущественно во второй части, подробно рассмотрен вопрос о происхождении древнеармянских нахарарств (княжеских родов), и некоторые отдельные черты нахарарского общественного строя сопоставлены с особенностями феодального строя Западной Европы.

Само собой разумеется, что после Октябрьской революции советскими историками были поставлены новые проблемы и задачи. И понятно, что изучение также и истории армянско-

го народа должно было быть поднято на более высокую ступень. Советские историки не могли довольствоваться исследованием и изложением исключительно внешнеполитической истории Армении, а должны были сосредоточить свое внимание в первую очередь на изучении социально-экономического ее развития.

При скудости источников по этому предмету проблемы экономического и общественного развития древней Армении, как и соседних ближневосточных стран, крайне сложные и трудные, требовали, конечно, большой предварительной работы. Необходимо было прежде всего внимательно пересмотреть и собрать имеющийся в первоисточниках материал, и эта кропотливая работа, начатая мною в 1920 г., сводилась первоначально к освоению и критической проверке собранного материала и к исследованию отдельных, частных вопросов внутренней истории Армении.

Эти ранние статьи и монографии, появившиеся на армянском языке в «Известиях Государственного университета» и в «Известиях Института наук и искусств ССР Армении», имели подготовительный характер для будущих, более общих работ.

В числе этих первых работ я должен особо отметить метрологический мой труд «Веса и меры в древнейших армянских источниках» (Ереван, 1930; на армянском языке), в котором изучены и точно определены в нынешних метрах, граммах и литрах линейные меры и меры весов, жидкостей и сыпучих тел византийско-сассанидской эпохи, встречающиеся в произведениях древнеармянской литературы. Советская историография, придающая огромное значение вопросам хозяйства и экономики, должна древней метрологии уделить особенное внимание. Для того, чтобы ориентироваться в цифровых данных источников, касающихся экономической жизни древних эпох, и для того, чтобы выяснить и использовать эти данные для истории древних цен, торговли и финансов, необходимо самостоятельно изучить по первоисточникам древние веса, меры и монеты, относительно которых в новейших метрологических трудах имеются непримиримые разногласия.

Основываясь на данных первоисточников, из года в год

получаемых в результате накопления и изучения подлинного материала, можно было после продолжительной предварительной работы дать по истории внутренней жизни Армении очерки синтетического характера. Издание материалов и изысканий по отдельным вопросам пришлось временно приостановить, так как нельзя было игнорировать настойчивые запросы вузов и интеллигенции Советской Армении, требовавших труды обобщающего характера.

Первой, сравнительно легкой темой для обобщения оказалась проблема истории торговли и городов Армении, и ей была посвящена первая моя синтетическая работа, имеющая характер очерка, — «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до нашей эры—XV в. нашей эры)» Ереван, 1930; на русском языке. В работе этой была сделана попытка, помимо подробного изучения скудных и случайных сведений первоисточников, проследить и выяснить на протяжении двух тысячелетий развитие торговли и городов Армении и дать некоторые обобщения, проливающие свет на историческое прошлое Армении в разные эпохи.

При внимательном изучении этой проблемы нетрудно было установить, что еще со II в. до нашей эры, времени образования древнеармянского царства Артаксиатов, экономическая жизнь древней Армении характеризуется развитием и преобладанием транзитной, т. е. передаточной, внешней торговли и возникновением в Армении сравнительно крупных городов, расположенных около караванных путей международной торговли, идущей из Китая и Дальнего Востока в южные и восточные порты Черного моря. Твердо установленным можно было считать и тот факт, что временем наибольшего экономического расцвета Армении и пышного развития его городских центров была не Аршакидская, а, несомненно, Багратидская эпоха, когда Армения в X и в первой половине XI вв. стала единственным транзитным путем для мировых торговых сношений и превратилась на Востоке в единственную нейтральную территорию международной торговли.

Изучение истории торговли и городов ставило на очередь вопрос о направлении основных торговых путей древней Ар-

мении и о местоположении главных пунктов караванного транспорта. Одним из важнейших источников для выяснения этого вопроса является римская мировая карта IV в. нашей эры, называемая *Tabula Peutingeriana*. Сегменты X 4—XII 2 этого незаменимого источника, слабо и недостаточно изученные в западноевропейской историографии, в которых подробно указаны главные пути Армении, расположенные на них станционные пункты и расстояния между ними в римских милях, мне удалось почти полностью расшифровать¹. Восстановление описанных в таблицах итинерариев дало возможность подвести прочную базу под изучение древних путей Закавказья.

Вторая моя обобщающая работа—«Феодализм в древней Армении» (в эпоху Аршакидов и марзбанства)—появилась на армянском языке в 1934 году. В работе этой, посвященной исследованию и выяснению наиболее важных проблем социально-экономической истории Аршакидской Армении, полностью приведен для проверки наших выводов весь документальный материал, на котором основаны наши обобщения. Как выяснено в этом подробном исследовании, характерной особенностью экономической и общественной жизни Аршакидской Армении является действительно, как было уже раньше установлено, нахарарский строй, напоминающий во многом феодализм Западной Европы. И в Аршакидской Армении, как и в Западной Европе, феодальное общество представляло собой многоэтажное здание сословного характера, причем господствующим классом являлся и здесь класс военнотерриториально-владельческой аристократии, эксплуатировавший сидевших на его землях и подвластных ему крестьян.

Верхний слой этого общества составляли нахарарские, или же княжеские, роды, наследственные владельцы княжеств или крупных доменов, которые были вассалами Аршакидов или же подвассалами окраинных мощных княжеств и обладали в своих владениях правами государственной власти.

Вторая промежуточная группа состояла из широкого слоя

¹ См. «Главные пути Армении по *Tabula Peutingeriana*», Ереван. 1936 (на армянском языке, с подробными резюме на русском и немецком языках).

привилегированных мелких землевладельцев, называемых азатами, для которых была обязательна служба в аршакидской и в нахарарских конницах. Эта группа была свободна от налогов и за вассальную службу в конницах получала условно наследственные земельные участки, или феодалы. Наши выводы о существовании в Нахарарской Армении феодалов, называемых хостаками, представляли интерес прежде всего тем, что они ставили под сомнение утверждения тех ученых, которые условное землевладение—феодал—считали явлением, приносящим исключительно западноевропейскому феодализму. Низшую группу нахарарского общества составляли прикрепленные к земле зависимые крестьяне², называемые шинаканами.

Следует отметить, что привлечение новых материалов, впервые пущенных в научный обиход, открыло мне возможность изучить вопросы, касающиеся рабства и положения сельского населения в Аршакидской Армении. Некоторые выводы по этим вопросам, как мне кажется, заслуживают особого внимания.

* * *

Совершенно очевидно, что вопрос о роли рабов и крестьян в области производства является одной из основных проблем, разрешение которой необходимо для правильного понимания сущности общественных отношений на Востоке.

В работах историков-арменоведов очень часто высказывалось явно неправильное мнение, будто бы древняя Армения вовсе не знала рабства³. Тенденциозность этого мнения очевидна. Изучение документального материала ясно показало, что рабство, конечно, не только существовало, но оно в Аршакидской Армении играло, по-видимому, значительную роль. Выяснилось с полной очевидностью, что рабов имели в Арме-

² В нашем исследовании мы различали две формы феодальной зависимости крестьян (*Höridkelt* и *Leibeigenschaft*) и под термином «зависимые крестьяне» подразумевали прикрепленных к земле крестьян, которых Ф. Энгельс называет *höriger*. См. К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. VIII, стр. 125.

³ См. Ф. Халатянц, Очерк истории Армении, стр. 165, М., 1910.

нии Аршакиды, крупные и мелкие феодалы, а также церкви, монастыри и отдельные духовные лица.

При рассмотрении вопроса о рабах меня интересовала в первую очередь их роль в производстве. Нетрудно было, однако, установить, что по объему явления рабство в Аршакидской Армении не могло идти ни в какое сравнение с рабством Древнего Рима или Греции. Основой производства был здесь не рабский труд, а труд крестьян-шинаканов. Рабство было преимущественно домашним, как это было определено основоположниками марксизма относительно и других стран Древнего Востока.

Эти выводы не исключают возможности использования рабов, главным образом военнопленных, на сельскохозяйственных работах. Об этом мы имеем в источниках прямые сведения. Однако нельзя, конечно, голословно утверждать, как это делают некоторые молодые историки-арменоведы, что положение этих рабов было тождественно с положением рабов римских латифундий. По некоторым признакам нетрудно усмотреть, что посаженные на землю военнопленные превращались, по-видимому, в крепостных.

В советской армянской историографии вопрос о преобладающей роли крестьян-шинаканов в феодальном производстве Аршакидской Армении не вызывал в общем никаких сомнений. Предполагалось также, что доаршакидская эпоха, главным образом эпоха владычества династии Артаксидов, была начальным периодом развития нахарарско-феодального строя Армении.

Однако вопреки этой общепринятой концепции в последнее время по этому вопросу дается совершенно новое объяснение в работах по истории СССР. Доаршакидская Армения характеризуется в них как рабовладельческое общество, и центром ее хозяйственной жизни выступают латифундии — агараки — рабовладельцев.

Новая концепция, претендующая заменить собой прежнее мнение, конечно, была бы крайне интересна, если бы она была основана на каких-либо источниках. На самом же деле такое решение вопроса является лишь догадкой, не обоснованной фактами. Она базируется, по-видимому, на общем

соображении о том, что историческое развитие стран Востока протекало в соответствии с аналогичным развитием античных государств—Рима и Греции.

Следует отметить, что новой концепции, проводимой в некоторых научных трудах, противоречит мнение акад. В. В. Струве. «В том обществе, которое мы называем армянским и которое является преемником халдского общества,—пишет акад. Струве,—судя по памятникам, дошедшим до нас, мы не находим признаков рабовладельческой стадии, а только элементы феодального общества. Очевидно, рабовладельческая стадия в Армении была полностью изжита уже в эпоху халдского общества.⁴

Приведенное мнение, как мы видим, полностью соответствует господствующему предположению о феодализирующемся строе доаршакидской Армении, являющемся предшествующей ступенью на пути развития нахарарско-феодального строя Аршакидского царства.

Проблема о характере и объеме рабства и рабовладения в Армении в доаршакидскую эпоху стала особенно актуальной, так как в трудах также и иранистов и других востоковедов замечается тенденция изображать как рабовладельческие общества античного типа древнеиранские и закавказские государства.

Желательно поэтому, чтобы проблема эта была подвергнута широкому обсуждению.

По моему мнению, и по отношению к древнеиранским государствам предположения о массовом применении рабского труда сильно преувеличены и не соответствуют сообщениям первоисточников. Основной производственной базой как в этих странах, так и в доаршакидской Армении, как нетрудно убедиться в результате внимательного изучения исторического материала, было не трудовое массовое рабство, а трудовое массовое крестьянство, состоящее преимущественно из общинников. Прямое указание о преобладающем значении общины на Древнем Востоке, как всем известно, имеется в трудах Маркса и Энгельса.

⁴ «Древний Восток». Т. I, стр. 444. М., 1937.

При изучении письменных сообщений древнеармянских источников, освещающих общественные отношения в древней Армении, были обнаружены мною указания об общине и общинном землевладении, существовавших в Армении в Аршакидскую и последующие эпохи. Хотя в источниках по этому вопросу имелись преимущественно косвенные указания, но все же, основываясь на них, можно было установить древность и исконность армянской общины, которая в некоторых армянских районах, вероятно, как осколок глубокой старины сохранилась до наших дней. Наличие общины в Аршакидской и Багратидской Армении не подлежало никакому сомнению, так как в источниках удалось обнаружить отдельные характерные ее элементы: мир и общинное землевладение или землепользование с пределами земли.

Основываясь на свидетельствах историков V в., Фауста и Агафангела, в которых упоминаются земельные наделы одинакового размера, предоставлявшиеся в пользование крестьянским дворам и сельскому духовенству, можно было предположить, что основной единицей землепользования в то время было крестьянское двориче,⁵ соответствовавшее, вероятно, русской верви и сербской задруге. Кроме того у историка IX в. Моисея Хоренского имеется также ценное указание на порядок раздела земли поровну и по числу лиц. Этот порядок существовал, вероятно, в IX столетии в Багратидской Армении. В эту более позднюю эпоху преобладала, по-видимому, система подушных наделов с периодическими переделами земель⁶. Из анализа и других свидетельств первоисточников можно было также установить, что раздача общинникам земельных участков производилась посредством жребия, поэтому они и в древней Армении, как и в России и в средневековой Европе, назывались вичаками, или жеребьями (Sors. Loos)⁷.

Изучением древнеармянских источников не только об-

⁵ См. моя «Заметки о положении шинаканов древней Армении в эпоху марзбанства», стр. 13—17, Ереван, 1925.

⁶ Там же, стр. 5—7 и 14—15.

⁷ Там же, стр. 19—21.

наруживается наличие общины в древней Армении, но выясняется, даже на основании имеющихся скудных сведений, ее значительная роль в Аршакидскую и более поздние эпохи, вплоть до новейших времен.

Обнаруженные в первоисточниках данные об армянской общине, нуждающиеся в специальном и более детальном исследовании, наводят нас на мысль, что в древней Армении, в связи с процессом феодализации и ростом крупного землевладения, свободная община постепенно превратилась в зависимую или крепостную. Она, по-видимому, не была уничтожена, а была лишь подчинена власти крупных собственников, причем общинники должны были за пользование своими землями нести оброк или барщину.

Стало быть, как видно из вышеизложенного, вместе с вопросом о рабстве и рабовладении и вопрос о древнеармянской общине также является вопросом величайшей важности, от правильного разрешения которого зависит в значительной мере установление правильной перспективы в деле изучения истории древней Армении.

* * *

Отмеченные мной очередные актуальные проблемы о роли общины и о характере рабства в древней Армении преимущественно в переходное время между Урартской и Аршакидской эпохами должны быть, конечно, изучены не только в узких рамках истории Армении, но одновременно и всего того окружающего мира, который определяется названием Передней Азии, т. е. Закавказья, Ирана и Средней Азии.

При ознакомлении с историческим развитием этих стран вскрываются веские данные, говорящие о том, что и здесь рабство не переросло в систему рабства античного типа. Из сообщения Страбона (кн. XI, гл. 3-я) о социальном составе древнегрузинского общества нам известно, что в начале I в. нашей эры это общество состояло из четырех родов, т. е. социальных групп: «рода базилевсов», «рода жрецов», «рода воинов и земледельцев» и «рода простолюдинов», которых Страбон называет «лаой» или «дулой» базилевсов.

Последние, по мнению акад. И. А. Джавахишвили,⁸ были зависимыми крестьянами, сидящими на землях базилевсов. Страбон свидетельствует кроме того, что имущество у них было общее по родам и что управлял и распоряжался имуществом старейший член рода.

Из этого описания Страбона видно, что в I в. нашей эры общинно-родовой строй существовал также и в древней Грузии и что в противоположность римской рабовладельческой латифундии основой производства был и здесь не раб, а свободный воин-земледелец и зависимый крестьянин-общинник.

О руководящем значении общины в древнеиранских государствах, в Ахеменидской Персии и Парфии имеются прямые и косвенные указания в греко-римских и древнеперсидских источниках. Стало быть, и здесь производственной основой общества были общинники, совместно владевшие окружающей поселение землей.

Вполне возможно, конечно, что в вышеуказанных странах труд рабов широко применялся кое-где и на сельскохозяйственных работах. Допустимо также, что кое-где при ведущем значении эксплуатации общинников существовала в качестве уклада и форма рабовладельческой эксплуатации. Но все это, конечно, должно базироваться на конкретном материале и должно быть доказано отдельно для каждой страны.

* * *

Мы видим, таким образом, что вышеуказанные вопросы о роли общины и рабства в доаршакидской Армении, с которыми тесно связан и вопрос о древнем общественном строе Армении, имеют принципиальное значение также для истории всей Передней Азии римско-парфянской эпохи. Первый из этих вопросов—роль общины и общинников—освещен совершенно недостаточно и должен быть тщательно исследован советскими историками—иранистами, кавказоведами и арменоведами. Второй вопрос—о характере и видах рабства—должен, конечно, решаться не голословно и по аналогии с Римом,

⁸ См. его «Государственный строй древней Грузии и древней Армении», стр. 71. СПб, 1905.

а на основе изучения первоисточников. Необходимо при этом не только установить широкое распространение на Востоке рабства, но выяснить также роль рабского труда в земледельческом производстве.

Лично я в своих работах считал вероятным, что нахарарско-феодальному строю Аршакидской эпохи предшествовал не рабовладельческий, а полуфеодальный строй и в нем основной производственной ячейкой была древнеармянская община, подвергавшаяся эксплуатации при посредстве ренты—налога и принудительных работ.

Затронутые в настоящей статье актуальные исторические проблемы нуждаются, несомненно, в дальнейшем, в более углубленном изучении, с привлечением нового материала. Сейчас эти проблемы поставлены перед нами с особой остротой, так как они решаются уже, сжато и обобщенно, в учебниках и сводных работах по истории СССР.

Перед советскими историками-востоковедами стоит, как видим, ответственная задача—дать правильное разрешение этих проблем на подлинно научной основе изучения исторического материала.

ПРОБЛЕМА ОБЩЕСТВЕННОГО СТРОЯ ДОАРШАКИДСКОЙ АРМЕНИИ

I

